ՎԵՄ
Մատենաշար
Թիւ 3

ՆԻԿՈԼ ԴՈՒՄԱՆ
ՆԱՄԱԿԱՆԻ

ԵՐԵՒԱՆ 2021

«ՎԷՄ»Ի ՄԱՏԵՆԱՇԱՐ
ԹԻՒ 3

ՆԻԿՈԼ ԴՈՒՄԱՆ

ՆԱՄԱԿԱՆԻ

Երեւան – 2021

ՀՏԴ 94(479.25)
ԳՄԴ 63.3(5Հ)
Դ 940

Նիկոլ Դումման / Նամականի
Դ 940 Հրատարակութեան պատրաստութիւն, խմբագրութիւն
եւ ծանօթագրութիւններ՝ **Երուանդ Փամպուքեանի**:
Երեւան, «Լուսակն», 2021, 336 էջ:

ՀՏԴ 94(479.25)
ԳՄԴ 63.3(5Հ)

ISBN 978-9939-882-93-2

© Փամպուքեան Երուանդ, 2021
© «Լուսակն», 2021

Հատորը կը տպագրուի հովանաւորութեամբ
ընկեր ՆԱԶԱՐԷԹ ՊԱՐՍՈՒՄԵԱՆի,
ի յիշատակ ՀՐԱՅՐ ՄԱՐՈՒԽԵԱՆի:

ՆԻԿՈԼ ԴՈՒՄԱՆ.
ՄՏԱՒՈՐԱԿԱՆ ՀԱՅԴՈՒԿԱՊԵՏԸ

Մեծանուն գործիչ Նիկոլ Դումանը (Նիկողայոս Տէր Յովհաննիսեան, 1867–1914) իր անջնջելի հետքն է թողել 19-րդ դ. վերջի եւ 20-րդ դ. սկզբի հայ ազատամարտի պատմութեան վրայ: Նա հռչակուեց թէ՛ զէնքի, թէ՛ մտքի ասպարէզում: Որպէս զինուորական նա ե՛ւ քաջ մարտիկ էր ե՛ւ ռազմի հմուտ ուսուցիչ. որպէս մտաւորական՝ ե՛ւ անթերի ռազմավար էր, ե՛ւ անկրկնելի գաղափարախօս: Դումանը որպէս անվախ մարտիկ դարձել էր թշնամու պատուհասը: Արդէն 1890-ականների կէսերին քրդերի մօտ փառաբանւում էր իր քաջութեամբ: Պատահական չէր նաեւ հէնց քրդերից ստացած «Դուման» (Փոքորիկ) պատուանունը: Հայդուկային բազմաթիւ կռիւներում տարած յաղթանակները երաշխաւորուել են Նիկոլ Դումանի խիզախութեան, վճռականութեան, ինքնավստահութեան շնորհիւ միայն: 1896 թ. Վանի երկրորդ ինքնապաշտպանութեան, Խանասորի արշաւանքի, 1905-1906 թ.թ. հայ-թաթարական կռիւների ժամանակ դրսեւորուել են Նիկոլի թէ՛ զինուորական կարողութիւնները, թէ՛ յեղափոխական նկարագիրը:

Նիկոլ Դումանը ծնուել է 1867 թ. Յունուարի 12-ին Շուշիի գաւառի Ղշլաղ (այժմ Ծաղկաշատ, Արցախի հանրապետութիւն, Ասկերանի շրջան) գիւղում: 1867 թ. Շուշիի թեմական դպրոցն աւարտելուց յետոյ երկու տարի աշխատում է Արցախի թեմի եկեղեցական խորհրդում, ապա, եւս երկու տարի ուսուցչութիւն է անում հիւսիսային Կովկասի հայկական դպրոցներում:

Այս ընթացքում էին ձեւաւորւում հայ ազգային կուսակցութիւնները, որոնք կոչուած էին ղեկավարելու արեւմտահայ ազատագրական շարժումը: Ազատագրական շարժման սկզբնաւորութեան շրջանից եւեթ Նիկոլ Դումանը պայքարի առաջին շարքերում էր: Լինելով ազատագրական պայքարի մէկ այլ ռահվիրայ՝ Յովնան Դաւթեանի դպրոցական կրտսեր ընկերը՝ Նիկոլը ժամանակի ընթացքում մեծապէս իր վրայ կրել է այդ գործչի գաղափարական ազդեցութիւնը:

1891 թ. Նիկոլն անդամագրւում է Հայ Յեղափոխական Դաշնակցութեանը եւ ուսուցչութեան նպատակով մեկնում է Թաւրիզ, որը ազատագրական շարժման կարեւոր յենակէտ էր հանդիսանում: Թաւրիզի Լիլաւա թաղամասի հայկական դպրոցում Նիկոլ Դումանը հնարաւորութիւն ունեցաւ ոչ միայն իր սաների մէջ ազատատենչ ոգի ներարկել, այլեւ նրանց վարժեցնել զէնքի ու զինուորական գործի: Հէնց սկզբից Նիկոլը կարեւորում էր զէնքի եւ մտքի համադրութիւնը:

Քանի որ յատկապէս Թաւրիզում հաստատուած հայ յեղափոխական գործիչների հիմնական նպատակը արեւմտահայ ազատագրական շարժմանն աջակցելն էր, Նիկոլ Դումանը երկու տարի անց (1893 թ.) տեղափոխւում է Արեւմտեան Հայաստանին աւելի մօտ գտնուող Սալմաստ, որտեղ ուսուցչու-

թեանը զուգահեռ շարունակում է իր յեղափոխական գործունէութիւնը: Սալմաստում նա ստեղծում է մի «օջախ», որտեղ հաւաքւում էին այստեղով Երկիր անցնող գործիչները: Նիկոլ Դումանի աւանդը յատկապէս մեծ է Սալմաստում փոքրիկ զինագործական արհեստանոց կազմակերպելու գործում: Նիկոլի սալմաստեան գործունէութեան շրջանում այստեղ մեծապէս բարձրացաւ Հ. Յ. Դաշնակցութեան հեղինակութիւնը:

Որպէս ուսուցիչ ներքաշուելով ազատագրական պայքարի յորձանուտ՝ Նիկոլ Դումանը հաւատում էր յեղափոխականի առաքելութեանը: Նրա պատկերացումը յեղափոխութեան մասին վկայուած է Ռուբէնի յուշերում յիշատակուած նրա հետեւեալ բառերում. «Յեղափոխութիւն չկայ, երբ նրա համար պատճառ ու նպատակ չկայ: Պատճառն ու նպատակը անարժէք բաներ են, երբ նրանք իրագործելու համար ոյժ եւ կազմակերպութիւն չկայ: Ոյժն ու կազմակերպութիւնը վճռական են, եթէ նրանք հարազատ պատկերն են յեղափոխութեան նպատակներու եւ ժողովրդի շահերու»: Նիկոլ Դումանը մինչեւ կեանքի վերջ հաւատարիմ մնաց յեղափոխութեան հանդէպ իր որդեգրած այս մօտեցմանը:

Սալմաստում Նիկոլ Դումանի յեղափոխական գործունէութիւնը անմիջականօրէն կապուած է Դերիկի վանքի հետ: Նրա մարտական գործունէութիւնը սկսւում է այստեղից: Յայտնի է, որ թուրք-պարսկական սահմանի վրայ գտնուող Դերիկի վանքը կարեւոր նշանակութիւն ունէր արեւմտահայ ազատագրական պայքարում: Այն անփոխարինելի յենակէտ էր հանդիսանում դէպի Երկիր զէնք, զինամթերք եւ կռուող ուժեր փոխադրելու գործում: Դերիկի վանքը Նիկոլ Դումանի պաշտելի վայրերից մէկն էր: Վերջինս վանքի ունեցած խորհրդաւորութեան մասին հետեւեալն է պատմում Ռուբէնին. «Երբ ոչ թիւ, ոչ որակ, ոչ էլ ոյժ ունիս, թշնամիդ մի՛ զարնէ, հարուածդ տուր՝ նրա երեւակայութիւնը բորբոքելու համար: Քո վրայ նետուող գազանի աչքերին նայիր, նա պոչը կը քաշէ, ոչխար կը դառնայ: Այս է գաղտնիքը Դերիկի յաջողութեան»: Սրանով Նիկոլ Դումանն ուզում էր ասել, որ ամենազօր թշնամին անգամ քո վճռականութիւնից եւ անակնկալ հարուածից կարող է տեղի տալ:

Դերիկի վանքում Նիկոլ Դումանի վերահսկողութեամբ թրծուած հայդուկները, բացի մարտականից, բարոյական-հոգեբանական լուրջ պատրաստուածութիւն էին անցնում: Հայդուկի յեղափոխական-բարոյական վեհ նկարագրի անհրաժեշտութիւնը Նիկոլը հնարաւորինս ձգտել է հասցնել կատարելութեան: Օրինակ՝ նրա պատկերացմամբ հայդուկը հայ ժողովրդի պատիւն էր եւ նա իրաւունք չունէր գերի ընկնելու: Նիկոլը նոյնիսկ առաջարկում էր, որ հայդուկները հրացաններից բացի իրենց մօտ պէտք է անպայման ատրճանակ ունենան, որպէսզի հարկ եղած անելանելի դէպքերում ինքնասպանութիւն գործեն եւ ազատուեն գերի ընկնելու անպատուութիւնից:

Նիկոլ Դումանը հայդուկային կռիւների յաջողութիւնը պայմանաւորում էր հայդուկների հոգեբանական պատրաստուածութեամբ, թշնամու հանդէպ վճռական լինելու անսասանութեամբ: Այս տեսակէտից Նիկոլը փորձում էր

խորհրդաւորութիւն մտցնել յատկապէս իր սիրելի Դերիկի վանքի կատարած դերի մէջ:

Երկաթեայ կարգապահութիւն դաւանող Նիկոլ Դումանը հանդիսացել է բազմաթիւ հայդուկների զինուորական ուսուցիչը: Հայդուկներն էլ ակնածանքով են խօսել Նիկոլ Դումանի մարզչական ունակութիւնների մասին: Նիկոլ Դումանի ղեկավարութեամբ անցկացուող երկարատեւ ու խստապահանջ զինուորական մարզանքները աւելի անվտանգ ու հմուտ էին դարձնում մեր նորահաս հայդուկներին:

1895 թ. աշնանը Նիկոլ Դումանի մարտական 54 հոգուց բաղկացած խումբը, դուրս գալով Դերիկի վանքից, հատում է թուրք-պարսկական սահմանը եւ ճանապարհ վերցնում դէպի Վան տեղի հայութեանը համիդեան կոտորածներից պաշտպանելու համար:

Սարայ գիւղաքաղաքի մօտ խումբը պաշարւում է շուրջ 2000 հոգիանոց քրդական զօրախմբի կողմից: Նիկոլ Դումանի սառնասրտութեան, համարձակութեան եւ հնարամտութեան շնորհիւ, խումբը մեծ վնասներ պատճառելով քրդերին դուրս է գալիս պաշարման օղակից: Քրդերի համար զարմացնող է եղել այն, որ հայ մարտիկները կռուի թէժ պահին հանել են իրենց թաշկինակները եւ պարել: Քրդերի ապշահար վիճակը հնարաւորութիւն է տուել Նիկոլ Դումանի խմբին աւելի լաւ դիրքեր գրաւել: Այնուհետեւ մարտերը շարունակւել են մօտակայ Բողազքեասան գիւղում, որտեղ նոյնպէս քրդերը մեծ կորուստներ են կրել: Ի վերջոյ, Նիկոլ Դումանի խումբը բարեյաջող հասնում է Վան: Սարայ-Բողազքեասանի կռիւներում Նիկոլի համարձակութիւնից եւ վճռականութիւնից ազդուած քրդերը նրան տուեցին Դուման (Փոթորիկ) պատուանունը:

Նիկոլ Դումանը թշնամու հանդէպ առաւելագոյնս անողոք եւ խիստ լինելու մօտեցման կողմնակից էր, որի լաւագոյն ապացոյցը նրա ծրագրած Խանասորի պատժիչ արշաւանքն էր:

1896 թ. Վանի ինքնապաշտպանութեան աւարտից յետոյ նախապէս ձեռք բերուած պայմանաւորուածութեան համաձայն ինքնապաշտպանութեան մասնակիցները պէտք է անվտանգ հեռանային Պարսկաստան: Սակայն թուրք-պարսկական սահմանի հարեւանութեամբ գտնուող սուրբ Բարդուղիմէոս վանքի մօտ քրդական մազրիկ ցեղի զինեալ հրոսակները թուրքական իշխանութեան համաձայնութեամբ շրջապատում են Վանի ինքնապաշտպանութեան մասնակիցներին եւ նենգօրէն գրեթէ բոլորին կոտորում: Մէկ տարի անց՝ 1897 թ. ամրանը Նիկոլ Դումանի առաջարկութեամբ եւ Դաշնակցութեան Կովկասեան մարմնի որոշմամբ հայ զինախմբերը պաշարում են Խանասորի դաշտում ճամբարած մազրիկ ցեղախմբին եւ յանկարծահաս յարձակումով մարդկային մեծ վնաս պատճառում նրան: Մազրիկ ցեղի կրած կորուստները շատ մեծ էին: Արշաւանքը նոր ոգեւորութիւն առաջ բերեց ոչ միայն կոտորածից ընկճուած վանեցիների, այլեւ համայն հայութեան մօտ:

Իր ծաւալով նախադէպը չունեցող այս գործողութեամբ վրէժ լուծուեց ուխտադրժօրէն նահատակուած հազարաւոր հայերի համար: Խանասորի ար-

շաւանքը ունէր պատժիչ բնոյթ. պատուհասել Վասպուրականից նահանջող հարիւրաւոր հայ մարտիկների ջարդը կազմակերպող Մազրիկ ցեղին եւ այդ միջոցով ճամբայ հարթել հայդուկային խմբերին ազատ մուտք գործելու Երկիր: Խանասորի արշաւանքը հայ ժողովրդի վրէժի ցասումն էր նենգ թշնամու դէմ:

Չնայած այն հանգամանքին, որ Խանասորի արշաւանքի թէ գաղափարի, թէ գործողութեան ծրագրի հեղինակը Նիկոլ Դումանն էր, արշաւանքին նա մասնակցեց յիսնապետի կարգավիճակով: Նիկոլը գործի արդիւնքը ամէն ինչից վեր դասող յեղափոխական էր: Նա, որ բոլոր իրաւունքներն ունէր արշաւանքի ընդհանուր ղեկավարը լինելու, աւելորդ համարեց սեփական պատուախնդրութիւնը շահարկելու եւ հրամանատարական փառքի դափնիներով հրապուրուելու, խոնարհաբար ընդունեց վերադասի որոշումը: Դումանը համեստ էր այն իմաստով, որ հեռու էր փառասիրութիւնից եւ խորշում էր իր անձի ու գործի հանդէպ շռայլուած գովասանքներից:

Ժամանակի ընթացքում Նիկոլը դարձաւ ազատագրական շարժման՝ Հրայր Դժոխքի դաւանած համընդհանուր ապստամբութեան մարտավարութեան ջերմեռանդ կողմնակիցը: Արեւմտահայաստանի ազատագրումը նա պատկերացնում էր հայութեան ուժերի միասնական դրսեւորմամբ եւ միասնական քայլերի գործադրմամբ միայն:

1904 թ. Նիկոլ Դումանը պէտք է անցնէր Սասուն օգտակար լինելու այնտեղ արդէն սկսուած ապստամբութիւնը: Նման որոշում կայացուել էր, հաշուի առնելով Նիկոլ Դումանի ունեցած բարձր հեղինակութիւնը: Թէեւ համոզուած լինելով, որ ուշացած է իր գնալը՝ այդուհանդերձ, կարգապահ Ն. Դումանը, անսալով վերադաս մարմնից եկած հրահանգին, մի յուսահատական փորձ կատարեց սահմանն անցնելու: Սակայն թուրք-պարսկական սահմանի վրայ՝ Ռազիի մօտ Դումանի խումբը թէժ կռուի է բռնւում քրդական հրոսակախմբերի հետ եւ ստիպուած վերադառնում է Սալմաստ: Փաստօրէն Նիկոլ Դումանը չի մասնակցում Սասունի 1904 թ. ապստամբութեանը:

Նիկոլ Դումանի զինուորական տաղանդը հերթական անգամ փայլատակեց 1905-1906 թթ. Անդրկովկասում տեղի ունեցած հայ-թաթարական բախումների ժամանակ:

1905 թ. երբ սկսուեց ռուսական առաջին յեղափոխութիւնը, Ռուսաստանի ժողովուրդներին յեղափոխական շարժումներից հեռու պահելու նպատակով ցարական իշխանութիւնները Անդրկովկասում հայ-թաթարական ազգամիջեան ընդհարումներ հրահրեցին: Դա առաջին հերթին ուղղուած էր զարգացած ու կրթուած հայերի դէմ, որոնք առաւել շատ էին հակուած սոցիալական ու ժողովրդավարական բարեփոխումներ տեսնելուն: 1905 թ. Փետրուարին Բաքւում տեղի ունեցան առաջին ընդհարումները: Զինուած մահմեդականները յարձակւում էին հայերի եւ նրանց տների վրայ, կողոպտում, բռնաբարում, սպանում խաղաղ հայ բնակչութեանը: Շուտով Նիկոլ Դումանի գլխաւորութեամբ Դաշնակցութեան ջոկատները արժանի հակահարուած են հասցնում թուրք ջարդարարներին, որոնք հսկայական զոհեր տալով հաշ-

տութիւն են խնդրում: Սակայն Բաքւով ընդհարումները չսահմանափակուեցին եւ տարածուեցին Անդրկովկասի այն բոլոր բնակավայրերում, ուր հայերն ու թաթարները ապրում էին կողք կողքի: Արիւնահեղ մարտեր տեղի ունեցան Բաքւի, Գանձակի, Երեւանի, Թիֆլիսի նահանգներում: Նիկոլ Դումանը փայլուն ձեւով ղեկավարեց նաեւ Երեւանի նահանգի եւ Զանգեզուրի ինքնապաշտպանութիւնը: Առանձնայատուկ պէտք է արժեւորել Նիկոլ Դումանի դերը Բաքուի եւ Երեւանի նահանգի հայութեան ինքնապաշտպանութեան յաջող կազմակերպման գործում:

1910 թ. Նիկոլ Դումանը 1910 թ. Միքայէլ Վարանդեանը հետ Կոպենհագենում մասնակցում է Միջազգային Ընկերվարական համագումարին: Ն. Դումանը մեծ կարեւորութիւն էր տալիս յատկապէս ռուսական յեղափոխական ուժերի հետ համագործակցութեանը:

Վերադառնալով հայրենիք՝ Նիկոլ Դումանը 1911 թ. Ռոստոմի յանձնարարութեամբ անցնում է Պարսկաստան մասնակցելու տեղի Սահմանադրական շարժման պաշտպանութեանը: Սահմանադրական կարգերի համար պայքարից աւելի շատ Դաշնակցութեանը մտահոգում էր Պարսկաստանի հայութեան անվտանգութիւնը: Դումանը ստանձնում է Թաւրիզի հայութեան ինքնապաշտպանութեան գործը: Սակայն խնդիրն աւելի է բարդանում, երբ Պարսկաստանի միապետական ուժերին աջակցելու համար երկիր են մտնում ռուսական զօրքերը: Նիկոլ Դումանը գտնում է, որ ռուսներին դիմադրութիւն ցոյց չտալու դէպքում հնարաւոր է առաւել երաշխաւորել Թաւրիզի հայ բնակչութեան անվտանգութիւնը: Ռուսական զօրքերը Թաւրիզ մտնելուց յետոյ հայդուկային խմբերը Դումանի գլխաւորութեամբ հեռանում են քաղաքից: Նիկոլ Դումանն անցնում է Վան, իսկ այստեղից՝ Կ. Պոլիս:

1913 թ. Նիկոլ Դումանը կեղծ անցագրով Կ. Պոլսից վերադառնում է Կովկաս: Ընկերների թախանձագին յորդորով, քայքայուած առողջութիւնը դարմանելու նպատակով Նիկոլ Դումանը յայտնւում է հիւանդանոցում, որտեղ էլ ցարական իշխանութիւնները ձերբակալում են նրան: Սակայն կարճ ժամանակ անց երաշխաւորութեամբ դուրս է գալիս բանտից եւ մեկնում հիւսիսային Կովկասի առողջարանները՝ թոքախտից բուժուելու:

Այդ օրերին (1914 թ.) բռնկուեց Առաջին աշխարհամարտը, որն աւելի ալեկոծեց Նիկոլ Դումանի հոգեկան ներաշխարհը: Նա տեղեակ էր, որ կուսակցութիւնն ու զէնքի իր ընկերները տենդագին լծուած էին Հայ կամաւորական շարժման կազմակերպմանը: Որքան էլ որ վերապահ մօտեցում ունենար այդ շարժումից հայոց համար գալիք բարիքի նկատմամբ, այսուհանդերձ հին մարտիկը ուժ չունէր եւ ի վիճակի չէր այլեւս իր ներդրումը բերելու քաղաքական եւ ռազմական այդ բախտորոշ խմորումներու դիմագրաւման պատասխանատու գործին:

Այս ծանր ապրումների տակ 1914 թ. սեպտեմբերի 23-ին Նիկոլ Դումանն ինքնասպան է լինում: Մարմինը նախ փոխադրւում է Բաքու, ապա Հ.Յ.Դ. Արեւելեան բիւրոյի կարգադրութեամբ՝ Թիֆլիս, ուր սեպտեմբերի 28-ին յուղարկաւորւում է Խոջիվանքի հայկական պանթէոնում:

Նիկոլ Դումանը ոչ միայն պրակտիկ ռազմական գործիչ էր, որի վառ ապացոյցը Խանասորի պատժիչ արշաւանքի մտայղացումն էր, այլեւ մարտի կազմակերպման անկրկնելի տեսաբան:

Նիկոլ Դումանի հեղինակած «Նախագիծ ժողովրդական ինքնապաշտպանութեան» գրքոյկը փորձի վրայ հիմնուած եւ բազմաթիւ կռիւներում փորձարկուած ռազմագիտական փոքրիկ աշխատասիրութիւն է, որտեղ ներկայացուած են ինքնապաշտպանական մարտեր վարելու ինչպէս տեսական, այնպէս էլ գործնական մօտեցումներ:

Նիկոլ Դումանն օժտուած էր մէկ այլ բացառիկութեամբ եւս: Նա անվիճելի հեղինակութիւն էր բոլորի համար: Ինչպէս գրում է հայ յեղափոխութեան անկրկնելի յուշագիրը. «Ամենահամեստ զինուորէն սկսած մինչեւ Հրայրը, Գէորգ Չաւուշն ու Անդրանիկը, բոլորն ալ հաւասար սիրով պատրաստ էին ենթարկուելու այդ դարաբաղցի լեռնականին պողպատէ կամքին»: Հայ յեղափոխութեան մէկ այլ հիմնասիւն՝ Դրոն հպարտութեամբ եւ մշտապէս Նիկոլ Դումանին համարում էր իր ուսուցիչը:

Ըստ էութեան Նիկոլ Դումանի դաւանած յեղափոխութիւնն ու յեղափոխականութիւնը ֆիդայականի, մտաւորականի, ռազմագէտի, վեհանձնի, համեստի, նուիրեալի, կարգապահի ամբողջութիւնն է:

Ընթերցողի դատին ներկայացուող նամակների այս ժողովածուի մէջ մենք տեսնում ենք Նիկոլ Դուման գաղափարի մարտիկի, անվեհեր յեղափոխականի վերոնշեալ յատկանիշների համեստ, անկեղծ եւ ակամայ արտացոլանքը հէնց նրա կողմից:

Արժէքաւոր են Ատրպատականում գործունէութեան տարիներին Նիկոլ Դումանի կողմից դաշնակցական տարբեր գործիչներին, «Դրօշակ»ի խմբագրութեանը գրած նամակները, որոնցում հետաքրքիր մանրամասնութիւններ են բացայայտւում տեղում Դաշնակցութեան գործունէութեան, զինատար խմբերի համալրման եւ զէնքի տեղափոխման մասին: Այս առումով նամակներում բացայայտւում են գոյութիւն ունեցած բազմաթիւ դժուարութիւններ, որոնց մասին ժամանակին բարձրաձայնել էր Դումանը: Վերլուծելով զինման կարեւորութեան վերաբերեալ նամակներում առկայ դիտարկումները՝ գալիս ենք այն եզրակացութեան, որ անկրկնելի ռազմագէտ Նիկոլ Դումանի համար զինուելը եւ կազմակերպուելը սահմանուել են որպէս հայ ժողովրդի փրկութեան բանալի:

Նիկոլ Դումանի նամակների յաջորդ ահազանգը ներկուսակցական եւ միջկուսակցական անհաշտութիւններն են: Հեղինակն իր նամակներում ցոյց է տալիս այդ անհաշտութիւնների բնոյթը: Միաժամանակ Նիկոլ Դումանի անձի օրինակով ընթերցողը համոզւում է յանուն ընդհանուր գործի ներկուսակցական եւ ներազգային հակասութիւնները ուժերի անիմաստ եւ աւելորդ վատնումի պատճառ էին հանդիսանում:

Առանձին հետաքրքրութիւն է ներկայացնում հայ-քրդական յարաբերութիւնների տարաշերտ ծալքերի, արեւմտահայ-ազգային ազատագրական շարժման մէջ գոյութիւն ունեցած քրդական գործօնի վերհանումը Նիկոլ Դու-

մանի նամակներում: Նիկոլ Դումանը մի կողմից կարեւորում է քրդերի հետ լեզու գտնելը, միւս կողմից էլ փաստում է, որ դրա համար անհրաժեշտ է քրդերին բացատրել դրա կարեւորութիւնը, եւ ցոյց տալ մեր ուժը, որի հետ քուրդը հաշուի կը նստի:

Վանի 1896 թ. ինքնապաշտպանական կռիւների մասին բացառիկ տեղեկութիւնները, որոնք նա քաղել է բացառիկ փրկուածների պատմածներից, ինչպէս նաեւ նոյն թուականի աշնանը տեղի ունեցած «Պստիկ» կռիւների մասին պատառիկները (թէեւ ժլատ), թուրքական վայրագութիւնների մասին նոր վկայութիւնները գիտական նոր բացայայտումների հնարաւորութիւն են ստեղծում:

Նամակներում բացառիկ եւ մինչ այժմ անյայտ եւ նոր մանրամասնութիւններով փաստերում դրուագներ են բերւում Սարայ-Բողազքեասանի, Դերիկի վանքի կռիւների, Խանասորի արշաւանքի նախապատրաստութեան, հայ-թաթարական ընդհարումների մասին:

Նիկոլ Դումանի նամակները նոր լոյս են սփռում նաեւ անցեալ դարասկզբին պարսկական սահմանադրական շարժմանը հայութեան մասնակցութեան արդարացիութեան վերաբերեալ: Նամակները մեզ համոզում են, որ դրանք պայմանաւորուած էին ոչ միայն պարսկահայութեան ինքնապաշտպանութիւնը կազմակերպելու, այլեւ հայութեան գործօնը Պարսկաստանում արժէքաւորելու տեսանկիւնից:

Մի խօսքով, Նիկոլ Դումանի նամակների հրատարակումը նոր լոյս է սփռում ոչ միայն Նիկոլ Դուման մեծանուն յեղափոխականի գործունէութեան դեռեւս չլուսաբանուած էջերի վրայ, այլեւ նոր նիւթ է տալիս ուսումնասիրողներին ինչպէս հայ ազատագրական շարժման գաղափարական ծալքերի ուսումնասիրութեան, այնպէս էլ հայկական շարունակականութեան բանալին փնտռելու համար: Մեզ մնում է մեր երախտիքի եւ յարգանքի խօսքը փոխանցել ազատագրական շարժման պատմութեան լուսաբանման անխոնջ նուիրեալ Երուանդ Փամպուքեանին, այս ժողովածուն կազմելու համար: Միաժամանակ լիայոյս ենք, որ շարքը շարունակելի է լինելու, եւ աւարտին է հասցուելու նմանատիպ այլ ժողովածուների հրատարակումը:

ԽԱՉԱՏՈՒՐ ՍՏԵՓԱՆԵԱՆ
Պատմագիտութեան դոկտոր, պրոֆեսոր

ՆԻԿՈԼ ԴՈՒՄԱՆԻ
ՆԱՄԱԿՆԵՐՈՒՆ ՄԱՍԻՆ

Նիկոլ Դուման, բուն անունով Նիկողայոս Տէր Յովհաննիսեան, կը հանդիսանայ, անկասկած, կարկառուն դէմքերէն մէկը հայ ազատագրական պայքարի պատմութեան մէջ.– նախ իբրեւ փորձառու ռազմագէտ մարտիկ, որ օժտուած էր արտասովոր խիզախութեամբ ու քաջութեամբ, ապա իբրեւ գաղափարական ամուր համոզումներու տէր անձնաւորութիւն, որ իր մտաւորական մարդու հմտութեան կը միացնէր նոյնպէս ներհուն քաղաքագէտի յատկութիւնը:

Առաւելաբար ծանօթ որպէս մարտական կերպար՝ ան ունեցած է նաեւ հասարակական եւ քաղաքական աչքառու գործունէութիւն: Անդամակցած է Հ.Յ.Դ. Ատրպատականի եւ Պաքուի Կեդր. կոմիտէութիւններուն, Կովկասի եւ Արեւմտահայաստանի ինքնապաշտպանութեան մարմիններուն, մասնակցած՝ Կովկասի ռայոնական ժողովներու, Հ.Յ.Դ. հինգերորդ եւ վեցերորդ Ընդհ. ժողովներու եւայլն, ամէն առիթով որոշակի, երբեմն վճռական դեր խաղալով վերջնական որոշումներու կայացման մէջ:

Այս բոլորը կարելի է գտնել իր նամակներու ընթերցումով, բացի մարտական դրուագներու նկարագրութենէն եւ այդ մարտերուն ընթացքին իր գործած արտակարգ սխրանքներէն: Այս մարզին մէջ զուսպ է ան ու ժլատ, զերծ՝ իր անձին կապուած որեւէ սնապարծութիւն ցուցաբերելէ:

Ինչ կը վերաբերի ներկայ հատորով ընթերցող հասարակութեան ներկայացուող Ն. Դումանի նամակներուն, անոնք գրեթէ ամբողջութեամբ վերցուած են Պոսթընի Հ.Յ.Դ. կեդր. արխիւատան պահոցներէն, ուր անոնք տեղադրուած են տարբեր շրջաններու յատուկ թղթածրարներու մէջ: Հեղինակին ձեռագիրը շատ յստակ է ու դիւրին ընթեռնելի: Պահած ենք, ըստ կարելւոյն, իր լեզուական եւ ուղղագրական առանձնայատկութիւնները:

Տարբեր ժամանակներուն Ն. Դուման ստորագրած է Ն., Նիկ., Նիկօլ, Դուման, Քեշիշ, Ղարաբաբա:

Իւրաքանչիւր նամակ թուագրուած է ըստ Պոսթընի արխիւատան ընդհանուր ցուցակներուն: Այսպէս, առաջին թուահամարը – օրինակ 455 – ցոյց կու տայ թղթածրարին թիւը, երկրորդը՝ – օրինակ 3 – գրութեան տրուած համարը տուեալ թղթածրարին մէջ: Բացառութիւն կը կազմէ No 1855-ը, որ ընդհանուր թղթածրարին տրուած համարն է, առանց որ իւրաքանչիւր փաստաթուղթ յատուկ թուահամար ունենայ: Որոշ թիւ մը Ն. Դումանի 90-ական թուականներու նամակներէն հրատարակած է Ս. Վրացեան («Դիւան Հ. Յ. Դաշնակցութեան»), ուրիշներ լոյս ընծայած ենք մենք «Նիւթեր Հ.Յ.Դ. պատմութեան համար» շարքի հատորներուն մէջ: Մեծամասնութիւնը անտիպ է եւ կը հրատարակուի առաջին անգամ:

Հատորի վերջին բաժնին կցուած են երկու յաւելուածներ.

ա.– Նիկոլ Դումանի նամակները, թիւով 24, ուղղուած իր բարեկամներէն Արմենակ եւ Զապէլ Արապեան ամոլին:

բ.– Նիկոլ Դումանի հեղինակած «Նախագիծ ժողովրդական ինքնապաշտպանութեան» երկասիրութիւնը, առանձին ներածականով մը ճշգրտելով այդ գործի առաջին հրատարակութեան թուականը:

Ե. Փ.

1

Փաստ. 455-3

Նիկոլ Դումանի այս նամակը Սիմոն Վրացեան հրատարակած է «Դիւան Հ. Յ. Դաշնակցութեան» մէջ (Ա. հատոր, էջ 121–125): Պոսքընի Հ.Յ.Դ. կեդր. արխիւներուն մէջ ան կը կրէ 455-3 համարը: Թիւ 1–9 ծանօթագրութիւններն եւս Վրացեանին են, թիւ 10-20-ը մենք ենք աւելցուցած:

Նիկոլ Դումանի առաջին այս նամակը ուղղուած է Ժընեւ՝ Ռոստոմին, որուն ծանօթացած էր ան 1891 թուականին Թաւրիզի մէջ, երբ վերջինս կը գտնուէր այդ քաղաքը: Այդ տարին Ն. Դուման եւս հրաւիրուած էր պաշտօնավարելու քաղաքի Լիլաւա կոչուող թաղամասի Հայկազեան դպրոցին մէջ: Հրաւիրողը՝ Շուշիի թեմական վարժարանի իր երբեմնի դասընկեր եւ այժմ դպրոցին տեսուչ կարգուած Յոնան Դաւթեանն էր,– Դաշնակցութեան հիմնադիր սերունդի նուիրեալ դէմքերէն ու միեւնոյն ժամանակ կուսակցութեան յայտնի տեսաբաններէն մէկը:

Հարկ է այստեղ, գէթ համառօտակի, անդրադառնալ այն եզակի դերին, զոր ունեցած է Պարսկաստանի հիւսիսային նահանգ հանդիսացող Ատրպատականը հայկական նորագոյն ազատագրական շարժման մէջ: Պատմական Հայաստանի Հեր եւ Զարեւանդ գաւառները պարփակող այս շրջանը եղած է հայաստանամերձ ու նաեւ հայահոծ այն գօտին, որ ծառայած է որպէս փորձադաշտ մեր յեղափոխական կուսակցութիւններուն՝ արմենական, հնչակեան թէ դաշնակցական: Վերջինս իր հիմնադրութենէն անմիջապէս ետք, Վասպուրականի սահմանակից այդ երկրամասը պիտի դարձնէր մտաւորական եւ մարտական ուժերու կեդրոնացման վայր, այդտեղէն դէպի Երկիր գործիչներու, մարտիկներու եւ զէնք-զինամթերքի առաքման համար: Ատով ալ պէտք է բացատրել 1890-էն սկսեալ Ռոստոմի, Յոնան Դաւթեանի, Յովսէփ Արղութեանի (Իշխան), Վարդանի (Խանասորայ), Սեւքարեցի Սաքոյի եւ շատ ուրիշ անուանի գործիչներու ներկայութիւնը Ատրպատականի մէջ:

Թէ միեւնո՞յն նպատակով էր Նիկոլ Դուման անցած այդ շրջանը, հաւաստի ոչ մէկ փաստ ունինք այդ մասին, բայց որ ուսուցչական պաշտօնի կողքին շուտով ան պիտի դառնար մեր մարտական ամէնէն աչքառու դէմքերէն մէկը, եթէ ոչ ամէնէն հեղինակաւորը, այդ արդէն անվիճելի փաստ է:

3 *Մարտ* 1893
Թաւրիզ

[*Ժընեւ՝ «Դրօշակ»ի խմբագրութեան*]

Սիրելի Ռոստոմ,

Ժընեւայից գրած քո նամակով դեռ տրտնջում էլ ես, որ դիւր չի գալիս քեզ այդ քաղաքը, մինչդեռ տիւ եւ գիշեր մենք երանի ենք տալիս քեզ, որ գլուխդ վախտին ազատեցիր Պարսկաստանի յիմար ու մաշող կեանքից: Ի՞նչ կեանք է սա. միշտ հալածանք, շարունակ անախորժութիւն, մէկը միւսի ետեւից հասնող թշւառութիւն, հոգեկան անվերջ յուզմունք, իսկ մխիթարութիւն բնա՛ւ եւ ո՛չ

մի տեղից։ Դեռ բացի դրանից, հին մուրտառ պարտքերն էլ չլինքներիս ծանրացած՝ պարտատէրերն էլ ամէն օր գահլա տանելիս, ինքներս էլ չրջապատուած քեզ լաւ ծանօթ նենդ ու խորամանկ մարդկանցով, որոնց աչքը իրանց սեփական շահից մի քայլ հեռուն անգամ չի տեսնում (խօսքս մի քանի բացառութիւնների մասին չէ, ի հարկէ, որոնց վրայ դարձեալ կասկածանքով ենք նայում)։ Այսպէս եթէ շարունակւի տրտունջը՝ հեռուն կը տանի. մի կողմը թողնենք այդ եւ ամառանից այս կողմը տեղի ունեցած դէպքերը ներկայացնենք համառօտակի։ — Վանքի երկպառակութիւնից յետոյ՝ Ալէքը(1) հեռացաւ իւր ընկեր Մովսէսի հետ, ինքը Ուրմի՝ իւր կնութեան իրաւունք ստացած սիրուհու մօտ, իսկ Մովսէսը իբր թէ Թեհրան, բայց յետոյ ստուգւեցաւ, որ նա գնացել է Բագու եւ այնտեղից էլ Թիֆլիս — իսկ թէ ինչո՞ւ, տակաւին անյայտ է մեզ այդ. միայն այսքանը գիտենք որոշ, որ նա այս քանի օրը Գարեգինի եւ Ագրիպասեանի(2) հետ վերադարձել է Սալմաստ — նրանցից չը գիտենք ո՞րը կամ որոնք — մե՛ր ծախքով։ Բեհեղզեբիւղ ընդ նոսա եւ ընդ առաքողացն, որոնք ուղարկել են նրանց առանց մեր գիտութեան, հակառակ ծրագրի եւ նոյնիսկ արդի հանգամանքների։ Արդի հանգամանքները չա՛տ վատ են դասաւորուած եւ միանգամայն աննպաստ են մեզ համար։ Հինգ ամսից ի վեր այստեղ է վարդապետը(3), բայց, աննպաստ հանգամանքների շնորհիւ, կարգի չեն բերւում վանական խճճւած գործերը։ Վանքի պարիսպները բարձրագոյն հրամանով քանդւեցին, որի վերաշինութեան համար Թեհրանից ստացւեցաւ իրաւունք, բայց նորագոյն հրամանով դարձեալ արգելւում է վերաշինութիւնը։ Դու տեղեակ ես Պարսկաստանի միեւնոյն աղբիւրներից բխած հակասական հրամանագիրներին։ Անցնինք վանքում մնացած մարդկանցը։ Լեւոնը, խօմ գիտես, նախ քան մեր հեռացնելը, ինքն իրան հեռացաւ՝ եղբօր մահւան պատճառով։ Սարգիսը(4) վանահօր փոխանորդի պաշտօնով Նախավկայ(10) գնաց։ Երւանդն(11) էլ իր նախկին թափառական կեանքն էր վարում։ Վանքում մնացել էին Վարդանն ու Գալուստը(12)՝ երկու նորեկ վանեցի գիւղականների հետ։ Սակայն, երկու անգամ ապարդիւն խուզարկութիւնից յետոյ, վանքը տաճիկ կառավարութեան եւ կաթոլիկների դրդմամբ՝ նորից խուզարկւեցաւ, որի ժամանակ ձերբակալւեցան երկու վանեցիները եւ նորերս ազատւեցան 100 թուման կաշառք տալուց եւ երկու հրացան կորցնելուց յետոյ։ Այդ հրացաններից մէկը մնաց Սարֆաբազի, իսկ միւսը՝ կաթոլիկ Աթանաս վարդապետի մօտ, որը տաճկական հիւպատոսի փոխանորդութեան պաշտօնն է կատարում Սալմաստում եւ որի մօտ բանտարկւած էին բռնւածները։ Դրանից զատ՝ մի ուրիշ հրացան է՛լ կուլ տւաւ Սարֆաբազը, որ ձեռք էր բերել վանեցիների բնակարանը խուզարկելու ժամանակ — Սալմաստում։ Դեռ այս զրկանքն ու կորուստները չա՛տ փոքր են՝ համեմատած Մուրադի եւ ընկերների մահւան հետ։ Այս դէպքերից փոքր ինչ առաջ՝ Մուրադը իւր 4 հայրենակիցների հետ, երբ գրչակոթ(13) էին տեղափոխում, տաճկական քրդերի հետ կռւի են բռնւում Կոդուլի ձորում։ Ինչպէս պատմում են, թշնամիներից երկուսին սպանելուց եւ 10-15 վիրաւորելուց յետոյ, Մուրադը սպանւում է քիւրդերից իւր երկու ընկերների հետ, իսկ միւս երկուսին աջողւում է մի կերպ ազատել իրանց գլուխը՝ փախուստ տալով։ Սպանւածնե-

րի գլխները կտրում, Վան են հասցնում, բայց չեն կարողանում ճանաչել՝ դէմքերի կերպարանափոխութեան պատճառով։ Նրանց յիշատակին մենք այստեղ վանեցիների հետ ընտանեկան հոգեհանգիստ կատարեցինք եւ դրանով գոհ մնացինք, ի հարկէ... Վերը յիշած դէպքերի հետեւանքը եղաւ այն, որ պարսիկ կառավարութիւնը խիստ հալածանք բարձրացրեց Սալմաստում բոլոր օտարականների դէմ եւ մերոնք ծակէ ծակ մտան։ Բայց պարզ հալածանքով չը բաւականացաւ կառավարութիւնը։ Բոլոր գիւղերից ձեռագիր (պոդպիսկա) առաւ, որով տուողները պարտաւորւում են ոչ մի օտարական չը պահել իրանց տան մէջ, հակառակ դիպւածում պէտք է վճարեն մեծամեծ տուգանքներ։ Մերոնց համար անհնարին լինելով Սալմաստում այլեւս ապրել՝ եկել, լեցւել են քաղաքը, դատարկ թողնելով վանքն ու Սալմաստը։ Այժմ մեր դրութիւնը ծանր ու խառնակ վիճակի մէջ է։ Վարդապետը իր վանական խճճւած գործերի կարգի բերելով է զբաղւած, բայց ոչինչ չի աջողում, շնորհիւ աւանակ փոխանորդ Խաչատուր փայտագոյն (ծայրագոյն) վարդապետի։ Միւս կողմից էլ մեր վարդապետը հանգանակութեան ետեւից է ընկած, որ գոնէ կարողանայ վանքի վրայ ծանրացած 300 թուման պարտքի գէ՛թ մի մասը վճարել եւ հոգալ ընթացիկ անհրաժեշտ ծախքերը։ Ղալայում հասցրել է արդէն 100 թումանի, իսկ Լիլաւա(14) դեռ չէ անցել։

Մեր գլուխն էլ խառնւած է մի կողմից ցրւելիք բազմաթիւ տղաների համար անցագրեր ձեռք բերելու հոգսով, իսկ միւս կողմից Երւանդի ու իւր մի վանեցի ընկերի Թաւրիզում նոր հանած խաթա-բալայով։ Անցեալ ամսի 23-ին, այդ երկուքը հանգստարանից արբած վերադառնալու ժամանակ, կռիւ են սարքում թուրք ամբոխի հետ Ղարաղաջի տակ։ Երւանդի ընկերը, որին դու չես ճանաչում, ռեվոլվերից մի քանի անգամ արձակում է, բայց անվնաս։ Դրանից յետոյ, բռնւում են երկուսը, լաւ ջարդւում, փշրւում փայտերով ու դաշոյնով վիրաւորւում, որի լուրը մեզ է հասնում եւ մենք անմիջապէս օգնութեան ենք վազում։ Մենք էլ մեր բաժինն ենք ուտում։ Իմ գլուխն են պատռում, Յօնանի(15) թեւը կախ քցում. ուրիշներն էլ են առնում դագանակների համը, բայց թեթեւ։ Յուզւած պարսիկ ամբոխը կարողանում է Ղալա-Բէկու մօտ տանել միայն Երւանդի անապահով ընկերին։ Այս ծեծել, ծեծւելու եւ նրան բանտ տանելու գործով՝ ոտքի է կանգնում գրեթէ ամբողջ Լիլաւան՝ առաջնորդւած հոգաբարձուներից ու իշխանաւորներից եւ, առաւելապէս, Աբրահամից։ Տղային նոյն գիշերը ազատում են բանտից, հետեւեալ օրը տանում եւ դարձեալ ազատում, որ եւ հիւանդ պառկած է այժմ։ Տեսնենք սրա վախճանն ի՞նչ կը դառնայ։ Մերոնք էլ դիմել են հիւպատոսին եւ «պատիւ են պահանջում», միայն ծեծւելու համար, ի հարկէ։ Ես ու Յօնանն էլ տանը նստած՝ մեր իրաւունքի տկարութեամբ մխիթարում ենք իրար։ Հիւպատոսը պահանջում է Մուշտաշառ Դովլայից, որ խստիւ պատժի կռւի պարագլուխ սէյիդին ու մոլլային, միեւնոյն ժամանակ իւր կողմից առանձնապէս հեռագրով տեղեկութիւն տալով Թեհրանի դեսպանին եւ նրա ազդեցութիւնը խնդրելով այս գործի առիթով։ Բուն պատճառը ներկայացրւած է Ղարաղաջի տակ գտնւող շների յարձակումը տղաների վրայ՝ մոլլային ու սէյիդի գրգռմամբ։ Բարեբախտաբար նոյն շները նոյն սէյիդի

գրգռմամբ մեր դէպքից 2 օր յետոյ յարձակւել են Յակոբ Կարապետի եւ իւր կնոջ վրայ։ Դրա համար նա էլ դիմել է տաճիկ կոնսուլին եւ սրան էլ խառնել գործի մէջ։ Ասում են, որ Բերնէն(16) էլ նոյն պատճառով միջամտել է։ Հայերն էլ գանգատւում են նոյն մարդկանց գրգռմամբ՝ դարձեալ նոյն շների յարձակումից իրանց ընտանիքների վրայ։ Սրանք ամէնքը այս կողմից, յուզւած պարսիկ ժողովուրդն այն կողմից՝ ամէն օր չափչփում են դատարաններն ու փողոցները։ Գործը հասել է մինչեւ իսկ Աղա-մուշտէյիդին եւ շների հարցը դառել է «միջազգային խնդիր»։ Մեր բոլոր տղորցից բացի, այստեղ են նաեւ Սալմաստի 10 ներկայացուցիչները, որոնք անշնորհք յաջորդի անշնորհք առաջնորդութեամբ յուսահատական կռիւ են մղում խառնակ դէպքերից օգտւող Լօթի-Իսախանի դէմ եւ յետ են պահանջում զանազան ժամանակներում նրա լափած 600 թուման կաշառքը։ Կաշառքի քանակութիւնը հասնում է 1600 թումանի, բայց առայժմ 600 թումանի տէրերն ու արտօնեալ հաւատարմատարներն են ասպարէզի վրայ։ Այստեղ է եւ Տիգրանը(5), որ քո յաջորդն է։ Նա էլ հանգիստ չի նստում. երեւի իւր տեղը լայնացնելու համար՝ խուլ կռիւ է մղում մեր դէմ եւ (աշկարայ) վարդապետի դէմ, իր արբանեակների միջոցով եւ նամակներով աննպաստ լուրեր տարածելով Թաւրիզում ու Սալմաստում։ Մեր յարաբերութիւններն էլ կտրւած են լիապէս որպէս Տիգրանից, նոյնպէս եւ միացեալ արմենականներից՝ սկսած այն օրից, երբ նոքա խօլերայի ժամանակ զլացան օգնել մեր արհեստաւոր տղորցը։ Մոռացայ, այստեղ է եւ պարապ-սարապ, փթած-հոտած Աննիբալը։ Ինչ եւ իցէ, «բազում իցեն նեղիչք մեր», բայց ո՛չ թէ Աննիբալն ու իւրայինները, այլ մեր պարտատէրերը։ Մեր նախորդները հանգիստ ու փափուկ ապրելուց բացի, ամսական 15 ռուբլի էլ պենսիա(17) էին ստանում, որ թուրքերէն թարգմանւում է «լօթի-խաշլըղի» բառով։ Իսկ մեզ, որպէս ժառանգութիւն, մնացել է նրանցից աւելի քան 1300 մանէթ պարտք եւ բարոյական անկում, որ այժմ փարատել ենք տքնում։ Խօմ սուտ չէ, որ ասում են՝ «Հարք կերին զազոխ եւ որդւոց ատամունք առան»։ Յայտնի 700 մանէթի առթիւ սեւերես ենք մնացել պ. Աբրահամի առաջ, առաւել Յօնանը այդ բանի մէջ։ Դեռ չը հաշւած մանր-մունր, բայց գումարը նշանաւոր պարտքերը. միւս կողմից էլ բժիշկն է անհանգիստ անում մեր խաղաղութիւնը։ Ամէն օր դուռը ծեծել, ամէն օր պահանջ ամենատեսակ մարդկանց ներկայութեամբ — ըստ ամենայնի խայտառակութիւն խայտառակութեանց. բայց ո՞րտեղից եւ ի՞նչ միջոցներով հատուցանենք։ Ոչ մի տեղից նիւթական օգնութիւն չը կայ բնաւ։ Իսկ մեր ռոճկից անկարող ենք գէ՛թ թեթեւացնել այդ պարտքերը, քանի որ մեր ռոճկի քանակութիւնը շատ էլ նախանձելի չէ եւ առանց այն էլ ամսական քսան չորս ռուբլի տալիս ենք հրեշտակի դէմքով, բայց սատանայի սեւ սրտով դարդ ու բալա Ներսէսին(6), հոգում ենք փոստայի ոչ-սակաւ ծախքը, պահում ենք Միհրանին(18), մասամբ ապրուստ ենք տալիս Դ.թեան միւս մարդկանցը։ Մենք ապրում ենք քարին քացի տալով, որպէսզի եօլա գնայ գործը։ Բայց այդքան զրկանքներից յետոյ՝ պարտքը մնում է պարտք եւ դեռ քիչ-քիչ աւելանում է, քանի որ չը կայ արդիւնքի եւ ոչ մի, թէկուզ աննշան, աղբիւր։

Տրամադրութիւններս փճացաւ, թէեւ վերջին ժամանակներս լաւ չեն լինում

երբեք։ Նոր լուր ստացուեցաւ, որ կառավարութիւնը խստիւ պահանջում է Երևանդի մեղսակիցին եւ որ նրա ո՛վ լինելը մանրամասնօրէն արդէն յայտնի է ինչպէս տաճկաց հիւպատոսին, նոյնպէս եւ քեարգիւզարին ու ղալաբէկուն։ Կացութիւններս դժւարացաւ. մի կողմից նրան յանձնելն է դժւար, միւս կողմից՝ փախցնելը, որով վտանգաւոր թակարդի մէջ կը մնան բարերար առաջաւորները։

Այստեղի թոնրից(7) *կտրիր յոյսդ եւ ոյժ տուր այդտեղ։ Այդ մասին արդէն դիմուած է Աթաբէկեանին, որ եւ համաձայնում է օգնել իւր աւելորդ գլխագրերով։ Եթէ տակաւին ծանօթ չես հետը, թո՛ղ Մելիքովը ծանօթացնի եւ խօսիր այդ առթիւ։ Ի դէպ, այդտեղի օրէնքների հետ լաւ ծանօթացիր եւ տես հնարաւո՞ր է արդեօք, որ մեր Ժընեւացին*(8) *գայ այդտեղ, կամ առանց գալու իւր համար անցագիր ձեռք բերելու*(*)։ *Ականջի ետեւը քցելու խնդիր չէ սա։ «Բռնի-բռնին» ընկել է մեզանում. ես էլ պիտի փախչեմ քննութիւնները վերջանալուն պէս։ Արիստակէսն*(19) *ու Երևանդը գործում են Բագւում։ Միհրանը այստեղ մենակ չախկ ու չուխկ է անում։ Առայժմ այսքանով բաւականացիր եւ սովորիր մարդավարի նամակ գրել։ Երբ Սալմաստում անհամբեր սպասում էի ժողովի հետեւանքին՝ խոլերայի խրատներ էիր կարդում գլխիս, իսկ Գալացից*(20) *ճանապարհորդական դարտակ-մարտակ տպաւորութիւններ էիր հաղորդում։* 150 *օր*[*ինակ*](9) *ստացանք եւ ցրեցինք մինչեւ Թիֆլիս։ Քեզ եւ Պաւլուն բարեւ եւ եթէ կ՚ուզէք մինչեւ իսկ ջերմ համբոյրներ։ Միայն մի՛ հետեւիր ոչ նրա ծուլութեանը նամակագրութեան մէջ եւ ոչ էլ Ժընեւացի լինելու հպարտութեանը։*

Ամէնքի կողմից՝
Քո Ն.

Շնորհաւորում եմ Նորին Կայսերական Վեհափառութեան գահակալութեան տօնը:

Մարտին 2, ՁԱՔՔԻ

Ռոստո՛մ, քո Գալացից գրած նամակից յետոյ մի նամակ եմ գրել քո տուած հասցէով. երեւի չես ստացել, որ գանգատւում ես: Բարեւս քեզ եւ Մելիքեանին:

ԵՐՈՒԱՆԴ

*) Յոնանի ձեռքով գրուած է. «*Յատուկ բան չէ. ինձ համարում են չէֆ եւ մանրամասն տեղեկութիւն ունին իմ մասին — ով լինելս, ինչ լինելս եւ որտեղա-*

ցի լինելս։ Երեւի, երբ առիթ լինի կամ հարկը պահանջի, ոտներս փալախկում կը դնեն եւ «պարսկական դատաստան» կ՚անեն. չունը մեր օրումը չլինի։ Պասպորտ ստանալու օրէնքի հետ լաւ ծանօթացիր եւ եթէ հնարաւորութիւն կայ, ինձ գրիր։ Իսկ եթէ ոչ՝ ինքս գալու լինիմ եւ մէկ կամ երկու տարի մնամ, կարող եմ ստանալ, ի նկատի ունենալով, որ ես այդտեղ մնացել եմ 3-4 տարի։ Առանց անցագրի, էստեղ մնալու առայժմ հնարաւորութիւն չկայ եւ վտանգ է սպառնում։

ԺԸՆԵԻԱՑԻ

1.- Դերիկի վանքի կառավարիչ:
2.- Գարեգին Մանուկեան եւ Կ. Ագրիպասեան – արմենականներ:
3.- Բ. Թաւաքալեան վարդապետ, վանահայր Դերիկի վանքին:
4.- Սեւքարեցի Սաքօ:
5.- Տ. Ստեփանեան:
6.- Վանեցիների ներկայացուցիչը Թաւրիզում, որին դաշնակց. ուսուցիչները տեղ էին տուել դպրոցում, բայց ռոճիկը իրենք էին վճարում:
7.- Տպարանից:
8.- Յովնան Դաւթեան:
9.- «Դրօշակ»:
10.- Հին Զուղայէն հարաւ, Պարսկաստանի սահմաններէն ներս, Ս. Ստեփանոս Նախավկայի վանք:
11.- Չշփոթել Իշխանի հետ (Յովսէփ Արղութեան), որ ծանօթ էր նաեւ Երուանդ ու Տաշօ ծածկանուններով: Այս մէկը Երուանդ Բաբերեանն է, ծանօթ Զալլադ ծածկանունով:
12.- Ապագայի ծանօթ Խանասորի Վարդանը (իսկական անունը՝ Սարգիս Մեհրաբեան) եւ Գալուստ Ալոյեան, ծանօթ Դարվիշ ծածկանունով:
13.- Գրիչը փամփուշտն է, գրչակոթը՝ հրացան:
14.- Ղալա եւ Լիլաւա՝ Թաւրիզի հայկական թաղամասեր են:
15.- Յոնան Դաւթեան, Դաշնակցութեան առաջին ղեկավար դէմքերէն եւ գաղափարախօսներէն: 1891–1893 տարիներուն կը վարէր Թաւրիզի Հայկազեան դպրոցի տեսչութեան պաշտօնը:
16.- Բերնէ – Թաւրիզի մէջ Ֆրանսայի հիւպատոս:
17.- Թոշակ:
18.- Միհրանը՝ (Էքմէքճեան Միսաք) Թաւրիզի Դաշնակցութեան զինագործարանի վարպետներէն:
19.- Արիստակէս Զօրեան, Ռոստոմի կրտսեր եղբայրը:
20.- Գալաց – քաղաք Ռումանիոյ մէջ, ուր կը գտնուէր «Դրօշակ»ի տպագրական մամուլը, զոր Ժընեւ փոխադրելու համար Ռոստոմ դրամական միջոցի պէտք ունէր: Նիկոլի յիշած «այստեղի թոնրից»ը, այն իմաստով է, որ Ռոստոմ յոյս չկապէ Թաւրիզէն դրամ ստանալու վրայ:

2

Փաստ. 455-7

20 *Օգոստոս* 1893
Սալմաստ

Սիրելի Պետո(1),

Յայսօր քո գրած նամակները, թղթակցութիւնները, օրագիրն ու տեղեկագիրը եւ վերջապէս քո եւ տեղւոյդ կոմիտէի վերջին տեսութիւնները ստացել ենք երբեմն ժամանակին եւ երբեմն անկանոն յարաբերութեանց պատճառով ուշ ժամանակից։ Քո ոչ մի նամակից չի երեւում, որ ստացած լինես մեր նամակները, որոնք, ճիշտը խոստովանած, շատ սակաւաթիւ էին։ Ինչպէս երեւում է, մինչեւ իսկ չը գիտես թէ՝ մեր ընկերներից որո՞նք են այստեղ։ Անցեալ ուս[ումնական] տարւայ ընթացքում ինձնից ու Յօնանից բացի, կային եւ Յովսէփ Ա[լրուութեան]ը, Սաթենիկ Մ[ատին]եանը, եւ ոմն Ստեփան Տէր-Ստեփանեան՝ նախկին ուսուցիչ Ալեքսանդրոպոլի քաղաքական դպրոցի։ Այս տարի մնում են առաջին չորս հոգիք, իսկ վերջնին, այսինքն Ստեփանին, հաւանօրէն պիտի փոխարինէ Սարգիս Օհանջանեան Երեւանցի(2)։ *Այժմ անցնենք քո եւ կոմիտէի վերջին գրութիւնների պատասխանին համառօտակի։ Համառօտակի եմ ասում, որովհետեւ ընդարձակօրէն պիտի գրէ Յովսէփը*(3), *որին եւ յանձնարարուած է։ Իսկ ես մանրամասնութիւնը նկարագրելու ժամանակ ու հնարաւորութիւն չունիմ նախ՝ ա՛յն պատճառով, որ պատրաստւում եմ վաղը Թաւրիզ գնալ, եւ երկրորդ՝ որ նամակաբերը մի քանի ժամից յետոյ պիտի ճանապարհուի դէպի ձեր կողմերը։*

Մեր յարաբերութիւնները այդտեղացիների հետ, ինքդ էլ քա՛ջ գիտես որ լաւ էին ընդհանրապէս։ Բայց նոյն ուս[ումնական] տարւայ հէնց սկզբից սկսեցին հետզհետէ վատթարանալ, որի բուն պատճառը կը կարդաս Յովսէփի ընդարձակ նամակում։ Առ այժմ ես միայն այսքանը կ՚ասեմ, որ մեր յարաբերութիւնների վատթար ընթացքը ա՛յնքան զարգացաւ, որ ի վերջոյ առիթ եղաւ այսօրւայ անհաճոյ գժտութիւններին։ Այդ գժտութիւնները բառնալու համար էր, որ ստացւեցան ձեր հրաւէրն ի միութիւն Արմենականների հետ եւ յորդորն՝ ի խաղաղութիւն ընկերաց՝ այլ քանի մը կէտերով հանդերձ։ Դրա համար ժողով կազմեցինք այստեղ, ուր ներկայ էին Գ-նը, Աւ[ետիս]եանը, Ներսէսը, Ադ[րիպաս]եանը եւ օրիորդն ու Յովսէփը ինձ հետ միասին(4)։ *Արմենականների հետ միանալու խնդիրը վեր լինելով մեր իրաւասութեան շրջանակից, մի կողմ թողնւեցաւ։ Այնուհետեւ սկսեցինք քննադատել ա՛յն պատճառները, որոնցից բղխել է այսօրւայ գժտութիւնը։ Ընդհանրապէս վանեցիք եւ մասնաւորապէս Ներսէսը մեղադրում են քեզ, Պետո՛, որ խաբել ես նրանց քո ա՛յն խոստումով, որ ասել ես թէ՝ Պարսկաստան եկողները մեր կողմից կը գտնեն ամենայն աջակ-*

ցութիւն ու օժանդակութիւն եւ ինչքան ուզենան՝ կարող են ստանալ գրչակոթ ու գրչածայր(5)։ Առաջին կէտը մենք կատարել ենք խղճի մտօք եւ ասեմ, թէ ի՞նչպէս։ Նախ քան Ներսէսի գալը Թիֆլիսից, մենք վարձել էինք երկու տուն, մէկը վարժապետների համար, որոնց թւում եւ Ներսէսը, իսկ միւսը արհեստաւորների համար, որոնց հետ պիտի ապրէին միւս վանեցիք։ Ներսէսը գալուց յետոյ այսպէս էլ առաջարկւեցաւ իրան, բայց մերժեց, պատճառաբանելով, որ ինքը չի կարող բաժանւել վանեցիներից։ Այսպիսով ցաւ ի սիրտ՝ ստիպւած եղանք տալ նրան համահաւասար ռոճիկ, այն էլ մեր սեփականից, քանի որ հոգաբարձութիւնից չէինք կարող ոչինչ առնել՝ ուսուցչի պէտք չը լինելու պատճառով։ Ներսէսը իր եւ վանեցոց մեզ հետ նոյնանման ապրելը մերժելուց յետոյ՝ մենք, բացի նրա ռոճկից, մտադրւեցանք տալ ապրուստի եւ ուրիշ դիւրութիւններ, բայց նկատելով որ նա շարունակ օթեակի մէջ է թափառում եւ ըստ երեւոյթին բարեկամ է նրանց հետ, իսկ մեզ հետ՝ պաշտօնական անձնաւորութիւն, կորցրինք մեր վստահութիւնը եւ մերժեցինք ամէն մի դրամական օժանդակութիւն, բացի իւր ռոճկից։ Ուրիշ կերպ էլ չէինք կարող վարւել, քանի որ նա իրան ներկայացնում էր որպէս ընդհանուր ներկայացուցիչ համայն Վանայ։ Իսկ ինչ վերաբերում է երկրորդ կէտին, այսինքն գրչակոթ ու գրչածայր տալուն, այս հարցն ենք դնում ուղղակի. ո՞վ եւ ե՞րբ դիմեց մեզ գրչակոթ ու գրչածայր ստանալու համար, բայց մերժւեցաւ։ Թո՛ղ ցոյց տան մեզ թէկուզ մի օրինակ։ Ճշմարիտ է, նրանք յաճախ ասում էին, թէ մերոնք վստահելի չեն, բայց մենք էլ միշտ պատասխանում էինք, թէ առայժմ դրանից լաւերը չենք կարողանում գտնել, ցոյց տւէք լաւագոյն գրչակոթեր եւ մենք կ՚առնենք։ Ա՛րդ, ո՞վ, ե՞րբ եւ ո՞րտեղ գտաւ մեզ համար աւելի լաւերը, որ մենք չգնեցինք։ Երկար ու բարակ ապարդիւն վիճաբանութիւններից յետոյ զանազան խնդիրների մասին՝ անցանք ծրագրին։ Զէ՞ որ դուք գրել էիք, թէ ծրագիրն ընդունւեցաւ բացի նպատակից, որի դէմ քիչ մը թեր եւ դէմ կարծիքներ եղան։ Նպատակի մասին մեր մէջ էլ կան թեր եւ դէմ կարծիքներ, բայց այդ չէ խանգարում ծրագրի ընդունելութեանը։ Սակայն նրանց բարբառածը միայն ծրագիրը չէ. ասում են, որ Դրօշակը Ի՛լ չը լինի, այլ օրգան համարւի «Արմէնիա»ն։ Մինչ այստեղ սխալմամբ գործածեցի ընդհանուր կերպով «նրանք», «նրանց» եւ այլն։ Այդպէս չէ։ Այսպէս պնդողները Ներսէսն ու Աւ[ետիս]եանն են, որ միշտ «Արմէնիա»յի օգտին են տաշում։ Գ[արեգի]ն ու Ագ[րիպաս]եանը ասում են, որ Վանայ խումբը անկախ կազմակերպութիւն է, եւ կարող է ազատօրէն յարաբերութեանց մէջ մտնել Դաշնակցութեան հետ. իսկ միւս տղաների մեծագոյն մասը ասում է, որ իրանք կուսակցութիւն չեն ճանաչում, իրանց հարկաւոր է միայն գործ։ Եւ այդ գործը կը կատարեն նրա օգտին, որից կը ստանան բարոյական ու նիւթական ոյժ, նամանաւանդ, որ բոլոր յեղափոխականների նպատակն էլ մէկ է, այն է՝ անկախութիւն հայրենիքի, իսկ այդ անկախութիւնը թէ ի՞նչ կազմակերպութեան տակ կը լինի, դա կ՚որոշւի ապագայ քաղաքական հանգամանքներով։

Այս բոլորից յետոյ եկանք հետեւեալ եզրակացութեան.

Քանի որ Վանայ կազմակերպութեան հետ միանալու խնդիրը պարզորոշ դրուած է ասպարէզի վրայ եւ ոմանց պնդելով այդ կազմակերպութիւնը Արմենական կուսակցութեան մի ճիւղն է, որը մեզանից ակնկալում է միայն դրամ եւ զէնք, մենք բնաւ չենք կարող գործ ունենալ այդ կազմակերպութեան հետ։ Մեզ միայն կը մնայ որոնել այդտեղ եւ այստեղ անկեղծ ու վստահելի ընկերներ, որոնք կապուած լինին մեզ հետ ո՛չ թէ միայն նիւթական, այլ եւ բարոյական ամրակուռ կապերով ու շահերով։ Այն ժամանակ ընկերվարութեան հիմը չի լինի խախուտ եւ մենք չենք խնայի մեր հոգին ու մարմինը, նոյնը կը պահանջենք եւ նրանցից։ Իսկ եթէ քեզ չի աջողիլ այդտեղ գտնել ընկերներ, բառի բուն նշանակութեամբ, ընկերներ գործի եւ ո՛չ թէ անձի, այն ժամանակ, հոգեա՛կ, քեզ կը մնայ «մնաս բարեաւ» ասել Վանին եւ վերադառնալ մեզ մօտ։ Գործելու համար ուրիշ անկիւններ շատ կան։ Երկու տարուայ ընթացքում հաւանօրէն մեր բարեկամները ճանաչած կը լինին Դաշնակցութեան։ Իսկ եթէ ծանօթութեան համար դեռ եւս կայ պակաս կողմը, լրացրու այդ պակասը, լրացրու՝ իր բոլոր լաւ եւ պակասաւոր կողմերով։ Թո՛ղ ուրիշները թաքցնեն իրանց պակասաւոր կողմերը, այդ մեզ չի վերաբերում։ Այս բոլորի մասին խօսի՛ր տեղւոյդ կոմիտէի յարգելի անդամների հետ եւ հետեւանքի մասին շուտափոյթ տեղեկութիւն հաղորդի՛ր։ Մենք այստեղի վանեցիների հետ առ այժմ դադարեցրինք մեր գործը եւ սպասում ենք այդտեղի վերջնական ու հիմնաւոր եզրակացութեան սոյն գործի նկատմամբ։ Չը մոռանամ ասել, որ Ձեր եզրակացութիւնը չը հիմնէք շտապ ձեռքով գրած այս նամակի վրայ, սպասեցէք մանրամասնութեան։ Ես կ՚երթամ վաղը, իսկ Սաթենիկը քիչ տկար լինելու պատճառով Յովսէփի հետ կը գայ մի շաբաթից յետոյ։ Յոնանը(6) *գնացել է Էջմիածին, այնտեղից էլ Թիֆլիզ։ Նոր տեղեկութիւն չունինք նրանից։ Արիստակէսը*(7) *գրում է որ առել է* 200 *հատ գրչակոթ,* 800*-ի էլ յոյս կայ. տեսնենք. ի վերջոյ այս վատ ճանապարհներով ուղարկում եմ ջերմ համբոյրներս։*

Յգրութիւն, քո՝ Ն.

1.- Աղեքսանդր Պետրոսեան, Վանի դաշնակցական գործիչներէն, որ հետագային հանդիսացաւ Վանի 1896 թ. ինքնապաշտպանութեան ղեկավարներէն եւ նահատակուեցաւ դէպի Ատրպատական նահանջի ճամբուն վրայ:

2.- Սարգիս Օհանջանեանը (1869–1918), ծանօթ Ֆար-Հատ ծածկանունով:

3.- Յովսէփ Արղութեանը:

4.- Գ–նը Գարեգին Մանուկեան, արմենական գործիչ: Օրիորդը՝ Սաթենիկ Մատինեանն է, Յովսէփ Արղութեանի ապագայ կինը: Աւետիսեանը՝ բուն անունով Սկրտիչ Թերլէմեզեան, արմենականներու ղեկավարն է:

5.- Գրչակոթը հրացանն է, գրչածայրը՝ փամփուշտ:

6.- Յոնան Դաւթեան որ դպրոցի տեսչութենէն հրաժարելով անցած էր Թիֆլիս, անկէ Ժընեւ մեկնելու համար:

7.- Ռոստոմի կրտսեր եղբայրը, որ կը զբաղէր նաեւ զինական գնումներով:

3

Փաստ. 455-10

Նիկոլ Դումանի այս գրութիւնը կցուած է Սարգիս Օհանջանեանի (Ֆար-Հատ) կողմէ Ժընեւի ընկերներուն, յատկապէս Յոնան Դաւթեանի ուղղուած նամակի մը, որուն յետ գրութեան մէջ ան կը գրէ. «Այժմ Նիկոլը մեզ մօտ, ինձ հետ է ապրում»:

21 *Նոյեմբեր* 1893
Թաւրիզ

Սիրելիք,

Ուզում եմ գրել, բայց ո՛չ միայն գրել այլ եւ պայթել։ Սակայն փոքր ինչ մուլապ տուէք(1)*, մինչեւ որ Պետոն*(2) *գայ, մի քիչ խօսինք նրա հետ դէսից-դէնից, փոքր ինչ հոգեկան խաղաղութիւն ձեռք բերենք եւ այնուհետեւ կը գրեմ ես մի նամակ, այն էլ գուռնա նամակ, որից կարելի լինի մի որոշ բան հասկանալ։ Առ այժմ այսքանը կասեմ, որ Ռոստոմի՝ վանեցիների օգտին տւած կօնցերտից ստացւած ֆրանկները պինդ ձեռքով պահէք, գուցէ աւելի յարմար դատւի կազմւելիք խմբերի նախապատրաստական ծախքերին յատկացնել։ Այդ նպատակով գրւած է եւ Երեւան ու Ցղնայ, որ այժմէն իսկ հոգ տանին այդ մասին. երանի թէ աջողւէր խմբերի կազմակերպութիւնը եւ մենք միանգամից ընդ միշտ ազատւէինք արդի ընկերական մուրտառ կեանքից։*

Բաւական է, ցտ՛գրութիւն։

Ընդունեցէք համբոյրներս։

Ն.

1.- Մուլապ տուէք. կը նշանակէ՝ հանգիստ, դադար տուէք:
2.- Աղեքսանդր Պետրոսեանը, Վանի ծանօթ գործիչ եւ մարտիկ:

4

Փաստ. 456-13

15 *Փետրուար* 1894
Թաւրիզ

[*Ժընեւ՝ «Դրօշակ»ի խմբագրութեան*]

Սիրելի՛ք,

Իմ ու Սարգիսի ի մի ծրարած նախորդ նամակը(1), *որ բաւական ընդարձակ էր եւ պատւիրած, ստացած կը լինիք անշուշտ։ Թերեւս հետաքրքրւիք այդ անախորժ գործի վախճանով։ Ուստի պատմեմ համառօտ։ Առաջնորդարանից միանգամայն անակնկալ եւ խայտառակ կերպով դուրս վռնդւելուց յետոյ՝ եկայ տանը պինդ նստեցի ամօթահար։ Ինձ համար գործը վճռւած էր համարւում, ես արդէն արտաքսւած էի չը գործած յանցանքներիս համար. բայց չէ՛, ներողութիւն, երկու խոշոր յանցանք էի գործել — նախ՝ որ Երւանդի*(2) *ընտրութիւնը տեսչական պաշտօնի մէջ օրինական չէի ճանաչում՝ պատճառաբանելով ա՛յն պարզ ու ճշմարիտ հանգամանքը, որ այդ ընտրութիւնը կայացել է ուսուցչական ամբողջ խումբը՝ առանց նրա իրաւասութեան ու միջամտութեան կազմակերպւելուց եւ ուսումնական տարին սկսւելուց յետոյ միայն, այն էլ մի այնպիսի ժողովով, ուր ես արտայայտել եմ իմ անհամաձայնութիւնը. Մեսրոպին աւելորդ էին համարել ժողովի կանչել (չը նայելով որ նա հէնց ուսումնարանի բակումն էր աշակերտների մէջ), իսկ Սարգիսը — չը գիտեմ — դեռ Երեւանում, թէ ճանապարհին էր եւ երբ Աբրահամն ու Բաղդասարը առաջարկում էին ինձ հնազանդւել կիսատ-պռատ հոգաբարձական ժողովի որոշմանը,— ես յանդգնաբար մերժեցի այդ պահանջը, որով երկու տուգ հոգաբարձուներին սրեցի իմ դէմ։ Երկրորդ յանցանքս, որ աւելի խիստն է Առաջնորդի աչքում, կայանում է նրա մէջ, որ ես Աղայեանցի*(3) *աշակերտը լինելու դժբախտութիւնն ունիմ։ Առաջնորդարանից արտաքսւելուցս անմիջապէս յետոյ՝ սրբազանը միւսների ներկայութեամբ ասել է, թէ «Աղայեանցի նման սա՛ էլ կը սկսի լրագրութեան մէջ...»։ (Ակնարկում է Աղայեանցի «Իմ կեանքի գլխաւոր դէպքերը» «Մուրճի» մէջ)։ Դրանից յետոյ, մի ուրիշ տեղ էլ ասել է, թէ «Եղբա՛յրք, դուք չը գիտէք, «թէ՝ ինչ պառուղ է Աղայեանցը իր աշակերտներով։ Ուր որ լինին դրանք՝ տակն ու վրայ կ՚անեն ուսումնարանները»։ Իսկապէս դեռ ինձ անյայտ է, թէ նա ո՞րտեղից գիտէ Աղայեանցի աշակերտ լինելս։ Մախլա՛ս*(4)... *դառնամ պատմութեանս շարունակութեանը։ Եւ այսպէս, ես հրաժարւած՝ մնացի տանը պինդ նստած. Սարգիսն էլ ուզեց հրաժարական տալ, բայց ես չը թողեցի։ Ստակ չունէինք. եթէ նա էլ դուրս գար՝ ստիպւած պիտի լինէինք գիւղերը թափառիլ հազար ու մի տեսակ չարքաշութիւններով, ա՛յն էլ*

աննպատակ, լոկ սովամահ չը լինելու համար։ Միւս կողմից էլ՝ բարեկամներս… թօփները մէջդան կը գցէին մեր բացակայութեամբ եւ այսպէս, թէ այնպէս մեղաւորը կը մնայինք մենք՝ ժողովրդի աչքում։ Գէ՛թ ինքնապաշտպանութեան համար՝ նւաստիս խորհուրդն ա՛յն էր, որ Սարգիսը իր պարէնը հայթայթելու համար շարունակէր իր պաշտօնը, իսկ ես Հոկտեմբերից սկսած ունիմ մի մասնաւոր դաս ամսական 5 թումանով եւ, բացի դրանից, արձակուելուցս յետոյ՝ Թաջիր-բաշին ակնարկով յոյս տուաւ մի երկրորդ մասնաւոր դասի։ Միւս կողմից էլ, Մկրտիչն էր առաջարկում իրանց տանը մասնաւոր դաս, տեղիս իրենց գրասենեակը եւ Թեհրան, որը որ կը կամենայի։ Դրանից զատ՝ ջերմ կերպով խոստանում էր իմ մի կտոր զապեսկովը վճարել անմիջապէս իմ պարտքը՝ հոգաբարձութեան, որ այն ժամանակ հասնում էր մօտ 60 թումանի։ Ահա այսպիսով ապահովւած կը լինէի ե՛ւ ես եւ երկուսով էլ մինչեւ ներկայ ուսում[նական] տարւայ վերջը կարող էինք մնալ Թաւրիզում ու պաշտպանել մեր ընկած ու հարւածելիք պատիւը։ Մինչդեռ յուսահատ այսպիսի պլաններով էինք զբաղւած՝ մէկ էլ լսենք, որ ինձ պաշտպանելու նպատակով շարունակ ժողովներ են լինում հոգաբարձուների ու ժողովրդեան առաջաւոր անձինքների մէջ։ Այդպիսի ժողովներից մէկը հրաւիրեցին եւ ինձ ու փափաք յայտնեցին՝ հակառակ Առաջնորդի ու հոգաբարձուների՝ <u>բռնել թեւից եւ տանել ուսումնարան</u>։ Ես մերժեցի, ի հարկէ։ Բայց եւ այնպէս դրանով չը վերջացան ժողովները։ Ժողով էր, որ բանում էր մէկը միւսի ետեւից։ Ութ օր ուսումնարան չը գնացի եւ այդ 8 օրւայ մէջ գրեթէ ամէն օր ժողով կար եւ երբեմն մինչեւ իսկ երկուսը՝ մէկը առաւօտեան եւ միւսը երեկոյեան։ Ժողովների պատմութիւնը հեռուն կը տանէր, միայն այսքանը կ՚ասեմ, որ ժողովների գլուխ էին անցած Մկրտիչը, Միրզա-Աստատուրը, Մակար Բուդաղեանը (որ Մկրտչի աներն է եւ հոգաբարձու), Գոզմոսեանները, ըստ քամու տատանւող Թաթոսը, երէցփոխ Աւագը, որ շատ էլ խիստերիցը չէր, Խալիֆան, որ իսկոյն դպրոցից հանեց իր երեք աղջիկներին, Ղազար Օհանեանը եւայլն։ Խուլասա՛, փափուկ աղմուկ կար, եւ թէպէտ կարծրւում էր, որ գոռող-պոռողները առաջնորդւում էին զանազան դիպլոմատիական ու վրիժառական շահերով ու զգացումներով (որ կարող է շա՛տ էլ հեռու չը լինել ճշմարտութիւնից), բայց եւ այնպէս կատարւած փաստն այն է, որ յոգուտ իմ էին բղաւում՝ առանց ուրիշ բան խառնելու։ Բոլոր ժողովների երկար պատմութիւնը մի կողմը թողնելով, կը պատմեմ միայն վերջինը, որ բաւականին հետաքրքիր է, իր բովանդակութեամբ ու հաշտարար հետեւանքով։ Կիրակի երեկոյեան դպրոցի ծառան եկաւ մեր տուն եւ ասաց, որ մարդիկ են հաւաքւել ուսումնարան եւ ինձ են կանչում։ Գնամ տեսնեմ կէս դիւժին հոգաբարձուներն են իրանց կէս դիւժին կանդիդատներով։ Ամէնքը լռեցին եւ միայն Միրզա-Աստատուրը դիմեց ինձ՝ մօտաւորապէս հետեւեալ ճառով։ «Երրորդ տարին է որ վարժապետ էք Լիլաւայում(5) եւ միշտ ամէնքն անխտիր գոհ են եղել ձեզնից, մինչեւ իսկ բերդաթաղցիք, որ իսկի կապ էլ չունեն մեր դպրոցների հետ։

Որպէս ժողովուրդը, նոյնպէս եւ մենք՝ ամէնքս 12 հոգաբարձուք, որ ահա կանգնած ենք այստեղ, չենք ցանկանում, որ դուք հեռանաք եւ, իմացած եղէք, որ բաց չենք թողնի։ Շատ աշխատեցանք, որ պ. Երւանդը մի կողմը թողնի իր տեսչութիւնը, բայց հնար չը կայ բնաւ։ Դուք է՛լ մի ցանկանաք, որ Հոգաբարձութիւնը իր գրաւոր տեսչական որոշումը յետ առնի, որ պատիւ չի բերել ամենեւին։ «Որում շատ է տւեալ, շատ պահանջեսցի»։ Դուք ձեւական կերպով ասացէք, որ ընդունում էք տեսչութիւնը, իսկ մենք խոստանում ենք այնպէս անել, որ Երւանդը ո՛չ մի գործ չունենայ Ձեզ հետ։ Եթէ չէք մերժիլ մեր խնդիրը, պատրաստ ենք ոտք ու ձեռքդ համբուրելու՝ ի սէր մեր դպրոցների, եւ լիայոյս ենք, որ կը յարգէք մեր այս քանի [մը] ու ամբողջ ժողովրդեան խնդիրը, որոնց ներկայացուցիչն ենք մենք, ու աւելի եւս սիրելի կը դառնաք մեզ համար։ Հակառակ դիպւածում, այս խմորը ջուր շատ կը տանի եւ մեծ աղմուկ կը ծագի, որը Ձեզ էլ ցանկալի չպիտի լինի»։

Ճառը բաւականին թունդ էր, բայց ասացի, որ իմ պատիւը ոտնակոխ լինելուց յետոյ, դժւարանում եմ ըոպէական վճիռ տալ, եւ խնդրեցի, որ նշանակեն իրենցից մէկին, որպէս զի հետեւեալ օրը առաւօտեան տամ իմ վերջնական պատասխանը՝ լաւ խորհելուց յետոյ։ Նշանակւեցաւ Միրզա-Ասծատուրը, եւ ես պատրաստւում էի դուրս գնալ, բայց դեռ չը հեռացած՝ Բաղդասարը բացականչեց, «պ. Նիկողայո՛ս, քեզ ամէնից մօտը ես եմ եղել, հիմա ճանաչեցի», որին անմիջապէս կցեց Աբրահամը, թէ «եղբա՛ր, խօսք է էլի՛, ասում է, գիտեմ, չի համաձայնի» իսկոյն յետ դառայ եւ սկսեցի խօսել վրդովւած մօտաւորապէս հետեւեալը. «Պարոններ, փոքր ինչ առաջ ասում էիք, որ իմ ձեռք ու ոտքը կը համբուրէք. ես պատրաստ եմ նոյնը անելու Ձեզ, միայն թէ ազատ կացուցէք ինձ։ Եւ եթէ կարծում էք, որ իմ պատճառով մեծ խռովութիւն կը ծագի ժողովրդի մէջ, հէնց այժմ յայտնում եմ հրապարակով, որ մինչեւ 10 օր կը հեռանամ Թաւրիզից որպէս մի կամաւոր աքսորական, ու այնուհետեւ ամէն ինչ խաղաղ կը լինի, թէ չէ, ինչպէ՞ս կարող եմ մնալ դպրոցում եւ միթէ՞ դուք կը ցանկանաք ուսումնարանը հոգեկան տանջանքների դժոխք անել ինձ համար. եւ անշուշտ այդպէս էլ կը լինի, քանի որ հէնց Ձեր առաջ հոգաբարձուներից երկուսը, որոնց հետ շարունակ գործ պիտի ունենամ, աշկարայ ցոյց են տալիս իրենց լարւած լինելն իմ դէմ եւ խօսում են ըստ ամենայնի կրքոտ»։ Յետոյ պատմեցի, թէ ինչպէս Առաջնորդը կանխապէս նախապաշարւելով իմ դէմ՝ դուրս վռնդեց ինձ, թէ ինչպէս Աբրահամը վիրաւորել է ինձ իրենց տանը մի ժողովում եւ թէ ինչպէս հէնց հիմա պ. Բաղդասարն է վիրաւորում իրանց աչքի առաջ, պահանջելով, որ ապացուցանեն իմ գործած յանցանքը դպրոցական ու հասարակական շահերի դէմ։ Իսկոյն ամէնքը իրենց յարձակումներով նրանց վրայ թափւեցան եւ Աբրահամը, չը գիտեմ այդ ճնշման տակ, թէ ինչ,— ձեռքը պարզեց դէպի ինձ ու ներողութիւն խնդրեց։ Եւ երբ ես տատանման մէջ էի տակւին, Բաղդասարը վայրկենապէս յափշտակեց ձեռքս, իր հաստ փորովն ու

զեռ(6) գլխովը կռացաւ, որի ժամանակ մինչեւ իսկ գդակը վայր ընկաւ, եւ ի մեծ զարմանս իմ, ինչ... համբուրեց ձեռքս՝ բարձրաձայն աղաղակելով. «Ներողութիւն եմ խնդրում եւ եւ, ձեռքդ պաչելով»։ Բանը բանից անցկացաւ արդէն։ Ձեռքս պարզեցի եւ Աբրահամին։ Յետոյ երկու պայման դրի, նախ՝ որ առաջնորդարանում պատիւս վերականգնեն եւ երկրորդ՝ որ Երւանդը իր վարմանց մէջ դէպի ինձ՝ զգոյշ լինի։ Խոստացան ուրախութեամբ կատարել երկուսն էլ եւ մինչեւ իսկ հէնց նոյն խմբով գնալ առաջնորդարան։ Եւ իսկոյն վրաս ընկան, էժանացաւ համբոյրն ու պռոշտին(7)։

Նրանց առաջնորդի մօտ գնալը 2-3 օրով յետաձգւեց, իսկ ես այդ երեկոյեան կայացած որոշման համաձայն՝ հետեւեալ օրը գնացի դպրոց, առանց իմաց տալու առաջնորդին։ Բայց մինչեւ պայմանաժամի լրանալը, Աբրահամը, որ եղել էր Առաջնորդի մօտ, տարածեց թէ «եպիսկոպոսն ասում է, որ ինքը չի մտնի ա՛յն դպրոցը եւ իրենը չի համարիլ, ուր որ Նիկողոսը կը լինի, աւելացնելով, որ այդ ինտրիգանտին դեռ քահանայութիւնն էլ են առաջարկում, բայց ոտք չի կոխի եւ ա՛յն եկեղեցին, ուր ես կը լինիմ»։ Մարդիկը էլ չեն գնում առաջնորդի մօտ եւ հէնց առաջիկայ Կիւրակէին, Ղալումը, պատարագից յետոյ, Մկրտիչը իր ընկերներով եկեղեցու բակում այս լուրը պատմում են Թաջիր-բաշուն, որը բազմութեան առաջ ասում է բարձրաձայն «Եթէ ճիշտ լինի այդ բոլորը, ես կը քաքեմ առաջնորդի վեղարումը. միթէ Նիկողոսը աւազա՞կ է, մարդասպա՞ն է, կամ մի այլ յանցագործ ու վնասակար անձնաւորութի՞ւն է, եւ ի՞նչ է արել, որ նրա եղած եկեղեցին ու դպրոցը ոտք չի կոխի»։ Այս էլ անցաւ։ Մի քանի օրից յետոյ, Աբրահամն ու Բաղդասարը յայտնում են Երւանդին, որ առաջնորդը կանչել է խմբին։ Գնում ենք եւ ես կարծում եմ, թէ ըստ իւր խոստման ներողութիւն պիտի խնդրի ինձնից կամ առնւազը կ՝օրհնի հաշտութեան համար եւ ճանապարհ կը դնի։ Սակայն ուրիշ բան դուրս եկաւ։ Ասաց, որ մեզ չի կանչել ինքը եւ իր նեղութիւնը յայտնեց, որ հակառակ իրա հրամանի՝ իմ փոխարէն դպրոց չեն տարել Գեօնջեանին, որ այն ժամանակ այստեղ էր եւ այժմ Ղարադաղում եւ որին, երեւի, դպրոց չեն տարել՝ աղմուկներից երկիւղ կրելով։ Մի ակնարկով էլ հասկացրեց, որ ես եմ պատրաստել ժողովուրդը (ամօթից դուրս չեմ եկել տանից), բայց ես ծպտուն չը հանեցի, քանի որ ուղղակի ինձ չէր ուղղում։ Շատ սառն էր ընդունելութիւնը։ Հա՛, մինչեւ իսկ ասաց, որ Լիլաւայի դպրոցը իրանը չի համարում։ Այդպիսով ես մնացի խռով, որպէս արջը անտառից, մինչեւ այսօր։ Այսօր ամէնքս (եւ ես ակամայ) Սուքիասեանց տօնի առթիւ գնացինք տօնախմբութիւնը շնորհաւորելու՝ աշակերտ ու աշակերտուհիներով հանդերձ։ Եւ չը գիտեմ ի՞նչ էր պատահել, ինձ մենակ պահեց ճաշի։ Մօտ 4 ժամ մնացի մօտը, բայց այն աղմկալից դէպքերի առթիւ եւ ո՛չ մի խօսք։ Խօսում էինք կաթոլիկների ու բողոքականների եւ Սալմաստի ու Թաւրիզի մասին առհասարակ՝ կիսա-ընտանեբար։ Մնացածը յետոյ։

Նիկ.

Բրոշիւրներն ու Դրոշակները — միացեալ երկու կապոցով — ստացել ենք. իմ հաստէով եկած են նաեւ ռուսերէն բրոշիւրներ, որտեղից եւ ինչու համար։

1.- Ակնարկութիւն 21 Նոյեմբեր 1893-ի նամակին: Սարգիսը (Օհանջանեան), ծանօթ էր Ֆար-Հատ ծածկանունով:
2.- Յովսէփ Արղութեանի:
3.- Ծանօթ գրող Ղազարոս Աղայեանցն է:
4.- Ինչեւիցէ:
5.- Լիլաւա եւ Ղալա (Բերդաքաղ)՝ հայերէ բնակուած երկու քաղամասեր Թաւրիզի մէջ:
6.- Ջեռ՝ շատ մեծ, ահագին:
7.- Պռոշտի՝ շրթունքներով համբուրուիլը:

Սարգիսը Օհանջանեան
(Ֆար-Հատ)

5

Փաստ. 456-16

9 *Մարտ* 1894
Թաւրիզ

[*Ժընեւ՝ «Դրօշակ»ի խմբագրութեան*]

Սիրելիք(1),

Վաղուց է որ ընդհանուր գործին վերաբերեալ տեղեկութիւններ ո՛չ ստացել եմ Ձեզնից եւ ո՛չ էլ հաղորդել Ձեզ։ Եւ ինչպէ՞ս հաղորդէի, քանի որ ոչ ոք ոչինչ չէր ասում ինձ, իսկ դուք իմ այս անհամ դրութիւնը գիտենալով հանդերձ՝ լռութիւն էք պահպանում à la *Զաքարիա։ Որքան նկատում եմ, դուք խոհեմ դիպլոմատիայով էք զբաղւած շարունակ։ Եւ այդ երեւում է նրանից, որ թերթերն ու բրօշիւրները ուղարկում էք մերթ մէկի եւ մերթ միւսի՝ հասցէով*(2)։ *Ասենք ես է՛լ հեռու չեմ մնացել այդ խոհեմ դիպլոմատիայից եւ իմ դիպլոմատիան ամբողջովին կայանում էր նրա մէջ, որ ըստ կարելոյն հեռու փախչեմ ա՛յն ամէն բանից, ուր որ լինի Երւանդը, կամ ուր նրա՛ն կը հանդիպեմ։ Ուխտել եմ եւ եմ, որ Երւանդի հետ արքայութիւն գնալուց է՛լ հրաժարւիմ... Եւ այդ բանը ա՛յն աստիճանի մոլութեան է հասել իմ մէջ, որ մինչեւ իսկ կիրակնօրեայ դպրոցում դասատու լինելուց է՛լ փախայ։ Իսկ թէ ո՛րքան դժւար էր ինձ համար բաժանւել այդ դպրոցից՝ դա թերեւս Յօնանը միայն գիտենայ, որպէս ականատես վկայ։ Ինչ եւ իցէ. այդ բոլորը մի կողմ թողնենք եւ ես, իբրեւ լոկ թամաշաւորը՝ խոշոր գծերով նկարագրեմ ձեզ համար աչքիս առաջ գտնւած հանդէսը։*

Սկսեմ Առաջնորդից(3).—

Առհասարակ յեղափոխութեան եւ մասնաւորապէս Լիլաւայի ուսուցչական խմբի վրայ խէ՛թ աչքով է նայում նա։

Տեղւոյս ականաւորներից մէկի հետ խօսակցութիւն ունեցած ժամանակ՝ յեղափոխական գործի նկատմամբ նա իր դժգոհութիւնն է յայտնել դէպի Ստեփանոս եպիսկոպոսի(4) *բռնած ընթացքը, պախարակելով նրա ցոյց տւած համակրանքն ու անուղղակի աջակցութիւնը եւ միանգամայն ծաղրի առնելով վանականների ստացած նշանները։ (Չեմ գրում այս «ականաւորի» անունը, որովհետեւ նա այդ բանը իբրեւ խոստովանք ասեց ինձ)։ Միւս կողմից էլ, երբ Սալմաստի Թաթոսը ներկայացել էր նրան, հարցրել էր թէ՝ արդեօ՞ք հրահանգներ չստացա՞ւ Լիլաւայի ուսուցիչներից։ Հաւանօրէն նա կը հալածի մեզ, ա՛յն էլ երկու փայտով, որոնցից մէկն իր ձեռքում ունի բռնած, իսկ միւսը, երեւի, կը յանձնի Աւետիսեանին*(5), *որին թեմական տեսուչ է նշանակել Սալմաստում։ Մեր կուսակցութեան դէմ Ատրպատականում բարձրանալիք հալածանքը մասամբ մեղմացնելու համար, ըստ իս, անհրաժեշտ է Յօնանի ներկայութիւնը։*

Ինչպէս երեւում է, Պարգեանը դօստ է(6) Յօնանի հետ։ Տեղը եկած ժամանակ՝ առաջնորդը գովում է նրան եւ առհասարակ համակրանքով է խօսում դէպի նա։ Նոյնչափ անհրաժեշտ եմ համարում եւ Ռոստոմի ներկայութիւնը Ատրպատականում՝ Վանի նկատմամբ։ Ջը գիտեմ յայտնի է ձեզ, թէ չէ,— մեր տղոց(7) յարաբերութիւնը ի սպառ աւերւած է վանեցիների հետ։ Մերոնք իրանց յարաբերութիւնը կարողացել են պահպանել վանեցիներից միայն երկուսի հետ, որոնք դժգոհ են իրանց ընկերներից եւ հեռացած։ Ջառը-ջըհանդամը, եթէ գոնէ այդ երկուսը փոքր ի շատէ ազդեցութիւն ունենային Վանում։ Պետօն(8) շատ էր գովում նրանց եւ երեւակայական հեղինակութիւն տալիս, բայց մեղքս ի՞նչ թագցնեմ, չեմ հաւատում։ Պետօն շուտ ոգեւորւողներից է, որը, բնականաբար, տեւական չի՛ կարող լինել։ Երէկ միւս օրն էլ ոգեւորւած էր Փանոսով, Գարեգնով, Պոզիկեանով եւայլն, բայց այսօր զզւանքով է խօսում նրանց մասին եւ «լիրբ» անւանում։ Այդ չափազանց է արդէն։ Հա՛. քիչ վերն ասացի, որ այդ երկուսի Վանում ունեցած հեղինակութեան չեմ հաւատում եւ ի՞նչպէս կարող եմ հաւատալ, քանի որ նրանցից մէկը մի հասարակ մահկանացու է եւ միայն նշանաւոր՝ իր աջողութեամբ կատարած երկու տեռորական գործով, իսկ դա դեռ եւս գրաւական չէ մեզ հետ մարդիկ կապելու հեղինակութեան։ Միւսն էլ Գիժ Դաւիթն(9) է, անցեալ տարւայ Թաւրիզում պատահած դէպքի հերոսը, որին ճանաչում է Յօնանը։ Ասպարէզը տալ այս երկուսին եւ ձեռք քաշել Փանոսից ու Գարեգնից եւ նրանց հետ կապւած Վանայ ընտիր ոյժերից,— առնըւազն՝ կոպիտ քաղաքականութիւն է այդ։ Միեւնոյն ժամանակ՝ ի նկատի պիտի ունենանք, որ Վանից զրկւելը մեծ կորուստ է մեզ համար եւ զօռ հարւած՝ կուսակցութեան թիկունքին։ Մեր գլուխ դնելու միակ տեղը Վանն էր, եթէ այդտեղից էլ զրկւենք, ո՞ւր պիտի գնանք, ի՞նչ էք կարծում։ Վանեցիք, այո, կարող են մեզ փախցնել իրանց երկրից եւ այդ բանի համար Գարեգինը յատկապէս Վան է գնացել, եւ երեւի իր պրոպագանդան նախ Պետօ-ի դէմ կը սկսի։— Ինքն ըստ ինքեան մի հարց է առաջ գալիս այստեղ. «Ի՞նչ անենք հապա, մի՞թէ կարող ենք ձեռք տալ վանեցոց — արմենականներին եւ դրանով ոյժ տալ հակառակ «կուսակցութեան»։ Ես կ'ասեմ, որ ոյժ տալ պէտք չէ, ընդհակառակը՝ պէտք է քայքայել, բայց երկու միջոցով. 1) բարոյապէս ու նիւթապէս հարւածելով նրա ուժասպառութիւնը հասցնել մինչեւ հոգեվարք դրութեան, որ յանկարծ աւանդի հոգին։ 2) Բարոյապէս ու նիւթապէս սնուցանելով ա՛յն զաւակներին (վանեցիներին), որոնք երկար տարիների ընթացքում շարունակ կերակրւել են Պորտուգալեանից ու նրա օրգանից, եւ այժմ (եթէ կողքի չը գցենք) զգում են իրանց ծծելիս բար[կ] կաթի անհամութիւնը եւ գրեթէ անգոյութեան հասած նիւթականի սղութիւնը։ Ըստ իս՝ երկրորդ միջոցը շուտ կը հասցնի նպատակին։ Եթէ մենք կարողացած լինէինք բարոյապէս ազդել վանեցիների վրայ եւ նիւթապէս գոհացնել գէ՛թ մասամբ, համոզւած եմ, որ Արմենիայի(10) Ֆասա-Ֆուսան կը քաշւէր աննկատելի։ Անհրաժեշտ եմ համարում, որ Դաշնակցութիւնը իր յարաբերութիւնները վերանորոգի Վանայ բազմահայ վիլայէթի հետ, սակայն

առանց յուսահատելու նրանց արմենական լինելուց։ Նրանց փոխելու համար հարկաւոր կը լինի ուժեղ գործունէութիւն՝ լաւ տաքտիքայով, (եթէ կարողանաք այս երկուսին միասին գտնել)։— Վանայ հետ ունեցած յարաբերութեան վերանորոգելուն Ռոստոմը նպաստել կարող է։ Իր ծանօթ վանեցիք առ հասարակ լաւ կարծիք ունին նրա մասին եւ այդ կարծիքը անցել է նաեւ Ռոստոմին անծանօթ վանեցոց։

Այժմ հերթական հարցերի կարգն անցկացնենք Թաւրիզը։ Երկու-երեք ամսից ի վեր փակւած է կիրակնօրեայ դպրոցը։ Ես անդամ լինելով վարչութեան, բարեկամներս մեղադրում են վարչութեան թուլութիւնը այդ գործում։ Սակայն մեղաւոր չէ վարչութիւնը, քանի որ ժամանակին տւել է եւ տալիս է ամէն ինչ. դասա[ւանա]կան պիտոյքներ, փայտ, նաւթ, ծառայ եւ առհասարակ ա՛յն ամէնը, ինչ որ պէտք է դպրոցին։ Ճիշտը նա է, որ առարկաներից մի քանիսը յանձնւեցան գրաշար-մրաշարների եւ ուսումնական մասն առհասարակ ընկաւ հետաքրքրութիւնից։

— Երկու թաղերի(11) միութիւնն առհասարակ բոլոր գործերում եւ մասնաւորապէս թատրոնականում շատ է յուզւել ժամանակին։ Այս տարի էլ յուզւեցաւ. առաջներումը գաղտնի, թէ աշկարայ կռիւ էինք սկսել <u>աղաների</u> դէմ, բայց թշնամի չէինք երիտասարդներին, այլ ընդհակառակը, նրանցից շատերի հետ կապւելու յոյսն ունէինք։ Իսկ այս տարի, հէնց որ ասպարէզ եկաւ թատրոնական խնդիրը, Երւանդն ու օրիորդը միանալով(12) Ատրպետեանի ու Ղազարեանների հետ, ձեռք պարզեցին «ազնիւ Գալֆայեանին» եւ փառաւորապէս մերժեցին երիտասարդներին, նրանց «անազնիւ», «լիրբ» եւայլն անւանելով, սակայն առանց փոքր ի շատէ ուժեղ փաստերի, մինչդեռ ուխտած էինք մենք ի սպառ հեռու մնալ Գալֆայեանից, որի նախկին անգունութեան ու կեղտոտութիւնների վրայ այս տարի էլ աւելացաւ նոր բարոյական կեղտ. ամբողջ քաղաքը խօսում է որ նա à la մահմեդական «մայր ու աղջիկ մի վերմակով է ծածկում»։ Իսկ երիտասարդների հետ, պէտք [է] ասել, որ մենք շատ էլ լուրջ բաներ չունէինք եւ եղած անհամաձայնութիւնը ընդհանրապէս վերագրում էինք նրանց տհասութեանը, յուսալով սակայն, որ ժամանակի ընթացքում կը հասունանան նրանք։ Այս տարի փոքր ինչ ժրժրացին(13) նրանք եւ կամացուկ զինւել սկսեցին աղաների դէմ. եւ այս դրութեան մէջ նրանք մերժւեցան մեզանից, որից դուրս եկաւ ա՛յն, որ մենք միաժամանակ երկու կռիւ ունինք՝ աղաների ու երիտասարդների դէմ. է՛լ մեր ոտքի տակը հող չմնաց եւ <u>վասսալամ։</u> Թատրոնական գործում երբ մերժւեցան նրանք, հրաժարւեցինք եւ մենք. Սարգիսը, Աբէթնագով եւ Ցով. Կարապետեան։ Այսպիսով նրանք մնացին մենակ եւ չկոտրւելու համար մի ներկայացում գլուխ բերին, թէպէտ աֆիշայի մէջ գրւած էր, որ երկու թաղի միացեալ խմբերը մի շարք ներկայացում պիտի տան։

Աղաների ու երիտասարդների դէմ միաժամանակ մեր ջուխտակ կռիւ մղելովը երկար չենք կարող ապրել Պարսկաստանում, իսկ վանեցիք կը տանեն յաղթանակը. այժմ Ներսէսը վարժապետ է Ղալասարում ու Փայաջուկում, իսկ

նրանցից մի ուրիշը՝ Հաֆթեանում, Աւետիսեանն էլ թեմական տեսուչ, որ Արզուման Արզումանեանը նամակով շտապեցնում է Սալմաստ աճապարել եւ խոստանում է Կենտր. վարժարանի համար մի մեծ շինութիւն շինել իր սեփական ծախսով՝ Ղալասարի ու Փայաջուկի մէջտեղը։ Այսպիսով նրանք շարունակ օգտւում են այն մարդկանցից, որոնց դէմ մենք կռիւ ենք մղում անդադար։ Եւ մեր այս անտակտութիւնն է պատճառ, որ այս տարի Դաշն. ագենտ(14) *Բարսեղը չը կարողացաւ ամբողջ Սալմաստում ուսուցչական պաշտօն գտնել եւ այսօր ապրուստի համար փող է պահանջում տղորցից. փող են կտրում տղերքը...*

— Այս այսպէս լինելուց յետոյ, միւս կողմից էլ ներքին կեանքի գամանն(15) *է փոխւել. մեր ճայնաւոր պարոնները ժողովների ժամանակ հեռացնում են արհեստանոցի*(16) *բոլոր տղորցը եւ իրանց մեծամեծ գործքերի... խոշոր գաղտնիքները... ծածկում նրանցից, որից առաջ է գալիս դժգոհութիւն։*

— Լաւ կ'անէ՛ք, անուղղակի խորհուրդ տաք ճայնաւորիներին, որ արհեստանոցի տղորցը ջոկ տեղ ապրեցնեն, որպէսզի արհեստանոցը իր անլեգալ արհեստաւորներով կասկած չը հրաւիրի վրան։ Այս ծրագիրը վաղուց է, բայց չիրագործւեցաւ, որովհետեւ Միհրանը(17) *մենակ էր, այժմ խօմ փառք Աստուծոյ երեք հոգի են նրանք։*

Յոգնեցայ. Ցգրութիւն, բայց ձեր կողմից։

Ն.

1.- Յայտնաբար Ժրնեւ՝ «Դրօշակ»ի խմբագրութեան ուղղուած նամակ է, որուն աւարտին կցուած է նաեւ Սարգիս Օհանջանեանի բաւականին ընդարձակ յաւելուածը: Կու տանք միայն Դումանի գրածը:

2.- Իմա՝ մերթ իրեն (Դումանին), մերթ Յովսէփ Արղութեանի (Երուանդ) հասցէին: Այս վերջինիս հետ, ինչպէս յայտնի է, Ն. Դումանի յարաբերութիւնները խիստ լարուած էին:

3.- Առաջնորդը՝ Սուքիաս եպս. Պարզեանն է, որուն հետ նոյնպէս լարուած էին Ն. Դումանի յարաբերութիւնները:

4.- Ստեփանոս եպս. Մխիթարեան, նախկին առաջնորդ Ատրպատականի թեմին:

5.- Մկրտիչ Աւետիսեան (իսկական ազգանունը՝ Թերլեմէզեան, 1864–1896), արմենական ղեկավար դէմք:

6.- Բարեկամ, մտերիմ:

7.- Ն. Դումանի կողմէ յաճախ այսպէս գործածուած, փոխանակ «տղայոց»ի:

8.- Ալեքսանդր Պետրոսեան (1870–1896), դաշնակցական յայտնի մարտիկ, կը գործէր Վան–Վասպուրականի շրջանին մէջ:

9.- Գիժ Դաւիթ – ծածկանուն Փանոյեան Յովհաննէսի (1867–1897):

10.- Ֆրանսայի Մարսէյլ քաղաքին մէջ հրատարակուող թերթ՝ Մկրտիչ Փորքուգալեանի խմբագրութեամբ: Արմենական անունը տրուեցաւ 1885 թ. Վանի մէջ հիմնուած ազգային-յեղափոխական առաջին կուսակցութեան:

11.- Թաւրիզի հայկական երկու թաղերն էին Ղալան եւ Լիլաւան:

12.- Յովսէփ Արղութեան (Երուանդ) եւ Սաթենիկ Մատինեան (Օրիորդ):

13.- Ժրժրալ – աշխուժանալ, խօսիլ սկսիլ (երեխաներու համար է):

14.- Բնագրին մէջ ռուսատառ՝ գործիչ:

15.- Ժամանակն է փոխուել:

16.- Դաշնակցութեան հիմնած զինական արհեստանոցը Թաւրիզի մէջ:

17.- Միհրան – ծածկանուն Էքմէքճեան Միսաքի – վարպետ զինագործներէն Թաւրիզի արհեստանոցին:

6

Փաստ. 456-26

15 *Մայիս* 1894
Թաւրիզ

[*Ժընեւ՝ «Դրօշակ»ի խմբագրութեան*]

Սիրելի՛ք,

Վերջապէս Զեզանից նամակ ստացանք այսօր։ Եւ որովհետեւ այդ նամակն իր բովանդակութեամբ գրիչ գրգռելու մի առանձին յատկութիւն ունի, ուստի շտապում եմ պատասխանել՝ քանի որ տաք-տաք է։ «Մի կողմից Գալֆայեան եւ Ատրպետեան, իսկ միւս կողմից Աբեղնագով եւ Ko», *եւ այդ մրցութեան յաջողութիւն է ցանկանում Յօնանը*(1)... *Աբեղնագովին եւ* Ko*-ին յարւողը՝ ըստ յայտնողաց, ես ու Սարգիսը պիտի լինինք։ Սարգիսը*(2) *Թաւրիզում բարեկամութեան ո՛չ մի շրջան չի ունեցել եւ չունի, ուրեմն մնում եմ ես միայն։ Եւ չա՛տ ցաւում եմ, որ Յօնանը մինչ այժմ չի — ի՞նչ ասեմ — չի՞ ճանաչել ինձ։ Բայց միթէ՞ նա մոռացել է, որ ինքը դեռ այստեղ եղած ժամանակ, երբ որպէս մարդ՝ մարդկանց հետ չփւելու թէկուզ հասարակ պահանջն էինք զգում, փողոցներով երկուսով միասին պտտում էինք ժամերով ու չէինք կարողանում որոշել, թէ ո՛ւմ մօտ կարելի է մտնել սրտաբաց եւ գրեթէ միշտ, առանց տեսակցութեան, տուն էինք վերադառնում յուսահատ։ Թաւրիզի մեր հոգուց անջատ այդ դառն աշխարհը ո՛չ թէ բարեփոխւել, այլ ընդհակառակը՝ աւելի վատթարացել է հէնց մե՛ր շնորհիւ։ Եւ ի՞նչ էք կարծում. այս ճենճերային մթնոլորտում ու ճահճային կեանքում, միթէ՞ կարող էի ես կապւել սրա-նրա հետ։ Ո՛չ ամենեւին. եւ այդ էր պատճառը, որ այնուհետեւ ամէն ինչ ունայն համարելով, միւս կողմից էլ անխիղճ զրպարտութիւններից հեռու մնալու նպատակով՝ փակւեցի սենեակիս չորս պատերի մէջ։ Եւ հէնց իմ այդ փակւելուն է պարտական Երւանդը*(3), *որ բուրդը չա՛տ քիչ գզգզւեցաւ։ Այդ բանին հաւատո՞ւմ ես, Յօնան։ Հաւատո՞ւմ ես, որ եթէ ուզենայի՝ մի ձեռքս կը մեկնէի ինձ համակրողներին, իսկ միւսը՝ Երւանդի թշնամիներին, եւ այսպէս իմ գործնական-դիպլոմատիական եղածչեղած կարողութեանս ամբողջ զօրութեամբ մի այնպիսի՛ օր կը գցէի նրան, որ մկան ծակը իր համար բաւական կը համարէր՝ բայց դա՛րձեալ չէր գտնի։ Բայց այդպէս չարի եւ չեմ անի, քանի որ իմ մէջ կայ ա՛յն գիտակցութիւնը, թէ այսպիսի վնասի ծանր հարւածը գործի՛ն կը կպչի։ Ես, այո՛, անձնապէս թշնամի եմ Երւանդի հետ եւ կը մնամ ընդմիշտ։ Բայց քանի որ նրա անձնաւորութեանը մի առանձին նշանակութիւն չեմ տալիս իմ նկատմամբ, ուստի ոչինչ չեմ անում, ո՛չ մի ուշադրութիւն չեմ դարձնում։ Իսկ երբ կ՚առնի այդ նշանակութիւնը — որին չեմ հաւատում դեռ — եւ կ՚աշխատի ուղղակի գցել ինձ, այն ժամանակ ես ըստ արժանւոյն կը վճարեմ նրան, բայց միմիա՛յն եւեթ անձնականին՝ նախա-*

պէս գործից բաժանելու ելքը գտնելով ի հարկէ։ Ի դէպ, պէտք է ասեմ, որ ինքս էլ չա՛տ լաւ գիտեմ, թէ յեղափոխական մարդը իր շրջանի հասարակական գործերում պէտք է եւ պարտաւոր է նպաստել ընկերոջ յարգանք ու համակրանք ձեռք բերելուն, որով բարձրացած կը լինի ե՛ւ կուսակցութիւնը ժողովրդի աչքում։ Բայց ես Երւանդին ճանաչելով որպէս ընկերական ոյժերի ապերախտ հարստահարիչ՝ իմ չէզոքութեամբ մերժել եմ նրան աջակցութիւնս եւ պիտի մերժեմ, համակրանք ձեռք բերելը թողնելով իր սեփակա՛ն արժանիքին։

Իսկ ինչ վերաբերում է Աբեղնագովին ու Ko-ին յարելուս, ճիշտն այն է, որ նրանց հետ ո՛չ թէ բարեկամ եմ, այլ թշնամի չեմ, ինչպէս որ թշնամի չեմ Թաւրիզում գրեթէ ո՛չ ոքի հետ։ Գիտեմ, որ Գէօթէն ասում է, թէ «Ով որ ամէնքինն է, նա իմս չէ», բայց ի՞նչ անեմ, որ այս քաղաքում <u>կոտրածը կոծկելու</u> յիմար դերն է վիճակւել ինձ։ Հէնց որ մերոնք գալիս են Ատրպատական, որպէս դիւզազն զինւորներ, սրածայր նիզակները միշտ բռնած են պահում դէպի ժողովուրդն անխտիր եւ շարունակ յարձակողական դիրքի մէջ են լինում։ Բայց թէ <u>դաբերով պարսից հպատակ</u> խեղճ հայ ժողովուրդն ինչո՞վ է մեղաւոր, այդ մասին մեր քաջամարտիկները մի բոպէ անգամ չեն ուզում մտածել... Եթէ իմ ընկերները այդ ծայրայեղութեան մէջ չընկնէին, այն ժամանակ, անշուշտ, ես էլ հակառակ ծայրը չէի բռնի։ Այդ բանը զգում էր ե՛ւ Յօնանը, որ եւ ասում էր, թէ «Աստուած է քեզ հասցրել մեզ համար. վէրքեր հասցնողի ետեւից՝ մահլամ ման ածող պիտի լինի»։

Գալով Աբեղնագովին եւ նմաններին, նրանք լիրբ են, կեղտոտ են հէնց նրա համար, որ մեր կուսակցութեան հակառակորդ են եւ Առաջնորդին մօտ։ Մենք էլ նրանց կուսակցութեան ենք հակառակ եւ, երեւակայեցէ՛ք, եթէ Բագրատ վարդապետը լինէր առաջնորդ՝ գիշեր ու ցերեկ նրա մօտից չէինք հեռանայ, մինչդեռ նրանք գնում են կամ ցերեկով միայն եւ կամ գիշերով։ Ուրեմն մենք էլ լիրբ ու անազնիւ ենք նրանց աչքում։ Եթէ մարդու մէջ ազնիւ յատկութիւնները չափւում են կուսակցական չափով միայն, այդ հայեացքը չա՛տ նեղ է ըստ իս։ Մինասը իր ընկերներով եւ նրանց նման ուրիշները մինչդեռ կուսակից էի համարւում պաշտելի էին եւ էին իսկապէս։ Բայց հէնց որ կտրւեցան կուսակցական կապերը, նրանք մեր աչքում անմիջապէս դառան կեղծ, անբարոյական, մուրտառ, լիրբ, անազնիւ... Մեր ընկերների այսպիսի ընդհանուր ախտկարծիքից ես եկել եմ ա՛յն ողորմելի եզրակացութեան, որ ամբողջ աշխարհքում եղած ազնիւ հայ մարդկանց թիւը հաւասար է Դաշնակցութեան անդամների ճիշտ քանակութեանը...

Այժմ դառնանք վանեցիների խնդրին։ Յօնանը հիմնւելով արդէն եղած փորձերի վրայ՝ ասում է, քանի որ նրանք մեզ վրայ նայում են որպէս «կթան կովի» վրայ, ամենեւին չի կարող մեր ու նրանց մէջ հաշտութիւն լինել։ Նրանք էլ ունին իրանց կարծիքը մեզ վրայ. ասում են, որ մենք էլ իրանց վրայ նայում ենք որպէս «գործիքի», որպէս մեր դիտումներին ծառայող «մաշինայի» վրայ։ Այստեղ Մօլլա Նասրէդինի «սան դա դօղրու դէյըրսան»(4) առածը շատ սազ է գա-

լիս։ Իմ կարծիքով՝ երկու կողմի անհաշտ մնալու բուն պատճառը կայանում է անձնաւորութեանց փոխադարձ հակակրութեան մէջ եւ ոչ թէ՝ հայեացքների, որի մեծ տարբերութիւնը քիչ չէ պատահում նոյնիսկ մե՛ր մէջ։ Բայց եւ այնպէս մենք մնում ենք հաշտ եւ գործի մէջ ընկեր, որովհետեւ իրար բռնում են մեր տեմպերամենտները(5)։ Տեմպերամենտի նկատմամբ մարդիկ աւելի խստապահանջ են լինում, քան թէ հայեացքների. այդ էլ երեւի նրա համար, որ առաջինը մասամբ բնատուր է, իսկ վերջինը զուտ ստացական։ Երկու կողմից թո՛ղ բարձրին անհամակիր անձնաւորութիւնները, շտկւել կը սկսի ե՛ւ գործը. ահա՛ այս է իմ համեստ կարծիքը։ Նոյն այս կարծիքը մի մասնաւոր խօսակցութեան մէջ ես յայտնել եմ Աւետիսեանին(6), որ եւ համաձայնել է կատարելապէս։ Սակայն, ի՛նչ թագցնեմ մեղքս, չեմ հաւատում, որ Աւետիսեանը ձեռք քաշի թեմական տեսչութիւնից, եթէ հեռանալու վիճակը իրան էլ ընկնելու լինի (այն ժամանակ դեռ պաշտօն չունէր, որ համաձայնում էր)։ Ի դէպ, հարցնում էք, թէ «ինչպէ՞ս եղաւ, որ յեղափոխականներին հալածողը թեմական տեսուչ նշանակեց նրան»։ Ա՛յ, թէ ինչպէս։ Առաջնորդը հետզհետէ իր շուրջն է խմբում լրագրութեան մէջ յայտնի եւ ծածկանւամբ գրողներին։ Աւետիսեանը երկուսի մէջ էլ կայ. այդ լաւ գիտէ առաջնորդը, գիտէ նաեւ, որ «Արմենիա»-ի(7) խմբագրութեան դռները բաց են Աւետիսեանի առաջ։ Այս տեսակ մարդկանց իւր շուրջը խմբելով՝ երեւի ուզում է գովել տալ իրան, կամ պարսաւի մէջ զսպած պահել առնւազն։ Հեռաւոր նպատակը կաթողիկոսութիւնը կը լինի էլի՛։

Հիմա «ընկերական վճիռ». Յօնանը գրում է. <u>թէ դուք, դեռ չէք ստացել Ատրպ. կոմիտէից ընկերական վճիռ, որպէսզի ձեր յարաբերութիւնը — գործի վերաբերմամբ — կտրէք մէկի կամ միւսի հետ։</u> Այս տողերը գրելիս Յօնանը իր մտածողութեան մէջ հեռու չի գնացել եւ չի՛ կշռել տիրող դրութիւնը։ Ատրպ. կոմիտէ ասելով ես հասկանում եմ Թաւրիզինը, որը, ըստ ծրագրի, դատաստան պիտի անի Սալմաստինի հետ միասին։ Բարսեղի գոյութիւնը մինչ այսօր ես չեմ ճանաչել եւ նա ընդունած է առանց ինձ, իմ Սալմաստից Թաւրիզ գալուց յետոյ միայն։ Ուրեմն Սալմաստում միայն մնում է Զաքքին(8), որը փախաւ ինչպէս իմ բացատրութիւնը լսելուց, նոյնպէս եւ Վարդանի(9) դատի կանչելուցը՝ կիւզը պարզ չը լինելու պատճառով... Ուրեմն միայն մնում է Թաւրիզը, որի իրական անդամներն են Երւանդն ու օրիորդը եւ անւանական կերպով Սարգիսը(10)։ Դիցուք թէ սա էլ իրական է։ Եթէ իմ ու Երւանդի ձայնը չը հաշւենք (որպէս դատի ենթարկւածների) կը մնան հաւասար եւ ընդդիմադիր ձայներ։ Ի՞նչ դուրս կը գայ սրանից։ Դուք յարաբերութիւն կտրելու նեղութիւնը մի՛ քաշէք։ Ինքնըստինքեան կը կտրւի յարաբերութիւնը եւ շատ բնական ճանապարհով։ Ասեմ, թէ ինչպէս։ Պապեանը ուզում է Թաւրիզ գալ. երեւի Ղարադաղից կը կանչեն եւ Գէօնջայից։ Գուցէ Կովկասից ուրիշներն էլ գան — ո՞վ գիտէ։ Այսպէս կը շատանան ձայները եւ մեզանից ով որ ճարպիկ է, կամ կ՚աշխատի ճարպիկ լինել,— իր կողմը կը քաշի ձայների մեծամասնութիւնը եւ գրոհ կը տայ դէպի հակառակ կողմը, որից իր գլուխը պրծացնելու համար ի փախուստ կը դի-

մի պարտուածը... խէ՞յլի խուբ։ Մայիսի 7-ին ես ու Սարգիսը դրական-հրաժարական ենք տուել։ Թէ ո՞ւր պիտի գնանք՝ դեռ չը գիտենք։ Քննութիւնները վերջանալու են Յունիսի 5-ին։ Մենք առ առաւելը կարող ենք սպասել մինչեւ նոյն ամսի 10-ը, իսկ թէ մինչ այդ կը հասնի՞ այստեղ Օհանեանը՝ չը գիտենք։

Կիր[ակնօրեայ] դպրոցի փակումը Յօնանին շատ է վշտացրել եւ ինձ դատապարտում է, երեւի այդ ուսումնարանում դաս չը վերցնելուս համար։ Միեւնոյն գործում իմ թշնամու հետ երես առ երես գործել չեմ կարող ես, իսկ հեռւից եւ նամակով մի՛ շտ... եթէ իմ մասնակցութիւնն է պահանջում գործի շահը։ Ճիշտ է, Լիլաւայի ուսումնարանում այս տարի գործում եմ միասին, բայց ակամայ եւ ամէն րոպէ խոյս եմ տալիս Երւանդի երեսը տեսնելուց։ Ես մարդատեաց չեմ, բայց որ մէկին ատեցի՝ երեսը տեսնելուն պէս կը դողամ ամբողջ մարմնով։

Շատ եմ լսել, որ թշնամիները միասին կարող են գործել, բայց դրանք անգիր արած դիւրին բառեր են անիրագործելի (գոնէ ինձ համար, եթէ չվէյցարացիներդ կը նեղանաք մեր այս ազգային ճշմարտութիւնից)։

Հերիք է, շատ ուշ է, գլուխս էլ ղժւրժում է անքնութիւնից։ Բարեւներ։ Ցը...

Ն.

Արիստակէսն(11) ասում է, թէ որ աւելորդ փող ունիք՝ աթլասն ուղարկեցէք։ Արհեստանոցը հիմա բօլ-բօլ զակազներ է վերցնում։

ՆՈՅՆ

Սարգսի անդամակցութիւնը անւանական եմ համարում հետեւեալ պատճառներով. նրանք նամակներ են գրում այս ու այն կողմ առանց Սարգսի գիտութեան եւ այդ նամակներին ինչպէս ես, նոյնպէս եւ Սարգիսը պատահում է հեռւից միայն՝ կամ փոստ ձգելիս, կամ փոստ ուղարկելիս եւ կամ լսում ենք, որ այս ինչ տեղ նամակ գրեցին։ — Նամակներ են ստանում ուրիշ տեղերից (ես խօմ հէչ) եւ Սարգսին ցոյց են տալիս միայն անմեղները, որ ցոյց տալ կարելի էր ամէն մի մարդու։ Երեւակայեցէք, որ Բագ[րատ] վարդապետի նամակն անդամ ցոյց չեն տալիս եւ այդ մասին մենք պատահաբար տեղեկանում ենք Ռաֆայէլից եւ Բարսեղից։ Օրինակներ շատ են պատահել, որ ուրիշ տեղերից ստացած նամակների բովանդակութեան մի մասը Սարգիսը տեղեկացել է նրանից ու սրանից։ Բայց նրանք էլ իրանց պատճառաբանութիւնն ունեն ցոյց չտալու. ասում են, որ իրանց ստացածը մասնաւոր նամակ է. Պետոն մասնաւոր, Զաքքին մասնաւոր, Թիֆլիսը մասնաւոր, Սալմաստ մասնաւոր, եւայլն։ Ձեզանից յետոյ, մասնաւորները շատացել են։

ՆՈՅՆ

Ինչ էլ լինի՝ ես Լիլաւայում չեմ մնալ։ Թէպէտ ցանկալի չէր, որ «ձորը խալվաթանար՝ աղուէսը բէգ դառնար», բայց չեմ էլ ուզում որ ապագայում են-

թարկւեմ զրպարտանքների, չեմ ուզում, որ մարդիկ յետոյ անամօթաբար ասեն, թէ շատ բան կարող էինք անել, բայց այս ինչը արգելք եղաւ։ Ճարահատեալ մտադիր եմ գէ՛թ մի տարով մի հեռու անկիւն քաշւել եւ խաղաղ կեանք անցկացնել, մինչեւ արդի աննպաստ հանգամանքների փոխւիլը։ Կամ Սալմաստ կ՚երթամ, կամ Թեհրան։ Անհրաժեշտութեան դիպւածում Ղալայից էլ չեմ հրաժարւի, նայելով թէ որտե՞ղ կ՚աջողի։ Իսկ եթէ ո՛չ այս կը լինի, ո՛չ այն, այն ժամանակ ստիպւած կը վերադառնամ Կովկաս՝ գուցէ Դուշէթ, ուր իմ մի ընկերը նոր նշանակւել է նոտար եւ ինձ իր մօտ հրաւիրել նորերս։

Աւետիսեանը կամաց-կամաց Սալմաստ է հաւաքում իր քէֆի ուզած մարդկանցը։ Ինչպէս լսւում է Աննիբալն ու մի ինչ որ կովկասցի այսքանի օրը կը ճանապարհւին դէպի այնտեղ։ Գուցէ արդէն գրած լինին՝ Գարեգինը երկու ամսից ի վեր բանտարկւած է Վանում։ Ռաֆայէլի Բիւրօից լուր է դուրս գալիս, որ Աւետիսեանների բարեկամ Արգ. Արզումանեանցն էլ ընդհանուր գործակալ է նշանակւած Սալմաստում։ Ուրեմն երիշին հարամ չխառնող մեր Զաքքին եթէ գալու լինի, նրա իրաւասութիւնը վանքի մի քանի դեսիատին հողի սահմաններից դուրս չը պիտի գայ։ Բարսեղն էլ մօտ մի ամիս է, ինչ որ այստեղ է իր ձիու հետ. ձին իրան, իսկ ինքը կոթերի(12) ծախով։ Կոթերից մէկն արդէն վաղուց էր ուղարկւած Սալմաստ, որ ծախեն, փողն անուշ անեն։ Չեմ մեղադրում, ապրուստ է հարկաւոր... Յօնա՛ն, Ռաֆայէլն ասում էր, թէ «Շաւիղ»ը (Թեհրանի շաբաթաթերթը) ուզում է բանակցութեան մէջ մտնել քեզ հետ խմբագրական պաշտօնի համար։ Գիտեմ, թէ առհասարակ ո՛րչափ կարելի է նրան հաւատալ, բայց այդ դէպքում ոչինչ ճշտութիւն չը գիտեմ։ Յամենայն դէպս, գրի՛ր տեսնենք ի՞նչ կ՚ասես այդ բանի համար։ Կ՚երթա՞ս արդեօք, ե՞րբ եւ ի՞նչ պայմաններով։ Ես խորհուրդ կը տայի ընդունել։ Տպագրական խօսքի ազդեցութիւնը անհամեմատ ուժեղ ու հեղինաւաւոր է, քան բերանացի պրոպագանդան մի սահմանափակ շրջանում։

— «Համայնք»ը ստանում ենք. անշուշտ Աթաբէգեանի մատն ու Դաշ-ութեան տառերը խառն են նրա մէջ։ Հացի կեանքին շատ յարմար է սակարկութիւնը. մինչեւ չը պահանջես անարխիզմ, չեն համաձայնի ռամկավարութեան։

— Ռուսերէն բրօշիւրների մի մասը անց են կացրել Պետօն-Մետօն։ Միւսը մնում է. մատնանիշ արած հասցէն չի գտնւում։

— Պետօն 50 մանէթ է փոխադրել Երւանդի համար։

Համբոյրնե՛ր։
Ն.

1.- Յոնան Դաւթեան, որ դպրոցի տեսչութենէն հրաժարելով՝ Ժընեւ էր անցած։
2.- Սարգիս Օհանջանեան, ծանօթ Ֆար-Հատ ծածկանունով։
3.- Երուանդ – ծածկանուններէն մէկը Իշխան Յովսէփ Արղութեանի։
4.- Թուրքերէն – «Դուն ալ շիտակ կը խօսիս»։
5.- Խառնուածքները, բնաւորութիւնները։
6.- Արմենական ղեկավար դէմք, իսկական անունը Թերլեմէզեան Մկրտիչ։

7.- Ֆրանսայի Մարսէյլ քաղաքի մէջ Փորթուգալեան Մկրտիչի խմբագրութեամբ հրատարակուող թերթ:

8.- Զաքքի – ծածկանուն Թաւաքալեան Բագրատ վարդապետի, վանահայր Դերիկի վանքին:

9.- Խանասորայ Վարդանն է (Մեհրաբեան Սարգիս):

10.- Երուանդը, ինչպէս գիտենք, Յովսէփ Արղութեանն է, Սարգիսը՝ Օհանջանեան. Օրիորդը Սաթենիկ Մատինեանն է, Արղութեանի ապագայ կինը:

11.- Արիստակէս Զօրեան, կրտսեր եղբայրը Ռոստոմի:

12.- Կոթ – հրացան:

7

Փաստ. 456-47

Թաւրիզէն Ժընեւ ուղղուած բազմաթիւ նամակներու մէջ կ՚արծարծուի Նիկոլ Դումանի եւ Իշխան Յովսէփ Արղութեան – Սաթենիկ Մատինեան երկեակի միջեւ յամեցող հակադրութեանց խնդիրը: Այդ կարգին է փաստ. 456-47-ը, դարձեալ Ժընեւ Յոնան Դաւթեանին եւ Ռոստոմին ուղղուած 12 էջնոց (1894) անթուակիր նամակը (առանց ամսաթուի յիշատակութեան), ուր Թաւրիզի Լիլաւա թաղին մէջ գտնուող Հայկազեան դպրոցի տեսուչ Գաբրիէլ Պապեան, անդրադառնալով այդ վէճերուն, կը յայտնէր թէ որքան կը վնասեն անոնք դպրոցական գործին: Այս ընդարձակ նամակի վերջաւորութեան կան յաւելում-երկտողներ, գրուած Սարգիս Օհանջանեանի (Ֆար-Հատ) եւ Նիկոլ Դումանի կողմէ: Կու տանք վերջինիս ձեռագրին պատկանող յաւելումը.–

Ես այժմ լռում եմ, որովհետեւ վճռել եմ իմ բոլոր կրածներս «գեհոռա» տանել՝ իմ ասած ճշմարտութիւնների (որոնց համար հալածուեցի) փաստական ապացուցութիւնը թողնելով ժամանակին։

Ընդունեցէք ջերմաջերմ համբոյրներս։

Նիկ.

8

Փաստ. 456-42

13 *Նոյեմբ.* 94
Սալմաստ

Ընկերներ,

Տղէքը վերադարձան մի շաբաթ սրանից առաջ։ Այնտեղ թողել են Պետօ-ին ու Տաշիրին(1)։ *Մեր այնտեղ կուսակիցներ ունենալը դեռ շատ մութն է. երեւի երկար չի քաշի՝ ամէն ինչ կը պարզւի, միայն տայ Աստուած որ մերոնք դարձեալ չը խաբնւին եւ ի զուր պատճառ դառնան թէ՛ նիւթական եւ թէ բարոյական կորստեան։ Մեր ճանապարհորդները վերադարձին ընդհարում են ունեցել կառավարութեան մարդկանց հետ, ուր եւ կորցրել են իրանցից մէկին, որին դուք չէք ճանաչում, թէեւ 2 տարի վանքումն էր*(2)։ *Հակառակ կողմն էլ երկուսն է կորցրել։ Տասը վերադարձողների մի մասը գնաց դէպի Պապեանը*(3), *միւսն էլ շուտով կ՚երթայ։ Տեսնենք այնտեղից ո՞ւր կ՚երթան եւ որո՛նք։*

Վերջերումս սկսել են հէնց բուն երկրից գալ գրչակոթերի համար(4)։ *Քիչ առաջ 5 երիտասարդ եկան մի գիւղից, որոնց չէինք ճանաչում ինքներս. նամակ էլ չունէին մերոնցից։ Սակայն գտնւեցաւ մի սալմաստեցի ծանօթ, որ երաշխաւորում էր նրանց համար։ Մենք էլ ի նկատի ունենալով, որ գրչակոթ տարածելը կազմում է մեր ամենաուժեղ միջոցներից մէկը եւ հաշւի առնելով որ այժմ գործ ենք ունենում <u>ուղղակի</u> ժողովրդեան եւ ո՛չ նրա անպատկառ <u>ներկայացուցիչների</u> հետ*, 4 *հատ նրանց ձեռքը տւինք՝ նախապէս ստանալով* 10 *ոսկի եւ պարտաւորցնելով որ տանեն մերոնց տնօրինութեան յանձնեն։ Իսկ հարկ եղած ժամանակ կոթերը թողնեն մերոնց մօտ՝ նրանցից կանխապէս յետ առնելով այստեղ մեզ վճարած* 10 *ոսկու փոխարէնը։ Տեսնենք այս փորձը ի՞նչ հետեւանք կ՚ունենայ։*

Այս տարի Թաւրիզում մերոնց գործը անաջող անցաւ. մինչեւ Հոկտեմբերի վերջը չը կարողացան խումբը լիովին կազմել։ Բերանացի լուր կայ, որ ամսիս սկզբներում ստիպւած վարձել են Սեղր. Միրզոյեանին։ Արիստակէսը(5) *էլի անցաւ Կովկաս անցագրի ու նիւթերի համար։ Այնտեղի գործերի համար իրա՛նք կը գրեն, ես սկսիմ Սալմաստից։*

Այստեղ մնում են միայն Բար-ն ու Ն-լը(6) *առաջինը դա՛րձեալ անպաշտօն, իսկ երկրորդը թեմական տեսչից անկախ՝ ուսուցիչ Ղալասարում, շաբաթական* 18 *դասով եւ* 60 *թուման ռոճկով։ Տեսչից անկախ լինելու վերաբերմամբ նա իր առաջարկն է արել վաճառական-հոգաբարձուներին, որոնցից եւ ընդունւել է։ Արդէն երկու շաբաթ է, ինչ որ նա դպրոց է գնում կաղէկաղ, վէրքը դեռ եւս չի առողջացել*(7)։

Վաճառականները դէպի մեզ հակման նշաններ են ցոյց տալիս եւ հակակրանք՝ դէպի միւս կուսակցութիւնը, թէպէտ՝ յաջորդը նրանցից, տեսուչը նրանցից, ուսուցիչները նրանցից։ Պէտք է օգտուել այդ նպաստաւոր տրամադրութիւնից։ Եթէ պրոպագանդա մղենք նրանց դէմ եռանդով, յոյս ունիմ, եթէ ո՛չ յաջորդութիւնը, գոնէ տեսչութիւնը մեր ձեռքն անցկացնել։ Տեսչութիւնը մեր ձեռքն առնելով պէտք է այստեղ խմբւեն մեր ընկեր-ուսուցիչներից, եթէ ոչ՝ դպրոցները ուսուցիչներից թափուր մնալով՝ ապացուցած կը լինինք նրանց առաւելութիւնը մեզ վրայ եւ այդպիսով կը կորցնենք առ մեզ ունեցած եղած համակրութիւնն էլ։ Եթէ տեսչութիւնը մեր ձեռքն անցկացնելը նպատակայարմար դատւի՝ անհրաժեշտ է 6 գլխաւոր գիւղերի համար ունենալ գոնէ 6 ուսուցիչ եւ մի <u>խելքը գլխին տեսուչ</u>. այդ 7-ից երկուսը կայ, մնում է 5-ը։ Ի՞նչ է Ձեր կարծիքն արդեօք. գործին ձեռնամուխ լինինք, թէ չէ։ Եթէ լինինք՝ կարո՞ղ ենք մեր ընկերներից ու ծանօթներից հինգ հոգի հրաւիրել առնւազը։ (Ի նկատի ունեցէք որ շատ հոգիների հետ շա՛տ էլ կռիւ է ծագում, ինչպէս նկատել է նաեւ Ռոստոմը եւ իսկապէս այդպէս է եղել միշտ)։

Նոր ձեռնադրւած նոր յաջորդը(8), հի՛ն արմենիստ է, աղուէսի կատարելագործւած բոլոր յատկութիւններով կեանքի մէջ։ Բայց քացախի պէս թունդ է եւ կարող է իր ամանը ճաքեցնել։

Լուր կայ, որ Բ. (Զաքին)(9) Էջմիածնում աշխատում է շուտով գալ, որպէս լոկ վանահայր։ Ուրիշը լինի յաջորդը, իսկ ինքը վանահայր,— դա վիրաւորական է մեզ համար, իսկ միւս կողմից էլ՝ այսուհետեւ վանքը պահելը եթէ ո՛չ անհնարին, գոնէ շա՛տ դժւար գործ է։ Արդի հասարակաց կարծիքը նա է, որ միայն կովկասցիները կարող են վանքը պահել։ Իսկ եթէ նորից ստանձնենք վանքը եւ կրկին բաց թողնենք, ինչպէս արին արմենիստները իրենց յաջորդի հետ,— այն ժամանակ կը խայտառակւենք՝ կատարելապէս։

— Այսուհետեւ Սալմաստի եւ Պետօ-ի համար թերթեր ուղարկեցէք ուղղակի Սալմաստ, Նիկողայոս Տէր Յովհաննիսեանցին — Ղալասարում։ Դա ա՛յն յարմարութիւնն ունի, որ Թաւրիզում չի ուշանայ եւ բացի դրանից, Թաւրիզը առանձին ծախս չի անի փոստ ձգելու համար, մինչդեռ Ձեզ համար միեւնոյն ծախսը կը հարկաւորուի թէ մէկ կապոցի եւ թէ նոյն ծանրութիւնը կրող երկու կապոցի համար, որոնցից մէկը ուղղակի Սալմաստ պիտի գայ։

Ուղարկեցէք նոյն հասցէով բրօշիւրներ, թէ հայերէն եւ թէ ռուսերէն՝ մերը, սոցիալական, անարխիական, ինչ որ կարելի է ձեռք բերել։ Ջմռռանաք եւ «Համայնքը»։ մեռանք ջրերին ու ծառերին թամաշա անելով, մի քիչ էլ կարդանք է՛։ Թէ որ այդ բաները կատարելու համար փող չունենաք՝ մենք կը դրստենք — քիչ պակաս ուտելով, քիչ էլ պակաս ուտացնելով, ախը «ո՛չ միայն հացիւ կեցցէ մարդ»։

Համբոյր ու բարեւ

Ն.

1.- Խօսքը Վան մեկնող մարտական խումբի մասին է: Վան մնացողներն են Պետօ (Ալեքսանդր Պետրոսեան) եւ Յովսէփ Արղութեան (Տաշիր):

2.- Խօսքը Դերիկի վանքին մասին է, որուն պաշտօնական անունն էր Զարեւանդայ Ս. Աստուածամօր մենաստան:

3.- Դէպի Պապեանը – այսինքն դէպի Թաւրիզ (Գաբրիէլ Պապեան Թաւրիզի Լիլաւա թաղի Հայկազեան դպրոցի տեսուչն էր):

4.- Գրչակոթը՝ հրացանն է. գրչածայրը՝ փամփուշտ:

5.- Արիստակէս Զօրեան – Ռոստոմի կրտսեր եղբայրը, որ կը զբաղէր Թաւրիզի զինական արհեստանոցով եւ ռազմամթերքի գնումներով:

6.- Բարսեղն ու Նիկոլը: Արդարեւ Ն. Դուման ուսուցչական պաշտօնի կոչուած էր Սալմաստի գիւղերէն Ղալասարի թեմական վարժարանէն ներս, թեմական տեսուչէն անկախ, ինչպէս կը գրէ ան: Տեսուչը Արմենական կուսակցութեան ծանօթ ղեկավարներէն Աւետիսեանն էր, բուն անունով՝ Թերլեմէզեան Մկրտիչ: Բարսեղը՝ Մելիք-Գրիգորեանն է, ծանօթ Ղարամելիք, Աբամելիք, Վասօ ծածկանուններով:

7.- Արմենական երկու մարտիկներու միջեւ ծագած կռիւ մը կասեցնելու փորձ կատարած պահուն, Ն. Դուման դաշոյնի հարուած մը ստացած էր ոտքին: Վէրքը տակաւին բուժուած չըլլալուն՝ չկրցաւ միանալ Վան մեկնող ֆետայիներու խումբին:

8.- «Յաջորդ» բառը գործածուած է գաւառի հոգեւոր հոգեւոր, առաջնորդական փոխանորդի իմաստով:

9.- Խօսքը կը վերաբերի Զաքի ծածկանունով ծանօթ Բագրատ վարդապետ Թաւաքալեանին, որ պիտի նշանակուէր Դերիկի վանքի մեծաւոր:

Ալեքսանդր Պետրոսեան (Պետօ)

Իշխան Յովսէփ Արղութեան

9

Փաստ. 284-4

Ժընեւ՝ «Դրօշակ»ի խմբագրութեան գրուած նամակ Նախիջեւանէն՝ դէպի Թիֆլիս ուղեւորութեան ընթացքին, ուր կ՚երթար Նիկոլ Դուման տեսնուելու եւ բացատրելու Արեւելեան բիւրոյի ընկերներուն իր եւ Յովսէփ Արղութեանի (Իշխան) միջեւ ծագած տարակարծութեանց մասին: Թիֆլիսի մէջ Ն. Դուման առիթ պիտի ունենար երկրորդ անգամ հանդիպելու Ռոստոմին եւ ծանօթանալու Քրիստափոր Միքայէլեանի, Սիմոն Զաւարեանի եւ ուրիշ պատասխանատու ընկերներու:

24 *Յունիս* 1895
Նախիջեւան

Սիրելիք,

Այսօր, նամակս գրելուց մի ժամ յետոյ, ես, Սարգիսը(1) *եւ Միհրանը*(2) *կը ճանապարհւենք դէպի Երեւան եւ այնտեղից էլ դէպի Թիֆլիս... բայց թէ ինչու,— այդ մասին յետոյ։ Մեզանից առաջ անցել են դէպի Թիֆլիս Երուանդը*(3) *(որ վերադարձել էր), Սաթենիկը եւ Նատալիան*(4) *(որ եկել էր քրոջ ետեւից)։ Նրանցից մի քանի օր յետոյ երկրորդ խումբը՝ Պապեանը*(5)*, օր. օր. Մարիամ*(6) *եւ Աննա (երկուսն էլ Բագւից, որ վարժուհի էին Թաւրիզում)։*

Վան գնացած խումբը (բաղկացած 21 հոգուց) Սալմաստ կը վերադառնայ այս քանի օրը։ Ուղարկում ենք այնտեղից եկած Պետո-ի(7) *թղթակցութիւնը։ Գնում ենք եւ տեսնենք ինչո՞վ կը վերջանայ եւ մեզանից իւրաքանչիւրը ո՞ւր կ՚երթայ եկող տարուան համար։ Տպեցէք թղթակցութիւնը, բայց մեղմացրէք հնչ.եանների ձերբակալութեան կտորը։*

Մենք մասնաւորապէս տեղեկացել ենք հաւաստի աղբիւրներից, որ մերոնց հետ կռւող քրդերից ընկել են երկուսը միայն եւ հերիք է...

Թերթերն ուղարկեցէք Սալմաստ Կարապետ Արզումանեանցին (նամակով), Յարութիւն Աքիմեանցին յանձնելու համար (վերջինը մեր ընկերն է)։

Համբոյրներ ամէնիս կողմից։

ՆԻԿՕԼ

1.- Սարգիս Օհանջանեան (Ֆար-Հատ):
2.- Միհրանը Թաւրիզի Դաշնակցութեան զինական արհեստանոցի վարպետներէն էր, բնիկ կարսեցի եւ իսկական անունը Միսաք Էքմէքճեան:
3.- Երուանդը՝ Արղութեան Յովսէփն է:
4.- Սաթենիկ Մատինեան եւ քոյրը՝ Նատալիա:
5.- Պապեան Գաբրիէլ, որ Յոնան Դաւթեանի Ժընեւ մեկնելէն ետք կարգուած էր Լիլաւա թաղի Հայկազեան դպրոցի տեսուչ:
6.- Մարօ – Մակարեան Մարիամ:
7.- Ալեքսանդր Պետրոսեան:

10

Փաստ. 457-22

7 *Օգոստոս* 1895
Սալմաստ

Յոնա՛ն,

Նամակդ ստացայ երէկ։

Երկրորդ օրն է, ինչ որ Թիֆլիզից վերադարձել եմ Սալմաստ՝ մի տարի էլ այստեղ մնալու իմ նախկին պաշտօնում. երեք անգամ էլ հրաւիրել էին Լիլաւայից, բայց նրանց մերժեցի։

Թիֆլիզ եկած բուլգարացուն(1) *բերում էի ինձ հետ, բայց նա Ջուլֆայում մի գերմանացու անզգուշութիւնից ազգրի փափուկ մսից վէրք ստացաւ բեվոլվերից, դրա համար էլ թողի Ջուլֆայում՝ բժշկւելու։ Այժմ ոչինչ չեմ կարողանում գրել, որովհետեւ փոստ գնացողները շտապում են, միայն կը տամ մի հասցէ, որ ըստ այնմ «Դրօշակ» ուղարկելու մի փորձ փորձես։*

Հասցէն՝ (Ֆրանսերէն պիտի գրէք)

Ջուլֆա (Պարսկաստան) — Հնդեւրոպական հեռագրագծի հսկիչ պրն. Դէխին(2)*։*

Ուրիշ ոչինչ. նա կը յանձնի ուր հարկն է։ Պէտք է տայ Ռուսաց ափում մեր մարդուն, որ նա էլ անյապաղ բաժանի։ Երբ ուղարկես՝ իմաց տուր ինձ։ Հա՛. Դրօշակները ուղարկեցէք պասիլկի ձեւով՝ փաթաթած գերմանական կամ գոնէ ֆրանսիական թերթերի մէջ։ Վ[ան]ից խաբար չկայ. խումբը դեռ չի վերադարձել. բանտարկեալները ազատել են։

Համբոյր, Յաւեսութիւն։

Նիկ.

1.- Բուլգարացին, շատ հաւանաբար, Բուլգարացի Պետոն է, բուն անունով Պետրոս Սերեմճեան («Վէրքերով լի» յեղափոխական ծանօթ երգին հերոսը)։ Արդարեւ Պուլկարիոյ սպայից վարժարանը աւարտելէ ետք, երիտասարդ Պետո 1894 թ. վերջերուն նախ կ՚անցնի Կովկաս, ապա Ատրպատական ու Վան-Վասպուրական եւ կը մասնակցի տեղւոյն ինքնապաշտպանութեան կռիւներուն։ Պուլկարիա վերադարձին կը գլխաւորէ հայ-մակեդոնական զինեալ խումբ մը, որ Թուրքիոյ սահմանին վրայ 1901 թ. վերջերուն կռուի կը բռնուի թրքական գերազանց ուժերու հետ. կը զոհուին 6 մարտիկներ եւ գերի կ՚իյնան 4 ուրիշներ, որոնց կարգին Պետոն եւ Օննիկ Թորոսեանը։ 4 գերիները կը բանտարկուին ապա Նոյեմբեր 27-ին կախաղան կը բարձրացուին Էտիրնէ քաղաքին մէջ։ Կախաղանին վրայ Պետո, հրելով իրեն մօտեցող դահիճը՝ ինք իր ձեռքով չուանը կ՚անցընէ վզին։

2.- Բնագրին մէջ ռուսերէն։

11

Փաստ. 457-23

18 *Օգոստոս* 1895
Սալմաստ

[*Ժընեւ՝ «Դրօշակ»ի խմբագրութեան*]

Յօնա՛ն,

Նախորդ նամակս գուցէ ստացած չլինիս. գրել էի, որ Կովկասի համար ուղարկես թերթեր հետեւեալ հասցէով. (Ֆրանսերէն) Ջուլֆա. Հնդեւրոպական հեռագրագծի հսկող պրն. Դէխին(1)*։ Դա մի փոքր է հասցէատիրոջ համաձայնութեամբ։ Եթէ աջողուի, տարածումը կը կատարուի սովորականից անհամեմատ արագ։ Ուղարկում եմ Վ[ան]ից ստացած մի թղթակցութիւն եւ մի ոտանաւոր։ Նոր նամակներ կային, որոնց ուղարկեցի Թիֆլիս։ Բովանդակութեան մէջ նորութիւնը ա՛յն է, որ մեր ամբողջ խումբը Պետօ-ի*(2) *հետ միասին նաեւ ուրիշները վանեցիներից, սաստիկ դժգոհ են Ոսկանից, որին համարում են խաբեբայ, խառնակիչ եւ չգիտեմ էլ ինչ. իսկ Ոսկանը մի ուրիշի միջոցով իր դժգոհութիւնն է յայտնում Պետօ-ի դէմ եւ յենւում Երւանդի*(3) *վրայ, որին եւս ուղղած են նամակներ Թիֆլիս։ Խումբը Շատախումն էր այս ամառս եւ այս օրերս սպասւում է Սալմաստում։ Ինչպէս գրում են, խմբի Շատախ գնալ եւ մնալու հետեւանքը եղել է «Գաւառական վարչութեան կազմակերպութիւնը», որ շատ ուրախալի է եւ որին (Շատախ գնալուն) դէմ է եղել Ոսկանը. իսկ Պետօն պնդել է որ խումբը չը գնայ Սալմաստ, պարապ նստի եւ ի զուր ծախքի ենթարկի Դաշնակցութիւնը, այլ գնայ Շատախ եւ անի ինչ որ կարող է։ Եւ հէնց այդ տարակարծիք լինելուց էլ բրդել է տարաձայնութիւն։*

Երւանդը շուտով կը գայ, որ խմբի հետ նորից Վան գնայ։ Արմենիստներն էլ մի ահագին խմբով պատրաստւում են Վ[ան] գնալ Աւետիսեանի(4) *այս օրերս բերած զէնքերով։ Հաւանօրէն այնտեղ շուտով կ՚ընկնի կուսակցական տուր ու դմբոց եւ մեզ հարկաւոր կը լինի այնտեղ ունենալ այդ արարածների կեղտոտ զէնքերի գործածութեան եղանակին ծանօթ ու տոկուն մարդիկ՝ մեր դիրքը չը կորցնելու համար։*

Ես Թիֆլիսի որոշմամբ(5) *մնում եմ Սալմաստում, իսկ Թաւրիզում կը մնան անցեալ տարւանը, բացի օրիորդից*(6) *եւ մի քանի ուրիշ նոր մարդիկ, որոնց ով լինելը դեռ յայտնի չէ։ Ինչպէս երեւում է նշաններից, Սալմաստում հէնց մէնակ ես եմ մնալու։ Այստեղ մենք ունէինք մի 2-3 մարդ, որոնք հեռանում են ընտանեկան-տնտեսական հանգամանքների պատճառով, բայց հոգ չէ. լաւ է լինել մէնակ, քան թէ շատ անգամ իրար չը հասկացող եւ իրար խանգարողների*

հետ։ Թիֆլիսում որոշուեցաւ գլխաւոր ուշադրութիւնը դարձնել Սալմաստի, քան թէ Թաւրիզի վրայ...։

Առ այժմ այսքան. համբոյրներ։

Քոն.

Սալմաստ թերթեր ուղարկելու համար որոնում եմ նպատակայարմար հասցէ. գտնելուն պէս կը գրեմ. դեռ շարունակիր ծրարով։

1.- Հասցէն՝ բնագրին մէջ ռուսերէն:

2.- Պետո, բուն անունով Աղեքսանդր Պետրոսեան, Ատրպականի եւ ի մասնաւորի Վասպուրականի ծանօթ գործիչներէն. ղեկավարներէն մէկը Վանի 1896 թ. ինքնապաշտպանութեան, որմէ ետք Պարսկաստան նահանջի ճամբուն վրայ նահատակուեցաւ (1896):

3.- Յովսէփ Արղուբեան:

4.- 1896 թ. Վանի ինքնապաշտպանութեան ղեկավարներէն, նոյնպէս նահատակուած նահանջի ճամբուն վրայ: Արմենականներու հիմնադիր, իսկական անունը՝ Մկրտիչ Թերլեմէզեան:

5.- Այսինքն՝ Հ.Յ.Դ. Բիւրոյի:

6.- Օրիորդը՝ Սաթենիկ Մատինեանն է, որ աւելի ուշ դարձաւ կինը Իշխանին (Երուանդ – Յովսէփ Արղուբեանին):

12

Փաստ. 457-25

3 *Սեպտ.* 1895
Սալմաստ

[*Ժընեւ՝ Յոնան Դաւթեանին*]

Յոնա՛ն,

Ջուլֆայի համար ուղարկածս հասցէն արդէն ստացած կը լինիս. այժմ էլ տալիս եմ հասցէս Սալմաստի համար, բայց պիտի գրես ֆրանսերէն. «Սալմաստ, բժիշկ Իւխաննա .....(1) Սայադ», ուրիշ ոչինչ։ Սա բողոքականների ասորի բժիշկն է։ Առաջին անգամ որպէս փորձ, ուղարկիր միայն 50 *օրինակ*(2). *եթէ աջողութեամբ ինձ հասնի, անմիջապէս կը տեղեկացնեմ, որ այնուհետեւ շարունակես կանոնաւոր ուղարկել ամէն անգամ* 100-150 *օրինակ Թաւրիզի, այստեղի, Խոյի եւ Վ.[անա]յ ու շրջակայքի համար։ Միայն փոխիր ծալելու ձեւը (որ առաջւայ նման չը լինի) եւ յետոյ փաթաթիր անգլերէն կամ առնւազն ֆրանսերէն թերթի մէջ, որ մոլորւին մեր կարճատես պաշտօնեաները։*

Խումբը դեռ եւս չի վերադարձել չնորհիւ Պետօ-ի այս անգամ ցոյց տւած մեծ խելքի. գիտենալով որ ամբողջ ամառը այստեղ ի զուր ծախսի պիտի ենթարկէին մեզ՝ Պետօն նրանց վերցրել գնացել էր Շատախ։ Վերջին տեղեկութեան նայելով՝ նրանք արդէն վերադարձել են Վան եւ մեզ մօտ սպասւում են այս օրերս։ Մի քանի օր հանգստութիւնից յետոյ՝ էլի կ'երթան, տանելով իրանց հետ կոթեր ու ծայրեր(3)։ *Գրում են, որ խումբը կը գայ աւելի ստւարացած։ Երանի թէ աշխատէին խումբը ձմրան էլ պահել այնտեղ, եթէ ոչ նրանց ռեխը*(4) *լցնել չի լինի* 7-8 *ամիս չարունակ։*

Նախորդ փոստով ուղարկել եմ քո հասցէով թղթակցութիւն եւ ոտանաւոր Վ.[ան]ից։ Յոյս կայ, որ այս տարի մեր յարաբերութիւնները կանոնաւորութեան ենթարկենք Վ.[անա]յ հետ։ Այդ նպատակով՝ խօսեցինք պարսիկ չարվադարի(5) *հետ, որ ամէն գնալով տանի նամակ եւ բերի պատասխանը ու ստանայ այստեղ մի թուման իւրաքանչիւր անգամ։ Եթէ ծուլանանք նամակ տալու՝ նա դարձեալ կ'ստանայ իր վարձը։ Այսպիսով պարտաւորեցրել եմ ինձ ու Վ.[անե]ցիներին... Չարվադարը գնում է ամսական երկու անգամ, բացի ձմերային ամիսներից։ Նա, նամակներից բացի, կը տանի նաեւ «Դրօշակներ» ու «Մշակի» համարները, որ այժմ կանոնաւոր ստացւում են իմ հասցէով։*

Ար.[մեն]իստները(6) 30 *հոգով եւ* 33 *կոթով գնացին այս քանի օրը։ Մի քանի օրից յետոյ, ինչպէս լսում ենք, կ'երթայ նաեւ Աւետիսեանը եւ, երեւի, կ'սկսւի կուսակցական տուր ու դմբոցը։*

Սալմաստում, ինչպէս երեւում է, մէնակ ես եմ մնալու։ Եղած մի քանի հոգիքը արդէն սկսել են ցրւել իրանց ընտանեկան ու տնտեսական աննպաստ գործերի պատճառով։

Իսկ Թաւրիզում հներից մնում են Սարգիսը, Պապիկը, օր. Մարիամը եւ, ինչպէս լսում եմ, օր. Սաթենիկը(7)*. արհեստանոցում միայն նորերն են՝ Պապիկի քոյրը, Վարդան Տէր-Վարդանեան, ճեմարանական եւ երգեցողութեան ուսուցիչ Ռաֆայէլի փոխարէն եւ էլի երկու ուրիշ մարդ՝ Սառիկեան Յակոբ եւ Բուռնուզեան Հայրապետ, որոնք սպասւում են մինչեւ Սեպտեմբերի* 15-*ը։ Ասում են, որ Թաւրիզում արդէն ստացել են* 60 *հատ նոր ձեւի կոթ։*

Վերջին ժամանակներս Վ[ան]ից եկած նամակների բովանդակութիւնը ուղարկում ենք Թաւրիզ, իսկ իսկականները ուղղակի Թիֆլիս. դրա համար մեր վրդովեալ Պապիկը կրկռոց է բարձրացնում։ Ես էլ գրեցի, բայց մեղմ ու քաղաքավարի կերպով, թէ ի՛նչ երաշխաւորութիւն կայ, որ անցեալ տարւայ նման իրար վրայ չը ձգեն գործի կատարումը։ Աւելացրի, որ յամենայն դէպս, այս թղթակցութիւնները չենք ուղարկի ո՛չ իրանց, ո՛չ էլ Թիֆլիզ, այլ ուղղակի ձեզ։ Այսպէս լաւ է, չէ՞։ Համառօտ բովանդակութիւն էլ տալիս եմ իրանց. էլ ի՛նչ են ուզում։

Հէնց որ տղէքը գան՝ մանրամասն տեղեկութիւն կը տամ Վ[ան]ից։

Դեռ հերիք է։ Համոյրներս։

Ո՞վքեր կան այդտեղ տօ՛։

Ն.

Հասցէս.
Սալմաստ, Կարապետ Արզումանեանց,
տալ Նիկ.ին։

1.- Բնագրին մէջ նոյնը ռուսատառ:
2.- Խօսքը «Դրօշակ»ի օրինակներուն մասին է:
3.- Կոթը՝ հրացանն է, ծայրը՝ փամփուշտ:
4.- Ռեխը լցնել՝ ուտեստեղէն հասցնել, կշտացնել:
5.- Ձիապան, ջորեպան:
6.- Ն. Դուման ընդհանրապէս արմենիստ կը գործածէ, փոխանակ արմենականի:
7.- Սարգիսը՝ Օհանջանեանն է ծանօթ Ֆար-Հատ ծածկանունով: Պապիկը՝ Գաբրիէլ Պապեան, Հայկազեան դպրոցին տեսուչ, Օր. Մարիամը՝ Մարօ, Մարիամ Մակարեան, Ռոստոմի եղբօր՝ Արիստակէս Զօրեանի (Կարօ) նշանածը, որ անձնասպանութիւն պիտի գործէր Կարոյի յեղափոխական գործունէութիւնը չխանգարելու համար, Սաթենիկը՝ Մատինեան:

13

Փաստ. 457-26

11 *Սեպտ*. 1895
Սալմաստ

Սիրելի Յոնա՛ն,

Ինձնից սպասում ես կարգին նամակի, բայց ես, թէեւ երբեմն-երբեմն խոստանում եմ գրել այդ կարգինը, այնուամենայնիւ չեմ կարողանում կատարել խոստումս, որովհետեւ շարունակ զբաղուած եմ, շարունակ դալմաղալների մէջ եմ...։ Այժմ էլ փոստի ժամանակը շատ կարճ է. բայց կը փորձեմ քեզ երկար գրել։

Զարմանում ես, որ շարժման փորձը ուրիշներն են ուզում անել եւ չեշտում ես մեր այսքան տարի Վ[անու]մ լինելը, մեր քանակութիւնը։ Բայց զարմանալու ոչինչ չը կայ, սիրելի՛ս։ Պատճառները շատ պարզ են. պէտք է գիտենաս, որ մենք խոհեմ... դիպլոմատներ ենք, մի բաշ ուզում ենք պատրաստել, որ ամբողջ Հայաստանը մի անգամից ոտքի կանգնեցնենք...

Միւս կողմից էլ պէտք է ի նկատի ունենաս ա՛յն հանգամանքը, որ այժմ, ինչպէս տեղեկացնում են, մենք Վ[ան]ում ունինք դաշնակցականների մի ստւար խումբ եւ կանոնաւոր կազմակերպութիւն, եւ ճիշտ դժբախտութիւնն էլ կայանում է դրանում։ Զէ՞ որ դրանք մի ժամանակ արմ[են]խոտ էին զուտ արմ[ենխոտա]կան գաղափարներով. այժմ փոխել են իրանց անունը, իսկ ներքին բովանդութիւնը բնա՛ւ։ Եւ որովհետեւ կայ կանոնաւոր կազմակերպութիւն, ամէն ինչ վճռւում է ձայների մեծամասնութեամբ,— դրա համար էլ արմ[ենխոտա]կան գաղափարներն ու հասկացողութիւնները միշտ հանդիսանում են յաղթանակող։ Ցոյցերը համարւում են վնասակար... Մեր ու կառավարութեան ոյժերը ո՛չ թէ չափւում են բարոյականի եւ նպատակի վսեմութեան ու մաքրութեան չափերով, այլ կշռւում «մսխալ-կշիռքով» եւ այսպիսով դա՛ռձեալ ընկնում են «մեծ նախապատրաստութեան ծոցը», զէնքը դարձեալ մատնում ժանգի... Դրա մէջ որոշ չափով մեղաւոր են մեր առաքեալներն, ի հարկէ, որ փոխանակ ենթարկելու, ենթարկւում են քրիստոնէական համբերութեամբ...

Եւ հէնց այդ էր շարժառիթը, որ Թիֆլիզում երկու խիստ հարց յարուցի.

<u>Նախ՝</u> որ մեր առաքեալները այս ձմրան ընթացքում աշխատեն Վ[անա]յ յանձնախմբին հաշտեցնել ցոյցերի եւ աւազակային գործողութիւնների հետ, իսկ եթէ այդ չի աջողի նրանց՝ գարնանը ներս խուժենք հակառակ նրանց կամքի։

Եւ <u>երկրորդ՝</u> որովհետեւ զէնքի տեղափոխութեան համար մենք պահում ենք

խումբը, որը տարեկան մի կամ երկու անգամ անցնում է մի-մի կամ մի եւ կէս հրացանով եւ դրա փոխարէն ամբողջ տարին ահագին ծախք նստում, իսկ մենք հրացանների համար ո՛չ մի կոպէկ փող չենք ստանում, թէեւ անունը դրել ենք «ծախու»,— ուստի վերջ տալ այդ մեծածախս խմբին եւ առաջարկել Վ[անա]յ յանձնախմբին, որ յանձնարարականով կարեւոր մարդիկ ուղարկեն զէնք վերցնելու ձրիապէս։ Առաջին կէտը ընդունուեց, իսկ երկրորդը վիճաբանութեան առարկայ դարձաւ եւ մնաց անորոշ։ Մի՛ մոռացիր, Յօնա՛ն, որ եթէ երկրորդ կէտն ընդունէր, մեզ պիտի աջողէր կարճ ժամանակում չը տեսնուած քանակութեամբ զէնք տարածել։

Երկու հասցէ եմ ուղարկել քեզ թերթերի համար եւ կրկնել. բայց երկիւղ կրելով, թէ մի՛ գուցէ ձեռքդ հասած չլինին՝ տալիս եմ 3-րդ անգամ.

Ջուլֆա (Պարսկաստան) — Հնդեւրոպական հեռագրագծի հսկիչ պրն. Դէխինը(1). միւսը՝ «Սալմաստ», բժիշկ Իւխաննա Սայադ»։ Երկուսն էլ պիտի գրես ֆրանսերէն, փոխես փաթաթելու նախկին ձեւը եւ ապա դարձեալ փաթաթես անգլերէն կամ առնւազն ֆրանսերէն մի թերթի մէջ։

Վաղը նշանակւած է հոգաբարձական ժողով, ուր պիտի դատւեմ ես։ Արմ[են]իստները, իրանց պարագլուխ առած Ներսէսին, տարածել էին որ Ալէքի բանտարկութեան գործում ես եմ մեղաւորը, ես եմ մատնել... Այդ առթիւ բացատրութիւն պահանջեցի Ներսէսից, իսկ նա 5-6 ամիս է ձգձգում է շարունակ։ Այս քանի օրը դա՛րձեալ կրկնեցի իմ պահանջը, բայց աւելի դրական կերպով։ Տեսնելով որ այլ եւս անկարելի է խուսափել, ասաց, որ այդ բացատրութիւնը կը տայ, երբ իր քէֆը կուզի. ես էլ նրա յանդգնութիւնը պատժելու համար երեք վկայի ներկայութեամբ մի ապտակ հասցրի։ Դրա համար էլ ինքը եւ տեսուչ Աւետիսեանը գրաւոր բողոքել են մեր հոգաբարձութեան, որը վաղւայ համար ժողով է նշանակել՝ գործը քննելու։

Սարգսի(2) «յոգնածութեան» համար ուրիշ անգամ։

Զը գիտենք ինչո՞ւ — խումբը դեռ չի վերադարձել։ Թղթակցութիւնների եւ տեղեկագրերի համար Վ[ան] գրեցի։

Փոստը գնում է, համբոյրներս։

Ն.

1.- Բնագրին մէջ ռուսատառ:
2.- Սարգիս Օհանջանեան (Ֆար-Հատ):

14

Փաստ. 457-29

16 *Սեպտ.* 95
Սալմաստ

[*Ժընեւ՝ «Դրօշակ»ի խմբագրութեան*]

Սիրելի՛ք,

Մեր Վ.[անա]յ խումբը բաժանուել է երկու մասի. առաջինը՝ բաղկացած 12 հոգուց, գնացել է քիւրդ աւազակապետ Շաքիրի եւ այլոց ետեւից... իսկ միւս մասը, հինգ հոգուց, որոնց մէջ եւ Վաքիլ Սարգիսը, եկան մեզ մօտ։ Սրա հետ հեռագրեցինք Վ.[ա]ն, որ շուտով գան էլի 15 հոգի — հրոսակային խմբին չը պատկանող մարդիկ — այդ հնգի հետ փոխադրութիւն կատարելու։ Երէկ Երւանդն(1) էլ եկաւ եւ պիտի անցնի այստեղից գնացող խմբի հետ, որ ընդամէնը կը լինի աւելի քան 20 հոգի։

Խումբը Շատ.[ախ]ից Վ.[ա]ն վերադառնալիս դա՛ռձեալ կռուի է բռնուել քիւրդերի հետ, ուր սպանուել է քիւրդերին խառնուած եւ նրանց աջակցող միակ վատանուն հայը։

10-12 օր սրանից առաջ, հէնց Վ.[ա]նի մէջ, այդ քաղաքի մեր կոմիտէի որոշմամբ, 4 հոգի գիշերով յարձակուել են մի տաճիկ հարիւրապետի վրայ — պարտէզի մէջ, վրանում եղած միջոցին։ Նրա առ այժմ մեզ յայտնի յանցանքն ա՛յն է, որ մասնակցել է Սասունի կոտորածին, առեւանգել մի հայ աղջիկ եւ վերցրել իր մօտ՝ իբրեւ հարճ, կամ ինչ ուզում էք անուանեցէք։ Գնացողների նպատակն է եղել սպանել հարիւրապետին ու ազատել հայ աղջկան։ Բայց այդ բանը նրանց չի աջողել։ Հարիւրապետին միայն վիրաւորել են երեք գնդակով, իսկ աղջիկը այդ գիշեր բացակայ է եղել վրանից։ Դեռ ուրիշ մանրամասնութիւններ յայտնի չի, որովհետեւ դէպքը պատահել է մերոնց դէպի Սալմաստ հեռանալու միջոցին եւ այդքան տեղեկութիւնն էլ ձեռք են բերել շտապ կերպով։ Այդ դէպքի նկատմամբ կազմեցինք 22 բառից բաղկացած մի հեռագիր ուղղակի Ձեզ, բայց սաստիկ թանկութեան պատճառով չխփեցինք։ Հեռագրատունը, երեւակայեցէք, այդ հեռագրի համար պահանջեց ինն թուման մի դռան եւ տասը շահի։

Վերը յիշուած հայի սպանման եւ հարիւրապետի վիրաւորման դէպքերի առթիւ, ինչպէս ասում են, Պետօն(2) ուրիշ ճանապարհով գրել է Ձեզ մանրամասնաբար։ Դրա համար էլ խոյս եմ տալիս երկարաբանութիւնից։

Արիսը(3) Ջուլֆայումն է եւ շուտով Թաւրիզում կը լինի։ Իսկ Միհրանը Մոսկուայի կողմերումն է եւ դեռ, կ՚ուշանայ երեւի։

Արտասահման ուղարկելիք հեռագրերի պայմանների մասին վաղը կը հարցնեմ Թաւրիզից ու Ջուլֆայից (Ռուսաց)։ Եթէ պայմաններն ու տոկոսները բաներիս դան՝ այս գծի հետաքրքիր (պատահելիք ի հարկէ) դէպքերը ուղղակի հեռագրով։

Սպասում եմ թերթերի իմ ուղարկած եւ քանիցս կրկնած հասցէներով։

Համբոյրներս
ՆԻԿ.

Յ. Գ.— Արմենիստները փախան անցեալ անգամ իմ յիշատակած ժողովից։

1.- Յովսէփ Արղուբեան:
2.- Աղեքսանդր Պետրոսեան:
3.- Արիստակէս Զօրեան, Ռոստոմի կրտսեր եղբայրը: Միհրանը՝ արհեստանոցի վարպետ զինագործն է:



Յոնան Դաւթեան

15

Փաստ. 457-33

6 *Հոկտեմբեր* 1895
Սալմաստ

[*Ժընեւ՝ «Դրօշակ»ի խմբագրութիւն*]
Ձարմանալի ընկերնե՛ր,

Թիֆլիզից վերադառնալուց յետոյ՝ գրեթէ ամէն փոշտով նամակ եմ գրել Ձեզ, իսկ դուք չէք բարեհաճում գոնէ բաց նամակով յայտնել, որ ստացել էք իմ նամակները եւ ես միամտանամ։ Ինչից իմանամ, որ դուք ստացած կը լինիք իմ նամակները, քանի որ նրանց մէջ գրուածները չեն կատարւել մինչ այսօր։ Ձեզ ուղարկել եմ թերթի համար հասցէներ Ջուլֆայում եւ Սալմաստում, բայց այստեղ դեռ չեն ստացւում, իսկ Ջուլֆայում չը գիտեմ։ Եթէ յայտնէիք, որ Ջուլֆա սկսել էք ուղարկել՝ ես էլ անմիջապէս կը հարցնէի եւ իսկոյն կը տեղեկանայի նրանց աջող ստացման կամ չստացման մասին։ Գիտեմ, պատճառ էք բռնելու <u>ժամանակի սղութիւնը, գլուխնիդ խառն լինելը</u> եւ արդարանալու այլ այսպիսի սովորական միջոցներ...

Նոր ստացել ենք Վ[ան]այ Կենտ. Կոմիտէի պաշտօնական յայտարարութիւնը դաւաճան Տէր Պօղոսեանի սպանման մասին եւ իսկոյն թռցրել մի «թռուցիկ թերթ», որի մի օրինակը սրա հետ ուղարկում եմ։ Մի-մի օրինակ ուղարկւեցան «Մշակի», «Մուրճի»եւ «Արձագանգի» եւ «Շաւիղի» խմբագրութիւններին ու մեզ հետ կապւած Կովկասի բոլոր քաղաքներին, նաեւ Մոսկւա ու Պետերբուրգ։

Ար[մեն]իստների առաջին խումբը բաղկացած է եղել 30 *հոգուց, գնացել է երկրորդը՝ մօտ* 10 *հոգուց, որոնց թւում է՛ւ Աւետիսեան. անցել է հնչ[ակ]եանների մի խումբ* 10 *հոգուց, էլի պատրաստւում է մի նորը դա՛ռձեալ մօտ* 10 *հոգուց. մերոնք դեռ այնտեղ են. սպասում ենք* 15 *հոգի տեղացիների, որ այստեղ ժողովւածների հետ միասին գնան։ Այստեղ ժողովւածների թիւը* 10-*ից քիչ պակաս է դեռ։ Այսքան մարդիկ այնտեղ հաւաքւելուց յետոյ՝ անսպասելի չէ մի զօռբա տուր ու դմբոց , բայց տեսնենք ո՞վ կը վերցնի իր վրայ առաջին քայլի ըիսկը։ Այսուհետեւ մի-մի անգամ տպագրութեան կ՚ուղարկեմ Սալմաստի նուիրատուութիւնները։ Առ այժմ տպեցէք.*

«*Սալմաստ.— Եղ. Ս. Ա*... 350 *դրան*»։ *Ես միանգամից հանգանակութիւն չեմ անում. նայելով տեղին ու ժամանակին, հանգամանքին ու տրամադրութիւններին՝ կ՚առնեմ մէկ-մէկ եւ այդպէս մէկ-մէկ էլ կ՚ուղարկեմ տպագրութեան։ Միայն չը մոռանաք, որ «Սալմաստ» բառը տպէք ամբողջովին եւ ամէն անգամ։*

Համբոյրներս։

Ն.

Ուղարկում եմ սրա հետ մի երկրորդ նամակ Վ[ան]այ թղթակցութիւնով։

16

Փաստ. 457-41

[18]95, *Հոկտ.* 15
Սալմաստ

[*Թաւրիզ՝ Ատրպատականի կեդր. կոմիտէին*]
Ընկերնե՛ր,

Էրէգ ստացանք Արիստակէսի(1) *երկտող նամակը, որով յայտնում էր, թէ՝ Սարգսի*(2) *հիւանդութեան պատճառով գուցէ ինքը Սալմաստ գայ։ Այսօր հեռագրեցինք Արիստակէսին, որ ինքը գայ անպատճառ եւ, եթէ հնարաւոր լինի, Վաքիլ Սարգսին էլ հետը բերի։ Արիստակէսին հեռագրով կանչելու նպատակը որոշ է եւ չը պիտի ուշանայ։ Պատմեմ համառօտ.*

Վերջերս Վ[ան]ում տեղի է ունենում մասնաժողովի(3) *նոր ընտրութիւն. այդ ընտրութեան ժամանակ, ինչպէս երեւում է հատ ու կտոր խօսքերից, Ոսկանը եւ Ոսկանի համակրածները մնում են դուրսը՝ տեղի տալով ուրիշներին։ Ընտրութեան հետեւանքը սրանց համար անախորժ է լինում, ի հարկէ։ Եւ այդ անախորժութեան հետեւանքը լինում է այն, որ դուրսը մնացածները, իրանց համակրողներով հանդերձ, հաւաքւում են իրար գլխի, կազմում նոր մասնաժողով։ Հէնց այդ ժամանակները այստեղից գնում են մեր հեռագիրն ու նամակները, որ մարդիկ ուղարկեն։ «Նոր-մասնաժողովը», որի ձեռքն են ընկնում մեր հեռագիրն ու նամակները, առանց Պետօ-ի գիտութեան, առանց նրան յանձնելու այդ թղթերը, վերցնում ուղարկում է* 20 *մարդ, հետներն էլ մի բողոքագիր, որով պահանջում են Պարսկաստանի եւ Կովկասի կոմիտէներից ետ կանչել Պետօ-ին եւ նրա փոխարէն ուղարկել Տաշօ-ին*(4) *կամ մի ուրիշին։ Փակագծի մէջ ասեմ, որ ինչպէս երեւում է, ընտրութիւնների ժամանակ Պետօն խաղացած պիտի լինի որոշ դեր։*

Հա՛, մի կողմից, 20 *մարդ նոր յանձնախմբի բողոքագրով. միւս կողմից՝ Պետօ-ից ստանում ենք մի նամակ եւ էրէգ նրա կրկնութիւնը, որով ասում է թէ՝ յանձնախումբը (ընտրովի) ուղարկում է* 10 *մարդ եւ աւելացնում է, որ առաջ եկող* 20 *մարդկանց ոչինչ չը տրւի։ (Այդ* 10 *մարդիկ սպասում են այսօր-վաղը)։*

Այդ բոլոր տեղեկութիւնները ես իմացայ միայն էրէգ։ Հէնց էրէգ էլ, միաժամանակ տեղեկացայ, որ Երւանդը(4) *գնացել է քաղաք այնտեղից մարդ ուղարկելու, որ նոր եկող* 10 *մարդիկ վերադարձւին (Սարայից), զէնքի քչութեան պատճառով։ Այդ բանն իմացայ Ոսկանից։ Շատ կատաղեցի, բայց արդէն ուշ էի համարում։ Միայն բաւականացայ նրանով, որ ես եւ Ցարութիւնը կազմեցինք հեռագիր, որով Արիստակէսն էր ուզում։ Բայց փառք Աստուծոյ, որ Երւանդը այդ մտադրութիւնը չի իրագործել. հետը այսօր բերաւ մի քիւրդ Սարայ կամ Կօթուլ ուղարկելու համար, որին անմիջապէս վերադարձրինք իր տեղը եւ*

այդպիսով արգելք չեղանք նոր խմբի գալստեանը։ Եւ ես ամէնքի ներկայութեամբ յայտնեցի բացարձակապէս, որ 20 հոգուց բաղկացած առաջին խմբի գալուստը եւ իրանց ուղարկող՝ մասնաժողովի վարմունքը (հեռագիրը եւ նամակները պահելու նկատմամբ) ապօրինի է միանգամայն, որ նոր խումբը «կանգնած է առաջին պլանում»(5)։ Ի վերջոյ աւելացրի, որ առանց Թաւրիզի ներկայացուցչի մենք չենք կարող ո՛չ ոքին զէնք տալ այսպիսի մի հանգամանքում. Երեւանդն էլ համաձայնեց եւ ես առաջարկեցի հեռագրով կանչել Արիստակէսին, ի նկատի ունենալով որ նա՛ միայն կարող է թողնել իր գործը եւ միւս կողմից էլ՝ այստեղ գործը պիտի լինի Երեւանդի եւ Ոսկանի հետ։ Եւ այսպիսով իմ եւ Յարութիւնի կազմած, վերջինիս չնորհիւ կէս օրով յետաձգուած հեռագիրը գարնեցաւ։ Ուրեմն չտապեցրէք։

Մանրամասնութիւնները կամ կը պատմի Արիստակէսը իր վերադարձին, կամ թէ կը գրենք յետոյ ինքներս։ Ահա այժմ ինձ մօտ են նոր յանձնախմբի բողոքագիրը եւ Պետօ-ի նամակները։ Ոսկանին եւ իրեններին առաջարկեցի տալ կամ բերել տալ փաստերը Պետօ-ի դէմ եւ սպասել գործի կանոնաւոր ընթացքին, որ տեղի կունենան Պետօ-ից բացատրութիւն ստանալուց յետոյ միայն։ Իսկ զէնք տալ կամ չը տալը թողեցինք մինչեւ Արիստակէսի գալը։

Ես այս րոպէին լաւ չը գիտեմ, թէ ի՞նչ եմ գրում. միայն այսքանը գիտեմ, որ դէպքը վերին աստիճանի վրդովեցուցիչ է եւ կարող է ձեզ համար լինել առիթ, որպէսզի հեռագրէք, թէ I խմբին զէնք մի՛ տէք։ Սակայն, խորհուրդ եմ տալիս չը դիմել այդպիսի ծայրայեղ միջոցի առանց տեղեակ լինելու գործի մանրամասնութեանը, որին ինքս էլ դեռ տեղեակ չեմ։ Սպասեցէք, հաւատացած լինելով, որ մենք խիստ դէմ կը լինենք անարդարութեան եւ ինչքան էլ խաղաղարար միջոցների դիմելու լինենք, այնուամենայնիւ թոյլ չենք տայ, որ ոտնակոխ լինին մեր ընկերոջ արդարացի շահերը։

Ն.

1.- Արիստակէս Զօրեան (Կարօ), Ռոստոմի կրտսեր եղբայրը:

2.- Սարգիս Օհանջանեան (Ֆար-Հատ):

3.- Մասնաժողով կամ յանձնախումբ գործածուած են գործադիր մարմին-կոմիտէ իմաստով, իսկ Ոսկանը (Ոսկան Զաղօ) կամ Աքլոր վարժապետի բուն անունն էր Զաղոյեան-Նազարեան Ոստանիկ:

4.- Տաշօ՝ Յովսէփ Արղութեանն է. յայտնի նաեւ Երուանդ ծածկանունով:

5.- Բնագրին մէջ ռուսերէն:

17

Փաստ. 457-66

Անքուակիր այս գրութիւնը կը գտնուի Ատրպատականի թղթածրարին մէջ, ուր նշուած է «գտնուած է 1895-ի հաշիւների մէջ»: Հաւանաբար ուղարկուած էր Թիֆլիս՝ Բիւրոյին:

[1895]

[*Թաւրիզի Կ. կոմիտէին*]
Սիր.

Նախորդ փոստով գրեցինք մանրամասն նամակ ու ներկայացրինք պարզ հաշիւ։ Ստացած կը լինիք անշուշտ։ Այդ հաշուից յետոյ Թաւրիզից ստացանք 40 *հատ խող*[*ովակ*] *եւ* 1220 *հին ծայրեր*(1)։

Իսկ Ձեր կողմից ստացուող ապրանքից (դա՛ռձեալ նոյն հաշուից յետոյ) ստացանք 4+4 (*վերջին* 4-*ի հետ Արմենակը*)։ *Ուրեմն հնարաւոր* 250-*ը լրացնելու համար այժմ պակասում է* 92. *շարունակեցէք, բայց մեր ուզած ռուսական ապրանքից։ Հէնց որ թիւը լրացաւ՝ կը հեռագրենք. «Հերիք է»։ Դուք հեռագրով կը հաղորդէք մեր բոլոր գրասենեակներին, ի հարկէ։*

Պարսից կառավարութիւնը, տաճկաց Թեհրանի դեսպանի դրդմամբ, փորձած է խստութիւններ ձեռք առնել, բայց առ այժմ ոչինչ։ Այդտեղից եկողներին մեծ մասամբ կողոպտում են պարսից սահմաններում աւազակներն ու մաքսատները։ Թո՛ղ հետները վերցնեն միայն անհրաժեշտ ճանապարհածախքը, իսկ աւելորդը բարաթ անեն(2), *եթէ սեփական է՝ այստեղ ստանալու պայմանով։ Այժմ աւելի լաւ է սահմանն անցնել խուսափումով, առանց անցագրի։ Աշխատեցէք, որ հագուստը լինի սովորական եւ երկար-երկար միրուքներով մարդ չը վախեցնեն, մանաւանդ Պարսկաստանում, ուր միրուքը ենթակայ է մաքսի...*

Ուրիշ նորութիւններ դեռ չկան։

Բարեւներ
ՆԻԿ.

Յ. Գ.— Կարօն ու Վարդանը եկան։

ՆՈՅՆ

1.- Խողովակը հրացանն է, ծայրը՝ փամփուշտ:
2.- Բարաթ՝ պարսկերէն. բարաթ անել – մուրհակ, պարտաւորագիր վերցնելու իմաստով:

Փաստ. 650-1

Հաւաքական կոչ՝ Վան-Վասպուրական կռուող ուժեր փութացնելու: Ստորագրած են հինգ հոգի, որոնցմէ ծանօթ են հետեւեալները.– Ալեքսանդր Պետրոսեան (Պետո), Զարուհի Տէրոյեան՝ Վասպուրականի Կ. կոմիտէի անդամ (Ժենիա), Նիկոլ Դուման (Ն. Տ. Յ.), որ Սալմաստէն անցած էր Վան. Շաւարշի ինքնութիւնը կը մնայ անյայտ: Հաստատամիտը կրնայ ըլլալ Վազգէնը (Տէրոյեան Տիգրան):

Գրուած է համիտեան համատարած եւ հայաջինջ կոտորածներու խստագոյն օրերուն, երբ հայ մարտիկները բուռն կռիւներ կը մղէին յատկապէս Վան-Վասպուրականի շրջանին մէջ, ուր անցած էր նոյնպէս Նիկոլ Դուման:

Հաւաքական այս կոչին ձեռագիրը կը պատկանի Պետոյի: Առաջին էջի վերեւ, ձախին, եւ երկրորդ էջի վերջաւորութեան՝ ստորագրութիւններու կողքին կան բոլորակաձեւ կնիքներ, առաջինը սեւ մուրով, երկրորդը կանաչ մելանով. կնիքին վրայ խաչաձեւ երկու ատրճանակ, վրան, նոյնպէս խաչաձեւ, դաշոյն եւ դրօշակ: Յայտնաբար դրոշմը ձեռային աշխատանքի գործ է, երբ տակաւին Հ.Յ.Դ. Բիւրոյի կամ «Դրօշակ»ի խմբագրութենէն պաշտօնական կնիք չէին ստացած կազմակերպական շրջանները:

20 *Յունվար* 1896

Պարսկաստանի Հ. Յ. Դաշնակցութեան Բիւրոյին,

Այժմ գտնուում ենք հայկական յեղափոխութեան ամենատագնապալից վիճակի մէջ։ Սա մի նոր դրութեան շրջան է, որ ձեռք է բերուած ահագին զոհերով, արիւնով։ Որքան ծանր, թանգ է առաջ բերուած այս նոր շրջանը, նոյնքան մեծ է յեղափոխութեան առաջադիմութիւնը։ Ու մենք համոզուած ենք, թէ նոր, վերջին տրագիկական շրջանն առաջ գալու, ստեղծելու համար (որը գրեթէ պահանջ է, իրերի դրութեան պատճառով) միակ եւ միակ միջոցն է անդուլ, անդադար կռիւը, գետերով հոսող արիւնը. չկայ այս, յեղափոխականը գարնանը թող կանգ առնի, կորած, մեռած է ամէն յոյս։ Գիտենք նաեւ ամբողջ Տաճկա-Հայաստանի երկարութեամբ եւ լայնութեամբ, սպանուած, կողոպտուած, անպատուած է ոչ թէ մի անհատ, մի գիւղ, այլ բոլոր հայաբնակ քաղաքները, նահանգները, ամբո՛ղջ ժողովուրդը. իսկ դժգոհների թիւը հազարաւորներ են. ի՞նչ անել — կռուել եւ ամէն տեղ ու միշտ կռուել։ Յեղափոխական գործերը ամէն տեղ բաց-

ւած է թուրքի առաջ. թուրքն ու հայը կանգնած են դէմ դիմաց. պէտք է շտապել, այլապէս ամէն բան կորած է։ Վասպ[ուրականի] Դաշ[նակցութեան] Կեդր. Կոմիտէն, ի նկատի առնելով իրերի այս սպառնալից դրութիւնը, որոշեց դիմել ձեզ առաջիկայ գարնան գործունէութեան համար։ Կրակը պէտք է բորբոքել ամէն տեղ եւ միաժամանակ, որքան ոյժ ունենք նրանով։ (Կարծում ենք լաւ էք հասկանում, թէ ինչ ենք ուզում ասել)։ Այս գործի համար մեզ հարկաւոր են կռւող, լաւ հայդուկներ, որոնց գո՛նէ քառորդ մասը լինին հայ զինուորներ։ Թւի մասին ոչինչ չենք կարող ասել. որքան շատ այնքան լաւ. մենք յոյս ունենք , որ Վասպուրականի համար թիւը հարիւրից կ՚անցնի։ Պէտք է ստեղծել 90 թւականի ժողովրդական շարժում, իսկ դրա համար ձեզ անհրաժեշտ կը լինէր առանց ուշանալու ագիտատորներ ղրկել Կովկաս։ Դեռ ուշ չէ, պէտք է շտապել։

Կոմիտէս այս առթով ունի Պոլսի եւ Էրզ[րումի] կեդրոնական մասնաժողովների կարծիքները, որոնք վերջերս իրանց պաշտօնական նամակներում նոյն կարծիքն են յայտնում, իսկ Էրզ[րումից] գրում են, որ իրենցից մէկը պիտի մեզ մօտ գայ, յատկապէս խորհրդակցելու։

Զմոռնանք յիշել, որ այժմ ձիաւոր հայդուկն եւս ազատ կարող է գործել. եթէ կարելի է, մի խումբ եւս ձիաւոր հանեցէք։ Վասպուրականը համեմատաբար քիչ զոհ տւեց, գործունէութեան ասպարէզ ունի, հանգիստ է ու իբրեւ պահպանողական նահանգ, եռանդ ունի պահած։ Խնդրում ենք այս թղթի իսկականը ղրկէք միւս կոմիտէներին, իսկ պատճէնը պահէք ձեզ մօտ եւ անմիջապէս բանակցութիւն պահպանեցէք այս առաջարկութեան առթիւ մեզ հետ։

96 *թիւ — 20 Յունվարի*
ՊԵՏՕ,
ՇԱՒԱՐՇ, ԺԵՆԻԱ
ՀԱՍՏԱՏԱՄԻՏ
Ն. Տ. Յ.

P.S. *Այս թղթի մի օրինակը մեր սուրհանդակով ղրկեցինք, որը Սարայում ձերբակալւեցաւ եւ նամակները ոչնչացրեց. ապա առիթ ունեցանք կրկին այս թուղթը Յունվար 20-ին ղրկելու, որը չաջողւեցաւ ու մնաց մինչեւ այսօր։ Շտապ լինելով, կնիքի թանաքի տեղ՝ մրով կնքեցինք, ապա միջոց ունենալով, թանաքով։*

Կարդացէք բոլորը...։

ՊԵՏՕ

Փաստ. 650-2

Վանէն ուղարկուած եւ Թաւրիզի Կեղր. կոմիտէին ուղղուած Նիկոլ Դումանի այս նամակին մէջ հարեւանցի յիշուած Սարայ-Բողազքեասանի կռիւները, իրականութեան մէջ, մաս կը կազմեն պարսկա-թրքական սահմանագլուխին եւ Վան-Վասպուրականի մէջ մղուած այն մարտերուն, որոնց մասնակցեցաւ Ն. Դուման: Սարայ-Բողազքեասանը մասնաւոր կերպով յիշատակելի է անով՝ որ ամբողջ երկու օր տեւած այդ կռիւներու ընթացքին Ն. Դուման մեծ հռչակ շահեցաւ իր ցուցաբերած քաջութեամբ եւ յանդգնութեամբ: Արդարեւ համիտեան համատարած կոտորածներու օրերն էին եւ ֆետայական խումբերը, Ատրպատականէն մեկնելով՝ օգնութեան կը փութային Վան-Վասպուրականի մէջ մարտնչող իրենց ընկերներուն: Եւ Ն. Դուման Սալմաստի մէջ կազմուած ստուար խումբով մը, որուն մէջ մտած էին 15 արմենականներ, 1895 թ. Հոկտ. 25-ին ուղղուեցաւ դէպի սահմանագլուխ. հազիւ մուտք գործած օսմանեան հող՝ խումբը կռուի կը բռնուի հազարաւոր քիւրտերու եւ անոնց օգնութեան հասած թրքական կանոնաւոր զօրամասին հետ: Երկու ցերեկ եւ գիշեր անհաւասար ուժերու դէմ մարտնչելով եւ ծանր կորուստներու մատնելով թշնամին, խումբը, շնորհիւ Ն. Դումանի արտակարգ խիզախութեան եւ հնարամտութեան, կը յաջողի յաղթական դուրս գալ զինք օղակող թշնամիի շղթայէն:

Սարայ-Բողազքեասանի կռիւներու մասնակիցները եւ շատ ուրիշներ հետագային լայնօրէն անդրադարձած են Ն. Դումանի սխրագործութեանց: Օրին սակայն ընդարձակ յօդուածաշարքեր լոյս տեսած են «Դրօշակ»ի 1895–96-ի համարներուն մէջ «Նամակներ պարսկա-տաճկական սահմանագլխից» եւ «Դաշնակցութեան հայդուկային խմբի կռիւները» խորագրերով: Անոնց հեղինակը, ամենայն հաւանականութեամբ, Ռոստոմն է, որ նոյն տարին կը գտնուէր Կարին եւ թրքական իշխանութեանց կողմէ արտաքսուեցաւ դէպի Պարսկաստան: Բողազ-Քեասանի ծանօթ դէպքէն մէկուկէս ամիս ետք կռիւներու թատերավայրէն անցնելով, ան տակաւին թարմ տեղեկութիւններ քաղած է տեղւոյն հայերէն եւ քիւրտերէն: Մէջբերենք անոնցմէ հետեւեալը.–

«Այդ խմբի քրդերի վրայ թողած սարսափի եւ ահագին տպաւորութեան մասին գաղափար կարելի է կազմել այն երգերից, որ յօրինել են Սօմայի քրդերը: Այդ երգերի մէջ գովաբանում են այդ «չտեսնուած կտրիճներին», մանաւանդ մէկին՝ երկար հասակով, սեւ միրուքով, որի գնդակները միշտ ճակատից էին կպչում: ...Խմբի մասին մանրամասն ստոյգ տեղեկութիւններ չկան. ուղարկած տեղեկութիւնները մեր ձեռը չեն

հասել: Ո՞վ է կենդանի, ո՞վ է նահատակուած, դեռ ճիշտ յայտնի չէ. միայն հաստատապէս գիտենք, որ «երկար հասակով ու սեւ միրուքով» Դումանը (մենք էլ այդպէս կոչենք նրան), որին «ոչ մի գնդակ չի կարող վնասել նրա կրած զրահի պատճառաւ», բոլորովին անվնաս է եւ պատրաստ դեռ շատերի ճակատները գնդակներով դրոշմելու» («Դրօշակ», 1896 թիւ 5, Փետր. 10):

Դեռ աւելի կանուխ, 1895 թ. 25 Դեկտ.ին, Ռոստոմ Սալմաստէն իր եղբօր Արիստակէսին կը գրէր.– *«Դրութիւնը խառն է Վանում: Կառավարութիւնը զէնք է բաժանել մահմեդական ժողովրդին, բայց եւ այնպէս շատ են վախենում հայերից: Խմբի թողած սարսափը մեծ է: Զանազան առասպելներ էին պատմում մեզ ճանապարհին: Քրդերը երգեր են յօրինել, ուր գովաբանում են մանաւանդ «երկար հասակով, սեւ միրուքով» մէկին, որին տուել են Դումման անունը»* (Ռոստոմ Նամականի, էջ 44): Իսկ քանի մը օր ետք (Դեկտ. 31) Ժընեւ ուղղած իր նամակով Ռոստոմ կ՚աւելցնէ. *«Նիկոլից դեռ լուր չկայ: Երեք կողմից փորձել ենք նրան նամակ, բայց բոլորն էլ անյաջող: Այդ մարդը զարմանալի է իրեն պահել այստեղ եւ ահագին սէր ու յարգանք ձեռք բերել ժողովրդի բոլոր խաւերից: Բոլորն էլ սաստիկ հետաքրքրուում են նրա վիճակով: «Նիկոլից ի՞նդ խաբար» լսում ես ամէն քայլափոխի»* (փաստ. 458-95, անտիպ նամակ):

Պէտք է շեշտել այս առիթով, որ այս եւ ընդհանրապէս իր մղած բոլոր կռիւներու պարագային Նիկոլ Դուման իր նամակներուն մէջ ընդհանրապէս ժլատ է ու չի ծանրանար անոնց վրայ:

20 *Յունվար* 1896
Վան

[*Թաւրիզի Կենտ. կոմիտէին*]
Ընկերնե՛ր,

Ստացանք ձեր վերջին նամակներից մէկը, միւսի ետեւից էլ մարդ ուղարկեցինք: Ինչպէս երեւում է, մեր նամակները չէք ստացել դուք: Դրա մէջ յանցաւոր չենք մենք: Ամենախիստ ճնշումներով փակւած են հաղորդակցութեան ճանապարհները: Սարայ-Բօղազքեասանի կռիւների թղթակցութիւնը եւ առհասարակ Վասպուրականի կոտորածի, աւարառութեանց եւ կողոպուտի մանրամասն տեղեկագիրը երկու ամիս սրանից առաջ ուղարկւած են ձեզ, բայց դրանք, դժբախտաբար, մնացել են տաճկական սահմանագլխի վրայ: (Աշխատում ենք այս կարաւանի հետ մարդ ուղարկել, որ ստանան եւ հասցնեն ձեզ): Նոյնի կրկնութիւնը նոր յաւելումներով ուղարկել ենք կարաւանով մօտ ամիս ու կէս սրանից առաջ: Կրկնել ենք երրորդ անգամ եւ յատկապէս մարդ ուղար-

կել։ Բայց նա ձերբակալուել է Սարայում(1), բերուել քաղաք եւ փախել է բանտից՝ նախապէս թղթերը այրելով։ Ուղարկել ենք նա՛եւ երկու բաց ու հասարակ նամակ բողոքականների ձեռով, մէկը ընդհանուր, միւսը Թաթոսին։ Նրանք նամակները բաց պահանջեցին, մենք էլ ստիպւած եղանք լուրջ բան չը գրել։ Յիշատակւած բոլոր թղթերի պատճէնները երեք անգամ ուղարկւած են ...եանին(2)։ Նամակ ենք գրել Քոթոթին(3), պատասխանը ստացել Աշոտից(4) տեղեկութիւններով հանդերձ, մենք էլ պատասխանեցինք իսկոյն։ Նա ուզում էր ապագայ գործունէութեան համար խորհրդակցելու գալ մեզ մօտ. գրւած է, որ դեռ սպասի։ Նրա գրութիւնից գիտէինք, որ Քոթոթն ու Ղարա-Մելիքը աքսորւած են(5)։ Այդ երկուքը, եթէ կարող են, լաւ կը լինի, որ գնան Կովկաս այս ամեռ եւ սրա հետ դրւած պաշտօնական թղթով պահանջւած մարդիկը պատրաստեն գարնան համար։ Այդ մարդկանց թւի համար խօսք լինել չի կարող. ինչքան շատ, այնքան լաւ, միայն կռւող լաւ ոյժեր լինեն, եթէ հնարաւոր է՝ մեծաւ մասամբ վարժւած հայ զինւորներից։ Իսկ Քոթոթն ու Ղարա-Մելիքը գարնանը թո՛ղ անպատճառ գան միւսների հետ։ Դուք լա՛ւ նախապատրաստւեցէք գարնան համար, իսկ թէ ինչպէ՞ս պիտի անցնէք՝ դրա ծրագիրը ժամանակին կուղարկենք առաջնորդների հետ։ Յարաբերութիւնների լա՛ւ պահպանման համար շատ աշխատեցէք եւ յարաբերեցէք շարունակ։ Ներկայ հանգամանքներում ամենալաւ միջոցը կարաւանն է։ Անհրաժեշտ դիպւածում Հին-քաղաքի Դարւիշից(6) էլ կարող էք օգտւել երեք հասցէից. այս անգամւան ուղարկածը (Աքաղաղեան), բամբակավաճառ Յովհաննէս՝ Աջըմու խանի մէջ եւ Ճավչին, բայց գլխաւորապէս առաջին երկուքից։

Երկու խօսք էլ այդչափ մարդիկ ուղելու մասին։ — Այժմ Վասպուրականում գոյացել է երկու դրութիւն. 1) գաւառականը, ուր ժողովուրդը թալանւել է չարաչար, մասամբ էլ կոտորւել եւ բորբոքւած է վրէժխնդրութեամբ. 2) քաղաքինը՝ ուր կայ հայի անհամեմատ մեծամասնութիւն՝ գլխաւորապէս երիտասարդ ոյժերից, բաւականաչափ լաւ զինւած եւ շարունակ ենթակայ կոտորածի երկիւղին։ Հոսանքի մէջ գլորւելու համար նպաստաւոր պայմաններ են դրանք։ Եւ եթէ յարմար ու հնարաւոր է, այդ հոսանքը սկսեցէք ո՛չ միայն այստեղի վրայ, այլ այն ամէն տեղերի, որտեղ կան դաշնակցականներ, որպէսզի կամ Հայաստանն ազատւի տաճիկներից, կամ մենք՝ Հայաստանից։

Ո՞ւր մնացին ձեր ուղարկելիք թերթերը, ո՛վ պորտաբոյծ երանելիներ (բարկանայք եւ մի՛ մեղանչէք)։ Իս[ուֆ]եանից ստացել ենք մինչեւ 21 համարը(7), իւրաքանչիւրից երեք օրինակ. եթէ այդ էլ չը լինէր, եաման էր հալներս։

Թաւրիզի անպիտան ոսկերչի բազմաթերթ նամակը, որը եղել է սպանւած Արսէնի մօտ եւ որի մասին մենք ոչինչ չէինք իմանում, անցել է կառավարութեան ձեռքը. այդ նամակը պարունակում է աւելի քան 50 յեղափոխական անուններ. մէջը գրւած է, որ գարնանը պիտի անցնեն հարիւրաւոր մարդիկ, որ Պողպատը ձեռք է բերել 500 հատ մարդասիրական(8), որ կայ արհեստանոց եւ այլ այսպիսի ափեղցփեղութիւններ։ Հասցէատէրը ձերբակալւած է, փնտռւում

են միւսները, որոնցից շատերը արդէն փախուստ են տուել։ Այդ յիմարաբան ոսկերիչը այստեղ վռնդուած է եղել իր շրջանից, ուստի շատ իրաւացի կը լինի, որ դուք էլ վռնդէք, մանաւանդ նրա այդ ցնդաբանութիւններից յետոյ։ Իսկ Պողպատին ասացէք, որ զգոյշ մնայ իր ընկերների հետ միասին։ Ասացէք, որ ինձ համար էլ մի լաւ մարդասիրական պատրաստի եւ գարնան եկողներով ուղարկի, իմս փչացած է արդէն։ Գալու ժամանակ անպատճառ Միհրանին(9) *էլ բերէք ձեզ հետ, գրեցէք որ Օքմինին էլ գտնեն եւ համոզեն որ գայ։ Թիֆլիս էլ ենք նամակ գրել։ Հասցէ են ուզել, որ 200 մանէթ փոխադրեն։ Եթէ այնտեղից չաջողուի, պատրաստ եղէք, որ լուր տալուն պէս դո՛ւք փոխադրէք։ Ինչո՞ւ Բ. Յ...եանի եւ Ս. Ար-եանի տուածները չեն տպագրուում թերթի մէջ։ Բարեւ, համբոյրներ իրար հետ խառն բոլորիդ ամէնքիցս։*

Ն.

1.- Սարայ – Վանայ նահանգին մէջ մեծ գիւղ՝ պարսկական սահմանին մօտ:

2.- Կիս-կատար եւ անընթեռնելի անուն:

3.- Քոքոթ Ռոստոմին տրուած ծածկանուններէն մէկը: Աշոտը՝ Աշոտ-Թաթուլն է, աւելի ծանօթ Արամ Արամեանց անունով, որ այդ օրերուն կը գործէր Կարնոյ շրջանին մէջ:

4.- Տես վերը:

5.- Ղարա-Մելիք – Բարսեղ Մելիք-Գրիգորեան, որ Ռոստոմի հետ միասին 1895-ի վերջերուն արտաքսուեցան Կարինէն եւ անցան Պարսկաստան:

6.- Հին քաղաքը Երեւանն է, իսկ Դարվիշը՝ Ալոյեան Գալուստը:

7.- Իւսուֆեան Յովհաննէս (1850–1920), Դաշնակցութեան առաջին սերունդի ականաւոր գործիչներէն: 21 համարը՝ «Դրօշակ»ի 1895 թ. 21-րդ համարն է:

8.- Մարդասիրական – այդ անունը կը տրուէր Թաւրիզի Դաշնակցութեան արհեստանոցին մէջ մոսինի տարբեր մասերէն կազմուած հրացաններուն, որոնց վրայ կը դրոշմուէր նաեւ Հ.Յ.Դ. զինանշանը:

9.- Միհրանը (Էքմէքճեան Միսաք) Թաւրիզի արհեստանոցին վարպետ զինագործներէն էր:

20

Փաստ. 650-4

Նիկոլ Դումանի այս նամակը արտագրութիւն է. գրուած է Վանէն եւ ուղղուած է Աշոտ-Թաքուլին (Արամ Արամեան), որ այդ օրերուն կը գործէր Կարսի եւ Բասենի շրջաններուն մէջ: Նոյն նամակին կցուած է նաեւ Պետոյի (Աղ. Պետրոսեան) գրութիւնը, միեւնոյն հասցէին:

20*ը Մարտի* [1896]

Սիրելի Աշոտ!

Պարսկաստանի հետ յարաբերութիւն պահպանելու մեր բոլոր ջանքերը ապարդիւն անցան: Աշնանից ի վեր մեր ստացած միակ տեղեկութիւնը այն է, որ Քոթոթը հասել է Սալմաստ Ղարա-Մելիքի հետ(1)*: Մեր բազմաթիւ նամակներից չը գիտենք, թէ ո՞րն է հասել նորանց: Այս օրերս քիւրդերը սկսեցին իրանց յարձակումները գիւղերի վերայ: Հէնց երէկ Վանից* 1½-2 *ժամ հեռու երկու գիւղ թալանեցին եւ* 27 *զոհ տւին առանց մէկն առնելու: Վասպ*[*ուրականի*] *ամէն անկիւնում, սոսկալի երկիւղ է տիրում: Ամէն օր գաւառներից դիմում են մեզ եւ զէնք ու մարդիկ խնդրում ինքնապաշտպանութեան համար: Մնացել ենք չուարած դրութեան մէջ. եղած մի քանի զէնքերը արդէն բաժանեցինք. ինքներս էլ ունենք մի զինուած խումբ միայն: Այդ զինեալներին* 2-3 *մասի բաժանեցինք եւ ուղարկեցինք գոնէ մօտակայ գիւղերը պաշտպանելու առայժմս: Պատրաստում ենք ճանապարհները բացելուն պէս զինեալներին մի քանի տասնեակ անզէնների հետ ուղարկել զէնք տեղափոխելու, այստեղ թողնելով մերոնցից երկուսին միայն Պետոյի մօտ*(2)*. Հաւանօրէն ինքս էլ կ՚երթամ: Այստեղից գնացողները մի քանի օր հանգստանալուց յետոյ կը վերադառնան Տաշոյի*(3) *եւ Պարսկաստանում գտնուող ընկերների հետ: Իսկ մենք կը մնանք որ Կովկասից խումբ ուղարկւի Պարսկաստան եւ նրանց հետ գանք: Այս առթիւ շուտով իմաց տուր Թիֆլիս, որ մինչեւ Ապրիլի վերջը կամ Մայիսի առաջին օրերը մարդիկ հասցնեն Սալմաստ: Թող աշխատին հայ զինուորներ մտցնել խմբի մէջ, որոնց շատ կարիք ունենք: Կարճկանի հետ արդէն կապւածի պէս ենք: Մեզ են դիմում եւ այլ գրեթէ բոլոր կողմերից: Ինչո՞ւ նամակ չես գրում վերջերս: Տեղեկութիւն տուր Կովկասի գործերի մասին: Փոխադրած գումարները ստացանք:*

Համբոյրներ
ՆԻԿՈԼ

1.- Քոթոթը՝ Ռոստոմն է, իսկ Ղարա-Մելիքը՝ Բարսեղ Մելիք-Գրիգորեան: Երկուքն ալ, 1895 թ. Նոյեմբերի վերջերուն, Էրզրումի մէջ ձերբակալուելէ ետք արտաքսուած էին Պարսկաստան:

2.- Պետո՝ Աղեքսանդր Պետրոսեան, Վանի դաշնակցական ղեկավարը, որ նոյն 1906 թ. Յունիսի Վանի հայոց ինքնապաշտպանութեան ղեկավարներէն մէկը պիտի ըլլար, արմենական Աւետիսեանի եւ հնչակեան Մարտիկի կողքին:

3.- Տաշօ – Իշխան Յովսէփ Արղութեան:

21

Փաստ. 458-36

1896 թ. Մայիսի 14-15-ին տեղի ունեցած Դերիկի վանքին կռուին բաւական մանրամասն տեղեկատուութիւնն է Նիկոլի այս նամակը, ուղղուած հաւանաբար Թիֆլիս՝ Հ. Յ. Դաշնակցութեան Բիւրոյին: Նիկոլի գլխաւորած 54 հոգինոց խումբը մեկնած էր Վանէն դէպի Սալմաստ՝ հոն հաւաքուած զէնք-զինամթերքով շուտով Վասպուրական վերադառնալու նպատակով: Վերջին այս հանգամանքով ալ կը բացատրուի խումբին թերի սպառազինումը: Յայտնենք որ Դերիկի այս կռուին՝ ուսէն թեթեւ վէրք մը ստացած էր Նիկոլ:

1896 *Մայիս* 25

Ընկերնե՛ր,

Մեր Վ[ան]յ գործերի մասին մանրամասն գրելը շատ հեռուն կը տանէր. դա աւելի անձամբ խօսելու բան է: Միայն այսքանը 'կ'ասեմ, որ համեմատելով առաջւայ հետ՝ այժմ բաւարար է մի փոքր: Բերել ենք մեզ հետ այս ամառւայ գործունէութեան ծրագիրը խոշոր գծերով, որի գլխաւոր հիմունքները հետեւեալներն են. 1) Ունենալ Վ[ասպուրա]կանի բոլոր հայաբնակ գաւառներից մարդիկ (որ լինեն առաջնորդող, միեւնոյն ժամանակ եւ կռւող), որոնց բերել ենք մեզ հետ եւ պիտի ստանանք պարսից բանտից: 2) Այստեղից անցնելու ժամանակ ո՛չ թէ արշաւանքի ձեւ տալ, այլ փոքրիկ խմբերով ըստ կարելոյն գաղտնի անցնել Վ[ան], այնտեղից էլ ցրւել որոշած գաւառները եւ ապա թէ սկսել գործի միաժամանակ, մի խումբ էլ թողնելով քաղաքում, ի հարկէ: Բայց այս երկրորդ կէտը չը պիտի կարողանանք ճշդիւ կատարել, որովհետեւ պակասում են առաջնորդները: Մենք ունինք ընդամէնը երկու առաջնորդ Ս...խանայի գծի համար, որտեղից եկանք, եւ վեց առաջնորդ Ա-ռիկի գծի համար: Ուրիշ առաջնորդներ ստանալու յոյս չկայ. եղածներով կարող ենք անցկացնել երկու կամ երեք խումբ, որոնցից մէկը առաջին գծով, իսկ մէկը կամ երկուսը երկրորդ գծով:

Ի նկատի ունենալիք դժուարութիւններ. I *գծով, որ տեւում է վեց օր, պիտի պատահենք չորս մեծ եւ ուժեղ աշիրաթների, եթէ չը կարողանանք գաղտնի անցնել: Իսկ* II *գծով, որ տեւում է* 9-10 *օր (եւ որ սոսկալին հէնց այդ է) պիտի հանդիպենք երկու թոյլ աշիրաթների եւ բազմաթիւ սահմանապահ զօրքի (քաղած տեղեկութիւնների համեմատ՝* 100 *հոգի Ռազիի մէջ,* 200 *Սարայում,* 100 *Սարային մօտ քրդական գիւղում,* 100 *Կոչկրանում,* 150 *Գործոտում, աւելի քան* 200 *Արճակում: Այս բոլոր տեղերը ընկած են մեր գծի վրայ եւ շուրջը):*

Մեր գալուց 20-25 օր առաջ ագենտ էր ուղարկված Արճէշ-Ալճաւազ գծեր պատրաստելու դէպի Խնուս ու Խլաթ եւ Երեւան։ Միեւնոյն մարդը ի նկատի պիտի ունենայ հացի պաշար եւ պաշարի տեղափոխութեան համար ծովային ճանապարհ դէպի լճի հարաւային ափերի գաւառները, ուր հայ չը կայ բնաւ։ Պէտք է շուտով փող... փոխադրենք այդ նպատակով, շտապեցէք։

Մի՛ քիչ էլ դժբախտ խմբի մասին. կարծեմ ամսոյս 11-ին էր, եալլա՛հ ասեցինք՝ 54 հոգով ճանապարհ ընկանք։ Ունէինք ընդամէնը երկու բեվոլվեր եւ 11 հրացան, որից մէկը շաշխանայի խողովակ այնալիի ձեւով շինուած մի պատահական անփորձ ընկերոջ ձեռին, մէկն էլ մերոցից, կիսով չափ փչացած մի անվարժի ձեռին։ Ձիւն ու կարկուտ, անձրեւ ու ցեխ ուտելով, հովի եւ ճանապարհի վրայ պատահող գիւղական շներից փախչելով եկանք անփորձ հասանք Դուշմանի բերանը, ուր եւ լուսացաւ։ Փակագծի մէջ ասեմ, որ նախընթաց օրը դուրս էինք եկել Սաթմանիսի մօտերքից ցերեկով, տաճկ. ժամը 6-ին, անընդհատ քայլել էինք մինչեւ Դուշմանի բերանը. երբ լուսացաւ՝ դարձեալ շարունակեցինք առանց հանգստութեան եւ հասանք Դերիկ ցերեկւայ ժամը 12-ին ըստ տաճկաց, որ անում է 18 ժամ։ Ինքներս էլ 2-3 օրւայ անքուն էինք, մի օրւայ էլ քաղցած։ Խուլասա՛. դեռ վանքից մի ժամ հեռու, Գիւլ-դարայի առաջ, երբ մտածում էինք պահւելու տեղի մասին, յանկարծ մեր առաջը դուրս եկան չորս քիւրդ բանջարաւորներ։ Խօսացրինք մի քիչ, ուզեցինք կամ կապել, կամ սպանել, բայց նկատեցինք, որ դրանց 5-րդ ընկերը սարումը պրպրզած՝ մեզ է թամաշա անում։ Այլեւս անհնարին համարելով մեր մտադրութեան իրագործումը՝ առաջ անցանք շուարած եւ դա՛րձեալ պատահեցինք բանջարաւորների, որոնցից մի քանիսը փախան սարն ի վեր։ Ամէն ինչ ափ-աշկարա լինելուց յետոյ՝ ուղղակի քշեցինք Վանք, որպէս պարզ գաղթականներ։ Ոտքերնիս հանեցինք, ուռենիների մօտ գետում լուացւեցանք եւ պատրաստւեցանք հէնց այդտեղ էլ քնելու, որ Շէրօն նկատեց տաք ջրի կողմից քարերը բարձրացող գինւած քիւրդերին։ Անմիջապէս բլուրը վազեցրինք 4 հոգի (Շէրօն, Մանուկը, Միքօն եւ մի կարճկանցի), երկու հոգի եւ ապա երրորդը գմբէթի ետեւը, չորս հոգի մնացինք ցածի աւերակ տների պատերի տակ, մի հոգի էլ երկու բեվոլվեր ունեցողի հետ վանքի բակը, իսկ բոլոր անզէններին վանքի մէջ, որ[ի] գմբէթը քանդւած է։ (Քանդւած են ե՛ւ բոլոր շինութիւնները)։ Քիւրդերը բռնեցին տաք ջրի կողմի քարերը, սիպտակ քարերը եւ սիպտակ սարից դէպի վանք գտնւող բլուրը — թւով 20-30 հոգի — ու սկսեցին թոյլ հրացանաձգութիւն։ Երկու ժամի չափ մենք չը պատասխանեցինք ո՛չ մի գնդակով, շարունակ կանչում էինք, ուզում էինք համոզել, որ խեղճ գաղթականներ ենք, իրանց ո՛չ մի վնաս չենք տուել եւ տալու միտք չունինք, ձեռք քաշեն մեզնից։ Ջեղաւ ու չեղաւ. վերջումն էլ սկսեցին իրանց դիրքերից իջնել դէպի մեզ, նոր միայն ստիպւեցանք գնդակ արձակել եւ յետ դէպի իրանց դիրքերը փախցնել։ Էլի սկսւեցաւ առաջւայ թոյլ հրացանաձգութիւնը, բայց այս անգամ փոխադարձ եւ տեւեց մինչեւ ժամը 10-ը (տաճկական պէտք է հասկանալ բոլոր ժամերը)։ 10-ին բլրի ետեւը, հեռու,

սաստկացաւ հրացանաձգութիւնը, որին մերոնք չէին պատասխանում բլրից, ինչքան էլ դիտում էինք։ Քանի՛-քանի անգամ կանչեցինք, որ եղելութիւնը հասկանանք, բան չը դուրս եկաւ։ Ճարահատեալ ես դուրս եկայ իմ դիրքից, վազեցի գմբէթի ետեւը, որ այնտեղից էլ մէկի հետ բլուրը բարձրանանք. հէնց այդ ժամանակը առաջս եկաւ Միքօն եւ արգելեց՝ ասելով. «տնաւեր, ո՞ւր կ'երթաս, բոլոր տղաներին սպանեցին, բլուրն առան»։ Ամէնքս փախանք վանքը, զինուածներից չորս հոգի մտանք բաց գմբէթի տակ, միւսները մնացին եկեղեցու դռան առաջ դալանում, իսկ անզէններին հաւաքեցինք խորանի մէջ։ Իսկոյն եկան շրջապատեցին վանքը ամէն կողմից եւ սկսեց փոխադարձ սաստիկ կռիւ, գնդակներով ու քարերով (մեր քարաձիգները անզէններն էին)։ Այդ խառն ժամանակը քիւրդերը ուզեցին գրոհ տալ դէպի ներս գմբէթից ու վանքի դռնից, բայց իսկոյն յետ նահանջեցին գմբէթի վրայ թողնելով 1-2, իսկ դռան մէջ 3 դիակ։ Կռիւը նոյն սաստկութեամբ շարունակւեց մինչեւ մութ։ Այդ ժամանակ խորամանկ քիւրդերը ներսը լուսաւորեցին՝ վառած գեավաններ ներս ձգելով։ Այլեւս անհնարին եւ ապարդիւն համարելով մնալը՝ հրացաններ արձակելով դուրս թափւեցանք դէպի Գեօլ-աղամ եւ Նզրաւայի ճանապարհը, եւ այդպէս ցրւած 2-3 խմբի՝ լուսաբացին մտանք քաղաք, ուր եւ ձերբակալւեցանք, բացի Յարութիւնից(1) եւ նրա հետ եղած երկու հոգուց, որ առաջուց, նախքան լուսանալը, անցել էին Սաւրա։ Իրարու խառնւած ժամանակ մեզանից էլի խոյս էին տուել մի քանի հոգի, ինձ էլ քաղաքացիք 60 թումանով փախցրին, մնացած 40-41 հոգուն տարին Դիլման, որ մինչեւ հիմա մնում են այնտեղ։ Խօսւում է, որ պիտի տանեն Ուրմիայում արձակեն ազատ։ Մինչեւ հիմա Շահբանդարին տղորց մօտ չեն թողել. այժմ լսւում է, որ նա էլ հեռագրով իրաւունք է ձեռք բերել տղորցը քննելու։ Եթէ այսօր ստոյգ տեղեկութիւն լինի՝ կ'աւելացնեմ։ Շտապեցրէք ապրանքը, մանաւանդ ծայրերը։ Գրեցի, ինչքան կարողացայ ուղեղի խանգարւած գործունէութեամբ։

Համբոյրներ։
Ն.

25 Մայիս 96

Յ. Գ.- Երեկոյեան դէմ քիւրդերը շատացան, գուցէ լինէին աւելի քան 100. նրանցից ընկել է 8, վիրաւորւել 3, իսկ ոմանց ասելով 5։ Մենք ունինք 3 սպանւած (Շէրօն, Մանուկը եւ Կարճկանցին) եւ 3 վիրաւոր որից երկուսը դուրս փախչելու ժամանակ։ Փոխիկի(2) ձախ ճկոյթը տարել է գնդակը։

1.- Համբարձումեան Յարութիւն (1867–1927), ծանօթ Լորթօ ծածկանունով:
2.- Փոխիկ – ծածկանուն Օհանեան-Յովհաննիսեան Վահրամ (1873–1904):

22

Փաստ. 458-48

Վանի 1896 թուականի ծանօթ ինքնապաշտպանութեան համառօտ նկարագրութիւնն է, զոր Նիկոլ Դուման կը կատարէ կոտորածէն փրկուածներէն իմացածով: Յաջորդիւ, «Դրօշակ»ի խմբագրութեան ուղղուած նամակով, նոր տեղեկութիւններ եւս պիտի աւելցնէ:

24 *Յունիս* 1896
Սալմաստ

Ընկերնե՛ր,

Վանն էլ քանդուեց։ Յունիսի 2-ի գիշերը սկսում է անակնկալ հրացանաձգութիւն Ուրբաթ-Առու կոչուած թաղում, որ Այգեստանի եզերքումն է գտնուում։ Կարճ ժամանակից յետոյ՝ դադարում է հրացանաձգութիւնը։ Հետեւեալ առաւօտը, երկուշաբթի (3-ին) *իմացւում է, որ սպանուած են մի հարիւրապետ եւ երկու զինւոր (գիշերային պահապաններից) մաքսախոյս աղ ծախող քիւրդերի ձեռքով, որը, սակայն, կառավարութիւնը վերագրում է հայերին, չը նայելով՝ որ մինչեւ իսկ աղ է լինում ցրուած սպանութեան տեղում։ Հայերը, որոնք առաջուց նկատելով քրդերի հոսանքը դէպի Վան՝ կոտորածի կասկած են տանում եւ ամբողջ հինգ օր չարչին*(1) *գոց են պահում, այդ օրն էլ չեն գնում բազար եւ սարսափով սպասում են կոտորածի։ Եւ սկսում է կոտորածը հէնց այդ օրը Ուրբաթ-Առուից եւ Այգեստանի եզերքով ընկած միւս թաղերից։ Կառավարութիւնը հանդիպելով յեղափոխականների ուժեղ դիմադրութեան եւ տալով բազմաթիւ զոհեր, ուզում է գործին տալ խաղաղ բնաւորութիւն, զինաթափ անել ժողովուրդը եւ այդպիսի խորամանկ միջոցով իրագործել իր կոտորածը անարգել։ Հէնց այդ նպատակով էլ սկսում է թաղական խիստ խուզարկութիւնները։ Ժողովուրդն էլ սկզբում, մասամբ խաբնուելով եւ մասամբ երկիւղ կրելով՝ թագցնում է զէնքերի մի մասը հողերի ու ջրհորների մէջ։ Բայց եւ այնպէս կառավարութիւնը յաջողում է բաւականաչափ զէնք ձեռք բերել խուզարկութիւնների ժամանակ։ Նկատելով որ այդպիսով ժողովուրդը կարող է բոլորովին զինաթափ լինել՝ յեղափոխականները նո՛րից են դիմում դիմադրութեան եւ արիւնայեղ կռիւը տեւում է ամբողջ* 6 *օր։ Ինչպէս պատմում են, այդ* 6 *օրւայ ընթացքում Այգեստանի եզերքի թաղերում կոտորւում են* 4-500 *կռւի անընդունակ խեղճ հայեր (այր եւ կին, ծեր եւ մանուկ), նահատակւում են երկու յեղափոխականներ, իսկ տաճիկ զօրքից ու ամբոխից եւ քիւրդերից ընկնում են մօտ* 1000 *հոգի։ Կառավարութիւնը հանդիպելով այդպիսի անակնկալ ջարդի՝ սկսում է ռմբակոծել Այգեստանը մօտակայ դիրքերից։ Ապա ներկայացնելով* 13 *հոգու մի անւանացուցակ եւ յետոյ այդ թիւը բարձրացնելով մինչեւ* 60՝ *պահանջում է, որ այդ մարդիկ անձնատուր լինեն, որպէս զի դադարեցնի*

ռմբակոծութիւնը։ Մերժւում է այդ պահանջը, ի հարկէ։ Միջամտում են հիւպատոսները, գլխաւորապէս անգլիականը եւ հեռագրւում է Պոլիս։ Բ. դուռը բարեհաճում է հրամայել, որ բոլոր զինակիր մարդիկ անմիջապէս իրանց զէնքերը յանձնեն զօրանոցին եւ իրանք անձնատուր լինին բանտին, որպէսզի դադարեցնի ռմբակոծութիւնը։ Անգլիական կօնսուլն էլ է խորհուրդ տալիս անձնատուր լինել այդ եղանակով, սակայն մերժւում է։ Այնուհետեւ կօնսուլների խորհուրդով բարւոք է դատւում, որ բոլոր զինուած մարդիկ քաղաքը թողնեն հեռանան, որպէսզի ժողովուրդը ազատւի բնաջինջ լինելուց։ Յեղափոխական երեք կուսակցութիւնները, որ կռւի ժամանակ գործելիս են լինում համերաշխ, գիշերով դուրս են գալիս մօտակայ Վարագը — երկու ժամ հեռու Այգեստանից — մօտ 1500 հոգով, որոնք ունենում են միայն 350 հրացան, իսկ միւս զէնքերի թիւը անյայտ է մեզ։ Այդտեղ, Վարագ լեռան վրայ, կուսակցութիւնները բաժանւում են, որի շարժառիթը չը գիտենք դեռ։ Ինչպէս պատմում են, մերոնք եւ հնչակեանները (վերջիններից 25 զինուած) թւով 150-ի չափ զինւոր եւ մի քանի անզէններ միասին մնում են լեռան վրայ, իսկ թէ յետոյ ո՞ւր են գնում՝ յայտնի չէ։ 200 զինուած արմենականներ հետները վերցնելով մօտ 800 անզէն մարդիկ դիմում են դէպի Պարսկաստան։ Այդ ահագին խումբը հէնց առաջին օրւանից սկսած կռւելով, ջարդելով, ջարդւելով գալիս հասնում է սահմանագլուխ — Բարթուղիմէոս առաքեալի վանքի մօտերքը։ Այդտեղ՝ դրանցից մի զինուած խումբ, բաղկացած աւելի քան 50 հոգուց, անջատւում է եւ անցնում պարսից սահմանը, իսկ մնացածը, Աւետիսեանի(2) առաջնորդութեամբ, ինչպէս լսւում է, ընկնելով մի ճահճային տեղ՝ ջարդւում է ամբողջովին։ Անջատւած խումբը պարսկական քիւրդերի հետ կռւի բռնւելով՝ ջարդելով, ջարդւելով ծայրը գալիս հասնում է Հին-քաղաք(3)։ Ազատւած են մօտ 30 հոգի եւ հէնց դրանք են պատմողները։ Մերոնց տեղը չը գիտենք. հաստատ չը գիտենք, թէ ի՞նչ է կատարւել դրանց հեռանալուց յետոյ Վանում եւ գաւառներում։ Միայն լուր է պտտում, թէ դրանցից յետոյ քաղաքն ու Այգեստանը այրւել եւ ռմբակոծւել են, 40 հազարի չափ էլ ժողովուրդ է ջարդւել։ Այժմ նստած ենք տատանման մէջ մենք մօտ 70 հոգով եւ հնչակեանները 40-50 հոգով։ Հաստատ տեղեկութեան չը գոյութեան պատճառով չը գիտենք մեր անելիքը. մեր փամփուշտն էլ պակասում է։ Ար[մենա]կաններից ազատւած են անջատւած խմբի մնացորդը — մօտ 30 հոգի եւ ուրիշ 8 հոգի, որոնք եկել էին Սալմաստ կոտորածից առաջ եւ որոնց թւումն են Գարեգինն ու Ներսէսը։ Մեր 41 հոգին դեռ բանտումն է, որոնց մասին գիտես արդէն։ Գարեգինն էլ իրեն 8 հոգով բանտարկւել էր Խոյում (գալու ժամանակ), բայց ձեւանալով պարսկահպատակներ, ազատւեցան 300 թւմանով, բացի մէկից, որը լեզու չիմանալու պատճառով՝ խոստովանել էր իր տաճկահպատակութիւնը։ Որոշւած է, որ այսօր ես անցնեմ դէպի Կովկաս՝ մարդիկ ու դրամ հասցնելու նպատակով։

Ն.

1.- Շուկան։

2.- Իսկական անունը Մկրտիչ Թերլեմէզեան, արմենական կուսակցութեան կազմակերպիչը եւ 1896 թ. Վանի ինքնապաշտպանութեան ղեկավարներէն մէկը։

3.- Հին-քաղաքը Քէօլնա-Շահրն է։

23

Փաստ. 458-52

Նիկոլ Դումանի ձեռագրով, առանց ստորագրութեան:

Դաշնակցական հայդուկներից Առաքելը՝ սկսած իր Պարսկաստան մուտք գործելու օրից՝ ո՛չ միայն վատ է պահում իրան ընկերական յարաբերութիւնների մէջ, այլեւ ճանաչւում է որպէս ծայրայեղ խռովարար. իր կասկածելի յարաբերութեամբ, տեղական մի ընտանիքի հետ՝ առիթ է տալիս ժողովրդեան բամբասանքին ու կուսակցութեանս անուանարկութեանը եւ մինչեւ իսկ մեղադրւում է Դաշնակցութիւնը հայհոյելու յանդգնութեան մէջ։

Ի նկատի ունենալով այս բոլորը, Դաշնակցութեան Սալմաստի կոմիտէի առաջարկութեամբ կազմւած Զինւորական դատարանը որոշեց. նախ՝ Առաքելին տալ փայտի քսուն հարւած, եւ ապա՝ սոյն պատիժը իրագործելուց անմիջապէս յետոյ, նախապէս տալով երեք թումման ճանապարհածախս, հրամայել նրան 48 ժամւայ մէջ հեռանալ Սալմաստից եւ մինչեւ 7 օր դուրս գալ Պարսից սահմաններից։ Հակառակ դիպւածում դատապարտել նրան մահու պատժի։

24 *Յուլիս*, 1896 *թ.*, *Սալմաստ*

24

Փաստ. 458-57

«Դրօշակ»ի խմբագրութեան ղրկած այս եւ յաջորդ՝ 30 Սեպտ.ի նամակով Ն. Դուման կը շարունակէ իր տեղեկագրութիւնը Վանի 1896-ի դէպքերուն յաջորդող պատահարներու մասին:

10 *Օգոստոս* 1896
Սալմաստ

Ընկերնե՛ր,

Վանից մեր ստացած եւ արդէն ձեզ ուղարկւած նամակից ու թղթակցութիւններից կը տեսնէք, որ քարուքանդ է դարձել ամբողջ Վասպուրականը։ Վանայ գուտ յեղափոխականները լիուլի ջարդւած, գաւառները աւերակ, երկիրը կողոպուտի մատնւած, կոտորածի minimum-*ն էլ* 20,000։ *Այդչափ դառն ու տխուր են իրողութիւնները։ Եւ չը նայելով դրան՝ ամէն կողմից յորդորներ ենք ստանում, որ շտապենք ջարդել, փչրել, կրակի մատնել թշնամու գիւղերը... Օհո՛։ Երկրի մէջ ի՞նչ հող ունինք եւ ի՞նչ մարդկանցով պիտի անենք այդ բոլորը։*

— Այնտեղ յուսահատ ամբոխ, սգաւոր ժողովուրդ, ապրուստից ու ինքնապաշտպանութիւնից զուրկ թշւառ էակներ... չը կայ հացի կտոր՝ այնտեղ գործողի համար, չը կայ փոքր ի շատէ մի ազատ անկիւն՝ քարացած գլուխդ դնելու համար, չը կայ, չը կայ աջակցող մէկը։ «Յարձակւեցէք քրդական գիւղերի վրայ եւ այնպէս ճարեցէք ձեր հացը»,— շատ եմ լսել։ Բայց յոգնած ու անքուն, քաղցած ու ծարաւ մարդկացով յարձակւել քրդական զինւած գիւղի վրայ՝ դա կը նշանակէ ընկերների արեան գնով գտնել մի կտոր հաց, եւ թո՛ղ հարամ լինի։ Միւս կողմից էլ, այո՛, ես ընդունում եմ, որ կարելի է գործել յարձակումներ եւ տանել փառաւոր յաղթանակներ. բայց որո՞նց հետ, ովքե՞ր են յեղափոխութեան մեզ տւած ոյժերը։ Այժմ մեր տրամադրութեան տակ ունինք 150 *մարդ, որոնց կէսից աւելին հրացանի երես չը տեսած տաճկաստանցի խեղճեր,* 3-4 *ոգեւորւած, բայց անփորձ ու ֆիզիքապէս թոյլ վարժապետներ,* 4-5 *ծառայութիւնից փախած զինւորներ, մի քանի կարգին մարդիկ, իսկ մնացածը խամ ու խում, դալլաք-դուլլաք, չաթու քեսսեան, մինչեւ իսկ ոմանք էլ տրիպերով զինւած... Դէ՛ արի ու ջարդիր... Այդ էլ դեռ թողնենք մի կողմ։*

Մայիսի վերջերում ունեցել ենք հրացան շատ, իսկ փամփուշտ ընդամէնը մօտ 3,000...

Սկսեցինք զանազան կողմերի վրայ յուսահատ թռիչքներ գործել. բռնեցին, բանտարկեցին, ջառմայեցին, զանազան տեղեր ապրանքներ գրաւեցին եւ այդ բոլոր նեղութիւններից ու վնասներից յետոյ, այսօր, որ Օգոստ.ի 10-ն է, 15,000 թամամ չունինք, որից աւելի քան 8,000-ը կեղծ, մեր ձեռքով լցրած, ուռածմուռած... Դէ արի՛ ու փչրիր...

Այս բոլորից յետոյ աւելի հաւանականը այն է, որ «մեր մարդիկը պիտի տանինք զոհ, իսկ հրացանները քրդերին փէշքէշ»։

Իմ այս խօսքերից դուք չեզրակացնէք, որ ես յուսահատւել եմ։ Դառն ճշմարտութիւնների խոստովանութիւնը յուսահատութիւն չէ։ Եթէ մի քիչ բարկացնէք՝ աւելի հեռուն կ"երթամ։ Վերջին 2-3 տարւայ սարսափելի կոտորածները ի՞նչ շահ բերին հայկական անբախտ խնդրին։ Դիպլոմատիան հաջում է՝ չի կծում։ Հերթը հասել է հոգեւորականներին, որ «աղօթքներ վերառաքեն առ Աստուած՝ հայերի թշւառ վիճակը թեթեւացնելու համար»... Այդպէս չէր լինի, եթէ կոտորւելու փոխարէն ԿՌԻԷԻՆՔ։

Ուրեմն, այսքան կծու փորձերից յետոյ, մի՞թէ ժամանակ չէ, վերջապէս, որ լուրջ քննութեան առարկայ դառնար մեր գործունէութեան հին եղանակը եւ ընդունէր նոր, աւելի նպաստաւոր տակտիկա, որի առանցքը լինէր ոչ թէ կոտորածը, այլ կռիւը։

Սրանով չեմ ուզում ասել, թէ կանգ առնենք եւ մտածենք նոր տակտիկայի համար. դուք մտածեցէք, իսկ մենք կը շարունակենք եւ անգիտակցական կռիւը։ Վարդանն(1) ութ հոգով արդէն Վանումն է. 10 օր առաջ ուղարկեցինք մի խումբ, բաղկացած 12 հոգուց. այս օրերս կ'ուղարկենք 2-րդ խումբը՝ 22 հոգուց։ Իսկ մնացած պատրաստութիւններով ու ոյժերով (որոնց մէջ եւ ես) յարձակումներ կը սկսինք սահմանագլխի վրայ։ Այս է մեր կոմիտէի որոշումը եւ պիտի իրագործւի։ Իսկ թէ ի՞նչ կը լինի հետեւանքը — Ալլահ բիլսըն։

Հնչակեանները այստեղ ունէին 50 հոգի. փորձեցին անցնել սահմանը՝ չը կարողացան։ Ներքին կռիւներ ծագեցին մէջները. ծեծեցին, ծեծւեցին, հրաժարեցրին, հրաժարւեցին, հիմա մնացել է մօտ 20 հոգի, այն էլ անգլուխ։

Արմ[ենական]ները մնացել են 3 ջուխտ, 1 կէնտ, որոնք մտածում են ձմեռւայ ապրուստի համար։

Ասպարէզը մնացել է մեզ — Աստուած խէր տայ։ Այս ամառ աւելի քան 1,000 թուման կաշառք ու տուգանք ենք տւել Պարսկաստանում։ Գրաւել են (Ատրպատականում) մօտ 12,000 մոսինի փամփուշտ, 15 մոսին, մի քանի ռեվոլվեր եւայլն։

Թաւրիզում նորերս անզգուշութիւնից վառւել է 10 գրվ[ան] վառօդ եւ ծանրապէս այրել 4 հոգի, որոնցից 3-ը մերոնցից, իսկ 1-ը Թաւրիզեցի։

Պարսկաստանում բանտարկեալ չունինք հիմա։

Փողի համար կարգին նեղութիւն ենք քաշում, իսկ քիչ յետոյ պիտի տանջւինք։

Յօնանի(2) խոստացած նամակը չստացայ։

Եթէ գրածներիս մէջ հակասութիւն գտնէք՝ գործի բարդութիւնից է։ Համբոյրներ։

Քանի որ մկրտեցիք՝
(Իր կողմից) — ԴՈՒՄԱՆ(3)

1.- Վարդանը՝ Մեհրաբեան Սարգիսն է, հետագային՝ Խանասորի Վարդանը:
2.- Յոնան Դաւթեան:
3.- Առաջին անգամ է որ Նիկոլ կը գործածէ Դուման անունը, հետեւողութեամբ («Քանի որ մկրտեցիք») «Դրօշակ»ի մէջ Ռոստոմի կողմէ գրուած մէկ թղթակցութեան (1896, թիւ 5, էջ 36):

Ն. Դումանի առաջնորդութեամբ Վան մեկնող ֆետայիներու խումբ

25

Փաստ. 458-68

30 *Սեպտ.* 1896
Սալմաստ

[*Ատրպատականի Կեդր. կոմիտէին, Թաւրիզ*]

Ընկերնե՛ր,

Երբ ամէն ինչ պատրաստ՝ ճանապարհ պիտի ընկնէր 3-րդ խումբը, բանը թարս չուռ եկաւ. վրայ հասաւ Վարդանը 14 հոգով։ Վարդանը այժմ հիւանդ Խոյումն է, իսկ միւս ընկերները մեզ մօտ։ Նրանց պատմածներից իմանում ենք, որ Վ[ան]ում մերոնք բաժանւած են եղել 4 խմբի. Վարդան, Գրիգոր, Պետրոս եւ Միքօ՝(1) իւրաքանչիւրը 10-ական հոգով։ Վ[ա]նում տեղ տալիս չեն եղել եւ մերոնք ապրելիս են եղել զօռով։ Դրա հետեւանքն ա՛յն է եղել, որ ուր մտել են մերոնք, իսկոյն եւեթ փախել են տանտէրերը եւ դրացի բոլոր բնակիչները, մի խօսքով թաղովին։ Այդպիսով խմբերի տեղը իմացել է կառավարութիւնը եւ մի օր երեկոյեան դէմ, պաշարել այն տունը, ուր Պետրոսն է եղել։ Դրանք դուրս են պրծել անփորձ։ Հետեւեալ օրը կէսօրին պաշարել են Վարդանին ու Միքօ-ին միաժամանակ։ Սկսւել է փոխադարձ ուժեղ կռիւ եւ ապաստանարան երկու տների ռմբակոծութիւն։ Կռիւն ու ռմբակոծութիւնը տեւել են մինչեւ երեկոյ, որի ժամանակ սպանւել են մերոնցից մէկ՝ կարճկանցի Գրիգոր, իսկ զինւորներից 10։ Կռւի ժամանակ ունեցած հաղորդակցութեան միջոցով կապած պայմանի համաձայն՝ գիշերը ամէնքը պիտի քաշուէին Կեմ գիւղի սարը Հայոց Ձորում, որ հեռու է քաղաքից մօտ 6 ժամ։ Վարդանն ու Միքօն իրարու պատահելով՝ հասնում են որոշած տեղը, իսկ Գրիգորն ու Պետրոսը, որ գտած են լինում իրարու եւ լինում են առանց վալադի, փոխանակ որոշած տեղը բարձրանալու, մտնում են մօտակայ Կեմ գիւղը։ Այդտեղ կէսօրին նորի՛ց է պայթում կռիւը։ Լեռան վրայից դիտողները միայն այնքանն են իմանում, որ կռւի տաք ժամանակ գիւղից հրացանաձգութիւնով դուրս են պրծնում դէպի մօտակայ քարերը, 20 հոգուց միայն 7, իսկ ոմանց ասելով՝ 9։ Ինչ-ինչ պատճառներով, ի միջի այլոց եւ Վարդանի հիւանդութիւնը, սարից չեն կարողանում օգնութեան հասնել։

Այնուհետեւ թէ ինչ է պատահում նրանց հետ չը գիտեն. միայն այնքանն են իմացել, որ այդ կռւից յետոյ նոյն խմբին հետեւել է զօրքը թնդանօթներով, իսկ նրանք վերադարձել են Վարագ, հաց պատրաստել տւել Այգեստանի մի ջաղացում, ճանապարհ ընկել դէպի մեզ։ Ջաղացում երկու տաճիկներից դաշոյնի վէրք է ստացել Վազգէնը(2), ինքն էլ ռեվոլվերով սպանել մի կին։ Նա ձախ ու-

սից թեթեւ վիրաւորուած՝ պահուած է Վ[ան]ում։ Մերոնք դա՛դ են անում(3),— հացից եւ ապաստանարան չը լինելուց։ Պատմում են այնպէս, որ երբ Գրիգորի եւ Պետրոսի խմբերը մտել են Կեմ գիւղը, բոլոր գիւղացիք անմիջապէս (դեռ կռւից շատ առաջ) փախել են դէպի դրացի քրդական գիւղերը։ Գործը ա՛յս, եւ մենք շւար դրութեան մէջ ենք։ Այդ բանը դեռ հերիք չէր, Թամոն էլ շաբաթ երեկոյեան Մահլամում(4) օր ցերեկով հրացանազարկ արաւ մի անմեղ գիւղացու, նրա մի խօսքից վիրաւորուած լինելու պատճառով։ Գիւղացիք չեն յայտնել կառավարութեան եւ մինչեւ իսկ մտադիր են, եթէ կառավարութիւնը ինքը գործ սկսի, եղելութիւնը ուրիշ կերպ ներկայացնեն։ Այս տեղեկութիւնները ուրիշ ո՛չ մի տեղ չը հաղորդեցինք. դո՛ւք, որպէս աւելի ազատ, այդ բանը թողեցինք Ձեզ վրայ։ Յակոբն ասում է, որ իրանց եկած ճանապարհը շա՛տ ապահով է։ Յովսէփի չաֆարի գործը բացւել է մինչեւ դատաւորի դուռը. թո՛ղ տւէք նրան։

Փող, փող եւ դա՛ռձեալ փող։ 500 թուման պարտք ունինք։ Էլ երեսատեղ չի մնացել։ Ամբողջ ոյժերով աշխատեցէք փող հասցնել եւ շատ կարճ միջոցում, հեռագրով։

Վ[ան]ա՝ կռիւների ժամանակ միայն այրել են ա՛յն բոլոր տները, ուր մերոնք են եղել կռւելիս. ուրիշ ո՛չ մի վնաս։ Շաքիր փաշան այնտեղ է։

1.- Վարդանը՝ Մեհրաբեան Սարգիսը, Խանասորի Վարդանը. Միքոն՝ Ազիզ-Մելիքեան Միքայէլ։

2.- Տէրոյեան Տիգրան։

3.- Դադ անել – գանգատիլ, բողոքել։

4.- Մահլամ – Սալմաստ գաւառի գիւղ։

26

Փաստ. 458-71

9 *Հոկտ.* 1896
Սալմաստ

[*Ատրպատականի Կ. կոմիտէին, Թաւրիզ*]

Ընկերներ,

Մեզանում հանգամանքների հետ փոխւել են ե՛ւ խնդիրները. վճռւած էր արշաւանք, սակայն ամսւայ 4-ին ձիւնը պատեց մինչեւ Սալմաստի դաշտի բերանը. էլի ընկանք անորոշութեան մէջ եւ սպասում ենք ձեան մասամբ հալւելուն։ Դրա վրայ աւելացել է ե՛ւ մի ուրիշ խնդիր։ Զուտ տաճկաստանցիներ, թւով 20-25 հոգի, առաջարկում են զէնքով մտնել Երկիր եւ այնտեղ անցկացնել ձմեռը։ Այդ բանը համարելով լաւ եւ յեղափոխական գործի տեսակէտից ձեռնտու, տւել ենք մեր համաձայնութիւնը եւ զբաղւած ենք պատրաստութիւններով. տեսնենք ի՛նչ կը լինի դա, եւ դրանից յետոյ։

Դրամական տագնապի մէջ ենք, սակայն գիտենք, որ դուք ոչնչով չէք կարող օգնել։ Այնպիսի մարդկանց, որոնք իսկապէս անպէտք են արշաւանքին, սկսել ենք ցրել։ Մոռացայ գրելու, որ Վարդանից մի քանի օր յետոյ՝ Գրիգորի ու Պետրոսի խմբերն էլ եկան։ Զոհել են Բժշկի(1) *մօտ եղող Խաչատուրին, հնչակեանների Նիկոլային եւ մի մեզ անծանօթ վանեցու, որ միացած է եղել իրենց հետ։ Թշնամու կողմից ընկածների թիւը անհամեմատ շատ է։ Հնչակեանների խումբը, թւով* 18, *ինչպէս լսում ենք, այս գիշեր ճանապարհւել են դէպի Վան։ Մեր մէջ եղած արհեստաւորներին ի վերջոյ պիտի ուղարկենք Թաւրիզում մնալու։ Կամաց-կամաց ի նկատի ունեցէք նրանց համար գործ։ Վարդանի*(2) *առողջութիւնը հիմա քիչ լաւ է. ցրտերն սկսել են, հիւանդները շատացել։*

Թորո՛ս(3), *քէֆ մատաղ, իմ ուղարկած ցենտրալկան*[?] *լաւ չինել տուր եւ ուղարկիր Սալմաստից այդտեղ եկող հարսանիքաւորներով*(4). *Թէ որ նրանց չը հասնի՝ գրաբեր պ. Ստեփանով, որ հաֆթանցի է. Քրիստափորն*(5) *էլ իր ուզած որսորդականն է խնդրում՝ շտապեցրու իմի հետ ուղարկել։*

ՆԻԿ.

Արտաւազդը եկաւ անփորձ. Թորո՛ս, քեզ մի կորցներ. շուտով կը լինիս ընկերների հետ միասին։

ՆՈՅՆ

Վահանի գրած խինինը ուղարկեցէք։

ՆՈՅՆ

1.- Բժիշկը՝ բժ. Քրիստափոր Օհանեանն է:
2.- Վարդան – Մեհրաբեան Սարգիս, Խանասորի Վարդան:
3.- Թորոս – ծածկանուն Գալուստ Ալոյեանի: Ի դէպ, Գ. Ալոյեանը հեղինակն է Խանասորի արշաւանքին մասին տարածուած յեղափոխական երգի բառերուն.– «Կարկուտ տեղաց Խանասորի դաշտումը»:
4.- Հարսնիքաւորները՝ փոխաբերական իմաստով գործածուած է. ակնարկութիւն է Սալմաստէն Թաւրիզ մեկնող ժողովական պատգամաւորներուն:
5.- Միեւնոյն բժիշկն է՝ Քրիստափոր Օհանեան:

27

Փաստ. 459-29

10 *Մարտ* 1897
Սալմաստ

[*Իշխան Յովսէփ Արղութեանին*]

Երա՛նդ,

Ինչպէս երեւում է, Մուշտա-Շառդէովլան ուզում է նեղացնել փայլուկցիներին Մարիամի ինքնասպանութեան համար(1)։ *Մի քանի անգամ Թաւրիզ է պահանջել գիւղի իշխաններին։ Բայց ի՞նչով են մեղաւոր դրանք։ Ահա՛ ուղարկում ենք Մարիամի կօնսուլատային չը ներկայացրած անցագիրը եւ ինքնասպանութիւնը ապացուցանող թղթած տոմսակը։ Տոմսակի մէջ ասուած է «չուզեցի այդպէս կեանքը շարունակել»։ «Այդպէս կեանքը» բացատրւում է մարմնական արատով։ Նա իր ոտքի պատճառով հազիւ թէ տանջւելով ուսումնարան էր գնում ու վերադառնում*(2)։

Կօնսուլատային անցագիրը չը ներկայացնելու համար պատասխանատուն հանգուցեալն է։ Անցագրի ժամանակը անցած է, բայց ուժը կորած չէ։ Անցածի համար կօնսուլը, եթէ կ՚ուզի, կարող է աճուրդով ծախել տալ հանգուցեալի մնացած մի քանի գիրքը եւ շորերը...

Խորհրդակցիր պ. Ջէբրայելի եւ Թաջիր-Բաշու հետ, տես, եթէ հարկաւոր լինի եւ Մուշտա-Շառի պահանջի առաջքն առնելը օգուտ բերի գիւղականների նկատմամբ,— առաջնորդի միջոցով ներկայացրէք անցագիրն ու տոմսակը կօնսուլին եւ խնդրեցէք որ Փայլուկի «փողաւորներին» ի զուր Թաւրիզ պահանջելուն արգելք լինի։ Եթէ կօնսուլը չը հաւատայ տոմսակի իսկութեան, կարող է ձեռքը ստուգել(3) *Լիլաւայի ուսումնարանում եւ հանգուցեալի բարեկամների շրջանում նամակներից եւ այլ թղթերից։*

Ի նկատի ունեցիր, որ գիւղացիք Մուշտա-Շառից մի շաբաթ իրաւունք են խնդրել ելք գտնելու համար։ Ուրեմն, պէտք է շտապել։

Առանձին ծրարով ուղարկում ենք երեք հարիւր թումանի մի բարաթ՝(4) *«Որդիք Բ. Արզումանեանցների» վրայ։ Հինգ հարիւր մանէթ էլ ձեզ է ուղարկըւած Թիֆլիսից, ստացած կը լինիք։*

Այստեղի ձեռագործի վիճակախաղի տոմսակները չտապեցրու։

ՆԻԿ.

Տոմսակը անցագրի մէջ է, պինդ պահեցէք։ Այդ տոմսակը թղթերի միջից նոր է գտնուել։ Այս տոմսակը չի հակասում Փայաջուկի տէրտէրների կառավարութեան տուած ցուցմունքներին։

ՆՈՅՆ

10 *Մարտ* 1897 *Սալմաստ*

Անցագիրը եւ տոմսակը կօնսուլին ներկայացնելուն պէս, հեռագրով իմաց տուէք մեզ որ եթէ Մուշտա-Շառը նորից պահանջելու լինի գիւղացիներին, վերջինները կարողանան սրտապինդ վարուեն։

ՆՈՅՆ

Թաջիր-Բաշու եւ Առաջնորդի եախան պինդ բռնեցէք։

ՆՈՅՆ

1.- Մակարեան Մարիամ, ուսուցչուհի, որ սիրահարուած էր Արիստակէս Զօրեանին (Ռոստոմի կրտսեր եղբայրը)։ Արգելք չըլլալու համար Արիստակէսի յեղափոխական գործունէութեան՝ ինքնասպանութիւն գործեց։

2.- Մակարեան Մարիամը կաղ էր։

3.- Ձեռքը ստուգել, իմա՝ ձեռագիրը ստուգել։

4.- Բարաթ – մուրհակ, պարտաթուղթ։

Մարիամ Մակարեան – Մարօ

Սաթենիկ Մատինեան (Ծաղիկ)

28

Փաստ. 459-14

«Դիւան»ի մէջ (Բ. հատոր, էջ 365-367) հրատարակելով Նիկոլ Դումանի այս նամակը, Ս. Վրացեան կը գրէ. «Նիկոլը մասնակցել էր Թիֆլիսի Ռայոնական ժողովին, ուր քննուել էր եւ Խանասորի արշաւանքի խնդիրը: Նամակը գրել է Կովկասից Սալմաստ վերադառնալուց յետոյ»:

Վրացեանին կը պատկանին նոյնպէս թիւ 1-3 ծանօթագրութիւնները:

8 *փետրվ*. 1897, *Սալմաստ*

[*Թաւրիզի Կեդր. կոմիտէին*]

Սիրելիք,

Առաջ ու առաջ՝ խուդաֆիս, աւհալը շարիֆ...(4)

Մանրամասնութիւններ էք ուզում. շնորհ արէք սպասել հեկտոգրաֆով(5) *տպած արձանագրութեան պատճէնին, որ մանրամասնութեանց ամփոփումն է եւ բաղկացած երեք թերթից*...

Այժմ կ'ասեմ այն, ինչ որ անհրաժեշտ է: Որոշուած է ուժեղ գործունէութիւն եւրոպական Տաճկաստանում եւ արշաւանք մեր կողմից: Առաջինը այն պատճառով, որ եւրոպական դիպլոմատիան բուռն կերպով միջամտում է ե՛ւ իր շահերը վնասելուց յետոյ: Իսկ իր շահերը կենտրոնացած են եւրոպ. Տաճկաստանում եւ ոչ թէ խուլ անկիւններում: Եւ որովհետեւ դիպլոմատիայի լուրջ ուշադրութեան գրաւումը առայժմ ընդունուած է իբրեւ առանց[*ք*] *մեր գործունէութեան, այդ պատճառով որոշուած է մեր կողմից տեղի ունենալիք գործունէութեան այնպիսի ձեւ տալ, որ լինի ուժեղ, ցնցող, սահմանի վրայ, որ մօտիկ լինի Սալմաստին, որպէսզի <u>յատուկ թղթակցի</u>* (*որ պիտի գայ*) *միջոցով կարելի լինի տեղեկութիւնները թարմ-թարմ եւ ուռցրած Եւրոպա հասցնել: Նկատողութեան է առնուած, որ գործունէութիւնը կատարելով սահմանի վրայ, մեր մարդիկ չեն լինի ուժասպառ, յոգնած, քաղցած, անքուն եւ փամփուշտների առատ պաշարից զուրկ, ուրեմն կարող են աւելի լաւ կռուել: Նկատողութեան է առնուած ե՛ւ այն, որ գործողութիւններից յետոյ կարող ենք ենթարկուել պարսից կառավարութեան հալածանքին, բայց երկրորդական նշանակութիւն է տրուած դրան: Այս որոշումը կարող է փոխուել եւ ներս մտնելու խնդիր ծագել միայն այն ժամանակ, երբ Վանայ եւ Ատրպատականի կոմիտէները ուժեղ փաստերով*

համոզեն Բիւրօ-ին, թէ կարելի է խումբ-խումբ ներս մտնել Վասպուրական, ամրանալ որեւէ մի տեղում, յայտարարել կռիւ եւ ցոյց տալ դիմադրութիւն երկար ժամանակ։ Ընդհ. Ժողովի(6) որոշման համաձայն՝ Ատրպատականի կոմիտէները պէտք է մի ներկայացուցիչ տան Բիւրոյին, որի պարտականութիւնը պիտի լինի պտտել Կովկասի եւ Հիւսիսային Կովկասի քաղաքները պրոպագանդայով եւ յատուկ յանձնարարութիւններով, երբեմն-երբեմն այցելել Պարսկաստան, սերտ կապեր պահպանել այստեղի եւ Բիւրօ-ի միջեւ եւայլն եւայլն։

Այդ բանին մենք յարմար ենք գտնում Երեւանդին, կամ Վահանին(7)։ Դուք էլ խօսեցէք ու ընտրեցէք մէկն ու մէկին, որ ճանապարհ ընկնի իր պաշտօնատեղին առանց ուշանալու։

Թերթերը Կովկասում ստացւում են շատ անկանոն։ Շուտով մի գիծ կանոնաւորեցէք Շուշու կամ մի այլ կողմի վրայից եւ սկսեցէք ուղարկել թիւ 25-ից սկսած։ Ընդհ. Ժողովը առանձնապէս չեշտել է դրա վրայ։ Եթէ խմբագրութիւնը քիչ համարներ է ուղարկում, շուտ իմաց տուէք, որ շատացնի, որպէսզի կարողանանք ծարաւ Կովկասին էլ բաւականացնելու։ Արշաւանքի համար տրւել է թիւ «300»(1). թող արհեստանոցը(8) գօռ տայ շուտով լրացնել իր եղած հում ապրանքին։ Պատրաստիները հետզհետէ փոխադրեցէք զանազան միջոցներով, որ ժամանակը չը նեղանայ եւ մենք ապարդիւն կերպով իրար գլխով կպնենք անցեալ տարւայ նման։

Շատ թեր ու դէմ կարծիքներից յետոյ՝ որոշուած է բարեկամական յարաբերութիւններ պահպանել Խելօքի(2) հետ։ «Գացի տեսայ»։ Խոստացաւ «դժոխք» գնալ։ Տեսնենք կը կատարի՞ իր խոստումը։

Շուշեցիք գանգատւում էին Շէկոյից։ Ուրիշ պատճառների հետ միասին ներկայացնում էին է՛ւ այն, որ անիրաւացի կերպով չը բաւականանալով կոմիտէի տուած առատ ճանապարհածախսով՝ ինքնագլուխ դիմել է ըէալիստներին(3) եւ ուրիշ ջահիլների ու փող հանգանակել եւ ջէբը դրել։ Ասում էին, որ իր ձիով, հրացանով, շորերով եւ ճանապարհածախսով նստել է մօտ 650 մանէթ։ Նա պէտք է ձեզ յանձնէր 200-ը ամբողջովին։ Պահանջեցէք հաշիւ եւ բացատրութիւն։ Ինչպէս մեզանից իւրաքանչիւրը, նոյնպէս եւ նա մասնաւոր փող չունի։ Մասնաւոր կարող է ունենալ յեղափոխութիւնից դուրս մօտիկ ազգականներից, որպիսիներին չի տեսել նա, որովհետեւ Թիֆլիս չի մտել։ Շուշում՝ ի՞նչ մասնաւոր։

Մխիթարի(9) ուզած համարները եղել են ոչ թէ Կովկաս ուղարկելու համար, այլ լրացնելու եւ կազմել տալու համար։ Համարները այդտեղ են, յարմարութիւններն էլ նոյնպէս, դո՛ւք ուղարկեցէք այդտեղից։

Լօթինե՛ր, ձիու անունը չէք տւել Ձեր նամակում։ Այդտեղ գարին ու դարմանը թանգ, իսկ այստեղ ձին պէտքական։ Ի՞նչ էք անում։

Ես այս կողմը ճանապարհւելու ժամանակ մէկին յատկապէս Բագու ուղարկեցին, որ անմիջապէս փոխադրել տայ առայժմ 1,000 ռուբլի։ Դեռ ձէն-ձուն չը կայ մինչեւ հիմա. չը գիտեմ 500-ի ջանջալին է հանդիպել, թէ ի՞նչ բան է։

Վանայ համար պատրաստում ենք նամակ։

Կապում-ուղարկում ենք Դիլիման, որ չափար-չագիրդին բերի. երկու չուռ-քիազախի, մէկ չալ, երկու չալվար, երկու քէօլօգ, մէկ փուչի։ Մնացածը դուք դրստեցէք։ Այդ հագուստը իմն ու Վարդանինն է(10)*. ուրեմն, հասկանալի է, որ հետը պիտի վարուէք քաղաքավարի եւ վերադարձնէք անվնաս ու ապահով։ Վարդանինը վերցրել է Մխիթարը*(9)*՝ իր ռիսկով։ Տղորցից չէր կարելի վերցնել, որովհետեւ հագներին է։ Այս բաները ուղարկում ենք Թումանեանցիների կանտորը*(11)*, այդտեղից ստացէք։*

1.- 300 հոգինոց խումբ, հետեւաբար՝ 300 հրացան արշաւանքի համար:

2.- Խենթը, որ խոստացել էր մասնակցել արշաւանքին:

3.- Ռէալական դպրոցի աշակերտներին:

4.- Պարսկերէն՝ բարեւագիր: Աստուած պահապան, ցտեսութիւն. ինչպէս է մեծապատուութեան որպիսութիւնը:

5.- Խմորատիպ մեքենայ:

6.- 1897-ի ժողովը որպէս ընդհանուր՝ չընդունուեցաւ, որովհետեւ ներկայացուած չէին յատկապէս Թուրքիոյ տարածքին գործող մարմինները. հետագային ան դասուեցաւ ռայոնական ժողովներու կարգին: Խօսքը այստեղ Թիֆլիսի ռայոնական ժողովի մասին է, որուն մասնակցած էր Նիկոլ Դուման եւ ուր պաշտպանած Խանասորի արշաւանքին գաղափարը:

7.- Երուանդը՝ Յովսէփ Արղութեանն է. Վահանը՝ հաւանաբար նկատի ունի Նիկոլ Մատինեանը:

8.- Թաւրիզի Հ.Յ.Դ. զէնքի արհեստանոցը:

9.- Բժ. Քրիստափոր Օհանեան, Խանասորի արշաւանքին բժիշկ-ֆետայիին: Նշուած համարները կը վերաբերին «Դրօշակ»ի թիւերուն:

10.- Սարգիս Մեհրաբեան, որ Խանասորի արշաւանքին ընդհանուր հրամանատար պիտի ընտրուի:

11.- Հիմնարկութեան գրասենեակը:

29

Փաստ. 459-17

Նամակը ուղղուած է Թաւրիզի Կեդր. կոմիտէին: Յիշուած ընդհ. ժողովը պէտք է հասկնալ ռայոնական ժողովի իմաստով: Թիֆլիսի մէջ գումարուած այդ ժողովին կը մասնակցէին միայն Կովկասի եւ Ատրպատականի պատգամաւորները:

Ընկերնե՛ր,

Ճիշտ որ մոռացել եմ գրել Վահանի եւ Վարդանի(1) *մասին: Նրանց թողի Թիֆլիսում: Կարօն*(2) *էլ հետները, երեքով միասին, իմ հաշւով պիտի գնացած լինին Բագու, իրաւունքների պաշտպանութեան համար կռիւ: Ինչպէս Կարօն է գրում, բագուցիք որոշել են կռուածաղիկցիներին*(3) *տալ մինչեւ* 20.000, *իսկ մեզ՝ ոչի՛նչ:*

Այսօր բողոքեցինք Թիֆլիս. ասացինք, որ կամ միջոցներ տան, կամ իմաց տան որ խանութը կողպենք: Դուք էլ այդտեղից ձեր ձայնը բարձրացրէք:

Բիւրօ-ի ներկայացուցչութեան համար Թիֆլիսում վախենում էին Վահանի բռնըլելուց. նրան թունդ են փնտռում: Երէգ ու այսօր Փայջուկում կանանց ու տղամարդկանց համար ներկայացում է տրւում: Օգտին հարակաչ(4) *ենք: Բայց բժիշկն ասում է, որ դրանով «եարա սաղալմազ»*(5)*:*

Վանայ նամակը պատրաստ է որոշ ու կարեւոր հարցերի դասաւորմամբ: Այդ հարցերի պատճէնը ուղարկում ենք ձեզ, որին կարող էք՝ պատասխանեցէք:

Հարցերը

1.- *Ընդհ. Ժողովով անպայման ընդունւած է ազդել դիպլոմատիայի վրայ. ի՞նչ էք կարծում, ո՞րը կարող է աւելի ազդել. արշաւա՞նք սահմանի վրայ, խմբական կռիւներ գաւառներո՞ւմ, թէ կենտրոնացած երկարժամանակեայ դիմադրութիւն որեւէ մի կէտում, եւ ո՞րն էք հնարաւոր գտնում:*

2.- *Եթէ կենտրոնացած դիմադրութիւն՝ ո՞րտեղ էք հնարաւոր եւ ձեռնտու համարում. Վանո՞ւմ, թէ գաւառում եւ յատկապէս ո՞ր գաւառում:*

3.- *Եթէ դերադասում էք կենտրոնացած կռիւ՝ կարո՞ղ էք մինչեւ Մայիսի* 20-*ը հետզհետէ մեզ մօտ հասցնել գոնէ* 8-10 *բալադներ:*

4.- *Կը յուսա՞ք, որ այնտեղ հասնող առաջին խմբերը առանց ընդհարման կը պահւին մինչեւ վերջինների ժամանելը, որպիսի գործողութիւնը կը տեւի մօտաւորապէս մի ամիս:*

5.- *Եթէ շահաւէտ է գտնուում որեւէ մի գաւառում, այդ գաւառը կարո՞ղ է ուտեստի գոնէ մի ամսւայ պաշար հայթայթել* 200-300 *հոգու համար (պաշարը մինչեւ ամէնքի ժողովւելը, վերջինների հանգստանալը, մի խօսքով խաղաղ ժամանակի համար, գործողութիւնների ժամանակ իրանք կը գտնեն)։*

6.- *Շատ ու քիչ կը գտնւի՞ վառօդ, կապար եւ բերդանի ազա։*

7.- *Եթէ գերադասում էք արշաւանք սահմանի վրայ՝ ի՞նչ պիտի լինի ձեր գործողութիւնը ներսում եւ յատկապէս ո՞րտեղ ու ի՞նչ եղանակով, եւ քանի՞ զինւած մարդիկ կարող են հաւաքւել ձեր գործողութիւնների համար։*

8.- *Ի՞նչպէս է յեղափոխական տարրի եւ ժողովրդի տրամադրութիւնը թէ Վանում եւ թէ գաւառներում։*

Մոռացած չէք լինի ձին, ծխախոտը, եւ Ջուլֆայից Վարդանի ուղարկած սէչման։ Ես ու Սարգիսը մի օր գնացել ենք մի էշի բեռ որս բերել։ 8 *նապաստակ,* 25 *բադ,* 1 *կաքաւ եւ մի սեւ ագռաւ*(6)*։ Մեղք է, որ սէչման ձեր մօտ մնայ անգործադրելի։*

Ի՞նչ դառաւ պ. Ջհանգիրի մոսինը. աշխատեցէք փողով-բանով մի կերպ դուրս բերել։

Բարեւներ՝
ՔԵՇԻՇ(7)

17 *փետր.* 1897
Սալմաստ

1.- Վահան – Նիկոլ Մատինեան՝ օր. Սաթենիկի (Ծաղիկի)՝ Իշխ. Արղութեանի կնոջ եղբայրը։ Դաշնակցութեան հիմնադիրներից էր։ Սկզբի տարիները՝ եռանդուն գործիչ։ Համաձայն չլինելով մասնակցել Խանասորի արշաւանքին՝ անցաւ Արտասահման։ Գործիչ Բուլգարիայում, Զմիւռնիայում, Եգիպտոսում։ – Վարդան՝ Խանասորի Վարդանը։ Ծանօթ Ս. Վրացեանի։

2.- Արիստակէս Զօրեան, Ռոստոմի կրտսեր եղբայրը, որ պիտի զոհուէր Խանասորի արշաւանքի ընթացքին։

3.- Կռուածաղիկը Կ. Պոլսոյ ծածկանուններէն մէկն է։

4.- Ընկեր։

5.- Վէրքը չի բուժուիր։

6.- Նիկոլ Դուման համբաւաւոր որսորդ էր։ Սարգիսը՝ Օհանջանեանն է (Ֆար-Հատ)։

7.- Քեշիշը Նիկոլ Դումանն է։ Այս ծածկանունը, որ առաջին անգամ գործածուած է հոս, աւելի ուշ, 1911-ին դարձեալ Պարսկաստանի մէջ, պիտի վերյայտնուէր Ղարա-Քեշիշ ձեւին տակ։

30

Փաստ. 459-19

Նիկոլ Դումանի այս երկտողը կցուած է բժ. Քրիստափոր Օհանեանի (Մխիթար) Յովսէփ Արղութեանին գրած նամակին:

Փետր. 24 1897
Սալմաստ

Երուանդ(1),

Ներփակած թղթիկի վրայ գրած ձեւով գունաւոր թղթի վրայ տպել տուր 1500 օրինակ վիճակախաղի տոմսակ։ Ընդգծած բառերը նօտր գրերով լինին, իսկ «Սալմաստի Հայուհեաց Բարեգործ[ական] «Բաֆֆի ընկերութեան»ը միւսներից տարբերուող տառերով։ Մի խօսքով, սիրուն ըլի, հա՛։ Տպագրութեան ծախքը վերցրու պ. Ջէբրայիլից եւ քանակութիւնը յայտնիր, որ վճարենք որին նա կը ցանկանայ։ Տոմսակները չուտ պատրաստել տուր եւ ուղարկիր, որ վաղօրօք պիտի սկսեն ցրել հեռու տեղերում անգամ։ Էլ ի՛նչ գրեմ. Մխիթարն(2) *ասել է ամէն ինչ, միայն մոռացել է յիշեցնել տալ ձին։ Սաքօն*(3) *ասում են խոյումն է, գրեցէք խաբար ուղարկեն։*

ՔԵՇԻՇ(4)

1.- Երուանդը՝ Յովսէփ Արղութեանն է:
2.- Մխիթար՝ ծածկանունն է Քրիստափոր Օհանեանին, Խանասորի արշաւանքի բժիշկ-ֆետային:
3.- Սեւքարեցի Սաքոն է:
4.- Քեշիշը Նիկոլ Դումանն է:

31

Փաստ. 459-24

Դատավարութիւնից անմիջապէս յետոյ, անքուակիր նամակով ուղղած «Դրօշակ»ի խմբագրութեան՝ Նիկոլ Դումանը հետեւեալ տեղեկութիւններն է հաղորդում դէպքի մասին [Ս. Վ.]: Շէկոյի հարցի մասին տեսնել աւելի մանրամասն յաջորդ՝ փաստ. 458-115 նամակի ծանօթագրութիւնը:

Սիրելի՛ք,

Թաւրիզի գործերի, ի միջի այլոց ե՛ւ Շէկո-ի խնդրի համար այստեղ են եկել Սալմաստից Նիկոլը, իսկ Թեհրանից Միրզայեանը(1)*: Շէկո-ի խնդիրը քննւեց հրապարակով, տեղացիների ներկայութեամբ, ուր մասնակցում էին Թաւրիզցիներից մինչեւ* 25 *հոգի: Խնդրի քննութեանը այդ ձեւը տւինք, որովհետեւ հասարակութիւնը վերին աստիճանի զայրացած էր, ամէն տեղ գոռում էին, թէ՝ անմեղ արիւն է թափւել, սպանութիւնը վերագրում էին Երւանդի թելադրութեանը եւ պահանջում էին արդարադատութիւն: Ժողովը, որ գումարւեց երկու անգամ, ունեցաւ իր բազմակողմանի քննութեան մանրամասն արձանագրութիւնը եւ պարզւեց, որ ոճրագործները սպանութիւնը կատարել են ինքնագլուխ, անձնական թշնամութիւնից ու ատելութիւնից դրդւած: Ուզեցինք, որ ժողովը արձանագրութեան մէջ դնի իր եզրակացութիւնը, բայց նա ձայների մեծամասնութեամբ հրաժարւեց այդ առաջարկութեան կատարումից՝ խնդիրը տակաւին պարզւած չը համարելով, ոճրագործների բացակայութեան պատճառով: Նրանք սպանութիւնից յետոյ առանց անցագրի փախել էին դէպի Կովկաս, բռնւել Ջուլֆայում եւ տարւել Երեւանի բանտը:*

Երեք հոգի էին, ձեզ բոլորովին անծանօթ, մէկը ռուսաստանցի, Խէչօ անունով, փախած զինւոր, իսկ երկուսը տաճկաստանցի՝ Գրիգոր եւ Աւետիս անուններով: Գրիգորը Վանայ Տէր Պօղոսեանի եւ մի ուրիշի տերրօրիստն է, եկել է Նիկոլի հետ, անցեալ ամառն է մտել Շէկո-ի խմբի մէջ եւ մասնակցել այդ խմբի կռիւներին: Աւետիսի գործունէութիւնը կայանում էր ամառը մեզ համար «կերակուր եփելու մէջ» (խոհարար էր), իսկ Խէչօն ոչինչ չունի արած յօգուտ յեղափոխութեան:

Շէկօն՝ Արշակ Բարսամեանցն է, անցել է Մշոյ կողմերը 91*-ին, այնտեղ չոշափելի ոչինչ չարած՝ բռնւել, Պոլիս տարւել, ապա ազատւելով Կովկաս վերադարձել: Յետոյ, Թիֆլիսում մի գիշեր տաճկաց հիւպատոսի տան մօտից անցնելիս՝ ըէվոլվէրից մի անգամ պարպել է հիւպատոսի տան վրայ, բռնւել եւ* 5 *տարով աքսորւել Լէնկօրան:* 1½ *տարի մնալով այնտեղ՝ անցեալ ամառը փա-*

խաւ Թաւրիզ, գնաց Սալմաստ եւ մեծ պատրաստականութեամբ անցաւ դէպի Վան՝ 21 հոգու գլուխ անցած՝ իբրեւ խմբապետ։ Նրանից ամբողջ խումբը մնաց դժգոհ, համարելով «վատ վարւող եւ անընդունակ խմբապետ եւ կռւող»։ Դրա համար տալիս էին իրանց բազմաթիւ փաստերը։ Հիմնւելով այդ փաստական տրտունջների վրայ եւ մեղաւոր համարելով նրան վերագրեցին(2) 14 հրացան պարսիկներին ու պարսկական քրդերին (ո՛չ կառավարութեան) տալու մէջ, որպէս թէ խումբը ազատելու դիտաւորութեամբ,— կոմիտէն սկսեց պաղ վերաբերւել դէպի նա եւ որոշեց <u>բանը այնպէս սարքել</u>, որ նա փոխի իր գործունէութեան տեղն ու ձեւը, այսինքն չը տրւի նրան խմբապետի պատասխանատու պաշտօնը։ Գնաց Շուշի, յետոյ Բագու, հէնց Բագու հասած երեկոյեան էլ բռնւեց, ճարպիկութեամբ օձիքն ազատեց պօլիցիայից, նորից վերադարձաւ Շուշի եւ այնտեղից էլ Թաւրիզ։ Շուշու ներկայացուցիչը Թիֆլիսում ինձ պատմեց, որ Շէկօն իրան լաւ չէր պահում առհասարակ, չը բաւականացաւ կոմիտէի տւած առատ ճանապարհածախսով, ըէալիստների(3) ու ջահիլների շրջանում ինքնագլուխ փող հանգանակեց առանց հաշիւ տալու, մի բաշ շորեր է կարել տալիս եւն., եւն.։ Աւելացրեց, որ նա նստել է մօտ 650 ռուբլի, որից 200-ը ամբողջովին պիտի հասցնէր Թաւրիզ։ Վերադարձայ Սալմաստ, իմացայ, որ Թաւրիզում տւել է միայն 150 ռուբլի, որ ապրում է առանձին եւ շիկով, եւն... Իսկոյն յայտնեցի Շուշւայ գանգատը եւ առաջարկեցի Թաւրիզի մերոնց պահանջել նրանից հաշիւ եւ բացատրութիւն։ Նա էլ սկսել է ձգձգել, որի պատճառով յարաբերութիւններն աւելի եւս պաղել են։ Մեր լօթիներն էլ օգտւելով դէպի Շէկօն եղած ընդհանուր վատ տրամադրութիւնից եւ այդ բանը գտնելով անպատիժ մնալու յենակէտ՝ իրանց գազանութիւնը թափում են խեղճի գլխին։ Ամբողջը դա է խոշոր գծերով։

Ինչպէս ասացի վերեւ, ժողովը վերջնական եզրակացութեան չուզեց գալ՝ ոճրագործների բացակայութեան պատճառով։ Բարեբախտաբար, այդ օրը 2 տաճկաստանցիները եկան Թաւրիզ ռուսաց կօզակների ուղեկցութեամբ։ Կօնսուլը դրանց յանձնեց պարսից կառավարութեան, իբրեւ կասկածելիներ Թաւրիզում կատարւած մի սպանութեան մէջ։ Առաջնորդը որ հիմա լաւ յարաբերութեան մէջ է պարսից կառավարութեան հետ, չը նայելով այդ բոլոր մերկացումներին, անմիջապէս ազատեց տղորցը եւ առաջնորդարան բերաւ։ Իսկոյն վրայ հասանք 2 քահանայի եւ 1 իշխանի հետ։ Առաջնորդի ու նրանց ներկայութեամբ տղերքը խոստովանեցին, որ սպանութիւնը կատարել են ինքնագլուխ՝ անձնական թշնամութիւնից դրդւած եւ մի առ մի պատմեցին թշնամութեան պատճառները։ Այսօր-վաղը նրանք բոլորովին ազատ կը լինեն եւ մեր ձեռքում։ Մնում է մեր «արդարադատութիւնը», որին ժողովուրդը սպասում է անհամբեր։ Թէպէտ դեռ տեղի չի ունեցել մեր վճիռը, բայց հաւանօրէն կը լինի այսպէս. Աւետիսին ենթարկել մահու պատժի, որպէս չարագործութեան գլխաւոր պատճառի, որ ուրիշների համար էլ լինի խրատ եւ զգուշութիւն, որ վերանայ այժմ մեր մէջ տիրող ընկերոջ ձեռքով՝ ի զուր սպանւելու անվստահութիւնը։

Գրիգորին՝ յարգելով նրա անցեալ գործունէութիւնը եւ համարելով մեղսակից եւ ոչ թէ գլխաւոր պատճառ՝ արձակել Դաշնակցութիւնից եւ կրկին ընդունել, երբ քաւած կը լինի իր մեղքերը յօգուտ յեղափոխութեան մի նշանաւոր գործ կատարելով։ Արձակել նաեւ Թաւրիզեցի Արտաւազդին (որ նոր է եւ աննշան մէկը), որը Շէկօ-ի սպանութիւնից յետոյ յուզեց Թաւրիզի ամբողջ հասակարակութիւնը՝ չինծու փաստերով համոզելով հասարակութիւնը, որ սպանութիւնը եղել է տնօրինւած եւ ոչ թէ ինքնագլուխ. միեւնոյն ժամանակ բարոյական պարտք դնել հասարակութեան վրայ, որ նա կտրի իր յարաբերութիւնները Արտաւազդի հետ։ Մնաց Խէչօն, նա էլ ճանաչւել է եւ ուղարկւել «ուղղիչ բատալիոնը»(4)։

Համբոյրներով՝
Նիկ.

1.- Սալմաստէն եկող Նիկոլը նոյն ինքն Դումանն է, իսկ Թեհրանէն՝ Յովսէփ Միրզայեան:
2.- Բնագրին մէջ «վերադարձին», որ սխալ է անշուշտ:
3.- Ռէալական վարժարանի աշակերտներու:
4.- Արդարեւ, Ատրպատականի (Վրէժ) Կեդր. կոմիտէի 1897 թ. Ապրիլին կայացուցած վճիռները լրիւ կը համապատասխանեն Նիկոլ Դումանի կանխատեսումներուն: Տես այս մասին Ս. Վրացեան. «Դիւան Հ. Յ. Դաշնակցութեան», Բ. հատոր, էջ 26–40:

32

Փաստ. 458-115

Անթուակիր գրութիւն է, առանց ստորագրութեան, բայց ձեռագիրը որոշապէս Նիկոլ Դումանին է: Նամակին վերեւ այլ ձեռագրով մը գրուած է «մօտ 1895–96 թ.», որ ճիշդ չէ անշուշտ:

Նիւթը Շէկոյի սպանութեան շուրջ կը դառնայ: Ենթական, բուն անունով Արշակ Պարսամեան, յեղափոխական անցեալ ունեցող բայց եւ արկածախնդիր կեանքով ապրող, անկարգապահ անձ է, որ զուտ անձնական հաշիւներով կը սպաննուի Թաւրիզի մէջ, 24 Փետր. 1897-ին, մեծ վրդովմունք առաջացնելով օրին թէ՛ տեղւոյն վրայ եւ թէ արտասահման:

Թաւրիզի կոմիտէին նախաձեռնութեամբ քննութիւն կը բացուի եւ դատը տեղի կ՚ունենայ նոյն տարուան Ապրիլին: Դատը տեսնողներէն մէկն ալ Նիկոլ Դումանն էր, աւելի քան 20 ուրիշ անձնաւորութիւններու հետ: Ի վերջոյ, 24 Ապրիլին Ատրպատականի Կ. Կոմիտէն վճիռը կ՚արձակէ մեղադրեալներուն դէմ,– տեռոր եւ արտաքսումներ: Հետեւաբար, Ն. Դումանի այս նամակին գրութեան թուականը պէտք է զետեղել 1897 թ. Փետրուար եւ Ապրիլ ամիսներուն միջեւ:

Շէկոյի դատավարութեան մասին աւելի ընդարձակ կերպով կ՚անդրադառնայ Ն. Դուման «Դրօշակ»ի խմբագրութեան ուղղած իր յաջորդ նամակով, որ գրուած պիտի ըլլայ Ապրիլ ամսուն:

Շէկոյի դատավարութեան թղթածրարը տպուած է «Դիւան Հ. Յ. Դաշնակցութեան» մէջ, Բ. հատոր, էջ 26–40:

Ստորեւ կու տանք նաեւ թիւ 459-159 փաստաթուղթը, ստորագրուած Ն. Դումանի եւ Յ. Զ. Միրզայեանցի կողմէ, որոնք իբր քննիչներ կուսակցութեան կողմէ նշանակուած՝ ժողովի կը հրաւիրեն դատական կազմի համար նկատի առնուած 25 անձնաւորութիւններ: Զանց առած ենք այս վերջիններուն անուանացանկը՝ իրենց ստորագրութիւններով:

Սիրելի ընկերներ

Ձեր նամակը շատ վատ տպաւորութիւն թողեց մեր վրայ։ Այժմ, երբ տաք նախապատրաստութիւնների ժամանակն է(1)*, Յունաստանի ու Տաճկաստանի մէջ պաշտօնապէս պատերազմ կայ յայտարարուած, երբ մեր քարուքանդ եղած, աւերուած հայրենիքը մեզ վրայ սուրբ պարտք է դնում մեր վրէժխնդրութեան կատաղութիւնը միացեալ ոյժերով թափենք տաճիկների գլխին, դուք այսպիսի մի ժամանակում միացեալ ոյժերով բողոք էք ներկայացնում մեր ընկերների դէմ եւ դրանով զբաղեցնում մեր ամբողջ ուղեղը։*

Դեռ չգիտենք, թէ ինչի՞ համար եւ կամ ում դէմ։ Ձեր բողոքը — եւ Դուք ի զուր էք գրել՝ «քանի որ գրիչ էք ձեռք առել»—, բայց ընդունելով հանդերձ որ ձեր բողոքը չա՛տ արդարամիտ է,— ի՞նչ դրա ժամանակն է, Ձեզ ենք հարցնում, երբ մեր բազմաչարչար ազգը նահատակել ձգտող դազան թշնամին հարւածներ է կրում մեզ նման տանջւող ժողովրդներից եւ մեր պարտքն է լի վրէժխնդրութեամբ նետւել գործունէութեան ասպարէզ։

Ներկայ հանգամանքներում զիջողութեան պարտք ենք դնում ամէն մի հասկացող յեղափոխականի վրայ, մանաւանդ Ձեզ վրայ, որ հասկացող լինելուց բացի՝ հայրենիքի աւերմունքներին եղել էք ե՛ւ ենթակայ ե՛ւ կենդանի վկաներ։

Այժմ, երբ Շէկօ-ի ի զուր սպանութիւնը վերագրում են Տաշոյի(2) *թելադրութեան եւ վրդովւած հասարակութիւնը զայրոյթով հակակրական ցոյցեր է անում յեղափոխութեան դէմ, որի համար ե՛ւ կազմւած է դատարան, այժմ, երբ դրանից բացի տենդագին կերպով զբաղւած ենք պատրաստութիւններով, դուք այդտեղ էք հրաւիրում Տաշոյին, որի գալը, ցաւում ենք, որ մի կարճ ժամանակ կ՚ուշանայ։*

Մի խօսքով, դուք, սիրելի ընկերներ, չէք մտնում մեր դրութեան մէջ։

Բայց գուցէ դուք էլ Ձեր ցաւն ունիք եւ մենք չիմանալով այդ ցաւը՝ չենք կարողանում մտնել Ձեր դրութեան մէջ։ Այո՛, պէտք է եւ պարտաւոր ենք մտնել իրարու դրութեան մէջ եւ ցաւերը պէտք է բուժւին անհրաժեշտաբար։ Բայց վա՛յ նրան, ով ազգային մեծ ցաւերը անիրաւաբար զոհ կը բերի իր անհատական ցաւերին...

Փաստ. 459-159

Զորեքշաբթի, 9 *Ապրիլ* 1897

Դաշնակցութեան կողմից վճռուած լինելով ընկերական-կազմակերպական քննութիւն բանալ Շէկոյի սպանութեան դէպքը լուսաբանելու համար՝ մօտակայ կոմիտէների քննիչ-ներկայացուցիչները խնդրում են բոլոր այն պարոններից, որոնց անունները արձանագրուած են ներքեւում, բարեհաճել ներկայ գտնուիլ այդ քննութեան այսօր երեկոյեան ժամը 5ին եւրոպ[ականին], պարոն Աստուածատուր Փանուէլեանցի տանը։ Խնդրւում է ստորագրել անուան դիմաց։

Քննիչներ
ՆԻԿ. ՏԷՐ ՅՈՎՀ[ԱՆՆԻՍԵԱՆ]
Յ. Զ. ՄԻՐԶԱՅԵԱՆՑ

Ծանօթ Խմբ.– Կը հետեւին անուանացանկն ու ստորագրութիւններ հրաւիրեալ 26 անձնաւորութեանց:

Յ. Գ.— Հրաւիրուած պարոնները իրաւունք ունին իրենց հետ ժողովին բերելու այնպիսի պարոնների, որոնք կարող են մի լոյս ձգել դէպքի վերայ իսկ որոնց անունները մոռացուած են եւ չեն արձանագրուած։

Յ. Զ. Մ.

1.- «Նախապատրաստութիւններու» հարցը կը վերաբերի Խանասորի արշաւանքին, որուն քանի մը ամիսներ մնացած էին:
2.- Տաշօ՝ ուրիշ մէկ ծածկանունն էր Յովսէփ Արղութեանի:

33

Փաստ. 459-50

Խենթը՝ Վարդան, Դալի, Խելագար եւ այլ ծածկանուններով՝ կը համարուէր Ռաֆֆիի համանուն վէպին հերոսը անճնաւորողը: Իր մասին Ս. Վրացեան այլ առիթով մը կը գրէ. «Հակառակ իր տուած խոստումների Խենթը ոչ խմբով, ոչ էլ մենակ չանցաւ Տաճկաստան եւ յեղափոխական շարժման գործնական մասնակցութիւն չունեցաւ» («Դիւան», Ա. հատոր, էջ 174):

Ներկայ պարագային եւս, հակառակ Դաշնակցութեան հետ պայմանաւորուած ըլլալուն, ան կը խուսափէր արշաւանքին մասնակցութիւն բերելէ:

Ներկայացուած փաստաթուղթը պատճէն է:

2 *Մայիսի* 1897
Սալ[*մաստ*]

Բարեկամ, Թիֆլիսի ու Երեւանի նամակների, մեր ցանկութեան ու ձեր խոստման համաձայն՝ ահա՛ ուղարկում ենք ձեզ մօտ մարդիկ, որոնք կը ներկայացնեն ձեզ բոլոր հնարաւոր միջոցները՝ մեզ մօտ հիւր գալու համար։ Յոյս ունինք, որ մանր-մունր արգելքների առաջ չէք ճնշւի, ամէն կերպ կ՚աշխատէք գալ եւ հիւրերի(1) *խիստ ընտրութիւն կ՚անէք։ Եթէ ձեզ մօտ եղած ապրանքների*(2) *տեղափոխութիւնն անհնարին լինի՝ կարող էք գալ առանց ապրանքի, մենք մեր ունեցածից կարող ենք հայթայթել։ Սրանով չեմ ուզում ասել, որ տեղափոխութիւնը պէտք չէ, ամէն կերպ աշխատեցէք, մանաւանդ ծայրերի*(3) *տեղափոխութեան համար։*

Մ. Յ. ՆԻԿՈԼ

Յ. Գ.— Ամենաուշն այստեղ պէտք է լինէք մինչեւ ամսոյս վերջը։

ՆՈՅՆ

1.- Հայդուկներու:
2.- Զէնքերու:
3.- Փամփուշտներու:

34

Փաստ. 459-58

Նիկոլ Դումանի այս գրութիւնը յաւելում է իր կրտսեր եղբօր՝ Արիստակէսի մէկ նամակին կցուած:

19 *մայիսի* [18]97, *Սալմաստ*

Սիրելիք,

.....

Ես այդտեղ եղած ժամանակ Վահանից(1) *մի նամակ ստացուեցաւ, ուր առաջ էին բերուած պարս*[*կա*]*կան ներկայացուցիչների կարծիքները Ընդհ. ժողովում «Շաւարշանի»*(2) *եւն. նկատմամբ։ Այդ նամակը ուղարկեցէք այստեղ։*

Յովսէփ!(3)

Անցեալ փոստով գրել է[*ի*] *Ս. Օհանջանեանին, որ գայ։ Նամակս ստացել է, թէ ո՛չ։*

ՆԻԿ.

Տիկին Իսկուհուն ասա՛ ո՞ւր մնացին տոմսակների փողերը. 3 օրից յետոյ վիճակախաղ է. թո՛ղ այս փոստով անպատճառ փոխադրուի, որ տարուած ձեռագործները ուղարկուին իրան։

ՆՈՅՆ

1.- Վահան – ծածկանուն Նիկոլ Մատիինեանի:
2.- Շաւարշան – ծածկանուն Ատրպատականի մէջ Մակու գաւառի Աւաճուխ գիւղի:
3.- Յովսէփը՝ Արղութեանն է:

Արիստակէս Զօրեան (Կարօ)

35

Փաստ. 459-62

Յովսէ՛փ(1),

Թումանը եկաւ այսօր միայն, Օհանջանեանից(2) *քիչ առաջ։ Նա բերաւ* 20 *կապոց։ Որովհետեւ մեզ մօտ կողմնակի մարդիկ շատ կային՝ դրա համար չկարողացանք բերածը համրել։ Սովորականի պէս ընդունելով* 200-*ական՝ քսան թուման էլ մենք տուինք, ինչպէս գրել էիր։ Իրան էլ ասացինք, որ համարելու ժամանակ ու յարմարութիւն չունինք առ այժմ, յետոյ կը համրենք եւ հաշիւներս կը մաքրենք։ Ընդունեց։ Նա ասում էր, որ իրանց պէտք է հասնի այս անգամ այստեղ* 22 *թուման* (20-*ի փոխարէն)։ Մենք տուինք ուզած* 22-*ը, ասելով, որ այդ թիւրիմացութիւնը շուտով կը պարզենք եւ եթէ այժմեան* 2-*ը աւել է՝ անց կը կացնենք միւս անգամւայ հաշւին, այդ էլ ընդունեց։ Այսօր եւեթ դարձան նրանք։*

Փոստով բարաթը(3) *չէինք ուղարկել մոռացմամբ։ Այսօր հեռագրեցինք, ի հարկէ կը ստանաս Ջէբրայիլի գրասենեակից։*

Այս գիշեր էլ Եր[*եւանի*] *գծով եկան* 7 *հոգի, մարդիկը շատանում են, մօտ* 180 *կը լինի*(4)։ *Պատրաստութեան վրայ ենք, դու էլ շտապեցրու փոխադրութիւնը։*

Ահա՛ գալիս է Ալէքսանը։ Ծխախոտի շատ պէտք ենք ունենում եւ պիտի ունենանք։ Այստեղ առնում ենք վատը եւ թանկ. այդտեղ պատուիրիր մինչեւ 200 *դրվ*[*ան*], *արժէքը* 2 *դռան, կամ թէ մի քանի շահի էլ պակաս, որ այդ պակասով քրէհը*(5) *լրացւի։ Թուղթ այստեղ կայ, ձեռնտու է*(6)։

Կանանց ընկերութեան կողմից յիշեցրու տ[*իկին*] *Իսկուհուն՝ նրան ուղարկուած տոմսակների համար։ Հաւանօրէն Յունիսի* 10-*ից առաջ դուրս գալու հնարաւորութիւն չը պիտի ունենանք, պատրաստ չենք լինի։*

Խէչօն չեռ չի վերադարձել, չի վերադարձել եւ նրա հետ գնացած Տիգրանը։ Այս գիշերւայ տղայոց հետ վերադարձաւ միայն Յովհաննէսը, որ Խէչօ-ի հետ էր։ Խենթի(7) *գալու մասին խօսւում է։ Բիձան եկաւ։ Հերիք է։*

Նիկ.

21 *Մայիսի* [18]97
Սալմաստ

1.- Յովսէփ Արղութեան:
2.- Օհանջանեան Սարգիս (Ֆար-Հատ):
3.- Պարտամուրհակ:
4.- Խօսքը կը վերաբերի Խանասորի արշաւանքին համար հաւաքուող ֆետայիներուն:
5.- Քրէհ – վարձք (փոխադրութեան համար):
6.- Խօսքը կը վերաբերի ծխախոտը փաթթելու թուղթին: Անձնապէս ալ Նիկոլ Դուման մոլի ծխող էր:
7.- Խենթը, բուն անունով Տէր Պողոսեան Սամսոն (1851–1911), հակառակ իր խոստումին պիտի չմասնակցէր Խանասորի արշաւանքին:

36

ԽԱՆԱՍՈՐԻ ԱՐՇԱՒԱՆՔԻ ԿԱՑԱՑՄԱՆ ՎԵՐՋՆԱԿԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ

6 *Յուլիս* 1897

Կիրակի օր տեղի ունեցաւ մի խառն ժողով, ուր ներկայ էին Նիթրան(1), *Բիւրոյի ներկայացուցիչ, կոմիտէի անհատները եւ մի քանի ներկայացուցիչ պարոններ։ Այդ ժողովի մէջ վճռուեցաւ անմիջապէս ձեռնարկել արշաւանքի պատրաստութեան եւ առանց ուշանալու եւ ամբողջ ոյժով արշաւանք կատարել։ Երկրորդ, Վանի համար նշանակել մի ներկայացուցիչ եւ ամէն կերպով աշխատել արշաւանքից առաջ մի փոքրիկ խմբով նորան ուղարկել երկրի ներսը. բայց եթէ կոմիտէի համար անկարելի լինի արշաւանքից առաջ ուղարկել ներկայացուցչին, այդ խնդիրը չը կապել արշաւանքի հետ եւ թոյլ չը տալ որ դա արգելք լինի արշաւանքին։*

Ոսկանի(2) *խնդրի համար վճռուեցաւ որ նա մի բողոք ներկայացնի Բիւրոյի ներկայացուցչին, որը նորան գրաւոր կերպով կը պատասխանի թէ նա կը ճանաչուի կազմակերպութեան անդամ մինչեւ ձեռնհաս հեղինակութեան կողմից քննուի նորադատը եւ պաշտօնական յայտարարութիւն տրուի նորա յանցաւորութեան կամ անմեղութեան մասին։ Իսկ մինչեւ այդ նա կարող է մասնակցել արշաւանքին։*

Ոսկանի խնդրի վերաբերութեամբ տրուած վճռի առաջարկը եղաւ Բիւրոյի ներկայացուցչի կողմից, որը եւ վերցրեց իւր վրայ այդ վճռի պատասխանատուութիւնը(3)։

ՆԻԹՐԱ, ԲԻԾԱ, ԱՐԲԱԿ, ՄԱՆՈՒԿԵԱՆ, ՅՈՎՍԷՓ, ԱՐՇԱԿ, ՀԱՅԿԱԿ, ԱԽԲԷՐ, ԵՓՐԵՄ, ՄԻՔԱՅԷԼ, ԱՒԵՏԻՍ, ԹՈՐՈՍ, ՎԱՐԴԱՆ, ԿԱՐՕ, ՔԱՐՈՒՇՅԻ ՎԱՀԱՆ, ՏԻԳՐԱՆ, ՍԱՔՕ, ՆԻԿՕԼ

1.- Նիթրա – ծածկանուն Շահրիկեան Յարութիւնի:

2.- Ոսկան, Ոսկան Զադէ – բուն անունով Զադոյեան – Նազարեան Ոստանիկ: Նախկին արմենական, 1893ին յարած Դաշնակցութեան: Շարք մը անկարգութիւններու համար, Սալմաստի կոմիտէն 1897 թ. Մայիս 23-ին որոշած էր զինք հեռացնել Հ.Յ.Դ. շարքերէն: Դաշնակցութեան բիւրոյի ներկայացուցիչ Յ. Շահրիկեան (Նիթրա) բեկանելով կոմիտէի վճիռը՝ կ՚արտօնէ Ոսկան-Զադոյի մասնակցութիւնը Խանասորի արշաւանքին:

3.- Գրութեան ձեռագիրը կը պատկանի Յովսէփ Միրզայեանի (Արբակ) գրչին:

37

Փաստ. 459-73

Նիկոլ Դումանի այս նամակը կ՚ընկերանայ Յովսէփ Միրզայեանի կողմէ «Դրօշակ»ի խմբագրութեան ուղղուած գրութեան մը, ուր վերջինս տեղեկութիւններ կը փոխանցէ Խանասորի արշաւանքի նախապատրաստութիւններուն մասին: Զոյգ գրութիւնները ուղղուած պէտք է ըլլան Թիֆլիս՝ Բիւրոյին:

16/28 *Յունիս* 1897
Սալմաստ

Սիրելի՛ք,

Մեր Թեհրանի կազմակերպութիւնը, տեղական հանգամանքների շնորհիւ, տարբեր պիտի լինի ուրիշ տեղերից, բայց ո՛չ հակառակ ծրագրի ոգուն: Ուրիշ տեղեր, ուր որ կան դաշնակցական խմբեր, կազմակերպւում են կոմիտէներ: Բայց որովհետեւ մեր Թեհրանի խմբերը անձնական յարաբերութիւնների ու տեղական հասարակական գործերի տեսակէտից շատ էլ համակիր չեն իրարու եւ դրանցից խառն կամ որեւէ կուսակցութիւնից ընտրութիւն կատարելը անխուսափելի կերպով կ՚առաջացնի ներքին խռովութիւն եւ պառակտում,— դրա համար էլ այդ ոյժերից չը զրկւելու եւ չարիքի առաջն առնելու դիտաւորութեամբ՝ Յովսէփը խնդիրը դրել է ներկայացուցչական հողի վրայ: Նա նպատակայարմար է գտել, որ դրսից մէկը — չէզոք յեղափոխական գործից դուրս տեղական խնդիրներում — ներկայացուցիչ անուան տակ՝ անցնի գործի գլուխը, ամէն մի խմբի հետ լինի յարաբերութեան մէջ եւ ջոկ-ջոկ մղի դէպի գործունէութիւն: Նպատակայարմար գտածը իրագործել է աջողութեամբ եւ ներկայացուցչութիւնը սկսել է Պապեանով(1) որը առայժմ գործում է բաւականին աջող: Եւ որովհետեւ ներկայացուցիչը յարաբերութեան մէջ պիտի լինի նաեւ Թեհրանին մօտիկ Թուրանի(2) միւս քաղաքների հետ, դորա համար բարւոք է համարել «ներկայացուցչի» համար խնդրել կնիք, քանի որ «այս վարդի եւ բլբուլի աշխարհում» գործը չի անցնում առանց «մէօհուրների»:

Գիտենք, որ «Դաշնակցութեան ներկայացուցիչ» արտայայտութիւնը շատ ծանր պատասխանատուութիւն է պարունակում իր մէջ: Բայց մենք մեր ծրագրի մէջ ունինք աւելի թեթեւ արտայայտութիւն՝ «գործակալ» բառով: Կարծում ենք, որ եթէ պատրաստել տայիք մի կնիք՝ «Հ. Յ. Դաշնակցութեան Թուրանի գործակալ» վերտառութեամբ,— դա չէր հակասի մեր ծրագրի ոգուն եւ ենթադրեալ չարիքների պատճառ չէր դառնայ: Ապագայում դժւար չէր լինի կնիքն ի զուր գործածողներին պաշտօնանկ անել, արձակել, կնիքը ձեռից առնել կամ նրա նշանակութիւնը առ ոչինչ հրատարակել եւայլն:

Համբոյրներ՝ Նիկ.

1.- Գաբրիէլ Պապեան, Լիլաւայի Հայկազեան դպրոցի տեսուչ:
2.- Պարսկաստանի:

38

ՄՈՒՐՀԱԿԻ ՆՄՈՅՇՆԵՐ

Պատրաստուելով Խանասորի արշաւանքին՝ Դաշնակցութիւնը դրամական սուր կարիքի մէջ էր եւ ստիպուած էր փոխառութիւններ կնքել: Իբրեւ նմոյշ, առաջ ենք բերում երկու մուրհակ, գրուած Նիկոլ-Դումանի ձեռքով: Ստորագրողները Ն. Տ. Յովհաննէսեան (Նիկոլ-Դուման) եւ բժ. Ք. Օհանեան Սալմաստի կոմիտէի անդամներ էին, իսկ Յ. Շահրիկեանը՝ Բիւրոյի ներկայացուցիչ [Ս. Վ.]:

7 յուլիս 1897 *թ.*,
Ղալասար (Սալմաստ)

Մուրհակ 5,000 *ղռանի*

Մենք, ներքոյ ստորագրողներս, ցպահանջ պարտ ենք պ. Աւետիք Ս. Արզումանցին հինգ հարիւր պարսկական թուման՝ ընթացիկ տոկոսով։

ՆԻԿՈՂԱՅՈՍ ՏԷՐ ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆ
ԲԺ. ՔՐԻՍՏՕՖՕՐ ՕՀԱՆԵԱՆ
Յ. Յ. ՇԱՀՐԻԿ

---

16 *յուլիս* 1897 *թ.*, *Սալմաստ*

Մուրհակ 2,000 *ղռանի*

«Հ. Յ. Դաշնակցութիւնը» ցպահանջ պարտ է եղբարք Բուդաղեանցներին երկու հազար պարսկական ղռան՝ ընթացիկ տոկոսով։

Դաշնակցութեան կողմից՝
ԲԺԻՇԿ Ք. ՕՀԱՆԵԱՆ
ՆԻԿՈՂԱՅՈՍ ՏԷՐ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ
Յ. Յ. ՇԱՀՐԻԿ

Հ.Յ.Դ. կնիք

39

Թղթածրար թիւ 1648

Խանասորայ արշաւանքին վերաբերող նիւթեր պարունակող թիւ 1648 թղթածրարին մէջ գտնուող այս երդումնագիրը հրատարակելով՝ Սիմոն Վրացեան կը գրէ հետեւեալը.– («Դիւան Հ.Յ.Դաշնակցութեան», Բ. հատոր, էջ 72):

«Արշաւանքի մեկնելուց առաջ հայդուկները եւ իրենց հրամանատարները ստորագրեցին հետեւեալ երդմնագիրը՝ գրուած կարմիր թանաքով: Երդմնագրի հեղինակը ըստ երեւոյթին Սարգիս Օհանջանեանն է (Ֆարհատ). ձեռագիրը նրանն է»:

Յայտնենք որ 9րդ ստորագրութիւնը Նիկոլ Դումանինն է:

ԵՐԴՄՆԱԳԻՐ

Մենք՝ որ ազատ կամքով խմբուել ենք Հայ Յեղափոխական Դաշնակցութեան յաղթական դրօշակի տակ մարտնչելու յանուն տառապեալ Հայրենիքի ազատութեան սրբազան գաղափարի, մենք՝ յեղափոխական ամէն կարգի հայդուկներս մեր ազատ կամքով տալիս ենք այս երդմնագիրը մեր կուսակցութեան եւ որպէս գրաւական մեր անկեղծ ու անսուտ խոստման,

Երդւում ենք Քրիստոսի ազատարար խաչով
Երդւում ենք տառապեալների պաշտպան քաջազնական սրով,
Երդւում ենք բռնութիւնը կործանող հրացանների որոտմամբ՝
Որ չենք դաւաճանի ՀԱՅՐԵՆԻՔԻՆ,
Որ չենք դաւաճանի «Դաշնակցութեան Սրբազան Դրօշակին»,
Որ չենք դաւաճանի ընկերական սուրբ պարտականութեան,
Որ չենք դաւաճանի հայդուկի վեհ կոչման,
Որ չենք դաւաճանի մեր քաջազնական զէնքերին,
Որ չենք դաւաճանի մեզ ղեկավարողներին։

Մենք պարտաւորւում ենք մինչեւ մեր արեան վերջին կաթիլը, մինչեւ մեր յետին շունչը մեր ամբողջ զօրութեամբ պաշտպանել մեր Դրօշակը, մեր ընկերներին եւ մեզ ղեկավարողներին ...

Այդ է պահանջում հայրենիքի ազատութեան սրբազան գաղափարը.
Այդ է պահանջում իսկական հայդուկի բարձր կոչումը.
Այդ է պահանջում ընկերական, մարդկային պարտքը.

Մեր ՍՈՒՐԲ ՈՒԽՏԸ հաստատում եւ վաւերացնում ենք մեր սեփական ստորագրութեամբ.—

1897 *թ. Պարս.—Տաճ. սահման։*

1897 թ. կէսերէն մինչեւ 1903 տարիներու միջեւ ինկող ժամանակամիջոցին Նիկոլ Դումանէն սակաւաթիւ նամակներ միայն հասած են մեզի: Ո՛չ մէկ գրութիւն, մանաւանդ 1897 թ. Յուլիս 25-ին տեղի ունեցած Խանասորի նշանաւոր արշաւանքին առիթով. արշաւանք՝ որուն գաղափարը յղացողը, պաշտպանողը եւ մինչեւ վերջ անյողդողդ հետապնդողը հանդիսացած էր Ն. Դուման:

Արշաւանքի գաղափարը ջերմ ընդունելութիւն գտած էր մարտական որոշ շրջանակներու մօտ, բայց եւ ունէր հակառակորդներ, ինչպէս Վարդանը (Մեհրաբեան Սարգիս) ու, մասնաւորաբար, Յովսէփ Արղութեանը – մարտական վաստակ ունեցող դէմքեր,– որոնք անհնար կը գտնէին չափուիլ սահմանէն այն կողմ գտնուող քրտական Մազրիկ ցեղախումբին հետ. անոնք նախընտրելի կը համարէին փոքրաթիւ խումբերու եւ ռազմամթերքի փոխադրութիւնը Վասպուրականի ուղղութեամբ, հոն զօրացնելու համար տեղւոյն ինքնապաշտպանութիւնը: Այս մասին բուռն պայքար կը մղուէր կողմերուն միջեւ մինչեւ իսկ այն ժամանակ, երբ հարիւրաւոր հայդուկներ արդէն հաւաքուած էին Սալմաստի շրջակայքի հայաբնակ գիւղերուն մէջ եւ զգալի քանակութեամբ զէնք-զինամթերք կը կուտակուէր արշաւանքը սկսելու համար: Կողմերու միջեւ շիկացած հակամարտութիւնը, դուրս գալով ղեկավար ընկերներու նեղ շրջանակէն՝ հետզհետէ պիտի վարակէր նոյնպէս երկու ճամբարներու բաժնուած պարզ հայդուկները:

Ն. Դումանի համար խնդիրը չէր կայանար արշաւախումբը անձամբ ղեկավարելուն մէջ. ան պաշտօնապէս յայտարարած էր արդէն, որ պատրաստ է իբրեւ պարզ զինուոր մասնակցելու միայն թէ կայանար այդ արշաւանքը այնպէս՝ ինչպէս որոշուած էր Թիֆլիսի ռայոնական ժողովին, ինչպէս վճռած էր Հ.Յ.Դ. Բիւրոն եւ կը վայելէր անձամբ Քրիստափոր Միքայէլեանի զօրակցութիւնն ու քաջալերանքը: Պէտք էր արժանի պատիժ ստանային սահմանին վրայ հաստատուած քրտական Մազրիկ ցեղախումբն ու իր առաջնորդը՝ Շարաֆ բէկ, որ թուրք պետութեան ձեռքը գործիք դարձած՝ խոչընդոտ կը հանդիսանար հայդուկային խումբերուն Երկիր անցնելուն, որ՝ քարուքանդ էր ըրած սահմանային շարք մը հայկական գիւղեր, որ՝ դեռ նախորդ տարին կոտորած էր լիովին Ատրպատական նահանջող 800 հայ մարտիկներ:

Ի վերջոյ, տեսնելով արշաւանքի հարցին շուրջ ստեղծուած ծայր աստիճան սուր վէճերը, ինչպէս նաեւ ոչ-վճռական կեցուածքը Ատրպատականի Կեդր. կոմիտէին, որ ձայներու բաժանման պատճառով անկարող կը գտնուէր հարցին լուծում մը տալու, Հ.Յ.Դ. Բիւրոն առաքեց իր լիազօր ներկայացուցիչը՝ Յարութիւն Շահրիկեան, որ Յուլիս ամսուան սկիզբը Թիֆլիսէն գալով, կողմերը հաշտեցուց որոշ չափով, պարտադրելով սակայն արշաւանքի կայացման մասին վերին մարմիններու կողմէ տրուած որոշումներուն գործադրութիւնը: Այսուհանդերձ, հրամանատարական կազմի ընտրութեան ժամանակ մեծ անարդարութիւն գործուեցաւ Բողազ-Քեասանի եւ բազմաթիւ այլ մարտերու մէջ հռչակ ու ժողովրդականութիւն շա-

հած Ն. Դումանի նկատմամբ. վերջինս արշաւանքին պիտի մասնակցէր պարզ յիսնապետի հանգամանքով: Հրամանատար ընտրուեցաւ Վարդան, իրեն օգնական՝ Իշխան (Յովսէփ Արղութեան),– անոնք որ մինչ այդ բուռն կերպով հակառակած էին արշաւանքի գաղափարին:

Խանասորի գործողութենէն ետք, Ն. Դուման նախ անցաւ Թիֆլիս, ապա Պաքու, ուր շուրջ տասնամեակ մը իբրեւ պաշտօնեայ պիտի աշխատէր նաւթարդիւնաբերական ընկերութիւններու մօտ: Միաժամանակ ան գործօն մասնակցութիւն պիտի ունենար տեղւոյն կուսակցական կեանքին. տարիներ շարունակ կ՚ընտրուէր անդամ Հ.Յ.Դ. Ոսկանապատի Կեդր. կոմիտէին: Ինչպէս յայտնի է, 1905 թ. հայ-թաթարական ընդհարումներու ատեն, Պաքուի հայկական թաղերուն վրայ յարձակող թաթարներուն դէմ կանգնելով՝ Ն. Դումանի ղեկավարած խմբակն էր որ ուժգին հակահարուածով պիտի յաջողէր փախուստի մատնել ջարդարարներու խուժանը:

Ե. Փ.

Խանասորի արշաւանքի հրամանատարական կազմը:

Ոտքի, ձախէն աջ՝ Սեւքարեցի Սաքօ, ղարաբաղցի Կոլիա Ասրիբէկեան, Արիստակէս Զօրեան (Կարօ), Իշխան Յովսէփ Արղութեան (հրամանատարի օգնական), արշաւանքի հրամանատար՝ Վարդան Մեհրաբեան, շատախեցի Փոխիկ, Թորոս (Գալուստ Ալոյեան), բժ. Քրիստափոր Օհանեան:

40

Փաստ. 460-67

Նիկոլ Դուման Թիֆլիս է, ուր իբրեւ հրաւիրեալ գործիչ, կը մասնակցի հոն գումարուող Հ. Յ. Դաշնակցութեան երկրորդ Ընդհ. ժողովին: Նամակը ուղղուած է Ատրպատականի ընկերներէն մէկուն:

18 *Մայիս*, 1898
Թիֆլիս

Սիր.

Երեւի չես մոռացել, որ այստեղ ձերբակալուած Համբարձում Սարգսեանի համար խնդրել էի անցագիր, որին այլեւս պէտք չը կայ։

Էրէգ, էտապով նրան ճանապարհ դրին դէպի ձեր կողմերը։ Նախապատրաստուեցէք այդտեղ հասնելուն պէս նրան ազատ թողնել տալու համար։

Ըստ երեւութին՝ մեր գբաղմունքը դեռ կը շարունակւի առնուազն երկու շաբաթ։ Ժամանակին կը ստանաք մանրամասնութիւնը։

Դեռ յայտնի չէ, թէ որտեղից ո՛վ կը գայ եւ ե՛րբ։

Անշուշտ ստացած կը լինիք՝ Բագուից 200 *ռ.*, *Երեւանից* 300, *Թիֆլիսից* 200 *եւ* 300։

Բարեւներ։
Նիկ.



Գալուստ Ալոյեան (Դարվիշ)

41

Փաստ. 460-123

13 *Օգոստ.* 98
Բագու

[*Ատրպատականի Կեդր. Կոմիտէին*]

Սիր.

Փա՛ռք... Վերջապէս էրէգ միաժամանակ ստացայ նամակներ Թորոսից եւ Սամսոնից(1), *հետն էլ մի հաշուեցուցակ։ Զարմանում էք, որ գրում եմ թէ՝ տեղեկութիւններ չունիմ այդտեղի մասին, բայց զարմանալու ոչինչ չը կայ։ Մինչեւ Մայիսի վերջերը շատ քիչ տեղեկութիւններ են հասել Մեծ-քաղաք*(2), *իսկ այնուհետեւ, երբ ես հեռացել եմ այնտեղից, բոլորովին կտրւել եմ այդտեղի տեղեկութիւններից, ինչպէս իւրաքանչիւր ոք այստեղի մերոնցից։ Երեւի, ըստ նախկին սովորութեան, աւելորդ են համարում տեղեկութիւններ տալ։ Երեւակայեցէք, որ օրիորդի*(3) *այս կողմերը լինելու մասին էրէգւայ նամակներից միայն իմացայ։ Գիտէի, որ այդ պետութեան մէջ մարդիկ կան, գիտէի յականէ անուանէ, բայց ի՞նչ գիտնայի թէ՝ ով ո՞ր ծակն է մտել եւ ի՛նչպէս կարելի է նրան նամակ հասցնել ապահովապէս։ Այժմ գիտեմ, որ Թորոսն էլ շուտով կը լինի Սամսոնի*(1) *մօտ, գիտեմ, թէ ո՛րտեղ է Սամսոնը եւ ահա՛ գրում եմ առանց ուշացնելու։ Հարսանիքի մասին*(4) *ոչինչ չեմ գրի, որովհետեւ Շ-ցի Ուսէփն արդէն այդտեղ կը լինի եւ բերած կը լինի նկարագրութիւնը. հակառակ դէպքում նա գոնէ ընդունակ կը լինի բերանացի ասելու եզրակացութիւնները, եւ դա առ այժմ բաւական է Ձեզ։ Եթէ չունենաք եւ անպատճառ ուզենաք ունենալ մանրամասնութիւններ՝ Գագիկի միջոցով հարցրէք Արբակից*(5)։ *Նա 3-4 օր առաջ անցաւ իր ծննդավայրը։ Գիտենալու յարմար ձեւը դա՛ է։ Ցիշեցնում էք ձեր ընթացիկ ծախքերն ու պարտքերը եւ դրանցից յառաջացած նեղ վիճակը։ Բոլորը գիտեմ եւ առանց յիշեցնելու միշտ մտել եմ ու մտնում եմ ձեր դրութեան մէջ։ Մինչ այժմ եղած փոքրիկ փոխադրութիւնները կատարել ենք կռիւ ու ղալմաղալով։ 2-3 որ առաջ կռւում էի Նիթրայի*(6) *հետ (նա այստեղ պաշտօնի մէջ է)։ Մեղադրում էի նրան, որ Մինարէթում*(7) *եղած ժամանակ շարունակ պահանջում էր պարտք վերցնել, խոստանալով Մեծ-քաղաք հասնելուն պէս փոխադրութիւն կատարել։ Այժմ անցել է վրայից աւելի քան մի տարի եւ նա իր ձայնը չի բարձրացնում այդ պարտքերի վճարման համար։ Շատերին եւ շատ եմ մեղադրել, բայց ի՞նչ օգուտ։ Պահանջում ենք այստեղ, ասում են՝ դա Մեծ-քաղաքի գործն է։ Պահանջում ենք այնտեղ, պատասխանում են. «Ուրախութեամբ, բայց չկայ»։ Պահանջում ենք թոյլտուութիւն, որ ինքներս գտնենք։ Տալիս են այդ թոյլտուութիւնը, բայց «մեր շրջանի սահմաններից դուրս», այսինքն մեզ*

դնում են այնպիսի պայմանների մէջ, որ ոչինչ չենք կարող անել։ Ուրեմն լուռ չենք, բայց անցնում է ի զուր, ինչպէս եւ ձեր պահանջները։ Եթէ կարող էք ձեզ մեղադրել, մեղադրեցէք ե՛ւ մեզ։ Թորոսն ուզել էր Մխիթարի(8) հասցէն։ Նա այժմ Պետերբուրգումն է, գնացել է քննութիւն տալու։ Հասցէն ուղղակի իրենն է, ց՝պահանջ, բայց անյարմար է այդտեղից նամակ գրել։ Բինօկլները(9) ստացել ենք եւ չինել տրւած են արդէն։ Թերթեր ստացւում են, բայց թէ ո՞րտեղից — ճիշտն ասած — չը գիտեմ։ Մինարէթի համար կազմւած է Ժամանակաւոր Պատասխանատու մարմին՝ Թորոսից, Սամսոնից եւ երրորդը՝ չը գիտեմ, Փոխիկից, թէ Ախպօրից(10)։ Ուսէփը եւ Հաջին ուրիշների հետ պէտք է անցնեն իրանց հայրենիքը, առաջինը ներկայացուցչի պաշտօնով, իսկ երկրորդին չէ տրւած որեւէ պաշտօն, կարծեմ նրան յանձնել են Ուսէփի բարեհայեցողութեան։ Հա՛. Վրէժ(11) եկող գործակատարները հաւաքւելուց յետոյ՝ Մինարէթի համար կը կատարեն Պատասխանատու մարմնի նոր ընտրութիւնը եւ Ժամանակաւորը լուծւած կը համարւի։

Ես չեկայ, որովհետեւ պայմաններս չընդունեցին։ Յայտնեմ իմ առաջարկած պայմանները։

1) Պարտքերի մի մասը վճարելու եւ ընթացիկ ծախքերի համար կանխիկ 2000 ռուբլի, իսկ մնացածի համար՝ մարդու խօսք։

2) Ուսէփին եւ Հաջուն ուղարկեն իրանց հայրենիքը կամ ուր կ՝ուզեն, պաշտօնով կամ անպաշտօն՝ ինչպէս կ՝ուզեն, միայն թէ հեռու լինին Մինարէթից։

3) Մնացածները յայտնի սէգոնում զբաղւին փոխադրութեան գործով, սէգոնն անցնելուց յետոյ, նայելով յարմարութեան ու հնարաւորութեան, կամ մնան հայրենիքում, կամ անցնին Կովկաս. կարճ ասած՝ 7-8 ամիս պարապ չը թափւին այդտեղ, որի հետեւանքը արդէն մի քանի անգամ փորձւած է մեր կաշւի վրայ։

4) Մինարէթի կոմիտէն լինի ոչ թէ ընտրովի (որի հետեւանքները գիտենք) այլ նշանակովի, եւ նշանակեն ո՛չ թէ հեռաւոր, մարդկանց ու տեղական պայմաններին անծանօթ հաստատութիւններ (օր[ինակ] Բիւրօն), այլ Մինարէթում եւ Վրէժում գտնւող բանիմացները։

Եւ այսքան քիչ, այսքան տարրական ու անհրաժեշտ պայմանները չընդունեցին, որի պատճառով ստիպւած եղայ կարդալ հրաժարականս։ Բագւում շուտով մասնաւոր գործի կը ձեռնարկեմ, իսկ թէ այդ գործը մինչեւ ո՞ւր կը տանի ինձ,— չը գիտեմ։

Դրամի համար այստեղից ոչինչ չենք կարող անել. պարոնները ցրւած են ամարանոցներ։ Նիթրան(5) 2 օրից յետոյ գնում է Մեծ-քաղաք։ Պինդ-ա-պինդ կ՝ապսպրենք, տեսնենք ինչով կը վերջանայ։ Ուսէփը, կարծեմ, հետը փող է բերել, բայց որքանութիւնը չը գիտեմ։ Կարող էք առժամանակ օգտւել՝ ի հարկէ։

Թ[որոս]ին ասացէք, որ անդորրագրերը ստացայ։ Բայց որովհետեւ ամէնքն արդէն ամարանոցներումն են, ուրեմն ցրելը մնաց Սեպտեմբերին։ Էլի պարսկական ձեւով են գործ կատարում։ Անդորրագրերի վրայ տպած է «ամսական

20 կոպ[էկ]», եւ ձեռագրով, քիչ յետոյ, աւելացրած՝ «տարեկան 5 ռուբլի»։ Այդ էլ եօլա կը տանենք, բայց վերջապէս հարկաւոր է ընտելանալ կանոնաւոր գործավարութեան։ Համբոյրներ։

Հասցէ՝— Բալախանի (Բագու), Նեֆտեպրովոդ փ.(12),
Մկրտիչ Սահակեան
Տալ Նիկողոսին։

Թորո՛ս.— Պետրոսեան հարստացել է եւ քո բարեկամն է, բայց անյարմար է այլեւս նրա հասցէով նամակ գրել։ Թո՛ղ այդ հասցէով Թաթոսն էլ չուղարկի։

Ն.

1.- Թորոսը, նաեւ Դարվիշ ծածկանունով ծանօթ, Ալոյեան Գալուստն է, իսկ Սամսոնը՝ Թադէոսեան Ստեփան, յայտնի նաեւ Գարեգին ծածկանունով։
2.- Թիֆլիս։
3.- Հաւանաբար Սաթենիկ Մատինեանը։
4.- Հարսանիքը՝ ականարկութիւն է 1898 Ապրիլին Թիֆլիս (Մեծ-Քաղաք) գումարուած Հ.Յ.Դ. երկրորդ Ընդհ. ժողովին, որուն մասնակցած էր Նիկոլ Դուման՝ գործիչներու շարքին։
5.- Արբակ Ռշտունի՝ Միրզայեանց Յովսէփ, որ նոյնպէս իբրեւ գործիչ (Պարսկաստանէն) ներկայ էր Ընդհ. ժողովին։
6.- Նիթրա – ծածկանուն Յարութիւն Շահրիկեանի։
7.- Սալմաստի կուսակցական ծածկանունը։
8.- Մխիթարը՝ Խանասորի արշաւանքին ծանօթ բժիշկն է՝ Քրիստափոր Օհանեան։
9.- Երկաչեայ դիտակները։
10.- Երկուքն ալ մասնակցած էին Խանասորի արշաւանքին հարիւրապետի աստիճանով։ Փոխիկի իսկական անունն էր Օհանեան Օհան, իսկ Ախպէրը, ծանօթ նաեւ Մոկացի Յարութիւն անունով, Դաւթեան-Փոլատեան Յարութիւնն է։
11.- Ատրպատական, Թաւրիզ։
12.- Հասցէն՝ ռուսատառ։

42

Փաստ. 460-148

Պաքուէն, ուր նաւթարդիւնաբերական հաստատութեան մը մէջ կ՚աշխատէր Նիկոլ Դուման, կը գրէ Թաւրիզ Յոնան Դաւթեանին:

26 *Հոկտ.* 1898
Բալախանի

Սիրելի Յոնա՛ն,

Նախորդ նամակիս (քեզ գրած) պատասխանը չը կայ։ Թէ ինչո՞ւ — ինքս էլ չը գիտեմ։ Պետրոսին(1) *էիք ուզում. ահա՛ գալիս է նա։ Կրկնում եմ, որ ներկայ հանգամանքներում, նրա պահանջման եւ իմ խոստման համաձայն,— չը պէտք է այդ մարդուն տեղեկութիւններից կտրել։ Նա նոր մարդ չէ. դժգոհութեան առիթ չը տալու համար՝ կարելի է եւ պէտք է մասնակից անել նրան ձեր ստացած տեղեկութիւններին ու նամակներին. սահմանը ձեր գործն է։*

Մէկ էլ եմ ասում, որ պէտք չը կար ներկայ պայմաններում մարդիկ հաւաքել այդտեղ։ Բայց քանի որ սրա գալը ձեր ու Մեծ-քաղաքի(2) *ցանկութիւնն է (նրանք էլ են գրել ինձ), թո՛ղ այդպէս լինի։*

Տալով համբոյրներս՝ առ այժմ բաւականանում եմ այսքանով մինչեւ նամակ ստանալս քեզանից։ Հասցէս տուել եմ նախորդ նամակովս, նոյնը տալ կարող է նաեւ գրաբերս։

Քո
Նիկ.

1.- Զինագործ Պետրոսն է (Բագրատ Տէր Յովհաննիսեան), Դաշնակցութեան Թաւրիզի զէնքի արհեստանոցին վարպետը:
2.- Թիֆլիս, այլ խօսքով՝ Արեւելեան բիւրոյի:

43

Թղթածրար No 1855

Ձեռագիրը ունի 1890 թուականը, որուն մօտ մատիտով դրուած է հարցական նշան: 1890-ը ակնյայտնի սխալ է. ուղղեցինք 1899-ի: Արդարեւ, Յ. Դաւթեան իր զուիցերուհի կնոջ՝ Հորտանսի հետ Թաւրիզ վերադարձած էր 1898-ին: 1899 թ. Մայիսին ծնած էր իրենց մանչ զաւակը՝ Թորոս-Լեւոն: 1899 թ. Օգոստոս 11-ին Յ. Դաւթեան Ռոստոմին գրած իր նամակին մէջ կը խօսի կնոջ՝ ծննդաբերութենէն ետք անցուցած ծանր հիւանդութեան մասին: (Տես Խ. Գրիգորեան – Յոնան Դաւթեան (Նամակներ), Բ. հատոր, Երեւան 2004, էջ 126): Այլապէս նաեւ, պաշտօնաթուղթը, որուն վրայ կը գրէ Ն. Դուման, կը պատկանի այն հաստատութեան, ուր կը պաշտօնավարէր վերջինս 1899 թուականին (Բաքու-Սաբունչի, Տէր Ակոբովի մթերքների գործարան):

БАКИНСКАЯ КОНТОРА
Сабунчинск. Нефтян. промысловъ
и ВАРИНСКИХЪ ЗАВОДОВЪ
И. Н. ТЕРЪ-АКОПОВА.
ГЛАВНАЯ КОНТОРА:
МОСКВА,
Варварка домъ Страх. Общества „Якорь."
КОНТОРЫ:
въ С.-Петербургѣ, Баку, Сабунчи и Астрахани.
АГЕНТСТВА:
въ Серпуховѣ и для заграницы въ Гамбургѣ.

Պաքու, 11 *Յուլիս*, 1899

Սիրելի Յոնան,

Ստացայ նամակդ, բայց երանի թէ ստացած չը լինէի այդպիսի բովանդակութեամբ: Է՛հ, այդ էլ տար: Գնացածը արդէն գնաց, միայն մնացածը պէտք է պինդ պահել: Ես կ՚աշխատեմ, որչափ ոյժերս կը ներեն: Այժմ միայն դժուար կացութեան մէջ եմ: Հայկը չը կայ, գնացել է ամարանոց: Միւս մասնակցողներին այժմ դիմելը ապարդիւն կը լինէր: Ուզում եմ Յորտանսին նպաստելու գործին մասնակցել տալ նոր մարդկանց, այնպիսի մարդկանց, որոնք եթէ ո՛չ լրացնէին, գոնէ մօտենային 200-*ին* [*ռուբլի*]: *Բայց դժբախտաբար չատ-չատերը ցրուած են ամարանոցներ: Այստեղ եղող* 2-3-*ին ի նկատի ունիմ, որոնց հետ կը խօսեմ այս քանի օրը: Մինչ այս, մինչ այն — քո նեղ կացութիւնը թեթեւացնելու համար — այսօր սրա հետ փոխադրում եմ մի հարիւր ռուբլի:*

Յաւում եմ, որ աւելին անելու հնարաւորութիւն չունիմ: Մի՛ ընկճուիր, կը թափենք բոլոր հնարաւոր ջանքերն ու միջոցները: Առ այժմ այսքանը. չտապում եմ բանկ:

Յորտանսին բարեւիր եւ մխիթարիր: Ինքդ էլ ընդունիր համբոյրներս:

Քո՝ Նիկ.

44

Փաստ. 322-1

Նիկոլ Դումանի ձեռագրով շարադրուած հաւաքական նամակ, ստորագրուած 6 հոգիի կողմէ: Ծածկանուններէն ծանօթ են, բացի Ն. Դումանէն, Աբր. Գիւլխանդանեան (Աբրամովիչ), Քրիստափոր Միքայէլեան եւ Յար. Շահրիկեան (Նիքրա): Յետ գրութեանը կը պատկանի այս վերջինի գրիչին: Գրուած է Պաքուէն, ուր այդ օրերուն կը գտնուէր Քրիստափոր, եւ ուղղուած Ատրպատականի կուսակցական մարմիններէն մէկուն, Կեդր. կոմիտէին կամ ուղղակի Սալմաստի կոմիտէին (Սինարէթ):

Յայտնենք որ Պաքու գտնուած տարիներուն, Նիկոլ Դուման առհասարակ կ՚անդամակցէր Ոսկանապատ-Պաքուի Կ. կոմիտէին:

5 *Փետր.* 1903
Բալախանի

Ընկերնե՛ր,

Ամբողջ հինգ տարի շարունակ ու անվերջ, համարձակ ու անպատիժ, մինը միւսից աւելի խայտառակ, Մինարէթում(1) *յաջորդում են իրար գարշելի դէպքեր։ Բռնութիւններն ու բռնաբարումները, լկումներն ու առեւանգութիւնները, սպանութիւններն ու այլ գազանական գործողութիւնները ստեղծեցին զզուանքի մի հեղեղ, որ ողողեց ամբողջ աշխարհը եւ, իբրեւ արատ ու նախատինք, «ենիչերի» անունը դրոշմեց հայդուկի ճակատին ժողովրդի բերանից։ Հայդուկների այդ զազրելի արարքներից ժողովուրդը սեւ քող հիւսեց եւ ձգեց նրան «ֆիդայիի» փառաւոր անուան վրայ։ Եւ, իբրեւ տխուր արձագանք, հայ մամուլը բարձրացրեց իր ձայնը, նրան միացաւ օտար մամուլը, նոյնիսկ «Դրօշակ»ը բողոքեց բարձրագոչ։*

Իսկ դուք, ընկերնե՛ր, որ միշտ ականատես էք այդ գարշելի արարքներին, որ շարունակ ենթակայ էք նեռուող լուտանքներին, սպասում ենք, որ դուք եւս կորցնէք համբերութեան սահմանը եւ սրբէք զէնքով այդ ամօթն ու արատը։

Գիտենք, ծանր բաժին է վիճակուում Ձեզ — դժուար է զէնքը թշնամուց դարձնել դէպի նախկին ընկերը — բայց, ցաւելով պիտի ասենք, որ այդ է մնացել միակ ելք, որ մաքրելով ասպարէզը թէկուզ այդ ձեւով՝ կը լինի մեծագոյն գործերից մէկը ներկայ պարագաներում։

Այդ նպատակի եւ այդ ուղղութեամբ գործելու համար՝ մենք որոշել ենք,

եթէ հա՛րկ լինի, տալ Ձեզ երկու մարդ եւ 500 ռուբլի դրամ։ Դրանցից որի մէջ կարիք ունենաք՝ իսկոյն հաղորդեցէք մեզ, որ հասցնենք Ձեզ անմիջապէս։ Ընկերական բարեւներ։

Ոսկանապատի Կոմիտէի
անդամներ եւ
ներկ[այացուցիչներ]
Բիւրօների(2)



ՆԺՈՅԳԵԱՆ

ԱԲՐԱՄՈՎԻՉ

ՔՐԻՍՏԱՓՈՐ

ԴՈՒՄԱՆ

ՆԻԹՐԱ

ԲԱԲԱՆԻԿ

Յ. Գ.— Բժիշկ Թաշճեանի յանձնարարութիւններ անելէ զգուշանալ է հարկաւոր։ Այս զգուշացնումը պարտաւորող դէպքի մանրամասնութիւնը յաջորդիւ գրելու խոստմամբ։

Կրկնում եմ ընկերական բարեւներս
ՆԻԹՐԱ

Այս նամակի ստացման համար տեղեկութիւն տուէք մեզ։

1.- Սինարէթ – ծածկանուն Սալմաստի:

2.- Բիւրոներ՝ յոգնակի է գրուած: Արդարեւ, 1898 թ. Հ.Յ.Դ. երկրորդ Ընդհ. ժողովի որոշմամբ կեանքի կը կոչուէին երկու բիւրոներ,– Արեւելեան՝ Թիֆլիս կեդրոնով, եւ Արեւմտեան՝ Ժընեւ կեդրոնով:

45

Փաստ. 322-3

Նիկոլ Դումանի այս, ինչպէս նաեւ յաջորդ՝ 22 եւ 24 Ապրիլի գրութիւնները այլաբանական իմաստ ունին: Հարցը Պաքուէն դէպի Սալմաստ ուսուցիչներ ուղարկելուն չի վերաբերիր բնաւ, այլ այդ անուան տակ նախորդող՝ 3 Փետրուարի ազդարարագրով յանձնարարուած խնդրին իրագործումը, որուն համար, ինչպէս Ն. Դուման կը գրէ, կ՚ուղարկեն եւ՛ անհրաժեշտ գումարը, եւ՛ «անկարգութիւններ» գործող տարրերը պատժելու սահմանուած անձերը:

21 *Մարտ* 1903
Բագու

[*Սալմաստի (Մինարէթ) կոմիտէին*]

Յարգելի բարեկա՛մ,

Ես խոստացել էի ուղարկել Ձեզ երկու ուսուցիչ եւ հինգ հարիւր ռուբլի փող: Ուսուցիչները գտնուել են արդէն, միայն թէ այստեղ մի փոքր գործ ունին, աւարտելուց յետոյ ճանապարհ կ՚ընկնեն անմիջապէս: Երեւի այդ գործերի համար ստիպուած կը լինին սպասել այստեղ մօտ 3 շաբաթ: Ես մտադիր եմ նրանց ուղղակի Ձեզ մօտ ուղարկել, որպէս զի անձամբ տաք կարեւոր հրահանգները եւ ապա թէ ճանապարհ ձգէք իրանց համար նշանակած տեղը: Իսկ եթէ դուք հարկաւոր էք համարում, որ նրանք գնան ուղղակի իրանց համար նշանակած տեղը եւ այնտեղ ստանան հրահանգներ, խնդրեմ այդ դէպքում հաղորդէք ինձ շուտափոյթ:

Ինչ վերաբերում է փողին, խոստացած 500 *ռուբլուց* 200-*ը արդէն յանձնեցի Եղ. Թումանեանցներին եւ փոխանակագիրը ներփակում եմ: Այդքանը, կարծում եմ, բաւական կը լինի նախապատրաստական ծախքերի համար: Մնացածն էլ կը ստանաք իր ժամանակին:*

Յարգանօք՝
Նիկ.

46

Փաստ. 322-4

Ոսկանապատ, 22 *Ապրիլ* 1903

Սիրելի բարեկա՛մ,

Ձեր նամակը ստացել եմ. երկու ուսուցիչներին ուղարկում եմ։ Ինձ մնում է փոխադրել խոստացած նպաստի մնացորդը, որը կը կատարեմ վաղը կամ միւս օրը։ Իսկ մնացածը արդէն ձեր գործն է։

Ուղարկուողները միայն գիտեն, որ իրանք ուսուցչութեան պաշտօն պիտի ստանան, բայց թէ ո՞ւր եւ ի՞նչպէս, կամ ի՞նչ առարկաներից — այդ մասին ոչինչ չը գիտեն, որովհետեւ ես ինքս չը գիտէի որ հաղորդեմ եւ կարիք էլ չկար առանձին։ Նրանցից Խէչոն այդ կողմերում եղած է եւ ինձ վաղածանօթ։

Յարգ. ՆԻԿ.

Կ՚ուզէի ձեր ուշադրութիւնը հրաւիրել մի կէտի վրայ. ցանկալի էր եւ խոստացուած է, որ պաշտօնը ստանձնելիս նրանք նախապէս ապահովուած լինէին կարեւոր գումարով Ձեզ փոխադրած դրամից, որպէսզի չը նեղւին պատահականութիւններից։

ՆՈՅՆ

Սրանց ճանապարհածախս տրուած է մինչեւ Թաւրիզի հաշւով։

Մ[եծ] քաղաքից Բ[իւրոյ]ի կողմից գրուած նամակն էլ ստացած կը լինէք. նրանով ծանուցուած գումարների եւ հաշւի մասին պատասխաններ շտապեցնելու շնորհ արէք։

Միշտ յարգանօք՝
ՆԻԹՐԱ(1)

1.- Նիթրա՝ ծածկանունն է Յարութիւն Շահրիկեանի, որ այս վերջին յաւելումը կը կատարէ։

47

Փաստ. 322-5

24 *Ապրիլ* 1903
Ոսկանապատ

[*Նիկոլ Դումանէն Սալմաստի* [*Մինարէթ*] *կոմիտէին*]

Սիրելի բարեկա՛մ,

Ձեզ խոստացած երկու ուսուցիչները էրէգ ճանապարհ ընկան։ Մէկն արդէն ունի ռուսական անցագիր, միւսն էլ գուցէ ձեռք բերի՝ ճանապարհին մի քանի օր ուշանալով։

Սրա հետ ուղարկում եմ Թումանեանցների փոխանակագիրը՝ մի հարիւր եօթանասուն հինգ թուման չորս դրան եւ 24 կոպէկի։

Անցեալ օրը ստացայ Ձեր վերջին երկտողը. ուրախ եմ աջողութեան համար եւ լիայոյս եմ, որ գործը կը շարունակւի նոյնպէս աջող, բայց աւելորդ չեմ համարում տալ առ այժմ իմ անհատական կարծիքը այդ առթիւ։ Ըստ իս՝ անհրաժեշտ է ապահովել երկու բան. նախ՝ սկսւած ձեռնարկի աջող աւարտումը եւ երկրորդ՝ աւարտելուց անմիջապէս յետոյ ստեղծել մի այնպիսի դրութիւն, որ ապագայում տեղ չը գտնեն ներկայ կարգերն ու դէպքերը։ Առաջինը ապահովելու համար կարեւոր է, որ մարդիկ չը խրտնեն, իսկ չխրտնացնելու համար, իմ կարծիքով, պէտք է գործը տարւի այնպիսի ուղղութիւնով, որ լուր ու համոզում տարածւի, թէ իրարու յաջորդող դէպքերը տեղի են ունենում պատահաբար, բոլորովին անկախ եւ անձնական հաշիւներից դրդւած։ Ամէն ինչ վերջանալուց յետոյ միայն կարելի է հրատարակել լիակատար ցուցակ, պաշտօնապէս պարզել ամէն ինչ եւ վերջում շեշտել, որ այսուհետեւ ինքնագլուխ երեւացողը իրան ապահով համարել չի՛ կարող։ Եւ հէնց այդ շեշտն է, որ ապագայում պէտք է առնի չարիքների առաջը եթէ խօսքի հետ կը միանայ է՛ւ գործը, այսինքն՝ եթէ Մինարէթում կը նստի մի ուժեղ մարդ եւ առաջին չարիքը, երեւացածին պէս, կը խեղդի սաղմի մէջ, առանց թոյլ տալու, որ նոքա հող գտնեն եւ բազմանան։

Բարեւներ։
Նիկ.

48

Փաստ. 322-9

Այս եւ յաջորդ շարք մը նամակներ ուղարկուած են Պաքուէն դէպի Ատրպատական, Թաւրիզ եւ Սալմաստ:

19 [*Ապրիլ*]/ 2 *Մայիս* 1903

Սիրելի Տիգրան,

Ես ընկել եմ մի շատ անախորժ թիւրիմացութեան մէջ. մի քանի օր առաջ ես պէտք է կատարէի մի թեթեւ ճանապարհորդութիւն. երբ պատրաստւում էի շտապ-շտապ՝ տուին ինձ նոր ստացւած մի նամակ Ամերիկայից (Վռամից)(1)*, որի մէջ, ուրիշ բաների թւում, խօսւում էր նա՛եւ, պ. Ալէօնի* 500 *դօլլարի մասին։ Այդ նամակի մէջ բացատրւած է, որ դրանից* 100 *դօլլարը պ. Ալէօնը անցեալ տարի տուել է Ձեզ, իսկ մնացած* 400*-ը պահել իրան մօտ։ (Այդ ես գիտէի արդէն)։ Յետոյ իրանց աջողւել է պ. Ալէօնի Ամերիկա վերադառնալուց յետոյ՝ մի կերպ համոզել նրան ու իր ընկերներին եւ ստանալ այդ* 400 *դօլլարը ա՛յն պայմանով, որ այդ գումարի ստանձման համար անդորրագիրը ներկայացնեն երկրի ներսից։ Ապա աւելացրած էր, որ պ. Ալէօնը շուտով գալու է մեր կողմերը, <u>պահանջենք այդ</u> 400 <u>դոլարի անդորրագիրը</u> ու յանձնէք իրան։ Ինչպէս ասացի վերը՝ ես շատ էի շտապում, միւս կողմից էլ Վռամի ձեռքը շատ վատ է եւ համարեա անընթեռնելի, լաւ չկարողացայ կարդալ եւ մնացի ա՛յն տպաւորութեան տակ, թէ պէտք է <u>պահանջենք այդ</u> 400 <u>դօլլարը։</u> Նամակը թողեցի եւ ես այդ տպաւորութեան տակ ճանապարհ ընկայ։ Մի քանի օրից յետոյ վերադարձայ Բագու եւ առաւօտեան ժամը* 5*-ին վակզալում*(2) *հանդիպեցի պ. Ալէօնին եւ շատ մազալու կերպով*(3) *ծանօթացայ հետը (ծանօթութեան մանրամասնութիւնը գուցէ Ձեզ պատմի հէնց ինքը)։ Այդ պարոնին հետս վերցրի վակզալից, իջայ քաղաք մեր ընկերներից մէկի բնակարանը, այդտեղ բերի նա՛եւ նրան նախածանօթ մեր Իւսուֆին*(4) *եւ մենք մտանք բացատրութեան մէջ։ Նա ասում էր, որ* 400 *դօլլարը արդէն վճարել են Վռամին իսկ ես պնդում էի ընդհակառակը։ Նրա դէմքի այլայլութիւնից եւ չփոթմունքից ու բարկութիւնից նկատելի էր մի ինչ որ թիւրիմացութիւն։ Դրա համար էլ ես բաւականացայ նրանից մի գրաւոր բացատրութիւն վերցնելով միայն։ Այդտեղից եկայ տուն, Վռամի նամակը կարդացի նորից եւ ուշադրութեամբ ու տեսայ, որ ընկել եմ սոսկալի թիւրիմացութեան մէջ։*

Պ. Ալէօնը շուտով կը լինի Թաւրիզում։ Ուղարկում եմ սրա հետ նրա բացատրութիւնը։ Վերադարձրէք նրան այդ բացատրութիւնը, կրկնակի ներողութիւն խնդրեցէք իմ անունից եւ ասացէք, որ մեղքս քաւելու համար՝ այսուհե-

տեւ կը լինիմ նրա ամենալաւ բարեկամը։ Պ. Ալէօնին վերաբերեալ կտորը կարող էք ամբողջովին կարդալ իրան։

Շաբաթից աւելի է, ինչ որ ճանապարհ են ընկել դէպի Թաւրիզ երկու ուսուցիչները(5)։ *Նրանց ճանապարհելու հետեւեալ օրն էլ փոխադրել եմ* 300 *ռուբլի։ Երեւի արդէն ստացած կը լինիք։ Շուտով մեզ մօտ կը լինի շրջանական ժ[ողով]։ Ձեզանից մարդ չհրաւիրեցինք, որովհետեւ մտադիր ենք առաջարկել Ընդհ. Ժ[ողով] եւ դուք կը մասնակցէք այն ժամանակ։ Շրջանականի արձանագրութեան պատճէնը կ՚ուղարկենք Ձեզ՝ ի նկատի ունենալու համար։ Էլլէնը չուտով կ՚երթայ իր նախկին տեղը*(6)։ *Բարեւներ։*

ԴՈՒՄԱՆ

1.- Վռամը՝ Արշակ Վռամեանն է, իսկական անունով՝ Օննիկ Դերձակեան, որ 1899էն ի վեր կը գտնուէր Ամերիկա իբրեւ Դաշնակցութեան ներկայացուցիչ, գործիչ եւ «Հայրենիք»ի խմբագիր։ «Վռամի ձեռքը», այսինքն ձեռագիրը, որ իսկապէս դժուար ընթեռնելի է։

2.- Կայարանում։

3.- Մազալու կերպով – տարօրինակ, ծիծաղաշարժ ձեւով։

4.- Յովհ. Եուսուֆեանին։

5.- «Ուսուցիչները», ինչպէս նշուեցաւ, պէտք է հասկնալ ահաբեկիչներ իմաստով։

6.- Էլլէն՝ Քրիստափոր Միքայէլեանի ծածկանունը։ «Նախկին տեղը» Ժընեւն է։

49

Փաստ. 322-6

27 *Յունիս* 1903

[*Ատրպատականի Կ. կոմիտէին*]

Սիրելի՛ք,

Ինչպէս գիտէք մամուլից, Թիւրքիան ու Բոլգարիան եռանդուն կերպով պատրաստւում են պատերազմի։ Լրագրական հակասական տեղեկութիւններից դժւար է որոշ նախատեսել պատերազմի լինել կամ չը լինելը։ Բայց կան մարդիկ, Բոլգարիայից նոր եկած, որոնք պատերազմը համարում են անխուսափելի։ Դիմաւորել այդպիսի մի հաւանական պատերազմի բոլորովին անպատրաստ, դա կը լինէր մեզ համար վերին աստիճանի պատասխանատու գործ։ Թէ ի՞նչ դիրք պիտի բռնենք պատերազմի դէպքում՝ այդ լուրջ խնդիր է, որը պէտք է թողնուի մօտիկ ապագային եւ ենթարկւի մեր հաւաքական ոյժերի որոշման։

Այժմ էականն ու անհրաժեշտը այն է, որ մենք հաւաքենք մեր ուժերը, կազմակերպւենք ըստ կարելւոյն, որ հարկաւոր րոպէին պատրաստ լինինք թմբուկ զարկելու։

Ուրեմն, ներկայ պայմաններում խիստ կարեւոր է նախօրօք պատրաստել մտքերը առ այժմ մեր շրջանում, կամացուկ ու անշշուկ, կարգի բերել զէնքերն ու ճանապարհները, ի նկատի ունենալ հմուտ վալադներ եւ բռնել սպասողական դիրք։ Բացի դրանից, խնդրում ենք անմիջապէս տեղեկացնել մեզ, թէ ո՞րքան զէնք ունիք պատրաստի եւ ի՞նչ սիստեմի, թէ ի՞նչքան են ունեցած փամփուշտները եւ որքան վստահելի են, դրա վրան աւելացնելով հրացանների եւ ա՛յն քանակութիւնը, որը կարող էք պատրաստել մինչեւ մի ամիս։ Իրերի ներկայ դրութիւնը եւ մեր մտադրութիւնները յայտնեցէք Շամ(1) *իբրեւ գաղտնիք։*

Մեր պզտիկ «հեծելագունդ»-ն(2)*, բաղկացած 20 հոգուց, արդէն ապահով հասել է Բարձրաւանդակ*(3) *մի սպայի առաջնորդութեամբ։ Ետեւից բաց թողնելու համար պատրաստւում է երկրորդը։ Գործունէութեան համար դրամներ չեն պակասի։ Արտակարգ միջոցները սկսել են տալ իրանց արդիւնքը։ Դրանից զատ՝ Ոսկանապատի*(4) *Կենտր. Կոմիտէն ձեռք է զարկել մի խոշոր վիճակախաղի։ Արդէն շրջանառութեան մէջ է նետւած 20.000 տոմսակ 5 ռուբլիանոց՝ իւրաքանչիւրը երկու կուպոնից, որից ամբողջ 80.000 ռուբլին պիտի մնայ մեզ, եթէ կարողանանք սպառել բոլորը։ Այդ տոմսակներից 100 հատը մտադիր ենք ուղարկել Ձեզ. կարո՞ղ էք արդեօք ցրել։ Զը մոռանամ ասել, որ տոմսակները ցրւում են ամբողջ Կովկասում՝ տեղական վարչութիւնների եւ ագենտների միջոցով։*

Նշանակւած է Ընդհ. Ժ.(5) *Ոսկանապատում այս տարւայ Նոյեմբերի 30-ին։ Այդ մասին նախօրօք տեղեկացրէք Շամ, որ պատրաստութիւններ տեսնեն։ Պաշտօնական հրաւէր կ՚ուղարկւի շուտով։*

Մինարէթից(6) *ձէն-ձուն չի գալիս։ Ի՞նչ են անում մեր ուղարկած ուսուցիչները*(7)*։*

Ընկերների կողմից՝
Համբոյրներով՝ ԴՈՒՄԱՆ

Բարձրաւանդակ(8) *են անցել 25 էլ հետեւակ։*
Նոյն։

1.- Վան:
2.- Բնագրին մէջ ռուսերէն՝ հեծելագունդ:
3.- Սասուն: Խօսքը կը վերաբերի 1904 թ.ի Սասնոյ ապստամբութեան ի նախապատրաստութիւն Կովկասէն զինեալ խումբերով օգնութիւն հասցնելուն: Այս մէկը՝ «մի սպայի առաջնորդութեամբ», կը վերաբերի Թուման Թումեանցի (Թորգոմ) «Մրրիկ» խումբին, որուն պիտի հետեւէին ուրիշներ, դժբախտաբար ոչ միշտ նոյն յաջողութեամբ:
4.- Պաքուի:
5.- Կ՚ակնարկէ Հ.Յ.Դ. երրորդ Ընդհ. ժողովին, որ պիտի գումարուէր Սոֆիա, 1904-ի սկիզբը:
6.- Սալմաստից:
7.- «Ուսուցիչները» հոս եւս գործածուած է փոխաբերական իմաստով:
8.- Բարձրաւանդակ – ծածկանուն Սասունի:

50

Փաստ. 322-7

1 *Օգոստոս* 1903

Սիրելի Սամսոն(1) [*Սալմաստ*]

Շատ վաղուց է, որ տեղեկութիւն չը կայ Ձեր կողմերից։ Ստացա՞ք մեր վերջին նամակները՝ իրերի ներկայ դրութեան մասին։ Ստացա՞ք արտասահմանից Ընդհ. Ժ[*ողովի*] *հրաւիրագիրը։ Ի՞նչ դրութեան մէջ է փոխադրութեան գործը եւ ի՞նչ են անում մեր ուղարկած ուսուցիչները։ Ինչո՞ւ այսչափ երկարացաւ անպտուղ ու անհետեւանք այդ պարոնների միսսիան*(2)։

Մի խումբ, բաղկացած 40-ից, այս քանի օրը ճանապարհ կ՚ընկնի դէպի Բարձրաւանդակ(3) *բոլորովին նոր գծով. մի այդպիսի խումբ էլ պատրաստ կը լինի ամսիս վերջերը, դա՛ռձեալ նոյն տեղը գնալու համար սովորական գծով։ Երկրորդի մէջ մտադիր են մտցնել ձիաւորներ, եթէ աջողւի՝ նոյնիսկ ամէնքը ձիով։*

Ուղարկել ենք Վրէժ(4) 100 *հատ վիճակախաղի տոմսակ Ջէբրայէլի հաստցէով։ Իմաց տո՛ւր, որ ստանան մերոնք։*

Հատը արժէ 5 *ռուբլի. ամէն մէկը բաղկացած է* 2 *կուպոնից. պէտք է մկրատով կտրել երկու հակառակ անկիւնների վրայից տարածւած սպիտակի ուղղութեամբ եւ իւրաքանչիւրը ծախել* 2 *ռ.* 50 *կոպէկով, եթէ կը լինին մարդիկ, որոնք կ՚ուզեն միայն կէս տոմսակ։ Դրանց վաճառումը պէտք է շուտ վերջացնել։ Խաղի պայմանները գրւած են տոմսակի վրայ մանրամասն։ Անվաճառ մնացած տոմսակները պէտք է վերադարձնել մեզ ժամանակից առաջ, որ գուցէ կարողանանք ինքներս ծախել։*

Գրաբերս գալիս է այդտեղ բոլորովին անկախ մեզանից. ընտանիք ունի այդտեղ։

Համբոյրներով՝
Նիկ.

1.- Թադէոսեան Ստեփան, Քր. Միքայէլեանի քրոջ որդիներէն, որ հաստատուած էր Սալմաստ եւ կը ղեկավարէր Ատրպատականէն դէպի երկիր զէնք-զինամթերք եւ մարդոյժ ուղարկելու գործը։

2.- Հոս եւս ուսուցիչները եւ իրենց առաքելութիւնը պէտք է հասկնալ այլաբանական իմաստով։

3.- Սասուն։

4.- Թաւրիզ կամ Ատրպատականի Կ. կոմիտէ։

51

Փաստ. 323-24

1 *Յունուար* 1904

[*Ատրպատականի Կ. կոմիտէին, Թաւրիզ*]

Սիր.

Էրէգ պ. Ջէբրայիլի հասցէով (Եղ[բարք] Թումանեանցների միջոցով) փոխադրեցի մի հազար հարիւր յիսուն թուման։ Փոխանակագիրը փոստ ձգեցի Ջէբրայիլի անունով՝ պատուիրած, վրան էլ գրեցի «յանձնել Պետրոսին»(1)*։ Եթէ այդ մասին դեռ ոչինչ յայտնի չէ Ձեզ, նամակս ստանալուն պէս դիմեցէք Ջէբրայիլին եւ ստացէք։ Դրա կէսը շատ շուտով փոխադրեցէք Շամ*(2)*. եւ իսկոյն հաղորդեցէք նրանց, որ այդ գումարը յատկացրուած է «միմիայն ռազմամթերքի». առնեն ինչ կարող են՝ ոյժ տալով գլխաւորապէս վառօդին։ Միւս կէսը պահեցէք Ձեզ մօտ եւ իմացէք որ դա էլ յատկացրուած է միմիայն հրացանների՝ գլխաւորապէս նորերի։ Ուրեմն այդ դրամները թէ Ձեզ մօտ եւ թէ Շամում պիտի գործադրուին ընդգծած սահմանների մէջ միայն։ Զգոյշ կացէք* բռակ(3) *ու անպէտք ապրանքից. Թող լինի ամենալաւը՝ թէկուզ թանգ։*

Հա՛, չը մոռանամ ասելու, որ եթէ փամփուշտներ չունիք՝ հրացանների թուի համաձայն ձեռք բերէք եւ փամփուշտներ։ Այդտեղ եւ այնտեղ ռազմամթերք ձեռք բերելու համար սա առաջին փորձն է, որի աջողութիւնից միայն կախուած կը լինի շարունակութիւնը։ Ուրեմն հարկաւոր է որ երկու կողմից էլ մեզ տեղեկութիւն տրւի հետեւանքի մասին, որպէսզի կանխաւ գիտենանք մեր անելիքը։

ԴՈՒՄԱՆ

1.- Պետրոսի (զինագործ) իսկական անունն էր Բագրատ Տէր Յովհաննիսեան (1877–1937):

2.- «Ձեզ մօտը» Ատրպատականն է, Շամը՝ Վան, Վասպուրական: «Ընդգծուած սահմանի մէջ», այսինքն ռազմամթերք ձեռք բերելու համար: Յայտնենք որ այս բոլոր միջոցները պարզապէս Սասունին օգնութեան հասնելու նպատակ ունէին:

3.- Բնագրին մէջ ռուսերէն՝ խոտան:

52

Փաստ. 466-41

24-II-1904
Ոսկանապատ

Սիրելի Պետրոս(1),

Գրաբերս գալիս է՝ նախապէս առնելով մեր համաձայնութիւնը։ Նրա ինքնակենսագրութիւնից կը տեսնես՝ որ առժամանակ քեզ օգնելու համար կարեւոր անձնաւորութիւն է։

Մեր պայմանը նրա հետ հետեւեալն է. միառժամանակ, քանի որ գործ կը լինի այդտեղ, կ՚օգնի քեզ իբրեւ ընկեր։ Ճանապարհները բացուելուց յետոյ, եթէ գլխումն ու սրտումը կը նստի, կ՚անցնի Կոմսի մօտ կամ նոյնիսկ Բարձրաւանդակ(2)*։ Իսկ եթէ անցնելը իր համար կը համարի անհամապատասխան եւ այդտեղի գործերի համար էլ կը դատուի անյարմար ու աւելորդ, այն ժամանակ նա կը համարուի ազատ մարդ՝ աշխարհի չորս կողմը իր առաջ բաց։ Սամսոնը*(3) *շուտով այդտեղ կը լինի, եթէ դեռ չի հասել։*

Քո՝ ԴՈՒՄԱՆ

1.- Պետրոս (Բագրատ Տէր Յովհաննիսեան), Դաշնակցութեան Թաւրիզի «Խարիսխ» արհեստանոցի վարպետ զինագործ:

2.- Կոմսը՝ Վահան Փափազեանն է, որ Վան կը գտնուէր Բարձրաւանդակը՝ Սասուն:

3.- Թադէոսեան Ստեփան, ծանօթ նաեւ Գարեգին ծածկանունով, Քր. Միքայէլեանի քրոջորդին, որ Ատրպատական հաստատուած կը ղեկավարէր դէպի երկիր զէնք-զինամթերք եւ մարտիկներ առաքելու գործը:

53

Փաստ. 323-25

19 *Մարտ* 1904

[*Ատրպատականի Կ. կոմիտէին*]

Սիր.

Գրաբերս մասնագէտ-արհեստաւոր է մի այլ ճիւղի։ Ինքը անձամբ կը բացատրի։ Տեղ տուէք Ձեզ մօտ եւ թո՛ղ անմիջապէս ձեռնարկի գործի։ Նրան պէտք է տաք՝ ի հարկէ, իր արհեստին վերաբերեալ յարմարութիւնները եւ ապրեցնէք Ձեզ մօտ ու Ձեր հսկողութեան տակ։ Նոր է, ջահիլ եւ հսկողութեան դեռ եւս կարօտ։ Վաղուց է Ձեզնից նամակ ու տեղեկութիւն չունիմ։ Առ այժմ այսքան։

Բարեւներով՝
Ն.

54

Փաստ. 323-26

8 *Ապրիլ* 1904

[*Ատրպատականի Կ. Կ.ին*]

Սիր.

Այսօր փոխադրեցի Մինարէթ(1) *երկու հազար ռուբլի Սամսոնին*(2) *— Եղ. Արզումանեանցների հասցէով. հետն էլ գրեցի մի նամակ, թէ ինչ պէտք է անի այդ դրամներով։ Եթէ Սամսոնը այդտեղ է, ասացէք որ անմիջապէս ճանապարհւի Մինարէթ եւ իսկոյն ձեռնարկի իմ գրած գործի փոխադրած դրամներով։ Ինչո՞ւ չէք նամակ գրում։*

Բարեւներով՝
ԴՈՒՄԱՆ

1.- Սալմաստ:
2.- Ստեփան Թադէոսեան:

55

Փաստ. 466-130

[*Ատրպատականի Կ. կոմիտէին*], *բացիկ*

Սիր.

Գրաբեր երկու տղային խկոյն ճանապարհ դրէք դէպի Մինարէթ՝ իրանց իրեղէններով։ Անմիջապէս նամակ գրեցէք Մինարէթ, որ նախապատրաստութիւնները չտապեցնեն տենդային կերպով։ Առ այժմ այսքան։ Ցը։

ԴՈՒՄԱՆ

29 - IV- 1904



56

Փաստ. 323-27

Ատրպատականի Կ. կոմիտէին ուղղուած նամակ է: Յայտնաբար, Նիկոլ Դուման լուրջ պատրաստութիւններ կը տեսնէ ապստամբ Սասունին օգնութեան հասնելու համար: Ձեռնարկը, սակայն, գործնական հետեւանք պիտի չունենար. Թուրքիոյ սահմանը անցնելէ անմիջապէս ետք, կռուի բռնուելով Դումանի խումբը ստիպուեցաւ նահանջել, իսկ Սասնոյ ապստամբութիւնը հասած էր արդէն գրեթէ իր աւարտական փուլին: Այնուամենայնիւ, անսալով Հ.Յ.Դ. Արեւելեան բիւրոյի հրահանգին, ինչպէս պիտի տեսնուի յաջորդ նամակներով, Ն. Դուման պատրաստութիւններ կը տեսնէ զինեալ խումբով մը սահմանը անցնելու:

30 *Ապրիլ* 1904
Բագու

Սիր[*ելիք*]

Խէչօն(1) *իւրայիններու հետ արդէն վաղուց կը լինի այդտեղ. շուտով կը հասնին նաեւ ուրիշ երկուքը: Երկար չի տեւի նաեւ իմ գալը: Յոյս ունիմ, որ մինչեւ Մայիսի* 10-*ը այդտեղ կը գտնեմ ամէն ինչ արդէն պատրաստ՝ ըստ ցուցակի եւ Խէչոյին արած յանձնարարութեան: Կրկնում եմ, որ դրամին չը պէտք է խնայել ամէն ինչ ընտիր անելու համար: Գիտեմ, որ փոխադրածս գումարը բաւականութիւն չի տայ, դրա համար էլ կրկին փոխադրում եմ հազար ռուբլի պակաս-պռատը լրացնելու համար մինչ իմ տեղ հասնելս: Ես էլ առանց դրամի չեմ գայ, ի հարկէ: Վալադ Խաչոն ինձ մօտ է. նրան, յամենայն դէպս, կը բերեմ հետս: Բայց դուք մենակ նրա վրայ յոյս չը դնէք, ձեռք բերէք ուրիշ էլ աւելի յարմարաւորներին. գիծը առանձին նշանակութիւն չունի ինձ համար, միայն թէ վալադները լաւը լինին: Մի իսկական կոթ*(2) *այսօր ճանապարհուողներովը ուղարկում եմ, գուցէ* 5-6 *էլ կարողանամ բերել ինքս, բայց անկախ դրանից դուք պատրաստեցէք լրիւ, գուցէ անաջողութեան հանդիպեցի ինքս: Ամէն կերպ աշխատեցէք, որ Մայիսի* 15-*ին ամէն ինչ պատրաստ լինի ճանապարհ ընկնելու համար: Փոխանակագիրը* (1000 *ռ.*) *սրա հետ կը լինի:*

Բարեւներով՝ ԴՈՒՄԱՆ

1.- Խէչոն՝ Դաշնակցական Խէչոն է, բուն անունով Խաչատուր Ամիրեան-Գէորգեան (1872–1915):
2.- Կոթը հրացանն է:

57

Փաստ. 323-28

2 *Մայիս* 1904
Բագու

[*Ատրպատականի Կ. կոմիտէին, Թաւրիզ*]

Սիր[*ելիք*]

Գիտէք, որ առաջուց փոխադրած 2000-*ը չի կարող բաւարարութիւն տալ իմ ուղարկած ցուցակին, դրա համար էլ* 3-4 *օր առաջ նորից փոխադրեցի* 1000 [*ռուբլի*] — *Գր. Հասրաթեանի հասցէով։ Եւ խնդրել էի ձեռք բերել* 10-12 *ձի, բայց բանից երեւում է, որ այդ թիւը պէտք է հասցնել* 14-*ի, բոլորն էլ ըստ կարելոյն լաւ, առողջ եւ ուժեղ. գնի մէջ չը պէտք է խնայել, ինչպէս էլ յայտնել եմ առաջուց, կարող էք գնալ մինչեւ* 150 *ռուբլի իւրաքանչիւրի համար։ Կրկին խնդրում եմ, որ ամէն ջանք գործ դնէք ամէն ինչ անել կազմ ու պատրաստ Մայիսի* 15-*ից մի քիչ առաջ։ Խէչոն իր ընկերներով, յետոյ էլ ուրիշ երկուքը Վրէժի*(1) *գծով երեւի արդէն հասած կը լինին Ջեզ մօտ։*

Դաշ-քեալամը գրում է, որ ամէնքը քշուել են գնալու համար։ Խօսք ոչ ոքին չը տաք, այդպէս էլ յայտնեցէք իրան՝ Դաշ-քեալամին։ Եթէ վերջում կը տեսնենք, որ 1 *կամ* 2 *հոգու կարիք կայ, այն ժամանակ ցանկացողներից կ'անենք ամենախիստ ընտրութիւն։ Վալադների*(2) *խնդիրը մոռացութեան չը տաք։ Բոլոր կոթերը*(3) *արէք ամբարով։ Փոքր կոթեր բաւարար չափով արդէն ուղարկուած են։ Եթէ դրամները բաւարարութիւն չը տան՝ պարտք վերցրէք. ես գալուն պէս խկոյն պիտի վճարուին ինչպէս նոր, նոյնպէս եւ հին բոլոր պարտքերը։ Եթէ Մինարէթում*(4) *խնձորներ*(5) *չը կան, Վրէժից շուտով փոխադրեցէք գոնէ* 15-*ական իւրաքանչիւր տեսակից։ Կոթերի մասերի յատկութեան, հաւաքելուն եւ փորձին խիստ լուրջ ուշադրութիւն դարձրէք։ Ինչպէս գրել էի, ծայրերը*(6) *պատրաստեցէք գոնէ* 600-*ական հատ։ Ես կը լինիմ այդտեղ յամենայն դէպս ամսիս* 15-*ից առաջ։ Վրէժ գնացած ձուլիչ Գեղամի մասին գրեցէք Դաշ-քեալամին, որ նա ուղարկուած է լոկ ձուլելու համար՝ իբրեւ փորձ. եթէ այդ փորձը աջողի՝ նա իր գործողութիւնները պէտք է փոխադրի ներս։ Առ այժմ ցը։*

1.- Թաւրիզի։ Խէչոն՝ Դաշնակցական Խէչոն է։
2.- Սուրհանդակների, ուղեցոյցների։
3.- Հրացանները։ Փոքր կոթը ատրճանակն է։
4.- Սալմաստում։
5.- Ձեռնառումբեր։
6.- Փամփուշտներ։

58

Փաստ. 466-154

15 *Մայիս* 1904

[*Ատրպատականի Կ. կոմիտէին, Թաւրիզ*]

Սիր[*ելիք*]

Ես Սալմաստ հասայ երէկ. հէնց երէկ էլ հեռագիր ստացայ Կովկասից, որ անմիջապէս վերադառնամ Ջրաբերդի(1) *եւ Երեւանի շրջանը՝ մասնակցելու այնտեղի գործողութիւններին։ Հեռագրի պայմանական խօսքերից երեւում է, որ Բարձրաւանդակ գնալը արդէն կորցրել է իր նշանակութիւնը, որովհետեւ ամէն ինչ այնտեղ, ստացած նամակների համաձայն, համարւում է վերջացած*(2)։ *Մնում է գործողութիւններ սկսել Ջրաբերդի շրջաններից, ուր հարկաւոր են համարում ինձ եւ այնպիսի տղաներին, որոնք կարող են կառավարել փոքրիկ խմբեր։ Ես շուտով վերադառնալու եմ նրանց պահանջի համեմատ եւ հետս էլ վերցնելու եմ Խէչօ-ին, Թաթոսին*(3), *Աստատուրին եւ Սահակին։ Վերջին երկուսը ահա՛ գալիս են, որ անցագրեր ստանան եւ Թաթոսի հետ միասին գան Երեւան ու հարցնեն ինձ։ Խէչոն այժմ Խոյումն է, նրան կը վերցնեմ ինքս։ Յամենայն դէպս վերցրէք անցագրեր նրա եւ ինձ համար էլ. գուցէ մեզ չյաջողեց անցնել ուրիշ կերպ եւ ստիպւած եղանք սպասել Ջուլֆայում, մինչեւ տղաները կը բերեն իրանց հետ եւ մեր անցագրերը։ Մի անցագիր էլ վերցրէք Բիճայի Խէչօ-ի համար, գուցէ նրան էլ վերցնեմ։ Կովկաս վերադարձողները ո՛չ մի զէնք չը պէտք է վերցնեն հետները. այնտեղ կայ ամէն ինչ։ Ձեզ մօտ պատրաստւած եւ պատրաստուելիք իրեղէնները հետզհետէ փոխադրեցէք Մինարէթ, որ զինակիր խմբերը տանեն Շամ*(4)։

Ուրեմն անցագիր վերցնելու էք 6 *հատ* (*վեց հատ*)։ *Բացի դրանից, այդտեղ կան* 2 *հոգի Աստարայի վրայից իմ ուղարկած։ Աշխատեցէք համոզել դրանց, որ մնան այնտեղ՝ զինակիր խմբերի հետ միանալու։ Իսկ եթէ չը համաձայնեն եւ կամենան անպատճառ ինձ հետ վերադառնալ, նրանց համար էլ վերցրէք անցագրեր։ Միայն բոլորին միասին չը ճանապարհէք, այլ քիչ-քիչ, որ մնան աննկատելի։ Բոլոր գնացողները Երեւանում կը հարցնեն ինձ — ձեր տոմսակը իրանց հետ ունենալով։*

Բարեւներով՝ **ՆԻԿՕԼ**

1.- Ջրաբերդը Կարսն է:

2.- Կ՚ակնարկէ Սասնոյ (Բարձրաւանդակ) ապստամբութեան ճնշուած ըլլալուն: Թէեւ դեռ ամիսներ շարունակ դիմադրական կռիւները պիտի շարունակուէին յատկապէս Տարօնի գիւղերուն մէջ:

3.- Խէչոն՝ Դաշնակցական Խէչոն է, իսկ Թաթոսը՝ Ամիրեան Թադէոսն է, Գիժ Թաթոս:

4.- Մինարէթը Սալմաստն է, Շամը՝ Վան:

59

Փաստ. 291-58

20 *Մայիս* 1904
Սալմաստ

[*Արեւելեան բիւրոյին*]

Սիր[*ելիք*]

Նախորդ նամակիցս ու հեռագրից արդէն գիտէք, որ ես մի քանի տղաների հետ պէտք է վերադառնայի Ջրաբերդի ու Մրգաստանի շրջանը(1) *— այնտեղից ստացած մի հեռագրի համաձայն։ Այսօր ամէն ինչ պատրաստ, չարվադարն*(2) *էլ վարձուած, վաղը պիտի մեկնէինք մի քանի հոգով եւ հանդիպէինք Ջուլֆայում Թաթոսին*(3) *ու միւսներին, որոնք պիտի ճանապարհէին այդտեղից։ Բայց բանը փոխուեց. այսօր ստացանք երկու հեռագիր — մէկը Մրգաստանից, որով առաջարկում էին դեռ սպասել, իսկ միւսը Ալէքսանդրապօլից։ Վերջին հեռագիրը պայմանական է եւ վերաբերում է Բարձրաւանդակի*(4) *դէպքերին. պայմանանշանը հեռագրած է կիսատ, ոչինչ հասկանալ չի լինում, միայն մի հատիկ տառից, որ նախդիր է, եզրակացնում եմ, որ այնտեղ դեռ շարունակւում են դէպքերը։ Մի հատիկ տառից ուղիղ եզրակացութիւն հանելը դժուար է, ի հարկէ։ Ինչ եւ իցէ. ես նորից հեռագրեցի եւ սպասում եմ։ Մինչ այս մինչ այն դուք տեսէք ձեր գործերը։ Ինչպէս այսօր հեռագրեցինք Ձեզ, թող Թաթոսն ու միւս տղաները դեռ սպասեն Ձեզ մօտ, մինչեւ իրերի դրութիւնը կը պարզւի։ Բայց յամենայնդէպս, դուք պատրաստեցէք խնդրած անցագրերը — դեռ մի երկու հատ էլ աւելի։ Այդ արէք մի կողմից, իսկ միւս կողմից էլ ձեզ մօտ եղած բոլոր պատրաստութիւնները, նոյնպէս եւ ձիաները հետզհետէ փոխադրեցէք Մինարէթ*(5)*, բայց փոքր ինչ չտապեցէք։ Իրերի դրութիւնը պարզւելուց յետոյ կը հեռագրենք, որ տղաներին իսկոյն ճամբէք կամ Մինարէթ եւ կամ Ջուլֆա, նայելով թէ որտեղ նրանք հարկաւոր կը լինին։*

Բարեւներով՝ ԴՈՒՄԱՆ

Եթէ կը հեռագրեմ տղաներին ուղարկել Մինարէթ, պէտք [*է*] *գան հետեւեալները. Թաթոսը, Ասծատուրը, Սահակը, Աստարայով եկած* 2 *հոգին եւ ուրիշ ոչ ոք։*

Իսկ եթէ հեռագրեմ ճանապարհել Ջուլֆա, պէտք է գան. Թաթոսը, Ասծատուրը, Սահակը, Ջումշուդը(6) *եւ Աստարայով եկած* 2 *հոգին, եթէ նրանք չեն համոզւի մնալ այստեղ — զինակիր խմբի հետ գնալու։*

ՆՈՅՆ

1.- Ջրաբերդը Կարս է, Մրգաստանը՝ Երեւան:
2.- Ջիապանը:
3.- Գիժ Թաթոսն է, Ամիրեան:
4.- Սասնոյ:
5.- Սալմաստ:
6.- Ջումշուդ – ծածկանուն Տէր Գալստեան Մարտիրոսի (1882–1952):

60

Փաստ. 466-175

[*Վանի ընկերներուն*]

Ընկերներ![1]

Թէեւ յայտնուած էր Ձեզ, որ Մայիսի 18-*ից սկսած սպասէք ինձ, բայց ինչ-ինչ պատճառներով ուշացայ։ Այնուամենայնիւ ես գալու եմ խմբով անպատճառ եւ դուք պիտի սպասէք մեզ սկսած Յունիսի* 7-*ից մօտաւորապէս։ Աչալուրջ կերպով տեղեկութիւններ հաւաքեցէք, գործերի ընթացքի մասին Բարձրաւանդակում եւ պատրաստեցէք մինչեւ գալս վալադներ դէպի Բարձրաւանդակ մի յարմարաւոր գծով։ Իսկ եթէ մինչեւ մեր այդտեղ հասնելը (Տէրն մի՛ արասցէ) վերջացած կը լինին դէպքերը Բարձրաւանդակում, աշխատեցէք յարմարութիւններ ստեղծել այդտեղ մեզ համար, որ կարողանանք մի առժամանակ մնալ այդտեղ եւ զբաղուել գլխաւորապէս ակտիւ գործերով։*

Համբոյրներով՝
ԴՈՒՄԱՆ

30 — V — 1904
Մինարէթ

1.- Նամակը ուղղուած է Վանի ընկերներուն:

61

Փաստ. 323-50

Ն. Դումանի այս գրութիւնը կը բաղկանայ երկու բաժիններէ. առաջինը ուղղուած է Ատրպատականի մէջ Դաշնակցութեան ներկայացուցիչ Ստեփան Թադէոսեանին (Սամսոն), երկրորդը՝ Սասուն անցնելու փորձը կատարող իր խումբի անդամներէն Սարգիսին,– ապագայ հանրածանօթ Վանայ Սարգիսին (Օտապաշեան Պօղոս): Գրուած է անյաջող այդ փորձէն ետք Ատրպատական վերադարձին: Յայտնենք որ Դումանի խումբը բաղկացած էր 17 ձիաւորներէ, որոնց մաս կը կազմէին, բացի յիշուածներէն, յայտնի անձնաւորութիւններ եւ մարտիկներ, ինչպէս՝ բժ. Յակոբ Զաւրիեւ, Դաշնակցական Խէչօ (Ամիրեան), Սարբազ Խեչօ (Կարապետեան), Ռուբէն Տէր Մինասեան, Թադէոս Ամիրեան: Հակառակ այն իրողութեան, որ «Բարձրաւանդակ (Սասուն) գնալը արդէն կորցրել է իր նշանակութիւնը, որովհետեւ ամէն ինչ այնտեղ, ստացած նամակների համաձայն, համարւում է վերջացած» (Տես 15 Մայիսի նամակը), այսուհանդերձ անսալով վերին մարմնի հրահանգին՝ ան յամառեցաւ շարունակելու սկսած գործը: Խումբը Յունիս 8-ին կ՚անցնի թուրք-պարսկական սահմանը, յաջորդ օր Ռազի կոչուող վայրին մէջ կռուի կը բռնուի քիւրտերու հետ. վերջիններուն օգնութեան կը հասնին օսմանեան զօրքերը եւ, բուռն մարտեր մղելէ ետք, խումբը կը ստիպուի նահանջել եւ վերադառնալ.— «եկանք փլաստ դառած» կը գրէ այս առթիւ Ն. Դուման՝ իրեն յատուկ դառն հեգնանքով:

14 *Յուլիս* 1904

Սիր[ելի] Սամսոն!

Եկանք փլաստ դառած. կորցրել ենք Ավդօ-ին եւ Սերովբին, մնացածները ազատ են. միայն Խոյում զէնքով բանտարկւել են Վալադ Խաչօն, Հայրապետը եւ Տիգրանը: Կառավարութեան հետ բանակցութեան մէջ ենք. սպասում ենք որ այսօր ազատւին զէնքով: Վարդանը(1) *այսօր երեկոյեան կը ճանապարհւի Գաղթաշէն՝ հետը տանելով ծայրեր հին ու նոր, 2 ատրճանակ, մի ժամացոյց հասարակ եւ* 10 *ոսկի փող — փոխադրութիւն կատարելու. ըստ կարելոյն շարունակեցէք փոխադրութիւնը, տալով անհրաժեշտ միջոցները եւ աշխատեցէք կանոնաւոր նամակագրութիւն պահպանել նրանց հետ եւ պահանջներին բաւարարութիւն տալ հնարաւորութեան սահմաններում Արտաշէսի*(2) *միջոցով, որ աշխարհագրօրէն աւելի մօտ է նրանցից եւ կարող է միշտ լինել գործի կուրսում:*

Թէ որ եկող լինի, իմ եւ բժիշկի բոլոր շորերն ու չամադանները, նաեւ Թաթոսինը(3)*, եթէ ունի, ուղարկեցէք Խոյ:*

Հեռագիր կազմեցի եւ ուղարկեցի Թաւրիզ՝ [Դրօշակի] խմբագրութեան ուղարկելու: Այստեղ խօսւում է, որ թշնամու կողմից սպանւած է 2 *զինւոր եւ* 2 *քիւրդ. եթէ ճիշտ է, շատ ողորմելի թիւ է:*

Նիկ.

Սիր[ելի] Սարգիս(4),

Ինձ մօտ պէտք է լինէիր լեռան վրայ, բայց չեկար. յետոյ լսեցի որ սպանուած է մի երիտասարդ ու սկսեցի հայհոյել քեզ, որ չեկար. կարծում էի, թէ դու ես սպանուողը։ Այժմ ուրախ եմ չափազանց։

Զը գիտեմ կը գամ Սալմաստ, թէ չէ։ Եթէ գալու չեղայ — պատրաստուիր Կռուածաղիկ(5) *գնալու՝ ճանապարհածախքդ վերցնելով այդտեղից մինչեւ Ժընեւ։ Արդէն հրով ու սրով մկրտուեցար այս կողմերում, հերիք է այդ։ Զը գիտեմ ցը ասեմ, թէ մնաս բարեւ։*

Քո՝ Նիկ.

1.- Վարդան Շահպազ. Գաղթաշէնը՝ Ս. Թադէի վանքն է:
2.- Արտաշէս Յովսէփեան, հանրածանօթ Մալխասն է:
3.- Բժիշկը՝ Յակոբ Զաւրիեան է. Թաքոսը՝ Գիժ Թաքոսն է, Ամիրեան:
4.- Ապագայ Վանայ Սարգիսը (Օտապաշեան Պօղոս):
5.- Կռուածաղիկ – հոս գործածուած է Կ. Պոլսոյ համար:



Նմոյշ մը Նիկոլ Դումանի ձեռագրէն

62

Փաստ. 466-244

Ն. Դումանի այս նամակը գրուած է Խոյէն (Աւարայր) եւ ուղղուած է Ռուբէն Տէր Մինասեանին (Մինաս՝ բուն անունն էր ապագայ յեղափոխական մեծ գործիչին), որ նոյնպէս կը գտնուէր Ատրպատականի հայկական կեդրոններէն մէկը, հաւանաբար Ս. Թադէի վանքը, ուր անցած էր Դումանի առաջարկով՝ Երկիր անցնելու նպատակով: Ս. Թադէի վանքին մէջ դպրոց հիմնելու գաղափարը յայտնած էր Ռուբէն՝ խնդրելով այդ նպատակին համար Դումանի աջակցութիւնը:

19/23-VII-04

Աւարայր

Սիրելի Մինաս!

Շամից(1) *եկած սուրհանդակների ձեռքով ստացայ նամակդ: Շամից առանձին նորութիւններ չկան: Ուզում են ինտելիգենտ ընկերներ եւ ծայրեր*(2), *գլխաւորապէս նորը: Այդ ընկերներից մէկը կը լինիս, ի հարկէ, դու եւ շտապիր: Անշուշտ Վարդանն*(3) *էլ պիտի երթայ,երեւի, քեզ հետ, իսկ մնացածների մասին կը հոգացուի՝ հնարաւորութեան սահմաններում: Երկաթի*(4) *խմբի մասին մի քանի թեթեւ մանրամասնութիւններ կան Կոմսի*(5) *նամակում: Երեւում է, որ Երկաթը մի քանի ընկերներով աջողել է ազատուել, իսկ մնացածները կոտորուած են:*

Հա՛. աշխատեցէք ձեզ մօտ եղած ծայրերը շուտով փոխադրել, որ կարողանաք այստեղից ստանալ նոր պարտիա՝ նոյնպէս փոխադրելու համար:

Դու ուզել էիր 30-40 *ռուբլի՝ այդտեղի դպրոցական շինութիւնը աւարտելու համար եւ դրա մէջ տեսնում ես մեծ յարմարութիւն մեր գործի տեսակէտից: Թէեւ մենք չենք ծառայում լուսաւորութեան գործին եւ ո՛չ կազմում ենք բարեգործական ընկերութիւն, այնուամենայնիւ յարգելով քո առաջին գործնական խնդիրը՝ շուտով կը փոխադրենք քսանհինգ թուման (քո խնդրածի մաքսիմումը) եւ այդ գումարի գործադրութեան ձեւը ու նրա հետեւանքի պատասխանատուութիւնը թողնում ենք քեզ ու Վարդանի վրայ, եթէ նա էլ համակարծիք է քեզ հետ այդ հարցում: Միայն պարտք եմ համարում աւելացնել իմ անհատական հետեւեալ կարծիքը.*

ա) Որ այդ շինութեան աւարտումը չը համարւի ձեզ համար դրական գործ եւ փոխանակ շուտով երկիր անցնելու՝ այդտեղ չը դառնաք պատ շարող ուստաբաշիներ:

եւ բ) Որ գործը տանէք այնպիսի ձեւով, որից չը ծագի հակառակութիւններ ձեր, վարդապետի(6) *եւ տեղացիների մէջ: Ձը մոռանամ դրան աւելացնել, որ դպրոցական խնդիրը դնէք այնպիսի հիմքերի վրայ, որպէսզի ապագայում դա*

դառնայ ո՛չ թէ յարմարութիւններ ունեցող թամբալխանայ, այլ զուտ գործիչ-ների վայր՝ բոլորովին ազատ աւելորդ մարդկանցից։ Ձեզ հետ անմիջական յա-րաբերութիւն պահպանողը կը լինի Աւարայրը(7), ինչպէս ասել եմ արդէն եւ որի մասին գրուած է ուր հարկն է։ Շամից եկած սուրհանդակները այդտեղով կը վերադառնան իրանց տեղը՝ տանելով նամակ Կոմսին։ Կ՚աշխատենք նրանց տալ մի-մի հատ ատրճանակ միայն։

Համբոյրներով՝
ԴՈՒՄԱՆ

1.- Վանէն:
2.- Փամփուշտներ:
3.- Վարդան Շահպազ:
4.- Աշոտ Երկաթ (Արմենակ Լեւոնեան), որ երրորդ Ընդհ. ժողովին մասնակցելէ ետք փուքացած էր խումբով անցնիլ Սասուն, բայց ճամբան, Արճէշի մօտ կռուի բռնուելով՝ նահատակուած էր իր ընկերներով (2 Յունիս 1904): Սխալ է նամակին մէջ ենթադրուածը, թէ ան ազատած էր:
5.- Վահան Փափազեանի:
6.- Վարդապետը, աւելի ծանօթ Ընծայր յեղափոխական ծածկանունով, Ս. Թադէի վանահայր Գէորգ վրդ. Նալպանտեանն է:
7.- Աւարայրը Խոյ քաղաքի կուսակցական ծածկանունն է

Սասուն մեկնող Դումանի զինատար խումբը, 1904

63

Փաստ. 323-29

Բագուէն Ն. Դուման կը գրէ Ատրպատականի (Վրէժ) Կ. կոմիտէին:

23 *Նոյեմբեր* 1904
Բագու

Սիր[*ելիք*]

Մեծ քաղաքից(1) *ճանապարհւել են դէպի ձեր կողմերը մի հոգի մերոնցից եւ վեց հոգի Սուխումի շրջանի տաճկահայ գաղթականներից։ Դրանց միսսիան է բանակցութեան մէջ մտնել պարսից կառավարութեան եւ կալուածատէր խաների հետ՝ Պարսկաստան գաղթեցնելու համար սեւ-ծովեան շրջանի հայ գաղթականներին, որոնց ռուսաց կառավարութիւնը վճռել է գաղթեցնել ներքին նահանգները։ Թումանեանցների*(2) *այդտեղի ներկայացուցիչը շուտով նամակ կ՚ստանայ իր այստեղի տէրերից՝ աջակցելու այդ պարոններին, որ աջողութեամբ գլուխ բերեն իրանց միսսիան։ Դուք էլ, ի հարկէ, չը պիտի հեռու մնաք այդ գործից՝ նրան աջողութեամբ գլուխ բերելու համար, որ բոլոր տեսակէտներից ձեռնտու է մեզ։ Միայն չը մոռանաք այդ պարոնների ուշադրութիւնը անմիջապէս հրաւիրել Մակուայ խանութեան մէջ գտնուող ազատ հողերի վրայ եւ յատկապէս Արաքսի պարսկական ափերի վրայ Շահ-թախտի դիմացը, որը դարձեալ պատկանում է այդ խանութեան։ Անջրդիութեան մասին չը պէտք է անհանգիստ լինել, որովհետեւ Արաքսից կարելի է ջուր բարձրացնել մեքենաներով եւ առատօրէն ոռոգել ընտրած հողերը։ Այս կէտի վրայ հրաւիրեցէք լուրջ ուշադրութիւն։ Դա մեզ համար եւ մեր տեսակէտից էլ շահաւէտ է անպայման։*

Համբոյրներով
ԴՈՒՄԱՆ

1.- Թիֆլիսից:
2.- Առեւտրական տուն՝ Կովկասի եւ Պարսկաստանի մէջ:

64

Փաստ. 1534-5-2

*Մայիս*25, 1905 *թ.*
Ի Մոսկվա

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ(1)

[Ներկայացուելու համար Վիեննա գումարելի Հ.Յ.Դ. չորրորդ Ընդհ. ժողովին]

Համաձայն Արեւելեան Բիւրոյի յանձնարարութեան, մենք ներքոյ ստորագրեալքս, Դ. Հայկունիս եւ Դումանս, Ֆելիքսի(2) *հետ միասին նայեցինք Ալեքսի* 1904 *թուականի զէնքի գնման եւ առաքման հաշիւները, որից երեւաց, որ Ֆելիքսը՝ Անմեղի*(3) *հետ միասին ստացել են* 1904 *թ. ընթացքում Արեւելեան Բիւրոյից եւ Եկեղեցիի կոմիտէից*(4) *քսան հինգ հազար եօթը հարիւր ռուբլի, որի դէմ Ֆելիքսը եւ Անմեղը ներկայացրել են Ար. Բ.ին մի ցուցակ* 1904 *թ. Փետրուար* 20*ից մինչեւ Յունիսի* 20*ը.*

- Գնած-ուղարկած զանազան ապրանքների գումարաւ .....17373 *ռ.* 10 *կոպ.*

- Յունիս 20*-ից Հոկտեմբեր* 25*-ը Ֆելիքսը ներկայացրել է*
Արեւելեան Բիւրոյին մի ցուցակ ղրկւած եւ
վտանգւած ապրանքների ..... 3016 *ռ.* 25 *կ.*
- եւ Հոկտեմբեր 25*-ից մինչեւ նոր կազմ գնւած,*
ուղարկւած եւ Եկեղեցիի պահեստում պահ տւած ապրանքների
մի ցուցակ գումարաւ ..... 4038 *ռ.* 8 *կ.*

Ընդհանուր գումար ..... 24427 *ռ.* 43 *կ.*

Առաջին եւ երկրորդ ցուցակների մանրամասնութիւնները Արեւելեան Բիւրոյի մօտ գտնուելով, անկարող եղանք ճշտել եւ ստուգել այդ ցուցակների գումարները, իսկ վերջին ցուցակի մանրամասնութիւնը մեզ ներկայացրեց, որից երեւաց հետեւեալը, որ 4038 *ռ.* 08 *կոպէկից* 524 *ռ. գտնւում է զանազան մարդկանց մօտ որպէս աւանսներ ապրանքներ բերելու ժամանակ, որից երկուսը յանձնւել է նոր կազմին լրացնելու. այդ նոյն հաշւից երկու հազար ռուբլու ապրանք* (32 *հատ* N1 *եւ* 100 *ծայրը*[?]) *գտնւում է Եկեղեցում մի պարոնի մօտ, որը բանտարկւած է այժմս. դրա համար էլ հնարաւոր չէ ստանալ եւ ուղարկել. իսկ մնացեալ* 1500 *ռուբլուց մօտ* 800 *ռուբլի ծախս է եղել Ֆելիքսի վրայ եւ* 700 *ռուբլ. ապրանքներ է ուղարկւած զանազան վայրեր, որոնց ստացման կամ վտանգման մասին տեղեկութիւններ չը կան։*

Այսպէս ուրեմն, Ֆելիքսի ներկայացրած հաշուեցուցակներով, որոնց ստուգումը թողնում են Արեւելեան Բիւրոյին, հին հաշուից Ֆելիքսի վրայ մնում է կանխիկ փող՝ մի հազար երկու հարիւր եօթանասուն երկու ռուբլի 57 կ. (1272-57 կ.). այդպիսի գումարը լրացնելու համար Ֆելիքսը խնդրել է մինչեւ Յունիսի վերջը վերադարձնելու համար։

ԴՈՒՄԱՆ
Դ. ՀԱՅԿՈՒՆԻ
ՖԵԼԻՔՍ ՉԱՒԷՆԵԱՆ

1.- Զէնքի գնումներու հետ կապուած հաշուեքննութեան մը արձանագրութիւնն է: Ստորագրողներէն առաջինը Ն. Դումանն է:
2.- Դ. Հայկունի՝ Երուանդ Համամճեանի ծածկանունն է. Ֆելիքսը ծանօթ է նաեւ Չաւէն, Չաւէնեան անուններով, Ալեքսանդրապոլի գործիչ:
3.- Անմեղը՝ Սեւքարեցի Սաքոյի (Ծովիանեան) մէկ ուրիշ ծածկանունն էր:
4.- Եկեղեցի – ծածկանուն Մոսկուայի:

65

Փաստ. 429-1

30 *Մայիս* 1905
Ռոստով

[*Ռոստոմին*]
Սիր.

Ինչ որ հրահանգներ էիր ուզել կազմուող ձեռնարկիդ համար։ Մի կողմից՝ բոլորովին ազատ ժամանակ ու տրամադրութիւն չունենալով, միւս կողմից՝ Նախիջեւանից նոր ստացած տեղեկութիւնների(1) *ծանր տպաւորութեան տակ՝ հազիւ կարողացայ Մոսկվայում մի քանի վայր ի վերոյ ու անմշակ բան թելադրել Դնօ-ին*(2) *միայն քաղաքների մասին։ Իսկ գաւառների վերաբերմամբ ամենեւին ժամանակ չունեցայ որեւէ բան գրելու եւ թողի ճանապարհ ընկայ։ Երեւի Դնօն կ'ուղարկի քեզ, բայց որովհետեւ շատ է պակասաւոր ու անմշակ, չէի ցանկանայ նրան տպագրուած տեսնել։ Իսկ եթէ միայն կ'օգտուիս առ այժմ մի քանի բաներից, այդ էլ քո գործն է։*

Անցեալ օրը հասայ Ռոստով այստեղ գործս վերջացնելու, եւ հեռագրական մութ տեղեկութիւններից իմացայ, որ նոր դէպքեր են սկսել Երեւանում։ Իսկոյն հեռագիրների փոխանակութիւն սկսեց, որոնց զետեղում եմ այստեղ, մտածելով որ գուցէ մութ են եւ քո ստացած տեղեկութիւնները։

«***Երեւան.*** լուրերն անհանգստացնող են, շտապ հեռաձայնեցէք իրադարձութիւնների եւ դրութեան մանրամասների մասին»:

Այս գիշեր ստացուեց Երեւանից. «Եռօրեայ ուժեղ հրացանաձգութիւնից յետոյ, ադմինիսդրացիայի (?) կողմից ձեռք առնուած միջոցառումների շնորհիւ, ամսի 25-ից հանգիստ է. թաթարներից զոհուել են 100-ից աւելի, հայերից՝ մի քանիսը: Անկարգութիւնները շարունակւում են գաւառում: Ասում են հայերի կողմից թալանուել եւ այրուել են մի քանի գիւղեր: Մենք բոլորս ողջ ենք»:

Այսօր Երեւան. «Շնորհակալութիւն յայտնէք ադմինիսդրացիային ձեռք առած միջոցառումների համար: Եւ խնդրելով Ալէքսանդրովի աջակցութիւնը պահանջէք խստօրէն եւ անյապաղ պատժել մեղաւորներին՝ առաւելապէս գաւառային, որոնք շարունակում են անկարգութիւնները»:

Այսօր Ալէքսանդրապոլ. «Խնդրում եմ Հերիքնազովին ցուցաբերել մեծ աջակցութիւն»(3):

Ինչպէս տեսնում ես դրութիւնը ծանր է եւ վախենում եմ, որ տունս ու խանութս հրդեհի ու թալանի զոհ դառնան, եթէ դեռ չեն դարձել։ Մի քանի ժամից յետոյ ճանապարհւում եմ, ինչքան էլ վտանգաւոր լինի։

Համբոյրներով՝
քո ԴՈՒՄԱՆ

1.- Հայ-թաթարական ընդհարումներու առաջին այս շրջանին, Նախիջեւանի եւ շրջակայ գիւղերուն մէջ թուրքերը Ապրիլ եւ Մայիս ամիսներուն սարքած էին կոտորածներ եւ թալան.

2.- Դնօ, իսկական անունը անծանօթ, բայց Նալբանդի (Նոր Նախիջեւան) շրջանի ընկերներէն է:

3.- Տարբեր գիրերով շարուածքը բնագրին մէջ ռուսերէն է:

1905 թ. Փետրուար 6-ին Պաքուէն սկսելով, ապա տարածուելով Անդրկովկասի գրեթէ բոլոր շրջաններուն մէջ (Երեւան, Նախիջեւան, Զանգեզուր, Արցախ, Գանձակ, Ղազախ, Թիֆլիս), շարունակուեցան հայ-թաթարական արիւնալի բախումները, երկուստեք խլելով հարիւրաւոր զոհեր եւ պատճառ դառնալով նիւթական հսկայական վնասներու եւ քանդումներու: Ծանօթ է որ հայ ազատագրական պայքարի մէջ անուանի դաշնակցական բազմաթիւ դէմքեր (Նիկոլ Դուման, Սեւքարեցի Սաքօ, Խանասորի Վարդան, Արմէն Գարօ, Սեպուհ, Քեռի, Սեբաստացի Մուրատ, երիտասարդ Դրոն եւ շատ ուրիշներ) նետուեցան մարտի դաշտ եւ պատուով ղեկավարեցին հայութեան ինքնապաշտպանութեան գործը: Ժընեւէն Անդրկովկաս փութացին նաեւ Հ. Յ. Դաշնակցութեան ականաւոր դէմքերէն Ռոստոմ, Յոնան Դաւթեան եւ Միք. Վարանդեան:

Պաքուի մէջ հայկական թաղամասերուն վրայ անակնկալ յարձակում գործողներու դէմ դուրս եկաւ Ն. Դուման եւ փոքրաթիւ խումբով մը արժանի հակահարուած տուաւ թաթարական զինեալ խուժանին, որ հայկական թաղամասեր մտնելով սկսած էր կոտորած սարքել: Պաքուի հայոց դիմադրական կռիւներու մասին լայնօրէն անդրադարձած են ժամանակակիցները . եւ սակայն, ըստ իր սովորութեան, ոչ մէկ վկայութիւն, յուշագրութիւն կամ նամակներու ձեւին տակ, հասած է բուն դերակատարէն՝ Նիկոլ Դումանէն, մինչ Երեւանեան նահանգի եւ բուն իսկ Երեւան քաղաքի ինքնապաշտպանութեան առիթով (ուր առաքուած էր ան Հ.Յ.Դ. Բիւրոյին կողմէ եւ արդէն նոյն տարուան Մայիսի սկիզբը հոն էր), ունինք իր իսկ կողմէ շարադրուած բազմաթիւ վկայութիւններ, որոնք նամակի, շրջաբերականի եւ տեղեկագրերու միջոցաւ բացայայտ կը դարձնեն այն փրկարար դերակատարութիւնը, զոր ունեցաւ Ն. Դուման ամբողջ Արեւելահայաստանի ինքնապաշտպանութեան գործին մէջ:

Ստորեւ առաջինը այդ վկայութիւններէն,– Մրգաստանի (Երեւան) Կեղր. կոմիտէի տպագիր շրջաբերականը, կնքուած եւ ստորագրուած Կ. Կ.ի անդամներէն Սահակ Յովնանեանի (Աշուղ) եւ զինուորական լիազօր Ն. Դումանի կողմէ: Գրութեան լեզուն ու ոճը յայտնաբար կը պատկանին Դումանին: Միեւնոյն շրջաբերականը ունի խմորատիպ օրինակներ, ինչպէս նաեւ ձեռագիր պատճէն հետեւեալ մակագրութեամբ՝ «Ռոստոմին տալ՝ իր ձեռնարկի համար. Նիկ.» (փաստ. 293-55ա):

66

Փաստ. 293-55

ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆ

ՀԱՅ ՅԵՂ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՄՐԳԱՍՏԱՆԻ ՇՐՋԱՆԻ ԲՈԼՈՐ ԿՈՄԻՏԷՆԵՐԻՆ, ԵՆԹԱԿՈՄԻՏԷՆԵՐԻՆ, ԳՈՐԾԱԿԱԼՆԵՐԻՆ, ԽՄԲԱՊԵՏՆԵՐԻՆ ԵՒ ԱՌՀԱՍԱՐԱԿ ԻՐԱՒԱՍՈՒ ԲՈԼՈՐ ՊԱՇՏՕՆԵԱՆԵՐԻՆ

1905 *թիւ*, *Յունիս* 12, *Մրգաստան*

Մրգաստանի Կենտրոնական Կոմիտէն վերջերս՝ իր հետ կապւած շրջաններից ստանում է տեղեկութիւններ, որ մեր մարտական խմբերը զինւած ցոյցեր են անում թուրք ազգաբնակութեան դէմ. ընդունելով ոյժի խաղաղարար ազդեցութիւնը մեր հարեւան թուրք ազգաբնակութեան վրայ, այնուամենայնիւ այժմեան զինւած ցոյցերը մենք գտնում ենք դեռ չկազմակերպւած, բոլորովին անսիստեմ ու միանգամայն վաղաժամ։

Խնդրում ենք բոլոր մարմիններին եւ իրաւասու պաշտօնեաներին անմիջապէս վերջ տալ մարտական շարժումներին, առ այժմ կռւող խմբերը տեղաւորել հայկական վտանգաւոր գիւղերում, հրահանգ տալ միայն ինքնապաշտպանութեան համար եւ ապա շուտափոյթ եւ արագ ձեռնարկել մեր ոյժերի կազմակերպութեան հետեւեալ կերպով.

1.- *Կատարել կռւող ոյժերի մոբիլիզացիա — այսինքն զէնքի տակ կոչել բոլոր կռւի ընդունակներին, իւրաքանչիւրը իր շրջանում։*

2.- *Կենտրոնական եւ ապահով գիւղերում թողնելով* 6-8 *զինավարժ հրացանակիր ժամանակաւոր ինքնապաշտպանութեան համար՝ մնացած շրջանային բոլոր ոյժերը բաժանել խմբակների՝ տեղաւորել նրանց հայկական այնպիսի գիւղերում, որոնք ենթակայ են անմիջական վտանգի։*

3.- *Տեղում մնացած* 6-8 *զինակիր խմբակներին անւանել «մնայուն», իսկ միւսներին «թռուցիկ»։*

4.- «*Մնայուն*» *խմբակները պարտաւոր են միշտ մնալ իրանց տեղերում եւ օգնութեան գնալ հարեւան գիւղերին միայն ծայրայեղ դէպքերում։*

5.- «*Թռուցիկ*» *խմբակները պարտաւոր են թռչել ամէն կողմ՝ ուր օգնութեան կարիք կայ։*

6.- *Նշանակել ամէն մի խմբակի համար — «մնայուն թէ թռուցիկ» — խմբապետ եւ նրան օգնական, եղած ուժերից ամենահեղինակաւորներին ու հմուտներին, բացի այն խմբերից, որոնք ուղարկւած եւ ուղարկւելու են զինւորական շտաբի կարգադրութեամբ։*

7.- *Իւրաքանչիւր գիւղի բոլոր մուտքերի ամենայարմարաւոր ու բարձր տեղերում հողային դիրքեր շինել։*

8.- *Ստեղծել մշտական հերթապահութիւն եւ տալ նրանց արթուն հսկողութեան խիստ հրահանգներ։*

9.- Հեռագրի, փոստի եւ յատուկ սուրհանդակների միջոցով պահել սերտ կապ եւ արագ յարաբերութիւններ ինչպէս շրջանի բոլոր կէտերի, նոյնպէս եւ զինուորական շտաբի հետ՝ կենտրոնական կոմիտէի միջոցով։

10.- Ընդունել եւ ապահով տեղաւորել բոլոր այն խմբերին, որոնք հետզհետէ կը գան զինուորական շտաբի կողմից։

11.- Միշտ տեղեակ լինել, թէ ո՞րտեղ են գտնուում ռուս զօրքերը, որքան են, ինչ տեսակի — ձիաւոր թէ հետեւակ։

12.- Միշտ եւ անպայման խուսափել զօրքերից եւ, որ գլխաւորն է, երբեք չընդհարուել, չկռուել նրանց հետ։

13.- Այդպէս կազմ եւ պատրաստ սպասողական դիրք բռնել. միայն անհրաժեշտ դէպքում ուժեղ դիմադրութիւն ցոյց տալ մինչեւ Զինուորական Շտաբից կը ստացուի որոշ ծրագիր ու հրահանգ — ակտիւ գործողութեան համար։

14.- Զինուորների ընտրութեան մէջ առաւելութիւն տալ աւարտած զինուորներին եւ փորձաւած հայդուկներին։

15.- Կռուի ժամանակ խնայել մեր գնդակները ապարդիւն ձգելուց, մանաւանդ գիշեր ժամանակ։

16.- Ռումբի վարկը չձգելու համար, բնաւ չնետել նրան անտեղի, ապարդիւն։

17.- Երբ այս կամ այն թուրք գիւղերը յարձակուին հայ գիւղերի վերայ, հաւաքել շրջանում եղած մեր բոլոր ոյժերը եւ ամբողջ թափով, ամենախիստ եւ անխնայ կերպով պատժել յարձակողներին։

18.- Հնարաւորութեան սահմաններում նախիրն ու հօտը արածացնել գիւղերին մօտ, հրացանակիրների հսկողութեան տակ։

19.- Եթէ հայերի նախիրները կամ ոչխարները թուրքերը տանելու լինեն, ո՛չ մի ջանք չխնայել յետ խլելու։ Իսկ եթէ այդ չի յաջողուի, փոխարէնը քշել բերել թուրքերից։

20.- Անհատական սպանութիւններին պատասխանել կրկնակի սպանութիւններով — մէկի տեղ երկուսը — իսկ եթէ սպանութիւնները պարբերաբար կրկնուեն, յանցաւոր շրջանը ենթարկել ընդհանուր յարձակման։

Հայ Յեղ. Դաշ-ն Մրգաստանի
Կենտրոնական Կոմիտէի կողմից՝ ԱՇՈՒՂ

Կովկասեան ժամանակաւոր
Զինուորական լիազօր՝ [ԴՈՒՄԱՆ]

67

Փաստ. 293-23

30 *Յունիս* 1905
Մրգաստան(1)

[*Արեւելեան Բիւրոյին*]

Սիր[*ելիք*]!

Հիմա ժամանակ ունիմ մի բան գրելու։ Հէնց առաջին րոպէից հրաժարւեցի Նախիջեւանն ու Ագուլիսը ինձ վրայ վերցնելուց — նախ՝ այն պատճառով որ դրանք շատ հեռու են եւ ճանապարհների հաղորդակցութիւնը կտրւած եւ <u>երկ-բոբգ</u>՝ որ Ռաշիդն ու Մուրադը(2) *ուղարկւած էին այն կողմերը ու յարաբերութիւնները աւելի դիւրին կը լինէին Զանգեզուրի վրայով։ Բայց բանից դուրս եկաւ, որ Ռաշիդը շատ է անփորձ ու անտակտ։ Փոխանակ կազմակերպելու եւ գործ անելու՝ դիկտատուրան չը մարսած, յանուն դիկտատուրութեան միայն անգործ ցուցամոլութիւններ է անում եւ շարունակ դժգոհութիւններ յարուցանում։ Այդ դրութիւնը ապացուցանող տեղեկութիւններ ու նամակներ են հասել ե՛ւ այստեղ։ Միւս կողմից էլ՝ Մուրադն է իրան մատնել անյայտութեան։ Նրա մինչեւ իսկ ուր լինելու մասին տեղեկութիւններ չունիք ո՛չ դուք, ոչ էլ մենք։*

Դրութեան այդ վիճակում ստիպւած եմ յարգել Մեծ քաղաքի ու Ոսկանապատի(3) *նոյնանման առաջարկը եւ այդ երկու շրջանը գէ՛թ ժամանակաւորապէս վերցնում եմ ինձ վրայ։ Ռաշիդին յետ կանչեցի։ Հրահանգ տուի, որ Մուրադը իր խմբով միանայ Ռաշիդի խմբի հետ եւ ընդհանուր խմբապետութիւնը վերցնի իր վրայ։ Դաշնակցական Խաչօյին*(4) *եօթը զինւած հայդուկով ուղարկում եմ նրան օգնական։ Այս խմբին երեւի կը միանայ եւ մրգաստանցի կամաւորների մի խմբակ հինգ հոգուց՝ իրանց սեփական զէնքերով։ Բացի դրանից, այսօր ուղարկեցի նաեւ մի ինտելիգէնտ ոյժ՝ այդ շրջանները կազմակերպելու համաձայն շրջաբերական եւ բերանացի հրահանգների։ Կարգադրեցի որ Նախիջեւան քաղաքի կազմակերպական զէնքերը վերցնեն եւ տեղափոխեն գիւղերը։ Ես կարմրում եմ մեր զէնքերը Նախիջեւանում թողնելու համար։ Կարո՞ղ էք երեւակայել, որ քաղաքը դէպքերի ժամանակ ունեցել է* 38 *հրացան, հարիւրաւոր ատրճանակներ եւ բաւականաչափ խնձորներ*(5)*, բոլորն էլ «դիրքերում» անգործադիր։ Այստեղ մտցրել եմ առաջարկ, որ Նախիջեւանի կոմիտէն կազմալուծեն եւ ենթարկեն դատի, դէպքի ժամանակ այնտեղ գտնւող հայդուկների հետ միասին, յետոյ հետեւանքը յայտարարեն՝ ի խրատ եւ ի զգուշութիւն այլոց։ Առաջարկս առ այժմ գցել են ականջների ետեւը, բայց ես նոյնը պնդում եմ եւ Ձեր առաջ։*

Այժմ Մրգաստանի ընդհանուր պատկերը. մարդկային զոհերի թիւը, երեւի, չի անցնի 300-ից, իսկ թուրքերինը անհամեմատ շատ, սպանուած թէ հայերի եւ թէ զօրքերի ձեռքով։ Նախիջեւանի 47 գիւղից 20-ը հիմնայատակ, 10-ը կիսաւեր։ Մնացած շրջաններում հատ ու կտոր թեթեւ նիւթական վնասներ եւ մի քանի անհատական սպանութիւններ։ Թուրքերի կողմից մատնուած հրի ու սրի 18 գիւղ, որոնցից 2-3ը գոհացուցիչ (իմ տեսակէտից), բացի դրանից անհատական սպանութիւններ զանազան շրջաններում։ Ընդհանուր դրութիւնը այժմ խաղաղ է, եթէ հաշւի չառնենք շարունակւող անհատական հատ ու կտոր սպանութիւնները երկու կողմից։

Հիմա մեր ընդհանուր վիճակը ինքնապաշտպանութեան տեսակէտից։

Մրգաստանն ունի 27 շրջան. Նախիջեւանի եւ Ագուլիսի մասին վերը ներկայացրի աղքատ տեղեկութիւններս։ Մնացած բոլոր շրջանները արդէն մոբիլիզացիայի ենթարկւած-պրծած են տեղական մարմինների եւ այստեղից յատուկ ուղարկւած 12 շրջիկների միջոցով։ Այդ 25 շրջանից երկուսը դեռ խմբեր չեմ ուղարկել՝ չունենալու պատճառով, իսկ մնացածը բաւարար, եթէ դաշտային սկսւող աշխատանքի պատճառով չը քայքայւին մոբիլիզացիայով կազմակերպւած տեղական ոյժերը։

Այժմ թղթի վրայ ունինք ամբողջ նահանգի մարտական ոյժերի ընդհանուր ու ճիշտ պատկերը ամենափոքրիկ մանրամասնութիւններով, որի համաձայն հետզհետէ ուժեցացնում ենք թոյլ կէտերն ու կողմերը։ Անելիքների համար ոչինչ չեմ կարող ասել դրական, որովհետեւ զինւորական դրութիւնը լուրջ մտածմունքի առարկայ է ինձ համար եւ երկիւղ եմ կրում, որ նախայարձակ լինելով կառավարութիւնը աշկարայ ու ակտիւ յարի թուրքերին։

Այս առթիւ գրեցէք Ձեր կարծիքը։
ԴՈՒՄԱՆ

Կարդալուց յետոյ նամակս ուղարկեցէք Ոսկանապատ եւ սրա մի օրինակը խմբագրատուն(6)։

1.- Մրգաստան-Երեւանի Կ. կոմիտէութիւնը կ՚ընդգրկէր երեւանեան ընդարձակ նահանգը, որուն մաս կը կազմէին նոյնպէս Իգդիր-Սուրմալուն եւ Շարուր-Նախիջեւանը:

2. Սեբաստացի Մուրատ (Խրիմեան). Ռաշիդը (Տէր Մատթէոսեան) հետագային (1906–7) մարզիչ-դասատուի պաշտօն պիտի վարէր Պուլկարիոյ Հ.Յ.Դ. զինուորական դպրոցին մէջ, ուր նոյնպէս անշնորհք դուրս եկաւ իր պառակտիչ բնաւորութեամբ:

3.- Մեծ-Քաղաքը Թիֆլիսն էր կամ Արեւելեան բիւրոն. Ոսկանապատը՝ Պաքուի Կ. կոմիտէն:

4.- Դաշնակցական Խեչոյի իսկական անունն էր Ամիրեան-Գէորգեան Խաչատուր:

5.- Ձեռնառումբեր:

6.- Այսինքն՝ Ժընեւ՝ «Դրօշակ»ին:

Փաստ. 312-6

Նիկոլ Դումանի համառօտ, բայց եւ կտրուկ ոճով գրուած այս երկտողը հրաւէր մըն է մենամարտի, ուղղուած Մրգաստան-Երեւանի Կեդր. կոմիտէի անդամներէն Ռուբէն Մելիք-Մուսեանին (Բէգզադէ), իբրեւ հետեւանք Կ. Կ.ի Օգոստոս 29-ի նիստի ընթացքին իրարու հասցէին հասցուած փոխադարձ վիրաւորանքի: Գրութիւնը անթուակիր է. գրուած պէտք է ըլլայ Օգոստոսի վերջին կամ Սեպտ.ի առաջին օրերուն:

Նկատի առնելով հարցին արտասովոր բնոյթը, ինչպէս նաեւ ընկերական շրջանակներու մէջ անոր գտած հրապարակային արձագանգը, հարկ կը տեսնենք, առ ի լուսաբանութիւն, յաջորդաբար ներկայացնել Մրգաստանի թղթածրարին մէջ այս խնդրին վերաբերեալ պահպանուած միւս փաստաթուղթերը եւս: Աւելցնենք որ Ն. Դուման-Բէգզադէ հակադրութեան խնդիրը, որուն հետեւանքով վերջինս կը հեռացուի Կ. կոմիտէի կազմէն, պիտի արծարծուէր նաեւ տարեվերջին գումարուած Շրջանային ժողովին (1905 թ. Դեկտ. 26 – 1906 թ. Յունուար 3): Հարցի քննութեան նիստին կը հրաւիրուի նոյնպէս Բէգզադէ, որ կը ծանրանայ գլխաւորաբար Կ. Կ.ի կազմէն իր հեռացման վրայ: Ժողովականներու երկուստեք ունեցած թեր ու դէմ երկար արտայայտութիւններէն ետք Շրջ. ժողովը կ՚եզրակացնէ.–

1.- «Որովհետեւ Բէգզադէն չի ենթարկուել [Դումանէն] ներողութիւն խնդրելու վճռին, Կ. կոմիտէն իրաւունք ունէր նրան հեռացնել իւր կազմից»:

2.- [Ինչ կը վերաբերի հեռացման առթիւ Կ. կոմիտէի հրատարակած շրջաբերականին], «Ռայոնական ժողովը ապօրինի է համարում այս թռուցիկը, որով հեռացուած է ընկեր Բէգզադէն. բայց որովհետեւ թռուցիկը արդէն յայտարարուած է, մի նոր թռուցիկով յայտնել, որ Բէգզադէն հեռացուած է ոչ թէ Դումանին վիրաւորանք հասցնելու համար, ինչպէս ասուած է թռուցիկի մէջ, այլ Կ. Կոմիտէի միաձայն որոշման չենթարկուելու համար» (փաստ. 294-35):

Պ. Ռուբէն!

Ես ինձ համարում եմ Ձեզնից վիրաւորուած. Ուստի պահանջում եմ մենամարտութիւն:

Գուցէ ցանկանաք ընկերական դատ: Ես գիտեմ, որ աշխարհի վրայ գոյութիւն ունի նա՛եւ ընկերական դատ, բայց ես ընտրում եմ միջոցներից ամե-

նակտրուկը եւ պահանջում եմ մենամարտութիւն։ Սեկունդանտ(1) իմ կողմից նշանակում եմ Ֆար-Հատին(2) եւ, աւելորդ բանակցութիւններից խուսափելու համար, յայտնում եմ նախօրօք, որ Ձեր մերժման դէպքում, ես՝ ինչպէս ընդունուած սովորութիւն է, ձեռքերս Ձեր նկատմամբ համարելու եմ ազատ։

Ն. Տէր Յովհ.

1.- Մարտավկայ։
2.- Ֆար-Հատ – ծածկանուն Սարգիս Օհանջանեանի, նոյնպէս անդամ Կ. կոմիտէի եւ Դումանի հին ընկերներէն։



Փաստ. 312-8

Մրգաստանի կեդր. կոմիտէի տպագիր Շրջաբերականը իր կազմէն Բէգզադէի հեռացման մասին:

Հայ. Յեղ. Դաշնակցութեան «ՄՐԳԱՍՏԱՆԻ» Կենդրոնական Կոմիտէի
բայօնում գտնուած բոլոր կոմիտէներին եւ ընկերներին:

ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆ

Հայ. Յեղ. Դաշնակցութեան Մրգաստանի Կենդր. Կոմիտէն իւր սեպտ. 5-ի նիստում, քննելով ԲԷԿԶԱԴԷԻ եւ ԴՈՒՄԱՆԻ մէջ պատահած անախորժ միջնադէպը որը տեղի էր ունեցել անցեալ օգոստոսի 29-ին, Կենդ. Կոմիտէական ժողովում ընկերների ներկայութեամբ միաձայն որոշեց.

1. Բէկզադէին հեռացնել Կենդր. Կոմիտէի կազմից՝ Դումանին անտեղի վիրաւորանք հասցնելու համար:

2. Մեր այս որոշումը յայտարարել ինչպէս Մրգաստանի շրջանում եղած բոլոր Կոմիտէներին, ենթակոմիտէներին եւ ընկերներին, նոյնպէս եւ Արեւելեան Բիւրոյին ու Սարուստանի(1) Կենդրոնական Կոմիտէներին: Դումանը զիջանելով Կենդր. Կոմիտէի եւ ընկերների միջնորդութեանն ու խնդրին, իւր մենամարտի պահանջը սահմանափակեց եւ բաւականացաւ ներկայ վճռով:

ՀԱՅ. ՅԵՂ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ
ՄՐԳԱՍՏԱՆԻ Կ. ԿՕՄԻՏԷ

1.- Սարուստան – ծածկանուն Կովկասի:

Փաստ. 312-5

Բնագրին մէջ թանձր մելանով ջնջուած են բոլոր ազգանունները: Մեզի ծանօթները կու տանք ընդգծեալ: Նշենք որ ստորեւ տրուած արձանագրութիւնը կը պատկանի Մրգաստանի Կեդր. կոմիտէի անդամներէն Սարգիս Օհանջանեանի գրչին:

31 օգոստոսի 1905 թ.

Ամսոյս 29-ին, երեկոյեան, ընկերական սեղանի շուրջը խմբուած խօսակցում էին առօրեայ խնդիրների մասին հետեւեալ պարոնները – Նիկողայոս Տէր Յովհաննիսեան, Պօղոս ---------, Թովմաս ---------, Սիրական Տիգրանեան, Ռուբէն Մելիք-Մուսեան, Գէդէօն Ահարոնեան, Գալուստ Ալոյեան, Օհաննէս ---------, Սարգիս Օհանջանեան: Խօսակցութեան ժամանակ պր. Ռուբէն Մելիք-Մուսեան ծանր վիրաւորանք հասցրեց պր. Նիկ. Տէր Յովհաննիսեանին: Վիրաւորանք կրող պր. Նիկ. Տէր Յովհաննիսեանը իր պատիւը վերականգնելու համար ՄԵՆԱՄԱՐՏԻ հրաւիրեց պր. Ռուբէն Մելիք-Մուսեանին:

Ընդունելով՝ որ մենամարտի սկզբունքը անհաւասար ոյժերի մէջ վերին աստիճանի անարդար սկզբունք է մի կողմից, միւս կողմից այդ անախորժ թիւրիմացութիւնը վերացնելու նպատակով մենք՝ պարոններ Սարգիս Օհանջանեան, Պօղոս ---------, Գալուստ Ալոյեան, Յովհաննէս --------- եւ Գէդէօն Ահարոնեան, խորհրդակցելով իրար հետ եկանք հետեւեալ եզրակացութեան:

ՄԻԱՁԱՅՆ ընդունեցաւ, որ պր. Ռուբէն Մելիք-Մուսեան իր անտեղի եւ հասցրած ծանր վիրաւորանքի համար անպայման յանցաւոր է Նիկ. Տէր Յովհաննիսեանի եւ բոլոր ներկայ եղողների առաջ: Այդ հիման վրայ մենք միաձայն որոշեցինք՝

1.- Առաջարկել պր. Ռուբէն Մելիք-Մուսեանին ներողութիւն խնդրել Նիկ. Տէր Յովհաննիսեանից միեւնոյն մարդկանց ներկայութեամբ, որոնց առաջ տեղի է ունեցել վիրաւորանքը:

2.- Ընկերաբար առաջարկել պր. Ռուբէն Մելիք-Մուսեանին առժամանակ թողնել մեր ընկերական շրջանը, Նիկ. Տէր Յովհաննիսեանի հետ երկրորդ անգամ ընդհարումից խուսափելու համար:

3.- Ազնիւ խօսք առնել երկուսից էլ – Ռ. Մել. Մ. եւ Ն. Տէր Յով.– որ իրանց ամբողջ կեանքի ընթացքում պարտաւորուին ո՛չ մի խօսք չը խօսին իրար հասցէի, ո՛չ լաւ, ո՛չ վատ…

4.- Ամբողջովին խնդրել երկուսին էլ յարգելու մեր այս ընկերական որոշումները յօգուտ ընկերական համերաշխութեան:

[Կը հետեւին հինգ ջնջուած ստորագրութիւններ]:

Փաստ. 312-7

Մրգաստանի Կետրոնական Կոմիտէին

Ընկերներ!

Լսելով Ձեր արձանագրութիւնը օգոստոսի 31-ին կազմած, ստիպուած եմ յայտնելու, որ այդ արձանագրութիւնը կազմուած է միակողմանի – առանց լսելու երկու կողմին, որի հետեւանքը եղել է՝ անարդար վճիռ:

Ուստի սորանով առաջարկում եմ կամ գործը յանձնել ընկերական դատաստանի եւ կամ կետրոնականը թող լսի երկու կողմի բացատրութիւնները, արձանագրի մանրամասն այդ բացատրութիւնները եւ ապա արձանագրութիւնը որոշման հետ միասին ուղարկի Արեւելեան բիւրոյի, պատճէնը տալով ինձ:

ԲԷԳԶԱԴԷ

1905 թ. օգոստ. 31-ին

[Լուսանցքի վրայ նշում]

Կենտ. Կ. թողեց անհետեւանք. 1905 թ. 9-ին սեպտ.ի:

Մրգ. Կ. Կ.ի կողմից
ԱՇՈՒՂ

* * *

Փաստ. 312-9

Ի պատասխան Մրգաստանի Կ. կոմիտէի կազմէն իր հեռացման, Բէգզադէ կը հրապարակէ հետեւեալ խմորատիպ շրջաբերականը:

ՀԵՅԴ. ՄՐԳԱՍՏԱՆԻ ԲՈԼՈՐ ԿՈՄԻՏԷՆԵՐԻՆ,
ԵՆԹԱԿՈՄԻՏԷՆԵՐԻՆ ՈՒ ԽՄԲԵՐԻՆ

Ընկերներ!

Անցեալ օգոստոս ամսի 29-ին կենտրոնական կոմիտէի նիստերից մէկում, մի լուրջ վիճաբանութեան ժամանակ, պ. Դումանը թոյլ տուեց իրեն մի անվա-

յել առակով վիրաւորել ինձ, որի հետեւանքն եղաւ այն, որ պարոնը ինձնից փոխարինաբար վիրաւորանք ստացաւ:

Այդ հանգամանքը առիթ էր տուել պարոնին գրաւոր կերպով ինձ մենամարտի հրաւիրել, սեկունդանտ նշանակելով պ. Ֆարհատին: Ինքնըստինքեան հասկանալի է, թէ ինչ պէտք է լինէր մի յեղափոխականի պատասխանը այդ տեսակ մի անբարոյական առաջարկի:

Ահա իմ պատասխանը.–

«Պարոն! Ձեր գրութիւնը ինձ համար բացարձակ անընմբռնելի է: Բացի այն, որ ես անընդունակ եմ մի որեւէ զէնք գործածելու, միեւնոյն ժամանակ ինձ անպատուաբեր եմ համարում, պատիւս վերականգնելու համար, դիմելու մի միջնադարեան արիւնարբու միջոցի: Ամենավայել ու խելացի ձեւը համարում եմ ընկերական դատը եւ իմ կողմից նշանակում եմ 2 դատաւորներ: Իսկ եթէ այդ միջոցը Ձեզ բաւարարութեան չի տայ, այն ժամանակ, ըստ ժողովրդական առածի, իմ արիւնը Ձեզ հալալ է, կարող էք անել այն, ինչ որ դուք յարմար կը համարէք»:

Այդ նամակիս պատասխանի փոխարէն, ի մեծ զարմանս իմ, ստանում եմ մի արձանագրութիւն, որի մէջ Կ. կոմիտէի հիպնոսացած ընկերներս, միմիայն արիւնահեղութիւնից խուսափելու համար, մի կողմը թողնելով արդարութիւնը եւ առանց քննելու գործի հոգեբանական կողմը, որոշում են բաւարարութիւն տալ մէկի կապրիզներին, արատաւորելով միւսի պատիւը (որովհետեւ նրա համար այդ մէկը կարեւոր եւ անփոխարինելի ոյժ է համարւում, քան միւսը): Այդ արձանագրութիւնով ինձնից խնդրում էին 3 բան՝

1. Ներողութիւն խնդրել պ. Դումանից, 2. առժամանակ թողնել ընկերական շրջանը, քանի Դումանը այդտեղ է եւ 3. ազնիւ խօսք տալ Դումանի հասցէին երբեք չխօսել, ոչ լաւ, ոչ վատ:

Բնականաբար ընկերներիս այդ տեսակ միակողմանի եւ անբարեխիղճ վարմունքը ինձ աւելի զայրացնել կարող էր, քան բաւարարութիւն տալ: Ուստի ես, մերժելով նոցա առաջարկը, գրաւոր կերպով Կենտրոնականից պահանջեցի 2 բան՝ կամ դարձեալ, առաջին պահանջիս համաձայն, գործը ընկերական դատաստանով վերջացնել, որի որոշումները, ի հարկէ, պարտաւորեցուցիչ կը լինեն եւ կամ կենտրոնականը թող լսի երկու կողմի բացատրութիւնները, մանրամասն արձանագրել եւ ապա այդ արձանագրութիւնները իրենց որոշման հետ միասին ուղարկի Արեւելեան բիւրոյին քննութեան համար:

Ապշելու չափ տարօրինակ պատասխան եմ ստանում իմ նախկին ընկերներից. պաշտօնապէս ինձ յայտնում են, որ բողոքս Կ. կոմիտէն թողնում է անհետեւանք: Թէ ինչո՞ւ, ի՞նչ հիմունքներով, դրան ոչ մի պատասխան:

Այդ բոլորից յետոյ ես սառնասիրտ կերպով սպասում էի, որ պատուի ասպետը կամ հրապարակով կ՚անպատուի ինձ, Երեւանում ընդունուած սովորութեան համաձայն, երեսիս մուր քսելով, եւ կամ գնդակահար կ՚անի ինձ: Այն-

քան էլ ծանր չէր այդ միտքը ինձ համար, քանի որ հաւանականօրէն վաղը-միւս օրը մի արիւնարբու թուրքի դաշոյնին կամ գնդակին էլ կարող եմ զոհ գնալ:

Սակայն, ո՜վ զարմանք, յանկարծ ամսոյս 10-ին ստանում եմ կնքած թռուցիկ շրջաբերական, որտեղ Կ. կոմիտէի իմ նախկին ընկերներս, ի գիտութիւն ամբողջ աշխարհի, մինչեւ ինքնամոռացութիւն ոգեւորուած, ոտքի տակ տալով Դաշնակցութեան հիմունքները, 4-5 հոգով դուրս են շպրտում Կ. կոմիտէի կազմից մի ընկերոջ, որին ընտրողը եղած են ոչ թէ այդ 4-5 հոգին, այլ Մրգաստանի ամբողջ բայիօնը, իւր տասնեակ հազարաւոր անդամներով:

Ընկերներ! իմ անձնականի վերաբերմամբ այդ թռուցիկը շատ չնչին նշանակութիւն ունի եւ ես ինձ վիրաւորուած չեմ զգում: Սակայն ես այդ թռուցիկով ոտնահարած եմ համարում Դաշնակցութեան հիմունքները եւ, իբրեւ նախանձախնդիր դաշնակցական, բողոքում եմ բոլոր ընկերներիս այդ ապօրինի ու յանցաւոր քայլի դէմ:

Ես հեռանում եմ Կենտրոնականի անդամութիւնից, սակայն ոչ թէ նորա համար, որ ինձ արտաքսում են այնպիսի մարդիկ, որոնց իրաւունքից վեր է այդ, այլ որովհետեւ ես ինձ թոյլ չեմ տայ երբեք, այս բոլորից յետոյ, իմ նախկին ընկերների հետ պաշտօնակից ու գործակից լինելու:

Իսկ պ. Դումանի, նախկին ընկերներիս եւ իմ վարմունքի քննադատութիւնն ու արժանի գնահատութիւնը թողնում եմ Սարուստանի բոլոր դաշնակցականներին եւ մասնաւորապէս Մրգաստանի բայիօնի ընկերներիս:

ԲԷԿԶԱԴԷ

Սեպտեմբերի 11-ին, 1905 թ.
Մրգաստան

* * *

Փաստ. 312-10

Քննիչ յանձնաժողովին.

Մրգաստանի Կենտրոնական կոմիտէն Սեպտեմբերի 6-ին հրատարակած իր շրջաբերական-թռուցիկով յայտարարում է, որ Օգոստոսի 29-ին կայացած նիստում ինչ որ անախորժ միջնադէպ է տեղի ունեցել Բէկզադէի եւ Դումանի մէջ, այսինքն Բէկզադէն «անտեղի վիրաւորանք» է հասցրել Դումանին եւ դրա համար կենտր. կոմիտէն միաձայն որոշել է հեռացնել Բէկզադէին իր կազմից:

Բացի դրանից մենք իմանում ենք այդ թռուցիկից նաեւ Բէկզադէի հրատարակած մի քանի մանրամասնութիւններից, որ այդ վիրաւորանքի համար Դումանը մենամարտութեան է հրաւիրել Բէկզադէին եւ հրաժարուել է ընկերական դատից:

Մենք բոլորովին ապշած ենք. մի ինչ որ վիրաւորանքի համար, թէկուզ դա լինէր «անտեղի», յեղափոխական կազմակերպութեան պարագլուխներից մէկը, իր պատիւը վերականգնելու համար դիմում է միջնադարեան մի արիւնարբու միջոցի, մերժում է «խիստ ընկերական դատաստանը», որը պահանջում է մեր ծրագրով, եւ երբ նրա մենամարտութեան առաջարկը չի ընդունում, «իր ձեռքերը ազատ է յայտարարում»: Այդ բոլորից յետոյ կենտրոնական կոմիտէն դուրս է շպրտում իր միջից իր ամենաեռանդուն եւ ամենագործունեայ անդամներից մէկին: Չէ՞ որ միայն «ծանր յանցանքի կամ զեղծումի պարագային՝ ամէն մարմին իր մէջէն կ՚արտաքսէ յանցարար կամ զեղծարար անդամը», այն էլ ժամանակաւոր, մինչեւ «շրջանական ժողովէն վերահաստատուիլը եւ Դաշնակցութեան խորհրդի վաւերացուիլը» (Հ. Յ. Դաշնակցութեան կազմակերպական կանոններ. 1904 թ., 127 եւ 128 յօդուածներ): Միթէ՞, իսկապէս, Բէկզադէն այնպիսի ծանր յանցանք է գործել, որ արժանացել է արտաքսման ծրագրին համաձայն, թէ՞ միայն կենտրոնական կոմիտէն այդ արել է լոկ Դումանի ցանկացած արիւնահեղութիւնների, եղբայրասպան կոտորածների առաջն առնելու համար, ընտրելով չարիքներից փոքրագոյնը – ահա մի հարց, որը անհրաժեշտ է պարզել – հասարակութեան զայրացած խիղճը հանգստացնելու համար:

Մենք, ներքեւ ստորագրող դաշնակցական անհատներս, խոնարհաբար խնդրում ենք Ձեզ անպատճառ մանրամասն քննութեան ենթարկել այդ անախորժ դէպքը, որը իր սուր կերպարանք ստանալով արատաւորում է մեր կազմակերպութեան անունը, անպայման կերպով պարզել ճշմարտութիւնը եւ, եթէ հնարաւոր է, քննութիւնը կատարել ոչ թէ գաղտնի, այլ դաշնակցական ընկերների ներկայութեամբ:

Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑԱԿԱՆ ԱՆՀԱՏՆԵՐ

Սեպտեմբերի 15-ին, 1905 թ.
Մրգաստան

[Կը հետեւին 30 ստորագրութիւններ]

69

Փաստ. 293-49

ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆ
[*Խմորատիպ*]

15 *Սեպտեմբեր* 1905

Այսօր, նախաձեռնութեամբ Շ. Հ. Մ-նի(1), *նախագահութեամբ Պ. Կայծի, կայացաւ խառը ժողով, որին մասնակցում էին Շ. Հ. Մ-նի անդամները, Ա*[*զատ*] *Դ*[*աշտի*](2) 3 *շրջանների կոմիտէների անդամները, տեղական ինտելիգենցիան եւ Ա*[*զատ*] *Դ*[*աշտի*] *Զին*[*ուորական*] *լիազօրը, ուր քննուեցին զինուորական կազմին վերաբերեալ հարցեր, նպատակ ունենալով նոցա դրութիւնը բարւոքել եւ դասաւորել նոցա վտանգաւոր գիւղերում.—*

Որոշուեց.

Ա) Դասաւորել զինուորներ հետեւեալ գիւղերում.— Իմանչալու 5 *զին*[*ուոր*], *Վերին Ղոյլասար* 5 *զ*, *Նովրուզլու* 4 *զ.*, *Վերին Դարղալու* 7 *զ.*, *Դոխկուզ* 3, *Աղբաչ* 7, *Բզովանդ* 4, *Աղջաղչլաղ* 4, *Մեհրաբլու* 2, *Զոհրաբլու* 4, *Դուին* 5, *Դուին-Քիւրդքեանդ* 8, *Թոխանչալու* 4, *Ներ*[*քին*] *Դարղալու* 3 *եւ լիազօրի տրամադրութեան տակ* 15 *զ.*, *ընդամէնը* 14 *գիւղերում եւ լիազօրին* 80 *զին*[*ուոր*](3)։

Բ) Ընտրել մի մարմին, որը ունենալով Շրջանի ազատ զէնքերի ցուցակը, վերցնէ այդ զէնքերը եւ յանձնէ վարիչին, կազմակերպելու (*Ա*) *պունկտում համարուած* 80 *զինուորներից այն* 40-*ին, որոնք զէնքեր չունեն։*

Գ) Բ. պունկտի համար խառը ժողովը ընտրեց՝ Կայծին, Թափառականին եւ Խաչիկին։

Դ) 14 *գիւղերում զինուորներին կերակրելը հերթական անել, կարողութիւն ունեցող մարդկանցից,իսկ ապրելու համար որոշել մշտական մի սենեակ իւրաքանչիւր գիւղում։*

Ե) Կարօտ մարդկանց ցուցակը կը կազմէ իւրաքանչիւր գիւղի ենթակոմիտէն։

Զ) Իւրաքանչիւր գիւղի ենթակոմիտէ պիտի ունենայ խոտի պահեստ, որը պիտի հաւաքէ ունեւոր դասակարգից կարեաց չափ։

Է) Գնել ամբողջ շրջանի համար 15 ձի եւ յանձնել վարիչին։ Ձիանիք գնելու գումարը ժողովել նուէրներով հարուստ դասակարգից, որպիսի պարտականութիւնը եւ դրւում է 3 շրջանի կոմիտէների եւ Շ. Հ. Մ-նի վրայ։

Ը) Ձիանիքի համար գարի հաւաքել ամբողջ Շրջանի 33 գիւղերից, գարի ունեցողներից, որը դրւում է նոյնպէս 3 շրջ[աններ]ի կոմիտէների վրայ։

Թ) Ապահովեցնել 2 զինուորների ընտանիքի նիւթականը։

Նախագահ ժողովի — ԿԱՅԾ

Երեք շրջանի կոմիտէական անդամներ
ԹՈՅՆ, ՄԱՆԱՍ, ՓԱՐՈՍ, ՄԱԳՆԻՍ,
ՇԱՒԻՂ, ԿԱՅԾԱԿ, ԱՐԱԳ

Շ. Հ. Մ. անդամներ
ԱՐԱԳ, ԽԱՉԻԿ, ՆՈՐԵԿ, ՍԵՊՈՒՀ, ԹԱՓԱՌԱԿԱՆ

ՏԱԼԻՍ ԵՄ ԻՄ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹԻՒՆԸ ՄԻԱՅՆ ԱՅՆ ՊԱՅՄԱՆՈՎ, ՈՐ ՆԱԽ՝ ԱՅՍ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ ԻՐԱԳՈՐԾԵԼԻՍ ՁԳՈՐԾԱԴՐՈՒԻՆ ԲՌՆԻ ՄԻՋՈՑՆԵՐ, ԵՒ ԵՐԿՐՈՐԴ՝ ՈՐ 2 ԱՆԱՊԱՀՈՎ ԶԻՆՈՒՈՐՆԵՐԸ, ԵԹԷ ՀՆԱՐԱՒՈՐ Է, ԹՈՂՆՈՒԻՆ ԱՁԱՏ ԵՒ ՓՈԽԱՐԻՆՈՒԻՆ ԱՊԱՀՈՎ ՀԱՅԴՈՒԿՆԵՐՈՎ։

ԴՈՒՄԱՆ

1.- Շ. Հ. Մ. – հաւանաբար պէտք է նշանակէ՝ Շրջանային Համայնական Մարմին:
2.- Ազատ Դաշտ՝ ծածկանուն Արտաշատ քաղաքի եւ շրջանի:
3.- Իմանշալու – Արտաշատի գաւառ, այժմ՝ Մխչեան
Վերին Ղոյլասար – Արտաշատի գիւղ, այժմ՝ Բիւրաւան
Նովրուզլու – Արտաշատի շրջան, այժմ՝ Արտաշատի մէկ թաղամասը
Վերին Դարղալու – Երեւանի գաւառ, այժմ՝ Այգեզարդ
Դոխկուզ – Երեւանի գաւառ, այժմ՝ Կանաչուտ
Աղբաշ – Արտաշատի շրջան՝ այժմ՝ Արեւշատ
Բզովանդ – Արտաշատի շրջան, այժմ՝ Բերդիկ
Աղջաղշլաղ – Գառնիի շրջան, այժմ՝ Գետամէջ
Մեհրաբլու – Երեւանի գաւառ, այժմ՝ Վարդաշէն
Զոհրաբլու – Երեւանի գաւառ, այժմ Մրգանուշ
Դուին – Արտաշատի շրջան, այժմ՝ Դուին
Քիւրդքեանդ – Երեւանի գաւառ, այժմ՝ Նորաշէն
Թոխանշալու – Երեւանի գաւառ, այժմ՝ Մասիս
Ներքին Դարղալու – Երեւանի գաւառ, այժմ՝ Այգեզարդ

70

Փաստ. 293-50

ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆ
[*Տպագիր*]

Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՄՐԳԱՍՏԱՆԻ ՇՐՋԱՆԻ ԶԻՆԻՈՐԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻՆ, ՄԱՐՏԱԿԱՆ ԽՄԲԵՐԻՆ ԵՒ ՀԱՅԴՈՒԿՆԵՐԻՆ

Մի քանի օր առաջ «Նիգ» եւ «Բարձր-Տեղ» շրջաններում(1), *մէկից միւս տեղ գործով տեղափոխութեան ժամանակ, գիշերը մթութեան մէջ, յետ մնացած երկու ընկերներից մէկը՝ Վասիլը սպանւում է գնդակի մի հարւածով։ Սպանութեան յանցանքը հետը եղող ընկեր Մելքոնը ձգում է դարան մտած թուրքերի վրայ։ Մելքոնի երեսի վրայ ճանկռւածքի հետքերը կասկածի էին ենթարկում նրա ցուցմունքները եւ գործը անմիջապէս յանձնւում է Զինւորական դատարանին, բաղկացած շրջանի ընդհանուր խմբապետից, նրա երկու օգնականից եւ «Նիգ» ու «Բարձր-Տեղ» շրջանային կոմիտէների մի-մի ներկայացուցիչներից։*

Դատարանի քննութիւնից պարզւեց, որ

Նախ՝ Մելքոնը թշնամութիւն է ունեցել Վասիլի հետ եւ շարունակ ձգտել է նրան սպանելու.

Երկրորդ՝ գնդակը Վասիլին կպած է մէջքից.

Երրորդ՝ Մելքոնը, Վասիլին խփելուց յետոյ, երբ կռացել է նրա հրացանը վերցնելու, հոգեվարք Վասիլը չանկռել է նրա երեսը.

Եւ չորրորդ՝ ինքը Մելքոնը վերջապէս խոստովանեց, որ սպանութիւնը կատարւած է իւր ձեռքով, բայց պատահաբար։

Բոլոր փաստերից եւ վկաների ցուցմունքներից համոզւելով, որ սպանութիւնը կատարւած է ***ՆԱԽԱՄՏԱԾԻԱԾ*** *եւ* ***ԴԻՏՄԱՄԲ****, հրահանգ տուի օր ցերեկով* No *գիւղում, շրջանի բոլոր հայդուկների եւ ժողովրդի ներկայութեամբ, հրացանազարկ անել ընկերասպան Մելքոնին եւ այդ վճիռը ճշտիւ իրագործւեց ներկայ սեպտեմբերի* 19-*ին։*

Այժմ ընկերասպան Մելքոնի դաւաճան անունը եւ նրա տխուր յիշատակը յանձնելով բոլոր զինւորական մարմինների, մարտական խմբերի եւ հայդուկների զզւանքին ու նզովքին, նախազգուշացնում եմ ամէնքին, որ այսուհետեւ էլ նոյնանման դէպքերի հեղինակները պատժի պիտի ենթարկւեն անխնայ։

ԴՈՒՄԱՆ

23 *Սեպտեմբերի* 1905 *թ.*
Մրգաստան

Մ[*եծ*]*-քաղ*[*աք*](2), *Դաշ*[*նակցութեան*] *ազատ տպարան*

1.- Նիգը՝ Ապարանի շրջանն է, Բարձր Տեղը՝ Աշտարակի:
2.- Մեծ-Քաղաքը ծածկանունն է Թիֆլիսի, ուր տպուած է շրջաբերականը:

71

Փաստ. 293-51

ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆ
[*Տպագիր*]

ՄՐԳԱՍՏԱՆԻ ՇՐՋԱՆԻ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ԶԻՆԻՈՐԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻՆ, ԽՄԲԱՊԵՏՆԵՐԻՆ ԵՒ ՀԱՅԴՈՒԿՆԵՐԻՆ

Զինակի՛ց ընկերներ

Հիւանդութիւնից ստիպուած՝ Ձեզանից առժամանակ բաժանւում եմ ակամայ։ Բայց նախքան հեռանալս՝ ուզում եմ մի փոքր խօսել Ձեզ հետ։

Հայոց ինքնապաշտպանութեան անհրաժեշտութիւնը Ձեզ բերել է հիւծւող ժողովրդի ծոցը։ Եւ այդ անբախտ ծոցը լի՛քն է զրկանքներով։ Աւելի քան ութ ամիս ապրում էք զրկանքներով եւ, ըստ երեւոյթին, դեռ պիտի ապրէք... Գոհացէք եղածով, այդ է տնտեսապէս քայքայւող մեր թշւառ հայրենիքի ունեցածը։

Ժողովրդի մէջ պատահող յանցաւոր թերութիւնները մի պատժէք բռնութեամբ։ Դարերի ստրկութիւնն ու մշտական հալածանքը հայի մէջ դրել են որոշ պակասութիւններ։ Հնումը տիրող եւ այժմ շարունակւող դժոխային պայմանների շնորհիւ այդ պակասութիւնները դարձել են ***ԲԱՐՈՅԱԿԱՆ ՀԻԻԱՆԴՈՒԹԻՒՆ***։ *Բայց ո՛չ մի հիւանդութիւն ինչպէս ֆիզիքական, նոյնպէս եւ բարոյական, չի բժշկւում պատիժներով։ Գթոտ հսկողութեամբ վերաբերւեցէք այդ հիւանդութիւններին, քարոզեցէ՛ք, յորդորեցէ՛ք, գիտակցութեան բերէ՛ք ժողովուրդը։ Մի՛ մոռանաք, ընկերներ, որ Դուք ո՛չ վարձկան զինուորներ էք, ոչ էլ պատուհաս կօզակներ, այլ հայ ժողովրդի հարազատ զաւակները եւ նրա մարդկային իրաւունքների պաշտպանները։*

Յայտնի ճշմարտութիւն է, որ պարապութիւնը չարիքներ է ծնում։ Խօսում են շատերը, որ ձմեռը կը մնաք պարապ եւ կը ստեղծէք անախորժութիւններ։ Ես դրան չե՛մ հաւատում եւ յոյս ունիմ, որ յուսախաբ չէք անի ինձ։ Նախ եւ առաջ՝ ձմեռւայ ընթացքում գործ շատ ունիք անելու. կազմակերպեցէ՛ք ժողովրդի մարտական հում ուժերը, վարժեցրէ՛ք նրան զէնքի գործածութեան, սիրոյ յորդորներով աւելացնել տէք ռազմամթերքը, աւարտեցէ՛ք պաշտպանութեան համար հրահանգած ամրութիւնները։ Երկրորդ՝ Դուք, որ ազատութեան զինուորներ էք եւ մարդավայել կեանքի ***ԻԴԷԱԼԸ*** *հիւսել էք տանջւող ժողովրդի ցաւող վէրքերից,— դժւարանում եմ երեւակայել, որ Ձեզ թոյլ կը տաք մեր բարձր* ***ԴՐՕՇԸ*** *իջեցնել մինչեւ անախորժութիւն։ Ամէնքդ փորձով գիտէք անշուշտ, որ յանցաւոր զինուորը կրում է արժանաւոր պատիժ։ Բայց մի՛ մոռանաք, ընկերներ, որ հայդուկը ազատութեան գաղափարի մարմնացումն է եւ ամէն անգամ, երբ տեսնում եմ այդ վեհ մարմնացումը պատժի ենթակայ, ցաւում եմ խորապէս։*

Իմ բացակայութեան ժամանակ զինուորական մասի ղեկավարութիւնը մնում է ***Կենտրոնական Կոմիտէի*** *վրայ։*

Ժամանակաւոր հրաժեշտի ողջոյններով՝

7-ն *Դեկտ.* 1905 *թ.*, *Մրգաստան* ***ԴՈՒՄԱՆ***

72

Փաստ. 294-24ա, ա. տետր

ԶԵԿՈՒՅՈՒՄ

ՆԵՐԿԱՅԱՑՐԱԾ 1905 Թ. ՄՐԳԱՍՏԱՆԻ ՐԱՅՈՆԱԿԱՆ ԺՈՂՈՎԻՆ, ԶԻՆԻՈՐԱԿԱՆ ՄԱՍԻ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ

Ընկերնե՛ր,

Հարկ չկայ այս ժողովի առաջ պնդելու, որ ինչպէս ամէն մի գործ, այնպէս եւ զինուորականը՝ կարող է աջողութեամբ պսակուել միայն ա՛յն ժամանակ, երբ նպատակը պարզ է, միջոցները բաւարար, գործը լաւ կազմակերպուած եւ ղեկավարութիւնը ձեռնհաս անհատների կամ մարմինների համերաշխ ձեռքերում։

Գործին նայելով այդ հիմնական տեսակէտից՝ մենք տեսնում ենք որ ո՛չ միայն Մրգաստանը այլ եւ ամբողջ Կովկասը չա՜տ աննպաստ պայմանների մէջ էր եւ դեռ է։ Հայկա-թրքական յարաբերութիւնները պայթեցին բոլորովին անակնկալ եւ սոսկալի արագութեամբ ընդունեցին ամենալայն չափեր։ Կռուի մէջ միտք չէր նկատւում, կառավարութիւնը ակներեւ թուրքերին կողմնակից, մենք անպատրաստ, հայ ժողովուրդը ինքնապաշտպանութեան անվարժ, նրա իրական ոյժը մեզ անյայտ, գործունէութեան ծրագրի կատարեալ բացակայութիւն։ Բայց դրանց մասին մտածելու ժամանակ չը կար. ժողովուրդը կոտորւում էր, ժողովուրդը թալանւում ու վառւում էր. հարկաւոր էր շուտափոյթ օգնութիւն եւ հասաւ ո՛վ որտեղ կարող էր, ինչպէս եւ ինչով կարող էր. ամէն ինչ անկերպարան, ամէն ինչ խառիխուռն։ Սա գործի ընդհանուր պատկերն է. այժմ վերցնենք մասնաւորապէս Մրգաստանի շրջանը, որի հետ կապւած ենք անմիջապէս։

Քարաբերդում եւ ---------- (1), *թուրքերը իրանց ուժեղ զգալով՝ ծանր հարուած իջեցրին հայերի գլխին։ Իբրեւ բնական հակահարուած՝ Մրգաստանի աջող ինքնապաշտպանութիւնից յետոյ, թրքական* 17 *գիւղ յարձակման ենթարկուեցին Բարձր-Տեղի եւ* ---------- (2) *շրջաններում, ուր հայերն էին ուժեղ։ Այդ խելացի գործողութիւնից յետոյ՝ տիրեց ժամանակաւոր խաղաղութիւն։ Օգտւելով զինադադարից՝ հարկաւոր էր մի կողմից շուտափոյթ կարգի բերել մեր ներքին ոյժերը, կազմակերպել ժողովրդին ինքնապաշտպանութեան համար, իսկ միւս կողմից՝ կազմել սիստեմատիկ գործունէութեան մի՝ թէկուզ ժամանակաւոր ծրագիր։ Ժողովրդի հում մարտական ոյժերը կազմակերպելու համար դիմումներ եղան բոլոր փորձւած եւ զինուորական մասին յայտնի գործիչներին, բայց, դժբախտաբար, դրանցից ոչ ոք չկարողացաւ այդ նպատակով գա-*

ւառ դուրս գալ, ոմանք հիւանդութեան եւ ոմանք անհրաժեշտաբար կապուած լինելով Դաշնակցութեան, կամ սեփական գործերի հետ Մրգաստանում։ Ստիպուած՝ գործը յանձնուեցաւ 10-12 թէեւ անփորձ, բայց եռանդոտ ու նուիրուած երիտասարդների, որոնք արին, ինչ որ կարող էին։

Մնում էր ծրագրական բարդ հարցը, որը փոքրաթիւ անհատների գործ չէ, այլ հաւաքական ձեռնհաս ոյժերի եւ ժամանակի։ Տարաբախտաբար, բաւարար ոյժեր չը յայտնուեցան եւ ժամանակն էլ սաստիկ սուղ էր։ Այստեղ ժողովը, անշուշտ, իրաւունք ունի բացատրութիւն պահանջելու, թէ ովքե՞ր էին, որ մերժեցին իրանց աջակցութիւնը։ Դրան կարելի է պատասխանել, որ նախ՝ գինուորականները, որպէս եկւոր տարր՝ այսպիսի հարցերը կարող էին արծարծել իրանց ծանօթ նեղ շրջանում միայն եւ Կենտրոնական Կոմիտէի առաջ։ Եւ երկրորդ՝ որ ամենագլխաւորն է, ո՞վ կը յանդգնի իրան հայկական գործի սեփականատէր համարել եւ մարդիկ հրաւիրել։ Հայրենիքի ինքնապաշտպանութեան գործին անկեղծօրէն նուիրուած մարդիկ իրանք են երեւան գալիս ինքնաբերաբար եւ իրանց ուսերի վրայ են առնում լծի ծանրութեան մի մասը բոլորովին կամաւոր։ Եթէ ժողովին հարկաւոր են փաստեր, չեն պակասում օրինակները։ Անշուշտ, կարելի է ենթադրել, թէ գուցէ կային պէտքական անհատներ, յեղափոխութիւնից հեռու կանգնած, որոնք չը գիտէին ո՞ւր եւ ինչպէ՞ս գործադրել իրանց ոյժը. հարկաւոր էր կարիքը պարզել հասարակութեան առաջ։ Նախ՝ քանի որ երկու ազգեր բանակի նման կանգնած ճակատ առ ճակատ՝ կռւում էին իրարու դէմ, կարիքը ըստ ինքեան պարզ էր։

Երկրորդ՝ մեր գործը՝ իբրեւ անլեգալ գործ, չէինք կարող մեր ձայնը բարձրացնել լրագրութեան միջոցով։

Եւ երրորդ՝ այդ առթիւ խօսւել է կենտրոնական կոմիտէի հետ, խօսւել է իրանց գործունէութեամբ փոքր ի շատէ յայտնի անձնաւորութիւնների հետ, շարունակ գրւել ու հեռագրւել է Քար, Ջրաբերդ, Մեծ-քաղաք եւ Ոսկանապատ(3), մինչեւ իսկ այդ նպատակով յատուկ մարդիկ են ուղարկւել յիշած քաղաքները, բայց եւ այնպէս այդ ուղղութեամբ գործ դրած ամենատեսակ ջանք ու ճիգերի մեծագոյն մասը զարկուել է մեր տխուր իրականութեան ժէռ-ապառաժներին...

Միակ հնարաւոր ելքը մնում էր եղած ոյժերով անել, ինչ որ կարելի էր։

Ժամանակ ու հնարաւորութիւն չունենալով գրաւոր ծրագիր մշակելու, այնուամենայնիւ, այդ «կարելին» պէտք է հիմնւած լինէր թէկուզ մի քանի ղեկավարող հիմնական սկզբունքների վրայ։ Եւ այդ սկզբունքներին էին.

Առաջին՝ թիւը գոյութեան կռւի մէջ ունի ահագին նշանակութիւն։ Մահմետականների ընդհանուր թիւը Կովկասում երեք անգամ աւելի է հայերից, բայց դրանցից միայն մէկ երրորդն է շիա, որի հետ է մեր գործը, իսկ մնացած 2 երրորդը պատկանում է սիւննի աղանդին. սիւննիների ոյժը չէզոքացնելու համար՝ նրանց հետ ըստ կարելոյն [պէտք է] պահպանել բարեկամական յարաբերութիւն։

Երկրորդ՝ զէնքի «ֆոնդը» եւ եկւոր կռւողները, իրանց սակաւութեան պատճառով, կարող են լինել միայն օժանդակ ոյժեր. ինքնապաշտպանութեան յենակէտը պէտք է լինի բուն ժողովրդական մասսան եւ նրա մարտական հում ուժերը, որը անհրաժեշտ է կազմակերպել շուտափոյթ։

Երրորդ՝ ռազմամթերք ու կռւող ուժեր ստանալու համար, գլխաւորապէս ծանրանալ Քարի եւ Մեծ-քաղաքի վրայ(3)*, ուր համարեա չը կայ թրքական վտանգ։*

Չորրորդ՝ փոխադրութեան երկաթուղային արքունական միակ ճանապարհը, որ կախւած է թուրքերին կողմնակից կառավարութեան քմահաճոյքից, մեզ համար անբաւարար է կատարելապէս։ Անհրաժեշտ է ստեղծել հաղորդակցութեան ուրիշ մի քանի ճանապարհներ եւս, ինչպէս, օրինակ, Ջրաբերդից ուղղակի Արարատ(4)*, Քարից՝ Բարձր-Տեղ Նիգի վրայից, Մրգաստանից՝ Վայոց-Ձոր Տրտումի եւ Լճափի վրայից*(5)*, Վայոց-Ձորից Քարաբերդ եւ Քարաբերդից՝ Հովիտ եւն*(6)*։*

Հինգերորդ՝ թուրքերի տակտիկան պարզ յարձակողական է եւ մասսայական. մինչդեռ հայերը խեղդւում են պաշտպանողական նեղ շրջանակի մէջ եւ ապրում են անհատական կեանքով։ Հարկաւոր է հայերի մէջ զարգացնել հաւատի ոգին եւ տալ նրանց մարտական ուժերին այնպիսի կազմակերպութիւն, որ տանէր դէպի մասսայական դիմադրութիւն եւ, հարկաւոր դէպքում, մինչեւ իսկ կարողանային պաշտպանողական դիրքից անցնել յարձակողականի եւ չը խորշէին թշնամու թոյլ կողմերին հարւածելուց։

Վեցերորդ՝ ամենալայն չափերով օգտւել պահեստի հայ զինւորների վարժ հրացանաձգութիւնից։

Եօթներորդ՝ երկու ֆրոնտի վրայ միաժամանակ կռիւ չը մղելու համար՝ դադարեցնել տէրրօրը կառավարութեան պաշտօնեաների դէմ։

Ութերորդ՝ ըստ կարելոյն աշխատել ձեռք բերելու կատարելագործւած զէնքեր ու ռազմամթերք։

Իններորդ՝ կազմել ընդհանուր ղեկավար, բայց շարժուն շտաբ եւ փոքրիկ գործօն շտաբներ իւրաքանչիւր շրջանում եւն եւն։

Հիմնւելով այս գլխաւոր սկզբունքների վրայ, դեռ ամառը շտապով մշակւեցան շրջաբերական հրահանգներ՝ ուղղւած խմբապետներին ու զինւորական մարմիններին, որոնց օգնութեան ուղարկւեցան սկզբում յիշած 10-12 *երիտասարդները՝ այդ հրահանգները իրականացնելու համար։ Եւ եթէ մինչ այսօր լիովին չիրականացան այդ հրահանգները մեր լայնածաւալ նահանգում, դրա մէջ յանցաւորը, յամենայն դէպս, գործի ծանրութեան տակ ճնշւած եւ մէնակութեան մէջ խեղդւող անհատները չեն։*

Ինքնապաշտպանութեան գործը մեր շրջանում ունի, սակայն, նա՛եւ վառ գոյներ։

Հովիտը՝ սկզբում բոլորովին թոյլ, թուրքերի կատարած անհատական սպանութիւններն ու թալանները կուլ տւող, գաղթականութեան ճանապարհի վրայ

կանգնած, յետոյ ոգի առաւ այնտեղ խմբապետ ուղարկելուց եւ օգնական խմբեր հասցնելուց յետոյ ու սկսեց խաղաղարար «ակն ընդ ականը» գործադրել ամենալայն չափերով։

Սարսափահար Նախիջեւանում զինուորական մարմին կազմակերպելուց եւ հնարաւոր օգնութիւնը հասցնելուց յետոյ՝ գաղթական հոսանքը կանգ առաւ, սպանութիւններին պատասխանեցին կրկնակի եւ եռակի սպանութիւններով, 6-7 փոքրիկ յարձակման ցոյց տուին աջող դիմադրութիւն, վերջում նոյնիսկ մերո՛նք բռնեցին յարձակողական դիրք ու կատարեցին մի քանի աւերածութիւններ. եւ դեռ չը բաւականանալով այդքանով՝ հիւսիսային գիւղերի մեր խմբերը անցան սահմանակից Զանգեզուր գաւառը եւ այնտեղ կոտորածի ու թալանի ենթարկեցին թրքական մի մեծ ու անհանգիստ գիւղ։ Նախիջեւանի «գլուխ գործոցը», սակայն, քաղաքի թրքական բազարի հրդեհումն է եւ Ջահրիի(7) աւերումը, որոնց հեղինակն ու եռանդուն աջակիցը այնտեղի մեր զինուորական մարմինն է։

Շարուրի փոքրաթիւ հայ ազգաբնակչութիւնը՝ շրջապատուած 60 թուրք գիւղերով, դրուած է ամենախիստ պաշտպանողական դիրքի մէջ եւ այնտեղ դէպքեր չեն պատահել(8)։

Վայոց-Ձորում հետզհետէ կազմակերպուել են մի քանի աջող յարձակումներ եւ մերոնք միշտ դուրս են եկել յաղթական։ Հօրսի(9) աջող աւերման մէջ, որ ամենավերջին դէպքն է այդ շրջանում, կանանց ու երեխաների ջարդը, այնուամենայնիւ, ցանկալի երեւոյթ չէր։

Ագատ-Դաշտում(10) ունեցել ենք մի փոքրիկ անաջող յարձակում Ջաննաթլուի(11) վրայ, բայց դրա փոխարէն անհատական բազմաթիւ աջող սպանութիւնները ահ ու սարսափի տակ ճնշել են ամբողջ թուրք տարրը այդ շրջանում։

Լճափում(5) մեր մի հատիկ խումբը մի փոքր սահմանափակել է թրքական յարձակումները, բայց գործը ընդհանրապէս տարուել է վատ՝ կազմակերպուած չը լինելու եւ փորձուած խմբապետ ու հայդուկներ չունենալու պատճառով։ Այնտեղ եղել են զգալի թալաններ հայերից, սպանուել է մի ռուս պաշտօնեայ եւ, կարծեմ, 37 քիւրդ՝ հակառակ մեր ընդունած սկզբունքի։ Իսկ բոլորովին վերջում անփորձ խմբապետը իր խմբով ընկել է ծուղակի մէջ, ինքը վիրաւորուել, ընկերներից 7-ին զոհ տուել եւ 6-ին վիրաւոր։

Երեւանի երրորդ եւ վերջին դէպքում, ընդամէնը 10 րոպէ տեւող ընդհարման ժամանակ, հայերից սպանուել են 2, իսկ թուրքերից 15։

Արարատի շրջանը(4), որ մեր ամենաթոյլ պունկտերից մէկն է, չը հաշուելով 2-3 հոգի[ի] սպանութիւնը եռակի հատուցումով, առ այժմ մնացել է անվտանգ։

Բարձր-Տեղի եւ Նիգի(2) շրջաններում մեր խմբերի ճնշման տակ՝ բոլոր թուրքերը դարձել են գառնուկներ։

Մնացած բոլոր շրջաններում, բացի Դարա-Չիչագից(12), պատահել են թեթեւ դէպքեր եւ հայերը երբեք չեն մնացել պարտքի տակ։

Այս տեղեկագիրը խոշոր գծերով ամբողջացնելու համար՝ մնում է միայն աւելացնել, որ տասնամսեայ ընդհարումների ընթացքում հայերը ընդհանրապէս կրել են նիւթական աւելի մեծ վնաս, որ փոխադարձ յարձակումների ժամանակ հայերը ընդհանուր առմամբ աւելի շատ զոհեր են առել, քան թէ տուել, որ անհատական սպանութիւններով իւրաքանչիւր հային ընկնում է միջին թւով 5 թուրք, որ հայերի զէնքի քանակութիւնը, չնորհիւ գլխաւորապէս ժողովրդի ձեռներէցութեան ու ջանքերին, աւելացել է 2-3 անգամ, թէեւ մեծ մասը անպէտք, որ տիրում է փամփուշտի սով, չը նայելով որ նոյնիսկ ինքներս ենք բաժանել աւելի քան 100.000 հատ, եւ, վերջապէս, որ զինուորական գործը մեր շրջանում, իբրեւ նորութիւն, ազատ չէ պակասաւոր կողմերից, որի մասին մանրամասնօրէն կը խօսւի իր հերթին ու ժամանակին։

Կնքելով այս զեկուցումը, զինուորական մասը ամենեւին չէ կասկածում, որ ներկայ Ռայոնական ժողովը, որպէս ամենաբարձր յեղափոխական մարմինը Մրգաստանում, սրտի ամենայն հանգստութեամբ՝ համակւած գործի սիրով ու համերաշխ գործակցութեան լայն գաղափարով, սառնօրէն կը քննադատէ(13) *զինուորական գործունէութիւնը, կը վերացնի գործի պակասաւոր կողմերը եւ կը մտցնի հարկաւոր բարեփոխումներն ու լրացումները։*

*

* *

Ծանօթ Խմբ.– Զեկուցագրի վերջին երկու էջերուն մէջ Ն. Դուման ամփոփ գծերու մէջ կը թուէ իր առաջարկութիւնները.–

ա. դասակարգ կազմելու առաջն առնել .

1) *Զտել զինուորների շարքը անյարմար անձնաւորութիւններից.*

2) *Ստեղծել կազարմային*(14) *կեանք՝ ապրուստի ամբողջ կարիքը վերցնելով մեզ վրայ։*

3) *Զինուորներին ազատել պոլիցիական*(15) *ծառայութիւնից եւ տէրրօրիստական գործողութիւններից։*

4) *Կազմել գլխաւոր շտաբ՝ իր ճիւղերով։*

5) *Մեծացնել ինտելիգենտ ու փորձառու խմբապետների թիւը։*

6) *Տեղական-մարտական խմբերը ընտրւելու են. կազմակերպութիւնը թողնել քաղաքացիական մարմինների վրայ եւ կազմակերպելուց յետոյ միայն յանձնել զինուորական մարմիններին։*

Պոլից[*իական*] *ծառ*[*այութիւն*].— *Կենտ. Կոմիտէի, Շրջանային կոմիտէի, ենթակոմիտէի վճիռների իրագործում։ Կոմիտէների տրամադրութեան տակ զինուորներ, ժողովները զինուորներով, շրջիկները զինուորներով. Կենտրոնական Կոմիտէի անդամները զինուորներով* (*Աչուղ*). *անդամավճար հաւաքելը զինուորի ազդեցութեան տակ* (*Ղրխբուլաղ*), *կազմակերպելը զինուորներով* (*Լճափ*), *պա-*

տիժները, զինուորներով. չուկայի[?] *վրայ հսկելը զինուորներով. տուգանքները ժողովելը զինուորով. Ֆոնդի փող հաւաքելը զինուորով. բանտարկելը զինուորով. ներքին խնդիրները կարգաւորելը զինուորով* (*Քասախում*). *տէրրօրը զինուորով* (*Շարուր, Վայոց-Ձոր*)։

1.- Քարաբերդ ծածկանունն է Նախիջեւան քաղաքի: Յաջորդ տեղանունը կը պակսի բնագրին մէջ. հաւանաբար պիտի ըլլար Շարուր:

2.- Բարձր Տեղը՝ Աշտարակն է. յաջորդ տեղանունը կը պակսի. հաւանաբար պիտի ըլլար Նիգ, որ Ապարանն է:

3.- Յիշատակուած վայրերը տրուած են իրենց ծածկանուններով: Քարը՝ Ալեքսանդրապոլ-Գիւմրին է. Ջրաբերդը՝ Կարս. Մեծ-Քաղաքը՝ Թիֆլիս, Ոսկանապատը՝ Պաքու:

4.- Արարատը՝ Սուրմալու-Իգտիրի շրջանն է: Ջրաբերդից Արարատ՝ Կարսէն Սուրմալու:

5.- Տրտումը՝ այժմու Արարատի շրջանն է. Լճափը՝ Մարտունի գաւառի շրջանը:

6.- Հովիտը՝ Արարատեան դաշտն է:

7.- Ջահրի – գիւղ Նախիջեւան քաղաքի հիւսիսը:

8.- Լուսանցքին նշուած է «բերանացի բացատրութիւն»:

9.- Հօրս – գիւղ Եղեգնաձորի շրջան:

10.- Ազատ Դաշտ – ծածկանուն Արտաշատի շրջանին:

11.- Ջաննաթլու – այժմ Լանջազատ, Արտաշատի շրջան:

12.- Դարաչիչագը այժմու Ծաղկաձորն է:

13.- Քննադատել – պէտք է հասկնալ քննարկել իմաստով:

14.- Ջօրանոցային:

15.- Ոստիկանական:

73

Փաստ. 294-25, բ. տետր

Փոքրաղիր 12 էջնոց տետր, որուն կը յաջորդէ 24 էջնոց՝ դարձեալ փոքրաղիր տետր մը:

Ընկերներ,

Գրեթէ 7 ամիս է(1), *որ ես այստեղ եմ, բայց չը գիտեմ ինչո՞ւ — նո՛ր միայն «Զինուորական Շտաբ» երկու հատիկ ճռճռան բառերը ոտնահար գլորուում են ամէն ուղղութեամբ։*

Ես խորը ուշադրութեամբ լսել եմ «Զինուորական Շտաբ»ի ջերմ պաշտպաններին։ Նրանք ասում են.

«Մենք, իբրեւ ռամկավարական սկզբունքներ դաւանող դաշնակցականներ, չենք կարող զինուորական գործը յանձնել մի մարդու եւ, այդպիսով ստեղծել միապետական բռնակալ սիստեմ. վերջապէս մի քանի գլուխ միասին աւելի խելօք բան կ՚անեն, քան թէ միայն մէկը առանձին»։

Այս է, ահա՛, «Զինուորական Շտաբը» փաստաբանողների պաշտպանութեան ամբողջ ոյժը — կարճ եւ գուցէ ըստ երեւոյթին ազդու, բայց բոլորովին մակերեւութային։

Ինչպէս երեւում է, արդէն անհրաժեշտութիւն է դարձել մի քիչ երկար խօսել Շտաբի մասին եւ լուսաբանել հարցը։

Բայց այդ հարցը լուսաբանելու համար հարկաւոր է մի թեթեւ շեղում։

Իւրաքանչիւր պետութեան մէջ պատերազմ հրատարակողը, կամ արդէն յայտարարած պատերազմը ընդունողը կենտրոնական վարչութիւնն է։

Մեզանում, ուրեմն, այդ իրաւունքը պատկանում է Ընդհանուր Ժողովին, կամ նրան փոխարինող «Դաշնակցութեան Խորհրդին»(2)։ *Փորձով տեսանք արդէն, որ այդ իրաւունքից օգտուել չը կարողացան թէ՛ մէկը, թէ՛ միւսը եւ չէին էլ կարող, որովհետեւ մեր կազմակերպական սիստեմը միանգամայն անպէտք է պատերազմի համար, մանաւանդ ա՛յն դէպքում, երբ կռիւ յայտարարողը մենք չենք։ Եւ, յիրաւի, վերին աստիճանի ծիծաղելի կը լինէր, երբ թուրքերը իրանց անակնկալ յարձակումներով կոտորում էին մեզ,— մենք աշխարհի զանազան ծայրերից մարդիկ հաւաքէինք Ընդհանուր Ժողով, կամ Դաշնակցութեան Խորհուրդ կայացնելու համար։*

Այդ անակնկալ յարձակումների դէմ պաշտպանուելու գործը, ժամանակաւորապէս մնաց Կենտրոնական Կոմիտէների վրայ եւ մարդկանց թւաց, թէ այդ բոլորը կատարւում է ապակենտրոնացման հիման վրայ. մինչդեռ դա պանիկայի(3) *մի աղաղակ էր, որ գոչում էր.*

«Փրկւիր, ինչպէս կարող ես»(4):

Եւ այնուհետեւ, երբ փոքր ինչ ուշքի գալուց յետոյ, Բիւրօն ուղարկեց զանազան նահանգներ լիազօր-հրամանատարներ, մեր ամենաբարեմիտ ընկերներն անգամ դրա մէջ նկատեցին իրանց իրաւունքների դէմ ոտնձգութիւններ եւ դաշնակցական սկզբունքների բռնաբարում։ Մոռանում են մեր այդ ընկերները, որ ամէն տեղ զինուորական մասը անջատ է քաղաքացիականից եւ ամբողջ աշխարհի վրայ զինուորական գործերը ենթարկւում են կենտրոնացման սիստեմին, նոյն իսկ ռամկավարական Շվէյցարիայում։ Եւ դա առանց խորը պատճառների չէ։ Այդ հանգամանքի վրայ, անշուշտ, Դաշնակցութիւնը չէր կարող ուշադրութիւն չը դարձնել։ Եւ, եթէ յիշողութիւնս ինձ չէ խաբում, 1897 թւի Ընդհանուր Ժողովը կայացրել է մի շատ պարզ որոշում, այն է՝ «Տաճկա-Հայաստանում եւ սահմանակից շրջաններում, ուր պատերազմական դրութիւն է տիրում, ընդունւում է կենտրոնացման սիստեմը»։

Վերջին 10 ամսւայ ընթացքում Կոկվասը ներկայացնում է ո՛չ միայն պատերազմական դրութիւն, այլ եւ իսկական պատերազմի դաշտ, հայ ժողովրդի բոլոր մարտական ուժերը՝ նրա զօրաբանակը եւ նահանգները՝ թեւերը։ Բայց, դժբախտ հանգամանքների շնորհիւ, մինչ այժմ այդ թեւերը գործել են մէկը միւսից կտրւած, մէկը միւսից անկախ, անսիստեմ, անկերպարան, առանց ընդհանուր հիմնական ծրագրի։ Ձմեռը մեզ հնարաւորութիւն է տալիս հրաւիրել եթէ ո՛չ Ընդհանուր Ժողով, գոնէ Դաշնակցութեան Խորհրդի ժողով։ Եւ այդ բուն իրաւատէրը կը կազմի հիմնական ծրագիր, կը կազմակերպի գլխաւոր շտաբ, կը նշանակի հրամանատարներ եւ նրանց՝ իրանց շտաբներով՝ կ՝ուղարկի ուր որ հարկաւոր կը համարի։ Իսկ մենք պարտաւոր ենք հաւաքել ու մշակել կարեւոր նիւթերը եւ ներկայացնել այդ իրաւատիրոջ, երբ կը գայ նա։

Էապէս խօսքս վերջանում է այստեղ։

Բայց քանի որ չարատանջ «Շտաբը» դարձել է կուռախնձոր, երկու խօսք էլ այդ առթիւ։

Շտաբը կազմւում է բացառապէս շտաբ-օֆիցերներից։ Շտաբ-օֆիցերների համար գոյութիւն ունի յատուկ մասնագիտական դպրոց, ուր նրանք՝ գիշերցերեկ անբաժան, սնւում, կրթւում, դաստիարակւում են միասին, միեւնոյն գիտելիքներով, միեւնոյն ուղղութեամբ, միեւնոյն հոգով։ Դպրոցը դնում է նրանց վրայ մի ընդհանուր կնիք։ Եւ այսպիսով այդ շկոլան առաջ է բերում մարդկանց մէջ հայեացքների ու հասկացողութիւնների մի մօտաւոր նմանութիւն, որ խիստ անհրաժեշտ է ապագայի համերաշխ գործակցութեան համար։

Այստեղ «մօտաւոր նմանութիւն» բառերը ես գործածեցի դիտմամբ, որովհետեւ այդ դպրոցում աւանդւող գիտելիքների շարքում կայ մէկը, որ կարող է մտցնել հայեացքների տարբերութիւն։ Դա պատերազմական տակտիկան է։ Տակտիկան բաժանւում է երկու գլխաւոր մասերի՝ յարձակողական եւ պաշտպանողական։ Սովորողներից իւրաքանչիւրը, նայելով իր տէմպէրամենտին(5), կարող է յարձակողական տակտիկայի մէջ լինել ուժեղ, իսկ պաշտպանողականում թոյլ, կամ՝ ընդհակառակը։

Սակայն, այս հանգամանքն էլ լուրջ ուշադրութեան է առնում կառավարութիւնը։ Եթէ հիմնական ծրագրով վճռուած է բռնել յարձակողական դիրք թշնամու դէմ, բոլոր պատասխանատու պաշտօնները յանձնւում է նրանց, որոնք ուժեղ են այդ մասում, կամ՝ ընդհակառակը։ Եւ այսպիսի վերաբերումը գործնականօրէն անհրաժեշտ է, որովհետեւ աջող պատերազմի ոգին պահանջում է արագութիւն ու վճռականութիւն եւ ո՛չ թէ վիճաբանութիւն ու տատանում, որ առաջ է գալիս հայեացքների տարբերութիւնից։

Անշուշտ, իմ ունկնդիրների գլխում հարց է ծագում, թէ ինչո՞ւ համար է այսքան խօսակցութիւնը, քանի որ մենք չունինք զինուորական դպրոցներ։ Այո՛, չունինք, բայց դա դեռեւս չի նշանակում, թէ մենք համերաշխ շտաբի փոխարէն պիտի ստեղծենք քաօս։

Դժբախտութիւն է՝ որ գործին չեն մասնակցում մեր օֆիցերները, դժբախտութիւն է, որ մենք չունինք զինուորական դպրոց, բայց դրա փոխարէն մենք ունինք մի ուրիշ, թէեւ անբաւարար չկօլա։ Դա մեր յեղափոխական կեանքն է։ 15 տարւայ փորձերն ու փորձութիւնները արտադրել են որոշ քանակութեամբ մարդիկ, ոմանք պահպանողական եւ ոմանք ընդունակ աւելի համարձակ քայլերի։ Ահա՛ դրանցից է, որ պէտք է կազմի նպատակայարմար փոքրիկ շտաբներ Դաշնակցութեան Խորհրդի ապագայ ժողովը։

Իսկ եթէ շտաբ կազմելու համար մենք մարդիկ կը հաւաքենք սարից ու ձորից, դաշտից ու չօլից, բոլորովին տարբեր հայեացքներով ու հասկացողութիւններով եւ եթէ դրանք՝ ի լրումն ամենայնի, կաշկանդւած կը լինին սեփական գործերով,— դրանով մենք կը սարքենք Կրիլովի «Կվարտետ»-*ը*(6) *եւ վերջը պիտի բացականչենք.* Ա վի դուզեա կակ նի սաղիտես, Վսէ վը մուզիկանտի նէ գոդիտես(7)։

1.- Ն. Դուման Երեւան եկած էր 1905 թ. Մայիս ամսուն. հետեւաբար անքուակիր այս գրութիւնը պէտք է թուագրել միեւնոյն տարուան Դեկտեմբերին։ Շատ հաւանական է որ ինչպէս նախորդը՝ ներկայացուած ըլլայ 1905 թ. Դեկտ. 26 – 1906 թ. Յունուար 3-ին գումարուած Երեւանի Ռայոնական ժողովին։

2.- «Դաշնակցութեան Խորհուրդը» կեանքի կոչուած էր 1904 թ. Հ.Յ.Դ. երրորդ Ընդհ. ժողովի կողմէ՝ փոխարինելու համար նախկին «Դաշնակցութեան Կամքը» ներկայացնող մարմինը։ Խորհուրդը կը գումարուէր Ընդհ. ժողովներու միջեւ ինկող ժամանակամիջոցին ամէն անգամ, որ հրատապ խնդիր մը կամ պարագաներ կը ներկայանային։ Ան բաղկացած կ՚ըլլար Արեւելեան եւ Արեւմտեան բիւրոներու, չորս պատասխանատու Կեդր. կոմիտէութեանց եւ Կովկասի ինքնապաշտպանութեան մարմնի ներկայացուցիչներէն եւ լիազօրուած էր արտայայտուելու յանուն Դաշնակցութեան։

3.- Խուճապի։

4.- Բնագրին մէջ ռուսերէն։

5.- Խառնուածք, նկարագիր։

6.- Բնագրին մէջ ռուսերէն՝ Կռիլովի առակներէն մէկուն վերնագիրը, որ կը նշանակէ «Քառեակ»։

7.- Բնագրին մէջ ռուսերէն՝ իսկ դուք բարեկամներ ինչպէս էլ նստէք, որպէս երաժիշտ բանի պէտք չէք. ըսել կ՚ուզէ՝ եթէ բան մը չես կրնար ընել, մի մտներ այդ գործին մէջ, դիւրին ըլլայ, թէ դժուար։

74

Փաստ. 297-18

23 *Ապրիլ* 1906
Երեւան

Սիր[*ելիք*], [*Արեւելեան բիւրօ*]

Զը գալս ունի իր պատճառները։ Մի կողմից հետզհետէ մեծանում են ներքին դժգոհութիւնները զինւորական եւ քաղաքացիական մարմինների մէջ, միւս կողմից էլ քոչւորների ժամանակն է մօտենում եւ անհրաժեշտ է արագօրէն վերակազմւել ու պատրաստւել դրա համար։ Սմբատի(1) *երկար բացակայութիւնը մեխեց ինձ Երեւանում եւ եթէ հիմա գայի Թիֆլիս՝ նա՛ չը պիտի կարողանար քաղաքից հեռանալ։ Այդպիսով անկարելի էր դառնում այցելել գաւառները, մինչդեռ անհրաժեշտ է դա։ Վաղը ես դուրս եմ գալիս պտոյտի եւ առաջին անգամ ուղիղ դէպի Քարաբերդ*(2)*։ Ուրեմն ինձ մնում է յայտնել կարծիքս գրաւոր։ Թէեւ ճիշտ չը գիտեմ ինձ կանչելու նպատակը եւ պարզ չեն ա՛յն խնդիրները, որոնք դրւած պէտք է լինին իմ առաջ. այնուամենայնիւ, ենթադրում եմ որ Տաճկահայկական հարցը պիտի լինի այդ։ Այդ հարցին վերաբերեալ ուրիշ խնդիրներով ու մանրամասնութիւններով զբաղւելու ժամանակ ու միջոց չունենալով, ես խօսելու եմ միմիայն բռնելիք տակտիկայի մասին, այն էլ խոշոր գծերով։*

Դուք գիտէք ամէնքդ, որ անցեալում միշտ ես դէմ եմ եղել ոյժերի կենտրոնացման ո՛չ թէ նրա համար, որ այդ եղանակը համարել եմ աննպատակայարմար, այլ ա՛յն պատճառով՝ որ դրան գտել եմ բացարձակ անհնարին տիրող պայմանների շնորհիւ։ Այդ դժոխային պայմանները դեռ չեն փոխւել, ուրեմն նոյնը պիտի պնդեմ եւ այժմ։

Ես կանգ չեմ առնելու նոյնպէս ցուցական եւ այլ գործողութիւնների վրայ, որովհետեւ նախկին պայմանները ես տեսնում եմ հիմնովին կերպարանափոխւած ու փափկացած, եւ հէնց այդ նոր դրութիւնն է, որ պիտի լինի իմ զբաղման առարկան եւ իսկապէս այդ դրութիւնից էլ պէտք է բխի մեր տակտիկան։

Ռուսաստանի ազատագրական շարժումը չի կարող չազդել հարեւան Տաճկաստանի վրայ, ուր վաղուց ի վեր եռում է ներքին դժգոհութիւնը։ Այստեղ ռուսական բիւրոկրատիան, իր գոյութիւնը ու դրութիւնը պահպանելու համար, մեծացրեց իր ճնշող ոյժը մութ ոյժերով եւ անբաւարար գտնելով այդքանը, ի վերջոյ ժողովուրդներն ու ազգերը կանգնեցրեց իրարու դէմ։ Նոյնը կը լինի եւ այնտեղ, բայց աւելի վտանգաւոր, աւելի ահռելի. որովհետեւ այնտեղ հայի հարեւան ազգերը (քիւրդ եւ տաճիկ) անհամեմատ լաւ են զինւած եւ աւելի քան զօրաւոր։ Հետեւապէս հայերն այնտեղ կը տուժեն աւելի, քան այստեղ։

Այստեղ փորձանքը եկաւ ապացուցելու, որ փրկութիւնը զէնքի եւ կազմակերպելու մէջ է։ Ուրեմն գործունէութեան այս եղանակը պէտք է լինի եւ այնտեղ։ Բայց նախապէս համոզուած պիտի լինինք, որ այնտեղ, չը պիտի կարողանանք հասնել ա՛յն հետեւանքին ինչ որ այստեղ։ Որովհետեւ այնտեղ, ինչպէս ասացի, թշնամիները աւելի զօրաւոր են, հայերը անհամեմատ աղքատ, զէնքի աղբիւրները ցամաք, կազմակերպող եւ առաջնորդող ինտելիգենտ ոյժերի չափազանց սակաւութիւն եւ այստեղից նրանց բաւարար չափով օգնութեան գնալը միանգամայն անկարելի (ներկայ պայմանների եւ առհասարակ ընդհանուր դրութեան մասին խօսք լինել չի կարող)։ Այս դէպքում հայերը ուզեն-չուզեն պէտք է մասնակցեն, եւ պարտաւոր են մասնակցելու։ Բայց սա արդէն երջանիկ դրութիւն կը լինէր, ի հարկէ։ Գործը տանուլ չը տալու համար, մենք պէտք է լինինք պեսսիմիստ եւ խնդրին նայինք վատ կողմերից։ Կարող է պատահել, որ մի դաժան ծրագրով, կամ մի դժբախտ պատահարով նորից հայկական ջարդ սարքւի Տաճկաստանում։ Ինչպէ՞ս անենք, որ համեմատաբար թեթեւ պրծնենք այս դէպքում։ Զինուելու եւ կազմակերպելու մասին խօսել եմ արդէն։ Բայց նոյն իսկ եթէ լիովին մեզ աջողելու էլ լինի այդ, որին դժւարանում եմ հաւատալ (դա՛րձեալ [պայմանների] շնորհիւ)։ Ինչ էլ լինի, քիչը լաւ է ոչնչից։ Այնտեղ անհրաժեշտ է զէնք եւ կազմակերպութիւն։ Այնտեղ պէտք է ուղարկել կազմակերպողներ, բայց առանց զգալի վնաս հասցնելու այստեղի ինքնապաշտպանութեան գործին։ Տաճկաստանում կազմակերպութիւնը չը պէտք է լինի աշկարայ ու աղաղակող եւ միշտ պէտք է խուսափել առիթներ տալուց։ Աղաղակող առիթներ կը լինին նոյնպէս մեր զինակիր խմբերը նախկին ձեւով. դրանց պէտք է վերջ տալ անպայման։ Զէնքի փոխադրութիւնը պէտք է կատարւի քրդի ու տաճկի միջոցով, ինչքան հնարաւոր կը լինի այդ։ Ոյժ պէտք է տալ տեղում զէնք գնելուն, ինչքան էլ թանկ լինի այդ։ Փախստական եւ պարապ հայդուկային խմբեր չը պէտք է պահել երկրում։ Դրանք անխուսափելի կերպով գործ կը ստեղծեն։ Մի խօսքով նախապատրաստութիւնը պէտք է լինի <u>ըստ կարելոյն</u> խաղաղ։

Ըստ կարելոյն եմ ասում, որովհետեւ <u>յեղափոխական խաղաղ</u> նախապատրաստութիւնը անգիտակից ժողովրդի համար չափազանց դժւար բան է։ Յեղափոխականօրէն չը հասունացած ժողովրդի մէջ կատարւող գաղտնի գործի պոչը երեւում է միշտ։

Խաղաղ կազմակերպման եւ նախապատրաստութեան այս եղանակը վերաբերում է ո՛չ միայն նախկին կենտրոնացման, այլեւ ցուցական վայրերին, ի հարկէ։

Իսկ այստեղ գործը կը շարունակուի ըստ առաջնոյն եւ ապագայում. Ռուսաստանի ներկայ կարգերի փոփոխումից ու խաղաղութիւնը հաստատւելուց յետոյ, Կովկասը կը դառնայ մի ուժեղ ռեզերվ Տաճկահայաստանի համար։ <u>Եւ տայ Աստուած, որ մինչ այդ ո՛չ մի շարժում չը լինի երկրում</u>։ Տաճկական շարժումը երբ էլ սկսելու լինի, հայերը իրանց պէտք է պահեն չա՛տ զգոյշ։ Եթէ հա-

յերը անհեռատեսութեամբ մասնակցեն տաճիկների յեղափոխական փոքրամասնութեան շարժումներին, հաւանօրէն կը տրուին պահպանողական մեծամասնութիւնից, որին անշուշտ միացած կը լինի կառավարութիւնը։ Ընդհանուր (մեծամասնութեան) շարժումների պայմանները ի նկատի ունենալով, այնուամենայնիւ այդ բոլորը պէտք է կորցնի իր իրական նշանակութիւնը թշնամու ահռելի ոյժի առաջ։

Կայ, սակայն, մի բարեբախտ հանգամանք, որի վրայ պէտք է ծանրանալ, որից պէտք է օգտուել ժամանակին։ Դա Եւրոպայի հեղինակաւոր միջամտութիւնն է Տաճկաստանի վրայ, որի ձայնին ակամայ միշտ լսում է Բ. Դուռը։ Եւ ջարդերի առաջը առնելու նպատակով Եւրոպայի միջամտութիւնը հրաւիրելու համար՝ մի կողմից հարկաւոր է ամրացնել մեր կապերը Եւրոպայում, իսկ միւս կողմից (վերջինիս իրազեկ պահելու համար) անհրաժեշտ է երկրում ունենալ սրած ականջներ, դիտող աչքեր եւ ճշգրիտ տեղեկութիւնների կանոնաւոր հաղորդագրութիւն, որպէսզի ժամանակին կարելի լինի անել հարկաւոր դիմումները եւ հրաւիրել եւրոպական կառավարութիւնների միջամտութիւնը։

ԴՈՒՄԱՆ

1.- Խօսքը Սմբատ Խաչատրեանի մասին է, ծանօթ Բորիս ծածկանունով, որ Նիկոլ Դումանի հետ եկած էր Երեւան եւ ստանձնած կարեւոր դեր ինքնապաշտպանութեան գործին մէջ:

2.- Նախիջեւանի կուսակցական ծածկանունը:

1906 թ. Մայիս 27-ին Երեւանի ռայոնական ժողովը կ՚ընտրէ նոր Կեդր. կոմիտէ՝ կազմուած բոլորովին նոր եւ անփորձ տարրերէ, որոնք հայ-թաթարական պատերազմը աւարտած համարելով՝ կը պատրաստուէին շարքերուն մէջ զտումներ կատարելու, հիմք ընդունելով «սոցիալիստական» գաղափարախօսութիւնը: Նիկոլ Դուման ջերմ ընկերվարական մը չէր անշուշտ, կ՚ընդունէր հայ ժողովուրդին համար անոր բերելիք բարիքները, բայց կտրականապէս դէմ էր «թարմ երիտասարդութեան» կողմէ դասակարգային հիմունքներով ձեռնարկուած շարքերու զտումին: Եւ սակայն իր ներկայացուցած հրաժարականը մեծ իրարանցում ստեղծած էր ոչ միայն դաշնակցական շարքերուն, այլեւ ընդհանուր հասարակութեան մէջ: Բոլորը կ՚ըմբռնէին թէ Ն. Դումանի հեռանալով ի՛նչ ծանրակշիռ կացութեան կը մատնուէր ինքնապաշտպանութեան գործը երեւանեան նահանգի տարածքին: Տագնապը պիտի պատէր առաջին առթիւ նորընտիր Կեդր. կոմիտէին, որ ինքզինք անատակ կը համարէր դիմագրաւելու ստեղծուած անել կացութիւնը, մանաւանդ որ թուրք-թաթարներու կողմէ նշմարելի էին նոր ոտնձգութիւններ: Տագնապի մէջ էին նոյնպէս նախկին Կ. կոմիտէի անդամները, շրջանային կոմիտէական եւ զինուորական մարմինները, պատասխանատու եւ ցենզաւոր ընկերները, որոնք բոլորը ճարահատ՝ պիտի դիմէին Թիֆլիս՝ Արեւելեան բիւրոյին, որպէսզի վերջինս միջոցներ ձեռք առնէ Դումանի հեռացումը կանխելու համար:

Վերոյիշեալ պայմաններուն մէջ, ի վերջոյ, տեղի կու տայ Երեւանի Կ. կոմիտէն եւ Յունիսի 21-ին, ճիշդ մէկ օր մնացած Դումանի դրած պայմանաժամէն, իր հաւաքական հրաժարականը կը ներկայացնէ Թիֆլիսէն ժամանած Բիւրոյի անդամին: Օգոստոսի վերջերուն կը գումարուի նոր շրջանային ժողով, կ՚ընտրուի նոր Կ. Կ.՝ բաղկացած Դումանի համախոհներէն, բայց վերջինս արդէն հեռացած էր Երեւանէն:

Հարցին առաւել պարզաբանման նպատակով՝ հարկ կը տեսնենք Դումանի հրաժարական-նամակին կցել շարք մը այլ փաստաթուղթեր, քաղուած նորընտիր Կեդր. կոմիտէի արձանագրութեանց տետրէն, ինչպէս նաեւ Մրգաստանի 1906 թ. թղթածրարէն,– փաստագրական թուղթեր, որոնք բացորոշ կը դարձնեն ստեղծուած կացութեան լրջութիւնը:

75

Փաստ. 297-19

11 *Յունիս* 1906
Մրգաստան

Սիր[*ելիք*] (*Մ*[*եծ*] *Քաղաք*) [*Արեւելեան բիւրոյին*]

Բացի այն, որ ներկայ դժբախտ պայ[*մա*]*ններում չենք կարող ապրել «թարմ երիտասարդութեան» ստեղծած դասակարգային մթնոլորտում*(1), *ինքս էլ հիւանդ եմ եւ պէտք է գնամ բժշկւելու։ Թէ մէկի եւ թէ միւսի համար ես մի քանի շաբաթ առաջ արդէն յայտնել եմ այստեղի Շրջանային Ժողովին եւ ապա նորակազմ Կենտր. Կոմիտէին ու խնդրել որ շուտով կազմակերպեն նոր շտաբ մեզ փոխարինելու նպատակով։ Մինչ այժմ այդ ուղղութեամբ ոչինչ չի արուած այստեղ եւ գուցէ մտածում են, թէ ինչ կայ որ, եթէ յարմար մարդիկ չեն գտնւի մեզ փոխարինող, մենք էլ ստիպւած կը լինինք մնալու եւ այդպիսով կը վերջանայ ամէն ինչ։ Սա ենթադրական է, ի հարկէ, բայց իրականը ա՛յն է, որ թէ՛ Բորիսը*(2) *եւ թէ ես վճռականապէս հեռանում ենք ամենաուշը ամսիս* 22-*ին։ Անհրաժեշտ է շուտափոյթ ուղարկել կամ Մրգաստանում*(3) *գտնել մէկ, կամ մի քանի մարդ մեզ փոխարինելու համար մինչեւ ամսիս* 16-17*ը, որպէսզի նրանք ժամանակ ու հնարաւորութիւն ունենան գործերը ստանձնելու, նախքան ամսիս* 22-*ը։*

ԴՈՒՄԱՆ

Յ. Գ.— Եթէ մինչեւ ամսիս 22-*ը գործերը ստանձնող չը լինի, ես կը հեռանամ առանց յանձնելու. ես չեմ կարողանում գտնել մի այնպիսի կոմբինացիա*(4) (*ներկայ պայմաններն ի նկատի ունենալով՝ ի հարկէ*), *որը ինձ հնարաւորութիւն տար մնալու։*

ՆՈՅՆ

* * *

Փաստ 311-8

[Տետր Կ. կոմիտէի նիստերու արձանագրութեանց]

IV ժողով 8-VI [1906]

1) Ժողովին ներկայ էր զինուորական շտաբի ներկայացուցիչը (Պ. Դումանը): Խօսեցինք հայ-թուրք յարաբերութիւնների եւ մեր տակտիկայի մասին: Պ. Դումանը բացատրեց զինուոր. շտաբի տակտիկան եւ խօսեց իրենց անելիքի մասին: Մի քանի առարկութիւններ եղան. որոշուեց հարցը թողնել առկախ:

2) Դրանից յետոյ պ. Դումանը յայտնեց ի գիտութիւն Կենտ. կ.ի, որ ինքն այլեւս անկարող է մնալ մեր շրջանում հետեւեալ պատճառներով. 1) որ հիւանդ է եւ պէտք է գնայ բժշկելու. իսկ երկրորդը՝ եւ ամենագլխաւոր պատճառը այն է որ նա համաձայն չէ այժմ ռայոնական ժողովի որոշմանը հետ – մաքրել մեր յեղ. կազմակ[երպութիւնը], ուժեղ պրոպագ[անդայի] եւ ընտրութիւնների միջոցով, բուրժուա եւ ոչ յեղափոխական էլեմենտներից եւ այդպիսով տալ նրան յեղափ. կուսակցութեան գոյն: Նա բարոյական պարտք համարեց շեշտել, որ իրանից յետոյ այստեղից կը հեռանան շատ խմբապետներ եւ զինուորներ…

Մենք աշխատում էինք ցոյց տալ նրա այդ անտակտ եւ յեղափոխականի անուան ոչ արժանի վարմունքի բոլոր հետեւանքները, նկարագրելով մեր շրջանի դրութիւնը, թողնուած մի այդպիսի մոմենտում առանց ղեկավարողի եւ զինուորների եւ մատնուած դառն ճակատագրին: Դումանը պատասխանեց, որ այդպիսի խառն ժամանակ նա չի հեռանայ, մի քանի օր էլ կը մնայ, մինչեւ որ քաղաքը մի փոքր խաղաղի… Մի փոքր վիճաբանութիւններից յետոյ, որտեղ աշխատում էինք հարցը ճիշտ տեսակէտի վրայ դնել – այն է, որ այդ դէպքի վրայ պէտք է նայել, ինչպէս գաղափարի պայքար եւ ոչ նախ[կի]նի հետ պռակ[տիկայի] – որոշեց հաշտուել դրա հետ ինչպէս մի բնական եւ անխուսափելի երեւոյթ եւ անցնիլ հերթական հարցերին:

VI ժողով յունիսի 9-ին

1) ……

2) Երկրի ներկայացուցիչ Կոմսը(5) բողոքեց այն բանի դէմ, որ Դումանը իր պատասխանատուութեան տակ բաց է արել երկրի զէնքերը եւ ցրել այստեղ, չնայած որ Կենտ. կոմիտէի անունով են ուղարկուած եղել զէնքերը: Որոշուեց

դիմել Դումանին, որ երկրին պատկանող զէնքերը հաւաքի եւ յանձնի Կոմսին Երկիր ուղարկելու համար. իսկ այնուհետեւ – Կենտրոնական կոմիտէի անունով եկած երկրի զէնքերը առանց Կենտրոնական կոմիտէի հետ խորհրդակցելու իրաւունք չը պէտք է ունենայ բաց անելու:

VIII ժողով 11 յունիսի

……

6) Դրօ-ին(6) խնդրել, որ իր զինուորներին համոզի մնալ Հովիտում(7), իսկ եթէ չը համաձայնեն, առաջարկել, որ գնան նրանք նորը[?]. եթէ դրա հետ էլ չը համաձայնեն, արձակել նրանց ճանապարհածախս տալով, եւ կազմակերպել տեղական ոյժերը:

Յունիսի 21-ին

1) Դումանը դիմել էր մեզ եւ առաջարկել զինուորական հաշիւները ստանալ, հակառակ դէպքում նա վաղը ստիպւած պէտք է լինի հեռանալ, թողնել գրաւոր հաշիւները: Պատասխանուեց, որ նա մի 3-4 օր էլ սպասի մինչեւ մեր զինուորական գործը կարգաւորելը Բիւրոյի անդամի եւ տեղական մարմինների օգնութեամբ. հակառակ դէպքում պատասխանատուութիւնը թողնւում է իր վրայ:

* * *

Փաստ. 297-1

[Նորընտիր Կ. կոմիտէի դիմումը Արեւելեան բիւրոյին]

Հ.Յ.Դ. Արեւելեան Բիւրօին

Կենտրոնական Կօմիտէի ամսիս 8-ի նիստում ընկեր Դումանը նորից կատեգօրիկ կերպով յայտնեց, որ մի քանի օրից գնալու է այստեղից եւ նրա հետ գնալու են մի շարք խմբապետներ, իսկ այդ խմբապետների հետ եւ նրանց հետ կապւած զինուորներ: Նրա գնալու պատճառը, իր խօսքերի համաձայն, կայանում է նրանում, որ Մրգաստանի ռայօնական ժողովը զտման խնդիր է դրել մէջտեղ, որը նրա կարծիքով վաղաժամ է: Մենք երկար ժամանակ աշխատում էինք համոզել, որ հայ-թրքական ընդհարումների ժամանակ զտման խնդրի մասին խօսք չի կարող լինել, որ նրա հեռանալը վտանգի կարող է են-

թարկել Մրգաստանի ամբողջ շրջանը: Մեր բոլոր թախանձանքները մնացին անհետեւանք:

Այժմ խնդրում ենք անմիջապէս Դումանին փոխարինող մի մարդ ուղարկել, որպէսզի մինչեւ Դումանի գնալը կարողանայ կազմակերպել մեր շրջանի ինքնապաշտպանութեան գործը: Դումանը մատնացոյց է անում ընկեր Ռոստոմի, Վարդանի եւ Սաքոյի(8) վրայ իրեն փոխարինելու համար: Խընդրում ենք լուրջ ուշադրութիւն դարձնել այս հարցի վրայ, որովհետեւ, եթէ մարդ չուղարկէք, միեւնոյն բանն է, մենք անզօր ենք եւ չենք կարող ինքնապաշտպանութեան գործը կազմակերպել. շրջանը պէտք է մնայ իր ճակատագրին այսպիսի տագնապալից մօմենտում:

Հ.Յ.Դ. ՄՐԳԱՍՏԱՆԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՕՄԻՏԷ

Յ. Գ.– Ինքնապաշտպանութեան վրայ ահագին գումարներ են ծախսւում. այժմ փող չկայ. խնդրում ենք փող փոխադրել, որքան կարող էք:

Մրգաստանի Կենտր. Կօմիտէի անդամներ.– Սթարայ, Ալէքվիս, Արսէն, Արտակ, Նիգեցի, Զաւէն

Յունիսի 9-ին 1906 թ.
Մրգաստան

* * *

Փաստ. **297-25**

Արեւելեան բիւրոյին

Ընկերներ!

Մրգաստանի շրջանում վերջին ամիսները տեղի ունեցած փոփոխութիւնները – ներքին անհամաձայնութիւններ, Կենտրոնական Կօմիտէի նոր ընտրութիւնը եւ այլն… – առաջ են բերել մեր շրջանի համար մի շատ ծանրակշիռ խնդիր: Մի կողմից այդ՝ միւս կողմից հայ-թրքական նոր, սիստեմատիկ բնաւորութիւն ստացած ընդհարումները մեր շրջանը դարձրել են ինքնապաշտպանութեան տեսակէտից մի շա՜տ վտանգաւոր վայր…

Իբրեւ Մրգաստանի շրջանի հանգամանքներին շա՜տ լաւ ծանօթ, Դաշնակցութեան պրիստիժին նախանձախնդիր, մենք ընկերաբար խնդրում ենք

Ա[ռեւելեան] Բիւրոյիդ անհրաժեշտ եւ շուտափոյթ միջոցներ ձեռք առնել, որպէսզի մեր շրջանի ինքնապաշտպանութեան ամբողջ գործի կազմակերպող եւ ղեկավար Դումանը մնայ իր պօստում եւ չը հեռանայ Մրգաստանի շրջանից ինչպէս ինքը որոշել է եւ որոշումը արդէն Կենտր. Կոմիտէին յայտնել հեռանալու վերջնական ժամանակամիջոցը նշանակելով մինչեւ յունիսի 22-ը: Աւելորդ ենք համարում մանրամասն բացատրել այն պատճառները, որոնք դրդել են Դումանին մի այդպիսի աննպաստ որոշում կայացնել եւ միւս կողմից՝ մեզ համար լոյսի նման պարզ է թէ ի՞նչ ծանր հետեւանքներ կ՝ունենայ ինքնապաշտպանութեան գործը մեզանում, եթէ Դումանը հեռանայ մեզնից եւ Ա[ռեւելեան] Բիւրոն ժամանակին չառնէ դրա առաջ:

Կրկնում ենք, մենք, իբրեւ հին դաշնակցականներ, մեր երկրի պայմաններին լաւ ծանօթ, բարոյական պարտք ենք համարում տեղեկացնել Բիւրոյիդ Դումանի մեր շրջանում մնալու անհրաժեշտութեան մասին, հակառակ դէպքում ծանր հետեւանքների ամբողջ պատասխանատուութիւնը թո՛ղ ընկնի այն մարդկանց վրայ, որոնք հնար ունէին Դումանին պահելու Մրգաստանի շրջան եւ չարեցին:

[Կը հետեւին 6 ստորագրութիւններ, որոնցմէ ընթեռնելի են՝ Բժ. Տրտում (Ասլանեան)[?], Էմմանուէլ, Ջումշուդ(9), Դարվիշ(10), Ֆար-Հատ(11)]

12 յունիս 1906 թ.
Մրգաստան

* * *

Փաստ. **297-2**

Հ.Յ.Դ. Քարաբերդ(12) Կոմիտէ եւ
Զինուորական մարմին

1906 թ. Յունիսի 16-ին

Հ.Յ.Դ. Արեւելեան Բիւրոյին, Մեծ-Քաղաք

Վերջին ժամանակներս Մրգաստանում կայացած ռայօնական ժողովից յետոյ՝ լսում ենք ինչ որ ներքին դժգոհութիւնների պատճառով հեռանում է Մրգաստանից զինուոր. խորհրդի անդամ Դումանը:

Աչքի առաջ ունենալով, որ միմիայն եւ միմիայն Դումանի խիստ տակտի-

կան, աչալուրջ հսկողութիւնը եւ զինուորական հմտութիւնն էր, որ ամբողջ Մրգաստանի ինքնապաշտպանութիւնը ուժեղացրեց, հայ բնակչութեան կեանքն ու գոյքը գալիք վտանգներից փրկեց, ի նկատի ունենալով՝ որ Կովկասում համեմատաբար ամենախաղաղ դրութիւնը միմիայն Մրգաստանի շրջանումն է տիրում այդ էլ շնորհիւ միայն Դումանի խիստ հսկողութեան ընդհանուր զինուորական-ռազմական գործին՝ եւ վերջապէս ի նկատի ունենալով որ նրա հեռանալով շատ չարիքներ կ՚առաջանան՝

Մենք Քարաբերդի ընկերներս – մեր խորին շնորհակալութիւնը յայտնելով հանդերձ Դումանին – խնդրում ենք ձեզ ամէն կերպ արգելք լինել Դումանի հեռանալուն Մրգաստանից:

Հակառակ դէպքում նրա հեռանալով եւ մեր միջի ռազմագէտ-զինուորական ղեկավարների պակասութեան պատճառով մանր-մունր առիթներից նոր թալաններ եւ կոտորածներ կ՚առաջանան Մրգաստանի ընդհանուր շրջանում, որոնց պատասխանատուութիւնը մեծ չափերով կ՚ընկնի ձեզ վրայ:

[Կը հետեւին կոմիտէի 5 եւ Զին. մարմնի 2 անդամներու ստորագրութիւններ]

* * *

Փաստ. **297-26**

Արեւելեան Բիւրօին!

Մենք – Մրգաստանի շրջանում եղած Դաշնակցական Մարտական «Բօրէազ» խումբը(13) եւ նոյն շրջանում եղած Դաշնակցական զինուորներս, լսելով՝ որ պ. Դումանը ինչ որ ներքին անհամաձայնութեան շնորհիւ միանգամընդմիշտ թողնում է մեր շրջանը, որի ջանքերի շնորհիւ այնքան կանոնաւոր հիմքերի վրայ է դրուած հայ ժողովրդի ինքնապաշտպանութեան գործ, ընկերաբար խնդրում ենք Արեւելեան Բիւրօին, որ՝ եթէ Մրգաստանի շրջանում եղած հայ ժողովրդի ինքնապաշտպանութեան գործը մօտ է ձեր սրտին, ամէն միջոց ձեռք առէք որ պ. Դումանը չը հեռանայ մեր շրջանից: Նրա հեռանալը մենք համարում ենք շա՜տ վտանգաւոր եւ մի այդպիսի ծանր օրերում միանգամայն կորստաբեր:

Ուստի նորից խնդրում ենք ձեզ, ամէն կերպ աշխատէք թողնելու պ. Դումանին Մրգաստանում:

«ԲՕՐԷԱԶ» ՄԱՐՏԱԿԱՆ
ԽՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐ

[Կը հետեւին 10 բորեազականներու եւ 5 դաշնակցական զինուորներու ստորագրութիւնները. վերջիններու շարքին կը գտնուի Դրոյի անունը]

* * *

Փաստ. **297-27**

Հ. Յ. Դաշնակցութեան Արեւելեան Բիւրոյին

Մրգաստանի շրջանի Հ. Յ. Դաշնակցութեան Երեւան քաղաքի ենթակոմիտէական ընդհանուր ժողովը ի նկատի ունենալով Կենտրոնական Կոմիտէի եւ Զինուորական շտաբի անհամերաշխ գործունէութիւնը եւ վերջինիս մասնաւորապէս պ. Դումանի հրաժարականը մտաւ իւր պատգամաւորների միջոցաւ բանակցութեան մէջ, որով եւ պարզուեց որ զինուորական շտաբը հրաժարւում է եւ ինքնապաշտպանութեան գործը նորընտիր Կենտրոնական կոմիտէի կազմի հետ զուգընթացաբար չի կարող տանել այն պատճառաւ, որ ա) նորընտիր կազմը՝ բաղկացած է դեռատի եւ անփորձ երիտասարդներից եւ չունի Հ. Յ. Դաշնակցութեան անցեալի ոչ մի հետք յանձին պրն. Մրաւեանի (համաձայն նորա «Ժամանակ է սթափուել» գրքոյկի) հակա-դաշնակցական անդամից, բ) նորընտիր Կետր. Կոմիտէի (կոմիտէտի) գործող իտեօլօգները կետրոնանում են միմիայն աշխատաւորների խմբակներ կազմակերպելու եւ դասակարգային կռիւներ ստեղծելու մէջ, եւ այդ ձեւի գործունէութիւնը չի համապատասխանում ինքնապաշտպանութեան խնդրի տակտիկային:

Կետր. կոմիտէի թէ գրաւոր եւ թէ բերանացի բացատրութիւններից երեւաց ա) ինքնապաշտպանութեան գործը այնքան էլ յեղափոխական գործ չի եւ յանձնում են պ. Դումանին կամ Զինուորական շտաբին տանել ըստ իւրեանց հայեցողութեան, իսկ իրենք պարտաւոր են զբաղուել դասակարգային խնդիրներով, բ) ճանաչում եւ զգում են զինուորական շտաբի եւ պ. Դումանի անհրաժեշտութիւնը ինքնապաշտպանութեան գործի մէջ եւ վստահութիւն չեն ունենում յանձն առնել ինքնապաշտպանութեան գործը տանելու իրենց ուսերի վերայ:

Երեւան քաղաքի ենթակոմիտէական ընդհանուր ժողովը գտնում է, որովհետեւ հայ-թուրքական յարաբերութիւնները քանի գնում աւելի սուր կերպարանք են ստանում եւ ներկայումս անհրաժեշտութիւն է համարւում ինքնապաշտպանութեան խնդիրը լուրջ եւ զօրեղ հիմքերի վերայ դնել քան այլ եւ այլ ճիւղերի գործունէութիւնը, եւ որովհետեւ ինքնապաշտպանութեան գործը պահանջում է թէ Կետր. կոմիտէի եւ թէ Զինուորական շտաբի զուգընթաց եւ համերաշխ գործունէութիւն: Որոշեց իւր ընտրված պ. Գէդէօն Ահարոնեան պատգամաւորի միջոցաւ ներկայացնել Արեւելեան Բիւրոյիդ մեր Մրգաստանի շրջանի կրիտիքական դրութիւնը եւ խնդրել կարելոյն չափ շուտով քննելու վերոյիշեալ երկու մարմինների անհամերաշխութեան պատճառները եւ ելք տալու մեր այս աններդաշնակ գործունէութեան:

Ենթակոմիտէական ժողովը համոզուած է, եթէ Ձեր եւ հարեւան Կետր. կոմիտէների միջամտութիւնը (եւ) չկայանալու լինի այս գործի մէջ, Մրգաստանի շրջանի ինքնապաշտպանութեան հարցը թողնում է բախտին: Ի 14 Յունիսի 1906 ամի:

Նախագահ ենթ. ժողովի .....
Քարտուղար՝ .....

[Կը հետեւին 25 ստորագրութիւններ]

1.- Որոշ է որ Ն. Դուման խորապէս դառնացած էր, մանաւանդ հայ թաթարական ընդհարումներու տագնապալի այդ օրերուն, երիտասարդ դաշնակցականներու՝ շարքերու զտման նկատմամբ ցուցաբերած արմատական կեցուածքներէն:

2.- Բորիս – կուս. ծածկանունն էր դաշնակցական հին գործիչներէն Սմբատ Խաչատրեանի, որ Ն. Դումանի գլխաւոր օգնականներէն մէկն է:

3.- Երեւանում:

4.- Դասաւորում:

5.- Կոմս – ծածկանուն Վահան Փափազեանի, որ այդ օրերուն կը գտնուէր Կովկաս եւ իբրեւ հրաւիրեալ՝ կը մասնակցէր ժողովներուն: «Երկրի զէնքերը», իմա՝ Վասպուրական, Սասուն եւայլն ղրկուելու սահմանուած զէնքերը:

6.- Դրաստամատ Կանայեանն է:

7.- Հովիտ – Արարատեան դաշտ:

8.- Խանասորի Վարդան – բուն անունով՝ Մեհրաբեան Սարգիս. Սաքոն՝ Ծովիանեան Սարգիսն է:

9.- Ջումշուդ – ծածկանուն Տէր Մարտիրոսեան Մարտինի:

10.- Դարվիշ – ծածկանուն Ալոյեան Գալուստի:

11.- Ֆար-Հատ – ծածկանուն Օհանջանեան Սարգիսի:

12.- Քարաբերդ – ծածկանուն Նախիջեւան քաղաքի:

13.- «Բորիազ» – երեւանեան շրջանի մարտական խումբ, կազմուած պատանի աշակերտներէ:

76

Փաստ. 297-20

19 *Յունիս* 1906, *Երեւան*

Սիրելի Մհեր եւ Գարօ(1)

Հէնց այս րոպէիս ստացայ երկուսիդ նամակները՝ երկրի 30 *հատ* N 1-*ի վերաբերմամբ*(2)։

Ես չափազանց վրդովւում եմ, երբ ամէն տեսակ «տուտուց»(3) *դիմումներ ուշադրութեան էք առնում եւ դրանց հիման վրայ, միակողմանի,* (*առանց հարցի խորը թափանցելու*) *ընկերական հրահանգներ էք արձակում։*

Ես երկրի հետ ոչ մի թշնամութիւն չունիմ (*այդ խօմ, փառք Աստուծոյ, գիտեն ամէնքը*) *եւ ընդհանուր իրական շահերը ուրիշներից, կարծեմ, վատ չեմ ըմբռնում։*

Երկիրը աւելի քան մի ամբողջ ամիս այստեղ թափած ունէր N 1-*ից* 34 *հատ,* N 2a 10,000 *հատ, այնպուսի փամփուշտ* 10,000 *հատ, մաուզէր ատրճանակի փամփուշտ* 3300 *հատ։*

Եւ այսօր ձեզ գանգատւող պարոն Կոմսը(4), *փոխանակ այդ ապրանքը ժամանակին երկիր տեղափոխելու, Իգդիրում դասակարգային կռիւ էր քարոզում եւ յետոյ էլ Երեւանում նստած՝ ինտրիգներով էր զբաղւած։*

Գործը այդ դրութեան մէջ էր, երբ թուրքերը Մայիսի 27-*ին անակնկալ յարձակում գործեցին հայերի վրայ եւ հայերը տուժեցին։ Հարկաւոր էր մեր ուժերը չուտափոյթ կարգի բերել եւ տալ հակահարուած։ Բայց ինչպէ՞ս։*

Ամիսներից ի վեր շարունակ գրում էի Բիւրոյին եւ աղաղակում փողի համար, բայց այդ զիբիլ փողը չէր ուղարկւում ինձ եւ ես ստիպւած էի զինւորներին արձակել։ Աւելացած հրացանները փոխանակ պարապ-պարապ քաղաքում ձգելու՝ ուղարկեցի գաւառ, որ ծախեն ժողովրդին թէ՛ թոյլ գիւղերը ուժեղացնելու եւ թէ մեզ կանխիկ դրամ ուղարկելու, որ մտցնենք շրջանառութեան մէջ, մանաւանդ որ Զիֆօնը(5) *այլեւս մեզ զէնք չէր բաց թողնում ապառիկ, իսկ մենք դրամ չէինք կարողանում ստանալ ո՛չ դրսից, ոչ էլ շրջանից։*

Մայիսի 27-*ին քաղաքում*(6) *ունէինք ընդամէնը* 7 *զինւոր իրանց զէնքերով եւ երկու անգամ այդքան էլ տեղացիների ձեռքում, որը շատ քիչ էր, ի հարկէ, թէ պաշտպանւելու եւ թէ յարձակւելու համար։ Ճիշտ է, ժողովուրդը ունի բաւականաչափ զէնք եւ մենք նրան կազմակերպելուց յետոյ մեր ամբողջ յոյսը դրել էինք նոյն այդ ժողովրդի վրայ, բայց դառն փորձը ցոյց տուեց, որ այդ ոչխար ժողովուրդը կազմակերպւած ու զինւած լինելով հանդերձ, այնուամենայնիւ դեռեւս անընդունակ է իրան պաշտպանելու համար։*

Ահա՛ այսպիսի պայմաններում էր, որ երկրի 29 *հրացանը,* 3300 *հատ մաուզէրի փամփուշտը եւ մի քիչ էլ բերդանի փամփուշտներից հանեցի փոշիից եւ դրի քաղաքի ինքնապաշտպանութեան գործում։*

Եւ երկու օրից յետոյ այդ ապուշ Կոմսը իր բարձրագոյն իրաւունքները համարելով խախտւած՝ գրում է ինձ. «Չեմ ուզում աղմուկ բարձրացնել, խնդրեմ կարգադրէք, որ իսկոյն վերադարձնեն երկրի ապրանքները»։ Բնական պէտք է լինէր, ի հարկէ, որ ես էլ տոմսակով պատասխանէի նրան վրդովւած։ Այդ տոմ-

սակի մէջ ցոյց է տուել, որ այդքան ապրանքը միանգամից չալակել չեն կարող ո՛չ ինքը, ոչ էլ երկրի հռչակաւոր կոմիսսիան։ Պատրաստի կայ 5 N 1, 9000 այնալուի փամփուշտ եւ մի քանի հազար էլ բերդանի. Թո՛ղ այդքանը առ այժմ ուղարկեն, մինչեւ որ մենք կը ստանանք նոր զէնքեր, որ սպասում ենք, կամ թէ կ՚անցնի վտանգի սուր պերիոդը(7) եւ մենք կը վերադարձնենք անյայտ ապագայում երկրում գործադրելիք այդ ապրանքը։

Դիւրըմբռնելի է, չէ՞։

Բայց մարդիկ, դժբախտաբար, չեն կարողանում ըմբռնել այսպիսի պարզ ու տարրական ճշմարտութիւններ եւ դիմում են այստեղի Կենտր. Կոմիտէին բողոքով...

Ես Կենտրոնականին բացատրեցի իրերի դրութիւնը եւ աւելացրի. «Թո՛ղ Կենտ. Կոմիտէն իր վրայ վերցնի քաղաքի ապահովութեան պատասխանատուութիւնը եւ ես կը վերադարձնեմ մի ժամւայ ընթացքում»։ Կենտրոնականը հրաժարուեց այդպիսի պատասխանատուութիւնից եւ Կոմսը ահա՛ դիմում է Ձեզ։

Դուք էլ խորհուրդ էք տալիս... նոր ստացած N 1 40 հատը վերցնել եւ դրանից 30-ը տալ երկրին։

Իմաստուն կարգադրութիւն է, ոչինչ չունիմ դէմ, բայց այն էլ ի նկատի ունեցէք, որ այդ 40 հատը ստացել ենք չորս օր առաջ եւ ստանալուն պէս անմիջապէս կարգադրել եմ ճիշտ նոյնը, ինչ որ ասում էք դուք այժմ, եւ դեռ մի քիչ էլ աւելին։ Կարգադրել եմ եւ արդէն իրագործւած է, որ նորերը բաժանեն զինուորներին, իսկ հները տան երկրին։ Այդպէս եմ արել, որ յետոյ Կոմսը չասի թէ՝ իր բերածը աւելի լաւերն էին, քան նոր մեր ստացածը։

Իսկ ինչ վերաբերում է փամփուշտներին, այնալուի 10,000-ից վերցրել ենք միայն մի հազար եւ չունինք որ վերադարձնենք. բերդանի 10,000-ը նորից լրացրել ենք վաղուց, որովհետեւ ստացել ենք թէ Քարից(8) եւ թէ Անտառապատից(9)։ Մաուզէր ատրճանակի 300 հատ փամփուշտ եմ առել մասնաւոր մարդուց 20 կոպէկով մի քանի օր առաջ եւ յանձնել երկրի այստեղի ներկայացուցչին, իսկ աւելին տալ առ այժմ չենք կարող, որովհետեւ ո՛չ մի տեղից չենք ստացել դեռ եւս, բաժանածն էլ ժողովել չեմ կարող, որովհետեւ վտանգը դեռ չի անցել։ Ժամանակ ամենեւին չունիմ եւ եթէ այսքան երկար գրեցի, դա արդար զայրոյթի բռնկումից է, որ առաջ եկաւ ձեր նամակի բոպէական տպաւորութեան տակ։

ԴՈՒՄԱՆ

1.- Յայտնապէս ծայր աստիճանի վրդովուած Նիկոլ Դուման կը պատասխանէ Արեւելեան բիւրոյին. այս վերջինին ներկայացուցիչն է Համօ Օհանջանեան (Մեր). Գարոն՝ Արմէն Գարոն է (Գարեգին Փաստրմաճեան), անդամ Արեւելեան բիւրոյի:

2.- No 1-ը մոսին հրացանն է:

3.- Անխելք, թեթեւամիտ:

4.- Վահան Փափազեան, որ այդ օրերուն հեռացած էր Վանէն եւ կը գտնուէր Կովկաս, բայց միեւնոյն ժամանակ կը ճգնէր Վասպուրական զէնք հասցնելու գործով:

5.- Զինուորական ֆոնդ, զէնք եւ զինամթերք մատակարարող յատուկ մարմին:

6.- Այսինքն Երեւանում:

7.- Ժամանակաշրջանը:

8.- Քար – ծածկանուն Ալեքսանդրապոլ-Գիւմրիի:

9.- Անտառապատ– ծածկանուն Մեծ Դարաքիլիսայի (այժմ Վանաձոր):

77

Փաստ. 1737-3

Տպագիր ազդարարութիւն-կոչ, ուղղուած նախկին խմբապետ Միհրանի (Քէշիշեան) եւ իր հետեւորդներու անկարգապահ ու անիշխանական արարքներուն:

Կոչին տակ ստորագրած են խումբ մը անուանի մարտիկներ, առաջինը՝ Դուման, որ՝ ազդարարութեան լեզուէն ու ոճէն դատելով՝ հեղինակն է անոր: Իր կողքին կը գտնուին անունները, ի միջի այլոց, Սեպուհի (Արշակ Ներսէսեան), Սմբատի (Բորոյեան), Դաշնակցական Խէչոյի (Ամիրեան): Ազդարարութիւն-կոչը, հաւանաբար լոյս ընծայուած Թիֆլիս, անթուակիր է. պէտք է թուագրել 1906 թ. աշնան ամիսներուն:

ԴԱՇՆԱԿՑԱԿԱՆ ԸՆԿԵՐ ԶԻՆԻՈՐՆԵՐԻՆ

Նոր լոյս է ընկել ինչ որ երկու խղճուկ թռուցիկ — մինը՝ «Մեղադրական ակտ» *վերնագրով, միւսը՝* «Զինուորական ժամանակաւոր դիկտատուրա»…

Հեղինակը, կամ փոքրաթիւ հեղինակները (գուցէ հալածուած կուսակցութիւնից), իրանց անւանում են «Հ. Յ. Դաշնակցութեան ժամանակաւոր Զինուորական խորհուրդ»:

Այդ ինքնակոչ ու աներեւոյթ մարմինը Դաշնակցութեան Խորհրդին եւ Արեւելեան եւ Արեւմտեան Բիւրօներին երեւակայում է պատճառ «մեր ներկայ քաղաքական բարդ ու փոթորկալից կեանքի» եւ յանդուգն համարձակութեամբ յայտարարում է զինուորական դիկտատուրա…

Ուրեմն, մի հոգեկան հիւանդ կամ մի բռնակալ խմբակ երազում է կենտրոնացնել իր ձիրաններում ռամկավար-Դաշնակցութեան բոլոր գործերը եւ հուրն ու սուրը դարձնել ղեկավարող սկզբունք։

Ըստ ինքեան զուարճալի ցնորք է այդ, ի հարկէ· բայց դա դառնում է չափազանց վրդովեցուցիչ, երբ այդ նենգամիտ պարոնները, փոխանակ իրանց դժգոհութիւնները բացատրելու ուր հարկն է եւ արդար պահանջներ դնելու (եթէ ունին), *ձգտում են միահեծան իշխանութեան եւ այդ գարշ նպատակը քօղարկում են Դաշնակցութեան շահերով, խօսում են նահատակ-ընկերների անբիծ անունից, յայտարարում են այդ դաւադրութեան իբր մեղսակից դեռ կենդանի ու յարգւած ընկերներին։*

Եւ այդ բոլորը միամիտ զինուորներին մոլորութեան մէջ ձգելու եւ իրանց ցանցառ շարքերը խտացնելու համար։

Զգուշացէք, ընկերներ, եւ զգուշացրէք միամիտ ընկերներին, որ անմեղ զոհ չդառնան ի զուր։

Իսկ դաւաճան պարագլուխները չուտով կը յանձնուեն արտակարգ զինուորական դատարանին, կազմուած Դաշնակցութեան պատշաճ մարմինների կողմից։

ԴՈՒՄԱՆ,
ՍԵՊՈՒՀ,
ՀԱՋԻ-ՅԱԿՈԲ,
ՄԽԻԹԱՐ,
ԱԽԼԱԹՅԻ ՄՈՒՐԱԴ,
ՍՄԲԱՏ,
ԽԷՉՕ (Դաշնակցական)

Ծանօթ.— Յաւում ենք, որ մեր ընկերներից շատերը բացակայ են եւ դեռ ոչինչ չը գիտեն այս անախորժ դէպքի մասին։



Դաշնակցական Խէչօ

78

Փաստ. 325-4

Հաւաքական դիմում, որուն տակ բոլոր ստորագրողները անդամ էին 1906-ին Պաքուի (Ոսկանապատ) Կ. կոմիտէին: Ձեռագիրը կը պատկանի Յարութիւն Շահրիկեանի (Նիքրա): Միւս ստորագրողներն են՝ Նիկոլ Դուման, բժ. Տէր Թովմասեան (Գութանեան), Տիգրան Աղամալեան (Մուշեղ), Լեւոն Թադէոսեան (Չոփուռեան):

16 *Հոկտեմբեր* 1906
Ոսկանապատ(1)

Արեւմտեան Բ[իւրոյ]ի ընկերներին!

Աչքի առաջ ունենալով Ռուսաստանի ներկայ քաղաքական խառնակ ու անորոշ դրութիւնը՝ որով բազմամարդ ժողովներ կարող են ո՛չ միայն արգիլուել, այլ եւ մասնակիցները վտանգուել։

Աչքի առաջ ունենալով մեր մէջ գաղտնապահութեան բացակայութիւնը եւ մեր բոլոր քայլերի ո՛չ պատշաճ տեղերում յայտնի լինելը։

Փորձառութեամբ գիտենալով՝ որ մեր ժողովները Կովկասում աւելի շուտ միտինգի բնաւորութիւն են կրում եւ մուտք են գտնում այնպիսիներ՝ որոնց դաշնակցական համարուելը դեռ հարց է եւ փորձառութիւնը բացակայում է։

Աչքի առաջ ունենալով, որ Կովկասում գումարելի Ընդ. Ժողովում(2) *մի կողմից այդպիսիները մուտք գտնելով մտքերի ճնշում կարող են գործ դնել, իսկ միւս կողմից նոյն համեմատութեամբ տաճկահայ ինտելիգենցիան մուտք ունենալու հնարաւորութիւնից զուրկ է։*

Աչքի առաջ ունենալով, որ յառաջիկայ Ընդ. Ժողովում լուծելի ամենածանրակշիռ հարցն է տաճկահայոց դատը։

Մենք բացարձակապէս վտանգաւոր ու անյարմար ենք գտնում յառաջիկայ Ընդ. Ժողովի Կովկասեան կամ Ռուսաստանի սահմաններում գումարելը՝ եթէ այդպիսի մտադրութիւն կայ։

Ուստի, պահանջում ենք գումարման տեղը որոշել Կովկասի, առհասարակ Ռուսաստանի սահմաններից դուրս։

ԴՈՒՄԱՆ, ԳՈՒԹԱՆԵԱՆ, ՄՈՒՇԵՂ,
ՉՈՓՈՒՌԵԱՆ, ՆԻԹՐԱ

1.- Ոսկանապատ – ծածկանուն Պաքուի, ուր վերադարձած էր արդէն Նիկոլ Դուման:

2.- Խօսքը կը վերաբերի Հ.Յ.Դ. չորրորդ Ընդհ. ժողովին, որ գումարուեցաւ Վիեննա, 1907 թ. Փետր. 22-էն սկսեալ:

79

Փաստ. 328-54

Նիկոլ Դումանի այս նամակը ուղղուած է Ժընեւ՝ Արեւմտեան բիւրոյին: Խնդրոյ առարկայ երիտասարդները դաշնակցական յայտնի ահաբեկիչներ Դրաստամատ Կանայեան (Դրօ) եւ Մարտիրոս Չարուխճեանն են: Գրուած է Պաքուի մերձակայ նաւթարդիւնաբերական Սաբունչի գիւղէն:

8 *Հոկտ.* 1907
Սաբունչի

Սիր.

Գրաբեր երկու երիտասարդները գալիս են Ձեզ մօտ մի առ ժամանակ հանգստանալու եւ գլխաւորապէս բժշկւելու նպատակով: Եթէ ո՛չ երկուսին, գոնէ մէկին ճանաչում է Յօնանը [Դաւթեան]:

Խնդրում եմ ցոյց տալ սրանց ամենատեսակ աջակցութիւն: Նիւթական միջոցներ ունին սրանք մասնաւոր աղբիւրից — Յունվարից մինչեւ Սեպտ. յիսունական ռուբլի ամսական, որ պիտի ուղարկւի ամսէ ամիս: Եթէ նոյնիսկ չը լինէր այդ, ի՞նչ ասել կ՚ուզէ, որ պիտի հոգայինք ինքներս: Յամենայնդէպս, պիտի ասեմ Ձեզ, որ եթէ նրանք կարիք ունենան միանուագ ստանալու որեւէ մի գումար, բաց թողեցէք նրանց մինչեւ հինգ հարիւր ռուբլի իմ յատուկ պատասխանատուութեան տակ: Սրանց ներկայացրէք ամենայայտնի բժիշկների եւ, եթէ կարիք լինի, անել տուէք օպերացիա: Մի խօսքով մի՛ խնայէք ո՛չ մի աջակցութիւն, լինի բարոյական, թէ նիւթական:

Երբ հարկ լինի, սրանց վերադառնալու, կը գրեմ ինքս այդ մասին:

Համբոյրներով
ԴՈՒՄԱՆ

Մոռացայ ասելու, որ այդ հինգ հարիւր ռուբլին, որ պիտի փոխադրւի մէկի համար մասնաւոր աղբիւրից, մէկի համար է միայն, միւսի համար վճռւած է տալ մեզնից, որը կը վճարէք ինքներդ: Իսկ եթէ փող չունենաք, կը տաք փոխարինաբար եւ կը յայտնէք մեզ, որ փոխադրենք փոխարէնը:

ՆՈՅՆ

80

ՀԱՏՈՒԱԾՆԵՐ Ն. ԴՈՒՄԱՆԻ Հ.Յ.Դ. ՉՈՐՐՈՐԴ ԸՆԴՀ. ԺՈՂՈՎԻՆ ՈՒՂՂՈՒԱԾ ԳՐՈՒԹԵՆԷՆ

1907 թ. Փետրուար ամիսէն սկսեալ Վիեննայի մէջ կը գումարուէր Հ. Յ. Դաշնակցութեան Չորրորդ՝ «պատմական» որակուող Ընդհ. ժողովը: Հրաւիրեալ գործիչներու շարքին կը գտնուէր նաեւ Նիկոլ Դումանի անունը, որ պիտի չկարենար մասնակցիլ կուսակցութեան քաղաքական, մտաւորական ու մարտական ընտրանին համախմբող այդ ժողովին: Կը յիշատակուի, սակայն, որ ան առանձին նամակ է ուղղած ժողովին, եւ իր կենսագիրներն ու յիշեալ ժողովին մասնակից հեղինակաւոր անձնաւորութիւններ, ինչպէս Միք. Վարանդեան, հատուածներ կը մէջբերեն յիշեալ նամակէն, զոր յայտնաբերելու ուղղութեամբ մեր կողմէ կատարուած մանրակրկիտ փնտռտուքները, թէ՛ 4-րդ Ընդհ. ժողովի եւ թէ Հ.Յ.Դ. Պոսթընի կեդրոնական արխիւի թղթածրարներուն մէջ, դժբախտաբար անցան ապարդիւն: Կը բաւականանանք հետեւաբար ներկայացնել Ն. Դումանի «կորուսեալ» նամակէն կատարուած հետեւեալ քաղուածքները:

«Գիտեմ, մենք ունենք շատ ընկերներ, որոնք ազատութիւնների կորիզը համարում են տնտեսականը։ ..... Զուտ տնտեսական կռւի տեսակէտը նպատակայարմար է բոլոր այն ազգերի համար, որոնց գոյութիւնը իբրեւ ցեղի, ապահովւած է արտաքին վտանգներից։ Հայ ազգը, ընդհակառակը, միշտ ենթակայ արտաքին վտանգների, միշտ կանգնած լինել-չլինելու առաջ, պէտք է նախ ապահովի իր ցեղային գոյութիւնը»։

*

* *

«Երեւի ձեզ շատ ծանր եւ մի քիչ էլ տարօրինակ կը թւայ, որ առաջարկում եմ յեղափոխական խրոխտ բարձունքից իջնել մինչեւ խղճալի ինքնապաշտպանութիւն։ Բայց քրքրեցէք մեր անցեալը եւ դուք կը տեսնէք, որ մեր ժողովուրդը, հէնց որ փոթորիկ է բարձրացել, de facto *միշտ էլ դիմել է ինքնապաշտպանութեան*... Նոյն փոթորիկը, ըստ իս, կրկնուելու է Տաճկաստանում, *աւելի ահաւոր կերպով՝ երկրի ընդհանուր ազատագրական շարժման ժամանակ, ինչպէս Կովկասում։ Եւ նման պայմանների շնորհիւ՝ մեզ բաժին է ընկնելու նոյն դժբախտ վիճակը — յետ մնալ ազատագրական շարժումը տանող առաջին շարքերից եւ զբաղւել ինքնապաշտպանութեամբ։*

«Մեզ կը մնայ ինքնապաշտպանութիւնը Տաճկաստանում դնել ամուր հիմերի վրայ։ Եւ այդ նպատակին հասնելու համար, հարկաւոր է կովկասեան ինքնապաշտպանութեան փորձուած բոլոր միջոցները փոխադրել Տաճկաստան։

«... Մենք անպայման պիտի պաշտպանենք բանւորութեան շահերը։ ... Միեւնոյն ժամանակ չը պիտի սպանենք հայ արդիւնաբերութիւնը, որովհետեւ նոյն այդ բանւորութիւնը կը մնայ քաղցած... Մենք թոյլ չը պիտի տանք, որ հայ ձեռնարկողը կամ կապիտալիստը նիւթապէս ուռճանայ ու փքւի հայ բանւորի հաշւին։ Միեւնոյն ժամանակ հնարաւորութիւն պիտի տանք հայ արդիւնաբերողին, որ նա դիմանայ մրցութեան ու իր ձեռնարկը չը տայ օտարի ձեռքը։ Հարկաւոր է, որ հայ բանւորը իր պահանջների մէջ չանցնի առաջ եւ չը պահանջի հայ արդիւնաբերողներից այն, ինչ տալիս են օտարները։ Այսպիսի... փափուկ պայմաններում մնալու համար, անհրաժեշտ է խորը գիտակցութիւնը, որից զուրկ է տգէտ ու ըմբոստ հայ բանւորութիւնը։ Հէնց այդ գիտակցութիւնն է, որ պիտի զարթեցնի ու զարգացնի Դաշնակցութիւնը... եւ երբեք թոյլ չը պիտի տայ թռիչքներ սիրող «ջահէլներին», որ նրանք սուրբ համարեն ամէն մի անարդար պահանջ յանուն բանւորութեան եւ տարածեն նրանց վրայ Դաշնակցութեան հեղինակաւոր հովաւորութիւնը»։

«Հայրենիք» ամսագիր, ԽԳ. տարի (1965), *թիւ* 3, *էջ* 55–57,
Վ. Վալադեան «Նիկոլ Դուման»։

81

Փաստ. 331-6

Մարգար!

Գրաբեր մեր երկու տղաները երկու ատրճանակ են ուզում փողով։ Եթէ ունիք նրանց ուզած տեսակից՝ վաճառեցէք, խնդրեմ։

Յարգ[անքներով] Նիկ.

17 *Յունվ.* 1908

82

Փաստ. 1036-197

Ինչպէս կը տեսնուի, 1909 թ. Հոկտեմբերին Ն. Դուման արդէն Եգիպտոս է, ուր գացած էր Հելուանի հանքային ջուրերը՝ երիտասարդ տարիքէն յօդացաւէ տառապող իր ցաւերը բուժելու համար: Դարմանումի շրջանը պիտի երկարէր մինչեւ յաջորդ տարուան Մարտ ամսուան աւարտը:

Նախապէս, Խանասորի արշաւանքէն ետք, ան անցած էր Պաքու, ուր կ՚աշխատէր նաւթարդիւնաբերական հաստատութիւններու մէջ: 1908-ին, արդէն սկսած էին ցարական իշխանութեանց հալածանքները Դաշնակցութեան դէմ եւ բազմաթիւ դաշնակցականներ ձերբակալուած ու բանտ նետուած: Այդ պայմաններուն մէջ 1909 թ. Ապրիլի 1–5ին սեղմ կազմով կը գումարուի կովկասեան արտակարգ ժողովը, որուն մասնակից է Ն. Դուման, բայց ձերբակալուելէ խուսափելու համար շուտով կը հեռանայ Կովկասէն ու Կարնոյ վրայով կ՚անցնի Պոլիս, անկէ Պուլկարիոյ Վառնա քաղաքը, ուր Օգոստոս-Սեպտեմբեր ամիսներուն պիտի կայանար Հ.Յ.Դ. հինգերորդ Ընդհ. ժողովը եւ ուր առաջին առաջին անգամ Դուման պիտի ներկայացնէր իր «Նախագիծ ժողովրդական ինքնապաշտպանութեան» գործին ծրագիրը: Այս ժողովէն ետք է որ անցած է Եգիպտոս՝ Հելուանի հանքային ջուրերուն մէջ դարմանուելու համար: Յայտնենք որ Պոլիս գտնուած միջոցին Ն. Դուման, խորհրդակցական ձայնի իրաւունքով, միշտ կը մասնակցէր Արեւմտեան բիւրոյի Թուրքիոյ հատուածի ժողովներուն:

Ժընեւ՝ «Դրօշակ»ի խմբագրութեան ուղղուած այս գրութեան մէջ յիշուած «Ինքնապաշտպանութեան ուղեցոյցը կը վերաբերի Ն. Դումանի «Նախագիծ ժողովրդական ինքնապաշտպանութեան» ծանօթ գործին, որուն մասին կը խօսուի առանձին:

12/25 *Հոկտ.* 1909
Helouan (Egypte)

Սիրելիք !

Նոր Հէլվուան եմ եկել՝ բժշկուելու համար: Նստել եմ անլեզու հէյվանի նման եւ օրերս առ այժմ անց եմ կացնում տխրութեան մէջ: Օր ծերութեան ստիպուած եմ մի քիչ ֆրանսերէն կոտրտել սովորել: Բայց այդքանը քիչ է եւ ձանձրալի: Խնդրում եմ ուղարկէք ինձ Կրապոտկինի գրուածքները (չվախենաք անարխիստ դառնալուց) եւ առհասարակ նորագոյն հետաքրքիր բրոշիւրներ հայերէն եւ ռուսերէն լեզուներով:

Շուտով կը ձեռնարկեմ «Ինքնապաշտպանութեան ուղեցոյցի» աւարտմանը եւ փոքր ի շատէ մշակմանը, յետոյ կ՚ուղարկեմ Ձեզ՝ տպագրութեան համար: Հասցէս. Helouan (Egypte), Hôtel-pension Claremont, Maloum. *Դրօշակ էլ ուղարկեցէք:*

Համբոյրներով՝ ԴՈՒՄԱՆ

83

Թղթածրար No 1855

17 *Նոյեմբ.* (*ն*[*որ*] *տ*[*ոմար*]) 1909
Helouan (Egypte)
Hôtel Clarmont

Սիրելի Վահագ![*Տաթեւեան*]

Քո միջոցով յետ ստացայ իմ բողոքագիրը յանուն Ընդհ. ժողովի՝ քեզ արդէն յայտնի մակագրութեամբ։

Այժմ սրա հետ ուղարկում եմ քեզ երկու նամակ (պատուիրած) — մէկը Դաշնակցութեան Խորհուրդին եւ միւսը՝ Ռոստոմին եւ վրադ ընկերական բարոյական պարտք եմ դնում, որ անպատճառ այդ նամակները յանձնես ըստ պատկանելոյն։

Համբոյրներով՝
Քո ԴՈՒՄԱՆ

Ռոստոմ Զօրեան

84

Թղթածրար No 1855

17 *Նոյեմբ.* (*ն*[*որ*] *տ*[*ոմար*]) 1909
Helouan (Egypte)
Hôtel Clarmont

Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԻՆ
(*Կամ նրա մնացորդին՝ եթէ մի մասը ցրուած է արդէն*)

Դաշնակցութեան V *Ընդհ. ժողովին ես ներկայացրել էի գրաւոր մի բողոք, որ՝ հակառակ* IV *Ընդհ. ժողովի որոշման՝ Ատրպատականի Կենտր. կոմիտէն իրան թոյլ է տուել բռնի հանգանակութեան ակտեր, որին նպաստել է Բագուայ Կենտր. կոմիտէն։ Ես խնդրել էի* V *Ընդհ. ժողովին այդ առթիւ անել պարտ ու պատշաճ տնօրէնութիւն։*

Ժողովը բողոքագիրը յանձնել էր Խորհուրդին, որից երէկ յետ ստացայ այդ բողոքագիրը՝ հետեւեալ մակագրութեամբ.

«Քննութիւնը պարզած լինելով, որ Ատրպատականի Կենտր. կոմիտէն ոչ մի բռնի հանգանակութիւն չի կազմակերպել, մասնաւորապէս ոչ մի դիմում չի արել ոչ Թումանեանցին եւ ոչ Արզումանեանին, Խորհուրդը որոշում է 1) *Անհետեւանք թողնել ընկեր Դումանի դիմումը եւ* 2) *Հրաւիրել նրան պատասխանատուութեան՝ զրպարտութեան համար»։*

Այժմ ես պահանջում եմ Խորհուրդից շուտափոյթ պատասխանել ինձ հետեւեալ երկու հարցին. Նախ՝ եթէ Խորհուրդն արդէն համոզուել է քննութեան փաստերից, որ ես, յիրաւի, զրպարտել եմ ամբողջ երկու մարմին, ինչո՞ւ դրա համար պատիժ չի սահմանել։

Եւ երկրորդ՝ եթէ Խորհուրդը տակաւին այդ համոզման չի եկել եւ այդ պատճառով էլ դեռ պատիժ չի սահմանել,— ինչպէ՞ս է նա իրան թոյլ տալիս՝ ինձ զրպարտիչ անուանելու։

Այս երկու հարցի պատասխանին ես կ'սպասեմ ամբողջ 19 *օր, այսինքն մինչեւ առաջիկայ դեկտ.* 5-*ը* (*ն*[*որ*] *տ*[*ոմար*]) *եւ այնուհետեւ կը ձեռնարկեմ ինձ պաշտպանելու համար նախնական քայլերին։*

ԴՈՒՄԱՆ

85

Թղթածրար No 1855

17 *Նոյեմբ.* (*ն*[*որ*] *տ*[*ոմար*]) 1909
Helouan (Egypte)
Hôtel Clarmont

Ռոստոմ!

Իմ բողոքագիրը, յանուն V *Ընդհ. ժողովի, երէկ յետ ստացայ Դաշնակցութեան Խորհուրդից՝ վրան, ի միջի այլոց, մակագրած.*

«Դումանին հրաւիրել պատասխանատուութեան՝ զրպարտութեան համար»։

Տակը ստորագրած է.

Ռոստոմ, Պետրոս, Պերճ։

Ի՞նչ է այս։

Եթէ մասնաւոր հանաք,— կարող էիր այդ անել մէնակ դու — դրա մէջ ի՞նչ գործ ունին Պետրոս-Մետրոսը։

Եթէ պաշտօնական հանաք — միթէ՞ Դաշնակցութեան ամենապատկառելի մարմինը, ինչպիսին է Խորհուրդը(1), *բոլորովին կորցրել է իր լրջութիւնը։*

Իսկ եթէ դա լուրջ է, այդ առթիւ երկու խօսք ունիմ ասելու.

Թումանեանցից քո գիտութեամբ բռնի ստացած հինգ հազար ռուբլին ծախսուել է Թաւրիզում քո ձեռքով, Արզումանեանցի դէպքն էլ դու ինքդ ես պատմել ինձ Վառնայում։

Այս բոլորից յետոյ՝ ինչպէ՞ս քո լեզուն զօրեց զրպարտիչ անուանել ինձ եւ միթէ՞ ձեռքդ չը դողաց այդ մակագրութիւնն ստորագրելիս։

Ինչպէս տեսնում ես — հարցին ո՛ր կողմից էլ նայելու լինինք — դու գործել ես բարոյական աններելի յանցանք քո հին ու լաւ ընկերոջ վերաբերմամբ։

Դրա համար էլ ես խզում եմ ընդմիշտ իմ ընկերական կապերը քեզ հետ, թէեւ սրտի կսկծանքով։

Ի սրտէ եւ շատ մեծ փափաքով կը մոռանամ այս բոլորը, եթէ համոզւիմ, որ դու այդ մակագրութիւնն ստորագրելիս եղել ես անպատասխանատու հիւանդ։

ԴՈՒՄԱՆ

1.- Արդարեւ, Դաշնակցութեան Խորհուրդը կուսակցութեան գերագոյն մարմինն էր, միեւնոյն ժամանակ, Դատական Վերին ատեան։ Յայտնապէս, սակայն, Ռոստոմին վերագրուած գրութիւնը, ինչպէս կը տեսնուի աւելի ուշ, ունեցած է ընկերական կատակի բնոյթ։

86

Թղթածրար No 1855

18 *Նոյեմբ.* (*ն*[*որ*] *տ*[*ոմար*]) 1909
Helouan (Egypte)
Hôtel Clarmont

Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԻՆ
(*Կամ նրա մնացորդին՝ եթէ մի մասը ցրւած է արդէն*)

Այնքա՜ն եմ եղել յուզւած, որ երէկ Խորհրդին ուղղած մի նամակի մէջ բաց եմ թողել մի շատ կարեւոր բան. յայտնի մակագրութեան մէջ ասւած է, թէ «քննութիւնը պարզած լինելով»... եւն։

Խնդրում եմ մինչեւ առաջիկայ դեկտ. 5-*ը* (*ն.տ.*) *ուղարկել ինձ հէնց այդ քննութեան պատճէնը եւ յայտնել ինձ կազմը Խորհրդի, որը վարել է այդ դատը։ Դա ինձ համար շատ կարեւոր հանգամանք է, որովհետեւ մակագրութեան տակ ստորագրած է՝ Ռոստոմ, Պետրոս եւ Պերճ, որոնցից առաջին երկուսը* դատապարտեալներ *են (իբրեւ անդամ Ատրպատականի եւ Բագւայ Կենտր. կոմիտէների)՝ այժմ դատաւորի պաշտօնում, իսկ երրորդին դեռ չեմ ճանաչում իր կեղծ-անունովը։*

Եւ գուցէ այդ է հոգեբանական պատճառը, որ Խորհրդի այդ կազմը յիշած Կենտր. կոմիտէներին դուրս է բերել մաքուր՝ *իբրեւ աղաւնի եւ ինձ* «շինել» *զրպարտիչ։*

ԴՈՒՄԱՆ

87

Թղթածրար No 1855

13 *Դեկտ.* (*Ն[որ] տ[ոմար]*) 1909
Helouan (Egypte)
Hôtel Claremont

Սիրելի Քոթոթ!

Նոր հասկացայ, որ քոթոթ(1) *անունը կատարելապէս համապատասխանում է քեզ, որովհետեւ քո արած կատակը կատարելապէս* արջային *է։*

Անիծւիս դու, Ռոստո՛մ, որ չես մտածել, թէ իմ ներկայ դրութեան մէջ վտանգաւոր է հետս այդպէս կոպիտ հանաք անել։ Չես կարող երեւակայել, թէ ի՞նչ եմ քաշել այս 25 *օրւայ մէջ։ Եւ այդ բոլոր հոգեկան տանջանքը ո՛չ թէ նրա համար, որ Խորհուրդը վիրաւորել է ինձ (որին ո՛չ մի նշանակութիւն չէի տալիս), այլ նրա համար, որ Խորհրդի որոշումը առիթ տուաւ ինձ՝ թաղելու իմ սիրելի ընկերոջը եւ ինձ դարձրաւ մի անմխիթար սգաւոր նրա գերեզմանի վրայ։ Թանկ, չա՛տ թանկ նստեց ինձ այս հոգեկան տանջանքը, բայց այդ բոլորը այժմ ուրախութեամբ զոհաբերում եմ քո յարութեանը։ Մնում է միայն մի բան, որը ներել չեմ կարող եւ որը չի վերաբերում անհատապէս քեզ, այլ Խորհուրդին։ Այդ այն է, որ բողոքը մնում է* անուշադիր։ *Բայց դրա մասին յետոյ։*

Յոնանի(2) *ինձ գրած նամակի պատճէնն էիր ուզում,— ուղարկում եմ իսկականը։ Հիւանդութեանս մասին էլ կը գրեմ յետոյ, որովհետեւ խորխ*(3) *տուել եմ քննելու, բայց դեռ հետեւանքը չը գիտեմ։ Զաւրիեւին*(4) *բարեւ. նրան կը գրեմ յետոյ։*

Քո Նիկ.

Բացի Յոնանից, ուրիշին ոչինչ չեմ գրել։

1.- Ռոստոմին տրուած կեղծանուն։
2.- Յոնան Դաւթեան։
3.- Խորխ, խուխ – թանձր լորձունք։
4.- Բժ. Յակոբ Զաւրիեւ։

88

17 *Փետրվ.* (*Ն*[*որ*] *տ*[*ոմար*]) 1910
Helouan (Egypte)

Սիրելի Յոնան!

Նամակդ վաղուց եմ ստացել։ Եւ եթէ այսքան ժամանակ չեմ պատասխանել, պատճառն այն է, որ քէֆս չան քէֆ է։ Յունվարի 6*ից մինչեւ հիմա ըեվմատիզ-մի ցաւերը հանգիստ չեն թողնում ինձ, ցաւում է անվերջ, քնում եմ շատ քիչ եւ վատ, դրանից էլ առաջ է գալիս մուրտառ տրամադրութիւն։ Թոքերիս մասին որոշ ոչինչ չեմ կարող ասել, բայց կասկածում եմ որ թոքախտ լինի։ Գուցէ բո-լոր հիւանդները այդպէս են, չեն ուզում հաւատալ, որ իրենք հիւանդ են... Միակ նշանը հազն է (այժմ աննշան) եւ ախորժակի վատութիւնը։ Բայց, ախ-պէ՛ր,* 10-15 *տարի կայ, որ ես օժտուած եմ այդ յատկութիւններով։ Մախլա՛ս*(1). *տեսնենք ինչո՞վ կը վերջանայ։ Այն դժբախտ բրօշիւրը*(2) *դեռ չեմ աւարտել, բայց մօտ է իր վախճանին։ Այսօր փոստ ձգեցի Դ. տետրակը։ Ընդամէնը մնում է երկու գլուխ՝ «Զէնք եւ զինաւորում» եւ «Վերջաբան»։ Վերջաբանը խելքիս փչեց երէկ իրիկուն, սեւագրեցի — փոքրիկ բան է, ուրեմն դեռ էլի պիտի գրեմ մի գլուխ։ Յոյս ունիմ որ ամենաշատը* 5 *օրից յետոյ փոստ կը ձգեմ ամբողջը։*

Սպասում էի, որ արդէն ուղարկածների մասին մի բան գրես եւ դու խոստա-ցել էիր, բայց չստացայ։ Ուրեմն Դ. տետրակն էլ կարդա՛ ու գրիր միանգամից։

Յորտանսին(3) *ջերմագին բարեւներ։*

Համբոյրներով՝
Քո Նիկոլ

Կարօ Գէորգեան, Ամէնուն տարեգիրքը, Պէյրութ, 1963, էջ 170–171:

1.- Ինչեւիցէ:
2.- Ակնարկութիւն Ն. Դումանի «Նախագիծ ժողովրդական ինքնապաշտպանութեան» գործին:
3.- Յորտանսը Դաւթեան Յոնանի զուիցերուհի կինն էր:

89

Թղթածրար No 1855

23 *Փետր.* (*Ն.տ.*) 1910
Helouan (Egypte)

Սիրելի Յօնան![*Դաւթեան*]

Որպէսզի այս անգամ էլ գործը չը ձգձգւի եւ կատարած լինիմ իմ հինգօրեայ խոստումը — ուղարկում եմ 5-*րդ եւ վերջին տետրակը՝ առանց վերջին գլխի*(1)։ *Վերջին գլուխը պէտք է լինէր «Զինաւորումը»։ Տեսայ որ դա երկար է դուրս գալու եւ կարօտ է լաւ մշակման — դրա համար էլ բաց թողի։ Ուրեմն բրօշիւրը կարող էք տպել առանց դրան։ Շտապեցի եւ ա՛յն պատճառով, որ ամէն կողմից լսւում են ըէաքսիոն լուրջ խմորումների մասին։ Ուրեմն պէտք է շտապէք տպագրել եւ օր առաջ ցրել — գուցէ մի որոշ օգուտ տայ սա։*

Ուրախ եմ, որ Յորտանսը լաւ է։

Կովկաս գնալու քո խօսքը, երեւի, վերաբերում է ամրանը կամ աշնանը։

Բայց ամենեւին չչտապես։ Թող դատը(2) *վերջանայ, այնուհետեւ մտածիր Կովկասի մասին։ Իսկ մինչեւ ա՛յն ժամանակ — «Եա ման, եա սան, եա Մահմուդ Շահ»։ Կարծեմ այս առածը գիտես։*

Իմ դրութիւնս շատ էլ լաւ չէ եւ ես դրանից բան չեմ հասկանում։ Թոքերս ամենեւին չեն նեղացնում, նեղացնողը ռեվմատիզմն է, որ վերջին ժամանակ դարձել է համարեա մշտական։ Բժշկի խորհուրդով վաննաները դադարեցրի եւ սկսեցի արեւի վաննաներ։ Տեսնենք։

Սարգսի(3) *քեզ գրած նամակը վերադարձնում եմ։ Նրան մի գեավազա նամակ գրեցի, որ տրամադրութիւնը քիչ բարձրանայ։*

Ի միջի այլոց գրեցի հետեւեալը.

«Սպիտակ մազերի եւ չորս մարալ երեխաների տէր ես դարձել, բայց էլի մնացել ես նոյնը — փոխանակ գործնական ճանապարհ բռնելու եւ ամէն ինչ «սիքիմա» անելու,— կուրծքդ բաց ես արել եւ «Շախսէյ-վախսէյ» ես խաղում։ Դու մի չոր գլուխ ես այդտեղ — որտեղ արեւ է՝ չորաթանդ այնտեղ բոլրթիր։ Կը մնայ տունը, այն էլ այնքան դժւար չէ, որչափ զօռ ես տալիս երեւակայութեանդ»։

Մեր Պաւլի բէգին(4) *բանտից ազատել են եւ աքսորել Դերբենդ մինչեւ ուժեղացրած դրութեան վերջանալը։*

Բայց ծերուկս բանը դրստել է քաղաքապետի հետ եւ խոստում առել, որ մի ամսից յետոյ նրան իրաւունք տայ Բագու վերադառնալու եւ ազատ ապրելու։ Լաւ է, եթէ խոստումը կատարի։

Մնացած բաների մասին տեղեկութիւն չունիմ, կտրւած եմ աշխարհից։

Համբոյրներով
Քո՝ Նիկ.

1.- Խօսքը կը վերաբերի իր «Նախագիծ Ժողովրդական ինքնապաշտպանութեան» երկին, որուն ձեռագիրները Ն. Դուման պրակ առ պրակ կ՚ուղարկէր Ժընեւ առանձին գրքոյկով տըպւելու համար:

2.- Խօսքը կը վերաբերի Դաշնակցութեան դէմ ցարական իշխանութեանց յարուցած դատին:

3.- Սարգիս Օհանջանեան, ծանօթ Ֆար-Հատ ծածկանունը:

4.- Պաւլի բէգը Նիկոլ Դումանի կրտսեր եղբայրն է – Տէր Յովհաննիսեան Պօղոս:

90

Թղթածրար No 1855

8 *Մարտ* (*Ն. տ.*) 1910
Helouan (Egypte)

Սիրելի Յոնան!

Հէլվանից փախչելու ժամանակը մօտենում է։ Բայց ես մնացել եմ չուարած եւ չը գիտեմ դէպի ո՞ւր ուղղեմ քայլերս։ Շուարման պատճառները մի քանիսն են.

1) *Տեղի ընտրութիւնը պիտի լինի այնպէս, որ նպաստաւոր լինի թէ՛ թոքերի եւ թէ՛ րեվմատիզմին միաժամանակ։*

2) *Ընտրելիք տեղը պէտք է լինի քեասիբավարի*(1)։

3) *Որտեղի՞ց պէտք է վերցնել փող — թէկուզ քեասիբավարի տեղի համար։ Իմ հեռանալուց յետոյ փոխադրել են ընդամէնը* 2000 *ռուբլի։ Դրանից* 600-*ը իմ ռոճիկն է, իսկ մնացածը ուղարկել են եղբայրներս։ Այսուհետեւ նրանք այլեւս հնարաւորութիւն չունին ուղարկելու, որովհետեւ Պաւլին արդէն աքսորւած է, Արշակն*(2) *էլ պաշտօնը թողել է՝ իրեն փնտրելու պատճառով։ Եւ գուցէ սա էլ արդէն բռնւած լինի — այդպէս եմ զգում վերջերս այլեւս նամակ չստանալուս պատճառով։*

4) *Եթէ Արշակն էլ բռնւել է, կամ նոյնիսկ եթէ ձեռք չի անցել, ուրեմն պարապ է եւ ո՞վ պէտք է կերակրի* 4 *հոգուց բաղկացած նրա ընտանիքը։*

5) *Պարտք — <u>երեւի</u> — դեռ կը հաւատան ինձ։ Բայց ե՞րբ եւ ինչպէ՞ս կարող եմ վճարել այդ պարտքը։ Իսկ պարտքը չալակած՝ ման գալ այդ ծանրութեան տակ կենդանի, կամ իջնել գերեզման ուրիշի փողերի հետ,— չե՛մ ցանկանում բնաւին։*

Ուրեմն, ինչպէս տեսնում ես, դրութիւնս բաւականաչափ լուրջ է։ Եւ եթէ գրում եմ քեզ — գիտեմ որ ոյժ ու հնարաւորութիւն չունիս ինձ այս ցեխից բարձրացնելու, այլ միայն սիրտս եմ դատարկում, ինչպէս Սարգիսն(3) *է արտայայտւում։ Դու ամենաչատը կարող ես ասել երկու խօսք — մէկը մխիթարական եւ միւսը քաջալերական եւ ես դրան եմ սպասում։ Մնացածը, ինչ որ ասելու լինիս, պիտի դուրս գայ անգործնական։*

Ջերմագին բարեւներս Յորտանսին։

Համբոյրներով՝
Քո՝ Նիկ.

1.- Աժան:
2.- Պաւլին (Պօղոս) եւ Արշակը Ն. Դումանի եղբայրներն են:
3.- Օհանջանեան Սարգիս:

91

Փաստ. 1038-36

Նամակը ուղղուած պէտք է ըլլայ Արեւմտեան բիւրոյի Պոլսոյ հատուածին կամ ուղղակի «Ազատամարտ»ի խմբագրութեան:

12 *Մարտ* (*ն*[*որ*] *տ*[*ոմար*]) 1910
Helouan (Egypte)

Սիր[*ելիք*]

Ժընեւից ստացած մի նոր նամակից երեւում է, որ «Ժողովրդական ինքնապաշտպանութեան ուղեցոյցի» ձեռագիրը (դեռ չը տպագրուած) ուղարկուել է Ձեզ՝ Ձեր պահանջմամբ։

Եթէ դրա մէջ կայ օգտուելու որեւէ բան, օգտուելու այդ կարիքը կ՚զգան, անշուշտ, ե՛ւ ուրիշները — մանաւանդ գաւառացիները։ Ուրեմն հարկաւոր է այդ ուղեցոյցը ո՛չ թէ պահել Պոլսում, այլ շտապեցնել նրա տպագրութիւնը եւ շուտով ցրել գաւառական մարմիններին։ Դրա համար էլ խնդրում եմ այդ ուղեցոյցը շուտով ուղարկէք Ժընեւ՝ տպագրութեան համար։ Իսկ եթէ ներկայ պայմաններում Ձեզ համար անհրաժեշտ է այժմ եւ եթ ձեռքի տակ ունենալ «Ուղեցոյցի» հրահանգները,— այդ կարիքին բաւարարութիւն տալու համար այսօր պատրաստած [*ծրարով*] *ուղարկում եմ ձեզ խմբագրութեան հասցէով նրա սեւագրութիւնը։ Սեւագրութիւն բառը թո՛ղ ձեզ չը վախեցնի — գրուած է պարզ եւ ջնջուածներն էլ քիչ են, այնպէս որ դիւրընթեռնելի է։*

Սեւագիրը պահեցէք ձեզ մօտ, իսկ մաքուրը շուտով ուղարկեցէք Ժընեւ։

Ես էլ — շատ եմ ձանձրացել — գուցէ շուտով գամ Պոլիս։

Համբոյրներով՝ ԴՈՒՄԱՆ

92

Թղթածրար No 1855

25 *Մարտ* (*ն*[*որ*] *տ*[*ոմար*]) 1910
Helouan (Egypte)

Սիրելի Ռոստոմ!

Ստացայ նամակդ։ Գահիրէի ընկերների տարաձայնութիւններին արդէն վերջ ենք տուել։ Բաժանուած էին երկու հակառակ կողմերի եւ բաժանման հողը գաղափարական չէր, ի հարկէ — ինչպէս միշտ եւ ամէն տեղ։ Հաշտեցրինք կողմերը եւ կայացրինք նոր ընտրութիւն։ Ենթակոմիտէի մէջ մտցրինք երկուական հոգի իւրաքանչիւր կողմից եւ հինգերորդին էլ ընտրեցինք չէզոք ու ընկերների յարգանքն ու համակրանքը վայելող անձնաւորութիւն — Յակոբ Ասպատուրեանին, որին ճանաչում է Շահրիկեանը։

Ինձ թւում է, որ այստեղ հանգանակութիւնը — ում ձեռքով էլ կատարուելու լինի նա — այժմ աջողութիւն չը պիտի գտնի։ Բայց գուցէ սխալւում եմ, փորձեցէք։

Շահպազը(1) *Ալեքսանդրիայից դեռ Գահիրէ չի եկել։*

«Ինքնապաշտպանութեան Ուղեցոյցի» սեւագիրը ուղարկել եմ Պոլիս խմբագրութեան հասցէով եւ խնդրել, որ սեւագիրը պահեն այդտեղ՝ ձեռքի տակ ունենալու համար, իսկ մաքուրը շուտով ուղարկեն Ժընեւ՝ տպագրութեան համար։ Շտապեցրու, եթէ դեռ եւս չեն ուղարկել։

Իմ առողջական դրութեան վերաբերմամբ, ոչինչ չեմ գրում, որովհետեւ այդ կը տեսնես քո սեփական աչքերով 2-3 շաբաթից յետոյ(2)։

Քո՝ Նիկ.

1.- Բարսեղ Շահպազ (1883–1915), դաշնակցական գործիչ:
2.- Ն. Դուման պիտի վերադառնար Պոլիս, ուր կը գտնուէր այդ օրերուն Ռոստոմ:

93

25 *Մարտ* (*Ն. տ.*) 1910
Helouan (Egypte)

Սիրելի Յօնան!

Ստացայ Թաւրիզեան հրաւէրդ եւ վերյիշելով սազական մի առակ՝ կուշտ ծիծաղեցի։

Առակը հետեւեալն է.

Պարսկաստանում ցնցոտիազարդ մի գիւղացի դիմում է իր աղային եւ մի շալվար խնդրում։

Աղան իսկոյն կանչում է. օղլա՛ն, նայի՛ր։

Նայիրը ներս է մտնում եւ սպասում հրամանին։

— Պատուիրի՛ր գիւղացիներին, որ այս տարի կանեփ ցանեն, այդ կանեփից մի լա՛ւ շալվար կը գործէք եւ կը նուիրէք այս խեղճ մարդուն։

Եւ խեղճ մարդը ծիծաղում է.

— Ինչի՞ վրայ ես ծիծաղում, հարցնում է աղան։

— Հագած շալվարիս վրայ... աղա՛, պատասխանում է մարդը։

Քո հրաւէրը նման է դրան, բայց իմ վերաբերմամբ խնդիրը շալվարի մէջ չէ։ Ես այժմ փողի կողմից չեմ նեղւում եւ յոյս ունիմ որ չը պիտի նեղւիմ ապագայում եւս։ Վաղուց է որ անպաշտօն եմ, դեռ երեւի շատ կը մնամ առանց պաշտօնի, չը գիտեմ ե՞րբ կարող կը լինիմ վերադառնալ Կովկաս — գուցէ շատ ուշ,— այդ բոլորը միասին ինձ ամենեւին չեն անհանգստացնում, ինձ տանջող միակ միտքն այն է — թէ կը մնա՞մ արդեօք աշխատանքի ընդունակ։ Եթէ չը կորցնեմ այդ ընդունակութիւնը՝ մնացած բոլոր պայմանները — ինչքան էլ վատ լինին նրանք — կատարելապէս դատարկ բաներ են ինձ համար։

Երէկ Հայկից ու մեր Բէգից նամակ ստացայ։ Գրում են, որ պատճառը ծուլութիւնն է, որ Արշակը(1) *նամակ չի գրում... Ի՞նչ ես կարծում։*

Երէկ նամակ ստացայ եւ Ռոստոմից. հարցնում է իմ առողջութիւնը։ Պատասխանեցի եւ յայտնեցի, որ իր սեփական աչքերով կը տեսնի մօտաւորապէս 2-3 *շաբաթից յետոյ, երբ Պոլիս կը լինիմ։*

Ի դէպ, ես ինձ ամենեւին վատ չեմ զգում, թէեւ դեռ կաղում եմ քիչ։ Աւելցրել եմ ընդամէնը 11 *քիլօ։*

Ջերմ բարեւներս Յորտանսին։

Համբոյրներով՝
Քո ՆԻԿՕԼ

Կարօ Գէորգեան, Ամէնուն տարեգիրքը, Պէյրութ, 1964, էջ 146–148։

1.- Հայկը, Բէգը (Պաւլի) եւ Արշակը Նիկոլ Դումանի եղբայրներն են։

94

Թղթածրար No 1855

28 *Մարտ* (*ն*[*որ*] *տ*[*ոմար*]) 1910
Helouan (Egypte)

Սիրելի Յոնան!

Անցեալ օրը Հայկից նամակ ստացայ. «Իր, պառաւի եւ ուրիշների» կողմից խորհուրդ է տալիս գնալ Եւրոպա եւ յատկապէս այնտե՛ղ, ուր խորհուրդ կը տան բժիշկները։ Յայտնում է, որ դրամական տեսակէտից չը վախենամ, որովհետեւ բանկում անձեռնմխելի գումար կայ իմ տրամադրութեան տակ...

Ո՞վ է դրել այդ գումարը բանկում — եղբայրնե՞րս, ընկերնե՞րս, թէ՞ ծանօթներս — այդ ինձ համար կատարելապէս միեւնոյն է, միայն ամէն րոպէ զգում եմ, որ ես այժմ արճիճեայ ծանրութիւն եմ ուրիշների վաստակաւոր ձեռքերի վրայ։ Այդպէս էլ պատասխանեցի իրան։

Դու լաւատես ես. կը մտածես, որ Բագւայ ժողովուրդը իրարու է անցել ինձ համար։

Ես յոռետես եմ. մտածում եմ, որ Պաւլին աքսորւած է, Արշակն էլ, երեւի, բանտարկւած։ Եւ որովհետեւ նրանք այլեւս հնարաւորութիւն չունին անձամբ փող փոխադրելու ինձ համար, դրա համար էլ իրանց վերջին կոպէկները յանձնել են Հայկին, որ հարկաւոր դէպքում ուղարկի ինձ։

Ինչ եւ իցէ։ Եգիպտական ձանձրոյթից չեմ ուզում ընկնել եւրոպական ձանձրոյթի մէջ։ Երկու օրից յետոյ կ՚երթամ Պօլիս, ի նկատի ունենալով որ դու եւ Յորտանսն էլ գալու էք այնտեղ։

Բագւից գրում են, որ բանտարկեալների գործի քննութիւնը հազիւ վերջանայ երեք ամսում։ Դեռ այնուհետեւ էլ կայ դուցէ գործի ուսումնասիրութիւն եւ ապա միայն դատավարութիւն(1)*։ Ռուսաստանից նոր քննիչ է գնացել Բագու եւ երդմամբ ցուցմունքներ հաւաքել մօտ* 110 *մարդուց։ Հարց ու փորձի ենթարկւած մարդկանց կարծիքով՝ կառավարութեան ձեռքը գտնւող փաստերը թոյլ են եւ գործը ի զուր ու անտեղի ուռցրած։*

Պօլսից գրել էին, որ Խաչատուրը(2) *ուզում է գալ Եգիպտոս՝ հանգանակութեան համար։ Յայտնեցի, որ իմ կարծիքով՝ այժմ աֆլաթիւնն*(3) *անգամ չի՛ յաջողի հանգանակութեան գործում, բայց, յամենայն դէպս, թո՛ղ փորձեն։*

Այսուհետեւ ինձ կարելի է նամակ գրել Պօլիս։

Յորտանսին ջերմ բարեւներս։

Համբոյրներով՝ Քո **ՆԻԿ**.

Բրոշիւրիս վերջաբանի մէջ գրւած է. «Իսկ Ռուսաստանում — ո՞վ գիտէ —

ի՞նչ անակնկալ է պատրաստուում»։

Շինիր այսպէս. «Իսկ Ռուսաստանում — ո՞վ գիտէ — ի՞նչ նոր անակնկալ է պատրաստուում». ուրեմն աւելացնելու ես նոր բառը։

ՆՈՅՆ

1.- Հարցը կը վերաբերի դաշնակցական հարիւրաւոր բանտարկեալներու դատին, որ տեղի պիտի ունենար միայն 1912 թուականի առաջին ամիսներուն, Պետերբուրգի մէջ:

2.- Խաչատուր Մալումեան (Է. Ակնունի):

3.- Արաբերէն անուանում յոյն փիլիսոփայ Պղատոնի: Հոս գործածուած է ամէնէն իմաստուն, հնարամիտ մարդն անգամ չի յաջողիր հանգանակութեան գործին մէջ իմաստով:

95

Թղթածրար No 1855

Ժընեւ ուղարկուած բացիկ Միք. Վարանդեանին: Նամակատան դրոշմը կը կրէ 30 Յուլիս [19]10 թուականը: Ն. Դուման իր կնոջ Զարուհի Բաբայեանի հետ կը մնար զուիցերիական Ռոսինիեռ գիւղը՝ Յոնան Դաւթեանի մօտ: Ներսէս Դանիէլեան իր կեղծ անցագրային անունն էր:

Սիրելի Միքայէլ!

Կանգ ենք առել առայժմ Յոնանի մօտ։ Սպասում ենք Յ. Քոչարեանին վաղը։ Ամէն տեղի լաւ ծանօթը նա՛ է։ Եթէ գնանք ուրիշ տեղ՝ հասցէս կը հաղորդեմ։ Թէ որ նամակներ ունենամ առ այժմ ուղարկիր Rossinière, Nersès Tanielian, chez Mme Roch, *որ լինիմ ես։*

Համբոյրներով՝
Քո՝ ՆԻԿՕԼ

Ամէնքին բարեւներ։
Զարուհին շատ հաւանեց այստեղ։

Նիկոլ Դուման Քոփենհակնի մէջ, 1910 թ.

1910 թ. Օգոստոս 28 – Սեպտ. 3 Դանիոյ մայրաքաղաք Քոփենհակնի մէջ տեղի կ՚ունենայ ընկերվարական կուսակցութիւններու 8րդ համագումարը, մասնակցութեամբ 30 երկիր ներկայացնող շուրջ 900 պատգամաւորներու: Համագումարին կը մասնակցի 4 հոգիէ բաղկացեալ Հ.Յ.Դ. պատգամաւորական կազմը՝ գլխաւորութեամբ Միք. Վարանդեանի, որ անդամ էր ընկերվարական Միջազգայնականի Բիւրոյին. միւս անդամներն էին բժ. Արմենակ Բարսեղեան, Մարտիրոս Յարութիւնեան (Շիրակունի) եւ Նիկոլ Դուման. վերջինս տեղի տալով Վարանդեանի պնդումներուն՝ յօժարած էր միանալ պատգամաւորութեան: Այդ օրերուն Դանիոյ մայրաքաղաքին մէջ կը կազմակերպուի ժողովրդական հսկայ բազմութեան մը կողմէ համակրական տպաւորիչ ցոյց, որուն մասին Ժընեւ ուղղած իր մէկ նամակին մէջ Վարանդեան կը գրէ. «Նիկօլը սաստիկ ոգեւորուած է. 100.000ի թափօրը եւ միտիգները գրանդիօզ էին»: Վերջին օրերուն կը գումարուի մասնաւոր Խորհրդաժողով՝ մասնակցութեամբ ռուսական եւ լեհական յեղափոխական կուսակցութիւններու, Հ. Յ. Դաշնակցութեան եւ մի քանի այլ կազմակերպութեանց: Կը քննարկուի 1905 թ. ռուսական կուսակցութիւններու զինական անպատրաստ վիճակի հարցը: Ուշադրութեան առարկայ է Դաշնակցութեան հին ու անուանի մարտիկ Ն. Դումանը, որուն կը դիմուի իր կարծիքը յայտնելու:

Ահա թէ ինչ կը գրէ «Դրօշակ» պաշտօնաթերթը այս խորհրդաժողովի ընթացքին Ն. Դումանի ունեցած արտայայտութեան մասին.–

Ժողովականները հետաքրքրուեցին իմանալ, ի՞նչ չափով զինուած ուժ կար «Դաշնակցութեան» տրամադրութեան տակ, մօտիկ անցեալի փոթորկոտ

օրերում, հայ-թաթարական ընդհարումների ընթացքում:

Այդ հարցումին պատասխանեց ընկեր Դ-[ու]ման, որի ներկայութիւնը ռուս ու լեհ սոցիալիստների, առանձնապէս վետերան-առաջամարտիկների, ուշադրութեան առարկայ էր: «Դաշնակցութեան» հին զինուորը իր սովորական պարզ, հակիրճ ու կտրուկ ձեւով բնորոշեց մի քանի խօսքով կուսակցութեան ռազմական պատկերը վերջին մեծ ընդհարումների միջոցին:

«Այնուամենայնիւ – վերջացրեց նա – ընդհանուր վիճակը մխիթարական է: Մեզ մօտ այսօր՝ ոչ թէ գեներալներ կան առանց բանակի, այլ բանակ կայ, առանց գեներալների… Ցաք ու ցրիւ ամէն տեղ – Թիւրքիա, Պարսկաստան, արտասահման – ուր մղել է նրանց ռէակցիայի ալիքը. այդ հալածական գեներալները մի օր, կուսակցութեան ազդանշանն ստանալուն պէս, վերստին կը հաւաքւին բոլոր ծայրերից, կը զարկեն ահակոչնակը, կը փողահարեն - անմիջապէս բանակը կը համախմբւի նրանց ղեկավարութեան տակ…

«Կազմակերպութիւնը յանձին իր ղեկավարների, բարեբախտաբար, ազատ է մնում ռուս կառավարութեան ծուղակներից – մի կառավարութեան, որ ձգտում է ափաշկարայ ջնջելու մեր ազգի ամենաթարմ, գաղափարական տարրերը: Կազմակերպութիւնը պատրաստւում է, որպէսզի պատւով դիմագրաւէ ապագայ նոր դաւերին ու փոթորիկներին, որոնցից գուցէ դեռ ազատուած չէ մեր տարաբախտ ժողովուրդը: Այդ ժողովրդի գոյութեան հարցը մեր սեփական գոյութեան պատճառն է եղել եւ «Դաշնակցութիւնը» սկզբից ի վեր – Թիւրքիայում, Կովկասում, Պարսկաստանում – եղել է նախ եւ առաջ յեղափոխական-ինքնապաշտպան կազմակերպութիւն. նա կռուել է տարրական ազատութիւնների համար, նա եղել է միաժամանակ ամենահզօր պատնէշը Կովկասի մէջ՝ հակայեղափոխական յորձանքների դէմ» (բուռն ծափեր):

«Դրօշակ», Յուլիս–Սեպտեմբեր 1910, էջ 94:

Ծանօթ Խմբ.– Այս բոլորի մասին, ըստ իր սովորութեան, ոչինչ կը գրէ Ն. Դուման, բացի մէկ քանի բացիկներէ, որոնցմէ առաջինը Զուիցերիա հասնելուն մասին է, երկրորդը ժողովատեղիէն, իսկ երրորդը՝ Պերլինէն, վերադարձի ճամբուն վրայ:

*
* *

Դէպի Եւրոպա Նիկոլ Դումանի ուղեւորութեան առթիւ հետաքրքրական է Ռոստոմի կողմէ Պոլսէն գրած հետեւեալ նամակը Ժընեւի ընկերներուն (*փաստ.* 107-183)։

Սիրելիք,

Նիկոլը ճանապարհ ընկաւ իր կնոջ հետ: Այդտեղ կը լինին մի 8 օրից յետոյ: Մարսէյլից ձեզ կը հեռագրեն դուրս գալու օրը: Հարկաւ առաջները կ՚երթաք եւ փառաւոր ընդունելութիւն ցոյց կը տաք: Յուսով եմ, որ առաջւայ նման չէք անիլ. բագաժը չէք շամփրիլ, ձեռափայտի մի ծայրը Նիկոլի ձեռքը չէք տալ, իսկ միւս ծայրը՝ տիկնոջ ձեռքը: Յարմար սենեակ կը տեսնէք առաջւանից խմբագրատան մօտի պանսիօններից մէկում: Շատ չէք պահիլ, ի հարկէ, ձեզ մօտ: Բժշկին ցոյց տալուց յետոյ անմիջապէս կը քշէք լեռները, մի հրացան տալով ձեռքը: Հրացանը հարկաւոր է, որպէսզի նա լեռներում կարողանայ ման գալ:

Հա, չմոռանամ ասել, որ նրանց չփնտռէք III կարգի վագոններում.– այստեղից դուրս են եկել I կարգով եւ Ժընեւ էլ կը գան I կարգով: Երեւի Նիկոլը առաջին դաշնակցականը պէտք է լինի, որ Ժընեւ մուտք է գործելու առաջին կարգով:

Բժշկին զգուշացրէք, որ իր հրահանգները տայ Նիկոլին հրամայական ձեւով: Իբրեւ զինուորական՝ նա միայն կատէգորիկ կերպով յայտնուած պատուէրներ կ՚ընդունի եւ կը կատարի:

Համբոյրներով՝
ՌՈՍՏՈՄ

96

Փաստ. 1678-17

Ժընեւ՝ Դրօշակ»ի խմբագրութեան հասցէով Արտաշէս Բաբալեանին ղրկուած բացիկ:

Կոպենհակ, 1 *սեպտ.* 1910

Սիրելի Արտաշէս !

Ինչքան նամակներ ունիմ հաւաքւած՝ բոլորը փակիր մի ծրարի մէջ եւ ուղարկիր Բերլին հետեւեալ հասցէով. M. Harutiouniantz. Charlottenburg, Mommsen str., 32.

ՆԻԿՕԼ


Սիրելի Արտաշէս! BREVKORT
(Carte postale)
1678-17
Eneret. N.o 1015.
Rédaction
du „Droschak"
Rosezaie, 29
Genève
Suisse

97

Փաստ. 1377-10

11 *Սեպտ.* (*Ն. տ.*) 1910
Բերլին

[*Միք. Վարանդեանին, Ժընեւ*]

Սիրելի Միքայէլ!

Այսօր փախչում եմ դէպի Պոլիս։
Նամակներս ուղարկիր «Ազատամարտին»։ Եթէ իմ բրօշիւրներից(1) *դեռ Պոլիս չէք ուղարկել, ուղարկիր նաե՛ւ 2 օրինակ նրանցից։ Ի դէպ Սարգիսը*(2) *վաղուց էր խնդրել 5 օր*[*ինակ*] *իմ բրօշիւրից ուղարկել Թաւրիզ։ Ուղարկիր այս հասցէով.*
«Tauris (Perse)
Mesrop Ter-Hacopian
Յանձնել Սարգսին.

Եթէ Բագու գնացող լինի՝ խնդրեմ չը մոռանաս եղբօրս ժամացոյցը ուղարկելու։ Այդ մասին արդէն գրել եմ քեզ։ Ամէնքին բարեւներ։

Համբոյրներով՝ քո ***ՆԻԿՕԼ***

1.- Խօսքը կը վերաբերի «Նախագիծ ժողովրդական ինքնապաշտպանութեան» երկին, որ ինչպէս կ՝երեւի լոյս տեսած էր արդէն:
2.- Սարգիս Օհանջանեան, ծանօթ Ֆար-Հատ ծածկանունով:

98

Թղթածրար No 1855

14/27 *Սեպտ.* 1910
Պոլիս

Սիրելի Միքայէլ!

Ստացայ նամակդ։

Ես փախայ Պոլիս, որովհետեւ Եւրոպա իմ տեղս չէր — ես չէի կարող ապրել այդ «անլեզու հէյվանների» մէջ եւ նրանց ցրտերում։

Ձեռ գրում, թէ արդեօ՞ք ստացար 1000 *ֆրանկը։ Ինքս էլ ո՛չ մի տեղեկութիւն ու նամակ չունիմ եղբօրից։ Վախենում եմ, որ դարձեալ ծակը դրած լինեն նրան։ Ժամացոյցը, յամենայն դէպս, ուղարկել Վաչեանի կամ ուրիշի միջոցով։ Ասա՛ յանձնեն* տուչաստնիկի(1) *կանտորի դիրեկտորներից մէկն ու մէկին։ Նրանք կը հասցնեն ըստ պատկանելոյն։*

Այժմ ես ապրում եմ գիւղում եւ կը ձեռնարկեմ (*երեւի*) *քո ասած բրոշիւրին վերադարձից յետոյ։ Իսկ ինչ վերաբերում է կրկին Եւրոպա վերադառնալուս՝ ժողովներին մասնակցելու համար, դժւար թէ կարողանամ ձմեռւայ ցրտերին իրագործել քո բաղձանքը։*

Յօնանի հիւանդանալու եւ Էրզրումում մնալու մասին այստեղ լուր չկայ։ Ընդհակառակը, սրանք ասում են որ նա վաղուց է հեռացել Էրզրումից։

Ե՞րբ ես գալիս — մենակ եմ։ Նուարդին(2) *բարեւներս։*

Համբոյրներով՝
Քո ՆԻԿՕԼ

1.- Բնագրին մէջ ռուսատառ՝ գործակիցների։
2.- Նուարդը Միքայէլ Վարանդեանի կինն էր։

99

Թղթածրար No 1855

27 *Սեպտ.* (*հ*[*ին*] *տ*[*ոմար*]) 1910
Պոլիս

Սիրելի Միքայէլ!

«*Բաց ու գոց*» *նամակներդ նո՛ր միայն ստացայ։ Ժամացոյցի համար չնորհակալ եմ։ Փողի ուշացումը ես բացատրում եմ եղբօրս հաւանական կրկին բանտարկութիւնովը։ Այստեղից էլ ես նամակ եմ գրել նրան, բայց տակաւին պատասխան չունիմ։ Այսօր նամակով ուրիշից տեղեկութիւն կը հարցնեմ նրա մասին։*

Պարիզից վերադառնալուց յետոյ կը գրես, ի հարկէ, ինչ հետաքրքիր տեղեկութիւն որ ունենաս Ս-ի մասին։

Ուզել էիր Կոպենհագի իմ կարճ ճառի բովանդակութիւնը։

*Ահա՛ ամբողջը**.

„Военная организація
„Дашнакцутюна" на
Кавказѣ къ счастію
погрому не подверглась,
такъ-какъ правительство
не могло её открыть.
Оно, правительство, знало
лишь нѣкоторыхъ воен-
ныхъ предводителей и
они успѣли во-время
переѣхать заграницу.
Такимъ образомъ у „Даш-
накцутюна на Кавказѣ
сейчасъ не генералы безъ
арміи, а армія безъ
генераловъ.
Но что это за армія,

какая армія?
Въ одной только турецкой
гдѣ я самъ лично ста-
лъ во главѣ дѣла во
время армяно-татар-
скихъ столкновеній,
стояла подъ ружьё (не
подъ револьверъ, а подъ
ружьё) - цѣлая дивизія,
нѣсколько меньше шест-
надцати тысячъ.
Что же касается нашихъ
разъѣхавшихся военныхъ
предводителей, я вполне
надѣюсь, что они при
надлежности вернутся
на Кавказъ и какъ будто
бить въ барабанъ, сейчас
же всѣ эти арміи соб-
рутся вокругъ насъ.

Այստեղ շուտով տեղի կ՚ունենան ռազմափորձեր։ Ուզում են ինձ ուղարկել «Թամաշայի»։ Եթէ ես լինիմ առողջ, եղանակներն էլ նպաստաւոր, պիտի երթամ մեծ ուրախութեամբ։

Իմ բրոշիւրները(1) ցրո՞ւմ էք պատկանեալ մարմիններին, թէ չէ։ Նուարդին բարեւներս, նոյնպէս եւ նոր խմբագրին՝ իր ամբողջ պաշտօնէութեամբ հանդերձ։

Համբոյրներով՝
Քո ՆԻԿՕԼ

Յակոբին ասա՛ հասցէն գրի ինձ։
Իսկ մինչ այդ թո՛ղ իր ուզած մարդը համբուրի նրան իմ կողմից։

ՆՈՅՆ

1.- Փաստ՝ որ Ն. Դումանի «Նախագիծ ժողովրդական ինքնապաշտպանութեան»-ը տպագրուած էր արդէն 1910 թ. սեպտեմբերին:

***) Ծանօթ Խմբ.– Նիկոլ Դումանի ռուսերէն այս ելոյթի թարգմանութիւնը տեսնել էջ 188–189:**

100

Թղթածրար No 1855

4 *Հոկտ.* (*Հ. տ.*) 1910
Պօլիս

Սիրելի Միքայէլ [*Վարանդեան*]!

Անշուշտ, նախորդ նամակս ստացած կը լինիս եւ 16 *հազարի «խաթան» չէ-զոքացրած։*

Արշակը(1) *այս քանի օրը կը վերադառնայ Կովկաս։ Այստեղ դրամ ամենեւին չը կայ։ Նորից պիտի գրւի Խաչատուրին*...(2)

Բայց, ըստ իս, դրանով չը պիտի բաւականանանք։ Մեր առաջ դրած հարցը ունի երկու կողմ — իրաւական եւ բարոյական։

Իրաւական կողմից համարեա՛ ամբողջովին կատարել ենք մեր պարտքը.— Ընդհ. ժողովը որոշել էր 50.000 *ֆրանկ յատկացնել բանտարկեալներին։ Դրանից՝ առաջ փոխադրել ես մօտ* 14.000 *եւ այժմ էլ* 32.000։ *Մնում է, ուրեմն, ընդամէնը* 4000 *ֆրանկ, որը դժւար չէ լրացնել։*

Սա, ինչպէս ասացի, խնդրի իրաւական կողմն է։ Բայց մենք բիւրօկրատիա չենք կազմում եւ մեզ համար ծանրակշիռը հարցի բարոյական կողմն է։ Մեր հարիւրաւոր լաւագոյն ընկերները բանտումն են, եւ այսօր-վաղը կը սկսւի դատավարութիւնը։ Այժմ այդ դատավարութեան համար մեզանից պահանջում են դրամ։ Արդէն փոխադրածից բացի, մենք ունինք պատրաստի մի որոշ գումար ժընեւում։ Ո՛չ մի բարոյական իրաւունք չունինք մերժելու, պատճառաբանելով թէ՝ Ընդհ. ժողովի որոշման սահմաններում մենք արդէն կատարել ենք մեզ վրայ դրած պարտականութիւնը։ «Հարկ զօրէնս լուծանէ»։ Իմ կարծիքով ժընեւում եղած գումարից դա՛ռձեալ պիտի փոխադրենք գոնէ 10.000 *ֆր.։ Կը լինին, ի հարկէ, ընկերներ, որոնք կը մտածեն, թէ ի՞նչ պիտի անենք, ինչպէ՞ս պիտի պահպանենք կազմակերպութիւնը այդ վերջին գումարը ծախսելուց յետոյ։*

Այդպիսիներին մի պատասխան կայ միայն.— պատրաստի փողով ու պենսիայով իմ տատն էլ կը գործի։ Թո՛ղ վաստակեն եւ ծախսեն, ինչպէս միշտ։

Խուլասա՛...(3) *եթէ եղած գումարը չը փոխադրենք եւ մտածենք մեր ապագայի նիւթական ապահովութեան մասին,— վստահ եմ, որ յետոյ պիտի ենթարկւենք ընկերների ռմբակոծութեան եւ չեմ կասկածում, որ ես էլ արտիպեբիստ*(4) *պիտի գրւեմ։*

Ուղարկում եմ քեզ Հայկի նամակը, որ վերաբերում է 1000 *ֆր. պարտքիս։ Այնտեղ յիշւած* կվիտանցիյայի N-*ը*(5) *եւ նամակը ես չեմ ստացել։ Դու ստացե՞լ ես արդեօք դրամը։ Շուտով պարզիր այս թիւրիմացութիւնը։*

Համբոյրներով՝
Քո Ն.

Նոր փոխադրութեան մասին այստեղի ընկերները դեռ որոշում չեն կայացրել։

1.- Նիկոլ Դումանի եղբայրը։
2.- Խաչատուր Մալումեան (Է. Ակնունի), որ Սեպտեմբեր ամսուն մեկնած էր Ամերիկա, ուրկէ եւ կը սպասուէր դրամական օժանդակութիւն Կովկասի բանտարկեալներուն համար։
3.- Ինչեւիցէ։
4.- Թնդանօթաձիգ։
5.- Բնագրին մէջ ռուսատառ՝ հաշուեփակի կտրօնի։

101

Թղթածրար No 1855

14/27 *Հոկտ.* 1910
Պոլիս

Սիրելի Միքայէլ!

Նամակդ ստացայ։ Ստացել եմ նաեւ Արշակինը։ Նրան չը պատասխանեցի, որովհետեւ ամէն օր սպասում էի նրան Պոլսում եւ կարծում էի, թէ նամակս իրան չի հասնի։

Ո՞ւր մնաց այսքան ժամանակ։ Նրա բանը ճանապարհին դժուար է լինելու այդ «անլեզու հայվանների» հետ։ Աշխատիր ճամբու դնել որեւիցէ մէկի հետ։

Պաւլուց հազիւ-հազ ստացայ փող ու նամակ։ Ուշանալու եւ ինձ մտատանջութեան մէջ ձգելու պատճառը շատ պարզ է եղել։ Խոլերայի եւ կարանտինի պատճառով այժմ ամէն նաւ Բաթում չի գնում եւ մի նամակ Բագու հասցնելու համար հարկաւոր է առնուազը 17 *օր, մի այդքան էլ պատասխանի ստացման համար։ Քո պարտքը մինչ այժմ անվճար թողնելու համար բացատրութիւն ուզեցի։*

Ի՞նչ ես ասում, ինչո՞ւ չես գալիս։

Նուարդին բարեւներս։ Նոյնպէս եւ Բուբուլիին ու Անտոնին։

Համբոյրներով՝
Քո ՆԻԿՕԼ

102

Թղթածրար No 1855

Ն. Դումման արդէն Պոլիս վերադարձած էր եւ յաճախ կը հրաւիրուէր Արեւմտեան բիւրոյի Կ. Պոլսոյ հատուածի նիստերուն, ուր յաճախ կ՚արծարծուէր Դաշնակցութեան դատով հարիւրաւոր կալանաւորներու պաշտպանութեան համար նիւթական օժանդակութիւն հասցնելու խնդիրը:

16/29 *Հոկտ.* 1910
Պոլիս

Սիրելի Միքայէլ!

Արշակը եկաւ եւ պատմեց մի զարմանահրաշ բան. ասում է, որ «Դրօշակի» մէջ տպագրել ես իմ ճառը եւ գետեղել նոյնիսկ 16000-*նոց բանակը*(1)։

Բալա՛մ, երբ ռուսները թոյլտուութիւն խնդրեցին հրատարակել այդ թւերը, ես թախանձեցի որ այդպիսի բան չանեն եւ դրանով առիթ չը տան խուզարկութիւնների ու նոր հետապնդումների։ Ցետոյ քեզ ասացի, որ նոյնիսկ արձանագրութիւնից հանել տաս այդ կտորը, եթէ արձանագրած կը լինէին։ Այդ բոլորը գիտենալով հանդերձ, ինչպէ՞ս է որ այդպիսի անզգոյշ քայլ ես արել։

Ի սէր Աստուծոյ — եթէ դեռ չե՛ս ցրել «Դրօշակի» համարները, կամ եթէ ցրել ես միայն մի քանի օրինակ փոստայով, մնացածի մէջ սեւացրու այդ կտորը եւ մեզ ազատիր պատասխանատու խաթաբալայից։

Արշակի միսսիայի համար դրամ բնաւ չը կայ այստեղ։ Գուցէ ընկերները ձեռնարկեն հանգանակութեան, բայց հազիւ թէ լուրջ արդիւնք ստացուի դրանից։ Ինչ վերաբերում է Ամերիկային, դու արդէն գրել ես ու հեռագրել որ այժ տան հանգանակութեան։ Նոյնը գրուեց Խաչատուրին(2) *այստեղից*(3) *եւ կծու լեզուով, մինչեւ իսկ չեշտելով որ շատ էլ ծափերի ետեւից չընկնի եւ անմիջապէս դիմի գործնական քայլերի։*

Համբոյրներով՝
Քո ՆԻԿՕԼ

1.- Խօսքը կը վերաբերի Կոպենհակնի Ընկերվար Միջազգայնականի ժողովին ընթացքին Ն. Դումանի արտայայտած մտքերուն, ի պատասխան իրեն ուղղուած հարցերուն: Յայտնենք որ «Դրօշակ»ի մէջ 16.000-նոց բանակի խօսք չկայ: Երեւի, Դումանի առարկութեան վրայ, հանուած է այդ բաժինը:

2.- Խաչատուր Մալումեան (Է. Ակնունի):

3.- Այսինքն Հ.Յ.Դ. Արեւմտեան բիւրոյի Պոլսոյ հատուածին կողմէ:

103

Թղթածրար No 1855

4/17 *Նոյեմբ.* 1910
Կ. Պոլիս

Սիրելի Միքայէլ!

Քո վերջին նամակը ուղարկել են գիւղ, ես էլ գիւղից եմ եկել քաղաք՝ դեռ չստացած։ Կը կարդամ եւ կը պատասխանեմ, եթէ պատասխանելու բան կայ։

Եթէ վերջին նամակումդ դեռ չես գրել, շուտով հաղորդիր 1000 *ֆրանկի ստանալուդ կամ չստանալուդ մասին։ Եղբայրս գրում է, որ փոխադրել է Սեպտ.* 3*-ին (Հայկն էլ էր գրել եւ այդ նամակն ուղարկել եմ քեզ)։ Թէ որ չես ստացել, նա կը պահանջի բանկից։*

Կովկաս բանտարկեալների համար նոր փոխադրութիւն կատարելու համար այստեղ վճռել ենք, որ ղրկես 10.000 *ֆրանկ, եթէ այդ տեղի գումարը* 20.000*-ից պակաս չէ։ Վճիռը կայացել է բոլոր ձայների մեծամասնութեամբ ընդդէմ մէկի — Վահաբի*(1)*։*

Մենք, ամէնքս <u>պաշտօնական հանգամանք</u> չունինք, այդ հանգամանք ունեցողը միակ Վահաբն է, այն էլ դէմ է։

Եւ դուցէ — հէնց դրա համար էլ — մինչեւ հիմա քեզ չի ղրկել այդ վճիռը։ Կարծում եմ որ այդ հարցի մասին — լաւ կը լինէր — եթէ նախօրօք գրէիր քո բոլոր պաշտօնական ընկերներին եւ հարցնէիր նրանց կարծիքը։ Յետոյ, յանկարծ պահանջ կը ծագի եւ մինչեւ կարծիքներ հաւաքելը — թէկուզ հեռագրով — գործը կը մատնուի դանդաղութեան։

Իմ խոստացած բրօշիւրը նոյնիսկ չեմ սկսել։ Երկու օրից յետոյ գիւղից կը փոխադրուեմ քաղաք եւ — եթէ տրամադրութիւնս տեղը լինի — կը սկսեմ։

Նուարդին բարեւներս։

Համբոյրներով՝
Քո Ն.

1.- Վահաբ – ծածկանուն Արշակ Վռամեանի, անդամ Հ.Յ.Դ. Արեւմտեան բիւրոյին։ Յիշենք որ Ն. Դուման, երբ կը գրէ «այստեղ վճռել ենք», կը խօսի նոյն Բիւրոյի անունով։

104

Փաստ. 877-81

10/23 *Նոյեմբեր* 1910
Պօլիս

Սիրելի Ռոստոմ!

Երեւի գիտես, որ բանտարկեալների դատավարութիւնը(1), *ինչպէս ասում են, շուտով սկսւելու է։ Պաշտպանութեան համար դրամական մեծ կարիք կայ։ Կովկասում փող ձեռք բերելու յոյսը կտրած՝ Ոսկանապատը յատուկ մարդ էր ուղարկել Ժընեւ եւ Պօլիս։ Ժընեւից առաջ (դեռ ամառը) փոխադրւած էր* 15000 *ֆր. եւ* 800։ *Այս անգամ էլ Միքայէլը*(2) *փոխադրել է* 32000, *ուրեմն քիչ պակաս* 50000-*ից, որը Ընդհանուր Ժողովի որոշածն է։ Պօլիսը ոչինչ չունի ու ինքն էլ ապրում էր մինչ այժմ գլխաւորապէս Ժընեւով։ Եւ ամէնքը աչք են տնկել միմիայն Ամերիկայի վրայ։ Բայց այնտեղ էլ — գիտես էլի — ուստա Խաչատուրը*(3) *խօսքը ամէն բանից բարձր է դասում... եւ առ այժմ դրամական հարցը մնում է նիսիա*(4), *չը նայելով որ մի քանի կծու նամակներ են գրւել այստեղից ու Ժընեւից։*

Այսպիսի կացութեան մէջ միակ ելքը մնում է ծանրանալ դա՛ռձեալ Ժընեւի վրայ։ Այստեղ գտնւող բոլոր ընկերները միաձայն որոշել են «Ժընեւից փոխադրել էլի 10.000 *ֆր.*, *եթէ այնտեղի գումարը պակաս չէ* 20.000-*ից»։ Այդ վճռին դէմ է միայն Վահաբը՝*(5) *որ միակ պաշտօնական հանգամանք ունեցող անձնաւորութիւնն է։ Նա պատճառաբանում է, որ Ընդհ. Ժողովի որոշումը միայն* 50.000 *է եւ, որ գլխաւորն է, նոր փոխադրութիւն կատարելով (եղած* 25-30.000-*ից)՝ ապագայում քաղցած կը մնան «Ազատամարտն» ու գործիչները։ Մենք դրան հակադրում ենք ա՛յն կարծիքը, որ* 50.000-*ի սահմանից չանցնելը հարցի միայն իրաւաբանական կողմն է, իսկ մենք մոռանալու չենք նա՛եւ բարոյականը, որը մեզ վրայ պարտք է դնում այդ սահմանը քիչ մը զանցառութեան տալ։ Իսկ ինչ վերաբերում է ապագայում քաղցած մնալուն,— դա աբսուրդ է. պատրաստ փողով ու պենսիայով*(6) *իմ տատն էլ կը գործի, թո՛ղ մարմինները աշխատեն ու ծախսեն, ինչպէս միշտ։ Ինչ եւ իցէ. Վահաբը դէմ է. Միքայէլը գրել է, որ կարելի է եւ պէտք է փոխադրել* 10.000 *ֆր.*, *եթէ ուրիշ կողմերից դրամական օգնութիւն չը հասնի։ Մնում է քո ու Յօնանի*(7) *կարծիքը։ Այժմ գրում եմ երկուսիդ, որ ձեր կարծիքները այդ հարցի առթիւ՝ շուտով ղրկէք Ժընեւ։*

Ես վաղուց եմ վերադարձել եւ այժմ տեղաւորւած եմ մի ֆրանսիական ընտանիքում։ Ռեվմատիզմս հետզհետէ թեթեւանում է՝ չնորհիւ — մի անյայտ բժշկի դիագնոզի(8)։ *Նա գտաւ, որ ռեւմատիզմ չունիմ եւ ցաւերը հետեւանք են արեան անմաքրութեան ու անկանոն շրջանառութեան, որից բժշկւում եմ այժմ։*

Ի՞նչ ես անում դու, ինչպէ՞ս են անցնում օրերդ։

Յօնանից նամակ ունիմ. շատ գոհ է իր նոր դրութիւնից, մանաւանդ «հալալ աշխատանքով» ապրելու վիճակից։

Համբոյրներով՝ քո **ՆԻԿՕԼ**

Հասցէս — «Ազատամարտ»

1.- Խօսքը կը վերաբերի Ռուսիոյ մէջ «Դաշնակցութեան դատին», որ պաշտօնապէս տեղի պիտի ունենար Պետերբուրգի մէջ, այն ալ 1912-ի առաջին ամիսներուն: Ոսկանապատը ծածկանունն է Պաքուի (Կեդր. կոմիտէ):
2.- Միք. Վարանդեան:
3.- Խ. Մալումեան – Ակնունի, որ այդ օրերուն Ամերիկա կը գտնուէր:
4.- Նիսիա՝ ապառիկ, խոստում, թէական իմաստով:
5.- Արշակ Վռամեան. բուն անունով՝ Օննիկ Դերձակեան, անդամ Արեւմտեան բիւրոյի:
6.- Թոշակով:
7.- Յ. Դաւթեան, որ Պարսկաստան անցած էր եւ կը զբաղէր կրթական գործով:
8.- Ախտաճանաչման:

105

Թղթածրար No 1855

11/24 *Նոյեմբ.* 1910
Պոլիս

Սիրելի Միքայէլ!

Վերջապէս չէկը ստացայ եւ ես հանգստացայ։ Մնում է ժամացոյցի 42 *Ֆրանկը,— այն էլ կը ստանաս Պաւլի-բէգից*(1), *որին գրել եմ արդէն։*

Ասում ես, որ կողմնակից ես բանտարկեալների համար ծայրայեղ դէպքում 10.000 *Ֆրանկի նո՛ր փոխադրութեան, բայց վախենում ես, որ այդ գումարների մի մասը բուն նպատակից չեղւի եւ ծառայի բանտարկեալների ընտանիքներին ու այլ ընթացիկ ծախսերի։ Քանի որ գործին գլուխ է կանգնել Ոսկանապատը*(2)՝ *ընթացիկ ծախքերի վտանգը վերանում է, որովհետեւ միակ քաղաքն է այդ, որ ամենավատ տարիներում անգամ կարողանում է հոգալ ընթացիկ ծախքերը եւ դեռ մի փոքր բաժին էլ հանել ընդհանուր գործի համար։ Ինչ վերաբերում է բանտարկեալների ընտանիքներին — նրանց վերաբերմամբ կարող ենք կտրուկ լինել մենք՝ հեռու եղողներս։ Իսկ նա, որ ամէն օր իր սեփական աչքերով տեսնում է այդ ընտանիքների թշուառութիւնը, անտակարկոյս չը պիտի կարողանայ յաղթահարել իր զգացմունքները։ Այնուամենայնիւ, այդ տեսակէտից էլ Ոսկանապատը աւելի պակաս վտանգաւոր է, որովհետեւ բանտարկեալների թիւը այդ քաղաքում շատ քիչ է եւ եղածներն էլ համարեա ամէնքը ապահովուած են զանազան միջոցներով, իսկ միւս քաղաքները հեռու ու անտեսանելի են, հետեւապէս խստութիւնը դրամների վերաբերմամբ՝ հնարաւոր։ Այսպէս, թէ այնպէս,— ես դէմ չեմ որ Ոսկանապատցիներին յիշեցւի եւ չեշտւի, որ ներկայ պայմաններն ու մեր միջոցները չեն ներում խելքի ու հաշիւների շրջանակից դուրս գալ եւ տարւել ընկերական զգացմունքներով։*

Այս բոլորի մէջ ես ու դու համաձայն ենք եւ նոր փոխադրութեան կողմնակից։ Բայց միայն մեզանով հարցը չի լուծւի եւ կարիք կայ ստանալու պաշտօնական հանգամանք ունեցող բոլոր ընկերների կարծիքները։ Վահաբինը արդէն գիտես։ Յօնանին ու Ռոստոմին էլ ծանօթացրի հարցի էութեան հետ եւ խնդրեցի որ իրանց կարծիքները շուտով ղրկեն քեզ։ Մնում է Խաչատուրը,— նրան էլ գրիր ինքդ։ Դա լաւ առիթ է, որ քիչ մ՚ալ բրգես նրան եւ զգալ տաս, որ լո՛կ ճառով ապրելու գիւտը դեռ չէ արւած(3)։

Յօնանից նամակ ունիմ. շատ գոհ է, որ վերջապէս ապրում է «հալալ աշխատանքով»։

Ողջոյններս ամէնքին։

Համբոյրներով՝
Քո **Նիկ.**

Ստացուեց մի No *«Նոր-Դար»՝ կէս թերթից։ Նպատակը... գոյութեան իրաւունքը չկորցնելն է, բայց ամբողջովին նուիրուած է Սպանդարի պաշտպանութեան, ուր, ի միջի այլոց, ասուած է. «Թերթիս խմբագիրը Հոկտեմբերի 4-ին արագընթաց գնացքով մեկնեց Արտասահման՝ իր դատի համար։*

ՆՈՅՆ

1.- Պալի-բէգ – ծածկանուն Ն. Դումանի եղբօր՝ Տէր Յովհաննիսեան Պօղոսի:
2.- Ոսկանապատ – ծածկանուն Պաքուի (Կ. կոմիտէ):
3.- Ակնարկութիւն Է. Ակնունիի հռետորական ճարտասանութեան:

Միքայէլ Վարանդեան

106

Թղթածրար No 1855

19 *Նոյեմբ.* (*հ. տ.*) 1910
Պօլիս

Սիրելի Միքայէլ!

Ստացայ վերջին նամակդ։ Ամերիկայում հանգանակութեան պատրաստութիւն են տեսնում եւ յոյսեր են տալիս։

Դատավարութեան նկատմամբ ո՛չ մի վերջնական բան մենք էլ չը գիտենք։

Դու ի զուր ես սպասում, որ 10.000*-ի վերաբերմամբ պաշտօնական դիմում անեն։ Նրանց խելքը չի կտրելու այդ, եթէ չը յիշեցւի։ Բայց, ի հարկէ, այժմ ոչ յիշեցնելու կարիք կայ եւ ո՛չ էլ փոխադրելու։ Միայն պէտք է պատրաստ ունենալ գումարն ու փոխադրութեան վճիռը, որ անհրաժեշտութեան դէպքում փոխադրւի առանց յապաղելու։*

Ս-եանի մասին Վահաբն արդէն տեղեկութիւններ տուել է քեզ, ինչքան ունեցել է, եւ այսուհետեւ էլ կը հաղորդի հետզհետէ ինչ որ ձեռք բերի։

Ակնարկում ես ծուլութիւնս, որ մասամբ ճշմարտութիւն է եւ մոռանում ես գլխաւորը,— այն՝ որ մի օր սաղ եմ եւ 5 *օր կաղ ու համարեա թէ միշտ դրա շնորհիւ վատ տրամադրւած։*

Յեղափ[*ոխական*] *գործունէութեան մէջ գլխաւոր ճիւղերից մէկն էլ կազմում է տէրրօրը։ Դրա համար սկսել եմ «Տէրրօրը յեղափոխական շարժման մէջ», մի բան, որ իմ ծրագրով պէտք է դուրս գայ բաւական ընդարձակ եւ սկսւի թէօրիայով ու վերջանայ գործնականով։ Բայց դժբախտաբար այդ սկսւածքը մնացել է իր առաջին երեսի վրայ — դարձեալ հիւանդ ու տրամադիր չը լինելու պատճառով*(1)։

[*Պաւլի*] *Բէգից որ ժամացոյցի փողը ստանաս, այն էլ հաղորդիր ինձ։*

Այստեղի գործերի մասին ոչինչ չեմ գրում, որովհետեւ այս քանի օրւայ անցած-դարձածին անծանօթ եմ։ Բեվմատիզմով դարձեալ հիւանդ էի։ Այսօր առաջին օրն է, որ վեր եմ կացել։

Համբոյրներով՝
Քո ՆԻԿՕԼ

1.- Այս աշխատասիրութիւնը, որ յայտնի չէ թէ ի՛նչ շարունակութիւն է ունեցած, տարբեր է անշուշտ «Նախագիծ ժողովրդական ինքնապաշտպանութեան» գործէն։

107

Փաստ. 877-67

Միք. Վարանդեանին ուղղուած երկտող, Ժընեւ:

25 *Նոյեմբեր* 1910
Պոլիս

Սիրելի Միքայէլ!

Մի նամակ ուղարկեցի Փարիզ՝ Զերնովին, որ ինձ համար ուղարկի «Ազատամարտ»-ի հասցէով մատեռիալի պо տեռռոռու (պռեիմուշչեստվեննо պо տեռռոռի), նապեչատաննիէ վը սբռռնիկախ ի վը «Ռեւոլյուցիոննայա Ռօսսիյա»(1):

Բայց ասում են, որ Զերնովը այժմ Ժընեւ է: Եթէ ճիշտ է՝ անձամբ ասա իրան. հակառակ դէպքում, ինքդ էլ գրիր մի նամակ, շուտով, հասցնեն ինձ:

Այստեղ ասում են, որ գրեմ քեզ չը տպագրես ա՛յն թուղթը, որ Սպանդարի եղբայրը ուղարկել է իր կնոջը եւ որը նոյնպէս ղրկած է քեզ՝ նրանից արտագրած կտորը:

Համբոյրներով՝
Քո Ն.

1.- Բնագրին մէջ ռուսերէն՝ Տեռորի վերաբերեալ նիւթեր (գերազանցապէս տեսութեան վերաբերեալ), հրատարակուած ժողովածուներում եւ «Յեղափոխական Ռուսաստանում»:

108

Թղթածրար No 1855

26 *Դեկտ.* (*հ. տ.*) 1910
Կ. Պոլիս

Սիրելի Միքայէլ!

Նամակդ ստացայ: Եգիպտոս չեմ կարող գնալ, որովհետեւ կեանքը թանկ է այնտեղ:

Պարիզից արդէն ստացել եմ իմ խնդրած նիւթերը (*տէրրօրի վերաբերմամբ*):

Պաւլի-ըէգը վաղուց է քեզ փոխադրել 42 *ֆր.* — *ժամացոյցի փողը:*

Ստացա՞ր, թէ այդ էլ միւս փոխադրութեան փորձանքին ենթարկուեց:

Նուարդին բարեւներս:

Համբոյրներով՝
Քո ՆԻԿՕԼ

109

Փաստ. 478-56

Նիկոլ Դուման դարձեալ Պարսկաստան է՝ տեղի տալով կուսակցական մարմիններու կրկնակի դիմումներուն: Սկիզբէն, դեռ 1908 թուականին, երբ դիմուած էր իրեն ստանձնելու հայ մարտական ուժերու հրամանատարութիւնը, ան դէմ էր եղած հայերու մասնակցութեան Պարսկաստանի սահմանադրական կռիւներուն եւ մերժած էր իրեն առաջարկուած պաշտօնը գլխաւորաբար այն հիմունքով, որ պարսկահայութիւնը փոքրամասնութիւն էր այդ երկրին մէջ եւ, միապետականներու յաղթանակի պարագային, ան կրնար զոհ երթալ պարսիկ պահպանողականներու կրօնամոլական վրէժխնդրութեան: Երեք տարի անց, երբ մանաւանդ ռուսական զինուորական միջամտութեան հետեւանքով՝ վտանգուած էր սահմանադրական վարչակարգը, անսալով Ռոստոմի ու նաեւ Եփրեմի պնդումներուն, ան յանձն առաւ ստանձնել Ատրպատականի զինեալ ուժերու հրամանատարութիւնը, միշտ ի նկատի ունենալով հայոց ինքնապաշտպանութեան գործի կազմակերպումը: Այդ պատճառով ալ ան չուզեց երբեք որ հայկական զինեալ ուժերը գտնուին յառաջապահի դիրքերուն վրայ, մանաւանդ հաշուի առնելով ռուսական զօրքի ներկայութիւնը Թաւրիզի շրջանին մէջ:

Ն. Դումանի այս առաջին նամակը ուղղուած է Թաւրիզի իր վաղեմի ընկերներուն,– Սարգիս Օհանջանեանին (Ֆար-Հատ) եւ Յոնան Դաւթեանին: Վերջինս կը վարէր Թաւրիզի նորաբաց Կեդր. դպրոցի տեսչութիւնը:

11 *Յուլիս* 1911
Սալմաստ

Սիրելի Սարգիս եւ Յոնան!(1)

Նամակներդ ստացայ: Քանի որ «Պրոգրէսի» կազմակերպումը դեռ տատանման մէջ է, ես կը մնամ Սալմաստում, փոխանակ փոչի կուլ տալու Թաւրիզում: Հէնց որ զգաք իմ ներկայութեան կարիքը Թաւրիզում, իսկոյն հաղորդեցէք ինձ, որ ճանապարհ ընկնեմ:

Այժմ Մամեթ-Ալի Շահի մասին:

Սկզբից ի վեր, ի նկատի ունենալով հայերի ողորմելի թիւը Պարսկաստանում, ես դէմ եմ եղել մեր մասնակցութեանը պարսից յեղ. շարժման մէջ: Տարակոյս չը կայ, որ այդ շարժման ժամանակ եթէ յաղթէին միապետականները, նրանք – զրգռւած մեր մասնակցութիւնից – հայերին պիտի տրորէին ոտքի տակ: Բարեբախտութիւն էր, որ նրանք չը յաղթեցին, բայց այդ բարեբախտութիւնը, ինչպէս երեւում է, երկար չը պիտի տեւի: Մամեթ-Ալին չէր համարձակի մտնել Պարսկաստան, եթէ մի կողմից չունենար ռուսական աջակցութիւնը,

միւս կողմից էլ նպաստաւոր հող իր հայրենիքում միապետական նպատակների համար։ Համոզւած եմ, որ նա այդ կրկնակի ոյժը ունի, բայց չեմ կարողանում հասկանալ նրա ապագայ շարժումների ծրագիրը։ Եթէ նա երկու թեւով — Մաքու-Ղարադաղ եւ Շահսուվաններ — շարժւէր դէպի Թաւրիզ ու այստեղ աղ ու հաց ընդունէր ռուսաց զօրքից եւ Թաւրիզը յայտարարէր ժամանակաւոր մայրաքաղաք,— այդ ես կը հասկանայի։ Բայց նա այդպէս չի անում ըստ երեւոյթին եւ իրան գցել է թուրքմէնների մէջ. չը լինի՞ թէ ուզում է բռնել Թեհրանի ճանապարհը։ Բայց ո՞ր գծով եւ որո՞նց հետ։ Այդ գծի վրայ եւ Թեհրանում ո՞րքան ոյժ ունի մօտաւորապէս միապետութիւնը եւ ո՞րքան սահմանադրականները. այդ ճանապարհի վրայ ռուսները ունի՞ն արդեօք որ եւիցէ զինւորական ոյժ եւ եթէ չունին,— հապա ինչի՞ մէջ պիտի կայանայ նրանց աջակցութիւնը Մամեթ-Ալիին։ Սրանք հետաքրքիր հարցեր են՝ շարժման ծրագիրը հասկանալու համար եւ եթէ կարող էք ուսումնասիրեցէք հնարաւորութեան չափով։ Բայց մեզ համար կայ աւելի հետաքրքիր ու կենսական հարց.— ի՞նչ դիրք պիտի բռնենք այդ շարժման հանդէպ, որ ապահովւի մեր ժողովրդի ինքնապաշտպանութիւնը։ Մենք գիտենք արդէն, որ Մամեթ-Ալին հին թոյն ունի ամբարած հայերի դէմ եւ այժմ — եթէ նա յաղթի — այդ թոյնը պէտք է թափի հայերի գլխին։ Ուրեմն միակ փրկութիւնը կայանում է նրա մէջ, որ նա կրկին անգամ պարտւի։ Ու եթէ այս երկրի մէջ դեռ կան ընդդիմադիր տարրեր, պէտք է նպաստենք նրանց համախմբւելուն (ինչով կարող ենք), եւ միացնենք մեր բոլոր ոյժերը։ Իսկ եթէ չը կան ընդդիմադիր ոյժեր, կամ եթէ կան՝ շատ թոյլ են, մեր կողմից խոհեմութիւն չի լինի, որ այս դէպքում ստանձնենք աւանդարդի(2) անյոյս դեր եւ աւելի եւս կատղեցնենք Մամեթ-Ալին։ Սրանք բոլորը, ի հարկէ, հարցեր են՝ դեռ չը լուսաբանւած, Մամեթ-Ալիի Պարսկաստան մտնելն էլ գուցէ դեռ եւս կասկածելի։ Բայց քանի որ կան հրապարակի վրայ այդ հարցերը, մենք պարտաւոր ենք դրանցով զբաղւել, ըստ կարելոյն ճշտել, լուսաբանել եւ միւս կողմից էլ ցուցակագրել ու կարգի բերել մեր բոլոր մարտական ոյժերը, որ յանկարծակիի չը գանք ու չը կորցնենք գլուխնիս։ Իսկ ինչ վերաբերում է մի գործնական ծրագրի, դրա մասին առ այժմ ոչինչ չի կարելի անել, քանի որ չը գիտենք ո՞րտեղ պիտի գործ ունենանք, ո՞րքան ոյժերի հետ եւ ո՞րքան են մեր սեփական ու դաշնակցական ոյժերը։ Այսքանը մեզ համար առ այժմ պարզ է, որ բոլոր հայկական շրջաններում շուտափոյթ կարգի պիտի բերենք մեր բովանդակ մարտական ոյժերը առ այժմ յանուն ինքնապաշտպանութեան։ Լաւ կը լինի, որ Ձեր ձեռք բերելիք տեղեկութիւնները հետզհետէ հաղորդէիք մեզ։ Հորտանսին(3) ջերմ բարեւներս։

Համբոյրներով՝ ՆԻԿՈԼ

1.- Սարգիս Օհանջանեան եւ Յոնան Դաւթեան։
2.- Յառաջապահի։
3.- Հորտանսը՝ Յոնան Դաւթեանի զուիցերուհի կինն էր։

110

Փաստ. 478-63

3/16 *Օգոստոս* 1911
Սալմաստ

Սիր[*ելիք*]!

Անցայ Անատոլուի բնական ու տնտեսական անապատը։ Ցիշեցի մի երգ — «Հայաստան, երկիր դրախտավայր»։ Եթէ այդ երգի հեղինակը ձեռքս ընկնէր, ականջիցը բռնած կը պտտացնէի եւ ապա կը հարցնէի. «Այս երկրի ի՞նչն է դրախտի նման»։

Մի շաբաթ կայ, ինչ որ Թաւրիզումն եմ։ Ինձ խոստացած պաշտօնի փոխարէն (1)*, կարծեմ, մի ուրիշ նոր ու անակնկալ պաշտօն պիտի ստանամ.— անցեալ օրը Եփրեմից ստացայ հետեւեալ հեռագիրը. «Պատրաստուեցէք, դրամ որքան հարկաւոր է հեռագրեցէք»։ Մի ժողովից յետոյ՝ անմիջապէս պատասխանեցի — դա՛ռձեալ հեռագրով — հետեւեալը. «Համաձայն ենք, բայց անպայման պարսիկների հետ միասին. կարո՞ղ էք նպաստել այստեղի ընդդիմադիր տարրերի հետ կապւելուն. մինիմում չափով եւ անմիջապէս ո՞րքան կարող էք բաց թողնել զէնք, ռազմամթերք եւ դրամ։ Գոհացուցիչ պատասխան ստանալուն պէս կը կազմակերպւենք եւ կը գործադրենք ընդհանուր ծրագրի մեզ վրայ ընկած բաժինը՝ հրահանգների համաձայն»։ Այս հեռագրական բանակցութիւնը դեռ նոր է եւ ես տակաւին պատասխան չունիմ։* Ex-*Շահի*(2) *ո՞ւր գտնուիլը դեռ եւս առեղծւած է։ Ասպարէզի վրայ կան միայն հակասական ու առասպելական լուրեր։ Եւ որ ամէնից զարմանալին է, ժողովուրդը — մանաւանդ պարսիկ — այդ բոլորի հանդէպ մնում է սառն անտարբերութեան մէջ։ Բոլոր ա՛յն կէտերում, ուր իբր թէ* ex-*Շահն է մուտք գործել, չը կայ եւ ո՛չ մի շարժում։ Շարժւողը միայն նրա եղբայրն է — Սալարը-Դօվլէն, որը երէկ տարածւած լուրերի համաձայն՝ մի ընդհարում է ունեցել սահմանադրական զօրքերի հետ եւ ջարդ կրել։*

Անհատապէս ինձ թւում է, որ Թուրքեստան անցնողը ex-*Շահը չէ, այլ նրա արբանեակները* ex-*Շահի անունով.* որպէսզի հիմք ստեղծուի(3)*,* Ex-*Շահը իր հետ ունենալով ռուսական աջակցութիւնը՝ ըիսկ կ՚անի անցնել ու ա՛յն ճանապարհով, ուր ունի ապահով ու ուժեղ կողմնակիցներ։ Այդ յարմարութիւնը ներկայացնում է Ատրպատականը, ուր կան Շահ-սէօվանները*(4)*, մաքուցիք եւ ղարադաղցիք եւ ի լրումն ամենայնի ռուսները այստեղ ունին իրական ոյժ եւ կացութեան տէրն են։ Իմ կարծիքով նրա ճանապարհը այս է եւ աջողութեան դէպքում Թաւրիզը ժամանակաւոր մայրաքաղաք, մինչեւ իր ուժերը կազմակերպի եւ արշաւի Թեհրանի վրայ։ Կովկասից հեռագրել են այստեղի հիւպատոսին, որ ես Տաճկաստանից անցել եմ Պարսկաստան։ Վահաբի*(5) *երկտողը ստացայ։*

Համոյրներով՝
Ն.

1.- Պարսկաստանի սահմանադրական կռիւներուն մասնակցելու համար Նիկոլ Դուման, Հ.Յ.Դ. Բիւրոյի թելադրութեամբ եւ Եփրեմի հրաւէրով կանչուած էր իբրեւ ընդհանուր հրամանատար ղեկավարելու համար Ատրպատական-Թաւրիզի հայ, թուրք եւ պարսիկ ուժերը:

2.- Ex-Շահը՝ նախկին, գահընկէց եղած հակասահմանադրական Մոհամմէտ Ալի Շահն է:

3.- Բնագրին մէջ ռուսատառ:

4.- Շահ-սովանները՝ նախկին Շահին կողմնակից հակասահմանադրական ցեղախումբեր են:

5.- Վահաբ՝ Արշակ Վռամեանի ծածկանունը:

Նիկոլ Դուման ընդհանուր հրամանատար Ատրպատականի հայ եւ պարսիկ սահմանադրական զօրքերու

111

Փաստ. 1728ա-41

15/28 *Օգոստոս* 1911
Թաւրիզ

[*Եփրեմ Դաւթեանին, Թեհրան*]

Սիրելի Եփրեմ !

Ստեփանին(1) *գրած նամակիցդ երեւում է, որ Վրէժեանի*(2) *հեռագիրը բոլորովին սխալ ես հասկացել։ Երէկ այդ ուղղութեամբ երկու նոր հեռագիր տուինք քեզ, բայց ներկայ պայմաններում հեռագրով ամէն բան պարզելն անհնար է, եւ որպէսզի նոր թիւրիմացութեան մէջ չընկնիս, հարկ եմ համարում իրերի դրութիւնն ու ընդհանուր ատրպատականեան կացութիւնը լուսաբանել նամակով։*

Դու հեռագրել էիր, որ «Պատրաստուենք եւ որքան դրամ հարկաւոր է՝ հեռագրենք»։

Հաճելի առաջարկութիւն էր այդ — ի հարկէ, բայց արդի պայմաններում դրամը ամէն բան չէ։ Բացի դրամից, հարկաւոր են մարդիկ, զէնք, ռազմամթերք։ Տեղի վրայ այժմ պատրաստի ունեցածը բաւարար չը լինելով՝ ռազմական այդ նիւթերը մենք պէտք է բերել տայինք Կովկասից։ Բայց, դժբախտաբար, այժմ սահմանները այնպէս պինդ են ամրացրած ռուսաց կառավարութեան կողմից, որ դժուար չէ առաջուց նախատեսել, թէ մեր բոլոր ջանքերը այդ ուղղութեամբ պիտի ընթանային չա՜տ դանդաղ եւ պիտի մնային գրեթէ <u>ապարդիւն</u>։ Ամենաշատը որ մեզ աջողէր, պիտի կարողանայինք բերել տալ միայն մարդիկ, այն էլ — վերը յիշած պայմանների շնորհիւ — <u>շատ քիչ եւ դատարկաձեռն։</u>

Ուրեմն մեր յոյսը մնում է Տաճկաստանը — եւ գլխաւորապէս Վասպուրականը, որ սահմանակից է Պարսկաստանին եւ դրա շնորհիւ փոխադրութիւնը հնարաւոր է կատարել համեմատաբար <u>արագ</u>, որը, ինչպէս գիտես, շատ մեծ նշանակութիւն ունի ռազմական տեսակէտից։ Այն էլ գիտես, որ Տաճկաստանից մենք կարող ենք բերել միմիայն <u>անզէն մարդիկ</u>։ Ուրեմն Պարսկաստանում պատրաստի զէնք ու ռազմամթերք ստանալը մեզ համար անխուսափելի անհրաժեշտութիւն է եւ, պարսից սահմանադրական կառավարութեան անմիջական պարտքը, եթէ նա գիտէ լրջօրէն կշռել արդի կացութիւնը։

Բայց սա դեռ բոլորը չէ։

Պարսկաստանը ունի մօտ 9 *միլիոն ժողովուրդ։ Դրանց մէջ ցիր ու ցան հայերը, թւով ընդամէնը* 70 *հազար, կազմում են մի չնչին քանակ։*

Պարսկաստանը իր ճակատագիրը, անշուշտ, չի կարող եւ չը պէտք է յանձնի այդ չնչին քանակին։

Բայց սովորական կեանքում, մանաւանդ պատերազմի մէջ, նշանակութիւն ունեցողը միմիայն քանակը չէ, այլ եւ որակը։ Որակի կողմից հայերը երկրորդական տեղ չեն բռնում։ Դրա մէջ պարսից այժմեան կառավարութիւնը, ըստ իս, արդէն համոզւած պիտի լինի Ռաշտում, Ղազվինում, Թեհրանում, Թաւրիզում, Սալմաստում։ Իր ետեւը անցեալ ունեցող այսպիսի մի ժողովրդի — ինչքան էլ քանակով փոքր լինի նա — Պարսից սահմանադրական կառավարութիւնը չը պէտք է զանցառութեան տայ, եթէ իսկապէս նա ըմբռնում է իր երկրի իրական շահերը։ Ընդհակառակը՝ կառավարութիւնը պարտաւոր է ստեղծել ամենատեսակ յարմարութիւններ եւ հայերին հրապուրել դէպի համերաշխ գործակցութիւն։

Եւ մենք պատրաստ ենք ուրախութեամբ ընդառաջ գնալու սահմանադրական ակտիւ ուժերին, եւ ո՛չ թէ ծափերի համար ճառախօսողներին կամ պատմութեան համար թռուցիկ հրատարակողներին։

Հէնց այդ է պատճառը, որ մենք հեռագրել էինք, թէ «չէ՞ք կարող արդեօք նպաստել Թաւրիզում համերաշխ գործակցութիւն կազմելու ընդդիմադիր տարրերի հետ — ընդդիմադիր՝ միապետութեան եւ անպատճառ ընդդիմադիր զէնքով ու ո՛չ թէ խօսքով կամ թղթով։ Այստեղ մերոնք շատ են ճանաչում խօսքի ու թղթի մարդիկ եւ եթէ ուզենայինք միանալ սրանց հետ, այն ժամանակ հարկ չէր լինի դիմելու Թեհրան։ Բայց մենք դիտմամբ դիմեցինք Թեհրան, մտածելով որ գուցէ այս եղանակով կարողանանք Ձեր միջոցով կապւել այստեղի իսկական ակտիւ ուժերի հետ եւ ազատւենք «եալանչի փահլեւաններից»։ Այժմ — պարզ լինելու համար — ամփոփեմ մեր պայմանները.

1) Թէեւ որակով ուժեղ, բայց քանակով շատ թոյլ ենք, ուրեմն չենք կարող գործել առանձին եւ դա ամենեւին ձեռնտու չէր լինի ո՛չ կառավարութեան, ոչ էլ մեզ։ Ուրեմն կապեցէք մեզ այստեղի սահմանադրական ակտիւ ուժերի հետ։

2) Որոշակի, անմիջապէս եւ կանխիկ (ո՛չ թէ խոստումներով) մեր տրամադրութեան տակ դրէք զէնք, ռազմամթերք եւ դրամ։

3) Կազմեցէք դիմադրական մի ընդհանուր ծրագիր եւ Ատրպատականին վերաբերեալ մասը յանձնեցէք մեզ՝ ի գործադրութիւն, Ձեր հրահանգներով հանդերձ։

Վերջին կէտը, այսինքն դիմադրական մի ընդհանուր ծրագիր կազմելը, ես համարում եմ անհրաժեշտ։ Դրա համար էլ հարկ եմ համարում տալ հում նիւթեր Ատրպատականին վերաբերեալ, որ ի նկատի ունենաք ընդհանուր ծրագիրը կազմելիս։

Նախկին Շահին Պարսկաստան մտնելու համար համարձակութիւն կարող էր տալ երկու նպաստաւոր պայման. նախ՝ ռուսաց կառավարութեան աջակցութիւնը։

Երկրորդ՝ ուժեղ կողմնակիցներ Պարսկաստանում։

Այդ երկու նպաստաւոր պայմանները նրա համար ներկայացնում է միայն եւ միմիայն Ատրպատականը։ Ատրպատականում ռուսներն ունին մի քիչ զօրք եւ Ջուլֆան էլ շատ մօտ է Թաւրիզին։ Ուրեմն այստեղ ռուսները ուժեղ են եւ

կացութեան տէրը, հետեւապէս Մամադ-Ալի ex-*Շահը այդ կողմից ապահովւած։ Թոյլ չեն եւ միապետական տարրերը, ինչպէս օրինակ, շահ-սեւվանները, Ղարադաղ, Մաքու, Սուլջայի-Դովլէն եւ քիւրդերը։*

Ուրեմն Մամադ-Ալիի համար աւելի հեշտ է մտնել Թաւրիզ, յայտարարել նրան ժամանակաւոր մայրաքաղաք, մի առժամանակ մնալ այստեղ, կազմակերպել իր կողմնակից բաշի-բոզուկներին եւ յետոյ մեծ բանակով արշաւել դէպի Թեհրան։ Այս ծրագրի իրագործումը հեշտացնելու համար նրան անհրաժեշտ է նախապէս Թեհրանի զինւորական ու տնտեսական ուժերը զգալի կերպով թուլացնել Թաւրիզից հեռու մի անկիւնում — Աստրաբադում եւ շրջակայքում։ Ու այդ մանէօվրը աջող խաղալու համար ռուսաց կառավարութիւնը օգնութեան է հասնում. յենւելով բոլոր օտարահպատակներին պաշտպանելու իր ստանձնած պարտականութեան վրայ, յայտարարում է, որ Թեհրանում 30 *կիլոմետրի վրայ թոյլ չի տայ ո՛չ մի կռիւ եւ այս ճարպիկ մանէօվրով հարկադրում է Թեհրանի զինւորական ու տնտեսական ուժերին գնալ Մամադ-Ալիի ուզած տեղը — Աստրաբադ եւ շրջակայքը։* Ex-*Շահը իր գործը այնտեղ տեսնելուց յետոյ — ինձ թւում է — որ նա անակնկալ կերպով պիտի յայտնւի Թաւրիզի շրջակայքում։ Այստեղ էլ ռուսաց կառավարութիւնը չի մոռացել իր նախապատրաստութիւնները տեսնելու։*

Այստեղի հիւպատոսն էլ հրահանգ է ստացել à la Téhéran *յայտարարելու, որ* 30 *կիլոմետրի վրայ (Թաւրիզից) թոյլ չի տրւում ո՛չ մի պատերազմ, բայց յայտարարելու ո՛չ թէ այժմ... այլ կռւի դէպքում միայն։ Ի՞նչ է նշանակում այս։*

Այս պարզապէս նշանակում է ա՛յն, որ Թաւրիզը կը պատրաստւի ինքնապաշտպանութեան, բայց հէնց որ Մամադ-Ալին կը մօտենայ Թաւրիզի պատերին, ռուս կառավարութիւնը կ՚արգելի հրացանաձգութիւնը եւ ex-*Շահը կը մտնի քաղաք առանց դիմադրութեան, ինչպէս խաղաղ կերպով Արդաբիլ մտան նրա կողմնակիցները այս Օգոստոսի* 9-*ին։*

Գուցէ սխալւում եմ իմ կարծիքների մէջ — եւ տայ Աստուած որ սխալւիմ — բայց վաղօրօք կառավարութեան առանձին ուշադրութիւնն եմ հրաւիրում Ատրպատականի վրայ։ Եթէ յետագայում իմ կարծիքները յայտնւին անհիմն, այնուամենայնիւ կառավարութիւնը ոչինչ չի կորցնի այս նահանգում նախազգուշութիւններ ձեռք առնելով։ Նախազգուշութեան անմիջական նպատակը պէտք է լինի ex-*Շահի կողմնակիցների ուժերի չէզոքացումը։*

Բայց ի՞նչ գործնական հնարաւորութիւն կայ այդ ուժերը չէզոքացնելու։ Ըստ իս՝ առաջ ու առաջ պէտք է մի ուժեղ բանակ շարժւի դէպի Սարաբ՝ ընդդէմ Սուլջայի Դովլայի(3)*։ Դրա հետ միաժամանակ մի ուրիշ բաւարար բանակ դէպի Մարաղա նոր դատաւորով։ Պէտք է անմիջապէս գրաւել Մարաղան, <u>պատաւորը</u> պատանդ վերցնել Սուլջայի-Դովլայի ընտանիքը ու բոլոր ազգականներին, կառավարական հսկողութիւն նշանակել նրա կալւածքի վրայ եւ այս բոլորից յետոյ իսկոյն բանակցութեան մէջ մտնել Սուլջայի Դովլայի հետ, նախ քան նրա հետ ընդհարւելը։*

Եթէ խնդիրը զինաթափութեամբ եւ խաղաղ լուծմամբ չի վերջանայ, անմիջապէս սկսել պատերազմական գործողութիւնների։ Ասում են, որ բանտարկը-

ւած Ռահիմ-խանը վաղեմի թշնամի է Սուջայի Դովլային։ Եթէ ճիշտ է այդ եւ եթէ հաւատալ ու վստահել կարելի է, նպատակայարմար կը լինէր Մարաղայի համար նոր դատաւոր նշանակել Ռահիմ-խանի որդուն եւ հրահանգ տալ որ իր ձիաւորներով գնայ նստի Մարաղայում։ Այսպիսով ըէակսիոն տարրերը կը հեռանային Ղարադաղից եւ այլեւս հարկ չէր լինի մի ուրիշ բանակ ղրկել Ղարադաղ՝ նրանց չէզոք պահելու համար։ Հակառակ դէպքում, մի փոքր բանակ էլ պիտի մնայ Ղարադաղի մի յարմարագոյն պունկտի վրայ՝ արթուն հսկողի դերում։ Կայ ե՛ւ մի ուրիշ թշնամի — Մաքուայ Սարդարը։ Նրան չէզոքացնելու համար, իմ կարծիքով, պէտք է Խոյում կազմակերպել մի բանակ եւ նրան ուժեղացնել դրսի ուժերով։ Աշկարայ — Սարդարի ականջը հասնելու չափ — հրահանգ պէտք է տալ այս բանակին, որ մաքուցիները եթէ յարձակւեն Խոյի վրայ՝ դիմադրել նրանց. իսկ եթէ մաքուցիները ուրիշ գծով կ՚անցնին դէպի Թաւրիզ կամ այլուր, Խոյի բանակը շարժւի դէպի անպաշտպան Մաքուն եւ քարը քարի վրայ չը թողի։ Սա կը լինի ամենալաւ զսպումը։

Այս բոլորից յետոյ՝ կը մնան քիւրդերը։

Սրանք ոչինչ չեն կարող անել, եթէ տեսնեն միւս ըէակսիոն տարրերին կաշկանդած վերը յիշած ձեւով։ Այսպիսի պայմաններում նրանք ամենաշատը կը զբաղւեն թեթեւ ալան-թալանով, որ — յամենայնդէպս — չի կարող կորստաբեր լինել սահմանադրութեան համար։

Անշուշտ նկատած կը լինիս, որ ասում եմ բանակ ղրկել այս ինչ կամ այն ինչ տեղը, բայց չեմ ասում, թէ քանի հոգուց բաղկացած պէտք է լինի բանակը։ Անհնար է ինձ համար թէկուզ մօտաւոր թւի վրայ կանգ առնել, որովհետեւ չը գիտեմ իմ թւած տարրերի ոյժի չափը։ Ո՛չ միայն այդ, չը գիտեմ նաեւ, թէ կառավարութիւնը կարո՞ղ է արդեօք զէնք, ռազմամթերք եւ դրամ հասցնել եւ ո՞րքան։ Դեռ աւելին.— չը գիտեմ ո՞րտեղ է Մամադ-Ալին, ո՞ւր եւ ի՞նչ ընդհարումներ են ունեցել երկու հակամարտ հոսանքները եւ ի՞նչ հետեւանքներով։ Եւ ես եզակի չեմ, այս անգիտութիւնը ընդհանուր է եւ շատ ցաւալի։ Աֆրիկայի եւ Աւստրալիայի մասին աւելի ճիշտ ու արագ տեղեկութիւն ենք ունենում, քան Պարսկաստանի, որի մէջ ապրում ենք։ Եւ ի՞նչ ասել կ՚ուզի — եթէ լինէի պարսկական շարժման կուրսում, անց ու դարձին տեղեակ,— թերեւս աւելի գործնական լինէի դատողութիւններիս մէջ, քան նրանք այժմ կարող են երեւալ։ Յարաբերութիւնդ ինձ հետ պահիր նոր կեղծ-անունով(4)։

Ջերմագին բարեւներով՝

ՆԻԿ.

1.- Ստեփան Թադէոսեան, ծանօթ Սամսոն եւ Գարեգին ծածկանուններով։

2.- Վրէժեանը՝ Թաւրիզի կամ Ատրպատականի Կ. կոմիտէն է։

3.- Սուջայի Դովլէն՝ Սալար Դովլէն է, նախկին շահի եղբայրը։

4.- Պարսկաստանի մէջ, այդ օրերուն Ն. Դումանի կեղծանունը պիտի ըլլար Ղարաբաբա կամ Կարաբաբա։

112

Փաստ. 478-101

Սեպտ. 29, 1911

Արեւմտեան բիւրոյի Պոլսոյ հատուածին ուղղուած նամակով մը, Ատրպատականի Կեդր. կոմիտէն (Վրէժ) կը խնդրէ իրենց փոխադրել նուազագոյն տասը հազար ֆրանք: Նամակի վերջաւորութեան կայ Ն. Դումանի հետեւեալ յաւելումը.–

Ընկերներ!

Վրէժի ուզած գումարը ո՛չ միայն անհրաժեշտ minimum-*ն է, այլեւ ճակատագրական՝ մեր գործունէութեան համար։ Հեշտութեամբ կարող է պատահել, որ չունենալով այդ գումարը՝ ստիպւած լինինք ցրել տղաներին դեռ կռիւը չը վերջացած կամ շարունակել կռիւը եւ վերջում մնալով առանց դրամի՝ դիմել բռնութիւնների ու շանտաժի — զինուորների կողմից, ի հարկէ։*

ԴՈՒՄԱՆ

Ստեփան Թադէոսեան (Սամսոն)

Իբրեւ վկայութիւն՝ Թաւրիզի պարսիկ սահմանադրականներու ղեկավար շրջանակներու մօտ՝ Նիկոլ Դումանի վայելած հռչակին, կու տանք իրեն ուղղուած հետեւեալ երկու գրութիւններու թարգմանութիւնը.–

Փաստ. 528*բ*-39*ա*

4 Շաւալ 1329(1)

[Ատրպատականի նահանգապետութեան Անջուման]

Սիրելի բարեկամ Ղարաբաբայ քրիստոնեայ,

Անջումանի(2) *անդամները ձեր նեղութիւնների եւ ծառայութիւնների եւ ամէն դիմադրութիւն (ինքնապաշտպանութիւն ցոյց տուող) ցոյց տուող յարգելի հային, մենք ամբողջ ժողովրդի կողմից շնորհակալութիւն անելով, եւ ձեր ամբողջի կեանքի առողջութեան համար Աստուածից խնդրում ենք նոյնպէս Սահմ[անադրութեան] պաշտպանութեան եւ երկրի անկախութեան համար:*

Սէյիդ ըլ [անընթեռնելի]

Շահի պարծանք Ղարաբաբայ խան քրիստոնեայ

1.- Կը համապատասխանէ 28 Սեպտեմբեր 1911-ի:
2.- Անջուման կը կոչուէր Սահմանադրութեան կողմնակիցներու յեղափոխական կոմիտէն:

*
* *

Փաստ. 478-134

2 Զիղաադէ, 1329(1)
Կից՝ կցուած անդորրագիր

Ատրպատականի ոստիկանութեան Կենտրոնական վարչութիւն
Բաժին՝ Քարտուղարական
Համար՝ --------

Մեծարգոյ, բարեացակամ եւ կարեկից ընկեր՝
պատուարժան Մուսիօ Ղարաբաբա

Ինչպէս որ անցեալից տեղեակ էք, Կենտրոնական Վարչութեանս ետ ընկած եւ ուշացած ռոճիկների մասին բազմիցս տեղեկացուել է Թեհրանը եւ անշուշտ յառաջիկայ օրերում յանձնարարուելու է այդ: Ներկայիս, որպէս-զի Վարչութիւնս աշխատանքները դրամի չգոյութեան հետեւանքով չխախտեն՝ խնդրում է բարի գտնուել եւ ինչպէս որ է՝ բանբերի միջոցով որոշ չնչին գումար առաքել ու կցած անդորրագիրը պահել, որը առհաշիւ հանուելու է ստանալիքից:

Ստորագրութիւն՝ [անընթեռնելի]

1.- Կը համապատասխանէ Չորեքշաբթի, 25 Հոկտ. 1911-ի:

113

Հ.Յ.Դ. արխիւներուն մէջ (թղթածրար 1728, թիւ 42-51) պահպանուած են թարգմանութիւնները շարք մը հեռագիրներու (անթուակիր, բայց ստուգապէս 1911 թ. վերջերուն), որոնք Թաւրիզէն Ն. Դումանի կողմէ յղուած են Թեհրան, Եփրեմ խանին: Հեռագիրներու լակոնական ոճը, կարգ մը ծածկագրերու ոչ միշտ «լաւ բացուիլը», այլեւ յայտնաբար անոնց արաբատառ պարսկերէնէ թարգմանուած ըլլալու հանգամանքը, չեն դիւրացներ երբեմն գրութեանց ընթերցումը: Այսուհանդերձ, իբրեւ շահեկան վկայութիւն պատմական իրադարձութիւններու, կու տանք ամբողջութեամբ՝ հետեւելով փաստաթուղթերու համարակալման շարքին:

Բացի վերոյիշեալէն, Ա. Ամուրեան իր «Հ. Յ. Դաշնակցութիւն, Եփրեմ, պարսկական սահմանադրութիւն» գործին բ. հատորին մէջ հրապարակած է (միշտ Հ.Յ.Դ. արխիւներէն քաղելով), նոյնպէս Ն. Դումանէն Եփրեմին յղուած կարգ մը հեռագիրներ: Կու տանք նաեւ անոնցմէ այն երկուքը, որոնք կը պակսին մեր թղթածրարին մէջ:

Փաստ. 1728ա-42

Անգործութիւնից ձանձրացած — վաղը գիշեր — մեր տղաների եւ 100 *թուրքի հետ անձամբ գնում են Ղարադաղ — ուզածս դրամը փոխադրիր անմիջապէս։*

ԿԱՐԱՊԱՊԱ

Փաստ. 1728ա-43

Նոր լուր առինք որ բանակը գրաւել է Միանէն եւ պիտի շարժւի Թաւրիզ — թէ ի՞նչ անեմ — սպասեմ օգնելու — թէ գնամ Ղարադաղ։

ԿԱՐԱՊԱՊԱ

Փաստ. 1728ա-44

Եփրեմ,

Թաւրիզ եկել են եօթանասուն հինգ Սալմասցիից, քսան հինգի գալը շարու-

նակւում է. դրամի պակասից վախենում եմ. ունենք այս ամսից ծախք եւ ճանապարհածախք. եթէ այլեւս չես կարող դրամ փոխադրել՝ հոսանքը դադարեցնենք որ չխայտառակւենք. պատասխանիր խկոյն։

Էքս Շահը(1) *սպասւում է մեր կողմը. ինչու բեբախտիարակ չէք ղրկում։ Վաղը դուրս եմ գալու մօտակայ գիւղերը. հեռագրէք իրեն։*

Ամէն բան թանկ է. միայն ձին նստում է տասն երկու թուման։ Տղաների մի մասը ցրւեց, միւսը համաձայնեց քսանով մնալ մի ամիս իբրեւ փորձ։ Իսկոյն փոխադրիր երեք հազար թուման, հարիւր քսան հինգ տղայի եւ հեռագիրների համար։

Սամադ խանը ճանապարհները բացել է, եւ կը փակի մեր անաջող ընդհարումից յետոյ, որով ժողովրդին կը կանգնեցնի մեր դէմ. զգոյշ ենք։

ՂԱՐԱԲԱԲԱ

Փաստ. 1728*ա*-45

Բանակ գալը անհրաժեշտութիւն — նոյնպէս քո անունը — աշխատիր անձամբ գալ պառկել[?] *կարգադրել — եթէ գաս ուղղակի զգուշացիր Շիբլի բարձունքից — տեղեկացրու ժամանակը որ զբաղեցնենք Վասպինջը — եթէ Միանէից թեքես Մարաղա չչտապես մտնել — ժամադիր եղիր որ Թաւրիզից ուժ շարժենք Դուխարղան՝ ուրմեցիներին ու Սարադմուքրիին էլ Միանդաբ՝ երեք բանակները միացնելու նպատակով — մեր այս օժանդակ շարժումները ապահովելու եւ իրականացնելու համար հարկաւոր է Թեհրան նախօրօք տայ խիստ հրահանգներ Թաւրիզի բոլոր իշխանութեանց։*

Փաստ. 1728*ա*-46

Անձնատուր լինելու հարց չկայ. հաշտութեան բանակցութիւնը — երկուստեք ձգձգման քաղաքականութիւն է եւ նա մենք չենք խանգարում։ Իսկական սահմանադրականները ուզում են Սամադ խանի եւ նմանների ընդմիշտ վերացումը, բայց ուժ չունին եւ սպասում են Թեհրանից։ Սամադ խանը, էքս Շահի անաջողութիւնից, աշխատում է ապահովել իր սեւ ընկերների կեանքի ու գոյքի ազատութիւնը մինչեւ Թեհրանից ոյժ գալը, եկող բանակը հարցը վճռի յօգուտ Սահմանադրութեան։

Բանակի ուշացումը իւղ է Սամադ խանի հացին։ Ունիմ հարիւր ձիաւոր Թաւրիզ, յիսուն՝ Սալմաստ, արտակարգ ծախքերով բիւդճէն չորս հազար թուման Նոյեմբեր մէկից. անցեալի հաշիւը կը ղրկենք։

Փաստ. 1728ա-47

Երէկ ռուսները բաւականաչափ զոհեր տուին, յետոյ նահանջեցին բանակատեղը եւ բռնեցին պաշտպանողական դիրք՝ բաւականանալով Արքը(2) ռմբակոծելով։ Այսօր լուսաբացին վերանորոգուեց զանազան ուղղութեամբ. կէսօրից յետոյ ռուսները դուրս եկան ինքնապաշտպանութեան դիրքերից։ Գործ էին դրել գնդացիրներ, դիմադրում են։ Մենք դեռ պահում ենք չէզոք դիրք, թէեւ թուրքերը բամբասում են։ Կոմիտէն սկսեց թուրքերի հետ բանակցութեան ձգձգման քաղաքականութեամբ. երեւի ի վերջոյ ստիպւած կը լինինք դուրս գալ քաղաքից կամ ընդունել ակտիւ մասնակցութիւն։ Մինչ այժմ յաջողութիւնը պարսիկների կողմն է. կռւում են ոգեւորութեամբ եւ մուզիկով։ Ռուսների կորուստը զգալի է։

Հէնց նոր լուր բերին որ հարիւր հոգի ռուսներից մի թնդանօթով գերի են ընկել։ Այս լուրը հաղորդում ենք վերապահութեամբ։

Փաստ. 1728ա-49

Երէկ կառավարութիւնը մեր խորհրդով դիմեց կոնսուլներին թէ՝ քաղաքը ենթակայ լինելով յարձակման ստիպուած պաշտպանւում է եւ խնդրում է կազմել կոնսուլների ժողով գործը քննելու։ Ժողովը նշանակւած է այսօր։

Յաջողւեց հեռագրածդ տելեֆոնով յայտնել նահանգապետարան։ Մենք չենք ուզում կռւել, ռուսներն են կրակում։ Միջամտեցէք որ ռուսաց դեսպանատունը հեռագրի դադարեցնել կռիւը։

Հեռագրիր Ռաշտի դրութիւնից։

ՂԱՐԱԲԱԲԱ

Փաստ. 1728ա-50

Այս գիշեր միայն տեղական իշխանութիւնը համաձայնեց իր ուժերի մի մասը դնել տրամադրութեանս տակ — Առաւօտեան դէմ Սամադի մարդիկ մօտ 600 Շաթրալու կողմից անակնկալ յարձակւեցին, դիրքերից քշեցին երկու հարիւր սարբազ(3), հարիւր կառավարական ձիաւորներ, տարան մի թնդանօթ։ Կանչեցի Կարամալիքից մեր տղաներից երեսուն հոգի։ Դուրս եմ գալիս ընդառաջ։ Հետեւանքը կը հեռագրեմ։

Փաստ. 1728ա-51

Թաւրիզում է էքս Շահի կնոջ կալւածական վաքիլ Սէյիդ Ահմադ խանը, ռուսաց հովանաւորութեան տակ է. ձերբակալեցինք [?](4) *Շուջաէ Դովլի ինքնաձեռագիր նամակը Վասպինջից սրա հասցէով. նամակի լուսանկարը վերցրինք. յետոյ միայն ղրկեցինք Ահմադ խանին։ Բովանդակութիւնը հետեւեալն է.— հիւպատոսարանին ներկայացուցիչը ինձ մօտ էր. Մամադ Ալին տասներկու հոգով գտնւում է Աստրաբադի ռուսաց հիւպատոսարանում։ Անմիջապէս հեռագրիր որ Աստարայի վրայով Արտաբիլ գայ կամ Խուտափերինով իրեն ձգի Ատրպատական։ Երկու ճանապարհն էլ ապահովուած են եւ կազմ ու պատրաստ սպասում ենք։ Եթէ գալն ուշացնի, թող ի նկատի ունենայ որ գործը տանուլ կը տանք. այսպիսով ծանրութեան կենտրոնը փոխադրւում է Ատրպատական. ուրեմն անհրաժեշտ է որ անմիջապէս մի արագ ու կուռող բանակ Մաքրիչ հասնի եւ ինքնախօսով*[?] *հոգ տանուի. ճանապարհին էքս Շահին տեսնել*[?]. *եթէ Եփրեմը այդտեղ չէ, դուք խօսեցէք. ամէն լուրջ բան պէտք է մնայ գաղտնի Թաւրիզի իշխանութիւնից, որովհետեւ այստեղ հասկացողութիւն չունին գաղտնապահութեան մասին եւ ամէն ինչ հաղորդւում է թշնամուն։ Հեռագիր ստանալու եւ յաջողութեամբ բացելու մասին հեռագրէք ի միամտութիւն։*

ՎՐԷԺԵԱՆՑ
KARA BABA

Ամիրեան, էջ 96

Պարսիկները մեզ առաջարկեցին գնալ Մարանդ. մերժեցի իբրեւ ռուսական շրջան, հետեւանքը համարելով պատասխանատու. ինձ հետ համաձայնեցին եւ առաջարկեցին Գիւնէյ. այդ խաղը չեմ հասկանում. այնուամենայնիւ խոստացայ Միանէի բանակին կամ այլ քաղաքական դէպքերի թէ գնամ. եթէ մինչեւ վաղը երեկոյ պատասխան չստանամ՝ ստիպւած եմ դուրս գնալու։ Ի՞նչ դրութեան մէջ է կոնֆլիկտը։ Դրամ ստացայ։

ՂԱՐԱԲԱԲԱ

Ամիրեան, էջ 96-97

Թաւրիզ ունինք 12 *պատրաստ. ուշացման պատճառը՝ դրամ։*

Երկուշաբթի պահանջեցինք հեռագրով ընկերներ՝ Սալմաստ, Ուրմի, Շամ, Մրգաստան, ոչ ոք չի հասել։

Մէրաթ Սուլթանն ունի 400 *զինուորագրուածներ, հարիւրը ընդունակ։ Կառավարութիւն ունի մօտ* 800 *զինուոր,* 500 *ձիաւոր,* 400 *դասալիք, մնացորդը՝ ոչ վստահելի։*

Լսում ենք՝ Ռահիմ խանի որդի Զարղամը միացել է Սամադ խանին. նոքա ունին 6 *թնդանօթ երեք զինուորական*[?]*։ Մինչեւ* 10 *մարտիկ առաջապահ Վասպինջ։ Եթէ յարձակւենք, մեր այժմեան ոյժը կը կորսնցնենք մանաւանդ պատւիրել եմ բռնել քաղաքի ծայրերը եւ մօտակայ բարրիկադները եւ սպասել մինչեւ կառավարութիւնը վերակազմւի եւ պատրաստի ոյժի կորիզ, մինչեւ հասնեն ընկերներ գուցէ եւ մի բանակ աշալուրջ բախտիարցիք։ Այս վերջին կէտի վրայ հրաւիրում եմ քո լուրջ ուշադրութիւնը եւ կարգադրութիւնը։*

Ռուսներն արգելում են բարրիկադներ շինել քաղաքի ծայրերում. միջամտում են լոպէ լոպէ անձնաւորութիւններ. սրա համար պարտաւոր եմ լինել թաքնուած, մինչեւ բանակը պատրաստւի։ Կարգադրեցի Թաւրիզի իշխանութեանց միջոցներ ձեռք առնել հացը ապահովելու, որ մեծ նշանակութիւն ունի ներքին խաղաղութիւնը պահպանելու համար։

ԲԱԲԱ

1.- Էքս Շահը, սահմանադրական ուժերու գահընկէց ըրած նախկին Շահն է, Մոհամմէտ Ալի, կամ Մամադ Ալի:

2.- Արքը՝ Թաւրիզի կեդրոնը գտնուող բերդի անունն էր. հոն էր նաեւ հայկական թաղամասը՝ որուն համար վերջինս կը կոչուէր Ղալա կամ Բերդաքաղ:

3.- Զինուոր:

4.- Յատկապէս ա՛յս հեռագիրը պարսկերէն օրինակէն թարգմանուած է անվարժ գրիչի մը կողմէ:

Եփրեմ խան

Փաստ. 1728ա-170

Դրամ ստացանք ապրանքը թողեցինք Միրաթի մօտ պահեստի — Կարգադրէք տեղիս զինուորական հրամանատարին պահեստում գտնուած ռազմական անհրաժեշտ պարագաներ հարկաւոր դէպքում բաց թողնել առանց արգելքի — Շրջանից կանչեցին տղաներ։ Միրաթին կարգադրեցի կազմակերպել քաղաքի կարեւոր ուժերը ժանդարմ անուան տակ — Հրահանգին համաձայն Միրաթին հեռագրով հրահանգ տուր կատարի կարգադրութիւններս. ճիշդ եւ արագ կատարի։

ՂԱՐԱԲԱԲԱ

(*Միութիւն հեռագրեցի որ Ղարաբաբայի կարգադրութիւնները կատարի*)։

Փաստ. 1728ա-171

Եփրեմ, Թեհրան
Գեազի շրջանում նոր ինչ է տեղի ունեցել, հեռագրէք։

ՂԱՐԱԲԱԲԱ

Փաստ. 1728ա-172
Եփրեմ, Թեհրան

Հեռագիր սխալ ես հասկացել — ձեռագիր խօսքը վերաբերում է քո ձեռագրին — ընդդիմադիր տարրեր սահնամադրական ակտիւ ուժերին մանրամասն նամակով։

ՍՏԵՓԱՆ-ՂԱՐԱԲԱԲԱ

Փաստ. 1728ա-173

Եփրեմ, Թեհրան

Տրուած հեռագիրը բաց չէ կարելի տալ։

ՂԱՐԱԲԱԲԱ

114

Փաստ. 564*ա*-41

Թաւրիզի մէջ տեղակայուած ռուսական զօրքի բիրտ միջամտութենէն ետք 1911 թ. վերջերուն Ն. Դուման խումբ մը զինակիցներով դուրս եկաւ Ատրպատականէն: Նախքան դուրս գալը, Ն. Դուման հետեւեալ հեռագիրը յղած է Պոլիս «Ազատամարտ» թերթին, այլ խօսքով Արեւմտեան բիւրոյի Թուրքիոյ հատուածին. բնագիրը օսմաներէն է. կու տանք թարգմանուած օրինակը: Գրութեան մէջ հարցական նշանները թարգմանիչին կողմէ են:

[*Ազատամարտ թերթին*]

26 *Դեկտեմբեր* 1911
Պաշգալէ

Այս հեռագիրը փութով Թեհրան՝ պ. Եփրեմ Խանի հաղորդելով, պատասխանը ստացէք եւ Պաշ-գալէ ուղարկեցէք։ Թաւրիզի մէջ վեց օր ռուսերուն հետ կռիւ տեղի ունենալէ ետքը, Էմիր Հաշմէթ եւ Թաւրիզի միւս պաշտպանները, պետութենէն իրենց ստացած հրամաններուն համակերպելով, զինադադար ըրին։ Քեարքիզար Վէսային Ալայալէի [*եւ*] *ռուս հիւպատոսի հետ բանակցութիւն կատարելէ ետքը, զինադուլի որոշում տրուեցաւ։ Զինադուլի խնդրէն օգտուելով, Թաւրիզի յետաշրջականները ուզեցին չփոթութիւն յարուցանել։ Ատոնցմէ Եէրճեմալը, Քիժ հաճի Համտ խանը* (?) *բերելու համար Վասպէնճ գիւղը գացին. հիմա իրեն հետ Սալմաստ կը գտնուինք։ Այս պարագային, Խոյի եւ Սալմաստի մէջ գտնուող հնազանդ եւ հաւատարիմ ոյժը կը բաղկանայ հազար հինգ հարիւրէ. ամէնքն ալ կատարելապէս զինուած են։ Այս վայրկեանիս պետութեան հրամաններուն կը սպասենք, որպէսզի տրուելիք հրահանգներուն համաձայն շարժինք։*

ԴՈՒՄԱՆ

115

Փաստ. 564բ-94ա

(Ծանօթ Խմբ.– Հեռագիր (թարգմանութիւն) Նիկոլ Դումանէն Պոլիս, «Ազատամարտ»ի հասցէով, ստացուած եւ պատասխանուած 12 Յունուար 1912-ին):

Ռուսերը իրենց զինուորները տեղաւորեցին Թաւրիզի, Խոյի, Սալմաստի եւ Ուրմիոյ մէջ։ Թաւրիզի մէջ ռուսերու հետ տեղի ունեցած ընդհարումին չմասնակցեցանք։ Այսուհանդերձ, յիսունհինգ հոգիով սահմանագլուխին վրայ Զարիի գայմագամին, Պաշ-գալէի կառավարիչին եւ սահմանագլուխի քոմիսէրին հետ բանակցելէ ետք, ըսին որ պիտի կարենամ ներս մտնել։ Հիմա Պաշ-գալէ կը գտնուիմ։ Այստեղ կառավարիչի փոխանորդը, չեմ գիտեր ինչ պատճառով, հինգ օրէ ի վեր թոյլ չի տար մեզի որ Վան մտնենք։ Այս մասին դիմում ըրէք առ որ անկ է։ Զափէն աւելի նեղութեան մէջ ենք։ Անգլիական ճամբով Թաւրիզէն ինծի համար հեռագրով Պիոնեանէ 200 ոսկի ուզեցէք, եւ հեռագրով 50-ը Վան, 150ն ալ Պաշ-գալէ՝ Թուրելեանին (?) ինծի տրուելու համար։

Զաքմաքճըլար, Երամեանին յանձնեցէք։

ՆԻԿՕԼ

Արշակ Վռամեան

116

Փաստ. 564բ-95ա

ՀԵՌԱԳԻՐ ՊԱՇԳԱԼԷԷՆ
Օսմաներէնէ թարգմանուած
(*Ստացուած* 12 *Յունուար* 1912-*ին*)

Վանի նահանգէն, Օսմ[*անեան*] *հայրենիքի ամէն կողմ երթալու արտօնութիւնը ձեռք բերի։ Մեզի հետ հոս գտնուող* 200 *պարսիկներ ապրուստի միջոցներէն զուրկ ըլլալով՝ նեղ կացութեան մէջ են. անօթութենէ հիւանդներու թիւը կ՚աճի։ Գաղթականներու յատուկ դրամէն ասոնց գումար մը տրուիլը խնդրեցէք։ Հակառակ պարագային, Դաշնակցութեան անունով ինծի գումար մը թող փոխ տրուի։ Այս առթիւ նախ կառավարութեան եւ պարսիկներուն դիմելով, շտապով հեռագրաւ։ Դրամ փոխադրեցէք։*

ՆԻԿՈԼ

(*Ի պատասխան այս հեռագրին, Պոլսէն Ա. Վռամեան,* 13 *Յունուարին հեռագրով կը տեղեկացնէ*)։

Անճիւմանը Սաատլիին դիմուած — հաւանութիւն տուին օգնելու — վերջնական պատասխանը երկու օրէն։

117

Փաստ. 672-5

Նիկոլ Դումանի այս կարճ նամակը ուղղուած է Թաւրիզ՝ Կարապետ Պիոնեանին: Ընտանիքը – փոխաբերական իմաստով գործածուած է. կը վերաբերի իրեն հետ Պարսկաստանէն դուրս եկող մարտիկներուն: Գարեգինը՝ Թադէոսեան Ստեփանն է:

20 *Յունուար* 1912, *Բաշկալէ*

Սիրելի Պիօն!

Ողջ-առողջ Բաշկալէումն եմ: Ընտանիքս ղրկեցի Վան, ես էլ մտադիր եմ այս քանի օրը գնալ: Բաշկալէի խանութում մնում է Գարեգինը: Սալմաստից ստացել եմ դրամը (110 *ոսկի, պարտքից դուրս գալուց յետոյ*), *Պոլսից էլ* 150. *յուսամ, որ* 50 *էլ Պոլսից փոխադրած կը լինին Վան, իմ կարգադրութեան համաձայն: Մեր մաշադին էլ ընտանքիով Վան գնաց: Եթէ չորերս ու ժամացոյցս դեռ չես ղրկել, առ այժմ պահիր մօտդ, մինչեւ նոր կարգադրութիւն: Եթէ անցնիմ Պոլիս, Վանից կը յայտնեմ որ ուղղակի Պոլիս ղրկես: Իսկ եթէ արդէն ղրկել ես, վնաս չունի, այդ մասին էլ կարգադրել եմ: Մանրամասը նամակ ղրկիր Սալմաստ Գարեգնին հասցնելու համար, որ նրանից էլ ստանամ:*

Համբոյրներով՝
Քո Ն.

118

Փաստ. 672-7

Հեռագիր արաբատառ օսմաներէն, ստացուած նոյն թուականին, Պոլիս: Հայերէն թարգմանութիւնը Ա. Վռամեանի ձեռագրով:

Հեքիարի, 24 *Յունուար* 1912

Ազատամարտին,

Հեռագիրնիդ առի. Երամեանի հեռագրուած հարիւր յիսուն մէկ լիրայի առ-թիւ սխալ մը եղած է. ուղղեցէք եւ Նուրելեանին հեռագրեցէք. ընկերներ Վան անցած են. ես ալ իրանցիներու հետ պիտի անցնիմ. անոնց հարիւր ոսկին եթէ ճամբու դրուած չէ, Վան թող ղրկուի. Սամսոնը քանի մը ընկերներով Տէր կը գտնուի։

ՆԻԿՕԼ

119

Փաստ. 672-8

ՎԱՆԷՆ ՀԵՌԱԳԻՐ
[Լատինատառ հայերէն]

[*Պոլիս*] *ստացուած* 27 *Յունուար* 1912

Ազատամարտին,

150 *լիրան ստացել եմ — պարսիկներին չտապեցրէք — Սալմաստում երկու բռնածներին արձակել են — Թաւրիզից, Թեհրանից լուր չունէք — Վան երեք՝ Բաշկալէ երկու պատգամաւոր կրնայ տալ։*

ՆԻԿՕԼ

120

Փաստ. 672-10

29 *Յունվ.* 1912, *Վան*

Սիրելի Պիոն!(1)

Վերջապէս հասայ Վան։ Եթէ ճանճրանամ եւ ճանապարհները բաց լինին, դուցէ կ՚երթամ Պոլիս։ 1200-*ը ստացուած է Մինարէթում*(2) *եւ պարտքերը վճարելուց յետոյ մնացորդ* 110 *ոսկին փոխադրած ինձ։ Պոլսի վրայից էլ ստացել եմ* 150 *լիրա։ Ճանապարհի, Մինարէթի հաշիւները մօտս են. դրանց կը միացնեմ Վանայ հաշիւները եւ կը ղրկեմ, միայն դրա համար հասցէ ստանալուց յետոյ ի նկատի ունեցիր այդ։ Հասցէն կարելի է ղրկել երկու տեղ — Վան եւ Պոլիս. ուր որ ստանամ, այնտեղից էլ կը ղրկեմ։ Գարեգինը*(3) *մնաց Բաշկալէում իր ընտանիքով, ես էլ այստեղ եմ իմ ընտանիքով*(4)։

Ջերմ համբոյրներով՝
Ն.

1.- Պիոնեան Կարապետ:
2.- Մինարէթ – ծածկանուն Սալմաստի:
3.- Գարեգին – ծածկանուն Թադէոսեան Ստեփանի:
4.- Ընտանիքը պէտք է հասկնալ ընկերակից իմաստով:

121

Փաստ. 672-14

5 *Փետրուար* 1912, *Շամ*

[*Թաւրիզի ընկերներուն*]

Ընկերներ!

Արեւել. Բիւրօն ու Շամի(1) *ընկերները ա՛յն կարծիքի են, որ նպատակայարմար է Մինարէթի*(2) *զէնքերի ու ռազմամթերքի մի մասը գէթ փոխադրել Շամ՝ ապագայ բարդութիւնների համար։ Գործնական կարծիք է այդ եւ լաւ կը լինի, որ հէնց հիմիկւանից ձեռնարկէք։ Եթէ ճանապարհների փակ լինելու պատճառով անհնարին լինի զէնքի փոխադրութիւնը այժմ, գոնէ սկսէիք ռազմամթերքից, որ աւելի դիւրին է։ Բարեւներ*

ԴՈՒՄԱՆ

Անցեալ փոստով մի նամակ էլ եմ գրել Զեզ՝ Սամսոնի(3) *հասցէով։*

ՆՈՅՆ

1.- Շամը Վանն է:
2.- Մինարէթը՝ Սալմաստ:
3.- Սամսոն նոյն Գարեգինն է, բուն անունով Ստեփան Թադէոսեան:

122

Փաստ. 672-18

18 *Փետրուար* 1912, *Վան*

Սիրելի Պիոն!(1)

Գրել էի, որ շորերիս առաքումը յետաձգես մինչեւ նոր կարգադրութիւն։ Երեւի այդպէս արած կը լինիս։ Այժմ խնդրում եմ Ֆրանսերէն տետրակներս ոչնչացնես, հայերէն բոլոր տետրակներս ղրկես Պոլիս փոստով-Recommandée(2), *գրքերը նոյնպէս, բայց տետրակներից առանձին։ Բաժակակալս իր գդալով, անձեռնոցիկիս օղակը եւ օղիի գաւաթը յանձնես Յովհաննին*(3), *որ միացնի իր մօտ գտնուած ժամանացոյցս շղթայով, մուշտուկս (ծխամորճ) եւ պորտ-մոնէս*(4) *ու բոլորը միասին բամբակով ամրացրած լաւ դարսի մի արկղում ու յանձնի փոստին իբրեւ կոլի-փոստ, գնահատած* 500 *Ֆրանկ։ Կը մնայ, ուրեմն, շորերս։ Անպէտք հին ու մին շորերս, ինչպէս եւ Ֆորմաս*(5), *դուրս ձգելով,- մնացածը դարսիր վալիզիս մէջ եւ մանրամասն ցուցակով ու վալիզի բանալիքի հետ միասին յանձնիր ապրանքներ փոխադրող այդտեղի ընկերութեան, որ ղրկեն դա՛րձեալ Պոլիս։ Եթէ ամառւայ վերարկուս այլեւս անպէտք լինի Սուրէնին, այն էլ ա՛ռ ու դիր շորերիս հետ։ Բոլոր ղրկելիքներիդ հասցէն կը լինի նոյնը — «Ազատամարտ» կամ «Հայկ Թիրաքեան, Համալ-պաշի,* 76»։ *Փոխադրութեան ծախքը վերցրու Յովհաննից, նրա մօտ դրամ ունիմ։ Ի դէպ, Յովհաննը դրամը կը փոխադրի ինձ Պոլիս հասնելուցս յետոյ, երբ իրեն իմաց կը տամ այդ մասին։*

Ես դեռ մի քիչ Վանում կ՚ուշանամ, մինչեւ որ Աշոտը առողջանայ եւ նրան առնեմ հետս գնամ։ Նա այժմ պառկած է հիւանդանոցում։ Երեւի ուժեղ դէպքերի տպաւորութեան տակ ջղային ցնցում է ստացել — ընկնում էր հալիւցինացիայի(6) *մէջ, աչքին բաներ էին երեւում. այժմ լաւ է եւ հիւանդանոցից շուտով դուրս կը գայ։ Էլի ամէնից ղօչաղը ես եմ՝ իմ փչրուած օրգանիզմով — այնքան ղօչաղ, որ այսօր-վաղը գնում եմ ձիւնապատ լեռները մի քանի օրով ոչխար որսալու։ Ափսո՛ս, որ Ձեր բաժինը ղրկել չի կարելի։*

Աշխարհից հէչ խաբար չունիմ, գնում եմ լեռները, որ վայրենութեան պակասը լրանայ։

Համբոյրներս ամէնքիդ։
Քո Ն.

Քեզ դա՛րձեալ նամակներ եմ գրել։ Շուտով հասցէ տուր, որ հաշիւները ղրկեմ։

ՆՈՅՆ

1.- Պիոնեան Կարապետ:
2.- Ֆրանսերէն՝ պատուիրուած:
3.- Յոնան Դաւթեան:
4.- Դրամապանակս:
5.- Համազգեստս:
6.- Բանդագուշանքի:

123

Փաստ. 672-34

2 *Ապրիլ* 1912
Վան

Սիրելի Ռոստոմ եւ Յովսէփ(1) !

Երկուսիդ նամակներն էլ ստացել եմ ընդամէնը մի քանի օր առաջ, որովհետեւ բացակայ էի — գնացել էի Գեավաշ որսի եւ յետոյ մի ամսի չափ հանգստացել Աղթամարում։

Յոնանի(1) *մեղադրանքը նոյնութեամբ հաղորդեցի Աշոտին։ Նա զարմացաւ եւ իսկոյն նամակով բացատրութիւն խնդրեց Յոնանից։ Թէ ինչ ինտրիգների մէջ է մեղադրում նրան Յոնանը,— այդ ես չը գիտեմ, բայց շատ լաւ գիտեմ, որ Աշոտը «Խաբարբբզան» բնաւորութիւն ունի եւ իր խաբարները պատմում է պաճուճանքով ու չափազանցրած գունաւորումներով ու այդ պատմուածքներին տալիս է այնպիսի անմեղ կերպարանք, որ ընդունում ես հալած իւղի տեղ, իսկոյն տակիդ կրակ է վառւում եւ այդ բոպէին եթէ ձեռքդ ընկնի ա՛յն անձնաւորութիւնը, որի մասին խօսում է Աշոտը, կը ծեծես առանց մի բառ արտասանելու։ Ու յետոյ դուրս կը գաս արդարութեան դէմ չարաչար մեղանչած եւ կը նստես քօռ ու փոշման։ Աշոտը երիտասարդ տղայ է, սիմպատիկ ու համալսարանական եւ ա՛յն կրակը, որ նա՛ է վառում, մէկ էլ վառել կարող է միմիայն սիրուհիդ...*

Այստեղ մի քանի օր առաջ պատահեց մի անհաճոյ միջադէպ. աշունը Հայոց-Զորում սպանուել են երկու թէ երեք քիւրդեր։ Այդ ժամանակ բուլղարացի Սարգիսը(2) *մի խմբակով եղել է Հայոց-Զորում, բայց դէպքի վայրից հեռու եւ ո՛չ մի կապ ու առնչութիւն չի ունեցել այդ սպանութեան հետ։ Կառավարական քննութիւնը, սակայն, գործին հաղորդել է ա՛յնպիսի բնաւորութիւն, որ Սարգիսը հրաւիրուել է դատարան իբրեւ ոճրագործ-մեղադրեալ։ Սարգիսը որոշած օրը դա[տա]րան չի ներկայացել եւ դատարանը հրաման է արձակել նրան ձերբակալելու։*

Եւ ահա՛ մի քանի օր առաջ փողոցում նրան ձերբակալելու փորձ անելու ժամանակ՝ Սարգիսը սպանում է մի ոստիկան ու փախուստ տալիս։ Միւս Սարգիսը — մեծը(3), *որ պատահաբար ներկայ է լինում դէպքի վայրում, նա էլ — կատարելապէս անվստահ տաճկական արդարադատութեան վրայ — գերադասում է այդպէս փախուստ տալ եւ պահուել։ Զափթիային հետեւեալ օրը թաղեցին շատ դեմոնստրատիւ կերպով*(4), *վալիի մասնակցութեամբ։ Յետոյ կառավարութիւնը պահանջեց յանձնել Բուլղարացուն,սպառնալով հակառակ դէպքում խուզարկել ամբողջ Այգեստանը եւ գործադրել ամենատեսակ խստութիւն։*

Դէպքը անմիջապէս հեռագրով հաղորդեցինք Պոլիս — մերոնց, աւելացնելով որ «Անհրաժեշտ է կենտրոնի շուտափոյթ հրահանգը, որ հետապնդման գործում տեղական իշխանութիւնները չը կորցնեն սառնասրտութիւնը եւ չստեղծեն վրդովմունք ու բարդութիւններ»։ Թէ ի՞նչ հետեւանք է ունեցել մեր հեռագիրը — չը գիտենք, միայն գործնականի մէջ այսքանը կայ, որ մինչ այժմ ո՛չ մի խուզարկութիւն չեն արել եւ երէկ էլ վալին վստահեցրել է, որ մեծ Սարգիսի համար ո՛չ մի մեղադրանք չը կայ, ի զուր է նրա պահելը եւ նրան հրաւիրել է իր մօտ՝ բնակարանը։ Երեւի այսօր երեկոյեան կ՚երթայ ներկայանալու։

Այժմ դառնանք Յօնանի «անտակտ» բառին, որ գործադրել է մեր Թաւրիզի ընկերների վերաբերմամբ։

Այստեղ մարդ ակամայ ցաւելով է յիշում Լասսալի(5) յայտնի ֆրազան.— «Պարոննե՛ր, թագաւորին ծառայողները գործնական մարդիկ են եւ ո՛չ թէ դատարկամիտներ ու պոռոտախօսներ, ինչպէս սովորաբար լինում են ժողովրդին ծառայողները»։

Մեր պոռոտախօսները բանաւոր թէ՛ իրենց թշուառ «Առաւօտ»-ի(6) մէջ անդուռ բերանով շարունակ հայհոյում էին ռուսներին։ Անտակտութիւնը հասաւ իր գագաթնակէտին ռուս-պարսկական ընդհարման ընթացքում, որին առիթ տուին — պէտք է խոստովանել — պարսիկները, առանց մեր գիտութեան ու խորհրդակցութեան։ Հէնց ընդհարման սկզբում, ի նկատի ունենալով ուժերի փոխյարաբերութիւնը եւ գործի անյոյս վախճանը, <u>շտապ չիֆրաւորուած հեռագրով</u>(7) ես ու Եփրեմը համաձայնութեան եկանք չէզոք դիրք բռնել, մինչդեռ մեր ջահիլները» մինչեւ խստերիկա(8) պահանջ էին դնում, թէ մենք իբրեւ սոցիալիստներ ու յեղափոխականներ, պարտաւոր ենք հայ ժողովրդի ճակատը զարկել ամէն պատահող ամուր պատի։ Չէզոք դիրք բռնելու կողմն անցան նաեւ Յօնանն ու մեր մի քանի հին ընկերները։ Իրերի այս դրութիւնը, բնականաբար, առիթ պիտի տար մեր ջահիլներին ոստոստալու եւ ինձ համարելու դիկտատոր, իսկ Յօնանին ու միւս հին-ընկերներին՝ «փթածներ»։

Թո՛ղ մտածեն ու ասեն՝ ինչ ուզում են, այնուամենայնիւ, այսօր ես սրտանց ուրախ եմ եւ խղճով հանգիստ, որ, յանուն սոցիալիստական հասկացողութիւնների խակ ըմբռնումի, պարսկահայ մի բուռ ժողովրդին զոհ չը բերինք ռուսական բարբարոսութիւններին։ Այդ բարբարոսութիւններին պարսիկները զոհաբերեցին մօտ 1500 կոտորած, 250 կախաղան, բազմաթիւ փախստական եւ — որ ամենագլխաւորն է — Իրանի անկախութիւնը։ Մինչդեռ մեր տուածն է միայն եւ միմիայն մի Պետրոս Անդրէասեան(9), այն էլ նրա համար, որ ռուս-պարսկական ընդհարման օրերում Պետրոսն անխոհեմօրէն անցել էր պարսից թաղը եւ մասնակցել նրանց խորհրդակցական ժողովներին։ Պարսիկներն, անշուշտ, դժգոհ են մեր չէզոքութիւնից, բայց աւելի տանելի է նրանց դժգոհութիւնը, քան թէ մեզ հարազատ հայ ժողովրդի, որովհետեւ ամէն բանից առաջ մենք հայ ենք եւ մեր սկիզբն ու վախճանը հայկական։

Պոլիս ես ո՛չ մի տող չեմ գրել։ Նամակս կարդալուց յետոյ ղրկեցէք նրանց —

ծոյլ եմ եւ նորից այսքանը գրողը չեմ։

Երկու խօսք էլ իմ անձնականի վերաբերմամբ։

Պատրաստուել էի Պոլիս գնալու, բայց վրայ հասաւ Դրօն(10) *եւ արգելք եղաւ։ Նա ինձ ընկերացնում է իր շաքարի ու կերոսինի*(11) *առեւտուրին։ Գրեցի Բագու, որ ինձ համար կրեդիտ*(12) *բաց անեն։ Սպասում եմ հետեւանքին։*

Համբոյրներով՝ ԴՈՒՄԱՆ

1.- Յովսէփ Տէր Դաւթեան, անդամ Արեւելեան բիւրոյի: Ռոստոմ եւ բժ. Յ. Տէր Դաւթեան այդ օրերուն կը գտնուէին Պոլիս, իսկ Ն. Դուման 1911 թ. Դեկտեմբերին Թաւրիզէն դուրս գալէ ետք ժամանակ մը մնաց Վան:

2.- Չաքալեան Սարգիս:

3.- Միւս Սարգիսը, մեծը – Բարսեղեանն է, բուն անունով Պօղոս Օտապաշեան, աւելի ծանօթ Վանայ Սարգիս անունով:

4.- Ցուցական կերպով:

5.- Ֆերդինանդ Լասալ (1825–1864) – Գերմանիոյ ընկերվարութեան հիմնադիրներէն:

6.- Թաւրիզ հրատարակուող լրագիր (1909–1911):

7.- Բնագրին մէջ ռուսերէն:

8.- Ծայրայեղ, հիւանդագին ջղայնութիւն:

9.- Պետրոս Մելիք Անդրէասեան – քաջ կռուող, որ ռուսական պատերազմական ատեանի վճիռով կախաղան բարձրացուած էր (1912 թ. Յունուար 7):

10.- Դրաստամատ Կանայեանը, որ այդ տարիներուն յեղափոխական գործի կողքին (Հին) Պայազիտի մէջ «Սուրէն էֆէնտի» անունով կը զբաղէր քարիւղի, շաքարի եւայլն առեւտուրով:

11.- Նաւթի թորումէն ստացուած այրուող հեղուկ:

12.- Վարկ բանան:

124

Փաստ. 672-36

8 *Ապրիլ* 1912
Վան

[*Սիմոն Զաւարեանին*]

Սիրելի Սիմօն!

Հաշիւները պատրաստ է եղել դեռ Յունվարին։ Երկու անգամ գրել եմ Թաւրիզ, որ տան ինձ ապահով հասցէ՝ հաշիւները ղրկելու համար։ Ուզածս հասցէն չեմ ստացել — գուցէ նամակներս տեղ չեն հասած, թէեւ recommendée(1)։

Լաւ է, որ վերջապէս, այդ հաշիւները ուզել ես դու։ Ղրկում եմ, որ ազատւեմ։ Բայց դու ուզել ես միակ 150 *ոսկու հաշիւ (Պօլսից փոխադրածը) եւ ո՛չ ամբողջը։* 150 *ոսկու հաշիւը անջատել չեմ կարող, որովհետեւ Պարսկաստանից էլ է փող ստացւած եւ ծախսւած խառը։ Դրա համար էլ ղրկում եմ ամբողջը, դուք արէք, ինչ հարկաւորն է։*

Միայն ինձ զարմացնում է, թէ ինչո՞ւ Պօլիսը ուզում է միայն 150 *ոսկու հաշիւ. չը լինի՞ թէ այդ գումարը փոխադրւած է կուսակցական դրամից. չէ՞ որ ես հեռագրել էի Պօլիս, որ այդ գումարը բերել տաք Թաւրիզից, ուր թողել էի աւելի քան* 4000 *թուման կառավարական փող, որից յետոյ փոխադրել են Սալմաստ միայն* 1200 *թուման։ Դեռ չեմ հաշւում Թաւրիզում Պօլսից ստացած* 3000 *ֆրանկ կուսակցական դրամը, որը թողել եմ անձեռնմխելի մինչ իմ դուրս գալու օրը։ Ես մինչեւ վերջն էլ հաւատացած եմ եղել, որ բոլոր փոխադրութիւնները եղել են Պարսից կառավարական դրամներից, դրա համար էլ, իբրեւ պարսից պաշտօնեայ, մուտքից աւելացած գումարը —* 5302 *ղրուշ — ինձ իրաւունք եմ համարել վերցնել իբրեւ ճանապարհածախս եւ մտցնելով հաշւի մէջ՝ արդէն անուշ եմ արել։ Այժմ,* 150 *ոսկու հաշիւը միայն ուզելուց յետոյ, մէջս կասկած է մտել, թէ չը լինի՞ այդ* 150 *ոսկին կուսակցական դրամ է ու ես, որ ամբողջ կեանքում միշտ խուսափել եմ կուսակցական փողերից, ինձ զգում եմ շատ անախորժ դրութեան մէջ։ Խնդրեմ պարզիր ինձ այդ հարցը, որ — եթէ կասկածներս ճիշտ են — մտածեմ, թէ ինչպէ՞ս պիտի կարողանամ դուրս գալ տակիցը։*

Դրօն(2) *ինձ պահեց Վանում, որ իր շաքարի առեւտուրից ապրուստ հանի ինձ համար։*

Համբոյրներով
Քո **ՆԻԿՕԼ**

ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆ ՆԵՐՓԱԿ ՀԱՇԻՒՆԵՐԻ

Ներփակ հաշուեցուցակները ի մի ամբողջացած չեն, այլ բաղկացած մի քանի կտորից.

1) Մինարէթի (3) կոմիտէինը — երկու կտոր

2) Շամիրամի (4) կոմիտէինը — երկու կտոր

3) Կարա-Բաբայինը (5) — մի կտոր

Մնացած թղթերը այդ հաշուեցուցակների վաւերագրերն են (ստացման արդարացնող փաստաթղթեր)(6) Մինարէթի կոմիտէն իր հաշիւները ներկայացրել է Վրէժի Կ. Կոմիտէին(7) առ 28-ն Նոյեմբ. 1911։ Այնուհետեւ նա ծախսեր է ունեցել Նոյեմբ. 28-ից մինչեւ նոյն թուի Դեկտ. վերջը Մինարէթում, որը կազմում է ինձ ներկայացրած հաշուի առաջին կտորը։ Յետոյ, Մինարէթի կոմիտէն ստիպւած եղաւ իր ամբողջ կազմով անցնել Տաճկաստան եւ Բաշ-կալէում կազմեց հաշուի շարունակութիւնը 1-15 Յունվ[ար] 1912 թ., որ երկրորդ կտորն է։

Շամիրամի հաշիւն էլ երկու կտոր է — մէկը Իշխանի (8) ստորագրութեամբ, միւսը՝ Սարոյեանի (բժիշկը)։

Կարա-Բաբայի(5) հաշիւը մի կտոր է — 1911 թ. Դեկտ. 12-ից մինչեւ Յունվ. 31-ը 1912 թ., այսինքն Թաւրիզից դուրս գալու օրից մինչեւ Վան։ Թէեւ հաշուի վերնագիրը կրում է իր ճակատին Կարա-Բաբա անունը, բայց չնչին բացառութեամբ, ել ու մուտքը կատարւել է Մինարէթի կոմիտէի ձեռքով ու գիտութեամբ։

Վաւերագրերի մի մասը պակասում է, որովհետեւ դրամներ ծախսւել են թէ՛ ճանապարհին եւ թէ այս կամ այն գիւղում, ուր յարմարութիւն չի եղել գրաւոր ստացականներ վերցնելու։ Կարծեմ, պակասում է նոյնպէս մի քանի հեռագրական անդորրդագիր, որ չեն վերցրել հեռագիր խփել տւողները՝ (40 փարայի խնայողութիւն անելու համար), որը վճարւում է յատկապէս անդորրագրի համար։

Հեռագիրների համար վերցնում են ողջ-դրամ (լիրան հաշւելով 102 թէ 102½ դրուշ), բայց միւս հաշիւներին յարմարացնելու համար հաշուեցուցակների մէջ մտցրած է չուրիք դրամով, այսինքն ոսկին հաշւելով 108 դրուշից։

Մուտքի մի մասը ստացւել է Թաւրիզից պարսկական դրամով, բայց ծախսւել տաճկական դրամով։ Հաշւապահութեան մէջ անյարմարութիւններից ու բարդութիւնից խուսափելու համար, հաշիւները տարւել են տաճկական դրամով եւ պարսկական հինգ թումանը հաշւել ենք մի ոսկի ինչպէս մուտքում, նոյնպէս ե՛ւ ելքում, որը հեշտացնում է հաշւեպահութիւնը եւ ո՛չ մի տարբերութիւն չի մտցնում։

Զինւորների ռոճիկը տրւած է առ 5-ն Յունվ. 1912 թ. (բացի ճանապարհածախսից, որ վճարւած է առանձին եւ դէպքերի բերմամբ՝ մի քանի անգամ)։ Եւ որովհետեւ ձեռքի տակ չունէինք նրանց արդէն ստացած ռոճիկների ցուցակը, մեզ մնում էր հաւատալ նրանց խօսքին, թէ ով ինչքան է ստացել եւ ո՞րքան է

մնում՝ ու ըստ այնմ կատարել վճարումները, որի պատճառով գուցէ սխալներ ու ակամայ չեղումներ են եղել։ Բացի այդ, մենք ունեցել ենք բաւականաչափ համանուն զինուորներ, որը գուցէ մեզ դարձեալ սխալների մէջ ձգած լինի։ Ձմրան խստութիւնների, ակամայ ճամբորդութեան — մի խօսքով տիրող անպատշաճ պայմանների շնորհիւ, դրանք անխուսափելի չարիքներ էին, ի հարկէ։ Բայց այս բոլոր կասկածները որ յարուցանում եմ, դա դեռ եւս չի նշանակում, թէ սխալներ անպատճառ եղել են, այլ յարուցանում եմ նրա համար, որ հաշիւները ենթարկւեն մանրազնին քննութեան, որի մէջ ձեռնհաս է միմիայն Վրէժի Կենտ. Կոմիտէն, որովհետեւ մանրամասն հաշիւները (դրամներով հանդերձ) եղել են նրա ձեռքում։

Կ. ԲԱԲԱ

Մինարէթի հաշիւը երեք կտոր է, սխալմամբ երկու եմ գրել։

1.- Ֆրանսերէն՝ ապահովագրուած:
2.- Դրոն (Դրաստամատ Կանայեան) այդ օրերուն, փախուստ տալով ցարական հալածանքներէն, անցած էր Հին Պայազէտ, ուր Սուրէն Էֆէնտի անուան տակ կը զբաղէր առեւտրական գործերով:
3.- Սալմաստի:
4.- Վանի:
5.- Նիկոլ Դումանինը:
6.- Բնագրին մէջ ռուսերէն:
7.- Թաւրիզի կամ Ատրպատականի Կ. կոմիտէն:
8.- Վանայ Իշխանն է, բուն անունով Նիկոլ Պօղոսեան-Միքայէլեան:

Սիմոն Զաւարեան

125

Փաստ. 672-45

7 Մայիս 1912, *Վան*

[*Արեւմտեան բիւրոյի Պոլսոյ հատուածին*]

Սիրելիք!

Երբ «Իթթիհատի» հետ «միանալ-չմիանալու» հարց էր տրուած, Վառնայի Ընդհ. Ժողովում(1) *ուրիշները վախենում էին Սահմանադրութեան սպառնացող վտանգից, իսկ ես՝ ընդհակառակը՝ վախենում էի Սահմանադրութեան վերջնական հաստատման վտանգից։ Եւ ես չը սխալեցի։ Ինչքան ապահովւում է Սահմանադրութիւնը — «Իթթիհատի» հասկացած Սահմանադրութիւնն ի հարկէ — այնքան կատաղում են մեր ազիզ բարեկամ իթթիհատականները։ Այդ կատաղութեան փաստերի անվերջ շարքին այժմ աւելացաւ նաեւ Վանինը։ Վալին՝ յենւելով իբր թէ Պոլսի հրահանգի վրայ, պահանջում է Պարսկաստանից եկած մեր բոլոր ընկերներից, որ անմիջապէս հեռանան Պոլիս։ Պատճառը չի բացատրւում, եւ երբ ես խնդրեցի պատճառն իմանալու համար ժամանակ ու հնարաւորութիւն տալ Պոլիս դիմում անելու, նա անպատկառ կերպով կարճ ու կտրուկ պատասխանեց. «Կ՚երթաք Պոլիս եւ կը խօսէք այնտեղ»։ Այլեւս համբերել չը կարողացայ եւ երեսն ի վեր պոռացի. «22 տարի տանջւել ենք այս երկրի ազատութեան համար, բազմաթիւ գնդակներ ենք առել մեր մարմնի վրայ եւ այժմ մենք մեր սեփական տանն ենք. այստեղից հեռացնել մեզ կարող է դատարանը կամ վարչական բռնի ոյժը»։*

Դրա վրայ կակղեց եւ ժամանակ տուաւ Պոլսի հետ բանակցութեան մէջ մտնելու։ Յետոյ, վնասի նկատումով, ես նրան յայտարարեցի, որ արդէն սկսել եմ առեւտրական խոշոր գործ, բայց դեռ վաղաժամ է, դրա մասին կը խօսենք, երբ վերջնապէս կ՚որոշուի իմ հեռացումը։ Այդ առիթ եղաւ, որ վալին բաց անի իր կարտերը եւ անմիջապէս յարեց.

«Էֆէնտըմ, տեսնո՞ւմ էք, ես որտեղի՞ց գիտենայի, որ դուք թուջար մարդ էք, ինչո՞ւ ժամանակին չասացիք ինձ»։

Ու ես կամաց սկսեցի եւ բարձր վերջացրի.

«Էֆէնտը՛մ, գուցէ սխալւել եմ ժամանակին Ձեզ չը յայտնելով, բայց էականը դա չէ։ Ամէնից հետաքրքիրը անգործութեան վերաբերեալ Ձեր ֆրազն է. ուրեմն դուք մեզ համարում էք ոչ թէ քաղաքական փախստականներ, այլ թափառաշրջիկնե՞ր։ Գիտէք, որ ինձ հետ սահման անցել են 70-80 *հոգի։ Այստեղ ապրելու հնար չունենալով՝ նրանք արդէն ցրւել են զանազան կողմեր. մնում են ընդամէնը* 7-8 *հոգի։ Դրանցից՝ ես գործ ունիմ, Սամսոնին արգելում էք պաշ-*

տօնավարութիւնը վանքում, միւսներն էլ աշխատում են գործ սկսել կամ պաշտօն գտնել։ Ոչ ոքին հաճելի չէ անգործ մնալ, պաշտօններ տուէք ամէնքին, հէնց այսօր կը մտնեն»։

Խօսակցութեան տոնը եւ ձայնի բարձրացումը լաւ չէր ազդում վրան ի հարկէ — մանաւանդ որ ներկայ էին մի սպայ եւ մի սիվիլ տաճիկ — այնուամենայնիւ իրեն զսպում էր եւ այսքանը միայն ասաց, որ ինձանից քիչ չէ կոմիտաջութիւն արել, բայց այժմ ինքը վալի է եւ ես ի նկատի ունենամ այդ։ Ես էլ պատասխանեցի, որ գիտեմ վալիի հետ խօսելս եւ ես պարտաւոր եմ ճշմարտութիւնը խօսելու նրա երեսին, եթէ ասածներս ճշմարտութիւններ չեն, թո՛ղ ինքն էլ ասի իմ երեսին։ Վերջապէս, հետս միայն Սարգիսն(2) *էր, բաւականին երկար խօսակցութիւն ունեցանք, կուեցինք, կուրշտեցինք, մենք նրան, նա մեզ եւ դուրս եկանք խսկոյն հեռագիր ղրկեցինք Ձեզ։*

Թէ ի՞նչ կը լինի սրա վերջը — չը գիտեմ, բայց լա՛ւ իմացէք որ մենք սրանց բերնովը Պոլիս եկողը չենք. պէտք է ղրկեն բռնի ուժով եւ ես կ՚ուզենայի տեղի ունենար այդ բռնի ուժը, որ վերջապէս հիմքը տրուէր խզմանը մեր այս անպիտան բարեկամութեան(3)։

Համբոյրներով՝
ԴՈՒՄԱՆ

Պիօնեանի համար տեսչի կամ ուսուցչի տեղ ի նկատի ունեցէք Պոլսում կամ որեւէ ծովափնեայ քաղաքում ու հետեւանքի մասին գրեցէք իրեն՝ Թաւրիզ։

ՆՈՅՆ

Նոյնը եւ Յօնանի համար։ Նա էլ է ուզում հեռանալ Թաւրիզից։

ՆՈՅՆ

1.- Խօսքը կը վերաբերի Հ.Յ.Դ. հինգերորդ Ընդհ. ժողովին՝ գումարուած Պուլկարիոյ Վառնա քաղաքին մէջ, 1909 թ. Օգոստոս 14 – Սեպտ. 18:

2.- Բարսեղեան Սարգիս (Օտապաշեան Պօղոս), ծանօթ Վանայ Սարգիս անունով:

3.- Արդարեւ, նահանգապետին հետ տեսակցութեենէն անմիջապէս ետք Պոլիս ղրկուած է հետեւեալ հեռագիրը, որ խմբագրուած է լատինական հայերէնով (փաստ. 672-50): Հեռագիրը մակագրուած է 8/21 Մայիս եւ ստորագրուած է Շամլեան, իմա՝ Վասպուրականի Կեդր. կոմիտէ:

126

Փաստ. 672-50

ԼԱՏԻՆԱՏԱՌ ՀԵՌԱԳԻՐ ՎԱՄՊՈՒՐԱԿԱՆԻ Կ. Կ.ԻՆ, ՊՈԼԻՍ

Ստացուած 8-21 *Մայիս*
Պատասխանուած 13/15

21-5-[1912]

VAN — AZATAMART — AREVMTIAN

Valin polsi hrahanqui vra pahandjoum parskastanitz egatz inkernerin heranal polis — padjare tchi batzatroum — zinvornere vaghoutz tsrvatzen — mnoumen miayn hing ghegavar enkerner voronk batzartzagabes haytararetzin valiin vor teghi ktan mimiayn dataranin kam vartchakan brni oujine — banakzetzek ev aradjn arek anakhorj barthouthunneri — chechtetzek vor nicoln arthen arevtrakan tzernark ouni — musnern al achkhatoumen gortz gtnel — samsounin daritzial arguiloumen pachtonavarouthune vankoum — CHAMLIAN

ՎԱՆ, ԱԶԱՏԱՄԱՐՏ — ԱՐԵՒՄՏԵԱՆԻՆ [*բիւրօ*]

Վալին Պոլսի հրահանգի վրայ պահանջում է Պարսկաստանից եկած ընկերներին հեռանալ Պոլիս — պատճառը չի բացատրում — Զինուորները վաղուց ցրուած են — Մնում են միայն հինգ ղեկավար ընկերներ որոնք բացարձակապէս յայտարարեցին վալիին որ տեղի կը տան միմիայն դաստարանին կամ վարչական բռնի ուժին — բանակցեցէք եւ առաջն առէք անախորժ բարդութիւնների — չեշտեցէք որ Նիկոլն արդէն առեւտրական ձեռնարկ ունի — միւսներն էլ աշխատում են գործ գտնել — Սամսոնին դարձեալ արգիլում են պաշտօնավարութիւնը Վանքում։

ՇԱՄԼԵԱՆ

127

Փաստ. 672-54

27 *Մայիս* 1912
Վան

[*Սիմոն Զաւարեանին, Պոլիս*]

Սիրելի Սիմօն!

Գրում ես, թէ Պարսկաստանի հաշիւները արդէն յանձնուած են հաշուակալին քննելու։ Ես արդէն յայտնել եմ որ դա մի չնչին մասն է ամբողջ հաշուի եւ որ պիտի ղրկուի Թաւրիզում եղածին միացնելու եւ ամբողջը քննելու նրանց յատուկ կոմիսիայի ձեռքով։ Դուք ի՞նչ պիտի հասկանաք այդ մի կտորից։ Վերջապէս դա մեր կուսակցական հաշիւը չէ, այլ պարսից կառավարութեան։ Եթէ Պոլսից փոխադրել էք 150 *լիրա — դա պէտք է հաշուէք իբրեւ փոխառութիւն՝ տրուած Պարսից կառավարութեան, որի փոխարէնը պէտք է ստանալ Թաւրիզում եղած գումարից — եթէ բոլորը չեն ծախսել։ Իսկ եթէ արդէն ծախսել են, մենք այդ* 150 *լիրան կը սաղացնենք կառավարութեան զէնքից ու ռազմամթերքից, որ մեր ձեռքումն է գտնւում։ Չը գիտեմ ո՞րտեղից ես վերցրել, որ Պարսից կառավարութիւնը «ուրեմն նպաստել է մեզ»։ Ի՞նչ նպաստ. ամբողջ ծախսը եղել է Պարսից կառավարութեան հաշուին՝ իմ պահանջի համաձայն։ Թեհրանից փոխադրել են Թաւրիզ առաջ <u>քսան հազար թուման</u> եւ յետոյ էլ <u>երեք հազար</u> — ընդամէնը* 23000 *թուման, որ անում է մօտ* 44.000 *ռուբլի։ Ամբողջ գումարը եղել է Կենտր. Կոմիտէի ձեռքում եւ ծախսւել է յատուկ կոմիսիայի ձեռքով։ Ո՛չ միայն ո՛չ մի կոպէկ չի ծախսւած կուսակցական դրամներից, այլեւ իմ դուրս գալու օրը — ասում էին — կառավարական գումարի մնացորդը աւելի քան <u>չորս հազար թուման է</u>։ Յետոյ։ Սկզբում մենք ծախսում էինք դաշնակցական ձեւով, բայց կառավարութիւնը չուզեց այդ եւ, գործի մէջ եղողներին համարելով կառավարական պաշտօնեաներ, ամէնքին նշանակեց ռոճիկներ։ Ոտաւոր զինուորին* 12 *թուման ամսական, ձիաւորինը* 20 *թուման, խմբապետներին* 40-*ական եւ ինձ* 150 *թուման։ Բացի դրանից կառավարութիւնը մեզ արտօնել էր վերցնել* 500 *հրացան եւ* 200.000 *փամփուշտ, որից վերցրել ենք միայն — կարծեմ — մօտ* 130 *հրացան եւ* 84.000 *փամփուշտ։ Փամփուշտների մի մասը կրակւել է կռիւներում, կարծեմ մօտ* 15.000 *գրւել են ռուսները, մի հրացան ծախել է մի զինուոր,* 4 *հրացան էլ սահմանագլխում վերցրել է տաճիկ կառավարութիւնը, իսկ միւս մնացածները ամբողջովին մեր ձեռքումն են։*

Յետոյ. կան տեղեր, ուր մեր մարմինները մասնակցել են in corpore(1), *կան տեղեր էլ, որ մարմինները հրաժարւել են եւ իրենց կողմից մէկին նշանակել իբրեւ ագենտ։ Դրա համար է, որ մի քանի հաշիւներ ստորագրած են ո՛չ թէ մար-*

միններեր, այլ անհատներ։ Այդ բոլորը գիտէ Թաւրիզը եւ բոլոր հաշիւները պէտք է կենտրոնացնել այնտեղ։

Լիբարիտին(2) ասա՛, որ իրենից խնդրածս իրերը դեռ չեմ ստացել։ Հաշիւներ ունին նաեւ Մարտիրոս Յարութիւնեան ու Պետրոսը, որ այժմ Էրզրում է. չը գիտեմ ղրկել են Թաւրիզ, թէ չէ։

Համբոյրներով՝
Քո ՆԻԿՕԼ

1.- Լատիներէն՝ ամբողջ կազմով:
2.- Լիպարիտ Նազարեանց:



Նիկոլ Դումանի քանդակը Ջերմուկի մէջ:
Քանդակագործ՝ Յովհաննէս Մուրադեան

128

Փաստ. 672-68

28 *Յունիս* 1912
Վան

Դ[աշնակցու]թեան Արեւմտեան Բիւրո-ի Թուրքիոյ հատածին.

Ընկերներ !

Մի քանի շաբաթ սրանից առաջ հեռագիր ստացայ Վռամեանի ստորագրութեամբ, որով առաջարկում էին ինձ փոխարինել Թափառականին(1)*։ Իսկոյն հեռագրով պատասխանեցի, որ «Համաձայն եմ, եթէ առաջարկը բխում է կենտր. կառավարութիւնից եւ եթէ խոստանում են տալ կազմակերպելու լիազօրութիւն ու հարկաւոր միջոցները»։ Իբրեւ պատասխան իմ այդ բանաւոր պայմանին, այսօր միայն նամակ եմ ստանում Սիմօնի*(2) *ստորագրութեամբ, որի մէջ ասւած է բառացի.*

«Թեհրանի գործը մեծ է. ի՞նչպէս կարող են առաջուց մեծ-մեծ խոստումներ տալ, երբ ամէն օր դրութիւնը փոխւում է։ Լինելու է տեղին վրայ, որպէսզի շահագործւի դրութիւնը, փոխւող պարագաները... Եթէ Նիկոլը անկեղծ տրամադրութիւն ունի, լաւ է մեծ պահանջների յետեւից չընկնել...»։

Նիկօլի տրամադրութիւնը կեղծ է, թէ՛ անկեղծ — այդ միեւնոյն է, որովհետեւ ընկերները, բազմաթիւ փորձերից յետոյ, պարտաւոր են գիտենալ, որ Նիկօլը — նոյնիսկ հակառակ իր տրամադրութեան ու ցանկութեան (3) *— եթէ խոստանում է՝ ուրեմն կ'երթայ. եւ եթէ գնայ՝ կ'անի ա՛յն ամէնը ինչ որ թոյլ կը տան միջավայրն ու քաղաքական պայմանները եւ կը ներեն իր սեփական ուժերը։ Բայց գլխաւոր հարցը դրա մէջ չէ։*

Գիտէք, որ այժմ Թեհրան գնալու ճանապարհը Ռուսաստանի վրայով է։ Եթէ աչքիս առջեւ առած ձերբակալւելու վտանգը, գնամ սաղ-սալամաթ հասնիմ Թեհրան ու ասեմ, թէ Վռամեանը հեռագրել է, Սիմօնը նամակով գրել եւ ես էլ համաձայնել ու եկել եմ որ փոխարինեմ Թափառականին եւ նրանք էլ — իմ սիրելի համշարիներս — պատասխանեն. «Վռամեա՛նն դա անասը... Սիմօ՛նն դա՝ անասը... սա՛նն դա անասն...». այդ դէպքում ի՞նչ առարկեմ, ի՞նչ էք խորհուրդ տալիս...

Ուրեմն անհրաժեշտ է, որ առաջարկը նախ եւ առաջ բխած լինի կենտր. կառավարութիւնից։ Դա անհրաժեշտ է ե՛ւ ուրիշ տեսակէտներից. առաջին՝ այժմ Պարսկաստանի տէրն ու տնօրէնը de facto *ռուսներն են եւ ամենեւին անակնկալ չի լինի, եթէ ռուսաց կառավարութիւնը չը համաձայնի իմ պաշտօնավարութեան եւ ընաւ զարմանալի չի լինի, որ պարսից կառավարութիւնն էլ խոկոյն զիջի այդ պահանջին. եւ ամենաաջող դէպքում ցոյց տայ ինձ Բուշիրի ճանապարհը, ինչպէս արաւ, դաշնակցական Խէչոյի վերաբերմամբ։ Երկրորդ՝ ես անծանօթ անձնաւորութիւն չեմ պարսից կառավարութեան — ինձ շատ լաւ ճանաչում են Կարա-Բաբա անունով — եւ գուցէ ամենեւին չեն ցանկանայ ինձ*

ունենալ իբրեւ պատասխանատու պաշտօնեայ, ի նկատի ունենալով իմ կարճ ժամանակեայ գործունէութիւնը Թաւրիզում։ Այդ բոլորից շատ պարզ է, որ իմ անունն ու փախստականի հանգամանքը պէտք է նախօրօք ներկայացնել կենտր. կառավարութեան եւ չինել խորհրդածութեան առարկայ։

Յետոյ. Սիմօնի գրածից ես ա՛յն եմ հասկանում, որ դուք կարծում էք թէ ես «մեծ-մեծ պահանջներ» եմ անում քողարկելու համար իմ Պարսկաստան գնալու անտրամադրութիւնը... դա խօմ հիմնովին սխալ է։ Եթէ ես այդպիսի մտադրութիւն ունենայի՝ կը դնէի ոստիկանների ու զօրքերի որոշ քանակ ու որոշ բիւջէ — անշուշտ մեծ ու անիրագործելի։

Բայց տեսնում էք, որ այդ չեմ անում եւ թողնում եմ իրենց վրայ — յարմարուելու համար նրանց տնտեսական միջոցներին։ Միայն պահանջում եմ, որ ամէն մի քոսոտ համշարի քիթը չը կոխի իմ գործերի մէջ եւ ամէն քայլափոխում խոչընդոտ հանդիսանայ, ինչ որ շատ սովորական է Պարսկաստանում։

Բայց ես դեռ չը վերջացրի։

Սիմօնը դեռ միամիտ լաւատեսութիւն ունի կարծելու, թէ «մենք կարող ենք շահագործել դրութիւնն ու պարագաները...»։ Մոռանում է որ բնական օրէնքով մի՛շտ շահագործւում է թոյլը... իսկ մենք, դժբախտաբար, մի՛շտ էլ թոյլ ենք եղել թէ՛ քանակով եւ թէ՛ որակով — ե՛ւ ժամանակ է, վերջապէս որ դէ՛ն չպրտենք հակառակը կարծելու միամիտ նախապաշարմունքը...

Նո՛րից թերթեցէ՛ք մեր թշւառ պատմութիւնը եւ կը տեսնէք որ մեր պատմագիրները լաց ու կոծով պատմելով դրացի ազգութիւնների արարքները, մի՛շտ էլ շեշտում են. «Եւ անօրէն ազգն տաճկաց», «Եւ օձաբարոյ ազգն պարսից», «Եւ... եղնաբարոյ ազգն հայոց» ...Եթէ չէք հաւատում պատմութեան արձանագրութիւններին, կամ եթէ փոփոխւած ժամանակը համարում էք բալասան մեր հին վէրքերին, գոնէ հիմա, ձեր սեփական աչքերով դիտեցէք ձեր շուրջը եւ կը տեսնէք, որ անօրէն ազգն տաճկաց գործնականապէս միշտ խաբում է ձեզ օրինաւոր խօսքերով, եւ Պարսկաստանումն էլ, բազմաթիւ թանկագին զոհեր տալուց յետոյ, չը կարողացանք անցկացնել երկրորդ հայ պատգամաւոր եւ խեղճ Եփրեմն էլ մինչեւ վերջը մնաց Ոստիկանապետի անարգ անուան վրայ մեխւած, որովհետեւ «Օձաբարոյ ազգն պարսից» բարեհաճել էր իր սահմանադրական պարլամենտի բերանով յայտարարելու, որ ոչ-մահմետականը չի կարող նախարար դառնալ...

Մենք էլ — Փառք Աստծու — դեռ մտադիր չենք «եղնաբարոյութիւնից» դուրս գալու...

Բայց սրանք տխուր մտածումներ են — ի հարկէ — միջանկեալ։

Յետոյ։

Սիմօնը գրում է, որ մեզ այստեղից քշելու առաջարկը ծագել է վալիից եւ առաջարկում է «պինդ մնալ»։ Մենք արդէն պինդ ենք եւ միշտ էլ ենթադրել ենք որ ինիցիատորը(4) վալին է։ Միայն Սիմօնը սխալւում է քշելու դրդապատճառի մէջ։ Նա կարծում է թէ այդ բոլորը եղել է ընտրութիւնների ժամանակ՝ մեզ թուլացնելու համար։ Չի կարող այդպէս լինել, որովհետեւ այդ մասին մեզ յայտնել են ընտրութիւններից բաւական յետոյ։

Մենք ուրիշ բան ենք ենթադրում։

Մինչեւ հիմա միշտ հայեր էին սպանւում անպատիժ։ Նրանք, երեւի, ենթադրում էին, որ մեր ներկայութիւնը ուղղակի կամ անուղղակի կերպով կարող է ազդել հայ ժողովրդի տրամադրութեան վրայ եւ կ՚սկսեն պատասխանել սպանութիւններին։ Եւ թարսի պէս — թէեւ ո՛չ մի կապ ու առընչութիւն չկայ — Բուլղարացին սպանեց ոստիկանին. մի հայ աշակերտ Վանում սպանեց մի թուրք աշակերտի եւ միւսին էլ վիրաւորեց, վերջիններիս բռնաբարման փորձ անելիս, մի հայ Արճէշում սպանեց երկու քիւրդ, վեցին էլ վիրաւորեց — գողութեան ժամանակ։ Վերջերումս էլ քիւրդերը յարձակւել էին Ոզմ գիւղի վրայ եւ հայերին աջողւել էր սպանել չորս հոգի ու վիրաւորել հինգին։

Համբոյրներով՝ Դ[ՈՒՄԱՆ]

Յ. Գ.— Եթէ Թեհրանի հարցը դեռեւս չի վճռւած իմ առաջարկած պայմանի ձեւով, ղրկեցէք նրանց իմ խորհրդածութիւնները ամբողջովին եւ խնդրեցէք որ բանակցելուց յետոյ եզրակացութիւնը յայտնեն հեռագրով։ Ո՞վ գիտէ — կարող է պատահել որ 1-2 ամսից յետոյ առեւտուրս վերջացնեմ այստեղ եւ գամ Պոլիս։ Այնուհետեւ գուցէ ուշ կը լինի։

ՆՈՅՆ

Վալին մի քանի օր առաջ ասաց, որ Պոլսից եկած հրամանի համաձայն մնալ կարող են միայն զբաղմունք ունեցողները։ Լսեցինք իբրեւ տեղեկութիւն եւ երկու կողմն էլ այժմ նստած է սուս ու փուս, տեսնենք։

ՆՈՅՆ

1.- Թափառականը Եփրեմ խանի տրուած ծածկանուն է: Եփրեմ մարտի դաշտին վրայ ինկած էր 1912 թ. Մայիսին: Իբրեւ Պարսկաստանի սահմանադրական բանակի ընդհանուր հրամանատար, զինք փոխարինելու հարց կար. հետեւաբար, նկատի առնուած անձնաւորութիւններէն մէկը պիտի ըլլար Նիկոլ Դուման:

2.- Ս. Զաւարեանի:

3.- Ակնարկութիւն այն բանին, որ ինք հակառակ ըլլալով հանդերձ հայերու մասնակցութեան պարսկական յեղափոխութեան, ենթարկուած է կուսակցութեան հրահանգին եւ գացած՝ Պարսկաստան:

4.- Նախաձեռնողը: Արդարեւ ռուս կառավարութիւնը, Պոլսոյ իր դեսպանին միջոցաւ պահանջած էր Նիկոլ Դումանի հեռացումը Վանէն, ուր, Պարսկաստանի մերձակայ այդ քաղաքին մէջ մեծ հայդուկապետին ներկայութիւնը վտանգաւոր կը համարէր Ռուսիոյ շահերուն: Թուրքերը եւս իրենց կարգին նոյնպէս վնասակար կը գտնէին անոր ներկայութիւնը Վանի մէջ, Դումանի թուած պատճառաբանութեամբ: Վանի կուսակալին պահանջը թէեւ Ն. Դուման մերժեց, առարկելով Թուրքիոյ սահմանադրական երկիր ըլլալու հանգամանքը, բայց եւ այնպէս նախ անցաւ Պոլիս, ապա հեռացաւ Թուրքիայէն:

129

Նիկոլ Դումանի ստորեւ տրուած նամակին բնօրինակը չունինք: Մեր ունեցածը լուսապատճէն է, որ կը գտնուի Պէյրութի Հ.Յ.Դ. արխիւին մէջ: Այս նամակի «ծագման» մասին որոշ լոյս կը սփռէ Արեւելեան Ամերիկայի Կեդր. կոմիտէի 18 Յունուար 1994 թուականի հետեւեալ գրութիւնը, ուղղուած Հ.Յ.Դ. բիւրոյին. *«Գաղութէս անձնաւորութիւն մը Հայաստան այցելած ժամանակ կրցած է ձեռք բերել կուսակցական փաստաթուղթեր, որոնք հանուած են Թիֆլիսէն: Այդ փաստաթուղթերուն բնագիրները անձնաւորութեան մօտ են. ներփակ կը փոխանցենք անոնց լուսապատճէն-օրինակները»:*

Խնդրոյ առարկայ փաստաթուղթերու տրցակին մէջ կը գտնուի Ն. Դումանի ստորեւ տրուած նամակը, գրուած Պոլիսէն եւ ուղղուած Վանի ընկերներուն:

Յիշեցնենք որ Նիկոլ Դուման, Պոլիս գտնուած օրերուն, կը հրաւիրուէր մասնակցելու Հ.Յ.Դ. Արեւմտեան բիւրոյի Պոլսոյ կամ Թուրքիոյ հատուածի նիստերուն. այնպէս որ այս նամակը կարելի է համարել Բիւրոյի անունով գրուած: Աւելի ուշ՝ 1912 թ. Սեպտ.ին, Դաշնակցութեան Խորհուրդի հրաւիրած Արտակարգ ժողովին, Ն. Դուման պիտի ընտրուէր անդամ Ինքնապաշտպանութեան ղեկավար մարմնին: Ահա այդ հանգամանքով ալ գրուած է այս նամակը:

30 *Հոկտ.* 1912
Պոլիս

Ընկ[երներ] (*Վան*)

Կացութիւնը ա՛յնքան լուրջ է որ բացւում են բոլոր նամակները եւ ընդունւում են միմիայն հեռագրատան համար պարզ ու հասկանալի հեռագիրները։

Պատերազմի(1) *ընդհանուր կացութեան մասին մենք էլ գիտենք գրեթէ այնքան, որքան դուք կարդում էք լրագիրների մէջ։ Երեւում է, որ պատերազմի բախտը վերջնականապէս պիտի վճռւի Զաթալճայում, ուր — եթէ տակաւին չի սկսւել ճակատամարտը — երկու կողմը ուժգին պիտի ընդհարւին այսօր-վաղը։ Եւրոպական պետութիւնները — չը գիտենք ի՞նչ տուեալների հիման վրայ — ենթադրել են ծանր վտանգ Պոլսում եւ իրենց հպատակներին ու առհասարակ քրիստոնեաներին պաշտպանելու համար արդէն Պոլսոյ ջրերն են բերել* 12 *զրահաւոր, որոնց թիւը — ինչպէս ասում են — դեռ չա՛տ պիտի բարձրանայ։*

Այսպիսի տագնապի հանդէպ հայերն, անշուշտ, չէին կարող անտարբեր մնալ։ Նրանք դիմեցին կառավարութեան եւ քաղաքում անդորրութիւնը պահպանելու եւ կառավարութեան այդ գործում աջակցելու նպատակով խնդրեցին թաղերում հայ պահակներ կազմելու արտօնութիւն եւ զէնք, զէնքի մերժման դէպքում բաւականանալով լոկ արտօնութեամբ։ Ներքին գործոց նախարարը խուսափողական պատասխան տւաւ առ այժմ։ Բայց որովհետեւ մերժւած չէ, դեռ պիտի հետապնդւի այդ հարցը, կառավարութեան ուշադրութիւնը հրաւի-

րելով ա՛յն հանգամանքի վրայ, որ միայն ներքին անդորրութիւնն է որ կարող է երկիրը ազատել արտաքին միջամտութիւնից։ Հայրենիքի ու պետութեան շահերը պահանջում են, որ դուք եւս այս միտքը արծարծէք ու պաշտպանէք Ձեր շրջանում։ Ի նկատի ունեցէք, որ կազմակերպելիք պահակների գործունէութիւնը, ըստ հայերի առաջարկութեան, դնւում է ոստիկանատան հսկողութեան տակ եւ պայման է դրւում որ — թիւրիմացութիւններից խուսափելու համար — հայ պահակները լինին հայկական թաղերում եւ անպատճառ անխառն։ Ուրիշ խօսքով՝ հայերը վերցնում են հայկական թաղերի անդորրութեան պահպանութիւնը միայն, միւս թաղերինը թողնելով այդ թաղերի բնակչութեան կամ կառավարութեան բարեհայեցողութեան։ Դուք, քաղաքից բացի, ունիք նա՛եւ բազմաթիւ գիւղեր, որոնց պաշտպանութիւնը պէտք [է] չինէք գլխաւոր հոգածութեան առարկայ կամ կառավարական միջոցներով եւ կամ թէ գիւղացիների սեփական միջոցներով, ինչ ձեւով եւ ինչ չափով թոյլ կը տան պայմանները։

Արտասահմանեան հայ գաղութները, մանաւանդ կովկասահայերը — ի նկատի ունենալով հայկական ամենատեսակ ճնշումները նոյնիսկ սահմանադրական շրջանում, սկսել են էնէրժիկ շարժում յօգուտ տաճկահայ դատի։ Պատերազմական դրութեան եւ կազմակերպական պայմանների շնորհիւ՝ մենք հնարաւորութիւն չունինք ո՛չ դադարեցնելու եւ ո՛չ էլ սանձելու այդ շարժումը։ Բայց իբրեւ օսմանեան քաղաքացիներ՝ պարտաւոր ենք, ի հարկէ, թոյլ չը տալ այդպիսի շարժում բուն Տաճկաստանում, որքան այդ կախւած կը լինի մեզանից եւ որքան դա կը նպաստի երկրի ներքին անդորրութեան։ Եթէ անդորրութիւնը կը խախտեն ուրիշները, հակառակ մեր բուռն ցանկութեան, ինչ ասել կ՚ուզէ որ պարտաւոր կը լինինք դիմել ինքնապաշտպանութեան՝ բոլոր միջոցներով։

Երկու անգամ Ձեզ փոխադրութիւն է կատարւած — 100 եւ 5[00 ?] ոսկի։ Փոխադրւած էր Իշխանի(2) հասցէով՝ Դումանի առաջարկով, որպէսզի հասկանալի լինի գործադրութեան նպատակը։ Յետոյ նոյնի առաջարկութեամբ տրւեց երկրորդ հեռագիրը՝ այդ դրամը Արամին(3) յանձնելու համար, որպէսզի եթէ Իշխանը լինի իր սեփական գործերով գաւառում,— այդ դրամը չը մնայ անգործադիր մինչեւ նրա վերադարձը։ Ուրեմն Իշխանը վիրաւորւելու ոչինչ չունի։

Կողմնակի կերպով ցաւելով իմացանք Ռաֆայէլի սպանումը(4)։ Դիմում եւ խիստ դիմում, անշուշտ, կ՚անենք։ Բայց շատ բան չենք սպասում, որովհետեւ այժմ, ինչպէս գիտէք, աւելի խոշոր լինել-չը լինելու հարց կայ մէջտեղ եւ մարդկանց աչքին դեռ ուրիշ ո՛չ մի բան չի երեւում։

Ձեր շրջանի կացութեան մասին խնդրում ենք, միշտ մեզ պահէք տեղեակ։

Մեր ուշ-ուշ նամակ գրելուն ներողամիտ վերաբերւեցէք առ այժմ — մեր աչքի առջեւ գահավիժօրէն կատարւում են լուրջ դէպքեր մէկը միւսից աւելի ցնցող, որ խանգարում են մեր խաղաղ հաղորդակցութեան ընթացքը։

Բարեւներով՝ ԴՈՒՄԱՆ

1.- Խօսքը Պալքանեան պատերազմի մասին է:

2.- Վանայ Իշխան, բուն անունով՝ Նիկոլ Պօղոսեան-Միքայէլեան:

3.- Արամ Մանուկեանին:

4.- Ռաֆայէլը երկար տարիներէ ի վեր կազմակերպական գործով եւ ուսուցչութեամբ կը զբաղէր Վասպուրականի հարաւը Լեռնային շրջաններուն մէջ (Լեռնապար): Սպաննուեցաւ քիւրտերու կողմէ:

130

Ինքնապաշտպանութեան Կեդր. մարմնի կողմէ Ամերիկայի Կեդր. կոմիտէին ուղղուած նամակ, որուն առաջին բաժինը կը պատկանի Ն. Դումանի գրչին, իսկ երկրորդը՝ Է. Ակնունիի: (Ակնունիի բաժինը գրուած է շեղագրով): Լուսանցքին նշուած են այն երկիրները, որոնց ուղարկուած է այս գրութիւնը,– Ամերիկա, Բալկան, Ժընեւ, Պարսկաստան, Կովկաս:

Ն. Դումանի ձեռագրին մէջ կան ջնջուած խօսքեր, որոնք կատարուած են յայտնաբար թղթատարական գրաքննութեան ուշադրութիւնը չհրաւիրելու նկատումով: Այդ բաժինները առած ենք աստղանիշերու մէջ:

Մատեան թիւ 113

Արեւմտեան բիւրոյի Թուրքիոյ հատուածին կողմէ ուղարկուած նամակներու պատճէնները, ներդիր օրինակ (4 թերթ, 8 էջ), 344-45 էջերու միջեւ:

24 [*Հոկտ.*] / 6 *Նոյեմբեր* 1912, *Կ. Պոլիս*

Ամերիկայի Հ.Յ.Դ. Կենտր. Կոմիտէին

Ընկերներ!

Դժբախտաբար ընդհանուր կացութիւնը շատ լուրջ է: Մէկը միւսի ետեւից, օսմանեան զօրքերը պարտութիւն կրում են: Ռումէլիի եւ Պոլսի տաճկական զօրքերի յարաբերութիւններն ու հաղորդակցութիւնները արդէն խզած են վերջնականապէս: Բալկանեան դաշնակցական(1) *պետութիւնները շարունակ կ'առաջանան: Էտիրնէն պաշարելուց յետոյ՝ բուլգարները մինչեւ իսկ իրենց մի թեւը հասցրին Ռոդոստո, իսկ միւսը՝ մինչեւ Զօրլու: Սպասւում է մի վճռական ճակատամարտ Չաթալճայում *որ հաւանաբար պիտի վերջանայ յօգուտ բալկանեան դաշնակցութեանը* եւ այնուհետեւ հաշտութիւնը կը կնքուի հաւանօրէն Պոլսոյ պատերի տակ: Թէ այդ յաղթութեան պտուղները ո՞վ կը քաղի եւ ի՞նչ չափով – այդ մենք անկարող ենք ասել այսօր: Մենք ունինք մեր սեփական ցաւերը, որոնց ուզում ենք հաղորդակից անել ե՛ւ Ձեզ:*

*Համիդեան ռեժիմից յետոյ՝ Սահմանադրութիւնը մի փոքր հանգիստ տուաւ չնչասպառ հայ ժողովրդին: Բայց միայն հանգիստ, եւ ո՛չ արդարացում ա՛յն յոյսերի, որ հայ ժողովուրդը դրել էր Սահմանադրութեան վրայ: *Սահմանադրական շրջանում անգամ, թէեւ փոքր չափերով, բայց սիստեմատիք կերպով շարունակւեցին սպանութիւններն ու թալանները, առեւանգումներն ու բռնի իսլամացումները**:

*Այս բոլորից, ի հարկէ, հայ ժողովուրդը չէր կարող գոհ մնալ, բայց միեւնոյն ժամանակ չէր էլ կարող ակտիւ կերպով արտայայտել իր դժգոհութիւնը՝ անգօրութեան պատճառով։ Իսկ այժմ, երբ բալկանեան պետութիւնները *յաղթական քայլում են դէպի Պոլիս, երբ եւրոպական գրեթէ բոլոր պետութիւնների զրահաւորները խարիսխ են ձգել Պոլսի առաջ եւ* ամէն մէկը, դանակը սրած* այդ նենգամիտ պետութիւններէն ամէն մէկը եսական շահագրգռութենէ մղուած, մօտիկ ապագայի հաւանական կոնֆերանսում իր բաժինը պիտի վերցնի,— ժամանակ չէ՞ արդեօք, որ հայերն էլ իրենց ձայնը բարձրացնեն եւ, առանց անջատողական մտքեր սնուցանելու, պահանջեն գէ՛թ անհրաժեշտ բարենորոգումներ։ Չի լինի, անշուշտ, եւ ո՛չ մի հայ, որ չուզենայ այդ ուղղութեամբ օգտագործել ներկայ քաղաքական նպաստաւոր պայմանները, բայց հարցը նրանումն է, թէ ի՞նչ ձեւեր կան՝ գործնական ու նպատակայարմար։*

Այդ որոշումների շուրջը մեր կազմի մէջ գոյացել է երկու հոսանք։ Մի մասը ասում է, որ մուրացիկներին ոչինչ չեն տալիս — անհրաժեշտ է անմիջապէս դիմել ակտիւ գործունէութեան եւ ապա դնել հարկաւոր պահանջները։ Իսկ միւս մասը — որ մեծամասնութիւնն է — ակտիւ գործունէութիւնը ներկայ պայմաններուն գտնում է վնասակար, պատճառաբանելով որ այդպիսի գործունէութեան համար մենք չունինք կազմակերպւած լուրջ ոյժ եւ պարտւած ու գազազւած խլամները ամբողջ բարկութեան բովանդակ մաղձը կը թափեն աւելի թոյլ կողմի, այսինքն՝ հայերի վրայ։ Ղեկավարւելով այդ խորհրդածութիւններով, մեծամասնութիւնը գտնում է, որ աւելի նպատակայարմար է, որպէսզի տաճկահայ ժողովուրդը, ինչքան էլ դժգոհ իր կացութիւնից, կոտորածից խուսափելու համար, առ այժմ մնայ սպասողական, իսկ նրա դատը դիպլոմատիական ճանապարհով ձեռք առնի արտասահմանի հայութիւնը — ինչպէս օր[ինակ] Կովկասը, Ամերիկան, Բալկանը, Լոնդոնի, Պարիզի եւ այլ հայ գաղութները։ Դրանցից իւրաքանչիւրը իր տեղական պայմանների համաձայն ու իր յարմար դատած միջոցներով ամէն կերպ պէտք է աշխատի ազդելու հասարակական կարծիքի եւ պետական ղեկավար շրջանակների վրայ ու գործին տայ այնպիսի ընթացք, որ հայկական դատը, ապագայ կոնֆերանսում դառնայ պետութիւնների խորհրդածութեան ու պաշտպանութեան առարկայ(2)։

[Է. Ակնունիի ձեռագրով]

Յանձնելով ձեր ուշադրութեան այդ ընդհանուր կէտերը, ստիպողաբար խնդրում ենք անմիջապէս աշխատանքի ձեռնարկել, այն է՝

1.- Հաւաքական դիմումներ պատրաստել ձեր շրջանի հայութեան այլեւայլ խաւերից, եւ ուղարկել ձեր երկրի կառավարութեան, կամ գրաւոր կամ պատգամաւորի միջոցով, որպէսզի նա միջազգային կոնֆերանսի միջոցին՝ պաշտպանի հայերի դատը եւ ռեֆորմների ներմուծումը։

2.- Այդ դիմումների եւ շարժման մասին տեղեակ պահել ձեր շրջանի մամուլը, եւ եթէ հնար է, այդ դիմումների պատճէնները ուղարկել եւրոպական մեծ պետութիւնների արտաքին գործերի նախարարներին, որոնք կոչված են ազդու ձայն ունենալու լինելիք միջազգային կոնֆերանսի մէջ:

3.- Նոյնպիսի դիմումներ ուղարկել եւ Օսմ. կառավարութեան, շեշտելով, որ հայկական դատի արդար լուծումը՝ անհրաժեշտ է նոյնիսկ օսմանեան երկրի շահերի տեսակէտից, որը միշտ պաշտպանված է եղել մեր կողմանէ:

Դրա հետ միասին ձեր ուշադրութեան ենք յանձնում հետեւեալ էական խնդիրը եւս:

Ներկայ օրերին ինքնապաշտպանութեան գործը դարձել է Կազմ[ակերպութեան] առաջին աշխատանքը: Այդ մտքով են կայացրած Արտակարգ ժողովի որոշումները եւ հետեւաբար նրանց իրագործման մասին հոգալը՝ անյետաձգելի է: Նոյն նպատակի յաջող իրագործման համար Պոլսոյ մէջ կազմուած է Ինքնապաշտպանութեան Կեդրոնական մարմին, որի որոշումները ձեզ կ՚ուղարկենք առաջիկային:

Իբրեւ արտայայտութիւն այդ արդար ձգտման, Վանի կողմերը արդէն դուրս են եկած ինքնապաշտպանութեան հայդուկային խմբեր, 8-9 հատ, եւ տպաւորութիւնը ժողովրդի վրայ քաջալերելի է: Նոյնը տեղի կ՚ունենայ եւ այլ շրջաններում, եթէ կեանքի դառն պայմանները ստիպեն:

Այդ գործը աջող տանելու համար կազմ[ակերպութիւնը] պէտք ունի դրամական նոր զոհաբերութեան: Տարաբախտաբար Կենտրոնական դրամարկղը ի վիճակի չէ հոգալ ծախքերը, որոնք շատ մեծ են: Ահա թէ ինչու խնդրում եւ հրահանգում ենք անմիջապէս հանգանակութիւններ բանալ ինքնապաշտ[պանութեան] անունով, թէ կազմակերպ[ական] շրջանակում եւ թէ դուրսը, եւ հաւաքած գումարը մաս-մաս մեզ հասցնել:

Սրա հետ միասին պէտք է ձեռնարկի լայն պրոպագանդի Պարիզի մէջ եւ այլ մայրաքաղաքներում: Մեր ընկերներից երկու հոգի արդէն որոշել են մեկնել Ժընեւից, եւ արդէն ձեռնարկած է յատուկ օրգանի հրատարակութեան, խմբագրութեամբ մեր լաւածանօթ բարեկամ Պրեսանսէի: Մեր Մարմնի կարծիքով նոր օրգանը չպիտի լինի Pro-Armenia-ն, որպէսզի այդ զուտ հայկական վերադասումը ծանր չազդի մեր հայրենակից թուրքերի վրայ, այն էլ այս շատ փափուկ ժամանակը:

Այս ձեռնարկի համար եւս հարկաւոր են դրամական միջոցներ, որոնց հոգացումը, ինչպէս միշտ, պէտք է կատարի Կազմ. նախաձեռնութեամբ եւ ջանքերով: Այս կէտը եւս յանձնում է ձեր ուշադրութեան:

Բարի եղէք ձեր ձեռնարկների մասին մեզ տեղեակ պահել:

Այս առիթով ներողութիւն պիտի խնդրենք, որ վերջին ժամանակներս, թէ Արտակարգ ժողովի եւ թէ այլ արտաքին պատճառներով մեր նամակագրութիւնը դանդաղեց եւ նոյնիսկ շատ վայրերի հետ ընդհատուեց: Բոլոր ջանքերը պիտի թափենք այդ կողմից ձեզ զոհացում տալու համար: Ներկայ տագնապի բնոյթը նկատի առնելով, Արեւմտեան Բիւրոյի գործերը եւս յանձնուեցան Ինքն[ապաշտ-

պանութեան] Կեդր. Մարմնին, որը մի առ ժամանակ, մինչեւ կացութեան պարզուելը, պէտք է վարէ բոլոր գործերը, Արտակարգ ժողովի տուած լիազօրութեան սահմանների մէջ:

Քանի մը օրից ձեզ կ՝ուղարկենք Արտակարգ ժողովի որոշումներից քաղուածքներ այն չափով, ինչ չափով հնարաւոր է:

1.- Իմա՝ դաշնակից:
2.- Մինչեւ հոս Նիկոլ Դումանի ձեռագրով, այնուհետեւ՝ Ակնունիի:

Խաչատուր Մալումեան
(Է. Ակնունի)

131

Փաստ. 113-1, *էջ* 359-60

Արեւմտեան բիւրոյի Թուրքիոյ հատուածին կողմէ ուղարկուած նամակներու պատճէնները. Նիկոլ Դումանի ձեռագիր:

13 *Նոյեմբեր* 1912, *Կ. Պոլիս*

Ընկ.! (*Վան*)

Սա 4-*րդ նամակն է, որ գրւում է Ձեզ վերջին* 2-3 *շաբաթւայ ընթացքում։ Նախընթաց նամակով, Նոյեմբերի* 10-*ին, Ձեզ յայտնւած է թէ՝ քանի գրութիւն է ստացւած Ձեզնից եւ ինչ թւականներում։ Ձեր հեռագիրներից ստացել ենք միայն* 2-3 *հատ, այն էլ ուշացած մինչեւ* 14 *օր, բոլորն էլ Ռաֆայէլի սպանութեան եւ հոգեհանգստին վերաբերեալ։ Ուրեմն հարկաւոր է գրել յաճախ, մէկի բովանդակութիւնը միւսի մէջ համառօտ կրկնելով եւ ապահով ճամբորդելու վիճակի մէջ, որ գոնէ դրանից մի մասը հասնի մեր ձեռքը եւ մենք կարողանանք թէկուզ թեթեւ հասկացողութիւն կազմել Ձեր շրջանում կատարւող անց ու դարձին։*

Եւրոպական զրահաւորները սպասողական դրութեան մէջ են Պոլսոյ առաջ. Էտիրնէն տակաւին կանգուն է. Զաթալճան դեռ եւս դիմադրում է ուժեղ կերպով։ Այդ բոլորի հետ միասին զինադադարի ու հաշտութեան բանակցութիւններ կան, դրա կողքին յարաբերութիւնների դիպլոմատիական ճգտում Ռուսիոյ ու Աւստրիայի միջեւ։

Հայկական Հարցը սկսել է արծարծւել թէ՛ արտասահմանեան օտար մամուլում եւ թէ՛ արտասահմանեան հայ գաղութների, մանաւանդ կովկասահայ շրջանում։ Կովկասի շարժմանը ոյժ է տալիս նոյնիսկ «Նովոյէ Վրեմյա»-*ն*(1)։ *Այդ շարժման հակառակ՝ տաճկահայերը հայրենասիրաբար լուռ են եւ, կարծես, պայմանների չնորհիւ, պարտաւոր են լուռ մնալու։ Այնուամենայնիւ ի՞նչ է Ձեր կարծիքը։*

Զիֆօնեանի(2) *գործերը, խնդրում ենք, կարգի բերել արագօրէն։ Դրա համար հարկաւոր միջոցները ղրկւած են Ձեզ։*

Անուշադրութեան չը պիտի մատնւի նա՛եւ ինքնապաշտպանութեան անհրաժեշտ գործի կազմակերպումը։ Քանի որ կառավարութիւնը ամբողջովին կլանւած է աւելի խոշոր ու կենսական հարցերով, շատ պարզ է, ուրեմն, որ ամէն մի օսմանեան քաղաքացի պարտաւոր է եւ լիակատար իրաւունք ունի ինքն իրեն պաշտպանելու, որով օգնած կը լինի կառավարութեան եւ նպաստած երկրի ներքին անդորրութեան։

Ի[*ՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹԵԱՆ*
Կ[*ԵԴՐՈՆԱԿԱՆ*] *ՄԱՐՄԻՆ*]

1.- Բնագրին մէջ ռուսատառ՝ «Նոր Ժամանակ»:
2.- Ռազմական պիտոյքներու հայթայթման մարմին:

Հաւանաբար Նիկոլ Դումանէն մեզի հասած վերջին նամակն է:, ուղղուած Պոլսոյ ընկերներուն: Հաւանաբար կ՚ըսենք, որովհետեւ իր կենսագիրներէն Վալադ Վալադեան կը յիշատակէ ուրիշ մը եւս, գրուած մէկ օր ետք՝ Նոյ. 8-ին, նոյնպէս Սուխումէն, մէջբերելով հետեւեալ հատուածը. *«Սիմոնի մահը շատ վատ է ազդել վրաս: Լաց եմ լինում յաճախ: Չափազանց ջղայնացած եմ եւ ամէն բանից զզուած: Դրութիւնս քանի գնում վատանում է: Միշտ ակնոցի մէջ եմ: Զգում եմ, որ այսպիսի կեանք շարունակել անկարելի է»* («Հայրենիք ամսագիր, 1965, թիւ 3, էջ 62-63): Յամենայն դէպս, տարիներէ ի վեր յօդացաւէ, թոքախտէ եւ յոգնածութենէ տառապող անուանի հայդուկապետը հիւծած էր: Արեւմտեան բիւրոյի Թուրքիոյ հատուածի 1913 թ. թղթածրարին մէջ կայ Ս. Զաւարեանին ուղղուած նամակ մը, դժբախտաբար անթուակիր ու ստորագրութիւնը անընթեռնելի, եւ սակայն ձեռագրէն դատելով՝ կը պատկանի Բարթող Զօրեանի (Ժիրայր), որ կ՚ըսէ. *«Անշուշտ Նիկօլը անվնաս հասաւ հոդ: Խոր տխրութեամբ մը ճամբու դրի զինք, որովհետեւ պլպլացող ճրագի մը տպաւորութիւնը կ՚ընէր ան իմ վրայ: Խնդրեմ, առանց իր հիւանդի հոգեբանական լաւատեսութենէն խաբուելու, ձեր բարոյական ճնշումն ի գործ դրէք զինքը դրկելու եւրոպական բուժարան մը – փորձենք բոլոր այն միջոցները՝ որոնցմով կը յուսանք խնայել իր կեանքը»* (փաստ. 100-71): Իր կողմէ Միք. Վարանդեան Փարիզէն, նոյնպէս Պոլիս եւ նոյն հասցէին, կը գրէ երկու առիթներով՝ 1913 թ. Հոկտ. 14-ին եւ 21-ին: Առաջինին մէջ կը յայտնէ. *«Յաւ ու կսկիծով իմացայ, որ Նիկօլին ծանր վիճակում փոխադրել են Կովկաս: Քալանթարեանի աղջիկը շատ բան էր գրել Ղարիբին»,* այսինքն Ա. Ահարոնեանին (փաստ. 1277-61): Երկրորդին մէջ նոյնպէս ահազանգային՝ *«Նիկոլի վիճակից լուր տուէք, անհանգիստ ենք: Ճի՞շտ է որ մերձ ի մահ տարել են Կովկաս»* (փաստ. 1277-63):

Ամէն պարագայի տակ, հինգ տարիներու թափառական կեանքէ ետք Կովկաս վերադարձող Ն. Դուման կը տարուի նախ Աբասթումանի եւ Սուխումի բուժարանները, ապա Կիսլովոդսկի հանքային ջուրերը, ուր եւ հոչակաւոր հին մարտիկը, չդիմանալով անտանելի ցաւերուն, 1914 թ. Սեպտ. 23-ին (հին տոմար) անձնասպանութեամբ վերջ կու տայ իր կեանքին:

132

Փաստ. 383-2

7 Նոյեմբ. 1913 *Սուխում*

Ընկերնե՛ր,

Ես այդտեղ փոխարինաբար պարտք վերցրի կասսայից 300 *ռուբլի* + *տասն օսմանեան ոսկի, որ անում է* maximum 1023 *ֆրանկ։ Ու անմիջապէս գրեցի Բագու, որ այդ գումարը փոխադրեն Հրաչի հասցէով։ Իսկ դրանից առաջ էլ ես փող էի ուղել Բագուից իմ հասցէով — Ներսէս Դանիէլեան*(1)*, գլխարկավաճառ Մեսճիեանի խանութը։*

Ստիպւած լինելով հեռանալ Պօլսից, յանձնարարեցի ընկերներին — Սարգիսին ու Հրաչին(2) *— որ ստանալիք դրամներից լրիւ վճարեն պարտքս եւ, եթէ մի բան աւելանայ՝ ետ փոխադրեն ինձ։*

Օգոստոսի 20*-ին հասայ Աբաս-Թուման, իսկ Սեպտեմբերի սկզբին նամակ ստացայ փոքր եղբօրից, որի մէջ ասւած էր բառացի.*

«*Ամարանոցից նո՛ր վերադարձայ եւ ստացայ նամակդ. Արշակը* (*միւս եղբայրս*) *արդէն մինչ այդ փոխադրել էր* 200 *ռուբլի քո հասցէով։ Մտածելով որ քո հեռանալուց յետոյ այդ գումարի ստացումը գուցէ դժւարութիւնների հանդիպի՝ ես լրիւ փոխադրեցի ամբողջ պարտքդ —* 1023 *ֆրանկ, քո տուած հասցէով։*

Ես հասցէ էի տուել առաջ իմը, յետոյ Հրաչինը։ Եղբօրս գրածի մէջ պարզ չը լինելով թէ փոխադրութիւնը ո՞ր հասցէով է կատարւած, իսկոյն երկու նամակ գրեցի՝ Սարգսին եւ Հրաչին, որ երկու հասցէն էլ ի նկատի ունենան, դարձեալ յիշեցնելով (*Սարգսին*)*, որ* 200 *ռուբլի աւելցուկը ետ փոխադրեն Բագու — Տիգրան Բէկզադեանին-համագումարի խորհրդին*(3)*, Նիկօլի եղբօրը յանձնելու համար։*

Այդ բոլորից յետոյ՝ ես սպասում էի 200 *ռ. աւելցուկը։ Մինչդեռ ի զարմանս իմ, երէկ նամակ եմ ստանում Սարգսից, որի մէջ ի միջի այլոց ասւած է մօտաւորապէս հետեւեալը.* «*Այստեղ դրամ չկայ. տրտնջում են, թէ ինչո՞ւ պարտքդ ուշացաւ։ Լաւ կը լինէր կարգադրէիր, որ Բագուից չուտով փոխադրեն, սրանց պարտքի մնացորդը*»։

Այս բոլորից ի՞նչ կարելի է եզրակացնել։ Միայն եւ միմիայն ա՛յն, որ դուք չէք հաւատում, թէ դրամները արդէն փոխադրւած է Ձեզ վաղուց։

Եթէ ճիշտ է եզրակացութիւնը, ուրեմն Ձեր ընկերական-բարոյական հասկացողութիւնները բաւականին թոյլ են։ Իսկ եթէ հաւատում էք, թէ փոխադրւած է, բայց Ձեր ձեռքը չի հասել անյայտ պատճառներով, հարկաւոր էր իր ժամանակին գործնական քայլեր անել թիւրիմացութիւնը պարզելու համար, եւ ո՛չ թէ ամբողջ երկու ամիս դիակի պէս մնալ անշարժ եւ հոտել... Արդէն Հրա-

չը չի ստացել. հարկաւոր էր ստուգել նա՛եւ Մեսճեանի խանութում. եթէ այն-տեղ էլ չը կար, պէտք էր խսկոյն դիմել Բագու՝ եղբօրս հետեւեալ երկտողով. «1023 ֆրանկը տակաւին չի ստացուած. հետապնդեցէք ուր հարկն է, որ դրամ-ները չը կորչին եւ հետեւանքի մասին տեղեկացրէք մեզ հետեւեալ հասցէով»։

Ձէք կարող պատրուակ բռնել եղբօրս հասցէն չունենալը. ղրկել եմ Սարգսին (Բէգզադեան)։ Նոյն իսկ եթէ այդ էլ չը լինէր, Բագուում մի շարք հասցէներ կան եթէ ոչ Ձեզ, գոնէ Սարգսին շատ լաւ ծանօթ։

Ասենք ի միջի այլոց, որ դուք ունիք հասցէ — որի թւում «Բագւի Ձայնը»։

Ինչ եւ իցէ։

Դուք արդէն ստացել էք 200 ռուբլի — երեւի ֆրանկով առնուազն 530 ֆր.։

Ահա՛ ես էլ փոխադրում եմ ներփակ չէկով 532 ֆրանկ-գումարը 1062. պարտքս է մօտ 1023 ֆր.։ Աւելցած մօտ 40 ֆր. Ձեզ համար ... տոկոս, որ էլ ի զուր տեղը չը տուտուացնէք այնպիսի մարդու հասցէին, որը իր կեանքում միշտ հեռու է փախել Դ[աշնակցու]թեան դրամներից՝ «հակառակ օրինաց»։

Եւ դուք, անպիտաններ, ամէնքդ շատ լաւ գիտէք այդ։

Սիմօնի(4) մահը սարսափելի վատ ազդեց վրաս։ 10 օր ծածկել էին ինձնից։ Նախապատրաստելուց յետոյ (միշտ անկողնի մէջ եմ) երբ յայտնեցին՝ ինձ պա-հեցի սկիզբը տղամարդի պէս, յետոյ քարացայ, եւ մի քանի րոպէ վերջը փղձկա-ցի ու սկսեցի հեծկլտալ, ինչպէս երեխայ։ Այնուհետեւ արտասուքը հազւագիւտ չէ ինձ համար։ Շատ եմ ջղայնացած եւ երկար ապրելու միտք չունիմ։

Համբոյրներով՝
ՆԻԿՕԼ

1.- Ներսէս Դանիէլեան – Ն. Դումանի գործածած կեղծ անցագրի անունն է:

2.- Սարգիսը՝ Բարսեղեան-Օտապաշեանն է. Հրաչը՝ Թիրեաքեան Հայկը: Վերջինս վարչական պատասխանատուն էր «Ազատամարտ» պաշտօնաթերթի:

3.- Բնագրին մէջ ռուսերէն:

4.- Սիմոն Ջաւարեան, մահացած Պոլիս 1913 թ. Հոկտ. 14/27-ին:

Նիկոլ Դումանի տուն-թանգարան, Արցախ, գիւղ Ծաղկաշատ (Ղշլաղ)

ՅԵՏ ՄԱՀՈՒ

Ծանօթ Խմբ.– Ինչպէս ըսուեցաւ, չդիմանալով այլեւս տարիներէ ի վեր իր ունեցած յօդացաւի եւ թոքախտի պատճառած ցաւերուն, Ն. Դուման 1914 թ. Սեպտ. 23-ին, հիւս. Կովկասի Կիսլովոդսկի բուժարանին մէջ անձնասպանութեամբ վերջ կու տայ իր տառապալի կեանքին, ճիշդ այն օրերուն, երբ իր զինակից ընկերները՝ Անդրանիկ, Քեռի, Դրօ, Համազասպ, Սեպուհ եւ շատ ուրիշներ հաւաքուած էին Թիֆլիս՝ կամաւորական գունդերու կազմութեան գործով: Մարմինը նախ կը փոխադրուի Պաքու, ուր կ՚ուզէին որ թաղուի տեղւոյն ընկերները, սակայն Բիւրոյի կարգադրութեամբ Սեպտ. 27-ին կը փոխադրուի Թիֆլիս եւ յաջորդ օրը կը թաղուի Խոջիվանքի գերեզմանատն մէջ՝ Սիմոն Զաւարեանի շիրիմին կողքին:

Զանց կ՚առնենք յիշատակել այս առթիւ ցաւակցական այն բազմաթիւ հեռագիրները, որոնք կը տեղային Կովկասի եւ Ռուսիոյ քաղաքներէն, Պարսկաստանէն եւ արտասահմանեան երկիրներէն:

Ստորեւ կարգ մը տեղեկութիւններ՝ Թիֆլիսի «Հորիզոն» թերթէն քաղուած՝ թաղման եւ յուղարկաւորութեան մասին, ինչպէս նաեւ Անդրանիկի, Դրոյի, Դաշնակցական Խէչոյի վկայութիւնները մեծ հայդուկապետի մարտական փառաւոր վաստակին մասին:



ԶԱՐՈՒՀԻ, ԱՐՇԱԿ և ՊԱՒԵԼ ՏԵՐ-ՅՈՎՀԱՆՆԻՍԵՆ ՆՆԵՐԸ հոգեմաղ վշտով յայտնում են իրենց բարեկամներին և ծանօթներին՝ առաջինը իր ամուսնու, իսկ վերջինները իրենց անմոռանալի և պաշտելի եղբօր՝

ՆԻԿՕԼԻ

մահուան մասին, որ տեղի ունեցաւ երկարատև և ծանր հիւանդութիւնից յետոյ Թաղումը այսօր:

ԵՐԿՈՒ ՇԻՐԻՄ

Թիֆլիս, 28 սեպտեմբերի

Այսօր հողին է յանձնւում Դումանի մարմինը իր ընկեր Սիմոնի կողքին:

Ի՞նչ կապ կարող է լինել խաղաղութեան սիմուլ ու զէնքի թշնամի Սիմոնի եւ «խաղաղութան» թշնամի ու զէնքի սիրահար Դումանի միջեւ. ի՞նչը կարող էր միացնել այդ երկու հակոտնեայ ոյժերը եւ դարձնել նրանց ընկերներ:

Մի՞թէ տարօրինակ չէ այդ ընկերակցութիւնը, մի՞թէ ռազմիկն ու խորհողը կարող են ընկերներ լինել – կ՚ասեն շատերը: Այո, Սիմոնն ու Դումանը հաշտ ու հարազատ ընկերներ էին եւ նրանք երբեք չէին ժխտում իրար: Եւ երբ Դումանն էլ մեռաւ, նրա ընկերների առաջին հոգսն այն եղաւ, որ այդ երկու այլամերժ, սակայն իրար լրացնող ոյժերը միացնեն նաեւ նրանց մահւանից յետոյ:

Եւ ահա այսօր Դումանին թաղում են Սիմոնի կողքին:

Ժողովրդական առածն ասում է՝ «սուր կայ ատելի է ու անէծքի արժանի, սուր էլ կայ՝ պաշտելի ու գովելի»: Դումանի սուրը վերջինից էր: Նրա սուրը չէր ուղղած անմեղների ու թոյլերի դէմ, կեղեքիչների, արիւնարբուների ու բռնակալների, Դումանը իր սուրը ծառայեցնում էր իր կեղեքւած ժողովրդի պաշտպանութեանը: Եւ ո՞վ է այն խելակորոյսը, որ այս սրի եւ ոյժի դարում ատէ եւ անէծքի արժանացնէ այն սուրը, որ գործում է անարդարութեան ու բռնակալութեան դէմ:

Սիմոնը հաշտութեան առաքեալն էր, նա համերաշխութիւն էր քարոզում անոյժ ու փոքր ցեղերին, որոնք գործիք դարձած մեծերի ձեռքին՝ բզկտում էին իրար. նա աչարկութեան ու հաշտութեան էր կոչում եւ իշխողներին՝ հանդէպ թոյլերի: Բայց երբ նրա ձայնը չէին լսում, նա ինքն էր, որ առաջինը անէծք էր թափում բռնակալների, կեղեքիչների ու անարդարների դէմ, նա ինքն էր, որ կոչ էր ուղղում թոյլերին ոյժով պաշտպանւելու, ոյժով տապալելու բռնութիւնը: Եւ Սիմոնի կոչերին արձագանգ էին տալիս Դումանները: Դումանները նոյն Սիմոններն են, այն տարբերութեամբ, որ մէկը խօսքն է միջոց ընտրում, իսկ միւսը՝ զէնքը, սակայն երկուսի նպատակն էլ մէկ է՝ երկուսն էլ թոյլերի ու անզօրների պաշտպան, երկուսն էլ թիւրքահայ ազատագրութեան մեծ սիւներից, «Դաշնակցութեան» քաջարի զինուորներից: Եւ, երբ այսօր երկու ընկերներին իրար մօտ են բերում, դա մի շատ բնական անհրաժեշտութիւն է, որովհետեւ նրանք լրացնում են այն պատկերը, որ վերջին 30ամեակում տալիս է հա

յի մարտիրոսագրութիւնը: Այդ երկու շիրիմները յետագայ սերունդներին շատ բան են պատմելու այն տառապանքների մասին, որ կրել է հայ ժողովուրդը. նաեւ այն անլուր հերոսութիւնների ու դիմադրական ճիգերի մասին, որ տուել են նրա զաւակները: Այդ երկու շիրիմները սերունդների մէջ վառ են պահելու հայի ըմբոստութեան ոգին, որի ուժեղ դարբնողն են եղած այդ երկու մեծ հերոսները: Մէկը հայի միտքն ու խիղճն է ներկայա[ց]նում, իսկ միւսը՝ հայի կորովն ու ոյժը: Մէկը հայութեան առաջ բացում էր ազատութեան լայն հորիզոններ, իսկ միւսը հնարաւորութիւն էր տալիս նրան հասնելու: Երկուսն էլ նոր ոյժեր էին, որոնք հայութեան մեղկացած ու ստրկացած կեանքում համարձակութիւն ու կորով էին մտցնում: Սերունդները ամէն անգամ այցի գալով այդ զոյգ շիրիմին, կ՚ամրապնդեն իրենց մէջ այդ հերոսներից մնացած աւանդը եւ աւելի եւս անձնուրացութեամբ կը նուիրեն այն Մեծ Գործին, որի հիմնադիրներից են եղած Սիմոնն ու Դումանը:

Դումանի թարմ մահով մենք այսօր վերապրում ենք եւ Սիմոնի մահը:

Երկու ընկերներին թող հողը ծանր չը գայ:


Ընկերները խորին վշտով յայտնում են իրենց անմոռանալի ընկեր

ՆԻԿՕԼ-ԴՈՒՄԱՆԻ

Անփոխարինելի կորուստը, որ տեղի ունեցաւ ամսոյս 23-ին, երեկոյեան ժամը 9-ին

«Հորիզոն», Կիրակի, 28 Սեպտ., 1914, թիւ 214

ՆԻԿՈԼ ՏԷՐ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆԻ ՄԱՐՄՆԻ ԺԱՄԱՆՈՒՄԸ

Ամսոյս 27-ին, ցերեկւայ ժամը 1-ի գնացքով Դումանի մարմինը արդէն հասել էր Թիֆլիսի կայարանը ու այդ ժամանակից սկսած նրա սիրող ու յարգողները հաւաքւում էին կայարան մասնակցելու թափօրին:

Ժամը 4-ին ամէն հասակի ու դասակարգի երկսեռ հոծ բազմութիւնը դուրս գալով կայարանից ու Վակզանայա, Ելիզաւետինսկայա ու Վորոնցովսկայա փողոցներով ուղեւորւեց դէպի Վանքի մայր եկեղեցին:

Թափօրի առջեւից տանում էին «Դաշնակցութեան» ու Բագւի ընկերների կողմից դրւած թարմ ծաղիկներից հիւսած երկու պսակ: Նրանց հետեւում էր միայն մի քահանայ, որ կատարում էր եկեղեցական արարողութիւնը: Այնուհետեւ գնում էին փոխ առ փոխ ձեռների վրայ տանող դագաղակիրները: Իսկ սրանց հետեւում էր հսկայական մի բազմութիւն՝ բաղկացած ամէն դասակարգի սեռի ու հասակի անհատներից. ժողովրդի առջեւից գնում էին Դումանի մայրը, քոյրն ու ազգականները՝ սեւ զգեստներ հագած:

Բազմութիւնը քանի գնում աւելի խտանում ու շատանում էր. փողոցներից անցնելիս թափօրին միանում էին բազմաթիւ յարգողներ ու հետաքրքրւողներ:

Պատուհաններից ու կտուրներից դիտում էին բազմաթիւ հետաքրքրուողներ:

Ժամը մօտ 5-ին թափօրը հասաւ Վանքի եկեղեցին: Ամբողջ փողոցն ու եկեղեցու բակը լցւած էր ժողովրդով: Ժամերգութիւնից յետոյ խուռն բազմութեան ու Դումանի ազգականների ներկայութեամբ կատարւեց ամբիծք*:

«Հորիզոն», Կիրակի, 28 Սեպտ., 1914, թիւ 214

) Ծանօթ Խմբ.– Ամբիծք – հոգեհանգստեան արարողութիւն:

ԴՈՒՄԱՆԻ ԹԱՂՈՒՄԸ

Կիրակի, սեպտեմբերի 28-ին, տեղի ունեցաւ Նիկօլ-Դումանի թաղումը: Առաւօտից երկսեռ մեծ բազմութիւն լցուեց Վանքի աւագ եկեղեցին, որտեղ թեմիս առաջնորդ Մեսրոպ եպ. ներկայութեամբ տեղի ունեցաւ հանդիսաւոր պատարագ: Թէ եկեղեցում եւ թէ բակում ժողովրդի մէջ կարգ էին պահպանում կարգադրիչ մասնաժողովի անդամները եւ ոստիկանութիւնը: Պատարագի ժամանակ Մեսրոպ եպ. մի զգացած քարոզ խօսեց, ասելով, որ Դումանը այն հազւագիւտ անձերից մէկն էր, որը իր ամբողջ կեանքը նուիրել էր հայ ժողովրդի ազատագրման գործին: Սրբազանը չկարողացաւ վերջացնել իր քարոզը, արցունքները խեղդեցին նրան:

Պատարագից յետոյ սկսուեց յուղարկաւորութիւնը դէպի Խոջիվանքի գերեզմանատունը: Սովորական թափօր չէր այդ թաղումը: Դագաղի առջեւից լուռ, առանց եկեղեցական երգերի, գնում էին երկու քահանաներ, դագաղին հետեւում էին հանգուցեալի հարազատները, թաղման ներկայացուցիչները, ապա բազմամարդ ժողովուրդը: Պսակների փոխարէն դագաղի վրայ դրուած էին թարմ ծաղիկների փունջեր: Դագաղի առջեւից տանում էին նոյնպէս թարմ ծաղիկներից եւ ոստերից հիւսուած երկու խաչեր: Կարգը պահպանելու համար դագաղի շուրջը շղթայ էր կազմուած:

Յուղարկաւորութիւնը անցնելով Ռուսսկայա փողոցով, Մուխրանեան կամուրջով, Ցիցիանովի վերելքով, Հալաբարի հրապարակով՝ հասաւ Խոջիվանքի գերեզմանատուն, որտեղ Նիկօլ-Դումանի մարմինը թաղուեց Ս. Զաւարեանի գերեզմանի կողքին: Թաղումը վերջանալուց յետոյ ժողովուրդը դեռ երկար ժամանակ չէր հեռանում Զաւարեանի գերեզմանի կողքին բարձրացած այդ նոր շիրմից:

Թաղմանը պատգամաւորներ էին եկել.

Աղաջանեան Գ., Արզումանեան Վ., Ամիրեան Թ., Առաքելեան Ա., Բաբաքեւխեան Ն., Շահբազեան Աւ., Գրիգորեան Դ., Գիւլխանդանեան Ա., Թաղիանոսեան Ա., Խզմալեան Թ., Կարապետեան Ա., Կարճիկեան Խ., Ղազարեան Գ., Ղազարեան Ա., Ղահրամանեան Ա., Խէչօ, Բժ. Մանդինեան, Յովհաննիսեան Տ., Քալանթարեան Լ., Ռոստոմեան Դ., Օհանջանեան Ս., Ջամալեան Ա., Նիկ. Աղբալեան եւ Մարտ. Յարութիւնեան:

«Հորիզոն», Երեքշաբթի, 30 Սեպտ., 1914, թիւ 215

Հ. Յ. Դաշնակցութեան 60-ամեակին նուիրուած ժողովածուին մէջ, հատորը կազմող Ս. Վրացեան Անդրանիկի յօդուածին կը կցէ հետեւեալ ծանօթագրութիւնը. *«Նիկոլ Դումանի մահուան օրերին, 1914 թ. Մեպտեմբերին, Անդրանիկ Թիֆլիսում էր՝ զբաղուած կամաւորական գնդերի կազմակերպութեան գործով: Այս յօդուածը թելադրեց մի ընկերոջ «Հորիզոն»ի Դումանին նուիրուած թուի համար»* (էջ 187):

ԸՆԿԵՐՈՋ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Երկիր գտնուած ժամանակս շարունակ ականջիս էր հասնում Նիկոլ, Նիկոլ, Դուման, Դուման անունը:

Եւ ահա մի օր 1904 թւին, ես բախտ ունեցայ Բագւում Նիկոլին տեսնելու:

Մի ամիս Նիկոլի մօտ ապրեցի:

Նիկոլը երկար, պարթեւ հասակով, համակրելի դէմքով ու ժպտերես մէկն էր:

Այլեւ մտածկոտ, սակաւախօս ու խորհրդաւոր:

Ես պատմում էի յաճախ հայրենիքից, իսկ նա իր կռիւներից:

Մի օր նորից խօսքը իր կռիւների մասին էր. պատմողը այս անգամ մի ուրիշ ընկեր էր. նա դէպքը չափազանցացրեց. Նիկոլը խստօրէն կտրեց պատմողի խօսքը եւ ինքը պատմեց իսկութիւնը:

Նիկոլը չէր սիրում չափազանցութիւններ. նա համեստ էր:

Նիկոլը գործի մարդ էր եւ ապրում էր իր ժողովրդի օրւայ ցաւերով եւ շատերի նման նա չէր մտածում կէս դար վերջը գալիք ցաւերի մասին:

Մի երեկոյ էլ, երբ նորից ժողոված զրուցում էինք, մշեցի ընկերներից մէկը պատմում էր Նիկոլին Մշոյ դաշտից ու թիւրքահայ ժողովրդի ցաւերից. այդ ժամանակ Շահրիկեան, որ հետաքրքրութեամբ լսում էր մշեցուն, բարձր ձայնով գոչեց.

– Դուք բոլորդ էլ ստրուկներ էք. չէ՞ք կարող բահերով ու գերանդիներով կռւել քրդերի ու թուրքերի դէմ:

Պատմողը զայրացած դէմքով նայեց Շահրիկեանին ու բացագանչեց. «Թէյ լոլոյ», ապա փոքր ինչ յետոյ ասաւ. «Մարդ, ի՞նչ ես խօսում. գերանդիներով կարելի՞ բան է մաուզէրների դէմ կռւել: Եթէ կարելի է, դուք գրողներդ գնացէք կռւեցէք»:

Պատասխանի վրայ ամէնքս ծիծաղեցինք, բայց ամէնից շատ Նիկոլը, որովհետեւ գործի մարդ էր եւ լաւ էր հասկանում մշեցու հեգնանքը:

Բագուի առաջին տեսակցութիւնից յետոյ մէկ էլ Նիկոլին պատահեցի Վառնայում. նա արդէն հիւանդ էր եւ նրա խօսակցութիւնների մէջ կար մի տեսակ դժգոհութիւն… կատարուող անց ու դարձը նրան չէին ոգեւորում. խո-

սողների թիւը կուսակցութեան մէջ շատացել էր իսկ գործողներինը՝ պակասել:

Այսօր, երբ գործի մարդու կարիքը կայ, Նիկօլն այլեւս չկայ… նա էլ գնաց, գնաց աւելացաւ իր նահատակ ընկերների շարքին:

Այսօր հերթը մեզ է հասել, թող օրհնուած լինի Նիկօլի ընտրած ճանապարհը:

Պաշտելի ընկեր, խոնարհւում եմ քո թարմ շիրմի առաջ, որպէս սրտապնդում այն սուրբ աւանդի, որ թողել ես մեզ:

ԱՆԴՐԱՆԻԿ

«Հորիզոն», Կիրակի, 28 Սեպտ., 1914, թիւ 214

Նիկոլ Դումանի հիւանդութեան վերջին օրերում

ՉԿԱՅ ԴՈՒՄԱՆԸ

Մեր մէջ չէ այլեւս այն վսեմ անձնաւորութիւնը, որը միշտ բարձր էր պահում իր ձեռքին բռնած գաղափարի վեհ դրօշակը եւ իր շուրջը բոլորում մեզ – իր աշակերտներին: Նրա խորաթափանց աչքերի մէջ մենք կարդում էինք նրա կրակոտ մտքի տենչերն ու յոյզերը, որ մեզ յոյս էին ներշնչում սուրբ գաղափարի իրագործման համար:

Սակայն այժմ այս պատմական խորհրդաւոր պահուն, երբ աւելի քան նրա կարող ղեկավարութիւնն էր հարկաւոր մեզ – նա չկայ…

Բայց թող հանգիստ լինին քո ոսկորները, թանկագին ղեկավար, որովհետեւ յետնորդներդ պահուն են իրենց սրտի խորքերում քո աւանդներն ու պաշտելի գաղափարը… հանգիստ քեզ…

ԴՐՕ
ԽԷՉՕ

«Հորիզոն», Կիրակի, 28 Սեպտ., 1914, թիւ 214



Անդրանիկ Օզանեան

Դրաստամատ Կանայեան

Ա. ՅԱՒԵԼՈՒԱԾ –

ՆԻԿՈԼ ԴՈՒՄԱՆԻ ՆԱՄԱԿՆԵՐԸ ԱՐՄԵՆԱԿ ԵՒ ԶԱՊԷԼ ԱՐԱՊԵԱՆ ԱՄՈԼԻՆ

Յաւելուածի այս բաժնին մէջ կը ներկայացուի Նիկոլ Դումանի նամակներու մէկ այլ տրցակ, բաղկացած 24 գրութիւններէ: Առաջին անգամ այս նամակներու յիշատակման հանդիպած ենք Գահիրէի «Յուսաբեր» օրաթերթի 1958 թ. Հոկտ. 27-ի համարին մէջ, ուր թերթի խմբագիրներէն հանրածանօթ Գաբրիէլ Լազեան, գրեթէ ամբողջ էջ մը նուիրելով անոնց, կը խօսի այդ նամակներու ձեռքբերման պարագաներուն մասին, ներկայացնելով միաժամանակ որոշ քաղուածքներ այդ գրութիւններէն, որոնց առաջինը կը կրէ 1909 Յունուարի 3, իսկ վերջինը 1912-ի Նոյեմբերի 23 թուականը:

Ահա թէ ինչ կը գրէ Գ. Լազեան այս առթիւ.–

«Տրապիզոնցի Արմենակ Արապեան կը բնակէր Իպրահիմ փաշա փոռոց, «Յուսաբեր»ի կից շէնքին մէջ: Արմենակ մեքենավարը եղած է «Բորժոմ» նաւին, որ կ'երթեւեկէր Պաթումի եւ Միջերկրականի միջեւ: Արմենակ եւ կինը՝ Զապէլ եղած են բարեկամներ Նիկոլ Դումանի, որ դարմանումի համար եկած էր Հելուան ու մնացած տարիէ մը աւելի (1909 Յունուարէն մինչեւ 1910 Մարտ:

Արմենակ Արապեանի կինը աւելի կանուխ մեռաւ, իսկ վերջին պատերազմի տարիներուն մեռաւ նոյնպէս Արմենակ: Զաւակներ չունէին: Արմենակին մտերիմ բարեկամն էր նկարիչ Վահրամ Մանավեան, որ անոր մահէն ետք բերաւ եւ «Յուսաբեր»ի խմբագրութեան յանձնեց Նիկոլ Դումանի քսանեւչորս նամակները, գրուած ընդհանրապէս տիկին Զապէլին, նաեւ ամուսինին, Հելուանէն, ապա Կ. Պոլսէն, Տրապիզոնէն, Էրզրումէն, Սալմաստէն, Թաւրիզէն, Վանէն եւ կրկին Պոլսէն:»

Խնդրոյ առարկայ նամակները տարիներով մենք փնտռած ենք ի զուր՝ Հ.Յ.Դ. արխիւի պահոցներուն մէջ եւ այլուր: Ի վերջոյ գտանք զանոնք Գահիրէի մեր վաստակաւոր ընկերներէն Տոքթ. Սուրէն Պայրամեանի մօտ, որ սկիզբը, 2012 թ. արդէն, սիրայօժար տրամադրեց մեզի անոնց լուսապատճէնները, ապա վերջերս (4 Յունուար 2020) բուն բնագիրները: Այստեղ պարտք կը համարենք մասնաւոր երախտագիտութիւն յայտնել յարգելի ընկերոջ, որ Եգիպտոսի խառն կացութեան պայմաններուն մէջ, այսքան տարիներ, կորուստէ փրկելով գուրգուրանքով պահած-պահպանած է, ինչպէս կը գրէ ինք, «Հայդուկապետ Նիկոլ Դումանի նամակներուն մասունքները»: Ընկերոջ իսկ համաձայնութեամբ՝ այս «մասունքները» շուտով իրենց արժանի տեղը կը գտնեն Երեւանի Հ. Յ. Դաշնակցութեան թանգարանին մէջ:

ԽՄԲ.

Առաջին այս նամակին թուականը – 3 Յունվ. 1909 – թէեւ շատ յստակ գրուած, այսուհանդերձ հարցական է, որովհետեւ 1909 տարուան Ապրիլ ամսուն Ն. Դուման տակաւին Կովկաս էր, Օգոստոս-Սեպտեմբերին կը մասնակցէր Պուլկարիոյ Վառնա քաղաքին մէջ կայացած Հ.Յ.Դ. հինգերորդ Ընդհ. ժողովին, իսկ Հելուանէն Ժընեւ՝ «Դրօշակ»ի խմբագրութեան ուղղած 12/25 Հոկտեմբերին (1909) նամակին սկիզբը կը գրէր *«Նոր Հելուան եմ եկել՝ բժշկուելու համար»*: Հետեւաբար չէր կրնար 1909 թ. Յունուար 3-ին Հելուան գտնուիլ: Բացայայտ վրիպակ է. հաւանաբար տարեթիւը պէտք է վերածել 1910-ի: Այս բոլորով հանդերձ, Արապեան ամոլին (Զապէլ եւ Արմենակ) ուղղեալ եւ բարեկամական ու մտերմիկ բնոյթ կրող գրութիւններու տրցակին շարքը կը պահենք անփոփոխ, այնպէս ինչպէս անիկա կը ներկայանայ մեզի:

3 *Յունվ.* (*ն*[*որ*]*տ*[*ոմար*]) 1909
Helouan (Egypte)

Զապէլ !

Այսօր ստացայ քո եւ Արմէնակի նամակները։ Ուրիշին գրելու կարիք չը կայ, որ քեզ հանդիպի կայարանում։ Մի հեռագիր կը տաս ինձ. եթէ տկար չեմ լինի՝ ինքս կը գամ հանդիպելու։ Իսկ եթէ չը կարողանամ գալ, ամենեւին դժուար չէ մէնակ Հէլվան գալդ։ Գահիրէի կայարանից կը նստես կառք եւ քշել կը տաս Հէլվանի կայարանը։ Այնտեղ տոմսակ կը վերցնես եւ ուղղակի կը գաս Հէլվան։ Այն էլ ասեմ որ իւրաքանչիւր կէս ժամը մէկ անգամ երկաթուղին գալիս է Հէլվան։ Ես քեզ կը հանդիպեմ Հէլվանի կայարանում, կամ առանց դրան էլ կարող ես նստել կառք եւ քշել տալ Hôtel Claremont, *որ հեռու չէ կայարանից։ Մի խօսքով՝ մանրամասն գիտես հասցէն եւ տեղական լեզուները, դրա համար ոչ մի դժուարութիւն չը կայ մէնակ գալու համար։*

Առ այժմ այսքանը։

Բարեւներս
Նիկ.

15/28 Հոկտ. 1909
Helouan (Egypte)

Յարգելի
Տիկին Զապէլ !

Երէկ Ձեր եւ Արամայիսի նամակները ստացայ։
Այսօր գնում եմ Գահիրէ եւ Ձեր նամակները հիւրանոցից կը վերցնեմ ու կ՝ուղարկեմ Ձեզ։
Մինչ այժմ դեռ ոչինչ չեմ արել. վաղը պիտի սկսեմ բժշկութիւնս — գուցէ նոր հիւանդութիւնից։
Սրա մէջ ներփակ նամակը խնդրեմ յանձնեցէք Արմէնակին։
Մայրիկին ու Արամայիսին բարեւներ, ընդունեցէք ե՛ւ դուք։

Յարգանքով՝
ՆԻԿ.

P.S. Վերջին նամակդ ստացայ այս վայրկեանին։ Որ նամակները յետ են ուղարկել, ուրեմն չեմ երթայ հիւրանոց։ Բլուզի համար իմացէք եւ մանրամասն գրեցէք ինձ։
Երթալուն դուք ունէիք <u>հինգ ոսկի</u> եւ մի քիչ մանր դրամ։
Ոտքերիս ցաւը անցել է։

ՆՈՅՆ

Նիկոլ Դուման Պոլիսէն Եգիպտոս մեկնող «Բորժոմ» նաւուն վրայ: Թիւ 1- ձախէն առաջինը՝ Արմենակ Արապեան («Բորժոմ»ի մեքենավար). 2- Նիկոլ Դուման (նստած՝ գլխարկով). 3- Երուանդ Գասպարեան՝ երկրորդ նաւապետ. 4- Զապէլ Արապեան:

1 Նոյեմբ. (Ն. տ.) 1909
Helouan (Egypte)

Յարգելի
Պարոն Արմէնակ!

Այսօր ստացայ Ձեր նամակը։
Մի քանի օր առաջ — չը գիտեմ ջղային դրութիւն էր, թէ ինչ — սաստիկ թոյլ էի՝ առանց որեւիցէ ցաւի։
Այժմ լաւ եմ — կազդուրւում եմ եւ արդէն սկսել եմ ընդունել վաննաներ։ Դրա համար էլ Ալէքսանդրիա գալ չեմ կարող եւ շատ ցաւում եմ որ չեմ կարող։ Եթէ մօտիկ ապագայում Ալէքսանդրիայում չը տեսնուինք, երեւի այդ տեսակցութիւնը կը յետաձգւի մինչեւ գարուն՝ Պոլսում։
Ջերմագին բարեւներ նաւավարներին։

Յարգանքով՝
ՆԻԿՕԼ

* * *

1 Նոյեմբ. (Ն. տ.) 1909
Helouan (Egypte)

Յարգելի
Տիկին Զապէլ!

Արմէնակի նամակի վերջում կարդացի Ձեր երկտողը՝ զարդարուած կօմպլիմաններով։ Շնորհակալ եմ։
Ստացայ նոյնպէս եւ Ձեր մօր երկտողը՝ իր այցետոմսի վրայ։
Ջերմապէս բարեւեցէ՛ք իմ ծանօթ Զաբէլի անծանօթ մօրը եւ ասացէք որ ես կատարել եմ միայն իմ պարտքս դէպի իր աղջիկը։
Մոռացայ Արմէնակին գրեմ, որ Ձեզ օպերասիօն անել տայ եւ թողնի բժշկուէք՝ ինչպէս հարկն է։ Իմ կողմից ասացէք նրան այդ։
Մօրքրոջն ու Արամայիսին բարեւներս։ Իսկ Ձեզ հարկաւոր չէ, որովհետեւ Արմէնակի մօտ առանց բարեւի էլ լաւ է։

Յարգանքով՝ ՆԻԿՕԼ

8 Նոյեմբ. (Ն. տ.) 1909
Helouan (Egypte)

Յարգելի
Տիկին Զապէլ!

Արմէնակի նամակից իմացայ, որ Ձեր օպերասիօնը արդէն կատարել են։ Շատ լաւ եղաւ, որ առանց օպերասիօնի չը գնացիք Ալէքսանդրիայից։

Երբոր կատարելապէս առողջանաք եւ բժիշկն ասի, որ հասել էք կատարեալ առողջ մարդու դրութեան, գրեցէք ինձ, որ Ձեզ եւ Ձեր մայրիկին հիւր հրաւիրեմ Հէլվան։

Նամակիս չպատասխանէք, մինչեւ որ բժիշկը չասի, թէ կարող էք պառկած տեղից վեր կենալ։

Բարեւներ Ձեզ (այս անգամ մի բեռ), Ձեր մայրիկին եւ Արտաշէսին։

Յարգանքով՝
ՆԻԿՕԼ

---

11 Նոյեմբ. (Ն. տ.) 1909
Helouan (Egypte)

Զապէլ!

Նամակդ ստացայ երեկոյեան։ Ինչպէս երեւում է, գրած է վատ տրամադրութեան տակ։ Ի՞նչ կայ յուսահատելու. օպերասիօն են արել եւ դրա հետեւանքով քիչ թուլութիւն է եկել վրադ։ Մի քանի օրից յետոյ կ՚անցնի եւ ամէն բան կ՚երթայ լաւ...

Միայն հարկաւոր է լինել ուրախ եւ պարապ բաների մասին չը մտածել ի զուր։

Յոյս ունիմ, որ այս նամակը քեզ հասած ժամանակ արդէն կազդուրուած կը լինիս եւ կը պատասխանես աւելի ուրախ տրամադրուած։ Իսկ եթէ տակաւին կազդուրուած չէ՛ս, այս նամակի պատասխանը յետաձգիր եւ ի զուր նեղութիւն մի՛ պատճառի՛ր քեզ։ Ե՞րբ ես կատարելապէս առողջանալու։

Ջերմագին բարեւներ ամէնքին եւ քեզ, ի հարկէ։

Յարգանքով՝
ՆԻԿՕԼ

17 Նոյեմբ. (Ն. տ.) 1909
Helouan (Egypte)

Զապէլ!

Երկու օր է, որ ստացել եմ Ձեր նամակը, բայց ծուլութեան եւ վատ տրամադրութեան պատճառով, ինչպէս տեսնում էք, նո՛ր եմ պատասխանում։

Գրում էք, որ առաջիկայ ուրբաթ օրը բժիշկը մի թեթեւ օպերասիօն եւս պիտի կատարի եւ այնուհետեւ կատարելապէս առողջ պիտի լինիք։

Կատարելապէս առողջանալու համար իւրաքանչիւր օպերասիօնից յետոյ հարկաւոր է հանգիստ կեանք, մաքուր օդ եւ լաւ սնունդ մօտաւորապէս վեց շաբաթ։ Բայց դրա մասին կը խօսենք ուրբաթ օրւանից յետոյ, այժմ դեռ վաղաժամ է։ Սրանով չեմ ուզում Ձեզ վախեցնել եւ վախենալու ոչինչ չը կայ, այլ կամենում եմ ասել, որ երեւի այս անգամ էլ հարկաւոր կը լինի Արմէնակի հետ չը գնալ եւ մնալ Եգիպտոսում — գուցէ բժշկի խորհուրդով Հէլվանում — դա՛ռնեալ երկու-երեք շաբաթ՝ կատարելապէս կազդուրւելու համար։ Այս բոլորը ապագայի խնդիր է ի հարկէ, եւ մօտիկ ապագայի,- առ այժմ բոլորովին աներկիւղ անել տուէք երկրորդ օպերասիօնը եւ ազատուեցէք միանգամից ընդ միշտ։

Իմ առողջութիւնը առհասարակ վատ չէ - չը նայելով որ ընդունում եմ վաննաներ եւ քաշս պիտի պակասի, բայց, ընդհակառակը, աւելանում է, թէեւ քիչ։

Ձերմ բարեւներս մայրիկիդ, Արտաշէսին եւ մօրքրոջն ու Արամայիսին։ Ընդունեցէք եւ դուք...

Յարգանքով՝ Ն.

10-ն Դեկտ. (Ն. տ.) 1909
Helouan (Egypte)

Զապէլ !

«Մնաս բարեւի» նամակդ ստացել եմ։ Ափսո՛ս, որ չը կարողացաք մի առժամանակ մնալ Հէլվանում՝ լաւ կազդուրւելու համար։ Ձեզ լաւ պահպանեցէք գոնէ Պօլսում, որ առողջանաք կատարելապէս, որը ամէնից գլխաւորն է։

Այս անգամ նամակս գրում եմ կարճ, որովհետեւ չը գիտեմ տեղ կը հասնի թէ չէ. Ձեր տուած հասցէի մէջ փողոցի անունը պարզ չի գրուած։

Բարեւներս Ձեզ եւ մայրիկիդ։
Նիկ.

2 *Յունվ.* 1910
Helouan (Egypte)

Արմէնակ!

Անցած նոր տարիդ շնորհաւոր, գալիք Ծնունդ ու Մկրտութիւնն էլ հետը։ Այսպէս է ծովային մարդկանց բանը, ժամանակին ոչինչ չեն լսի, ոչինչ չեն ստանայ։

Զապէլը լաւ է։ Վաննաները ընդունում է եւ դեղերն էլ մոռանալով ու յիշելով նոյնպէս։ Նոր-տարւայ երեկոյեան Երւանդենց տանն էինք. Զապէլի միտքն ընկար, մի քիչ տգտրգաց, բայց յետոյ անցաւ այդ վատ տրամադրութիւնը։ Մենք փոխել ենք հիւրանոցը, որի պատճառը, երեւի, գրած կը լինի Զապէլը։ Նոր հասցէն. Hôtel Sphinx, Maloum.

Ջերմագին բարեւներով՝
ՆԻԿՈԼ

---

6 *Փետրվ.* (հ[*ին*] տ[*ոմար*])1910
Helouan (Egypte)

Արմէնակ!

Պօլսեցու ասած՝ «նամակնիդ առի»։ Ուրախ եմ, որ հանգիստ տեղ էք հասել, ուրախ եմ մանաւանդ՝ որ բժիշկը Զապէլին գտել է լաւ։ Զապէլին ասա՛ որ ճանապարհին իրան պահպանի ցրտից որ Հէլվանի պարգեւած 5 *քիլօն չը կորցնի։ Հարսանիքից առաջ Զապէլը թո՛ղ երկու շարք կոճակներ կարի իր զգեստի վրայ, որ պարելու ժամանակ եթէ մի շարքը կտրուի, գոնէ միւս շարքը մնայ, ամօթ է։*

Իմ րեվմատիզմի ցաւերը համարեա անցել են։ Յոյս ունիմ մինչեւ Պօլիս գալս 102 *քիլօ դառնամ, այն էլ առանց գլխարկի։*

Այսուհետեւ ամէն անգամ երբ Բօրժօմը Ալէքսանդրիա գայ՝ իմաց տո՛ւր ինձ. ո՞վ գիտէ, գուցէ խելքիս փչեց, որ հեռանամ Հէլվանից։

Կոստանդին դեռ չեմ տեսել. երէկ երեկոյեան վարժուհուս միջոցով խնդրել էր բառարանը. վարժուհիս մոռացաւ որ հետը տանի, այսօր առաւօտեան ուղարկեցի ծառայի միջոցով։

Մեր հիւրանոցի բնակիչները բարեւում են ամէնքը. տխուր են, որ այլեւս պիանոյի վրայ ածող ու երգող չը կայ։ Իրանք մէջ տեղ են հանում չօնգուռնեը, բայց բան չի դուրս գալիս։

Բարեւներ Արտաշէսին ու մօրը։

Համբոյրներով — ես քեզ՝ դու Զապէլին։
ՆԻԿՈԼ

3 *Մարտ* 1910
Helouan (Egypte)

Սիրելի բարեկամներ!

Ստացել եմ Պոլսից գրած Ձեր երկու նամակը, թէեւ առաջինը — չը գիտեմ ինչո՞ւ — բաւական ուշ։

Ցաւում եմ, որ Արմէնակի մայրը վախճանուել է եւ դրանով աւելացրել աշխարհի որբ մարդկանց թիւը։ Բայց ի՞նչ արած,— դա կեանքի սովորական տուրքն է, որ պահանջւում է ամէն մարդուց։ Հաշտուեցէ՛ք իրողութեան հետ եւ իրարու մխիթարեցէք։

Ես, որ հարցրել էի Պոլսոյ եղանակների մասին,— ամենեւին մտադիր չէի գալ այդտեղ «Բօրժոմից» առաջ։ Ամենաշուտը կը գամ Բօրժոմի հետ միայն։

Ուրեմն Ալէքսանդրիա հասնելու պէս Արմէնակն ինձ կը յայտնի, թէ քանի՞ օր է կանգ առնելու Բօրժոմը եւ ինչպէ՞ս են եղանակները Պոլսում։ Ճիշտ է՝ ձանձրացել եմ այստեղ, բայց վախենում եմ շուտ գամ եւ ընկնեմ ցրտերի։

Ռեվմատիզմս շարունակւում է նոյն եռանդով։ Սկսել եմ ընդունել արեւի վաննաներ. տեսնենք դա՛ ինչպէ՞ս կը լինի։

Թո՛ղ Արմէնակը նախօրօք յայտնի ինձ Պոլսից, թէ մօտաւորապէս ե՞րբ կը հասնի Ալէքսանդրիա Բօրժոմը, որ ըստ այնմ տեսնեմ իմ պատրաստութիւնները — եթէ գալու լինիմ այս անգամ։

Սֆինքսի բոլոր ծանօթները բարեւում են։ Ընդունեցէք եւ իմս։

Յարգ. Ն.

8 *Մարտ* (*Ն. տ.*) 1910
Helouan (Egypte)

Սիրելի բարեկամներ!

Ստացել եմ Ձեր բոլոր նամակները, ինչպէս ե՛ւ Արմէնակի վերջին նամակը։
Իսկ ես, Ձեր գնալուց յետոյ, գրում եմ ահա՛ երրորդը։
Հարցնում էք իմ առողջութեան մասին։
Վերջին շաբաթը ինձ զգում եմ շատ լաւ։ Սկսել եմ արեւի վաննաներ եւ հէնց դրանով էլ գուցէ պէտք է բացատրել իմ առողջութեան փոփոխումը դէպի լաւը։
Միայն ձանձրոյթը սպանիչ է։ Ուզում եմ փախչեմ, բայց վախենում եմ ցրտերից։ Ամէն նամակի մէջ տեղեկութիւն տուէք այդտեղի եղանակների մասին։ Բացի դրանից, այս անգամ «Բօրժօմը» Ալէքսանդրիա հասնելուն պէս Արմէնակը թո՛ղ հաղորդի ինձ, թէ քանի՞ օր նաւը պիտի կանգ առնի Ալէքսանդրիայում եւ յաջորդ անգամ ե՞րբ նորից Ալէքսանդրիա կը հասնի Բօրժօմը։ Եթէ երկրորդ անգամ շատ ուշանալու լինի, ի՛նչ ասել կ՚ուզի, որ ես կարող եմ գալ նա՛եւ ուրիշ նաւով եւ չսպասել Բօրժօմին։
Բժշկից ի միջի այլոց հարցրէք, թէ ո՞րքան նպաստաւոր է Մեծ-Կղզիի օդը ռեվմատիզմի համար եւ հետեւանքը հաղորդեցէք ինձ։
Երեւի հարսանիքն արդէն արել էք. շնորհաւոր լինի եւ բախտաւոր։

Բարեւներով՝
Ն.

5/18 *Մարտ*, 1911
Պոլիս

Սիրելի Արմենակ!

Իկրայի փոխարէն նամակդ ստացայ, առանց Ղալաթիա իջնելու։
Այստեղ միակ նորութիւնն այն է, որ Տակսիմի հասարակաց այգուն կպած խանութները երէկ գիշեր այրուեցան։
Ձերոնք ամէնքը լաւ են, Սահակ աղան էլ շուտ-շուտ գնում է մաքսատուն՝ ապրանքը ստանալու համար։
Ձեր գնալուց յետոյ մի անգամ գործս հասաւ ռիգօլոյի։
Բարեւներ Զապէլին, Երւանդին, Արտաշէսին, Արամայիսին ու մօրը եւ քեզ։
ՆԻԿՕԼ

5 Մայիս, 1911
Տրապիզոն

Զապէլ!

Ամսոյս 3-ին հասայ Տրապիզոն առանց ալեկոծութեան։ Ճիշտ է, ծովի վրայ ոտքերս սկսեցին ցաւել — երեւի խոնաւութիւնից, բայց եւ այնպէս ստիպւած եմ ուշադրութիւն չը դարձնել դրա վրայ եւ այսօր շարունակում եմ ճանապարհս։ Պատմեմ թէ ինչո՞ւ եւ ինչպէ՞ս։

Քո հեռանալուց քիչ յետոյ տղերքը խմբովին եկան նաեւ ինձ ճանապարհ ձգելու եւ հետերնին բերին ինձ մի նոր նամակ՝ ստացւած Թաւրիզից։ Այդ նամակը ներփակ ուղարկում եմ, որ կարդաս եւ մանրամասնութեանը տեղեկանաս։ Ինձ կանչում են շտապով եւ ես էլ շտապում եմ գնալ, որ առաջարկած պաշտօնը ձեռքիցս բաց չը թողեմ։ Երկու տարւայ պարապութիւնը ինձ թէ ձանձրացրել է եւ թէ մաշել գրպաններս։ Ես դարձեալ նամակ կը գրեմ թէ ճանապարհից եւ թէ տեղ հասնելուց յետոյ։ Ջերմագին բարեւներս քեզ, Արմէնակին, հայրիկիդ, մայրիկիդ, դոկտորին, Բիատրիսին, Երւանդին, Լեւոնին, հօրաքրոջը եւ այլն։

Յարգանքներով՝
ՆԻԿՕԼ



31 *Մայիս* (*Հ. տ.*), 1911
Էրզրում

Զապէլ!

Ինչպէս տեսնում ես, դեռ ես Էրզրում[ում]ն եմ։ Անտէր երկիր է, անձրեւի ու գետերի ջրերի առատութեան պատճառով դադարած է երթեւեկութիւնը — ո՛չ քարւան կայ Վան գնացող, ո՛չ էլ մի ընկեր ֆայտօնով գնացող, իսկ մէնակ ֆայտօնն արժէ մինչեւ Վան 14 *լիրա, երկու ոսկի էլ ճանապարհի ծախս, ուրեմն ընդամէնը* 16 *ոսկի, որ մի հոգու համար չափազանց շատ է...*

Պարապութիւնից ինձ տուել եմ որսորդութեան(1)*, բայց չափազանցրած կերպով. որսի համար մի գիշեր մնացել եմ բաց երկնքի տակ, ցրտի առաջ անպատսպար եւ մրսել ու հիւանդացել։ Ինձ մխիթարում եմ նրանով, որ խփել եմ* 23 *սագ եւ* 4 *բադ։* 16-17 *օր առաջ քեզ մի նամակ եմ գրել Էրզրումից Պարիզ։ Նրանից յետոյ չը գրելուս պատճառը եղել է հիւանդութիւնս, մէկ էլ չեմ իմանում թէ իսկապէս ո՞ւր ես գտնւում այժմ — Պօլսո՞ւմ, թէ Պարիզում։ Յամենայն դէպս, այժմ ես գրում եմ Պարիզ՝ այնտեղ լինելդ հաւանական գտնելով։ Ես Վանում երկար չեմ մնայ — ընդամէնը* 2-3 *օր եւ յետոյ իսկոյն կ՚անցնեմ Պարսկաստան։*

Մինչ այժմ քեզանից ո՛չ մի նամակ չեմ ստացել եւ յոյս էլ չունիմ ստանալու, մինչեւ որ չը հասնեմ Թաւրիզ եւ հասցէ չուղարկեմ։

Իմ ճամբորդութեան այս մի ամսւայ մէջ ո՛չ մի տեղեկութիւն չունիմ նա՛եւ իմ եղբայրներից — աշխարհից բոլորովին կտրւած եմ եւ անց ու դարձին անգիտակ։ Այս յիմար դրութիւնը երեւի կը շարունակւի դա՛ր ձեալ մի ամիս։

Ռոստոմին Պոլսից յայտնեցին, որ Նեպտունը ծախել են 600 *ոսկով. ուրեմն Պարիզի ծախքդ արդէն պատրաստւել է։ Այժմ չեմ հարցնում, թէ ի՞նչ պիտի անես Պարիզից յետոյ եւ ե՞րբ պիտի ազատւես Պարիզից, որովհետեւ անօգուտ է եւ ո՞ւր ու ի՞նչ հասցէով գրելդ դեռ չը գիտես։ Կարող էի, ի հարկէ, հէնց այժմ որեւիցէ հասցէ տալ Թաւրիզում, բայց ի՞նչ օգուտ դրանից, քանի որ մարդ չը գիտէ թէ այս խարաբա երկրում սաղ-սալամաթ տեղ պիտի հասնի՞։*

Եղբօրդ — Երուանդին — մի նամակ եմ գրել Էրզրումից, իսկ Արմէնակին ուզում եմ գրել Թաւրիզ, որ կարողանամ հասցէ տալ եւ պատասխան ստանալ։

Այսքանով առ այժմ բաւականացիր։

Ջերմ բարեւներս
ՆԻԿՕԼ

1.- Ճանօթ է որ Ն. Դուման, որքան վարպետ նշանառու, նոյնքան սիրահար էր որսորդութեան:

9/22 *Յուլիս* 1911
Սալմաստ

Զապէլ!

Հազար ու մի նեղութիւններով եւ ճանապարհին մի քանի անգամ հիւանդանալով՝ վերջապէս հասայ Սալմաստ։ Այստեղից մինչեւ Թաւրիզ մնում է 3 *օր, բայց քիչ կը հանգստանամ՝ յետոյ կ՚երթամ։ Անատոլուն կամ ուրիշ խօսքով՝ Տաճկա-Հայաստանը ճանապարհորդելը մի կատարեալ տանջանք է։ Մերկ սարեր, լերկ քարեր, շարունակ «ենիչ-եօխուշ»*(1)*, ժայռեր, չոր, ցամաք, սաստիկ ցուրտ կամ այրող տաք եւ այդ բոլորից յետոյ երգում են՝ «Հայաստան երկիր դրախտավայր»։ Եթէ այդ երգը գրողը ձեռքս ընկնէր, ականջիցը կը բռնէի եւ կը պտտացնէի Անատոլուն, որ իր աչքով տեսնէր ու ինձ ասէր թէ ի՞նչն է դրախտի նման։ Այս նամակս կարճ եմ կտրելու, որովհետեւ յոգնած ու ջարդուած եմ։ Առ այժմ նամակ գրիր ինձ հետեւեալ հասցէով։*

Monsieur Mésrop Ter-Hakopian
Յանձնել Նիկոլին
Tauris-Perse

Ջերմ բարեւներս
ՆԻԿՈԼ

1.- «Վայրէջք-վերելք»։

3 Օգոստ. 1911
Թաւրիզ

Սիրելի Արմէնակ!

Պօլսից հեռանալուց յետոյ քեզ գրել եմ ընդամէնը մի նամակ , այն էլ Բաթումի հասցէով։ Նոր եկայ Թաւրիզ եւ ստացայ քո առաջին նամակը, որից երեւաց որ դու արդէն Անգլիայում պիտի լինիս։ Ես հազար ու մի նեղութիւններով եկայ, այսքան երկար ճանապարհ կտրեցի, որ անցնեմ ինձ խոստացած պաշտօնի գլուխը, բայց գործը դեռ կազմակերպւած չէ։ Եթէ աջողւի էլ շուտով կազմակերպել, այնուհետեւ պիտի ծագի մի նոր դժւարութիւն։ Վանում մի ներկայացման ժամանակ հիւպատոսը(1) հէնց իմ աչքի առաջ լրջօրէն հետաքրքրւեց իմ անձնաւորութիւնով եւ երեւի քաղեց հարկաւոր տեղեկութիւնները։ Յետոյ Թաւրիզ հասայ թէ չէ, խկոյն լուր տուին ինձ, որ Կովկասից պաշտօնապէս հեռագրել են այստեղ, թէ ես Տաճկաստանից անցել եմ Պարսկաստան։ Թէեւ ես եկել եմ պարզապէս պաշտօնի համար, բայց քանի որ նախկին Շահի Պարսկաստան մտնելու խնդիրը կայ մէջ տեղ, երեւի իմ գալը կապում են այդ հարցի հետ եւ դրա համար էլ լուրջ ուշադրութեան արժանացնում ինձ։ Առ այժմ բռնել եմ զգոյշ ու սպասողական դիրք եւ աչք եմ տնկել հետեւանքին։ Ընդամէնը մի նամակ էլ ստացել եմ Զապէլից — դարձեալ Թաւրիզում։ Երեւում է որ Փարիզ է, բայց նամակը այնքան հին է, որ չը գիտեմ թէ այժմ ինչպէ՞ս է նա եւ ի՞նչ է անում։ Հիմա քեզ նամակ եմ գրում, բայց նրան չը պիտի կարողանամ գրել, որովհետեւ ասում էր որ ակադեմին բաց է լինելու մինչեւ Օգոստոսի 15-ը։ Այդ հաշւով մինչեւ նամակս Փարիզ հասնելը ինքը կը հեռանայ առանց ստանալու։ Ուրեմն ես նրան նամակ կը գրեմ, երբ հասցէ ստանամ իրենից կամ քեզանից։ Այս մասին հաղորդիր իրեն։ Իմ առողջական դրութիւնը առ այժմ վատ չէ. ինչպէ՞ս էք դու եւ Զապէլը։ Հազիւ[?] գնացել հասել ես Անգլիա եւ պիտի մնաս երկար. մի քիչ սովորիր դրանց լեզուն, մանաւանդ նաւագնացութեան վերաբերեալ։

Բարեւներս քեզ, Երւանդին եւ միւսներին։
ՆԻԿՕԼ

1.- Խօսքը ռուս հիւպատոսի մասին է:

11/24 Օգոստ. 1911
Թաւրիզ

Սիրելիք,
Արմէնակ եւ Զապէլ!

Երէկ ստացայ Ձեր միացեալ նամակը։ Այնքա՛ն անհաստատ ձեռքով է գրած Զապէլինը, որ եթէ գրած էլ չը լինէիք թէ հիւանդ է, այնուամենայնիւ ես պիտի հասկանայի այդ։

Այսպէս թէ այնպէս, ուրախ եմ, որ նա այժմ լաւ է եւ առողջանալու ճանապարհի վրայ։

Ճանապարհորդութիւնս չա՛տ երկար տեւեց, շնորհիւ Ձեր հայրենիքին, որին երգի մէջ ասում են «Հայաստան՝ երկիր դրախտավայր», բայց իրօք դրախտի հետ ո՛չ մի նմանութիւն չունի եւ ներկայացնում է մի կատարեալ անապատ։ Ու այսքան չարչարանքից յետոյ՝ գոնէ պատրաստ լինէր ինձ խոստացած գործը եւ ես իսկոյն պաշտօնի անցած։ Անպիտանները, ինչպէս յատուկ է հային, միայն ժողովներ են արել շարունակ, ճառեր խօսել ու լսել, պատրաստել ու տպագրել թղթերը եւ պատւիրել զանազան ապրանքների նմուշներ(1)։ Այդ բոլորից յետոյ՝ հիմնադիրները այժմ ուզում են այդ գործը միացնեն մի ուրիշ արդէն պատրաստի գործի «Էկօնօմ» անունով, որը դա՛րձեալ իրենցն է եւ երեք տարի է որ գոյութիւն ունի իր կազմ ու պատրաստ ծառայողներով։ Այնուամենայնիւ խոստանում են ինձ չը թողնել առանց գործի կամ պաշտօնի, քանի որ պատճառ են դառել իմ այստեղ գալուն։ Այս դէպքում էլ ծագում է այժմ մի ուրիշ դժւարութիւն։ Բանից երեւում է, որ Կովկասից հեռագրել են այստեղի հիւպատոսին, որ ես Տաճկաստանից անցել եմ Պարսկաստան։ Ես պարզապէս գործ ու ապրուստ եմ փնտրում, իսկ այդ յիմարները կարծում են թէ բանակներ պիտի կազմակերպեմ եւ դուրս գամ իրենց ազիզ բարեկամ ex-Շահի դէմ... բայց քանի որ համոզւած են այդ թիւրիմացութեան մէջ,- չը գիտեմ թէ ի՞նչպէս պիտի կարողանամ պաշտօն վարել կամ գործ սկսել(2)։

Այս վերջին Ձեր միացեալ նամակից բացի, ես ստացել եմ ընդամէնը մի նամակ Զապէլից եւ մէկն էլ Արմէնակից։ Իսկ ես մինչ այժմ գրել եմ ընդամէնը երկու նամակ Արմէնակին, որից մէկը Բաթումի հասցէով, միւսն էլ Անգլիայի եւ երեք նամակ էլ Պարիզ Զապէլին, բոլորն էլ Տիկ. Gurdjian-ի հասցէով։

Դրանից բացի, Պօլիս գրել եմ մի նամակ Երւանդին, միւսն էլ Զապէլին։ Ուրեմն ես մէնակ աւելի շատ եմ գրել, քան թէ դուք երեք հոգով միասին։ Այդ վնաս չունի, միայն թէ ինձ համար հաճելի կը լինէր, որ Զապէլը շուտով առողջանար վերջնականապէս։

Ես կարծում էի, թէ Նեփտունի տակից դուրս ես եկել անվնաս, Արմէնակ։ Բայց քանի որ գործի մէջ ես դրել մօտ 90 ոսկի եւ փոխարէնը ստացել միայն երկու ոսկի, ուրեմն արժէ որ այդ գումարը պահես անձեռնմխելի, իբրեւ յիշա-

տակ քո վաճառականական փայլուն ընդունակութիւնների…

Պոլսին կարօտել եմ։ Եթէ գործս այստեղ անաջողութեան հանդիպի եւ Պոլսում գտնեմ թէկուզ մի թեթեւ յենարան, միգուցէ նորից վերադառնամ։

Որպէս զի այդ մեծ քաղաքում պարապութիւնը ճանձրալի չլինի Ձեզ համար, շուտ-շուտ նամակ գրեցէք դա՛րձեալ նոյն հասցէով, այսինքն գոյութիւն չունեցող "Progrès"*-ի։*

Ջերմագին բարեւներ ամէնքիդ։
Ն.

1.- «Ջանազան ապրանքների նմուշները» պէտք է հասկնալ զէնք-զինամթերքի իմաստով:
2.- Ճիշդ է որ ռուսական իշխանութիւնները ուշի ուշով կը հետեւէին Նիկոլ Դումանի տեղափոխութիւններուն, բայց վերջինս, գաղտնապահական նկատումներով, իր Պարսկատան երթալու պատճառը կը ներկայացնէ իբրեւ զուտ անձնական՝ պաշտօն մը կամ գործ մը ճարելու նպատակով:

6/19 *Սեպտ.* 1911
Թաւրիզ

Սիրելիք!

Երէկ երեկոյեան ստացայ երկուսիդ վերջին նամակները։ Ուրախ եմ, որ Ձապէլը այժմ լաւ է։

Ինչ վերաբերում է ինձ ու պաշտօնիս, պէտք է ասեմ որ մի արտակարգ հանգամանք ամէն բան կերպարանափոխել է։ Վեց օր է Թաւրիզը պաշարուած է միապետականներից եւ մենք ամէն օր թրխկոցի մէջ ենք։ Երեւի դեռ երկար կը տեւի եւ տեսնենք վերջիվերջոյ ո՞վ դուրս կը գայ յաղթական։ Առ այժմ կռիւները լինում են շատ հաճելի կերպով։ Ցերեկները կռւում են, գիշերները երկու կողմն էլ քաշւում հանգստանալու եւ քնելու։ Այս ձեւը շատ յարմար է հիւանդի համար։ Մինչեւ հիմա մեր զոհերի թիւն է երկու… ձի։ Հերթը մարդկանց էլ կը հասնի, ի հարկէ, բայց թէ ե՞րբ, ո՞րքան եւ ո՞վքեր — Աստուած գիտէ։

Ժամանակը հիմա սուղ է եւ առ այժմ բաւականացէք այսքանով։

Ջերմագին բարեւներս
Ն.

20 Սեպտ. (Հ. տ.) 1911
Թաւրիզ

Սիրելի Արմէնակ!

Ստացայ նամակդ։ Յանկանում ես ինձ նորից տեսնել Պոլսում։ Այդ ես էլ եմ ուզում, բայց ափսո՛ս, որ չեմ կարող իսկոյն ճանապարհուել, որովհետեւ Թաւրիզը դեռ պաշարուած է, ճանապարհներն էլ վտանգաւոր եւ, ի լրումն ամենայնի, ինքս էլ արդէն տիտղոսաւոր խան։ Անցեալ օրը պաշտօնապէս շնորհակալութեան նամակ ստացայ Անջումանից՝ ծիծաղելի վերնագրով(1)։ Եթէ այդ վերնագիրը թարգմանենք հայերէն, դուրս կը գայ այսպէս. «Շահի պարծանք Ղարա-բաբա խան «քրիստոնիա»։ Այս տիտղոսի երկրորդ աստիճանը, կարծեմ, պէտք է լինի «Տէրութեան (պետութեան) պարծանք»։ Տեսնում ես, Պարսկաստանում ամէն բան հնարաւոր է եւ հեշտ։ Վերջին երեք շաբաթւայ ընդհարումների ժամանակ սահմանադրական աջամներից սպանուած է ու վիրաւորուած մօտ 20 հոգի, իսկ մասնակցող հայերի կողմից սպանուած է երկու... ձի։ Երեւի պատճառն այն է, որ հայերը ընտրովի են, լաւ կազմակերպուած եւ դրա համար էլ միապետական աջամները շուտ են երես դարձնում նրանցից։ Այն էլ ասեմ, որ հայերն ամէնքը ձիաւոր են եւ ապրում են քաղաքի կենտրոնում ու քաղաքի ո՛ր ծայրումն էլ կռիւ է ծագում՝ իսկոյն հասնում են։ Առ այժմ այսքանը եւ ջերմագին ողջոյններս։

Քո ԲԱԲԱ

Հասցէս նոյնը։

1.- Անջումանը պարսիկ սահմանադրականներու յեղափոխական կոմիտէն է։

---

29 Յունվ. (Հ. տ.) 1912
Վան

Սիրելիք!

Գրեթէ երկու ամիս է, ինչ որ դուրս եմ եկել Թաւրիզից եւ այս ձմրան խստութիւններին սար ու ձոր ընկած՝ վերջապէս հասել եմ Վան։ Վանում ստացայ Արմէնակի նամակը Բաթումից, Զապէլինն էլ Պարիզից — երկուսն էլ հին եւ ղրկուած իմ հին հասցէով Թաւրիզ։ Այժմ չը գիտեմ Զեզանից ով ո՞րտեղ է, դրա համար էլ գրում եմ երկու նամակ՝ Պոլիս եւ Պարիզ ու գրում եմ կարճ, մինչեւ որ իմանամ տեղերնիդ։ Առողջութիւնս նոյնն է, ինչ որ առաջ։ Ես էլ շուտով ճանապարհ կ՚ընկնեմ Պոլիս, եթէ ճանապարհները բաց լինին։ Հակառակ պարագային՝ կը սպասեմ մինչեւ գարուն։ Առ այժմ ցտեսութիւն եւ ջերմ բարեւներ։

ՆԻԿՈԼ

29 Յունվ. 1912
Վան

Սիրելի Զապէլ!

Վերջին նամակդ, գրուած դեկտ. սկզբներում, նոր ստացայ Վանում։ Մի նամակ էլ, դարձեալ հին, ստացայ Արմէնակից — նոյնպէս Վանում։ Գրեթէ երկու ամիս է, որ Թաւրիզից հեռացել եմ ու սար ու ձոր ընկած վերջապէս հասել Վան։ Այժմ չը գիտեմ Զեզանից ով ո՞րտեղ է, դրա համար էլ գրում եմ երկու նամակ — Պօլիս ու Պարիզ եւ գրում եմ կարճ, մինչեւ որ իմանամ տեղերնիդ։ Առողջութիւնս նոյնն է, ինչ որ առաջ։ Ես էլ շուտով ճանապարհ կ'ընկնեմ Պօլիս, եթէ ճանապարհները բաց լինին։ Հակառակ պարագային՝ կը սպասեմ մինչեւ գարուն։ Առ այժմ ցտեսութիւն եւ ջերմ բարեւներ։

Յամենայն դէպս գրիր երկու տող մի նամակ Վան, «Աշխատանքի» խմբագրութիւն, տալ Նիկօլին։

ՆԻԿՕԼ

---

20 Յունիս (հ. տ.) 1912
Վան

Սիրելի Զապէլ!

Վերջապէս մի նամակ ստացայ քեզանից հէնց այսօր։ Ասում ես, որ շատ համբերող ես եւ մեղադրում ես ինձ որ նամակ չեմ գրում քեզ։ Լաւ կը լինէր, որ իսկապէս համբերող լինէիր ու նախ եւ առաջ գիտենայիր նամակներ գրե՞լ եմ, թէ չէ։

Անցեալ տարի Դեկտեմբերի սկզբին ստիպւած եմ եղել դուրս գալ Թաւրիզից եւ մինչեւ Յունվարի վերջը թափառել եմ սար ու ձորում՝ ձմեռւայ ձիւների վրայ։ Ուրեմն այդ երկու ամիսը չէի կարող նամակ գրել։ Յետոյ հասնելով Վան մտածել եմ, թէ ո՞ւր գրեմ եւ ի՞նչ հասցէով, քանի որ նամակագրութիւնս երկու ամիս ընդհատելուց յետոյ, չը գիտէի թէ ո՞րտեղ ես դու եւ ո՞րտեղ Արմէնակը։ Այդպիսի պայմաններում ինձ մնում էր օգտուել հին հասցէներից եւ գրել եա՛ բախտ։ Եա՛ բախտ գրեցի բոլոր հին հասցէներով եւ մի՛շտ Recommandée(1).

Գրեցի Պարիզ՝ քո հիւրանոցի հասցէով։

Գրեցի Պօլիս՝ Երւանդի անունով, Pangalti 185, քեզ յանձնելու համար։

Գրեցի Բաթում, այն էլ երկու անգամ, Արմենակի հասցէով։

Ու այնուհետեւ շարունակ սպասեցի, որ որտեղից որ է կը ստանամ գէթ մի նամակ ու հասցէ, որ նորից սկսեմ նամակագրութիւն։

Եւ սպասելս շա՛տ երկար տեւեց։

Վերջապէս անցեալ շաբաթ մի նամակ ստացայ Արմէնակից, Բաթումից, եւ

իսկոյն պատասխանեցի։ Մի շաբաթ յետոյ նորից նամակ ստացայ Արմէնակից, բայց վրան գրած թուականից երեւաց, որ այդ վերջին նամակը աւելի առաջ էր գրուած, քան թէ իմ արդէն ստացած նամակը։ Այսպէս են Ձեր Տաճկաստանի կարգերը — ամէն բան անկանոն, ամէն ինչ թարս...

Այսօր էլ ստացել եմ քո նամակը, բայց հասցէ չես տուել։ Եթէ Երեւանդի հասցէով գրեմ, գուցէ դա՛րձեալ տեղ չը հասնի։ Լաւ է, որ Արմենակը տուել է Մանթաշեւի Պօլսի հասցէն։ Կը գրեմ այդ հասցէով դա՛րձեալ եա՛ բախտ։ Որովհետեւ կարծում եմ, որ նրանց կառավարիչը նոր է եւ գուցէ այս կամ այն պատճառով նամակս քեզ չը հասնի։

Ինչ եւիցէ. այժմ իմ մասին...

Ես այստեղ ակամայ վաճառական եմ. առեւտուրս ո՛չ մի օգուտ չունի, դրա համար էլ մտադիր եմ փախչել Պօլիս։ Եթէ ինքս էլ չը փախչեմ Պօլիս, երեւի կառավարութիւնը ինձ զօռով կը բերի Պօլիս։ Երկու ամիս է Վալին ու փօլիս-մուդիրը զահլէս տանում են, թէ Պօլսից կառավարութիւնը պահանջում է, որ ես ու ինձ հետ եկած ընկերներս գանք Պօլիս։ Ես էլ հակառակւել եմ եւ միշտ ասում եմ, թէ ոչ ոք իրաւունք չունի իմ տեղից ինձ շարժելու, հետեւապէս, ես չեմ գնայ իմ կամքով. եթէ կառավարութիւնը ուզում է, թո՛ղ ինձ Պօլիս տանի զօռով, ոստիկանների միջոցով։ Այս կռիւը հեռագիրներով ու նամակներով գցել ենք Պօլիս, ներքին գործոց նախարարին։ Ուրեմն կամ ձեռք կը քաշեն ինձանից եւ ես ձանձրացած այստեղից — աշունը կը գամ Պօլիս իմ կամքով, կամ թէ մօտ ժամանակներս ինձ Պօլիս կը [տանի] կառավարութիւնը զօռով։ Այսպէս թէ այնպէս, իմ Պօլիս գալը շատ հաւանական է, եթէ որ եւիցէ մի նոր անակնկալ չը պատահի։ Ա՛նքան եմ վարժւել անակնկալների, որ վախենում եմ որ եւիցէ մէկին հաստատ խօսք տալ։

Իմ առողջութիւնս նոյնն է, ինչ որ առաջ, իսկ դու, սիրելի խանում, ո՛չ մի խօսք չես գրում քո առողջութեան մասին լրջօրէն։ Անպատճառ մանրամասն նամակ գրիր նոյն հասցէով — այսինքն Van, Ichkhan, *յանձնել Դումանին. Նիկօլ չգրես, որովհետեւ ուրիշ մի հատ Նիկօլ*(2) *էլ կայ։ Իսկոյն աւելացնեմ, որ այսօր ստացածս նամակդ հասել է ուղղակի իմ ձեռքը, թէեւ վրան Նիկօլ էր գրուած։*

Առ այժմ ջերմագին բարեւներ, մինչեւ հասցէ տալդ։ Բարեւներ նոյնպէս Ձեր տան բոլոր անդամներին եւ Օլգային։

Քո Նիկ.

1.- Ֆրանսերէն՝ ապահովագրեալ։
2.- Ակնարկութիւնը Վանայ Նիկոլն է, բուն անունով Պօղոսեան-Միքայէլեան Նիկոլ։

11 Յուլիս, 1912, Վան

Սիրելի Զապէլ!

Երկու շաբաթ կը լինի, որ քեզ երկար նամակ եմ գրել Մանթաշեւի բիւրոյի հասցէով։ Ի միջի այլոց գրել էի, որ երեւի կը գամ Պոլիս շուտով, կամ աշնանը։ Գուշակութիւնս արդէն կատարւում է։ Այս քանի օրը գնում եմ Աղթամար՝ մի քանի օր ծովում լողանալու։ Այնտեղից կը վերադառնամ Վան եւ Օգոստոսի սկզբին կը ճանապարհւեմ դէպի Պոլիս։ Երեւի տեղ կը հասնեմ Սեպտեմբերին։ Ուրեմն այս նամակը քեզ հասնելուց յետոյ՝ այլեւս ինձ նամակ չը գրես, քանի որ ես կը լինեմ ճանապարհին եւ նամակդ, ուրեմն, իմ ձեռքը չի հասնի։ Արմէնակին եւ Զերայիններին ջերմ բարեւներ։

ՆԻԿՈԼ

---

23 Նոյեմբ. 1912
Պոլիս

Զապէլ!

Վերջին ժամանակս դարձել ես կասկածոտ դէպի ամէնքը եւ ամէն բան։ Որպէսզի յիմար ու անհիմն կասկածներ չը տանես՝ Արմէնակին գրած նամակս ղրկում եմ քեզ բաց։ Կարդա՛ եւ փակելուց յետոյ տուր Երւանդին ղրկին Արմէնակին։

Ես ինքս անձամբ չը կարողացայ գալ, որովհետեւ ժողով ունիմ, դրա համար էլ նամակը ղրկեցի քեզ։

ՆԻԿՈԼ

Նիկոլ Դումանի կիսանդրի, Գիւմրի

Նիկոլ Դումանի կիսանդրին համանուն կոմիտէութեան ակումբին մէջ,
Պուրճ Համուտ-Պէյրութ:
Քանդակագործ՝ Գագիկ Գէորգեան (Գագօ)

ՆԻԿՈԼ ԴՈՒՄԱՆԻ *ՆԱԽԱԳԻԾ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹԵԱՆ* ԳՈՐԾԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՆ ԹՈՒԱԿԱՆԻՆ ՄԱՍԻՆ

Անդրանիկի «Մարտական հրահանգները» եւ Նիկոլ Դումանի «Նախագիծ ժողովրդական ինքնապաշտպանութեան» գործերը, անկասկած հայկական ռազմարուեստին նուիրուած առաջին լուրջ աշխատանքներն են, հիմնուած զոյգ հայդուկապետներու ֆիտայական հարուստ փորձին վրայ: Հոս մեր առաջադրանքէն դուրս է անոնց արժանիքներուն մասին խօսիլ: Այդ մասին արտայայտուած են ու դեռ կ՚արտայայտուին հաւանաբար ռազմական արուեստին գիտակ հեղինակութիւնները: Մեր նպատակն է այստեղ պարզել Ն. Դումանի «Նախագծի» հրատարակութեան ճշգրիտ թուականը: Համաձայն գրքոյկին վրայ գրուածին՝ ան լոյս տեսած է 1907-ին, եւ այնուհետեւ յաջորդական տպագրութիւններուն, ինչպէս նաեւ այդ մասին եղած յիշատակումներուն մէջ կը կրկնուի այդ թուականը, որ մեզի համար աւելի քան տարակուսելի է. ահա թէ ինչո՛ւ.–

1) «Դրօշակ»ի 1907 թուականի եւ յաջորդ հինգ տարիներու՝ «Դաշնակցութեան հրատարակութիւնները» վերտառութեամբ հրապարակուած ոչ մէկ ցուցակի մէջ կը գտնուի Ն. Դումանի «Նախագիծ»ին անունը:

2) Իրականութեան մէջ այս գործի մասին առաջին անգամ կը խօսի հեղինակը 1909 թ. Օգոստոս-Սեպտեմբեր ամիսներուն Վառնայի մէջ գումարուած Հ.Յ.Դ. հինգերորդ Ընդհ. ժողովին, որուն մասնակից էր ինք եւ ընտրուած՝ ինքնապաշտպանութեան հարցը քննող յանձնաժողովի անդամ: 37-րդ նիստի արձանագրութեան մէջ կը նշուի որ *«Ընկեր Դումման Ընդհ. ժողովի կազմակերպիչ բիւրոյի առաջարկութեամբ՝ վաւերացուած Ընդհ. ժողովէն, պատրաստած է ինքնապաշտպանութեան Նախագիծ մը, զոր կը ներկայացնէ ժողովին: Զեկուցաբերը* – կը շարունակէ ատենագրութիւնը – *Նախագիծը կարդալէ յետոյ կը շեշտէ այն հանգամանքին վրայ, թէ՝ Տաճկաստան, Ռուսաստան եւ Պարսկաստան ապրող հպատակ ժողովուրդներուն ստիպողական է մտածել ինքնապաշտպանութեան մասին, թէ ինքնապաշտպանութիւն ըսելով պէտք է հասկանալ պաշտպանութիւն հարեւան ժողովուրդներու յարձակումներու դէմ եւ ո՛չ թէ կառավարութեան դէմ, եւ այդ պէտք է ըլլայ ո՛չ թէ աշկարայ, այլ գաղտնի եւ դրուած բացարձակապէս ժողովրդական հիմունքներու վրայ»*: 48-րդ նիստին՝ (Սեպտ. 10) *«Ընկեր Դումանի ինքնապաշտպանութեան համար կազմած ուղեցոյցի մասին զանազան կարծիքներ փոխանակուելուց վերջ ժողովը յանգեց հետեւեալ եզրակացութեան. 1) Որ ընկեր Դումանի կազմած ուղեցոյցը հրատարակուի իրա անունով. 2) Որ այդ խնդիրը (գրուածքի տեսակը, հրատարակութեան ձեւը, ուղեցոյցում յայտնուած զանազան վիճելի մտքեր) թողնել մի յանձնաժողովի, որի անդամները որոշուեցին ընկերներ Ռոստոմ, Անդրանիկ, Մուրատ* [Սեբաստացի], *Դումման եւ Տարօնացի* [Ռ. Տէր Մինասեան]» (Տես «Նիւթեր Հ. Յ. Դաշնակցութեան պատ-

մութեան համար», Զ. հատոր, էջ 79 եւ 403-4):

3) Թէ ի՛նչ կատարած է վերեւ յիշուած յանձնաժողովը (եթէ կատարած է), յայտնի չէ, սակայն 1909 թ. ընթացքին «Դրօշակ»ի խմբագրութեան, Ռոստոմի, Յոնան Դաւթեանի, Արշակ Վռամեանի, Սեպուհի նամակներուն մէջ բազմիցս կը հանդիպինք նշումներու՝ խնդրոյ առարկայ աշխատասիրութեան մասին, մանաւանդ որ Ն. Դումանի գրքոյկը տպագրութեան յանձնուած էր Ժը-նեւ՝ «Դրօշակ»ի խմբագրութեան, եւ վերջինս արդէն տպագրուած պրակները կ՚ուղարկէր վերոյիշեալ անձնաւորութեանց՝ իրենց կարծիքը կամ ուղղումները փոխանցելու համար:

4) Ն. Դուման ինք եւս 1909–1910 տարիներու իր նամակներուն մէջ մէկէ աւելի անգամներ կը յիշատակէ այդ ուղեցոյցը (Տես այս հատորին մէջ նամակներ՝ 1909 թ. Հոկտ. 12/25, 1910 թ. Փետրուար 17 եւ 23, Մարտ 12 եւ 25 եւ վերջապէս Սեպտ. 11-ին, երբ արդէն լոյս տեսած էր գրքոյկը եւ սկսած անոր ցրումը կազմակերպական շրջաններուն):

5) Վերջապէս այն, եւ ամէնէն համոզիչը, որ Ն. Դումանի «Նախագիծ ժողովրդական ինքնապաշտպանութեան»ը հրատարակուած է 1910-ին եւ ոչ թէ 1907-ին, ատոր պերճախօս ապացոյցը գտանք Պոսքընի Հ.Յ.Դ. Կեդր. արխիւներու թիւ 1855 թղթածրարին մէջ, ուր պահպանուած է (հեղինակի շարք մը նամակներու կողքին) նաեւ բուն «Ինքնապաշտպանութեան» ձեռագիր օրինակին վերջին հատուածը: Աշխատասիրութեան վերջաբանին մէջ, խօսելով այդ գործին ձեռնարկելուն առթիւ իր ունեցած տատանումներուն մասին, Ն. Դուման կ՚եզրակացնէ.– «Անցեալ տարի տեղի ունեցան Ադանայի սոսկումները, այս տարի էլ Պարսկաստանում»… (Տես էջ 325): Ընդգծեցինք «անցեալ տարին», որովհետեւ Ատանայի եւ ընդհանուր Կիլիկիոյ կոտորածները տեղի ունեցած էին 1909 թ. Ապրիլ ամսուն: Տպագրուած օրինակին մէջ չկայ այս յիշատակումը. ջնջուած է ան՝ պարզապէս որպէսզի չհակասէ գրքոյկին վրայ զետեղուած 1907 թուականին, եւ աւելի եւս չթունաւորէ արդէն իսկ փխրուն վիճակի մէջ գտնուող Իթթիհատ-Դաշնակցութիւն փոխյարաբերութիւնները…: Արդարեւ Ն. Դումանի «Նախագիծ ժողովրդական ինքնապաշտպանութեան» գործը՝ «Դրօշակ»ի հրատարակութեանց ցուցակին մէջ առաջին անգամ պիտի յիշատակուէր միայն 1912-ին (Մայիս, No 5), երբ Հ. Յ. Դաշնակցութիւնը արդէն վերջնական կերպով դադրեցուցած էր իր յարաբերութիւնները Իթթիհատի հետ:

Ինչպէս կը տեսնուի, Ն. Դումանի «Նախագիծ»ը հրատարակուած է ո՛չ թէ 1907-ին, ինչպէս նշուած է տպագիր օրինակին վրայ, այլ երեք տարիներ ետք՝ 1910-ին: Իբրեւ յաւելեալ ապացոյց մեր այս հաւաստումին, յայտնենք որ գրքոյկը հրատարակողներու ուշադրութենէն վրիպած է այն՝ որ հեղինակը, «Յարձակողական եւ պաշտպանողական կռիւներ» խորագրին տակ, կը յիշէ «Տաճկաստանի մէջ «սահմանադրական ռէժիմի օրով» եւայլն (էջ 311). իսկ յայտնի է բոլորին, որ Թուրքիոյ մէջ սահմանադրութիւն հռչակուեցաւ 1908-ին, այսինքն 1907-էն ետք:

Ե. Փ.


ԴՈՒՄԱՆ

ՆԱԽԱԳԻԾ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹԵԱՆ

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ԵՐԵՔ ԳԼԽԱՒՈՐ ՀԱՅՐԱՊԵՏՆԵՐԻ ՀԱՄԱՐ

1907

«Նախագիծ»ի առաջին տպագրութեան կողքը

Բ. ՅԱՒԵԼՈՒԱԾ

ՆԱԽԱԳԻԾ
ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹԵԱՆ
(Հայ ժողովրդի երեք գլխաւոր հատուածների համար)

1907

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

Այս նախագիծը գրաւոր առաջին փորձն է մեզանում, կազմւած մի անձնաւորութեան ձեռքով, հետեւապէս անմշակ եւ պակասաւոր։ Ուրեմն, սրա մշակումն ու լրացումը ժամանակի խնդիր է եւ կարօտ հաւաքական (կոլլեկտիվ) աշխատանքի։ Այսպիսի մի աշխատանք հաւաքաբար գլուխ բերելու համար, ուրիշ աւելի նպատակայարմար ու գործնական միջոց չգտնւելով, խնդրւում է բոլոր ձեռնհաս անձերից՝ ղրկել իրենց դիտողութիւններն ու լրացումները գրքոյկիս հեղինակին։

ՆԱԽԱԲԱՆ

Ցեղական կամ ազգային ընդհարումները հետեւանք են պատմական, կրօնական, տնտեսական ու քաղաքական խճճւած պայմանների եւ պատճառները միշտ լինում են աւելի խոր ու բարդ, քան առհասարակ կարծում են մարդիկ եւ թիւրիմացութեամբ, առիթներն ընդհանրապէս ընդունում են իբրեւ պատճառներ։ Բայց ժողովուրդների ընդհարման բարդ պայմանների ուսումնասիրութիւնն ու լուսաբանութիւնը դուրս լինելով ներկայ նախագծի նպատակից, կանգ չենք առնում դրա վրայ։

Միայն մի բան ամէնքի համար պէտք է լինի շատ պարզ եւ միանգամայն որոշ։ Այն՝ որ ազգային ընդհարումների ժամանակ, անկախ կողմերի քանակից ու որակից, անկախ նրանց յարաբերական ոյժից, տուժում է ո՛չ թէ մի, այլ անպայման երկու կողմը, միայն ա՛յն տարբերութեամբ՝ որ թոյլ կողմը տուժում է աւելի շատ, իսկ ուժեղը՝ համեմատաբար քիչ։ Եւ տուժում են ո՛չ միայն ֆիզիքապէս ու տնտեսապէս, այլ եւ կուլտուրապէս։

Զանգւածային (մասսայական) ընդհարումների ընթացքում չկայ մեղաւոր ու անմեղ, չկայ սեռ ու հասակ — անխտիր ու անխնայ ջարդւում են ամէնքը. առեւտուրը կանգ է առնում. արհեստն ու երկրագործութիւնը մատնւում են անգործութեան. տասնեակ տարիների քրտնաթոր աշխատանքի տնտեսութիւնը, լինի նա շարժական թէ՛ անշարժ, տրւում է հրդեհի ու աւարի. Վաստակի բոլոր աղբիւրները ցամաքում են, իսկ կենսական մթերքները՝ ընդհակառա-

կը, թանկանում օրէցօր։ Մարդկանց մէջ արթնանում ու զարգանում են գազանային հակումները. ոճիրը դառնում է քաղաքացիական իրաւունք. գողերն ու աւազակները ստանձնում են պաշտպանի դեր՝ ապագայում հասարակութեան գլխին նոր եւ աւելի մեծ չարիք դառնալու համար. բորբոքւում է ազգային թշնամութիւնն ու ատելութիւնը. ինչ որ կարելի է՝ վերածւում է զէնքի ու հրանիւթի, եւ մարդասպանութիւնը դառնում է նպատակ. դրամաշորթութիւնը (չանտաժ) ծաւալւում է արագօրէն. անբարոյականութիւնը ընդունում է լայն չափեր. մարդիկ վայրենանում եւ բարքերը կոպտանում են։ Մտաւոր կեանքը սառչում է. մատաղ սերնդի կրթութիւնը դադարում, եւ արիւն թափելը դառնում է դաստիարակութեան միջոց։

Եւ սա ընդհարման վնասների բնորոշումն է դեռ խոշոր գծերով։ Բայց այսքանն էլ բաւական է հասկանալու համար, թէ ո՞րչափ խոր ու լայն է չարիքը։ Այս սոսկալի արհաւիրքի առաջը, անշուշտ, պէտք է առնուի վաղօրօք։ Նախ քան նրա ձեւաւորուիլն ու արտայայտուիլը, դեռ իր նախանշանների շրջանում,— եւ բարոյական այդ ծանր պարտականութիւնը ընկնում է հակամարտ ազգերի գիտակից տարրերի, մանաւանդ յեղափոխական կուսակցութիւնների վրայ։

Այստեղ ըստ ինքեան ծագում է մի շատ գործնական հարց, թէ որո՞նք են արդեօք նախանշանները ազգային ընդհարման եւ ինչպէ՞ս կարելի է առնել մեծ չարիքի առաջը։

Դրա պատասխանը պէտք է որոնել մօտիկ անցեալի դառն փորձերի ու փորձանքների մէջ։

Պատմական, կրօնական, տնտեսական ու քաղաքական աննպաստ պայմանների շնորհիւ, երկար ժամանակի ընթացքում — կողք-կողքի ապրող հարեւան ժողովուրդները — թոյլի ուրոյն գոյութեան եւ ուժեղի գերիշխանութեան բնազդով — կաթիլ-կաթիլ թունաւորում են իրար։ Եւ երբ թոյնը կատարում է իր քայքայիչ ներգործութիւնը, գրգռւած դրացի ժողովուրդները սկսում են իրարու նայել խեթ ու խորթ, բեղմնաւորւում է փոխադարձ խուլ տրտունջ եւ ապա այդ համր տրտունջը փոխարկւում է բարձրաձայն դժգոհութեան զանազան խաւերում։ Յետոյ բողոքի այդ ձայները մտնում են մամուլի էջերը՝ իբրեւ լուրեր. լուրերը դառնում են թղթակցութիւններ եւ թղթակցութիւնները՝ առաջնորդող յօդւածներ։ Խօսքի հետ զուգընթաց գնում է եւ գործը. երկու տարբեր ցեղերին պատկանող անհատները, ղեկավարւելով սեփական նեղ շահերով, իրարու պատճառում են փոխադարձ զրկանքներ — բարոյական ու տընտեսական —, դիմում են նոյնիսկ ծեծի բիրտ միջոցին եւ կանգ չեն առնում մինչեւ անգամ սպանութեան առաջ. մարդասպանութիւնը հետզհետէ ընդունում է քրոնիկ բնոյթ եւ դա արդէն վերջին քայլն է դէպի զանգւածային (մասսայական) եւ ապա ազգային ընդհարումը։ Ազգային ընդհարման այս նախաշրջանումն է, որ շուտափոյթ օգնութեան պիտի հասնեն ժողովուրդների գիտակից տարրերն ու մամուլը, իրենց եռանդի ամբողջ թափով եւ անպայման անկեղծութեան շեշտով։

Թւում է, սակայն, որ մամուլի ու գիտակից տարրերի էապէս խաղաղարար նշանակութեան վերաբերմամբ ընթերցողի մէջ ծագում է թերահաւատութիւն։

Եւ այդ թերահաւատութիւնը գուցէ ունի իր հիմունքը երկու պատճառով. նախ քանի որ ազգային ընդհարումները մենք համարում ենք անխուսափելի հետեւանք պատմական որոշ պատճառների, հապա ուրեմն խօսք ու գրիչը չե՞ն կարող մոգական գաւազանի զօրութիւն ունենալ եւ մի շարժումով վերացնել նրանց։

Եւ երկրորդ՝ գործնական դառն փորձերը Տաճկաստանում ու յետոյ, մանաւանդ, Կովկասում, պարզ ապացուցին, որ առաջարկած խաղաղարար ձեւերը ժամանակաւոր, փոփոգիչ* (պալլիատիւ) միջոցներ են եւ միանգամայն ապարդիւն։

Այստեղ, ուրեմն, հարկաւոր է կանգ առնել մի փոքր։

Ժխտել, ի հարկէ, չի՛ կարելի, որ թունաւոր դրութիւնն ու չարախնդիր տրամադրութիւնը դրացի ժողովուրդների մէջ՝ հետեւանք են բարդ պայմանների։ Բայց նոյնքան ճիշտ է եւ ա՛յն, որ տիրող կառավարական ռեժիմը պահպանում է — երբ ուզում է — հաւասարակշռութիւն երկու հակամարտ ժողովուրդների միջեւ, եւ պատժի ու պատասխանատուութեան երկիւղով սանձահարում է փոխադարձ կրքերը։ Հարկաւոր է կառավարութեան խորթ նայուածքը մի կողմի վրայ եւ հովանաւորութիւնն ու բարեացակամ տրամադրութիւնը դէպի միւս կողմը, եւ ահա՛ հովաւորուած կողմը — մանաւանդ եթէ տգէտ է նա եւ երեւոյթները ըմբռնելու կարողութիւնից զուրկ,— պատրաստ է նախայարձակ լինելու։ Եւ հէնց այս պայթումն է, որ պէտք է յետաձգւի խօսքի ու գրչի միջոցով։ Ձենք խօսում այդ պայթման ի սպառ վերացման մասին. որովհետեւ անկարելի է այդ, քանի որ նա հետեւանք է որոշ պատճառների, իսկ այդ բարդ պատճառների արմատները ամուր թաղուած են անցեալի խորքերում։

— Բայց ի՞նչ օգուտ յետաձգումից, եթէ չի՛ կարելի վերացնել նրան ի սպառ։

Ահա՛ թէ ինչ.

— Ժողովուրդների արհեստական թունաւորումը, նրանց կանգնեցնելը մէկը միւսի դէմ՝ կատարւում է սովորաբար քաղաքական բարենորոգումների (ռեֆորմների) նախօրեակին։ Ոտքի տակից հողը կորցրած տիրող կառավարութիւնը դիմում է գործունէութեան այդ յանցաւոր եղանակին՝ իր անկումը փրկելու, կամ գոնէ յետաձգելու համար, այն յոյսով որ կարողանայ առաջ բերել

— Յետադարձ (ռէակսիոն) շարժում եւ, օգտուելով իրերի խառնակ դրութիւնից, նորէն ամրապնդել իր չարագործ գոյութիւնը։ Եւ, եթէ քաղաքական այս փոխանցման շրջանում, հակամարտ ազգերին աջողւի չենթարկւել գրգռիչ (պրովոկասիոն) ազդեցութիւնների, դրանով պիտի արագանայ տիրող ռէժիմի անկումը եւ նրան փոխարինող նոր, փոքր ի շատէ բարեկարգ կառավարու-

---

*) Ծ. Խմբ. (Ե. Փ.).– Ըստ Մալխասեան բառարանի՝ մեղմացուցիչ, սփոփիչ։

թիւնը, իր հերթին, պիտի պահպանէ հաւասարակշռութիւնը լարուած ազգերի միջեւ։

Մնում է վերջին հանգոյցը — այն, թէ՝ հնարաւո՞ր է արդեօք թշնամի ժողովուրդներին, թէկուզ առժամապէս, յետ կասեցնել ազգային ընդհարումից։

Այդ ծանր հարցի դրական լուծումը ըստ երեւոյթին դժուարացնում են մօտիկ անցեալի դժբախտ փորձերը։ Տաճկաստանում եւ մանաւանդ Կովկասում եկեղեցու բեմից ու մզկիթներից խաղաղութիւն էին քարոզում, լրագիրները շարունակ յորդորներ էին կարդում, հայ-թրքական խառն յանձնախմբերը (կոմիսիաները) անվերջ ճամբորդում էին, բայց այնուամենայնիւ այդ բոլորն անցան անօգուտ ու ապարդիւն։

Այսպէս պատճառաբանողները երբեք նկատողութիւնից չպիտի փախցնեն, որ Տաճկաստանում մահմետականները խաղաղասիրական ո՛չ մի քայլ չարին, իսկ քրիստոնեայ հայերը այդ ուղղութեամբ չէին վստահանում գործել, որովհետեւ բաժանող վիհը չափազանց մեծ էր եւ քաղաքական ու ընկերային (սոցիալական) պայմանները՝ դժոխային։ Ինչ վերաբերում է Կովկասին, այնտեղ խաղաղասէրները հրապարակ եկան ընդհարման համաճարակի ընթացքում, երբ արդէն ուշ էր։

Այսպէս թէ այնպէս, ընդհարումից յետ կանգնելու համար՝ ժողովուրդներին հարկաւոր է միայն մի բան — խոր գիտակցութիւն այն մասին, թէ այդ ընդհարումից — նոյնիսկ ուժեղ կողմի համար — ո՛չ միայն ոչ մի շահ չկայ, այլ, ընդհակառակն՝ հետեւանքները աղէտալից ու կորստաբեր են բոլոր տեսակէտներով։ Գիտակցօրէն այս համոզման գալը թէեւ անցեալում անկարելիութեան չափ դժուար, անհամեմատ դիւրին պիտի լինի ապագայում, որովհետեւ նրան նպաստում են մի շարք պայմաններ։

Այդ նպաստաւոր պայմաններ են՝

Ժամանակը՝ իր բնաշրջումին (էվոլիւսիոն) մէջ, գրագիտութեան հետզհետէ ծաւալումը, մամուլի ու գրականութեան զարգացումն ու ժողովրդականացումը. ճանապարհների դիւրին հաղորդակցութեան աստիճանաբար աճումը, նախկին ռեժիմների բարեփոխումը եւ իբրեւ հետեւանք այդ բոլոր պայմանների համախմբման՝ ժողովուրդների մտաւոր հորիզոնի ընդլայնումը՝ իր ընդհանուր առման մէջ վերջապէս, անցեալի դառն փորձերի վերյիշումը՝ իբրեւ խրատական դաս։

Բայց ինչ էլ լինի, թէ՛ թշնամուն եւ թէ բարեկամին յարգանք ու պատկառանք ներշնչողը, դժբախտաբար, դեռ կոպիտ ոյժն է։ Եւ մի ազգ — եթէ ուզում է մնալ յարգւած, եթէ չի ուզում կորչել — պէտք է լինի զէնքի ընդունակ, միշտ պէտք է լինի կազմ ու պատրաստ ինքնապաշտպանութեան համար, մանաւանդ քաղաքական ցնցումների վայրկեաններում (մոմենտներում)։

ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ

Զանգուածային (մասսայական) կռիւը, նոյնիսկ յանուն ինքնապաշտպանութեան, լինում է գիտակցական կամ ամբոխային, կազմակերպուած կամ հօտային։

Աւազակները, երբ յափշտակում են ոչխարները ամբողջ հօտով, դէպքի վայրից շուտ ու արագ հեռանալու համար՝ հրացան են պարպում օդի մէջ կամ մկրկացնելով մորթում են մի ուլ եւ արիւնը սրսկում հօտի մէջ։ Այդքանը հերիք է, որ սարսափահար ոչխարները, իրար խռնուած, իրար կոխոտելով, ողջ հօտով փախչեն ուզած ուղղութեամբ այնպէ՛ս արագ, որ ձին ետեւից հազիւ հասնի։

Այդպէս է՛ւ ամբոխը կռւի միջոցին։ Բաւական է մի քանի դիակ կամ հրազէնի մի քանի ճայթիւն, եւ նա փախուստի է դիմում գլխակորոյս։

Ամբոխը չի հասկանում, որ իր շահը մի մասն է ամբողջի՝ նրա հետ սերտ շաղկապուած, եւ, եթէ ուզում է պահել իր սեփականը, պէտք է պաշտպանի ամբողջը։ Ամբոխը չի ըմբռնում, որ համաճարակին եւ առհասարակ ընդհանուր աղէտին կարելի է դիմադրել միմիայն ընդհանուր ուժերով։

Բայց այդպէս չէ՛ գիտակցական ու կազմակերպուած կռիւը։

Կազմակերպուած ինքնապաշտպան կռիւը ըմբռնում է երեւոյթները լայն եւ պարզօրէն, գիտակցում է իր նպատակը. նա գիտէ իր ուժերը ճշտիւ եւ թշնամունը՝ մօտաւորապէս. նա կարգի է բերում իր բոլոր ռազմիկ ուժերը եւ մտցնում է նրանց մէջ կարգապահութիւն (դիսցիպլին)։ Հարկաւոր դէպքում շարժում է իր զօրամասերը արագօրէն, կենտրոնացնում է՝ ուր անհրաժեշտ է, յարձակւում է՝ ուր հարկաւոր է, պաշտպանում է՝ ուր կարեւոր է։

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

Ընդհանուր կանոններ. Քաղաք, Գիւղ, Շրջան։

ԸՆԴՀ. ԿԱՆՈՆՆԵՐ

Կառավարութեան արգելքներից խուսափելու եւ իր սեփական ուժերի քանակն ու որակը ապագայ թշնամուց գաղտնի պահելու համար, հարկաւոր է կազմակերպւել լռելեայն եւ խորին գաղտնապահութեամբ, առանց ցոյցերի ու ցուցամոլութեան։

Անհրաժեշտ է, որ ինչպէս կազմակերպւողները, նոյնպէս եւ կազմակերպողները լինին անպատճառ տեղացիներ։ Այս ձեւն ունի ա՛յն առաւելութիւնը, որ գաղտնապահութիւնը դարձնում է հնարաւոր։ Բացի դրանից, կազմակերպութիւնը մի ամբողջացած մեքենայ է, որի կանոնաւոր շարժումը կը խանգարւի՝ եթէ նրանից հանենք թէկուզ մի պտուտակ (վինտ), իսկ դրսից եկած անհատը պատահական անձնաւորութիւն է եւ միշտ հեռանալու ենթակայ։ Ծայրայեղ դէպքում, թոյլատրելի է, որ կազմակերպողը լինի դրսից, իսկ կազմակերպւողը՝ երբեք։

Կազմակերպութիւնը պէտք է լինի գործնական եւ կենսունակ, որ ամէն պատահարից չքայքայւի։ Այդ նպատակին հասնելու համար՝ պէտք է խոյս տալ լայն ծաւալից եւ ամենախիստ ընտրութեամբ սկզբում կազմել միայն կորիզը՝ յեղափոխական եւ գիտակից տարրերից։

Հո՛գ չէ, եթէ այդ կորիզը սկզբում կը լինի փոքր։ Դա առաձգական է եւ վտանգի պահուն մեծանալու ենթակայ։ Հարկ չկայ կազմակերպելու համար ընդհանուր հրաւէր կարդալ քաղաքացիներին կամ՝ գիւղացիներին. խաղաղ ժամանակ անիրագործելի է այդ եւ գաղտնապահութեան տեսակէտից՝ վտանգաւոր։ Բացի դրանից, լայն ծաւալով կազմակերպումը ժողովրդի մի մասին ներշնչում է անհիմն երկիւղ, իսկ միւս մասի մէջ առաջ է բերում կռւի տրամադրութիւն։ Այդպիսով մտքերը յուզւում են ընդհանրապէս եւ հեռանում բնական, նորմալ դրութիւնից։

Խմբի ամէն մի անդամը, առանց բացառութեան, ապրում է իր հաշւով։

Խմբի անդամները գաղտնի քուէարկութեամբ եւ ձայների 2/3-ի մեծամասնութեամբ ընտրում են խմբապետ եւ նրա օգնականը։

Ծանօթ.– Ուր 2/3-ի մեծամասնութիւն չի կայանում, ընտրելիների ցուցակը ներկայացնում են իրանց շրջանի մարմնին, որը նրանցից երկուսին նշանակում է խմբապետ եւ օգնական:

Ինքնապաշտպանութեան խմբակները կատարելագործելու են զինավար-

ժուիլունը թիրախի (տիր, Тиръ), նշանաձգութեան եւ որսորդութեան միջոցով։

Ծանօթ.– Որսորդութեան առանձին տեղ ու նշանակութիւն պէտք է տալ, որովհետեւ որսորդական վարժութիւնն է միայն, որ մարդուն մօտեցնում է պատերազմի արհեստին, ինչպէս օրինակ,– իր վրայ կրել պաշարի ու ռազմամթերքի ծանրութիւնը, քայլել երկար, բարձրանալ լեռը, իջնել ձորը, պտտել ճահիճներում ու անտառներում, վարժուել քաղցի ու ծարաւի եւ բնութեան խստութիւններին, շուտ նշան առնելու եւ արագաձգութեան վարժութիւն, սպանելու արհեստ բոլոր ձեւերի մէջ – ինչպէս կանգնած, նոյնպէս փախած ու թռած ժամանակ՝ ամէն ուղղութեամբ, կռիւ գազանների դէմ, կենդանի էակը դիակ դարձնելու սովորութիւն եւ այլն: Որսորդութիւնն ունի եւ մի ուրիշ շատ խոշոր առաւելութիւն, այն՝ որ որսորդը գործում է անկախ եւ ինքնուրոյն, եւ դրանով նրա մէջ զարգանում է հնարագիտութեան ոգին եւ նախաձեռնութիւնը (ինիցիատիվան), որ չափազանց կարեւոր է խաղաղ կեանքի մէջ եւ, մանաւանդ, պատերազմի ժամանակ:

Ինքնապաշտպանութեան խմբակների մէջ մտնել կարող են միմիայն հրացան կամ ատրճանակ փոքր ի շատէ վարժ արձակողները, իսկ վարկաբեկուած անհատներ՝ երբեք։

Նրանք, որոնք ունին հակում եւ յարմարութիւն ինքնապաշտպանութեան խմբերի մէջ մտնելու, բայց անծանօթ են զինավարժութեան, կարող են այդ վարժութիւնը ձեռք բերել կողմնակի կերպով եւ ապա նոր միայն մտնել ինքնապաշտպանութեան մէջ։

Ծանօթ.– Այդպիսիներին վարժեցնում է խմբի ձեռնհաս անդամը կամ զինուորական մարզիչը (ինստրուկտորը), նշանակուած նոյն շրջանի ինքնապ[աշտպանութեան] մարմնի կողմից:

Զինուորական մարզիչի դերը առաւելապէս կատարում է ինքնապաշտպանութեան խմբակի ձեռնհաս անդամը նոյն խմբի ընտրութեամբ, կամ յատուկ նշանակած մի անձնաւորութիւնը ինքնապաշտպանութեան այն մարմնից, որին պատկանում է խումբը։

Ինքնապաշտպանութեան խմբակի իւրաքանչիւր անդամը պէտք է ունենայ իր սեփական զէնքը։

Ծանօթ.– Ուր որ նիւթականի պատճառով անհնար է այդ,– խումբը նշանակում է անդամակցական հաւասար ամսավճարներ եւ դրանով հետզհետէ ձեռք են բերւում զէնքեր անդամների թի համեմատ: Թիւը լրանալուց յետոյ, ընդհանուր համաձայնութեամբ կատարւում է այդ զէնքերի վերագնահատումը առանձին-առանձին՝ ըստ որակի եւ, փոխադարձ համաձայնութեամբ կամ

վիճակով, բաժանւում է անդամների վրայ այն հաշւով, որ լաւ զէնք ստացողը վճարում է աւելորդ արժէքը (այսինքն տարբերութիւնը իր մտցրած գումարի եւ զէնքի արժէքի), որը տրւում է հասարակ զէնք ստացողին:

Նախքան զէնքի բաժանումը՝ իրանից անկախ պատճառով խմբից հեռացող անդամը (մեռնելու դէպքում՝ ժառանգը) ստանում է խմբի դրամարկղից իր մտցրած գումարի 75%-ը, իսկ կամաւոր կերպով խմբից դուրս եկողը՝ միայն 50%։

Խուզարկութեան վտանգից ազատ մնալու համար՝ խումբը պէտք է ունենայ իր գաղտնարանը, իսկ ամէն մի անդամ՝ իր սեփականը։

Ամէն խմբակ պատրաստ պահում է իր զէնքի ու ռազմամթերքի եւ անդամների թւի ցուցակը (առանց անունների) եւ այդ ցուցակը ներկայացնում է մօտակայ զինւորական սպայակոյտին (Շտաբին), իսկ ուր այդպիսին չկայ՝ Շրջանապետին կամ ինքնապ. տեղ. մարմնին, միմիայն ընդհարման նախանշանների օրերում։

Ծանօթ.–

ա. Քաղաքի ու թաղի անունը եւ արձանագրութեան թւականը գրւում է ցուցակի ներկայացնելու օրը միայն:

բ. Ցուցակի ձեւը գիւղի համար նոյնն է, ինչ որ քաղաքինը, միայն քաղաքի եւ թաղի փոխարէն գրւելու է գիւղի անունը եւ շրջիկ կամ «ֆռռան» խումբն էլ դուրս է ձգւելու, այնտեղ այդպիսին չլինելու պատճառով:

ՅՈՒՅԱԿ

ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹԵԱՆ ՈՅԺԻ

..... Քաղաքի ..... Թաղի,

կազմուած ..... 19 թ.

Անդամների թիւը		Հրացան							Արձանակ					
		Մսին	Փամփուշտ	Մաուզէր	Փամփուշտ	Ռեւոլվէր	Փամփուշտ	Որոտրակամ	Մաուզէր	Փամփուշտ	Այլ տարբեր-ակներ	Փամփուշտ	Վառօդ	Արձիգ իամ կապար
	Ա.	Մնայուն խումբն ունի.												
.....		.....	.....	.....	.....	.....	.....	.....	.....	.....	.....	.....	.....	.....
	Բ.	Թռուցիկ խումբն ունի.												
.....		.....	.....	.....	.....	.....	.....	.....	.....	.....	.....	.....	.....	.....
	Գ.	Ֆռռան խումբն ունի.												
.....		.....	.....	.....	.....	.....	.....	.....	.....	.....	.....	.....	.....	.....
	Դ.	Զը կազմակերպուած ժողովրդի մօտ կայ.												
.....		.....	.....	.....	.....	.....	.....	.....	.....	.....	.....	.....	.....	.....

ՔԱՂԱՔ

Հայութեան բոլոր երեք գլխաւոր հատուածների մէջ ազգաբնակութիւնը քաղաներում խառն է։ Բացառութիւն կազմում է միայն Նոր-Բայազէտը՝ Կովկասում, որ զուտ հայաբնակ է։ Ուրեմն կազմակերպական ձեւը այստեղ ցոյց է տուելու միայն խառն բնակչութիւն ունեցող քաղաքների համար։

Քաղաքը բաժանւում է թաղերի եւ ամէն մի թաղ կազմակերպում է ինքնապաշտպանութեան մի խումբ։

Խառն թաղի խումբը մնայուն է — կռւի ժամանակ մնում է իր թաղում՝ նրան պաշտպանելու համար անակնկալ յարձակումներից։

Զուտ հայաբնակ կենտրոնական ապահով թաղերը իրենց խմբակները բաժանում են երկու մասի — մնայուն եւ թռուցիկ։

«Թռուցիկ» խմբակը օգնութեան է վազում ընդհարման կէտը կամ գնում է ուժեղացնելու վտանգաւոր ծայրաթաղը, նայելով պայմաններին, յարմարութիւններին եւ ստացած հրահանգին։

Մնայուն եւ թռուցիկ խմբերից զատ՝ կազմակերպւում է ամբողջ քաղաքի համար մի առանձին խումբ՝ կամաւորներից, շրջիկ կամ «Ֆռռան» անունով։ Այս խումբը — երբ զգացւում է ընդհանրական վտանգը — բաժանւած մասերի՝ ցերեկները աննկատելի պտտում է բոլոր բազմամարդ վայրերում, ուր ժողովուրդը խառն է, ինչպէս օրինակ՝ շուկայ, հրապարակ, քաղաքային պարտէզ կամ այգի, հասարակաց կշիռ (ղափան) եւ այլն, որպէսզի անակնկալ ընդհարման բոպէին ցոյց տայ առաջին դիմադրութիւնը եւ այդպիսով սահմանափակի իր ազգակից զոհերի թիւը։ Ցիշած կէտերում կարիքն անցնելուց անմիջապէս յետոյ, «Ֆռռան» խումբը, դարձեալ բաժանւած մասերի, ցրւում է դէպի քաղաք բերող մեծ ճանապարհները է առհասարակ բոլոր ա՛յն տեղերը, ուր անց ու դարձ եւ շարժում կայ՝ փրկելու իր ազգակիցներին եւ հարւածելու հակառակ կողմին։

Ընդհարման նախանշանների օրերում՝ խառն շուկայում ամէն մի հայ խանութ պէտք է ունենայ իր զէնքը եւ խանութում ծառայող ամէն մի անհատ, որ պատկանում է ինքնապաշտպանութեան խմբին, իրե՛նը։

Ծանօթ.– Կռիւը սկսելուն պէս, խանութի զինւած անհատները դուրս են թռչում թշնամուն հարւածելու, իսկ անզէնները խանութը փակում ու քաշւում են քաղաքի ապահով մասերը:

Մնայուն, թռուցիկ եւ Ֆռռան խմբերի խմբապետական ընդհանուր ժողովը գաղտնի քուէարկութեամբ եւ ձայների 2/3-ի մեծամասնութեամբ ընտրում է մի «Ժամանակաւոր զինւորական սպայակոյտ» (Շտաբ), բաղկացած երեք հոգուց։

Ծանօթ.– Ուր չկան այդքան փորձառու ու կարող մարդիկ, ընտրում են մի հեղինակաւոր հրամանատար եւ սա՝ իր օգնականը:

Ժամանակաւոր Զինուորական Շտաբը ընդհանուր կապ է պահպանում բոլոր խմբապետների հետ, ցուցակագրում եւ գաղտնի պահում է ժողովուրդի մարտական ոյժի ցուցակը, հոգ է տանում ժողովրդի զինաւորման վրայ «Զէնքի ֆօնդի» (եթէ կայ) եւ կողմնակի միջոցներով, ուսումնասիրում եւ հետզհետէ ու աննկատելի ամրացնում է յարմար դիրքերը ապագայ կռիւների համար, ընդհարման նախօրեակում վտանգաւոր տներից փոխադրել է տալիս քաղաքի ապահով մասերը կռւի անընդունակ բոլոր անձերն ու արժէքաւոր իրերը եւ կռւի նախաշրջանում ղեկավարում է նրան, մինչեւ իսկական «Զինուորական Շտաբի» կազմակերպումը։ Ժամանակաւոր Շտաբի վրայ է ընկնում նոյնպէս, որ կռւի նախօրեակին յորդորի ժողովրդին ձեռք բերել ուտեստի ու ջրի պաշար եւ չուկայի վտանգաւոր մասերից տուն փոխադրել թանկագին ապրանքները, բայց հետզհետէ եւ աննկատելի կերպով։

Ընդհարման սկզբում՝ ինքնապաշտպանութեան բոլոր ոյժերը ամբողջ թափով պէտք է ընկնեն թշնամու վրայ եւ անմիջապէս ճնշեն նրան։ Իսկ եթէ չի աջողւի այդ արագ ճնշումը եւ կռիւը կը ստանայ պարբերական յարձակումների բնոյթ, ինքնապաշտպանութեան ոյժերը պէտք է այնուհետեւ բաժանւին երկու մասի — ցերեկւայ եւ գիշերւայ համար, որ ամէն մէկը իր կարգին՝ (հերթին) հսկի եւ պատրաստ լինի դիմադրութեան։

Վտանգի օրերում՝ բոլոր թաղերը վարձում են գիշերային պահապաններ կարիքի համեմատ։

Գիշերային պահապաններ վարձում են նաեւ վաճառականները՝ չուկայի համար։

Ծանօթ.– Ցմերային ցուրտ ու երկար գիշերների համար պահապանների թիւը պէտք է լինի կրկնակի՝ երկու հերթի բաժանւելու համար – մինչեւ կէս գիշեր եւ կէս գիշերից մինչեւ լոյս:

Պահապաններին միշտ կոնտրոլի տակ պահելու համար՝ վարձւում է մի խմբապետ երկու օգնականով, որոնցից մէկը հսկում է մինչեւ կէս գիշեր, իսկ միւսը կէս-գիշերից յետոյ՝ մինչեւ լոյս։

Կռւի օրերում քաղաքի բոլոր մասերում, բացի վտանգի ենթակայ տներից, դարպասները (բակի դռները) միշտ պիտի լինին բաց, որպէսզի ժողովուրդը հեշտութեամբ ու արագ խուսափի թշնամու գնդակներից եւ կռւողներն էլ՝ զօրքի ու ոստիկանութեան հետապնդումից։

Ծանօթ.– Սովորաբար տները շինւում են երկու զուգահեռական փողոցի մէջ տեղը եւ դարպասը գտնւում է այս կամ այն փողոցի վրայ: Շատ ցանկա-

լի եւ խիստ օգտակար է, որ ամէն մի տուն ունենայ (նոր շինի) անցք կամ դռնակ նաեւ հակառակ փողոցի վրայ, որպէսզի դարպասով ներս մտնողը կարողանայ այդ անցքից կամ դռնակից անցնել միւս փողոցը եւ այդպիսով հետքը կորցնել հետապնդող զօրքից կամ ոստիկանութիւնից:

Կռւի օրերում պէտք է խստիւ արգելել անզէն մարդկանց՝ «թամաշա» անողների, աննպատակ անց ու դարձը եւ շարժումը փողոցներում: Դրանք մտցնում են ինքնապաշտպանութեան գործի մէջ միայն շփոթութիւն ու իրարանցում եւ տալիս են աւելորդ զոհեր:

Քաղաքի ինքնապաշտպանութեան գործը պէտք է կապւած լինի շրջակայ հայ գիւղերի հետ՝ փոխադարձ օգնութեան համար:

Շրջակայ գիւղերը կռւի ժամանակ կարող են օգնական խմբեր ուղարկել քաղաք, բայց նրանց գլխաւոր գործը պէտք է լինի փակել ճանապարհները դրսից քաղաք մտնող թշնամի օգնական ոյժերի առաջ:

Պաղ զէնքի — դաշոյնի եւ դաշոյնանման դանակի գործածութիւնը հնարաւոր է երեք դէպքում.

ա) Երբ հարկաւոր է անակնկալ յարձակում գործել թշնամու վրայ բազմամարդ վայրերում, ինչպէս օրինակ՝ շուկայ, հրապարակ եւ այլն: Քանի որ պաղ զէնքը ձայն չի հանում հրազէնի նման եւ այդ պատճառով էլ դէպքի վայրը մի առժամանակ մնում է ուշադրութիւնից դուրս, ինչպէս թշնամի օգնական ոյժերի, նոյնպէս եւ զօրքի համար, ուստի պաղ զէնքը հնարաւորութիւն է տալիս՝ նիւթելու թշնամի խուժանների մէջ լռիկ ու սոսկալի կոտորած:

բ) Անհատական սպանութիւնների ժամանակ.

եւ գ) Դիմադրութիւն ներսից՝ թշնամին տուն խուժելու միջոցին — պաղ զէնքը շարունակ առաջ ու յետ շարժելով՝ հորիզոնական ուղղութեամբ՝ դրան կից պատի յետեւից:

Կռւի ընթացքում հակառակորդին մօտիկ գտնւող տները պէտք է գիշերը հանգցնեն ճրագները կամ ծածկեն լուսամուտները, որ լոյսը եւ լոյսի տակ երեւացող մարդիկ իրանց վրայ չհրաւիրեն թշնամու գնդակները:

Կռւի օրերում Զինւորական Շտաբը կամ հրամանատարը իր ստորագրութեամբ առժամապէս զէնքերը հաւաքում է կռւի անընդունակ ժողովրդից եւ բաժանում կռւի ընդունակ անձերին:

Յանկարծակի թաղը ներս խուժող հակառակորդ ամբոխի գլխին՝ տների բարձր յարկերի լուսամուտներից պէտք է թափել ամէն բան, ինչ որ ձեռք կ'անցնի, ինչպէս օրինակ — քար, աղիւս, աթոռներ, երկաթէ իրեր, մոխիր, եռացրած ջուր, թթուտ (acide, Кислота) *եւ այլն, որպէսզի դանդաղութեան մատնւի թշնամու յառաջխաղացքը, մինչեւ թռուցիկ խմբերի օգնութեան հասնելը:*

Ռումբի արդիւնաւէտ գործածութիւնը հնարաւոր ու նպատակայարմար է միայն երկու դէպքում.

ա) Ներս խուժող թշնամի ամբոխի վրայ ծայրաթաղերի փողոցներում՝ անկիւնի տներից։

եւ բ) Ձեռքի թեթեւ ռումբը՝ թշնամուն իր ամուր դիրքից դուրս վանելու համար։

Բայց երկու դէպքումն էլ ռումբը պէտք է գտնւի գործը հասկացող եւ փորձուած ձեռքերում։

Ծանօթ.– Թշնամուն իր դիրքից դուրս քշելու համար՝ լաւագոյն միջոց է նաեւ դիրքի հրդեհումը, եթէ այնտեղ դիւրավառ նիւթեր կան։

ՅԱՐՄԱՐԱԳՈՅՆ ԴԻՐՔԵՐ

Դիրքը միաժամանակ ծառայում է երկու նպատակի — պաշտպանւել թշնամու գնդակից եւ այդ պաշտպանւած տեղից հարւածել հակառակորդին։ Լաւագոյն դիրքը, անշուշտ, այն է, որ իշխում է շրջակայքի վրայ։ Իշխող կամ տիրապետող կոչւում է ա՛յն բարձր դիրքը, որտեղից կարելի է գործել մեծ տարածութեան վրայ։ Դաշտի վրայ բարձրացած լեռը կամ բլուրը, օրինակ, իշխող դիրք է։ Բայց սխալ է եւ թիւրիմացութիւն, որ քաղաքում ամէն մի բարձր կամ թէկուզ ամենաբարձր տունը մարդիկ համարում են իշխող։ Փողոցի լայնութեան այս կամ այն կողմի վրայ շինւած տունը, ինչքան էլ բարձր լինի,— տիրապետող չէ։ Այդպիսի տան բարձունքից կարելի է տեսնել եւ գործել միայն իր առաջը ձգւող փողոցի լայնութեամբ եւ ամենաշատը՝ դրա վրայ կ՚աւելանայ մի ուրիշ՝ հարեւան փողոցի փոքրագոյն մասը։ Մինչդեռ փողոցի երկայնութեան ճակատի վրայ գտնւող տունը, ո՛րքան էլ ցածր լինի, էապէս իշխող է, որովհետեւ այնտեղից կարելի է պարզ տեսնել եւ ազատօրէն արձակել փողոցի ամբողջ երկարութեամբ։ Բայց կայ աւելի յարմարագոյնը։ Դա խաչաձեւ իրար կտրող երկու փողոցի միացման կէտն է, ուր կազմւում է չորս անկիւն եւ որտեղից հնարաւոր է դառնում հրացան արձակել ո՛չ թէ մէկ, այլ երկու փողոցի երկարութեամբ։ Ճիշտ է, անկիւնում՝ բաց փողոցի վրայ կռւողը ինքնապաշտպանութեան համար լաւ պատսպարւած չէ՛ — կառավարութիւնն էլ հազիւ թէ թոյլ տայ շինել պատնէշներ (բարրիկադներ) — բայց ամենեւին դժւար չէ՛ հողով լցւած երկու տոպրակ կամ մի քանի քար դնել իրարու վրայ եւ պառկել նրանց ետեւը։ Տափարակի վրայ պառկած, չոքած կամ կանգնած դիրքով հրացանաձգութիւնը ունի եւ ա՛յն առաւելութիւնը, որ հորիզոնական ուղղութեամբ սլացող գնդակը — եթէ չեղւի էլ կէտ-նպատակից, որ շատ սովորական է,— նորէն իր երկար ճանապարհին կարող է հանդիպել ուրիշ թշնամի անձերի։ Մինչդեռ բարձունքից դէպի ցած արձակւող եւ թեք ուղղութեամբ թռչող գնդակը կէտ-նպատակից չեղւելով մխւում է գետնի մէջ ապարդիւն։

Ուրեմն լաւագոյն դիրքը քաղաքում փողոցի երկայնութեան ճակատի վրայ գտնւող տունն է եւ, մանաւանդ, խաչաձեւ իրար կտրող փողոցների անկիւննե-

ը։ Ըստ կարելւոյն՝ պէտք է խուսափել բարձր տներից, մանաւանդ գիշեր ժամանակ։ Խաւարի մէջ եւ լուսնի լոյսի տակ ցածից դէպի վեր տեսնւում է շատ հեշտ, մինչդեռ բարձրում գտնւող մարդը ոչինչ չէ՛ նկատում վարը։ Այդ է պատճառը, որ գիշերային վտանգաւոր ճանապարհորդութեան ժամանակ, փորձառու ճամբորդը երբեմն-երբեմն կռանում կամ նոյնիսկ պառկում է՝ գետնի վրայից դէպի հեռուն նայելու համար։

Ծանօթ.– Միւս երեսում զետեղուած է քաղաքային դիրքերին վերաբերեալ էսկիզը (նկարը) եւ նրա բացատրութիւնը:



Այս նկարից պարզ երեւում է, որ երեք տեղ փողոցները իրար կտրում են խաչաձեւ եւ կազմում են երեք քառանկիւն — ա, է, ը։ Այստեղ վերցրած է իբրեւ դիրք «Ա» կէտը՝ իր չորս անկիւնով։ Ուշադրութեամբ դիտողն իսկոյն կը նկատի, որ «Ա» կէտից անարգել կարելի է արձակել մինչեւ «Գ» ու «Դ» եւ «Ե» ու «Զ», այսինքն երկու փողոցների ամբողջ երկարութեամբ։

Իսկ փողոցի ճակատի տունը, եթէ վերցնենք «Գ», հնարաւորութիւն է տալիս արձակել մինչեւ «Դ», այսինքն մի փողոցի երկարութեամբ միայն։

Մինչդեռ փողոցի լայնութեան վրայ գտնուող տունը, օրինակ, «Թ», թոյլ կը տայ արձակել «Ժ»-ի ուղղութեամբ, որ կազմում է փողոցի լայնութիւնը եւ դուցէ այնտեղից կը նշմարուին մի քանի փոքրիկ կէտեր եւս հեռաւոր փողոցներում, այն էլ եթէ արգելք չլինեն շրջակայ շինութիւնները։

Ընթերցողների ուշադրութիւնը հրաւիրւում է ե՛ւ մի ուրիշ շատ կարեւոր հանգամանքի վրայ. թէեւ յարմար է կանգնել եւ կռւել մեր ընդունած դիրքի չորս անկիւնների կենտրոնում, այսինքն ճիշտ այն կէտի վրայ, որ նշանակւած է Ա տառով, բայց ենթադրելով որ կառավարութիւնը թոյլ չի տայ շինել այնտեղ պատնէշներ, բարրիկադներ եւ դուցէ ժամանակն ու պայմաններն էլ չե՛ն ների, որ կռւողները, իբրեւ դիրք, իրար վրայ դնեն մի քանի քար կամ հողով լիքը տոպրակ, ուրեմն նրանք ամբողջ մարմնով կը մնան բաց ու անպատսպար տարածութեան վրայ եւ ենթակայ սպանւելու վտանգին։ Այդ անհաճոյ դրութիւնից դուրս գալու համար, պէտք է ընտրել՝ իբրեւ պատրաստի դիրք, փողոցի չորս անկիւնը — 1, 2, 3 եւ 4։

Նկարը նորից դիտեցէք եւ ուշադրութեամբ. դէպի «Գ» արձակելու համար պէտք է կանգնել անկիւն «1»-ում, դէպի «Զ» — անկիւն «2»-ում եւ այլն։ Կէտանշանները (------) նկարի վրայ ցոյց են տալիս կռւողի կանգնելու տեղը եւ գնդակի ուղղութիւնը։ Որովհետեւ հրացանաձգութեան ժամանակ անհրաժեշտ է աջ ուսը հրացանի կոթի համար եւ աջ աչքը՝ նշան առնելու համար, այդ պատճառով էլ պէտք է ընտրել ա՛յն անկիւնը, որը հնարաւորութիւն է տալիս դուրս հանել պատի ետեւից մարմնի միայն այդ մասերը։ Դրանով նշանը թշնամու գնդակի առաջ փոքրանում է մինչեւ minimum *եւ սպանւելու վտանգը գրեթէ վերանում։*

ԸՆԴՀ. ՊԱՏԿԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄԸ

Ենթադրելով՝ որ նախապատրաստական շրջանում ինքնապաշտպանութեան գործը լաւ կազմակերպւած եւ ամէն ինչ խնամքով կարգի է բերւած՝ վերը մատնանշած հրահանգների համաձայն, որ ժողովուրդը ընդհարման նշանների օրերում ընտանիքներն ու ապրանքը փոխադրել է արդէն քաղաքի ապահով մասերը եւ հոգացել իր կենսական մթերքների պաշարը, որ ինքնապաշտպանութեան խմբակները կազմ ու պատրաստ են եւ պարզ գիտակցում են իրանց բոլոր անելիքը, — կը ստացւի առաջին կռւի հետեւեալ ամփոփ պատկերը.—

Շուկայում, հրապարակում կամ մի այլ նման տեղում — ուր միշտ սկիզբն է առնում կռիւը — թշնամին որեւէ առիթով սկսում է կոտորածը։ Այդ բայոնում շրջող «Ֆռռան» խումբը անմիջապէս ցոյց է տալիս առաջին եռանդուն դիմադրութիւնը։ Իսկոյն, սրանց օգնութեան են հասնում զինւած անձեր շրջակայ խանութներից ու այլ տեղերից։ Մինչդեռ սրանք միացեալ ոյժերով հարւածում են թշնամուն, անզէնները կողպում են խանութ ու գրասենեակ եւ շտապով հեռանում են քաղաքի ապահով մասերը։ Շարունակւող հրացանաձգութեան ձայնը տարածւում եւ լսւում է քաղաքի միւս մասերում։ Այնտեղ հասկանում են, որ սկսւած է կռիւը եւ անմիջապէս դիմում են զէնքի։ Սրանք, առանց ժամանակ կորցնելու, գերում կամ փախցնում են հայկական մասերում եւ թաղերի սահմաններում գտնւող հակառակորդներին։ Կարճ ժամանակից յետոյ փողոցները եւ ընդհարման կէտերը մաքրւում են երկու անզէն ժողովուրդներից եւ ասպարէզի վրայ մնում են յաղթող կռւողները։ Դրանից յետոյ «Ֆռռանին» օգնութեան եկած անհատները քաշւում են դէպի հայկական սահմանները, իսկ ինքը՝ խումբը, մասերի բաժանւած՝ վազում է դէպի քաղաքի շրջակայքը եւ մեծ ճանապարհները։ Այդ բոլորի հետ զուգընթաց՝ Մնայուն ու Թռուցիկ խմբերը անյապաղ գրաւում են իրանց համար նախորոշած դիրքերը։ Այդտեղից նրանք շարունակում են իրանց գործը, եթէ դեռեւս չի՛ դադարել կռիւը։ Կռիւը դադարելուց յետոյ ոյժերի մի մասը վերադառնում են իրենց տները հանգստանալու՝ գիշերւայ փոխարինութեան համար։ Գիշերը, կռւող հերթական խմբերից բացի, իրենց պաստում կանգնում են ե՛ւ պահապաններն ու նրանց վրայ հսկողները։ Այսպիսով քաղաքը վերածւում է մի կռւող բանակի, որին թշնամին չի՛ կարող մօտենալ անպատիժ։ Եւ այս զինադադարի միջոցին է, որ ծրագրւում է յարձակումն, եթէ կարիք կայ դրան եւ որի մասին խօսք կը լինի յետոյ։

ԳԻՒՂ

Մենք ունինք ընդամէնը երեք դասի (կատեգորիա) գիւղեր.
ա. Զուտ հայաբնակ գիւղ՝ հայկական շրջանում.
բ. Զուտ հայաբնակ գիւղ՝ մենակ ընկած օտար շրջանում.
եւ գ. Խառն ազգաբնակութիւն ունեցող գիւղ, ուր ապրում են նաե՛ւ հայեր։

Ինքնապաշտպանութեան կազմակերպումը բոլոր կարգի գիւղերում միեւնոյն է։ Ամէն գիւղ կազմում է մի խումբ, որի մէջ մտնում են բոլոր մարտական ուժերը։

Ծանօթ.– Շատ մեծ գիւղերը կարող են կազմակերպել մի քանի խումբ – քաղաքի նման թաղական սիստեմով:

Ամէն մի խումբ բաժանւում է երկու մասի — Մնայուն եւ Թռուցիկ։

Ծանօթ.– Ինչպէս խառն, նոյնպէս եւ զուտ հայաբնակ, բայց օտար շրջանում մենակ ընկած հայկական գիւղերի խմբերը չեն բաժանւում երկուսի եւ միշտ մնայուն են, որովհետեւ նրանց աշխարհագրական դիրքը աւելի անպաստ է եւ կարիք ունի մնայուն աւելի մեծ ոյժերի:

Մնայուն խումբն ունի իր ընտրովի խմբապետն ու օգնականը եւ Թռուցիկն էլ՝ իրենը։
Ամէն մի գիւղի Մնայուն եւ Թռուցիկ խմբերն ընտրում են ե՛ւ մի ուրիշ աւելի փորձառու ընդհանուր խմբապետ՝ «Գիւղական խմբապետ» *անունով։*
Գիւղական խմբապետին *են ենթարկւում գիւղի բոլոր մարտական ուժերը եւ ինքնապաշտպանական գործերը եւ նա համարւում է Շրջանապետի օգնականը կամ Զինւորական Շտաբի ներկայացուցիչը։*
Միեւնոյն շրջանում գտնուող բոլոր «գիւղական խմբապետները» ժողովւում եւ ընտրում են «Ժամանակաւոր Զինւորական Շտաբ»՝ *բաղկացած երեք հոգուց։*

Ծանօթ.– Ուր չկան այդքան ձեռնհաս մարդիկ, ընտրում են մի Շրջանապետ եւ սա՝ իր օգնականը:

Շրջանային Ժամանակաւոր Զինւորական Շտաբի կամ Շրջանապետի պարտականութիւններն ու իրաւունքները նոյնն են, ինչ որ քաղաքինը։

Ծանօթ.– Ընդհարման ծանր օրերում, եթէ հանդէս է գալիս այս կամ այն յեղափոխական ուժեղ կուսակցութիւնը – աւելի լաւ կազմակերպւած ու առաւել

փորձառու ղեկավարներով – կռի գլխաւոր ղեկավարութիւնը յանձնւում է այդպիսի կուսակցութեանը եւ ինքնապաշտպանութեան բոլոր մարմինները մնալով իրանց պաշտօնում ու դերի մէջ՝ ենթարկւում են այդ Գերագոյն Ոյժի ընդհանուր ղեկավարութեանը:

Շտաբը կամ Շրջանապետը ընդհարման նախօրեակին իր ստորագրութեամբ ու պատասխանատուութեամբ հաւաքում է զէնքերը կռի անընդունակ ժողովրդից եւ բաժանում է ընդունակներին։

Ծանօթ.–
ա. Կարիքն անցնելուց յետոյ՝ զէնքը վերադարձւում է իր տիրոջ:
բ. Կռի մէջ սպանուածի կամ վիրաւորի վրայից թշնամու ձեռքն ընկած զէնքի արժէքը վճարում է ամբողջ գիւղը:
գ. Թշնամուց խլած զէնքը պատկանում է խլողին կամ խլողներին:

Մօտիկ շրջանները իրար հետ կապ են հաստատում՝ փոխադարձ օգնութեան համար։

Ծանօթ.– Յարաբերութիւնների համար չպէտք է բաւականանալ երկաթուղային ու փոստային ճանապարհներով, որոնք հեշտութեամբ կարող են խանգարուել կռի դէպքում, այլ պէտք է որոնել ուրիշ լեռնային կամ դաշտային ճանապարհներ, որոնք կարող են կառավարութեան ու թշնամու ուշադրութիւնից վրիպել:

Յարձակման ենթարկւած գիւղը իսկոյն սուրհանդակներ է ուղարկում դէպի հարեւան գիւղերը՝ օգնութիւն խնդրելու համար։

Ծանօթ.– Մօտիկ գիւղը հրացանների ձայնը լսելուն պէս՝ օգնութեան է ուղարկում իր թռուցիկ խումբը եւ միաժամանակ իր սուրհանդակների միջոցով հաւար է ձգում շրջակայ միւս գիւղերը:

Ինչպէս խառն գիւղերում — ուր հայերը կազմում են փոքրամասնութիւն ու ժամանակին չեն կարող ստանալ օժանդակ ոյժեր միւս հայ գիւղերից,— նոյնպէս ե՛ւ օտար շրջանում մեն-մենակ ընկած զուտ հայաբնակ գիւղերի բնակիչները կռւի նախօրեակին իրանց շարժական գոյքով փոխադրւում են հայկական շրջանները, իսկ անշարժ կայքերի ապահովութեան պատասխանատուութիւնը թողնում են հարեւանների վրայ, կառավարութեան միջոցով։

Ծանօթ.– Այն գիւղերը, որոնք ապրում են խառն կամ կողք-կողքի, թէեւ օտար, բայց չընդհարւող ժողովրդի հետ, նրանց դրութիւնը միանգամայն

ապահով է եւ այս յօդուածը, ուրեմն չի վերաբերում այդպիսիներին:

Խառն գիւղերում, ուր հակառակորդները հայերի համեմատութեամբ կազմում են փոքրամասնութիւն եւ չեն փախչում ընդհարման նախանշանների օրերում, պէտք է ընդհանուր կռւի ընթացքում պահել նրանց պատանդ, իբրեւ սպառնալիք, եւ կամ թէ անվնաս բոլորին դուրս հանել գիւղից, նայելով թէ ինչպէ՞ս է վարւում թշնամին համանման դէպքերում հայերի հետ եւ ինչպէ՞ս է վերաբերւում կառավարութիւնը այդպիսի ակտերին:

Ծանօթ.– Ոչ մի դէպքում թոյլ չպէտք է տալ, որ նրանք գիւղում մնան բոլորովին ազատ, որպէսզի չլրտեսեն հայերի ոյժն ու շարժումը եւ լուր տան թշնամուն:

Անհրաժեշտ է լրտեսների միջոցով ուսումնասիրել թշնամու մօտաւոր ոյժը եւ նրա շարժումներն ու յարձակման ծրագիրը։

Ծանօթ.– Որովհետեւ գործնականապէս չափազանց դժւար է այդ,– ուստի պէտք է առանձին ուշադրութիւն դարձնել գոնէ արտաքին երեւոյթների վրայ եւ նրանցից եզրակացութիւններ հանել: Այսպէս օրինակ,– եթէ մօտակայ հակառակորդ գիւղը հեռացնում է կանանց ու երեխաներին եւ փոխարէնը մտնում են այր մարդիկ դրսից,– կը նշանակի պատրաստւում է յարձակում: Իսկ եթէ հեռացնում են ընտանիքներն ու արժէքաւոր շարժական կայքը եւ նոր (ուրիշ) մարդիկ չեն երեւում գիւղում,– դա արդէն վախի նշան է եւ զգուշութեան միջոց:

Ազգային ընդհարման ընթացքում դաշտային աշխատանքը գիւղերում դառնում է չափազանց վտանգաւոր։ Եւ որպէսզի այդ աշխատանքը չդադարի ու առաջ չգայ տնտեսական քայքայում,– անհրաժեշտ է այդ աշխատանքներին տալ համայնական բնաւորութիւն՝ Թռուցիկ խմբի հսկողութեան տակ։

Ծանօթ.– Գիւղից հեռու դաշտային աշխատանքները գիւղացիք հաւաքաբար կատարում են հերթով այսօր մէկի, վաղը՝ միւսի համար եւ այսպէս շարունակ: Իսկ այդ միջոցին թռուցիկ խումբը նախապէս գրաւելով շրջակայ յարմար դիրքերը՝ հսկում է աշխատաւորների ապահովութեանը:

Ծանօթ.– Թռուցիկ խումբը այդ հսկողութեան դիմաց վարձատրութիւն չի ստանում, միայն նրան պատկանող անդամների դաշտային աշխատանքները ձրի կատարում են գիւղացիք հերթով:

Որովհետեւ ջրաղացները եւ անտառները սովորաբար գտնւում են գիւղից

հեռու եւ կուլի ընթացքում ջրաղաց ու անտառ գնալը դառնում է անհնարին, ուստի հարկաւոր է նախօրօք պատրաստել ալիւրի եւ վառելափայտի պաշարը։ Առանձին հոգ պէտք է տանել նաեւ աղբիւրի կամ առուի ապահովութեան վրայ, որ թշնամին չը կտրի նրանց կուլի ժամանակ, կամ պատրաստ ունենալ ջրհորներ ու ջրամբարներ։

ԴԻՐՔԵՐ

«Մնայուն խումբը» միշտ պէտք է պահի իր ձեռքում գիւղի մօտ գտնուող բարձրագոյն դիրքը։ Եւ եթէ այդ դիրքը հողաբլուր է (եւ ո՛չ թէ ժայռ կամ քար), պէտք է իշխող բարձրութեան վրայ կատարել փորուածքներ բաւականաչափ լայն եւ մի կանգունի չափ խորութեամբ, որ կարելի լինի մէջը ազատ տեղաւորուել նստած դիրքով եւ հարկաւոր դէպքում կուլել այդ ձեւով։

Եթէ շրջակայ բնական դիրքերը փոքր ինչ հեռու են եւ այնպէս են դասաւորուած, որ թշնամին կարող է «Մնայուն խմբի» գրաւած իշխող դիրքը կտրել գիւղից եւ չէզոքացնել,— պէտք է բաց անել մի խրամատ, գիւղից մինչեւ այդ դիրքը, որ յարաբերութիւններն ու պաշարի հայթայթումը ապահով կատարուի խրամատի միջով։

Եթէ բնական կամ ձեռատունկ անտառ կայ գիւղի պատերին հասած, պէտք է կտրտել նրան 70-80 քայլի տարածութեամբ, որ անտառի եւ գիւղի միջեւ մնայ որոշ դատարկ տարածութիւն՝ թշնամու առաջխաղացքը դժուարացնելու համար։

Եթէ գիւղը շրջապատուած է բարձր պատեր ունեցող այգիներով՝ թշնամին հնարաւորութիւն է ստանում, պատից պատ անցնելով, բոլորովին մօտենալ գիւղին։ Եւ որովհետեւ այդ պատերը քանդելն ու հողին հաւասարեցնելը պահանջում է մեծ աշխատանք ու երկար ժամանակ եւ, բացի այդ, դրանով առաջ է գալիս տնտեսական խոշոր վնաս,— ուստի ո՛չ թէ պէտք է քանդել նրանց, այլ պէտք է գիւղի ծայրում, այգիների ուղղութեամբ, կանգնեցնել մի աշտարակ 10-15 կանգուն բարձրութեամբ։ Անձրեւից ու կարկտից, ցրտից ու արեւից պաշտպանուելու համար՝ աշտարակի գլուխը պէտք է լինի ծածկուած եւ վերին մասը փոքրիկ բացուածքներ պիտի ունենայ՝ հրացանաձգութեան համար։ Դրանից զատ, վերին մասում, կատարից երեք կանգուն ցած, անուում է տախտակամած եւ այսպիսով ստացւում է սենեկանման մի բան, ուր ապրում են հերթապահ կռուողները։ Այդ բարձրութիւնից հնարաւոր է դառնում թշնամուն ազատօրէն նկատել ցանկապատի ետեւում եւ խփել նրան ամենայն աջողութեամբ։

Ընդհարման նախօրեակին գիւղի ամէն մի փողոցի մուտքի վրայ, երկու հանդիպակաց պատերի տակ, պէտք է կանգնեցնել երկու հողաբլուր ա՛յն հաշւով, որ դրանց արանքով անարգել անց ու դարձ անեն սայլերը, խաղաղ ժամա-

նակ։ Կուի միջոցին այդ հողաբլուրների վերին մասերը իսկոյն պէտք է քանդել եւ թափել երկուսի միջեւ գտնուած դատարկ տարածութեան վրայ, որ ստացուի մի ամբողջացած հողապատ 1-2 քայլ բարձրութեամբ։ Այդ հողապատերը ունին երկու նպատակ։

Նախ՝ նրանց ետեւը, իբրեւ ապահով դիրք, տեղաւորւում են կուողները. եւ երկրորդ՝ դրանք դժւարացնում են թշնամու գրոհն ու մուտքը գիւղի մէջ, մանաւանդ ձիաւորներինը։

Բացի վերը յիշածներից, պէտք է դիրքերի վերածել եւ գիւղի ծայրերի բոլոր ա՛յն տները, որոնք իրանց դիրքով յարմար կը նկատուին կուի տեսակէտից։

Ծանօթ.– Դիրքերը շինում ու ամրացուում են բոլոր գիւղացիների հաւաքական աշխատանքով:

Կուի օրերում ամէն մի գիւղ անակնկալ յարձակումներից ազատ մնալու համար՝ հերթով դուրս է հանում բաւարար թւով գիշերային զինուած պահապաններ, որոնց մի մասը գրաւում է գիւղի մուտքերը, իսկ միւս մասը պտոյտներ է գործում գիւղի շուրջը։

ՇՐՋԱՆ

Գիւղերի կազմակերպումով լրանում է եւ գիւղախմբի — այսինքն շրջանի կազմակերպումը։ Արդէն ցոյց է տրուած, թէ կուի դէպքում ի՞նչ պէտք է անի ամէն մի գիւղ ինչպէս իր, նոյնպէս եւ հարեւանների վերաբերմամբ։ Բայց դեռ չի ասուած, թէ ի՞նչ է շրջանի հաւաքական դերը թէ՛ իր եւ թէ դրացի շրջանի նկատմամբ։

Որովհետեւ այդ դերը սերտ կապ ունի յարձակողական եւ պաշտպանողական կռիւների բնաւորութեան հետ, ուստի անցնենք այս հարցի լուսաբանութեանը։

ՅԱՐՁԱԿՈՂԱԿԱՆ ԵՒ ՊԱՇՏՊԱՆՈՂԱԿԱՆ ԿՌԻՒՆԵՐ

Յարձակողական կռիւ չը պէտք է այստեղ հասկանալ ընթացիկ պատերազմական իմաստով։ Յարձակողական կռիւը ժողովուրդների ընդհարման գործում՝ ռազմական պայմանները չահագործող մի ձեւ է, որի անմիջական նպատակն է ինքնապաշտպանութեան *ապահովումը։*

Եւ ո՛վ որ կարծում է, թէ այդ ապահովումը կարելի է ձեռք բերել՝ միշտ մնալով պաշտպանողական սահմաններում, նա չարաչար սխալւում է։

Պաշտպանողական սահմաններում ապահով մնալու համար հարկաւոր է, որ յարձակման ենթարկւող կողմը ընդհարման բոլոր կէտերում լինի թւով աւելի՝ քան հակառակորդը, որակով բարձր եւ ունենայ աւելի շատ ու կատարելագործւած զէնքեր եւ առատ ռազմամթերք։ Բայց որովհետեւ բոլոր կէտերում անկարելի է ունենալ այդ առաւելութիւնները,— ուստի անհրաժեշտ է դառնում որոնել կռւի համար ուրիշ աւելի նպատակայարմար գործելակերպ (տակտիկ)։

Այդ տակտիկի մօտակայ նպատակը պէտք է լինի բոլոր յարակից կէտերում թշնամուն պահել անակնկալ յարձակումների մշտական երկիւղի մէջ, որպէսզի նրանք ստիպւած լինին մնալ իրանց տեղերում եւ չը կարողանան համախմբւել ու կենտրոնացած ոյժով խփել հայկական այս կամ այն շրջանին, կամ սրա մի մասին։ Իսկ եթէ թշնամուն աջողւի էլ յարձակւել ու ենթարկել որոշ վնասի հայկական այս կամ այն մասը — եւ անպատճառ կ՚աջողւի, որովհետեւ նա միշտ կը գտնի թոյլ կէտեր — պէտք է փոխարէնը անպատճառ հատուցանել անյապաղ, որպէսզի նա չխրախուսւի անպատիժ յաղթութիւնից եւ չանի նորանոր քայլեր։

Այստեղից պարզ երեւում է, որ երկու դէպքումն էլ հակայարձակումը դառնում է հրամայական։

Բայց շատ լուրջ եւ չափազանց էական հարց է, թէ ո՞ւմ վրայ պէտք է կատարել հակա-յարձակումը — յանցաւո՞ր մասի, թէ առհասարակ թշնամու որեւէ մասի վրայ։

Հարցին նայելով արդարութեան տեսակէտից, ոչ ոք ի հարկէ չի՛ ասի, թէ մեղաւորի փոխարէն պէտք է տուժի անմեղը եւ ամէնքը կը գան միմիայն մի եզրակացութեան — որ պատիժը պէտք է կրի յանցաւորը։

Բայց ի՞նչ կը լինի դրա հետեւանքը։

Ֆիզիքական օրէնքով՝ ոյժը միշտ ուղղւում է դէպի ա՛յն կողմը, ուր թոյլ է դիմադրութիւնը։ Եւ այսպէս, բնական այս օրէնքի համաձայն, թշնամին սիստեմատիկ կերպով կենտրոնացած ոյժերով յարձակման է ենթարկում այսօր հայոց այս ինչ թոյլ կէտը, վաղն՝ այն ինչ եւ այսպէս շարունակ։ Ու անվերջ կոտորած եւ միշտ անպատիժ։

Բայց հարցը եւ նրա հետեւանքները հիմնովին կը փոխւին, եթէ թշնամի ազգի վրայ մենք նայենք իբրեւ մի ամբողջութեան վրայ։ Հէնց այդպէս էլ պէտք է նայել, որովհետեւ ազգային ընդհարման ժամանակ ամբողջ ցեղն ստանում է կռւող բանակի բնաւորութիւն։ Եւ ո՞վ կարող է ասել, թէ կռւող բանակի բնաւորութեան։ Եւ ո՞վ կարող է ասել, թէ կռւող բանակի մէջ կայ անպարտ զօրամաս։ Եթէ որեւիցէ զօրամասի համար դեռեւս չի ներկայացել ընդհարւելու առիթ, դա տակաւին գրաւական չէ, որ նա տրամադրւած է բարեկամօրէն, եւ առաջին յարմար դէպքում՝ իրան թոյլ չի տայ թշնամուն յատուկ բոլոր քայլերը։

Պարզ է, ուրեմն, որ հակամարտ ցեղը կամ ազգը կռւի պահուն մի անբաժան

ամբողջութիւն է եւ նրա ամէն մի մասը մեզ համար թշնամի։

Հարւածել թշնամու այս կամ այն մասին — կը նշանակէ թուլացնել նրա ամբողջութիւնը։ Եւ ինչքան յաճախ ու արագ կատարւին այդ տկարացումները, այնքան աւելի չուտ քայքայման կը մատնւի ամբողջութիւնը, որի համար պարտութիւնը կը դառնայ անխուսափելի եւ հետեւանքը խաղաղացում, ինչ որ մեր ձգտումների վերջնական նպատակն է։

Երեւի կը գտնւին մարդիկ, որ գործունէութեան այս եղանակը կը համարեն վտանգաւոր, մտածելով որ գործողութիւնների այս ձեւը թշնամուն կարող է ծառայել իբրեւ դաս եւ նա էլ կը սկսի իր կորստաբեր յարձակումները մեր թոյլ կէտերի վրայ։

Թշնամին ամենեւին կարիք չունի այդպիսի դասերի, եւ մենք ինքներս պիտի սովորենք նրանից։

Կովկասի հայ-թաթարական ընդհարումների ժամանակ թշնամին իր առաջին ջարդը տուաւ Բագւին, ուր հայերը մի բուռ են այդ քաղաքի եւ շրջակայ թաթարների մէջ. երկրորդ կոտորածը սկսեց Շարուրում, ուր ընդամէնը վեց հայ գիւղ կայ՝ ընկած վաթսուն թաթար գիւղի մէջ. երրորդ հարւածը նա իջեցրեց Նախիջեւան քաղաքի ու գաւառի վրայ, ուր հայերը երկու անգամ պակաս են թաթարներից, որոնց մէջքը, ի լրումն ամենայնի, ամրացած է Շարուրի 60 ցեղակից գիւղերով եւ այլն։ Բայց նա, այսինքն թշնամին, իր բախտը երբեք չփորձեց Ալեքսանդրապոլում, ուր 30000 հայութեան մէջ միայն 3000 թաթար կայ եւ քաղաքի շրջակայքն էլ ամբողջովին հայաբնակ են։

Եւ ով հետեւել է հայ-թաթարական ընդհարումների ընթացքին ու զարգացմանը Կովկասում՝ հաւանօրէն նկատած կը լինի, որ հայերը այդ ժամանակ կամովին ստանձնել էին ծիծաղաշարժ ասպետի դեր։ Հէնց որ Ղարաբաղում կամ Երեւանեան նահանգում թաթարների որեւէ թոյլ կէտ ենթարկւում էր յարձակման, իսկոյն Բագւի պատւաւոր թաթարները ներշնչում էին այնտեղի իշխան հայերին, թէ թուրք ամբոխը չափազանց գրգռւած է եւ իրանք այլեւս չեն կարող պատասխանատու լինել Բագւայ խաղաղութեան համար։ Եւ հեռագիրները անմիջապէս հայերի կողմից թռչում էին այս բովանդակութեամբ. «Ի սէր Աստուծոյ՝ դադարեցրէք, եթէ ո՛չ՝ Բագւի հայերը կը տրորւին ոտքի տակ»։ Մինչդեռ Ալեքսանդրապոլի թաթարները, հայերի ներշնչմամբ, պարբերաբար հեռագրում էին ուր հարկն է, որ իրանք կատարելապէս ապահով են, որ իրանց մազին դիպչող չի լինի։

Բայց այս բոլորից չպէտք է, ի հարկէ, եզրակացնել, թէ մենք չարունակ պիտի որոնենք թշնամու թոյլ կէտերը եւ յանուն ինքնապաշտպանութեան կոտորենք անպաշտպաններին։ Բոլորովին արդար կը լինէր եւ խաղաղացման համար միանգամայն նպատակայարմար, եթէ պատժի եւ պատասխանատւութեան ենթարկէինք միմիայն յանցաւոր շրջանը։ Եւ այսպէս, եթէ Բագւի կոտորածից անմիջապէս յետոյ կարողանայինք ինքնապաշտպանութիւնից անցնել հակայարձակման, չարիքը, անշուշտ, դրանով էլ կը սահմանափակւէր եւ մենք

չէինք լինի երկամեայ սոսկումների ակամայ մասնակիցը։

Թիւրիմացութիւններից հեռու մնալու համար պիտի չեշտուի, որ վերջին երկու հասկացողութիւնները, այսինքն «պատիժ յանցաւոր շրջանին կամ յարձակում որեւէ թոյլ կէտի վրայ», միմեանց չեն հակասում. ընդհակառակը՝ նրանք լրացնում են իրար։

Դրանից եզրակացւում է ա՛յն, որ ըստ կարելոյն պիտի աշխատենք պատժի ենթարկել յանցաւոր շրջանը, իսկ այդ պատիժը ուր անհնարին է դառնում պայմանների չնորհիւ,— ամենեւին խորշելու չե՛նք հակահարուածը ուղղելու թշնամու թոյլ կէտերի վրայ։ Մեր միտքն ու զգացումը ըմբոստանում են դրա դէմ. սակայն, ի՞նչ արած,— դա մի ցաւոտ, ճակատագրական անհրաժեշտութիւն է, որի հետ կամայ-ակամայ հաշտւում էք...

Զգում եմ, որ ընթերցողս խսկոյն պիտի մտածի, թէ այս հայեացքը գուցէ ճիշտ է Կովկասի վերաբերմամբ, ուր հայ-թաթարական ընդհարումներն ապացուցին, որ հայերը ներկայանում են այնտեղ իբրեւ կռւող կողմ. հապա ի՞նչ կարող են անել տաճկահայերը, որոնք օսմանեան պետութեան մէջ ամէն տեղ կազմում են փոքրամասնութիւն եւ, որ գլխաւորն է, նրանք՝ պայմանների չնորհիւ, զինուած են համեմատաբար քիչ ու անվարժ են զէնքի գործածութեան։

Եթէ բոլոր օտար ազգերը կամ աւելի շուտով՝ մահմետական ազգերը Տաճկաստանում միանան հայերի դէմ եւ դեռ զօրքերն էլ օգնեն առաջիններին,— տարակոյս չկայ, որ խօսք անգամ չի կարող լինել ինքնապաշտպանութեան մասին։ Բայց ենթադրելով, որ սահմանադրական ռէժիմի օրով հազիւ թէ երբեւիցէ կայանայ այդպիսի մի միութիւն եւ ծագելիք ընդհարումը, ուրեմն, կարող է լինել միմիայն այս կամ այն ցեղի հետ առանձին, այն ժամանակ պարզ կը տեսնենք, որ ապագայում ընդհարուող ցեղը, որն էլ լինի նա, առանձին վերցրած՝ իր թւով խոշոր մեծամասնութիւն չի կազմում հայաբնակ շրջաններում եւ դրանով հեշտացնում է հայերի ինքնապաշտպանութեան գործը։

Բայց մի րոպէ ենթադրենք հակառակը — որ նոյնիսկ ապագայում էլ Թուրքիոյ մահմետական ցեղերը միաբանին առաջ բերելու հայերի ընդհանուր ջարդ։

Ի՞նչ պէտք է անել այդ դէպքում։

Այդ դէպքում հայ ժողովուրդը պէտք է անպայման համոզի, որ ջարդի մէջ կայ կառավարութեան մասնակցութիւնը եւ, վերջապէս, դէն շպրտի ոչխարի հաւատքը դէպի դասապը ու խորապէս անվստահ դէպի գայլերը՝ պէտք է օրհասական կռիւ մղի բոլոր հնարաւոր միջոցներով, քանի որ առանց դիմադրելու էլ միեւնոյն է պիտի կոտորուի. իսկ դիմադրութիւնով կոտորուելը մի կողմից սահմնափակում է սեփական զոհերի թիւը, միւս կողմից էլ ունի ե՛ւ այն առաւելութիւնը, որ թշնամին թէեւ ի վերջոյ յաղթական, բայց կռուի մէջ որոշ քանակութեամբ զոհեր տալով հայկական մի շրջանում, կը զգուշանայ պըրկերես ու համարձակ լինել գոնէ միւս շրջաններում:

Ծանօթ.– Հա՞րկ կայ յիշեցնելու, որ ինքնապաշտպանութեան բանակը

պէտք է ծայրայեղօրէն զգոյշ լինի զինադադարի կամ զինաթափութեան յորդորների հանդէպ, որպէսզի չը կրկնւին անցեալի ողբերգական սխալները: Չը պէտք է զինաթափ լինել պլատոնական խոստումների առջեւ: Մինչեւ կառավարութիւնը լուրջ, հաստատուն երաշխիք չը տայ, մինչեւ խաղաղութիւնը չը վերականգնի կատարելապէս, զինաթափութեան խնդիրը պիտի զբաղեցնի մարմինները:

ՊԱՇՏՊԱՆՈՒՄՆ

Ենթադրելով որ իւրաքանչիւր գիւղ արդէն նախապատրաստւել է ինքնապաշտպանութեան համար վերը տուած ցուցմունքների համաձայն, կը ստանանք հետեւեալ պատկերը.

Գիւղն ամրացած է յարմարագոյն դիրքերով: Գիշեր ժամանակ զինւած պահապանների մի խումբ գրաւում է այդ դիրքերն ու գիւղի մուտքերը, իսկ միւսը՝ պտոյտներ է գործում գիւղի շուրջը: Թէ՛ մէկ եւ թէ միւս խումբը պահում է իր մօտ շներ, որոնք տեսնում են աւելի հեռուն եւ իրանց հաջոցով հաստատում են թշնամու ներկայութիւնը մերձակայքում: Շրջուն խումբը անմիջապէս ձեռնարկում է խուզարկութեան իր շների հետ միասին: Հանդիպելով թշնամու առաջին շարքերին, խումբն իսկոյն հրացաններ է պարպում նրանց կողմը: Այդ ազդարար ձայնը լսելուն պէս՝ գիւղում գտնւող պահապանները իրանք դիրքերի վրայ մնալով կազմ ու պատրաստ՝ խփում են եկեղեցու զանգերը՝ իբրեւ նշան մօտալուտ վտանգի եւ միաժամանակ լրատուներ են ուղարկում զինւած մարդկանց տները: Սրանք շտապում են իրանց համար նախորոշած դիրքերը, միւս կողմից էլ շրջուն խումբն է նահանջում դէպի գիւղ: Միաժամանակ այդ բոլորի հետ, քանի որ դեռեւս չի սկսւել կռիւը եւ գիւղից դուրս գալու հնարաւորութիւն կայ, սուրհանդակները դուրս են գալիս ու գիւղից փոքր ինչ հեռու որեւիցէ տեղ պահւած՝ սպասում են հետեւանքին: Եթէ կռիւն սկսւում է, սրանք վազում են կամ ձին քշում դէպի հարեւան գիւղերը՝ հաւար ձգելու: Հակառակ դէպքում, այսինքն եթէ թշնամին այս կամ այն պատճառով յետ է նահանջում առանց կռւի, հարկ չկայ հարեւան գիւղերի թռուցիկ խմբերին անհանգիստ անելու:

Ընդհարման հէնց սկզբում գիւղի բոլոր ծայրատներից կանայք ու երեխաները քաշւում են կենտրոնական մասերը, որ իրանց լաց ու կոծով եւ աղմուկով շփոթմունք ու իրարանցում չձգեն կռւողների մէջ: Դիմադրութիւնը շարունակւում է բոլոր ա՛յն կէտերում ուր երեւում է թշնամին: Իսկ ա՛յն կէտերում, ուր չկայ թշնամին, զինւած մարդիկ չը պէտք է համարձակւին մի գնդակ անգամ արձակելու: Այդպիսի անմիտ հրացանաձգութիւնը մոլորութեան մէջ կը ձգի կռւողներին. կարծելով թէ գիւղը շրջապատւած է բոլոր կողմերից ու բազմաթիւ թշնամիներով նրանց ոգին կը տատանւի եւ ինքնավստահութիւնը կը

խախուտ, որի վերջը կը լինի ողբերգական պարտութիւն։ Ա՛յն կէտերը, ուր թշնամի չկայ, իրանք՝ կռուողները ո՛չ մի գնդակ չարձակելով հանդերձ, իրանցից պէտք է մի քանի մարդ ուղարկեն ուժեղացնելու միւս ա՛յն կէտերը, ուր աւելի սաստիկ է հրացանաձգութիւնը։

Մի առ ժամանակ յետոյ հասնում է ամենամօտ հարեւան թռուցիկ խումբը եւ կրակ է սկսում թշնամու թիկունքից։ Այդ պարագայում՝ հակառակորդը իր հրացանները դարձնում է թիկունքից զարկող թռուցիկ խմբի կողմը՝ ինքնապաշտպանութեան համար, եւ փոխադարձ հրացանաձգութեան ձայների ուղղութիւնից պարզ հասկանալի է դառնում օգնական խմբի երեւալը։ Գիւղից անմիջապէս դուրս է գալիս մի խմբակ դէպի այդ կողմը, որով թշնամին նահանջում է աջ ու ձախ կողմերի վրայ։ Այսպիսով ճանապարհը այդ կէտի վրայ մաքրւում է եւ օգնական խումբը, առանց յապաղելու, մտնում է գիւղ։ Գործողութեան այս ձեւը կրկնւում է ամէն մի օժանդակ խումբ երեւալու ժամանակ, մինչեւ որ յարձակման ենթարկւած գիւղը բաւականաչափ ուժեղանում է դրսից եկած օգնական ուժերով, եւ գրոհ է տալիս թշնամու վրայ ու ցրում նրան։

Այսպէս կատարւում է, ի հարկէ, երբ որ օգնութեան եկող ուժերը հասնում են փոքրիկ, հետեւապէս թոյլ խմբակներով։ Իսկ երբ որ նրանք լինում են միանգամից շատւոր ու ուժեղ, հարկ չկայ նրանց գիւղի մէջ առնելու համար միջոցների դիմել։ Այն ժամանակ նրանք սկսում են նրանց ուժեղ կռիւը թշնամու թիկունքից եւ գիւղից էլ դուրս են գալիս դիմադրող խմբերը, ու երկու կողմից հակառակորդին առնելով երկու կրակի մէջ՝ բոպէապէս ցրում են նրան։ Պէտք է շեշտենք, թէ յարձակումները առհասարակ կատարւում են արշալոյսին — ինչպէս ժողովուրդն է ասում՝ «քնի քաղցր ժամանակը»։ Դրա համար էլ անհրաժեշտ է խիստ կոնտրոլ, որ այդ ժամանակ պահապանները չթուլացնեն իրանց հսկողութիւնը եւ, որ վատթարագոյնն է՝ չքնեն։

Այսքանը գիշերային պաշտպանողական ընդհարման մասին.

Բայց յարձակումը կարող է տեղի ունենալ ե՛ւ ցերեկը։

Ցերեկը թշնամու յարձակումը կարող է կատարւել դաշտային աշխատաւորների կամ գիւղի վրայ եւ կամ երկու կէտի վրայ էլ միաժամանակ։

Բացայայտ լինելու համար՝ վերցնենք իւրաքանչիւր դէպքը առանձին։

ՑԱՐՁԱԿՈՒՄ ԴԱՇՏԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՒՈՐՆԵՐԻ ՎՐԱՅ

Դաշտային աշխատաւորների վրայ եթէ յարձակումը կատարւում է ճակատից, եւ ետեւը — դէպի գիւղը ճանապարհն ազատ է պաշարումից,— տարակոյս չկայ, որ աշխատաւորները փախչելու են դէպի գիւղ, իսկ նրանց վրայ հսկող թռուցիկ խումբը կռւի է բռնւելու հակառակորդի հետ, որպէսզի նրանց յարձակողական ընթացքը դանդաղեցնի եւ ժամանակ տայ գիւղացիներին՝ ապա-

հով փախուստի համար։ Վտանգն անցնելուց յետոյ, խումբն էլ կռւելով նահանջելու է դէպի գիւղ։ Իսկ եթէ յարձակումը դաշտային աշխատաւորների վրայ կատարւում է ետեւից — գիւղի կողմից, եւ ճանապարհը դէպի գիւղ, ուրեմն, փակւած է,— այն ժամանակ խումբը աշխատաւորներին անց է կացնում դէպի հարեւան գիւղը — եթէ մօտ է նա,— անշուշտ դա՛ռձեալ կռւելով վերը յիշած կարգով, յետոյ ինքը վերադառնում իրանց գիւղը՝ նրան պաշտպանելու համար։

Բայց կարող է պատահել, թէեւ հազւադէպ, որ դաշտային աշխատաւորները յանկարծ պաշարւին միաժամանակ երկու կողմից եւ փախուստի ճանապարհ չունենան ինչպէս դէպի հարեւան, նոյնպէս եւ դէպի իրանց գիւղը։ Այսպիսի պայմաններում միայն մի ելք կայ — որ աշխատաւորները իսկոյն հաւաքւին մօտակայ ամենաուժեղ դիրքի վրայ եւ խումբն սկսի նրանց պաշտպանել, մինչեւ որ հրացանների ձայնի վրայ օգնութեան հասնեն իրանց գիւղի մնայուն եւ հարեւան գիւղերի թռուցիկ խմբակները։

ՅԱՐՁԱԿՈՒՄ ԳԻՒՂԻ ՎՐԱՅ

Եթէ յարձակումը սկսւում է միայն գիւղի վրայ, այնտեղ գտնւող մնայուն խումբը, անտարակոյս, իսկոյն ձեռնարկում է ինքնապաշտպանութեան։ Իսկ այդ ժամանակ դաշտում գտնւող թռուցիկ խմբակը, չէզոք չմնալու եւ անգործութեան չմատնւելու համար, աշխատաւորներին 2-3 հրացանաւորների հսկողութեան տակ ճամբու է դնում դէպի մօտակայ հարեւան գիւղը, իսկ ինքը շտապով վերադառնում է իր գիւղը՝ պաշարւածներին օգնելու։ Դրանից քիչ յետոյ, հաւանօրէն շուտով օգնութեան կը հասնեն նաեւ հարեւան թռուցիկ խմբերը, որոնց լուր տուած կը լինեն դաշտային աշխատանքից փախածները։

ՅԱՐՁԱԿՈՒՄ ԳԻՒՂԻ ԵՒ ԴԱՇՏԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՒՈՐՆԵՐԻ ՎՐԱՅ ՄԻԱԺԱՄԱՆԱԿ

Վերը նկարագրած դէպքերի հետ համեմատելով՝ աւելի դժւար ու ծանր է, երբ թշնամին բաժանւած երկու մասի՝ մի թեւով յարձակւում է գիւղի վրայ, իսկ միւսով՝ զարկում է դաշտային աշխատաւորներին։ Այսպիսի աննպաստ պայմաններում միակ ելքն այն է, որ մնայուն խումբը յամառօրէն պաշտպանի գիւղը, իսկ թռուցիկը՝ դաշտային աշխատաւորներին, մինչեւ օգնութեան հասնեն օժանդակ ուժեր շրջակայ գիւղերից։

ՅԱՐՁԱԿՈՒՄ

Ազգային ընդհարման ժամանակ յարձակումը հակառակորդի վրայ կազմակերպւում է երեք նպատակով.

ա) Ջարդ տալ եւ դրանով սանձահարել թշնամի այն տարրերին, որոնք հաշտ չեն վերաբերում հայերին եւ սրանց ֆիզիքական ու նիւթական վնասներ են հասցնում պարբերական յարձակումներով։

բ) Ծագելիք վտանգը կանխելու համար՝ նախայարձակման ենթարկել այն գիւղը կամ շրջանը, ուր պատրաստւում է յարձակում հայերի դէմ։

գ) Իբրեւ պատիժ՝ յարձակւել այն գիւղի կամ շրջանի վրայ, որն արդէն ֆիզիքական ու նիւթական որոշ վնասներ է տուել հայերին։

Թէեւ նպատակները տարբեր, բայց երեք դէպքերումն էլ յարձակման միջոցներն ու ձեւերը նոյնանման են բոլոր մանրամասներով։ Դրա համար էլ այստեղ առաջարկւելու է միայն մի նախագիծ (պրօէկտ)։

Բայց այդ նախագիծը անհրաժեշտօրէն պէտք է բաղկացած լինի երկու մասից.

1) *Յարձակում շրջանի վրայ*

2) *Յարձակում միայն մի գիւղի վրայ։*

Յարձակման համար ընտրել մի ամբողջ թշնամի շրջան, բաղկացած գուցէ մի քանի տասնեակ գիւղերից,— դա չափազանց լուրջ ու վտանգաւոր գործ է, որին պէտք է մօտենալ մեծ զգուշութեամբ եւ մի շարք պայմաններ լաւ ուսումնասիրելուց յետոյ միայն։

Այդ ուսումնասիրութիւնը պէտք է կայանայ հետեւեալ հարցերի լուսաբանութեան մէջ։

ա) Քանի՞ գիւղից է բաղկացած շրջանը։

բ) Որքա՞ն հեռաւորութիւն ունի մի գիւղը միւսից։

գ) Մօտաւորապէս որքա՞ն բնակիչ ունի իւրաքանչիւր գիւղ։

դ) Մօտաւորապէս որքա՞ն կռւող ոյժ է ներկայացնում ամէն մի գիւղ առանձին։

ե) Ընդհանրապէս ի՞նչ տեսակ զէնքերով է զինւած գիւղը եւ ի՞նչ չափով։

զ) Բնական ու արհեստական ի՞նչ ամրութիւններ ունի ամէն մի գիւղ։

է) Ո՞ր կողմից եւ ինչքա՞ն ժամանակից յետոյ կարող են օգնութեան հասնել թշնամի օժանդակ ոյժեր յարձակման ենթակայ կէտը։

ը) Օգնութեան գալիք ոյժերը որո՞նք պիտի լինին — ցեղակից հարեւան գիւղացիներ՞, թէ կառավարական զօրքեր։

թ) Ի՞նչ դիրք է բռնում առհասարակ կառավարութիւնը դէպի յարձակւողներն ու ինքնապաշտպանները։

ժ) Կա՞ն արդեօք յարմար անցքեր ու կիրճեր՝ գալիք օժանդակ ուժերի ճանապարհը փակելու համար։

ի) Կա՞յ արդեօք ճանապարհ ու հնարաւորութիւն ապահով նահանջի համար՝ պարտութեան դէպքում, եւ այլն։

Այս բոլոր հարցերը ռազմական տեսակէտից թէեւ չափազանց կարեւոր, բայց նրանց մեծ մասը դժւար ուսումնասիրելի է, մանաւանդ ազգային ընդհարման ժամանակ, երբ ուժեղանում է ցեղի գոյութեան պահպանման ընազդն ու ամէն անհատ խորին գաղտնապահութիւնը դարձնում է իրեն համար սրբազան գործ։ Եւ այս դրութիւնը, անշուշտ, ստիպելու է ուսումնասիրողին յաճախ բաւականանալ միայն հաւանական ենթադրութիւններով, մանաւանդ այս կամ այն գիւղի զինման չափը որոշելիս։ Այդ պատճառով էլ զինման մօտաւոր չափը որոշելու համար՝ հարկաւոր է նկատողութեան առնել գիւղի աշխարհագրական ու ժողովրդագրական դիրքը եւ ժողովրդի զբաղմունքը — ինչպէս օրինակ — մեծ եւ կենտրոնական գիւղերը իրանց համարում են համեմատաբար ապահով եւ զինւած են լինում թոյլ։ Խաղաղ զբաղմունքով պարապողները, ինչպէս երկրագործները, զինւած են լինում նոյնպէս թոյլ։ Լաւ զինւած ու կռւելու ընդունակ են լինում գլխաւորապէս աշիրաթները, աւազակութիւնով ապրողները եւ սահմանագլխի վրայ գտնւող բոլոր ա՛յն գիւղերը, որոնք պարապում են մաքսանենգութեամբ (կօնտրաբանդով)։

Բայց ի՛նչ էլ լինի, որքա՜ն էլ նպաստաւոր հետեւանքների յանգի ուսումնասիրութիւնը,— այնուամենայնիւ վտանգաւոր գործ է յարձակումը որեւէ շրջանի վրայ՝ միաժամանակ բոլոր կողմերից։ Թէեւ յարձակման այդ ձեւը ունի ա՛յն առաւելութիւնը, որ կարճ միջոցում, նախքան թշնամի օգնական ոյժերի գալը, յարձակւողները կարող են մեծ աւերածութիւնների ենթարկել այդ շրջանը եւ (աւարտած լինելով իրանց գործը) կը հեռանան դէպքի վայրից վաղաժամ — վտանգը ծագելուց առաջ,— բայց երբեք չպէտք է մոռանալ, որ այդպիսի մի խոշոր ձեռնարկի համար հարկաւոր է ձեռքի տակ ունենալ կռւող ոյժերի մեծ քանակութիւն — առնւազն կրկնակի՝ յարձակման ենթակայ իւրաքանչիւր կէտի համար (քան ունի թշնամին)։ Եւ որովհետեւ ազգային ընդհարման ժամանակ յարձակւող կողմը հազիւ թէ կարողանայ ներկայացնել մարտական ոյժերի այդպիսի գերակշռութիւն, ուրեմն պէտք է բաւականանալ մի, կամ առառաւելն՝ երկու կէտով։ Ընտրած կէտը վերջնապէս յաղթահարելուց յետոյ՝ ամենեւին դժւար չէ՛ անցնել մօտակայ երկրորդ գիւղը, այնուհետեւ երրորդը եւ այդպէս շարունակ, մինչեւ որ կ՚երեւան նշանները ընդդիմադիր լուրջ ոյժի, եւ յարձակւողները ստիպւած կը լինին կանխօրէն յետ խաղալու, բայց նախապէս ապահոված լինելով նահանջի ճանապարհը՝ պահակ-խմբակներով։

ՅԱՐՁԱԿՈՒՄ ՄԻԱՅՆ ՄԻ ԳԻՒՂԻ ՎՐԱՅ

Առհասարակ լա՛ւ մշակուած եւ գործնականօրէն կազմած ծրագիրը գործի աջողութեան գլխաւոր գրաւականն է։ Առաւել եւս պատերազմականը է՛ւ մանաւանդ յարձակողականը։

Ուրիշ որեւէ ծրագիր — եթէ պակասաւոր է նա — գործադրութեան ժամանակ երեւան կը հանէ իր թերութիւնները եւ դրանց դեռ կարելի է ուղղել, թէկուզ որոշ վնասներից յետոյ։

Այդպէս չէ՛, սակայն, ռազմականը է՛ւ յատկապէս յարձակողականը։

Այդտեղ ճակատ առ ճակատ պիտի չափուիս թշնամուդ հետ եւ շա՜տ կարճ ժամանակ։ Հետեւանքը յաղթութիւն է կամ պարտութիւն։ Ինչ որ կորցնես՝ այդ կը լինի անդառնալի եւ ոչինչ չի՛ մնայ ուղղելու, ոչինչ չե՛ս ունենայ շտկելու։

Բայց դա դեռ բոլորը չէ։

Պարտութիւնը առաջ է բերում ոգիի անկում, իսկ յաղթութիւնը խրախուսանք — հետեւանքներ, որոնք ահագին հոգեբանական դեր ունին կողմերի վրայ յաջորդ ընդհարումների ժամանակ։

Խնդիրը լինելով այսչափ ծանրակշիռ եւ հետեւանքները լուրջ ու անուղղելի,— պէտք է, ուրեմն, նրան մօտենալ մեծ զգուշութեամբ եւ ընտրել առհասարակ թշնամու թոյլ կողմերը։

Բայց սա դեռ եւս չի նշանակում, թէ երբեք պէտք չէ մօտենալ թշնամու սրտին։ Պէտք է է՛ւ անպատճառ պէտք է մօտենալ, բայց միայն հնարաւորութեան, այսինքն ոյժերի գերակշռութեան դէպքում եւ ո՛չ թէ ներկայ ու ապագայ ընդհարումների բախտը անհաշիւ կերպով դնել քարթի վրայ։

Այժմ՝ դառնանք ծրագրին։

Ի՞նչ նիւթեր են հարկաւոր եւ ինչպէ՞ս պէտք է կազմել յարձակողական ծրագիրը։

1) *Նախ եւ առաջ յարձակման համար պէտք է ընտրել մի որոշ գիւղ եւ յատկապէս այնպիսին, որ նրան պաշարած ժամանակ յարձակւողների թիկունքը* (ТЫЛЪ) *լինի թշնամուց ազատ եւ նահանջի ճանապարհը՝ ապահով։*

2) *Գիտենալ ընտրած կէտի մարտական ոյժերի մօտաւոր եւ սեփականի ճիշտ չափը։ Ի նկատի ունենալով որ պաշարւողները վարելու են պաշտպանողական կռիւ բնական ու արհեստական դիրքերից, իսկ յարձակւողները լինելու են անպատսպար մինչեւ գիւղի կամ որոշ դիրքերի գրաւումը, վերջինները պէտք է կազմեն թւական գերակշռութիւն — առնւազն կրկնակի կամ եռակի։ Աւելին, ի հարկէ, առաւել եւս կը դիւրացնի գիւղի հեշտ ու արագ գրաւումը։*

3) *Նախօրօք մօտաւորապէս գիտենալ ընտրած կէտի բնական ու արհեստական ամրութիւնները՝ հարկաւոր դէպքում նրանց գրաւելու կամ այնտեղից տեղացող գնդակներից խուսափելու համար։*

4) *Ընտրել նահանջի յարմարագոյն ճանապարհը եւ նրան կանխապէս ապա-*

հովել պահակ-խմբակով։

5) Հաշւի առնել, թէ մօտակայ ո՞ր գիւղերից եւ ո՞ր ճանապարհներով կարող են օգնութեան գալ պաշարուածներին եւ վաղօրօք փակել այդ ճանապարհները պահակ-խմբակներով։

6) Ծրագրել, որ գիւղը պէտք է ենթարկւի յարձակման միայն երեք որոշ կողմերից, իսկ չորրորդ կողմը թողնւի ազատ՝ պաշարուածներին փախուստի հնարաւորութիւն տալու համար։ (Եթէ գիւղը պաշարւի բոլոր չորս կողմերից, կարող է իրականանալ հոգեբանական հին ասացուածքը — թէ «արջք օրհասականք հզօրագոյնս կուին»)։ Ազատ թողնւելիք կողմը պէտք է ընտրել յատկապէս այնպիսին, որ իր դիմացը — մօտակայքում ունենայ որեւիցէ սար, ձոր կամ ցեղակից գիւղ։ Փախչողները դիմելու են դրանցից ամենամօտիկն ու յարմարագոյնը եւ հէնց այդտեղ էլ պէտք է առաջուց դարան մտած լինի յարձակւողներից մի խումբ՝ փախչողների հետ ընդհարւելու համար։ Ուրեմն գիւղի չորրորդ կողմի պաշարումից ազատումը ո՛չ թէ նպատակ ունի թշնամուն խկապէս փախուստի հնարաւորութիւն տալու, այլ առաջ բերելու ընդդիմադիր ոյժի բաժանում յաղթութիւնը դիւրացնելու ու արագացնելու համար։

7) Հակառակորդին յանկարծակիի բերելու եւ նրա մէջ շփոթմունք ու իրարանցում ձգելու համար՝ յարձակման ժամանակը նշանակել արշալոյսին։ (Արշալոյսին արթուն են լինում միայն պահապանները (եթէ կան)։ դրա համար էլ շուտով տեղի է ունենում շփոթմունք ու իրարանցում։ Արշալոյսից աւելի վաղ յարձակւիլը նպատակայարմար չէ, որովհետեւ յարձակւողները ստիպւած կը լինեն անծանօթ վայրում մթութեան մէջ խարխափել աւելի երկար (մինչեւ լոյսի բացումը) եւ այդ պատճառով էլ տալ աւելորդ զոհեր)։

8) Շփոթմունքը աւելի կատարեալ անելու համար՝ պէտք է անմիջապէս հրդեհել ինչ որ կարելի է — չոր խոտի դէզ, ցախակոյտ եւ այլն, որոնց վառելու համար արշաւախումբը պէտք է պատրաստի ունենայ հարկաւոր նիւթերը։

9) Եթէ արշաւախմբի մէջ չը կան ձիաւորներ, պէտք է անպատճառ վերցնել մի քանի հատ ձի՝ վիրաւորներին ու սպանւածներին հայկական շրջան տեղափոխելու համար։

Այսպիսի մի ծրագիր կազմելու համար՝ կարեւոր տեղեկութիւնները պէտք է ձեռք բերել ձեռնհաս ու վստահելի գործակալների միջոցով ամենախիստ գաղտնապահութեամբ։

Այնուհետեւ կը մնայ կազմակերպել արշաւախումբը, նոյնպէս խիստ գաղտնապահութեամբ։

Ա՛յն ամէնը, ինչ հարկաւոր է արշաւախումբը ամբողջացնելու համար, արդէն պատրաստի կայ կազմակերպւած ինքնապաշտպանութեան մէջ իւրաքանչիւր շրջանում։ Ինչպէս օրինակ,— Հրամանատար կամ Շրջանապետ, Զինւորական Շտաբ եւ թռուցիկ խմբակներ ամէն մի գիւղում։ Հարկաւոր է միայն դրանց ենթարկել մոբիլիզացիայի (զօրահաւաք)։

Եւ, ի նկատի ունենալով գաղտնապահութեան անհրաժեշտ սկզբունքը, դա

կատարւում է հետեւեալ կերպով։

Յարձակումից 3-4 օր առաջ գիւղերն են ցրւում Զինւորական Շտաբի ձեռնհաս ու վստահելի գործակալները։ Դրանցից իւրաքանչիւրը իր համար նշանակած գիւղում, առանց յայտնելու նպատակը, զէնքի տակ է կոչում թռուցիկ խմբակը, նրան դնում կարգի ու կանոնի տակ, զէնքի ու ռազմամթերքի պակասը լրացնում եւ ապա տեղեկագրում Զինւորական Շտաբին արշաւելու պատրաստ մարտական ոյժի որակն ու քանակը։

Այնուհետեւ Զինւորական Շտաբը նշանակում է յարմարագոյն հաւաքատեղի որեւիցէ հայկական գիւղ կամ աւելի լաւ է անմարդաբնակ տեղ, ըստ կարելոյն մօտ յարձակման ենթարկելիք գիւղին, որոշում է օրը եւ հրահանգ է տալիս, որ բոլոր թռուցիկները այդ օրը, մութը պատելուց յետոյ, շարժւին դէպի հաւաքատեղին։

Այստեղ չը մոռանանք շեշտելու, որ բոլոր ա՛յն թռուցիկները, որոնք ապրում են հաւաքատեղիից հեռու աւելի քան երեք ժամով, նրանք՝ յոգնածութիւնից խուսափելու համար, պէտք է փոխադրւին յարձակման կէտին մօտ գտնուող հայկական գիւղերը մի օր առաջ։

Ժողովման գիշերը հաւաքատեղին է հասնում ամէնքից առաջ Հրամանատարը՝ իր Զինւորական Շտաբով եւ ընդունում է հետզհետէ այնտեղ եկող թռուցիկ խմբակներին։ Ամէնքը հաւաքւելուց եւ փոքր ինչ հանգստանալուց յետոյ, նոր միայն Հրամանատարը յայտնում է մոբիլիզացիայի նպատակը, բացատրում է յարձակման անհրաժեշտութիւնը ինքնապաշտպանութեան տեսակէտից, ներշնչում ու ոգեւորում է զինւորներին, տալիս է նրանց հարկաւոր հրահանգները, չը մոռանալով շեշտելու որ ամէն տեղ եւ բոլոր ժամանակներում իսկական վեհանձն կտրիճները միշտ խնայել են կանանց ու երեխաներին։

Այս բոլորից յետոյ, պահակ-խմբակները ուղարկւում են իրանց համար ծրագրած տեղերը եւ արշաւախումբը քայլում է որոշած գիւղի վրայ ա՛յն հաշւով, որ ճիշտ արշալոյսին սկսւի յարձակումը։

Միայն այդ գիւղի կամ — եթէ ներում են պայմաններն ու ժամանակը — նաե՛ւ ուրիշ մի քանի հարեւան գիւղերի հետ գործը վերջացնելուց յետոյ, արշաւախումբը յետ է նահանջում եւ իր թռուցիկ խմբակները ցրում է հայկական բոլոր ա՛յն գիւղերում, ուր՝ այդ դէպքի ազդեցութեան տակ, կարող է ենթադրւել հաւանական հակայարձակում թշնամու կողմից։

ԽՄԲԵՐԻ ՇԱՐԺՈՒՄԸ

Խմբերի շարժումը կատարւում է երեք դէպքում.

1) *Զօրահաւաք՝ արշաւանքի համար։*
2) *Ուժեղացում՝ թոյլ գիւղի։*
3) *Օգնութիւն՝ յարձակման ենթակայ գիւղի։*

Առաջին եւ երկրորդ դէպքում ժամանակը հրամայական ու ստիպողական չէ եւ խմբերը կարող են ձեռք առնել որոշ նախազգուշութիւններ՝ իրենց ապահով տեղափոխութեան համար։ Մինչդեռ երրորդ դէպքում դրութիւնը կրիտիկական է եւ ո՛չ միայն ժամը, այլ եւ իւրաքանչիւր րոպէն կարող է վճռել կռւի բախտը։ Թոյլ հայ գիւղը, որ արդէն ենթակայ է յարձակման եւ անհաւասար ուժերով օրհասական մաքառման մէջ է, փրկւած կը լինի, եթէ դրսից օգնութեան հասնին սոսկալի պարտութիւնից միայն մի րոպէ առաջ։

Այսպիսի տագնապալի դրութեան դէպքում չի կարելի եւ բարոյական իրաւունք չը կայ օգնութեան գնացող խմբերին նախազգուշութիւններ առաջարկել։ Միակ բանը, որ կարելի է առաջարկել, այդ այն է՝ որ օգնական խմբերը ընտրեն կարճ ճանապարհ եւ շտապեն ամբողջ թափով։

Առաջին երկու դէպքում նախազգուշութիւնը հնարաւոր ու կարեւոր է եւ վտանգը միայն մէկն է — ծուղակ, որից պէտք է խուսափել։ Ծուղակը թէեւ ինքնին մէկ, բայց նա արտայայտւում է մի քանի ձեւերի մէջ.

1) Կամուրջ.
2) Ձոր.
3) Խրամատ.
4) Պատ.

Ճանապարհին խմբի համար կամուրջի *հանդիպելը շատ սովորական է։ Եւ, ի նկատի ունենալով, որ խմբերի տեղափոխութիւնը առհասարակ կատարւում է եւ պէ՛տք է կատարել միայն գիշերները, խումբը պէտք չէ իր ամբողջութեամբ կուրօրէն անցնի կամուրջի վրայով։ Կարող է պատահել, որ կամուրջի տակ պահւած լինի թշնամիների մի խումբ եւ անցնելու վայրկեանին հարկաւոր է անակնկալ մէկ-երկու համազարկ դարանամուտների կողմից, որ կամուրջի վրայով անցնող կենդանի էակները փոխարկւին դիակների։ Այդպիսի ծանր վտանգից զերծ մնալու համար՝ խումբը պէտք է կանգ առնի կամուրջից բաւական հեռու եւ երկու ընկերոջ միջոցով խուզարկութիւն կատարելուց յետոյ, նո՛ր միայն անցնի կամուրջը։*

Ձորերը *ընդհանրապէս լինում են քարոտ կամ անտառոտ — ամենալաւ դարաններ թշնամու համար։ Ամբողջ խմբով մտնել ձորի մէջ առանց նախազգուշութիւնների եւ ենթարկւել դարանամուտ հակառակորդների անսպասելի հա-*

մազարկներին՝ դա չա՛տ հեռու է խոհեմութիւնից։ Հարկաւոր է ձորն անցնել մաս-մաս եւ ցրւած։

Թշնամին կարող է դարանամուտ լինել ե՛ւ խրամատներում ու պատերի տակ, որոնց մօտից պէտք է անցնի խումբը։ Այդպիսի ծուղակներից խուսափելու համար՝ պէտք է շրջան անել եւ անցնել այդ տեղերից հեռու կամ, եթէ չը կայ այդ հնարաւորութիւնը՝ անցնել մաս-մաս, ցրւած եւ արագ։

ԶԷՆՔ

Շատ սովորական երեւոյթ է, որ զէնք ձեռք բերելու ցանկութիւն ունեցող ամէն մի անհատ դիմում է այս կամ այն տեղեակ անձին եւ հարցնում.— «Ո՞րն է ամենալաւ հրացանը»։

Լաւագոյնը, դիցուք, եապօնականն է. բայց ի՞նչ օգուտ դրանից, քանի որ հայը չի գնայ Եապօնիա, եապօնական հրացանն էլ չի գայ Հայաստան։

Ուրեմն ամէնից առաջ մենք պէտք է կանգնենք գործնական հողի վրայ։

Հարցին մօտենալով այդ տեսակէտից, մեզ համար պէտք է միանգամայն անպէտք հռչակել բոլոր ա՛յն տեսակ զէնքերը, որոնք ստացւում են չա՛տ հեռից եւ մեծ դժւարութեամբ։ Դրանք անպէտք են մանաւանդ այն պատճառով, որ իրենց հետ ունենում են սովորաբար փամփուշտների քիչ քանակութիւն եւ եղածն էլ մի առժամանակից յետոյ սպառւելով փորձերի, վարժութիւնների եւ փոքրիկ դէպքերի վրայ, զէնքը այնուհետեւ դառնում է մի անպէտք փայտի կտոր։

Ուրեմն զէնքը պէտք է փնտռենք մեր շուրջը եւ ահա՛ նրանցից է, որ պիտի ընտրենք լաւագոյնը։

Մենք ապրում ենք երեք պետութիւնների սահմաններում։ Այդ պետութիւններից իւրաքանչիւրն ունի երկու տեսակ զէնք — ներկայ (որ այժմ զօրքի ձեռքին է) եւ նախընթաց (որ զօրքից վերցրւել եւ գործածութիւնից դուրս է հանւել)։ Ռուսաստանում, օրինակ, ներկայ զէնքը «Մօսին» հրացանն է եւ նախընթացը՝ «Բերդանը», իսկ Տաճկաստանում ներկան «Մաուզէրն» է եւ նախընթացը՝ «Մարտինը»։ Լաւագոյն եւ աւելի կատարելագործւած զէնքը, անշուշտ, ներկայինն է. այլապէս կառավարութիւնը չէր վերազինի իր զօրքը այդ զէնքերով։ Ուրեմն Ռուսաստանում մենք պիտի ձգտենք ձեռք բերել «Մօսին» եւ Տաճկաստանում՝ «Մաուզէր»*։

Այս երկու տեսակ զէնքերը մեր սահմաններում վերջին կատարելագործութիւնը լինելուց բացի, ներկայացնում են եւ ա՛յն առաւելութիւնը, որ դրանց փամփուշտները միշտ կարող ենք ձեռք բերել առատ եւ աժան։

---

*) Ռուսաստանում կառավարական մի քանի զինագործարաններ կան, իսկ Տաճկաստանում եւ ո՛չ մէկը։ Այդ հանգամանքը պարտք է դնում ռուսահայերի վրայ, որ նրանք զէնքի գործում օգնեն իրենց տաճկահայ եղբայրներին։

Պէտք չէ մոռանալ, սակայն, որ աշխարհի վրայ գոյութիւն ունեցող բոլոր կառավարութիւնները ժողովուրդներին խստիւ արգելում են գործածութիւնը ա՛յն զէնքի, որը գտնւում է զօրքի ձեռքին եւ այդ արգելքը պայմանաւորում են ծանր պատասխանատուութիւնով։

Այսպիսով բարդութիւններ ու մեծ դժուարութիւններ են ծագում ինչպէս ծախողի, նոյնպէս եւ առնողի առաջ։ Այդպիսի պայմաններում ձեռք բերուող զէնքը միշտ կը լինի քիչ եւ չի կարող լիուլի բաւականութիւն տալ մեր պահանջներին։

Ուրեմն կամայ-ակամայ մենք պէտք է կանգ առնենք գլխաւորապէս նախընթաց զէնքի վրայ։

Այստեղ ինքնին հարց է ծագում, թէ ինչպէ՞ս կարելի է դուրս գալ թշնամու դէմ համեմատաբար վատ զէնքերով։ Այսպիսի մտածումները միանգամայն անհիմն են։ Նախ եւ առաջ՝ ոչ ոք չի արգելում ձգտել աւելի կատարելագործուած զէնքեր ունենալու։ Երկրորդ՝ մեր նպատակն է ինքնապաշտպանութիւն հարեւան ժողովուրդներից, որոնք գտնւում են նոյնպիսի պայմանների մէջ, ինչ որ մենք — այսինքն նրանք էլ չը պիտի կարողանան զինուել բացառապէս կատարելագործուած զէնքերով։ Եւ երրորդ՝ գրեթէ ո՛չ մի առաւելութիւն չի ներկայացնում կատարելագործուած զէնքը մեր ժողովրդի ձեռքում։

Կատարելագործուած հրացանն ունի գլխաւորապէս երեք առաւելութիւն — նա անծուխ է, աւելի արագաձիգ եւ խփում է շատ հեռու։ Բայց այդ յատկութիւնները նշանակութիւն ունին միայն զինուորապէս կրթուած զօրաբանակների համար։ Մինչդեռ մեր ժողովուրդը դրա մէջ անհրաժեշտ կարիք չունի, քանի որ նա անվարժ է արագաձգութեան ու կանոնաւոր համազարկերի արհեստին։ Միւս կողմից էլ, նա գլխաւորապէս առիթ է ունենալու ընդհարուելու մօտիկ տարածութեան վրայ։

Ընդհարումը տեղի է ունենալու քաղաքում կամ գիւղում։

Քաղաքում ամենամեծ տարածութիւնը որեւէ փողոցի երկարութիւնն է, որը հազիւ թէ անցնի մի քանի հարիւր քայլից. իսկ մեր յիշած նախընթաց հրացանները արձակում են 1500 — 2100 քայլ։

Կը մնայ գիւղը։

Գիւղի չորս կողմը, առհասարակ, տարածութիւնը բաց է եւ թշնամին ցերեկը նկատւում է դեռ շա՛տ հեռից։ Լաւ կը լինէր, ի հարկէ, որ այդ վտանգն այդպէս էլ մնար կանգնած հեռւում — չը համարձակուէր մօտենալ գիւղին։ Բայց համարձակութիւնը կորցնելու համար՝ նախ եւ առաջ հարկաւոր է տուժել։ Իսկ թշնամին արժանաւորապէս տուժել կարող է, երբ դեռ հեռից նա ենթարկւում է բազմաթիւ վարժ հրացանաձիգների կանոնաւոր համազարկերին եւ գնդակները նրա գլխին տեղում են կարկուտի պէս։ Մենք չունինք կրթուած զօրք*, հապա ուրեմն գործ տեսնողը լինելու է անհատական հրացանաձգու-

*) Կառավարական ծառայութիւնն աւարտած հայ զինուորները ցրուած են եւ ամէն մի ընդհարման մէջ չնչին տոկոս են կազմում։

թիւնը։ Իսկ անհատը, ինչքան էլ վարժ լինի, կարող է անշեղ զարկել միայն 400 քայլ։ Դրանից այն կողմը կպած գնդակը պատահական նշանակութիւն ունի եւ օրինական տոկոս չի կազմում։ Այս այսպէս լինելով, տարածութիւնն ուրեմն դադարում է մեզ համար Idée fixe լինելուց եւ բոլոր զէնքերը մեր պայմաններում դառնում են պէտքական։ Ամենակարճ տարածութեան վրայ խփողն, օրինակ, որսորդական հրացանն է — ընդամէնը 50-60 քայլ։ Բայց այդ զէնքը մեզ համար եւ մեր պայմաններում ունի աննման առաւելութիւններ՝ երբ նա փամփուշտաւոր է, այսինքն համեմատաբար արագաձիգ։ Այդպիսի հրացանների փամփուշտները կարելի է լեցնել փոքրիկ գնդակիկներով (կարտէչ)՝ 9-12 հատ իւրաքանչիւրի մէջ։ Այդ բազմաթիւ գնդակները արձակած ուղղութեամբ սլանում են ցրւած եւ ամենայն հաւանականութեամբ դրանցից մէկն ու մէկը կը կպչի կէտ-նպատակին, իսկ միւսները կարող են պատահաբար կպչել եւ ուրիշներին, որոնք գտնւում են կէտ-նպատակի շուրջը։ Մինչդեռ մարտական հրացաններն ունին միայն մի գնդակ, որը կորչում է ապարդիւն, եթէ արձակելու ժամանակ հրացանը շարժւում է նոյնիսկ թեթեւ, կամ նշանը վերցնւում է փոքր ինչ անկանոն։ Կը մնայ տարածութեան խնդիրը։ Շատերը կը գտնեն, որ 50-60 քայլը չնչին տարածութիւն է եւ աննպատակայարմար։ Բայց չէ՞ որ քաղաքներում ընդհարումը տեղի է ունենում՝ փողոցների մէջ, ուրեմն շատ մօտիկ եւ գլխաւորապէս լինում է ատրճանակի կռիւ։ Իսկ ատրճանակով 20-25 քայլի վրայ անշեղ զարկողները հազւագիւտ են, մինչդեռ որսորդականը խփում է 50-60 քայլ ամենայն աջողութեամբ՝ նոյնիսկ կիսավարժ մարդկանց ձեռքում։

Աննման է այդ զէնքը մանաւանդ գիշեր ժամանակ թէ՛ քաղաքներում եւ թէ գիւղում։

Գիշերային մթութեան մէջ մարդկային ուրուականը նկատելի է միայն 20-30 քայլի վրայ, իսկ լուսնի լուսաւորութեան տակ տեսնել կարելի է ամենաշատը մինչեւ 50-60 քայլ — ճիշտ որսորդական հրացանի տարածութիւնը։ Եւ այսպիսի պայմաններում որսորդական իւրաքանչիւր փամփուշտը հաւասար է մի կանոնաւոր համազարկի՝ արձակւած 9-12 մարդու կողմից նայելով թէ քանի գնդակիկ կայ այդ փամփուշտի մէջ։

Մեզ համար լաւ է նոյնպէս եւ «որսորդական մաուզէրը»։ Դա մագազինաւոր է (5 փամփուշտ միանգամից է դրւում) եւ փամփուշտները պարունակում են անծուխ վառօդ ու մի հատիկ գնդակ։ Արձակման տարածութիւնը 500-1000 մետր է, ուրեմն մեզ համար մարտական համարւելու յարմար։ Այդ ձեւի հրացաններ — չը գիտեմ արտասահմանից ներմուծւում են Տաճկաստան, թէ չէ,— բայց Ռուսաստանի համարեա բոլոր քաղաքներում դիւրին է ձեռք բերել, ինչպէս եւ փամփուշտները։

Այժմ մի քանի խօսք ատրճանակների մասին։

Ատրճանակները բաժանւում են երկու կատեգորիայի՝ ավտոմատիկ եւ սովորական։

Ավտոմատիկ տեսակներն են՝ մաուզէր, պարրաբելլիում, բրաունինգ եւայլն։

Սովորական տեսակներն են՝ Նագան, Սմիտտ եւ Վէսսոն, Բուլ՛դօկ եւայլն։

Ավտոմատիկ տեսակներն ունին ա՛յն առաւելութիւնները, որ պարունակում են շատ փամփուշտ (6-10), արագաձիգ են, ուժեղ եւ հեռու խփող։ Նրանց գլխաւոր պակասութիւնն էլ ա՛յն է, որ մեխանիզմը նուրբ է ու բարդ, դրա համար էլ շուտ աւերուելու ենթակայ։

Սովորական տեսակները ներկայացնում են ճիշտ դրա հակառակ պատկերը։

Երբ հարցը վերաբերի ընտրութեան, դժւար է կանգ առնել այս կամ այն տեսակի վրայ։ Նախ այն պատճառով, որ ինչպէս ասացինք, տեսակներից ո՛չ մէկը կատարելագոյն չէ — ամէն մէկն ունի իր առաւելութիւններն ու իր պակասութիւնները։ Եւ երկրորդ՝ մենք չունինք մեր տրամադրութեան տակ զինագործարան ու փոխադրութեան յարմարութիւն, որ պատւիրենք ընտրած տեսակը բաւարար չափով։ Ստիպւած ենք լինելու բաւականանալ նրանով, ինչ որ կարող ենք ձեռք ձգել։ Բայց եւ այնպէս, կարելի է խորհուրդ տալ, ընդհանրապէս, Մաուզէրը, մանաւանդ գիւղացիներին։ Դա ամէնից հեռու ձգողն է եւ ունի իր վրայ յարմարացրած կոթ (ղոնդաղ), որով այդ ատրճանակը մօտենում է հրացանին։

ՎԵՐՋԱԲԱՆ

Կեանքն այլանդակ խաղեր ունի։ Այդ խաղերից մէկն է ե՛ւ այս «ուղեցոյց»ի անհրաժեշտութեան ծագումը։

Կովկասեան հայկա-թրքական ընդհարումներից անմիջապէս յետոյ, ընկերներս առաջարկեցին ինձ՝ պատրաստել ինքնապաշտպանութեան ներկայ ուղեցոյցը։

Ես տատանւում էի...

Տատանւում էի, որովհետեւ գիտէի որ այս պզտիկ բրօշիւրն իր մէջ պիտի պարունակէ արեան դասեր։

Արիւնը ինձ համար խորթ չէ եւ ո՛չ էլ օտար։

Բայց ես կատարելապէս հասկանում եմ, երբ այդ արիւնը բաց է թողնւում ժողովուրդներ տանջող կառավարութեան զարկերակից։

Իսկ այստե՞ղ, այս ուղեցոյցի մէ՞ջ...

Սրա մէջ քարոզւում է, թէ ինչպէ՞ս եղբայրը պէտք է ձեռքերը թաթախի եղբօր արեան մէջ, դրացին կանգնի դրացիի դէմ, մի ժողովուրդ ընդհարւի միւսի հետ...

Դրա համար էլ տատանւում էի։ Բայց անողոք կեանքը տարաւ յաղթանակը։

Տաճկաստանում ամէնուրեք խուլ չչունջները գուժում են ըէաքսիոն ահաւոր խմորումների մասին, Պարսկաստանում յաճախակի ընդհարւում են միապետական ու սահմանադրական երկու հակառակ հոսանքները, իսկ Ռուսաս-*

տանում — ո՞վ գիտէ — ի՞նչ նոր անակնկալ է պատրաստւում։

Այլ եւս տատանումը յանցանք է։ Ամէն մարդ — որ զգում է դրութեան լրջութիւնը — պէտք է ասի իր խօսքը, պէտք է յորդորէ, որ հայոց այդ երեք գլխաւոր հատուածները պատրաստուին ինքնապաշտպանութեան։

Եւ նրանք ճակատագրօրէն պիտի պատրաստուին։

Բայց...

Բայց ինձ կը զգայի հոգեպէս մխիթարուած եւ բարոյապէս վարձատրուած, եթէ մարտական այդ պատրաստութիւնները, իրերի բախտաւոր բերմամբ, մի տենչալի օր զարկւէին հրէշային ճակատին բոլոր ա՛յն նենգաւոր կառավարութիւնների ու արտօնեալ պարագիտների, որոնք — ազգեր թունաւորելով — մեզ դրել են եղբայրասպան դասեր շարադրելու տխուր անհրաժեշտութեան առաջ։

Ծանօթ Խմբ.– Նիկոլ Դումանի ձեռագիր բնագրին մէջ այս հատուածը խմբագրուած է հետեւեալ ձեւով.– «Անցեալ տարի տեղի ունեցան Ադանայի սոսկումները։ Այս տարի էլ Պարսկաստանում...»։

«Անցեալ տարի»,– արդարեւ Ատանայի կոտորածները տեղի ունեցան 1909 թուականին։ Կը նշանակէ որ, ինչպէս յիշուեցաւ, Նիկոլ Դումանի այս «Նախագիծ ժողովրդական ինքնապաշտպանութեան»ը գրուած եւ, հետեւաբար, տպուած է 1910 թուականին։ Ամէն պարագայի՝ ո՛չ 1907-ին, ինչպէս գրուած է տպագրուած օրինակին վրայ։

Ահա եւ Նիկոլ Դումանի ձեռագիր բնագրին համապատասխան պարբերութիւնը.–



ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐ*

Աբեղնագով — 30, 31, 33։
Ագրիպասեան Կ. — 14, 18-20։
Ամթաբէկեան — 17, 36։
Ալէք — 14, 48։
Ալէօն — 107, 108։
Ալոյեան Գալուստ (Դարվիշ, Թորոս) — 14, 18, 59, 73, 97, 98, 136։
Ախպէր (Դաւթեան-Փոլատեան Յարութիւն) — 98։
Ակնունի Է. (Մալումեան Խաչատուր) — 186, 196, 198, 200, 202, 247, 248։
Ահարոնեան Աւետիս — 252։
Ահարոնեան Գէդէոն — 136, 164։
Աղայեանց Ղազարոս — 23։
Ամիրեան Թադէոս (Թաթոս) — 117, 118։
Անդրանիկ (Օզանեան) — 256, 261, 262, 285։
Անդրէասեան Պետրոս — 232։
Աննիբալ — 16, 36։
Աշոտ-Թաթուլ (Արամ Արամեան) — 59, 61։
Աշուղ (Յովնանեան Սահակ) — 128, 130, 137, 149։
Ասծատուր — 117, 118։
Արամ (Մանուկեան) — 246։
Արամայիս — 267, 270, 273։
Արիս, Արիստակէս — *Տես Զօրեան Արիստակէս*։
Արղուիթեան Յովսէփ (Իշխան) — 13, 15, 17-19, 21, 23-26, 28, 30, 32-35, 37, 38, 41, 43, 49, 52, 53, 61, 74, 77-81, 86, 88, 89, 94, 95։
Արմենակ (Արապեան) — 265-275, 277, 278, 280-283։
Արմէն Գարօ (Փաստրմաճեան) — 128, 166։
Արշակ (Տէր Յովհաննիսեան) — 182, 185, 186, 196-198, 253։
Արտաշէս — 269-271, 273։
Աւետիսեան (Թերլէմէզեան Մկրտիչ) — 19, 20, 28, 31, 34, 36, 43, 45, 48, 51, 66։

Բաբալեան Արտաշէս — 191։
Բաբայեան Զարուհի — 187։
Բագրատ վարդապետ — *Տես Զաքքի*։
Բարսեղ (Մելիք-Գրիգորեան) — 34-36, 38։
Բարսեղեան Արմենակ — 188։
Բերնէ (Ֆրանսայի հիւպատոս) — 16, 18։
Բէգզադէ (Մելիք-Մուսեան Ռուբէն) — 133, 135-137, 139, 140։
Բորիս — *Տես Սմբատ (Խաչատրեան)*։
Բուլղարացի Սարգիս — 231, 244։

Գարեգին — *Տես Թադէոսեան Ստեփան*։
Գարեգին — *Տես Մանուկեան Գարեգին*։
Գէօնջեան — 26, 34։
Գիժ Դաւիթ — 29, 120։
Գիւլխանդանեան Աբրահամ — 102, 103։
Գրիգոր (Ֆետայի) — 71-73։

Դաշնակցական Խէջօ (Ամիրեան) — 115-117, 120, 131, 168, 169, 242, 256, 263։
Դաւթեան Յոնան — 13, 15-19, 21, 28, 29, 32-37, 41, 43, 45, 47, 48, 69, 100, 101, 128, 171, 179-182, 185-187, 193, 200-202, 206, 230, 232, 238, 286։
Դրօ (Կանայեան Դրաստամատ) — 160, 171, 233, 234, 256, 263։

---

*) *Զանց առած ենք նշել Նիկոլ Դումանը (Տէր Յովհաննիսեան Նիկողայոս* (1867-1914)), *որուն անունին կարելի է հանդիպիլ հատորի գրեթէ իւրաքանչիւր էջին*։

Երկաթ (Լեւոնեան Արմենակ) — 122։
Երուանդ — Տես Արղութեան Յովսէփ։
Երուանդ (Արապեան Զապէլի եղբայրը) — 273-275, 277, 281-283։
Եփրեմ խան (Դաւթեան) — 50, 206, 208, 210, 217, 220, 222, 223, 232, 242, 243։

Զապէլ (Արապեան) — 265-271, 273-281, 283։
Զաւարեան Սիմոն — 234, 240, 242, 243, 252, 254, 256-258, 260։
Զաւրեան բժ. Յակոբ — 120, 179։
Զաքքի (Թաւաքալեան Բագրատ վրդ.) — 17, 33-36։
Զօրեան Արիստակէս — 17, 18, 21, 38, 49, 52-54, 79, 88։
Զօրեան Ստեփան — Տես Ռոստոմ։

Թադէոսեան Լեւոն (Գուլթանեան) — 170։
Թադէոսեան Ստեփան (Սամսոն, Գարեգին) — 97, 98, 110, 112, 113, 120, 210, 222, 226-229, 237, 239։
Թաւագալեան Բագրատ (վարդապետ) — Տես Զաքքի։

Իշխան (Վանայ) — 235, 246, 282։
Իւսուֆեան Յովհաննէս — 59, 107։

Լազեան Գաբրիէլ — 265։
Լիբարիտ (Նազարեանց) — 241։
Լեւոն — 14։

Խաչատուր — Տես Ակնունի Է.։
Խելօք, Խենթ (Տէր Պօղոսեան Սամսոն) — 77, 87, 89։
Խէչօ (Ամիրեան) — Տես Դաշնակցական Խէչօ։

Կարօ — Տես Զօրեան Արիստակէս։
Կոմս (Փափազեան Վահան) — 112, 122, 159, 166, 167։
Կրապոտկին — 174։

Հայկ — 101, 185, 186, 196։
Հայկունի Դ. (Համամճեան Երուանդ) — 125, 126։
Հորտանս (Դաւթեան) — Տես Յորտանս։
Հրաչ (Թիրեաքեան Հայկ) — 253։

Ղարա-Մելիք (Մելիք-Գրիգորեան Բարսեղ) — 59, 61։

Մալխաս (Յովսէփեան Արտաշէս) — 120։
Մահմէտ-Ալի (Ex-Շահ) — 206-208, 211-213, 218, 220, 278։
Մանուկ — 63, 64։
Մանուկեան Գարեգին — 14, 18, 19, 29, 36, 66։
Մատինեան Նիկոլ (Վահան) — 73, 77, 79, 88։
Մարիամ (Մակարեան) — 41, 46, 74։
Միհրան (Էքմէքճեան Միսաք, զինագործ) — 16-18, 31, 41, 49, 60։
Միհրան (Քէչիշեան) 168։
Միրզայեան Յովսէփ (Արբակ Ռշտունի) — 82, 85-87, 90, 91, 97։

Միրզոյեան Սեդրակ — 38։
Միքայէլեան Քրիստափոր — 94, 102, 103, 108։
Միքօ (Ազիզ-Մելիլքեան) — 63, 64, 71։
Մխիթար — Տես Օհանեան Քրիստափոր։
Մխիթարեան Ստեփանոս եպս. — 28։
Մուրատ Սեբաստացի (Խրիմեան) — 128, 131, 285։

Յարութիւն (Համբարձումեան) — 64։
Յարութիւնեան Մարտիրոս — 188, 241։
Յոնան — Տես Դաւթեան Յոնան։
Յորտանս (Դաւթեան) — 101, 180-182, 185, 186, 207։

Նալպանտեան Գէորգ վրդ. — 122, 123։
Նատալիա (Մատինեան) — 41։
Ներսէս (վանեցի) — 16, 19, 20, 30, 48, 66։
Նիթրա — Տես Շահրիկեան Յարութիւն։
Նուարդ (Վարանդեան) — 193, 197, 199, 205։

Շահբազ Բարսեղ — 184։
Շահրիկեան Յարութիւն (Նիթրա) — 90, 92, 94, 97, 98, 102, 103, 105, 170, 184, 261։
Շարաֆ բէկ — 94։
Շաքիր (քիւրտ ցեղապետ) — 49։
Շաքիր փաշա — 72։
Շէկո (Պարսամեան Արշակ) — 77, 82-86։
Շէրօ — 63, 64։

Ոսկան (Զադոյեան Ոստանիկ) — 43, 52, 53, 90։

Զարուխճեան Մարտիրոս — 171։
Զերնով Վիկտոր — 205։

Պապեան Գաբրիէլ — 34, 37, 38, 41, 46, 91։
Պարզեան Սուքիաս եպս. (առաջնորդ Թաւրիզի) — 25, 28, 29, 33։
Պաւլի բէգ (Տէր Յովհաննիսեան) — 17, 181, 185, 186, 202, 204, 205։
Պետրոս (զինագործ) — 71-73, 100, 111, 112, 241։
Պետօ (Պետրոսեան Աղեքսանդր) — 19, 22, 29, 35, 36, 38, 39, 41, 43, 45, 49, 52, 53, 55, 56, 61։
Պետօ Բուլգարացի (Սերեմճեան Պետրոս) — 42։
Պիոնեան Կարապետ — 224, 226, 230, 238։
Պողպատ — 59, 60։
Պորտուգալեան Մկրտիչ — 29։
Պրեսանսէ Ֆրանսիս — 249։

Զալլադ (Բաբերեան Երուանդ) — 14, 18։
Զէբրայիլ — 74, 81, 89, 110, 111։

Ռահիմ խան — 213, 221։
Ռաչիդ (Տէր Մատթէոսեան) — 131։
Ռաֆայէլ (Երէցեան) — 246, 251։
Ռոստոմ (Զօրեան Ստեփան) — 13, 18, 29, 30, 37, 57-59, 101, 126, 128, 161, 175, 177-179, 184, 185, 190, 200, 202, 206, 231, 275, 285, 286։

Սաթենիկ (Մատինեան) — 19, 21, 30, 34, 37, 41, 43, 46, 97։
Սալար-Սուլթայի դովլէ — 208, 212, 213։
Սահակ — 117, 118։
Սամադ խան — 218, 219, 221։
Սամսոն — Տես Թադէոսեան Ստեփան։
Սառիկեան Յակոբ — 46։
Սարբազ Խեչո (Կարապետեան) — 120։

Սարգիս — Տես Օհանջանեան Սարգիս։
Սարգիս (Վանայ — Օտապաշեան Պօղոս) — 120, 121, 231, 232, 238, 253։
Սարգսեան Համբարձում — 96։
Սեպուհ (Ներսէսեան Արշակ) — 128, 168, 169, 256, 286։
Սեւքարեցի Սաքօ (Ծովիանեան) — 13, 14, 18, 81, 91, 125, 128, 161։
Սէյիդ Ահմադ խան — 220։
Սմբատ (Բորոյեան) — 168, 169։
Սմբատ (Խաչատրեան) — 154։
Ստեփանեան Տիգրան — 16, 18։

Վազգէն — Տես Տէրոյեան Տիգրան։
Վալադեան Վալադ — 252։
Վահաբ — Տես Վռամեան Արշակ։
Վահագ (Տաթեւեան) — 175։
Վահան — Տես Մատինեան Նիկոլ։
Վարանդեան Միքայէլ — 128, 172, 187, 188, 192-194, 196-200, 202, 204, 205, 252։
Վարդան Խանասորայ (Մեհրաբեան Սարգիս) — 13, 14, 18, 34, 54, 69, 71, 73, 94, 95, 128, 161։
Վարդան Շահպազ — 120, 122։
Վաքիլ Սարգիս — 49, 52։
Վռամեան Արշակ (Վահաբ) — 107, 199, 200, 202, 204, 208, 225, 227, 242, 286։
Վրացեան Սիմոն — 13, 76, 82, 87, 92, 93։

Տաշիր, Տաշօ — Տես Արղութեան Յովսէփ։
Տէր Դաւթեան Յովսէփ — 230, 233։
Տէր Մինասեան Ռուբէն — 120, 122, 285։
Տէրոյեան Զարուհի (Ժենիա) — 55, 56։
Տէրոյեան Տիգրան (Վազգէն) — 55, 56, 71։
Տէր Ստեփանեան Ստեփան — 19։
Տիգրան — 107, 120։
Տիգրանեան Սիրական — 136։

Ռաֆֆի (Մելիք-Յակոբեան Յակոբ) — 87։

Փոխիկ (Օհանեան Վահրամ) — 64, 98։

Քեռի (Գաւաֆեան Արշակ) — 128, 256։
Քոթոթ — Տես Ռոստոմ։
Քոչարեան Յակոբ — 187։

Օհանեան Քրիստափոր (Բժիշկ, Մխիթար) — 73, 77, 78, 81, 92, 98։
Օհանջանեան Համօ (Մհեր) — 166։
Օհանջանեան Սարգիս (Ֆար-Հատ) — 19, 21, 23, 24, 30, 34, 35, 37, 41, 46, 48, 52, 80, 88, 89, 93, 134, 136, 138, 181, 182, 192, 206։
Օրիորդ — Տես Սաթենիկ (Մատինեան)։

Ֆար-Հատ — Տես Օհանջանեան Սարգիս։
Ֆելիքս — 125, 126։

ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐ

Աբասթուման — 252, 253։
Ագուլիս — 131, 132։
Ադանա — 286, 325։
Ազատ Դաշտ (Արտաշատ) — 141, 148։
Ալեքսանդրապոլ — 19, 118, 127, 146, 147, 167, 310։
Ալեքսանդրիա — 184, 268, 269, 271, 272։
Ալճաւազ — 63։
Այգեստան (Վան) — 65, 66, 71, 231։
Ամերիկա — 107, 198, 200, 204, 245, 247, 248։
Անգլիա — 277, 278։
Աստարա — 118, 220։
Աստրաբադ — 212, 220։
Ատրպատական — 13, 28, 29, 33, 34, 52, 57, 69, 71, 73, 76, 77, 79, 85, 94, 96, 97, 102, 107, 108, 111, 113-117, 120, 124, 176, 178, 206, 211, 212, 214, 216, 220։
Արճակ — 62։
Արճէշ — 63, 244։
Արտաբիլ — 220։
Աւարայր — Տես Խոյ։

Բագու — 14, 17, 41, 77, 79, 83, 95-97, 99, 100, 102-107, 109, 112, 115, 116, 124, 128, 131, 132, 146, 170, 171, 174, 178, 181, 186, 192, 197, 200, 202, 233, 243, 253, 256, 259, 261, 310։
Բաթում — 197, 265, 278, 280, 281։
Բալախանի — 99, 100, 102։
Բաշգալէ — Տես Պաշգալէ։
Բարձրաւանդակ — Տես Սասուն։
Բարձր Տեղ (Աշտարակ) — 143, 145, 147, 148։
Բերլին — 189, 192։
Բոլգարիա — 108, 174, 266։
Բողազքեասան — 57, 58, 94։
Բոստոն — Տես Պոսթըն։

Գալաց (քաղաք, Ռումանիա) — 17, 18։
Գահիրէ — 184, 265-267։
Գաղթաշէն (Ս. Թադէի վանք) — 120,122։
Գանձակ — 128։
Գործօթ — 62։

Դանիա — 188։
Դարա-Ջիչագ (Ծաղկաձոր) — 148։
Դերբենդ — 181։
Դերիկ (վանք) — 18, 63։
Դիլման — 64, 78։

Եապոնիա — 321։
Եգիպտոս — 174-186, 265-273։
Երեւան — 22, 23, 41, 59, 60, 63, 82, 87, 89, 96, 117, 118, 127-129, 131-133, 135-140, 143-145, 147, 148, 154, 157, 158, 160-166, 221, 265, 310։

Զանգեզուր — 128, 131, 148։
Զարեւանդ — 13։

Էջմիածին — 21։
Էտիրնէ — 247, 251։
Էրզրում-Կարին — 56, 57, 193, 241, 265, 275։

Թաւրիզ — 13, 15, 16, 18, 19, 23, 24, 26, 28-30, 32-34, 37-39, 41, 43-46, 49, 50, 52-54, 57-59, 69, 71, 73, 74, 76, 79, 82, 83, 85, 98, 100, 101, 105, 107, 108, 110, 111, 116, 117, 120, 177, 192, 206-208, 210-213, 217, 218, 220, 221, 227, 229, 232, 234-236, 238, 240, 241, 243, 265, 274-281։
Թեհրան — 14, 15, 24, 36, 54, 82, 91, 207, 208, 210-212, 217, 218, 222, 223, 227, 240, 242, 244։
Թիֆլիս — 14, 17, 20, 21, 35, 41-44, 46, 47, 51, 60, 61, 75, 77, 79, 82, 83, 87, 91, 94-98, 100, 105, 124, 128, 131, 143, 146, 147, 154, 157, 158, 162, 168, 245, 256, 257, 259, 261։
Թուրքիա — Տես Տաճկաստան։

Ժընեւ — 13, 18, 23, 28, 32, 37, 43, 49, 51, 171, 183, 184, 187, 188, 190, 196, 200, 205, 247, 266։

Իգտիր — 147, 148, 166։

Լենկորան — 82։
Լիլաւա (Թաւրիզի թաղամաս) — 13, 15, 18, 24, 26, 35, 37, 74։
Լճափ (Մարտունիի շրջան) — 147-149։
Լոնտոն — 248։

Խանասոր — 91-95, 174։
Խլաթ — 63։
Խնուս — 63։
Խոյ (Աւարայր) — 45, 71, 81, 117, 120, 122, 123, 213, 223։
Խոջիվանք — 256։
Խուտափերին — 220։

Կարին — Տես Էրզրում-Կարին։
Կարճկան — 61։
Կարս (Ջրաբերդ) — 117, 118, 147։
Կեմ (սար) — 71։
Կիսլովոդսկի — 252, 256։
Կոչկրոան — 62։
Կոպենհագ — 188, 191, 194։
Կովկաս — 34, 38, 43, 51, 52, 61, 77, 79, 82, 98, 117, 128, 135, 145, 146, 152, 170, 181, 185, 189, 196, 200, 208, 210, 247, 248, 251, 256, 266, 277, 278, 290, 291, 297, 310, 311։
Կօթուլ — 52։

Հայոց Ձոր — 71, 231։
Հաւթուան — 31։
Հաւլաբար — 260։
Հելուան — 174-186, 265-273։
Հեր — 13։
Հին-Քաղաք (Քեօլնա-Շահր) — 66։
Հովիտ (Արարատեան դաշտ) — 147, 160։

Ղազախ — 128։
Ղազվին — 211։
Ղալա (թաղամաս Թաւրիզի) — 15, 18, 26, 36։
Ղալասար — 30, 31, 38, 39, 92։
Ղարաբաղ — 128, 310։
Ղարադաղ — 34, 207, 212, 213, 217։
Ղարաղաջ — 15։
Ղարաքիլիսա (Անտառապատ) — 167։

Մակու — 124, 207, 212, 213։
Մահլամ — 72։
Մարաղա — 212, 213, 218։
Մարանդ — 220։
Մեծ Քաղաք — Տես Թիֆլիս։
Մինարէթ — Տես Սալմաստ։

Մոսկուա — 49, 51, 125, 126։
Մուշ — 82, 261։
Մրգաստան — Տես Երեւան։

Յունաստան — 85։

Նազարաւա — 64։
Նախիջեւան — 41, 126, 128, 131, 132, 145, 147, 148, 154, 162, 163, 310։
Նախավկայ (Ս. Ստեփանոս վանք) — 14, 18։
Նիգ (Ապարան) — 143, 147, 148։
Նոր Բայազէդ — 297։

Շամ — Տես Վան։
Շատախ — 43, 45, 49։
Շարուր — 148, 150, 310։
Շուշի — 77, 83։
Շվէցարիա — 152, 189։

Ոզմ — 244։
Ոսկանապատ — Տես Բագու։
Ուրմի, Ուրմիա — 14, 64, 221, 224։

Զաթալճա — 245, 247, 251։

Պաշգալէ — 223, 224, 226-228, 235։
Պարիզ — Տես Փարիզ։
Պարսկաստան — 13, 14, 19, 30, 42, 48, 52, 54, 55, 57, 61, 66, 67, 69, 77, 91, 124, 185, 189, 206, 207, 210, 232, 234, 237, 240, 242, 243, 247, 275, 277, 278, 280, 285, 286, 324, 325։
Պաքու — Տես Բագու։
Պետերբուրգ — 51։
Պէյրութ — 245։
Պոլիս — 56, 66, 82, 174, 183-186, 192-194, 196-200, 202, 204, 205, 214, 223, 224, 226-228, 230, 232-234, 237-240, 244, 245, 247-249, 251-253, 265, 268, 270-273, 275, 277-283։
Պոսթըն — 13, 172, 286։
Պուլկարիա — Տես Բոլգարիա։

Ջուլֆա, Ջուղա (հին) — 18, 42, 43, 45, 48-51, 80, 82, 117, 211։
Ջրաբերդ — Տես Կարս։

Ռազի — 62, 120։
Ռաշտ — 211, 219։
Ռոստով — 126։
Ռոտոստօ — 247։
Ռումանիա — 18։
Ռուսաստան — 154, 170, 186, 242, 256, 285, 321, 323, 324։

Սաբունչի — 171։
Սաթմանիս — 63։
Սալմաստ — 14-17, 19, 26, 28, 31, 34, 35, 36, 38, 39, 41-49, 51, 52, 55, 57, 58, 61, 65-68, 71, 73-76, 81, 83, 87, 89, 91, 92, 94, 97, 98, 102, 104, 106, 107, 110, 113, 114, 116-119, 206, 211, 217, 218, 221, 223, 226, 228, 235, 236, 265, 276։
Սասուն (բարձրաւանդակ) — 49, 109, 110, 112, 115, 118-120։
Սարայ — 52, 56-59, 62։
Սաւրա — 64։
Սուխում — 124, 252, 253։

Վայոց Ձոր — 147, 148, 150։
Վան — 15, 20, 21, 29, 30, 41-43, 45-49, 51, 52, 55, 57, 58, 61, 62, 65, 66, 68, 69, 71-73, 76, 78-80, 90, 109, 111, 117, 119, 122, 221, 224-231, 234, 235, 237, 240, 242, 251, 265, 275, 280-283։
Վառնա — 174, 177, 237, 266, 285։
Վասպինջ — 218, 220, 223։
Վասպուրական — 13, 56-59, 61, 62, 77, 94, 210, 239։
Վարագ — 66, 71։
Վիեննա — 125, 172։
Վրէժ, Վրէժստան — Տես Թաւրիզ։

Տաճկաստան (Թուրքիա) — 154-156, 172, 173, 189, 208, 210, 235, 242, 246, 251, 277, 278, 282, 285, 286, 290, 291, 311, 321, 323։
Տրապիզոն — 265, 274։
Տրտում (Արարատի շրջան) — 147։

Ցղնայ — 22։

Փայլուկ — 30, 31, 75, 79։
Փարիզ — 194, 205, 248, 252, 275, 277, 280, 281։

Քար — Տես Ալեքսանդրապոլ։
Քարաբերդ — Տես Նախիջեւան։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Նիկոլ Դուման. մտաւորական հայդուկապետը
Խաչատուր Ստեփանեան ---------- 5

Նիկոլ Դումանի նամակներուն մասին – Ե. Փ. ----------11

1893-ի նամակներ (թիւ 1-3) ---------- 13
1894-ի նամակներ (թիւ 4-8) ---------- 23
1895-ի նամակներ (թիւ 9-17) ---------- 41
1896-ի նամակներ (թիւ 18-26) ---------- 55
1897-ի նամակներ (թիւ 27-39) ---------- 74

Խմբագրական նոթ – Ե. Փ. ---------- 94

1898-ի նամակներ (թիւ 40-42) ---------- 96
1899-ի նամակ (թիւ 43) ---------- 101
1903-ի նամակներ (թիւ 44-50) ---------- 102
1904-ի նամակներ (թիւ 51-63) ---------- 111
1905-ի նամակներ (թիւ 64-73) ---------- 125
1906-ի նամակներ (թիւ 74-78) ---------- 154
1907-ի նամակներ (թիւ 79-80) ---------- 171
1908-ի նամակ (թիւ 81) ---------- 173
1909-ի նամակներ (թիւ 82-87) ---------- 174
1910-ի նամակներ (թիւ 88-108) ---------- 180
1911-ի նամակներ (թիւ 109-114) ---------- 206
1912-ի նամակներ (թիւ 115-131) ---------- 224
1913-ի նամակ (թիւ 132) ---------- 252

Յետ մահու, յուղարկաւորութիւն եւ վկայութիւններ ---------- 256

Ա. Յաւելուած – Ն. Դումանի նամակները
Արմենակ եւ Զապէլ Արապեան ամոլին ---------- 264

Խմբագրական նոթ – Ե. Փ. ---------- 285

Բ. Յաւելուած –
ՆԱԽԱԳԻԾ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹԵԱՆ ------- 288

Անձնանուններ ---------- 326

Տեղանուններ ---------- 330

ՆԻԿՈԼ ԴՈՒՄԱՆ
ՆԱՄԱԿԱՆԻ

Հրատարակութեան պատրաստութիւն, խմբագրութիւն
եւ ծանօթագրութիւններ
ԵՐՈՒԱՆԴ ՓԱՄՊՈՒՔԵԱՆԻ

Համակարգչային շարուածք եւ ձեւաւորում
ԹԱՄԱՐ ՍՆԱՊԵԱՆ-ՍՈՒՐՃԵԱՆԻ

Ստորագրուած է տպագրութեան՝ 09.02.2021
Չափսը՝ 70x100x 1/16
Տպագրութիւնը՝ օֆսէթ: 21 տպ. մամուլ:
Տպաքանակը՝ 1000

«ԳԷՈՐԳ – ՀՐԱՅՐ» ՍՊԸ

հրատարակչութիւն
Երեւան, Գրիգոր Լուսաւորչի 6
Հեռ.՝ (011) 52-79-74, 055-52-79-74
Էլ. փոստ՝ lusakn@rambler.ru

ISBN 978-9939-882-93-2